


581.4

Գ-13

Գ. ԳՍՏՐԻԵԼՅԱՆ

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ  
ԵՎ ՆՐԱ  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԹԱՂԱՆԹԸ



ԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

Հ. Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ  
ՊԱ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԹԱՂԱՆԹԸ

Ոստմեաօժանդակ ձեռնարկ


---

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1983

Խմբագիր՝ աշխ. գիտ. թեկն. Պ. Ս

Գրախոս՝ աշխ. գիտ. թեկն. Վ.



SUC/32,229

Գաբրիելյան, Հ. Կ.

Պ 124 Երկիր մոլորակը և նրա աշխարհագրակա  
թը: Ուս. օժանդակ ձեռնարկ/խմբ. Պ. Ս. Աբ.

— Եր.: Երևանի համալս. հրատ. 1983. — 320

Վերնախորագր.՝ Երևանի պետ. համալս.

Գրքում նոր ծրագրին համապատասխան շարադրված  
ժազման, մթնոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի, քարոլոր-  
վածքի, նյութերի շրջապտույտի և դրանցում տեղի  
վույթների ու պրոցեսների հարցերը: Քննարկվում է  
երկրի աշխարհագրական թաղանթի վերափոխման, բնու-  
յանության, դրա ուսցիոնալ օգտագործման գործում:

Նախատեսված է աշխարհագրության ֆակուլտետի ու  
ու աշխարհագրության ուսուցիչների համար:

19050300000—35

Պ 704 (02)—83

ГАБРИЕЛЯН ГРАЦИЯ КАРАПЕТОВИЧ  
ПЛАНЕТА ЗЕМЛЯ И ЕЕ ГЕОГРАФИЧЕСКАЯ ОБО-

Учебно-вспомогательное пособие

(на армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван — 1983

## ՆԵՐԱՄՈՒՓՅՈՒՆ

Նրկիւ մուտակը և նրա աշխարհագրական բաղանթը մի շարք բնական գիտությունների, այդ թվում և՛ անհնար երկրագիտության ուսումնասիրման առարկան է, իսկ վերջինս աշխարհագրության մի բաժինն է:

Աշխարհագրությունը ձևավորվեց դեռևս անտիկ աշխարհում: Առաջին անգամ «geographia» տերմինն օգտագործեց հույն գիտնական էրատոսթենեսը (մ. թ. ա. III դ. վերջ և II դ. սկիզբ):

Գիտությունների համակարգում աշխարհագրությունը մայր գիտություն է, դասվում է դասական գիտությունների շարքը: Այն բնական և հասարակական գիտությունների համակարգ է, որն ուսումնասիրում է բնական և արտադրական տարածության համալիրներն ու դրանց բաղադրամասերը: Բաժանվում է երկու հիմնական նյութի՝ ֆիզիկական աշխարհագրություն, որ պատկանում է բնական գիտությունների շարքին և տնտեսական աշխարհագրություն, որը հասարակական գիտությունների համակարգում է: Նշված այս երկու նյութերին զուգընթաց զարգացավ աշխարհագրական համակարգի երրորդ նյութը՝ քարտեզագրությունը:

Այժմ աշխարհագրություն մայր գիտությունից սերվում են ավելի և՛ նեղ մասնագիտություններ. օրինակ, ընդհանուր ջրաբանությունը (հիդրոլոգիա), իսկ նրանից էլ՝ գետաբանությունը, լճաբանությունը, ճահճաբանությունը, սառցադաշտաբանությունը (գլյացիոլոգիա), ջրաչափությունը (հիդրամետրիա), ջրաֆիզիկան, ջրակենսաբանությունը և այլն: Նույնը կարելի է ասել կլիմայագիտության, երկրաձևաբանության (գեոմորֆոլոգիայի) և այլ նեղ մասնագիտական գիտությունների մասին:

Ընդհանուր երկրագիտության կամ նույնն է՝ ընդհանուր

Ֆիզիկական աշխարհագրության խնդիրը Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի նաեւաշումն է, նրա կառուցվածքի ու զարգացման օրինաչափությունների բացահայտումը: Աշխարհագրական թաղանթի մասն է կազմում աշխարհագրական միջավայրը, որը շրջապատում է մարդուն և որի հետ մարդկային հասարակությունը կապված է իր կյանքով ու արտադրական գործունեությամբ:

Աշխարհագրություն մայր գիտությունը այժմ նաեւաշողական ու բացատրական փուլից թեւակոխել է զարգացման մի նոր՝ կառուցողական-կոնստրուկտիվ աշխարհագրության փուլ, երբ ուսումնասիրվում են բնական հարստությունների ուսցիոնալ օգտագործման կամ բնության վերափոխման կոնկրետ խնդիրներ:

Ստրկատիրական դարաշրջանում ֆիզիկական և տնտեսական աշխարհագրությունները իրարից բաժանված չէին. այն ժամանակ աշխարհագրության խնդիրն էր երկրների նաեւաշումը: Այս դարաշրջանում ձեւավորվեց Երկրի գնդաձևության գաղափարը, էրատոսթենեսը առաջին անգամ բավական նըշտությամբ չափեց Երկրագնդի շրջանագծի երկարությունը (III—II դդ. մ. թ. ա.):

Ֆեոդալական դարաշրջանում (II—IV դդ. մինչև XV—XVI դդ.) աշխարհագրությունը, ինչպես նաև բոլոր գիտությունները, անկում ապրեց. անտիկ աշխարհի գիտական հայտնագործությունները մոռացվեցին, նրանց փոխարինեցին կրոնական դոգմաները:

Այդ նույն ժամանակ ֆեոդալական Արևելքում գիտությունն անգլիի բարձր մակարդակի վրա էր: Արաբները, հայերը, պարսիկները, շինագիները մեծ ավանդ մուծեցին աշխարհագրության, աստղագիտության, մաթեմատիկայի զարգացման գործում: VII դ. Անանիա Շիրակացին ընդունում էր Երկրի գնդաձևության գաղափարը, միջնադարյան հայկական համալսարաններում ավանդվում էր աշխարհագրություն: Պահպանվել են սխեմաներ ու նկարներ, որոնցով Հովհան Որոտնեցին աշխարհագրություն էր ուսուցանում:

Չնայած ինկվիզիցիան գիտության զարգացման նաեւապարհին մեծ խոչընդոտ էր, այնուամենայնիվ Երկրի նաեւաշումն փաստերը կուտակվում էին և չէին կարող նոր որակ չըս-

տեղծել: Մովագնացները կողմնացույցի գյուտից հետո վրստահորեն նոր ուղիներ էին բացում, նորմանները IX դ. հայտնաբերեցին Իսլանդիան, Գրենլանդիան, Հյուսիսային Ամերիկան:

XV դ. վերջին և XVI դ. սկզբին տեղի ունեցավ աշխարհագրության վերածնունդը, Երկրի գնդաձևության գաղափարը նորից հաղթանակեց՝ Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան, Վասկո դա Գաման՝ շուրջաֆրիկյան ծովային ուղին, Մագելանը կատարեց առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը և այլն:

XVI դարից սկսվում է կապիտալիզմի դարաշրջանի աշխարհագրությունը, որի խնդիրն էր հայտնագործել նոր երկրներ ու ճանապարհներ, ճանաչել Երկիրը, ապա՝ բացատրել բազմաթիվ բնական երևույթներ: Կապիտալիստական արտադրահարաբերությունները պահանջում էին նորանոր բնադրյալներ ու շուկաներ. Իսպանիան, Պորտուգալիան, Անգլիան, Նիդերլանդները, Ֆրանսիան սկսում են նվաճումներ Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում: XVI—XVII դարերում Ռուսաստանում ևս նվաճողական մեծ արշավանքներ են կազմակերպվում դեպի Սիբիր, Հեռավոր Արևելք, Միջին Ասիա:

Աշխարհագրության զարգացումը հատկապես բեղմնավոր եղավ XIX դարում: Բելիսագաուզները և Լազարևը հայտնագործեցին Անտարկտիդան, Ռուսաստանի Աշխարհագրության ընկերության ջանքերով ուսումնասիրվեցին Միջին ու Կենտրոնական Ասիան, Արևմտյան Եվրոպայում ու Ռուսաստանում տեսական մեծ ընդհանրացումներ կատարվեցին, Վ. Վ. Դոկուչաևը ձևավորեց համաշխարհային գոնայականության օրինաչափությունները և այլն:

XX դ. սկզբին տեղի ունեցան աշխարհագրական նոր հայտնագործություններ բևեռային շրջաններում (Ռ. Ամունդսեն, Ռ. Փիրի, Ֆ. Նանսեն և ուրիշներ), որոնք ճանաչողական բրնույթ ունեին, միևնույն ժամանակ բացատրում էին բնության բարդ երևույթները:

Սոցիալիստական դարաշրջանի աշխարհագրությունն սկսվում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: ՍՍՀՄ տարածքում ցամաքի վրա կազմակերպվեցին բազմակողմանի հետազոտություններ, որոնց նպատակն էր պարզաբանել բնա-

կան համալիրների զարգացման առանձնահատկությունները, բնական հարստությունները ի սպաս դնել ժողովրդական տրնտեսության զարգացմանը: Բացի այս, լայն ծավալի հետազոտություններ կազմակերպվեցին Արկտիկայում, սկսած 1930-ական թվականներից ստեղծվել են «Հյուսիսային բեռ» կոշվող 24 կայան: 1950-ական թվականներից Անտարկտիդայում հիմնադրվեցին մշտական գործող կայաններ, ծավալվեցին օվկիանոսագիտական հետազոտություններ:

ՍՍՀՄ տարածքում ուսումնասիրություններ ծավալվեցին ոչ միայն ընդհանուր երկրագիտության ասպարեզում, այլև լանդշաֆտների առանձին բաղադրիչների՝ ռելիեֆի, կլիմայի, ջրազբոյքյան, հողաբուսական ծածկույթի, կենդանական աշխարհի տեղաբաշխման օրինաչափությունների ուղղությամբ:

Գիտությունների ակադեմիայի համակարգում բոլոր միութենական հանրապետություններում ստեղծվեցին աշխարհագրության ինստիտուտներ, բուհերում՝ նեղ մասնագիտական ամբիոններ, կազմակերպվեցին գերատեսչական ինստիտուտներ ու լաբորատորիաներ, որոնք ուսումնասիրում են թե՛ լանդշաֆտներն ամբողջությամբ, որպես բնական համալիրներ, և թե՛ նրանց առանձին բաղադրիչները:

Սոցիալիստական դարաշրջանի աշխարհագրության խնդիրն է բացահայտել աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները, ուսումնասիրել սոցիալիստական երկրների բնական համալիրները, նրանց բնական ռեսուրսները՝ դրանք առօրինակ կերպով օգտագործելու համար: XX դ. աշխարհագրության առջև դրվել է նաև մեկ այլ լուրջ խնդիր՝ բնության պահպանության ու հարստացման պոթրլեմբ, որը մտահոգում է համայն աշխարհին:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

### ԵՐԿՐ ՄՈՂՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

#### ԱՐԵԳԱԿՆԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԵՐԿՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Երկիրը տիեզերական մարմին է, Արեգակնային համակարգի մոլորակներից մեկը: Արեգակնային համակարգը կազմըված է կենտրոնական «Դեղին թզուկ» աստղից (Արեգակ), նրա շուրջը պտտվող 9 մոլորակներից, 32 արբանյակներից, 2000 փոքր մոլորակներից, գիսաստղերից և ասուպային մարմիններից: Համակարգի զանգվածի 99,86 %-ը կենտրոնացած է Արեգակի մեջ:

Մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ (եթե դիտելու լինենք աշխարհի հյուսիսային բևեռից): Որքան հեռու են նրանք Արեգակից, այնքան դանդաղ են պտտվում: Մոլորակները պտտվում են նաև իրենց առանցքի շուրջը նույն ուղղությամբ, բացառությամբ Վեներայի և Ուրանի, որոնց պտտման ուղղությունը մյուսներին հակառակ է: Մերկուրին և Վեներան արբանյակներ չունեն, Երկիրն ունի մեկ արբանյակ՝ Լուսինը, Մարսի արբանյակները երկուսն են, Յուպիտերինը՝ 12, Սատուրնինը՝ 10, սակայն նրա շուրջը նաև օղակ կա, Ուրանը ունի 5 արբանյակ, Նեպտունը՝ 2, Պլուտոնի արբանյակների գոյությունը առայժմ պարզված չէ:

Արեգակնային համակարգը մտնում է Գալակտիկայի՝ Միրկաթնի մեջ: Վերջինս ունի երկուուցիկ ոսպնյակի ձև, որի տրամագիծը 100 հազար, իսկ հաստությունը 12 հազար լուսնի տարի է, զանգվածը հավասար է Արեգակի զանգվածի 10<sup>11</sup> մեծությանը: Արեգակը Գալակտիկայի շուրջը պտտվում է մոտ 250 կմ/վրկ արագությամբ շուրջ 200 միլիոն տարում:

Արեգակը հակայական հրե գունդ է, որի զանգվածը 2 · 10<sup>33</sup> գ է, խտությունը՝ 1,42 գ/սմ<sup>3</sup>, տրամագիծը՝ 1,392 մլն կմ: Արեգակի մակերևույթին ջերմաստիճանը 6000 է, ընդեր-

քում 20 մլն աստիճան, խորքային մասերում խտությունը հասնում է 100 գ/սմ<sup>3</sup>:

Արեգակի մթնոլորտի ստորին շերտը մինչև 400 կմ կոչվում է լուսոլորտ, 400-ից մինչև 14000 կմ բարձր՝ գունոլորտ: Արեգակի արտաքին նոսր մասը կոչվում է արևապսակ, որի հզորությունը հասնում է մի քանի արեգակնային շառավղի:

Արեգակի մերձհասարակածային՝ մինչև 25, երբեմն մինչև 45° լայնութուններում դիտվում են մութ բծեր. սրանք աստիճանաբար աճելով հասնում են մինչև 230000 կմ-ի: Բծերի տևողությունը տարբեր է՝ մի քանի ժամից մինչև մի քանի ամիս: Արևաբծերում տեղի է ունենում նյութի արտավիժում 2,7 կմ/վրկ արագությամբ, նրանց շրջակայքում առաջանում է շատ ուժեղ մագնիսական դաշտ, որը մեծ ազդեցություն է ունենում Երկրի մագնիսականության վրա և դրա հետևանքով նաև օրգանական աշխարհի վրա: Բծերի առաջացումը ունի մոտավորապես 11 տարվա ռիթմ:

Արեգակի սկավառակի եզրին ժամանակ առ ժամանակ առաջանում են հրվիժակներ (պրոտուբերանց), որոնք գազային զանգվածների արտավիժումներ են և հասնում են մի քանի հարյուր հազար, երբեմն նույնիսկ 1700 հազար կմ բարձրության: Զորեղ հրվիժակները տևում են ամիսներ, նյութի արտավիժման արագությունը հասնում է 700 կմ/վրկ: Գունոլորտում առաջացող բնկումների ժամանակ գոյանում են մագնիսական դաշտի փոթորիկներ, իսկ ռադիոճառագայթումն աճում է 100 միլիոն անգամ:

Արեգակի ճառագայթումները (արեգակնային ակտիվություն), նրա արձակած մասնիկների հոսքերը՝ օժտված մագնիսական դաշտերով, էական ազդեցություն են ունենում Արեգակնային համակարգի բոլոր անդամների զարգացման վրա: Արևապսակից անընդհատ դեպի միջտիեզերական տարածություն է արձակվում պլազմա՝ պրոտոններ ու էլեկտրոններ, որոնք ունեն 300—400 կմ/վրկ արագություն: Պլազմայի տարածումը կոչվում է արեգակնային քամի: Վերջինս հասնում է մինչև Երկիր, սակայն Երկրի մագնիսականության շնորհիվ ուղղությունը փոխում է, փոխազդելով օդի մասնիկների հետ, առաջացնում է բևեռափայլ և այլ երևույթներ: Արեգակնային քամին, մթնոլորտի վերին մասերում կորցնելով էներգիան,

մինչև երկրի մակերևույթ չի հասնում: Հակառակ դեպքում Երկրի մակերևույթին կյանք ստեղծվել չէր կարող, պլազման կյանքի համար մահացու է:

Արեգակն անընդհատ լույս ու ջերմություն է առաքում: Գտնվելով Արեգակից 150 մլն կմ հեռավորության վրա՝ Երկրի մթնոլորտի վերին սահմանում յուրաքանչյուր 1 սմ<sup>2</sup> մակերեսը մեկ թոպեում ստանում է մոտ 2 կալորիա էներգիա, որին անվանում են արեգակնային հաստատուն: Ամբողջ Երկրագունդը մեկ թոպեում Արեգակից ստանում է  $2,5 \cdot 10^{18}$  կալորիա, տարեկան  $1,37 \cdot 10^{24}$  կալորիա: Անցնելով օդի միջով՝ այն մասամբ կլանվում է փոշու, գոլորշիների կողմից, և Երկրի մակերևույթ է հասնում էներգիայի միայն մի մասը: Օրինակ Հայկական ՍՍՀ-ում՝ 1,2—1,7 կալ/սմ<sup>2</sup> թոպե:

Երկրագնդի առաջացումը պետք է դիտել ամբողջ արեգակնային համակարգի առաջացման հետ, որը ժամանակակից տիեզերագիտության (կոսմոգոնիայի) կարևոր պրոբլեմներից մեկն է: Աշխարհագրական շատ պրոբլեմներ նույնպես կապվում են Երկիր մոլորակի առաջացման եղանակի հետ: Երկրակեղևում տեղի ունեցող պրոցեսներն ու երևույթները անպայմանորեն առնչվում են Երկրի սկզբնական վիճակի հետ և մեկնաբանվում այս կամ այն դրույթով:

Մինչև XX դարը Արեգակնային համակարգի առաջացման վերաբերյալ առավել հայտնի էին Կանտի-Լապլասի, Ջինսի գիտաենթադրությունները: Առավել երկար տևեց Լապլասինը: Կանտից անկախ, շիմանալով նրա մտահղացման մասին, Լապլասը 1796 թ. առաջարկեց իր տարբերակը, որը բավական նրամանություն ուներ Կանտի առաջարկածին, ուստի հետագայում այն անվանեցին Կանտ-Լապլասյան գիտաենթադրություն:

Գիտաենթադրությունը մշակելիս Լապլասը ելակետ է ընդունել շիկացած գազից բաղկացած և կենտրոնական խտացում ունեցող միգամածությունը, որն իր շափերով գերազանցել է Արեգակի ամբողջ ընտանիքի տարածման շափերին և փոքր անկյունային արագությամբ պտտվել է իր առանցքի շուրջը՝ ունենալով որոշակի սեղմվածություն: Մանրահակ ուժի ներգործությամբ միգամածությունն սկսել է սեղմվել. պտտման մոմենտի պահպանման օրենքի հետևանքով այդ միգամածու-

թյան անկյունային արագութիւնը մեծացել է, մեծացել է նաև գծային արագութիւնը հասարակածում: Ստեղծվել է մի այնպիսի վիճակ, երբ միգամածութեան հասարակածային մասում պտտման գծային արագութիւնն այնքան է մեծացել, որ կենտրոնախույս ուժը հավասարվել է միգամածութեան կենտրոնաձիգ ուժին: Դրա հետևանքով միգամածութեան զանգվածի մի մասն անջատվել է հիմնական զանգվածից և ստեղծվել է պտտվող օղակ, որից էլ առաջացել է խտացման կորիզ: Հերթով անջատվել են նաև ուրիշ օղակներ, որոնցից ստեղծվել են մոլորակները: Այսպիսով Արեգակնային համակարգի առաջացման ելակետը շիկացած միգամածութիւնն է: Քանի որ երկնային մեխանիկայի, նյութերի ֆիզիկայի շատ հարցեր այս գիտաբանութեամբ չէին բացատրվում, ապա XIX դարի վերջին այս վարկածը շարքից դուրս եկավ:

XIX դարի վերջին XX դարի սկզբին ժագեց մի նոր՝ Զինսի գիտաբանութիւնը, ըստ որի մոլորակներն առաջացել են Արեգակի մոտով անցնող վիթխարի երկնային մարմնի ազդեցութեամբ ստեղծված մակրնթացային ալիքից: Արեգակից անջատվել է մակրնթացային վիթխարի շիթ և այդ շիթից անջատվել են մոլորակները: Այս գիտաբանութեան գլխավոր թերութիւնն այն է, որ մեկ ամբողջ երկնային համակարգի ստեղծումը կապվում է պատահական պատճառի հետ: Շուտով պարզվեցին նեղ մասնագիտական շատ այլ թերութիւններ էլ, որոնք հերքեցին այս վարկածը, և այն պաշտպանողներ այժմ այլևս չկան:

Վերջին ժամանակներս տիեզերագիտութիւնում սովետական գիտնական Օ. Յ. Շմիդտը առաջ քաշեց երկնաքարային գազափոշու ամպից մոլորակների ու նրանց արբանյակների առաջացման գիտաբանութիւնը: Սլակետն այն է, որ մոլորակները կազմավորվել են սառը նյութից, տաքացումը կատարվել է հետագայում՝ սեղմման ու ռադիոակտիվ նյութերի տրոհումից առաջացած ջերմութեան անջատման հետևանքով:

Շմիդտի գիտաբանութիւնն ունի թերութիւններ. դեռևս պարզաբանված չէ երկնաքարային ամպի առաջացման հարցը և շատ այլ հարցեր: Սակայն եղած գիտաբանութիւններից և ոչ մեկը այնքան հաջող չի բացատրում Երկրի ընդերքում

կատարվող երևույթները, որքան սա, ուստի Շմիդտինը ամենարժեքներն է աշխարհագետների ու երկրաբանների համար:

1970-ական թվականների վերջերից առաջացան նոր տեսություններ, որոնք քննադատության են ենթարկում Շմիդտի տեսակետը. կան կարծիքներ, որոնք հնարավոր չեն համարում սառը մարմինների խտացումից երկրի առաջացումը: Սա երկրի ծագման ամենահիմնային հարցն է, դեռևս լուծված չէ և կարիք ունի խորագույն ուսումնասիրության:

Այժմ Արեգակնային համակարգի տարիքը ընդունված է 5 միլիարդ տարի: Այդ ամբողջ ժամանակաշրջանում Երկիր մոլորակը էվոլուցիա է ապրել, նրա վրա առաջացել է օրգանական նյութ: Արեգակնային համակարգում միակ մոլորակը, որի վրա կյանք կա, Երկիրն է:

### ԵՐԿՐԻ ՁԵՎԸ, ՄԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Քոլոր երկնային մարմինները ունեն գնդի ձև: Մինչև V դ. մ. թ. ա. Երկրի ձևի մասին գաղափարը հիմնված էր անմիջական հայեցողության վրա. դաշտում կանգնած մարդը տեսնում էր միայն հարթություն, ուստի Երկիրը հարթ էր պատկերացնում, որը շրջապատված է գետ-օվկիանոսով: Շատ առաջադիմական էր Պյութագորասի և նրա դպրոցի տեսությունը Երկրի գնդաձևության մասին (IV դ. մ. թ. ա.), իսկ էրատոսթենեսը (III դ. մ. թ. ա.) չափեց այդ գնդաձև մարմնի շրջագծի երկարությունը և ստացավ զարմանալիորեն ճիշտ մի թիվ՝ մոտ 40 հազար կմ:

էրատոսթենեսը միջօրեականի երկարությունը չափեց հետևյալ եղանակով: Նա նկատեց, որ նույն միջօրեականի վրա գտնվող Ալեքսանդրիա և Սիենա քաղաքներում կեսօրին Արեգակի ճառագայթները նույն անկյան տակ չեն ընկնում, եթե Սիենայում ուղղահայաց են, ապա Ալեքսանդրիայում ուղղահայացի նկատմամբ  $7^{\circ}12'$  անկյուն են կազմում: Ալեքսանդրիայի ու Սիենայի միջև հեռավորությունը չափելով ստացավ 5 հազար ստադիոն, այդ նշանակում է Երկրի  $7^{\circ}12'$ -ին համապատասխանում է 5 հազար ստադիոն,  $360^{\circ}$ -ի համար ստացավ 250 հազար ստադիոն, որը համապատասխանում է 39,5 հազար կմ-ի:

Երկրի գնդաձևությունը աշխարհագրական բազմաթիվ երե-

վույթներում վճռական դեր ունի. թվենք դրանցից մի քանիսը: Երկրի գնդաձևության շնորհիվ նրա տրամագծորեն հակառակ մասերը Արեգակի ճառագայթների կողմից միաժամանակ լուսավորվել չեն կարող, ուստի գիշերվա ու ցերեկվա ութիմ է առաջանում: Գնդաձևության շնորհիվ Երկրի մակերևույթին ճառագայթները ամենուրեւույն անկյան տակ չեն ընկնում, աշխարհագրական լայնության մեծացմանը զուգընթաց փոքրանում է ճառագայթման լարվածությունը: Դա նշանակում է, որքան հեռու հասարակածից, այնքան տարեկան միջին ջերմաստիճանը իջնում է, և մերձբևեռային շրջաններում կլոր տարի լինում է ցուրտ ու սառնամանիք: Այստեղից էլ առաջանում են ջերմային գոտիները, որոնք հասարակածի երկու կողմերում սիմետրիկ դասավորություն ունեն:

Երկրի գնդաձևության պատճառով մեր մոլորակի (ինչպես նաև այլ երկնային մարմինների) ժանրահակ (գրավիտացիոն) դաշտը կենտրոնահամաչափ է: Բոլոր ընկնող մարմինները ուղղվում են Երկրի կենտրոն: Մանրահակ դաշտի ազդեցության շնորհիվ նույնիսկ ամենաաննշան թեքությամբ գետերը բարձր նիշերից հոսում են դեպի ցածր նիշեր (դեպի Երկրի կենտրոնամերձ նիշեր):

Երկրի կենտրոնահամաչափության շնորհիվ մոլորակն ունի համակենտրոն ոլորտներ՝ միջուկ, մանթիա, քարոլորտ (լիթոսֆերա), ջրոլորտ (հիդրոսֆերա), մթնոլորտ: Համակենտրոն ոլորտների (թաղանթների) գոյությունը մոլորակների ամենահիմնական հատկանիշներից մեկն է:


Քանի որ Երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը, ապա պտույտը չի կարող իր ազդեցությունը չունենալ նրա ձևի վրա: Այն հանգամանքը, որ, մերձբևեռային շրջաններից դեպի հասարակած շարժվելիս ճոճանակավոր ժամացույցը ետ է ընկնում, հայտնի էր XVII դարից: Այս երևույթն իր բացատրությունը ստացավ Նյուտոնի և Հյուգենսի կողմից: Նրանք հանգեցին այն եզրակացության, որ իր առանցքի շուրջը պտտւող Երկրագունդը կենտրոնախույս ուժի շնորհիվ պետք է բևեռներից սեղմված լինի, ուստի Երկիրը ոչ թե իդեալական գունդ է, այլ պտտման էլիպսոիդ (կամ սֆերոիդ): Եթե այսպես է, ապա միջօրեականի կորությունը հասարակածի մոտ պետք է ալելի մեծ լինի, քան մերձբևեռային շրջաններում:

Հետագայում պարզվեց, որ հասարակածի շրջանում միջօրեականի մեկ աստիճանի երկարությունը կազմում է 110,6 կմ, 40°-ի լայնության տակ՝ 111,0 կմ, 80°-ի տակ՝ 111,7 կմ:

Ցուպիտեր մոլորակը, որն իր առանցքի շուրջը պտտվում է մոտ 10 ժամում (Երկրից մոտ 2—5 անգամ արագ) բևեռներում ավելի շատ է սեղմված, և դա երևում է նույնիսկ նրա լուսանկարի վրա:

Երկիրը սֆերոիդ է կամ պտտման էլիպսոիդ (նկ. 1): Նրա մեծ (հասարակածային) կիսառանցքը (a) կազմում է 6378160 մ, փոքր (բևեռային) կիսառանցքը (b)՝ 6356777 մ,  $a-b=21383$  մ, իսկ սեղմվածությունը՝  $\alpha = \frac{a-b}{a} = 1:298,3$ ,

Որպես Երկրի շառավղի միջին մեծությունը ընդունված է միջնապիսի գնդի շառավղիը՝ 6371,03 կմ, որի ծավալը հավասար է սֆերոիդի ծավալին: Երկրային սֆերոիդի մակերեսը հավասար է  $510,2$  մլն կմ<sup>2</sup>, ծավալը՝  $1,083 \cdot 10^{12}$  կմ<sup>3</sup>, զանգվածը  $5976 \cdot 10^{21}$  կգ, խտությունը՝  $5,52$  գ/սմ<sup>3</sup>, միջօրեականի երկարությունը՝ 40008,548 կմ, հասարակածինը՝ 40075,7 կմ:



Նկ. 1 Երկրի ձևի պատկերացումը

1— գունդ, 2— էլիպսոիդ, 3— դեսիդ (կարգիտիդ):

Վերջին ժամանակներս կատարված ճշգրիտ չափումները ցույց են տալիս, որ Երկիրը ոչ միայն բևեռներից է սեղմված, այլ նաև՝ հասարակածի կողմից, այսինքն հասարակածը ոչ թե շրջանագիծ է, այլ էլիպս, որի երկար առանցքը կարճ առանցքից մեծ է 425 մետրով:

1958 թ. մարտի 17-ին ուղեծիր դուրս բերված «Ավան-  
գարդ—1» արբանյակը սկզբում պատվում էր էլիպսային ու-  
ղեծրով. Երկրից հեռակետում՝ 3968 կմ և մերձակետում՝ 659 կմ  
հեռավորությամբ: Պարզվեց, որ մերձակետում Երկրից ունե-  
ցած հեռավորությունը 9 մետրով պակաս էր: Հաշվումները  
ցույց տվեցին, որ Երկիրն իրոք տանձաձև է:

Երկրի իրական տեսքը գնդաձև (սֆերոիդ) կլիներ այն դեպ-  
քում, եթե նրա մակերևույթը կազմված լիներ միայն շրից,  
ցամաքի ռելիեֆի ձևեր չլինեին: Երկրի մակերևույթի տար-  
բեր մասերում օվկիանոսից դուրս ցցված ցամաքներն ու նը-  
րանց ռելիեֆը ստեղծում են գեոիդ (երկրակերպ), մի ձև, որ  
հատուկ է միայն Երկիր մոլորակին:

Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է 23 ժամ 56 րոպե  
04 վայրկյանում, արևի շուրջը՝ մեկ տարում (365,06 օրում),  
մեկ վայրկյանում ուղեծրով անցնում է 29,76 կմ արագու-  
թյամբ:

#### ԵՐԿՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱՐԱԳԱՑՈՒՄԸ

Ինչպես նշվեց, Երկրի միջին խտությունը 5,52 է, այ-  
սինքն՝ Երկրի 1 սմ<sup>3</sup> ծավալի մեջ 5,52 գրամ զանգված կա:  
Քարոլորտի (լիթոսֆերայի) վերին շերտերի խտությունը տա-  
տանվում է 2—3-ի միջև: Ինչպե՞ս է ապա, որ Երկրի միջին  
խտությունն այդքան մեծ է: Պարզվում է, որ մոլորակի զար-  
գացման ողջ պատմության ընթացքում տեղի է ունեցել նյու-  
թերի տարբերակում (դիֆերենցում)՝ ծանր տարրերը ձգտել են  
իջնել Երկրի խորքը, թեթևները՝ բարձրացել են, որի հետե-  
վանքով Երկրագնդի կտրվածքում պարզորոշ արտահայտված  
թաղանթներ են առաջացել: Դրանք իրարից տարբերվում են  
խտությամբ: Երկրի միջուկում կուտակվել են ծանր նյութերը՝  
երկաթ, նիկել և այլն, որոնք մեծացնում են Երկրի միջին խը-  
տությունը:

Արեգակնային համակարգի երկրային խմբի մոլորակները  
(Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս) մյուս մոլորակներից  
տարբերվում են համեմատաբար մեծ խտությամբ:

Երկրի համեմատաբար մեծ խտության շնորհիվ (ամենա-  
մեծը Արեգակնային համակարգում) ստեղծվում է ծանրահակ  
դաշտի մեծ լարվածություն: Վերջինս չափվում է ծանրու-

թյան ուժի արագացումով, որը Երկրի ծանրահակ և կենտրոնախույս ուժերի համագործն է: Մանրության ուժի արագացումը ծովի մակարդակին հավասար է 981 գալ կամ 981 սմ/վրկ<sup>2</sup>: Մանրության ուժի արագացումը բևեռներից դեպի հասարակած փոխվում է 983 գալ-ից մինչև 978 գալ:

Տիեզերական ձգողության օրենքի համաձայն Երկրի կենտրոնից հեռանալիս (լեռները բարձրանալիս) ծանրահակ ուժը փոքրանում է, իսկ դեպի Երկրի խորքը՝ սկզբում աճում է հասնելով 1037 գալ-ի (միջուկի սահմանում), ապա պակասելով Երկրի կենտրոնում հավասարվում է 0-ի:

Երկրակեղևի տարբեր մասերում ապարների տարբեր խրտության պատճառով նկատվում են ծանրահակ ուժի տարբերություններ: Ժամանակակից երկրաֆիզիկական գիտնականները պիտի սարքերով, որոնց միջոցով չափվում են ծանրահակ ուժի ամենափոքր անկանոնությունները (անոմալիաները) և մեկնաբանվում դրանց պատճառները: Երիտասարդ ծաղբավոր երկրներում նկատվում է ծանրահակ ուժի բացասական անկանոնություն: Բանն այն է, որ լեռնային երկրներում տեղի է ունենում հողմահարված նյութի արագ տեղատարում դեպի օվկիանոս, որտեղ նստվածքները ավելացնում են երկրակեղևի ստորջրյա զանգվածը: Օվկիանոսային կեղևը ծանրանալով պետք է թաղվի վերին մանթիայի՝ ասթենոսֆերայի մեջ և այստեղից պետք է կատարվի նյութի հոսք դեպի լեռնաշղթաների արմատները: Լեռնաշղթաները տեղատարման հետևանքով թեթևանալով սկսում են բարձրանալ, իսկ նրանց տակ նյութերի ներհոսք դեռևս դանդաղ է և չի հավասարակշռում բարձրացմանը: Ահա սրա պատճառով, որպես ընդհանուր օրինաչափություն, լեռնային երկրները ունեն ծանրահակ ուժի բացասական անկանոնություն:

### ԵՐԿՐԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկիրը, ինչպես նաև երկնային մարմինների մեծամասնությունը, օժտված են մագնիսականությամբ: Էլեկտրալիցքավոր Երկիրը պատվելով երկաթյա միջուկի շուրջը առաջացնում է մագնիսական դաշտ: Արեգակը նույնպես իր շուրջը մագնիսական դաշտ է ստեղծում, և նրա մակերևույթին կատարվող երևույթները՝ բժեբրը, գունդորտի բռնկումները, մագ-

նիսական փոթորիկներ են առաջացնում և ազդում են Երկրի մագնիսական դաշտի վրա: Երկրի մագնիսական դաշտում նըշվում են երեք կարևոր տարրեր՝ լարվածություն, խոտորում և խոնարհում:

Ազատ թողնված մագնիսական սլաքը Երկրի վրա որոշակի դիրք է ընդունում՝ համընկնում է մագնիսական միջօրեականների հետ: Երկրագնդի վրա մագնիսական միջօրեականները շեռհամընկնում աշխարհագրական միջօրեականներին, մագնիսական բևեռներն էլ աշխարհագրական բևեռներից բավական հեռու են և միշտ նույն տեղը չեն զբաղեցնում, նկատվում են տեղաշարժեր: Հյուսիսային կիսագնդում մագնիսական բևեռը գտնվում է Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասում, Հարավային կիսագնդում՝ Անտարկտիդայի ափամերձ հատվածում, արևելյան երկայնության մոտավորապես  $142^{\circ}$ -ի տակ:

Այն անկյունը, որը տեսցվում է մագնիսական սլաքի ուղղության և իրական միջօրեականի միջև, կոչվում է մագնիսական խոտորում. այն կարող է լինել արևելյան կամ արևմուտյան: Երկրագնդի մակերևույթի վրա այն գիծը, որը միացնում է հավասար խոտորում ունեցող կետերը, կոչվում է իզոգոն:

Հանգիստ վիճակում գտնվող մագնիսական սլաքը հորիզոնական վիճակում կարող է լինել միայն մագնիսական հասարակածի վրա: Նրանից հյուսիս ու հարավ սլաքի ծայրը անպայման կհակվի ու հորիզոնական հարթության նկատմամբ որոշակի անկյուն կկազմի, որը և կոչվում է խոնարհում: Այդ անկյունը՝ մագնիսական հակումը, ամենից մեծ կլինի մագնիսական բևեռներում:

Մագնիսական դաշտի ուժը բնորոշվում է նրա լարվածությամբ: Լարվածության միավորն է էրստեդը (երկրագնդի վրա  $Z$ . Կ. էրստեդի անվամբ): էրստեդը այնպիսի լարվածություն է, որի ուժը մագնիսական զանգվածի միավորի վրա կազմում է 1 դին: Երկրի մագնիսական դաշտի լարվածությունը մեծ չէ. մագնիսական հասարակածի վրա՝  $0,3-0,5$  է, իսկ բևեռներում՝  $0,6-0,7$  է:

Երկրի մակերևույթի վրա նկատվում են մագնիսական դաշտի լարվածության մեծ տատանասահմաններ (առավելի տուղներ). եթե դրանք ընդգրկում են մեծ մակերես, ապա դրանք

տեղատարածքային (ռեգիոնալ) անկանոնություններն են, ինչպես օրինակ Արևելա-Սիրիականը: Կան և մեկուսացած, տեղային (լոկալ) անկանոնություններ, ինչպես օրինակ, Կուրս-Վի մագնիսական անոմալիան (անկանոնությունը):

Երկրի մակերևույթին նկատվում են մագնիսական դաշտի լարվածության փոփոխականեր (վարիացիաներ) տարբեր պարբերականությամբ՝ տարեկան, օրական, լուսնային, 11-ամյա՝ կապված արեգակնային ակտիվության հետ և այլն: Հատկապես ուժեղ են պլազմայի՝ արեգակնային քամու հետ կապված մագնիսական փոթորիկները:

Երկրի մագնիսական դաշտը տարածվում է մթնոլորտում մինչև 90 հազ. կմ: Մինչև 44 հազար կմ դաշտի լարվածությունը թուլանում է, ապա՝ մինչև 80 հազ. կմ դառնում է անկայուն, որից բարձր արագորեն ընկնում է: 90 հազ. կմ վրա մագնիսական դաշտն արդեն անկարող է լիցքավորված մասնիկներ խլել: Այժմ շատ գիտնականներ մթնոլորտի վերին սահմանը համարում են այդ բարձրությունը՝ Արևից եկող լիցքավորված մասնիկները, ընկնելով Երկրի մագնիսական դաշտի ոլորտը, խլվում են նրա կողմից: Հենց այս ոլորտն անվանում են մագնիսոլորտ (մագնիտոսֆերա): Լիցքավորված մասնիկը մագնիսոլորտում շարժվում է այնքան, մինչև որ հանդիպի հակալիցք մասնիկի. նրանց բախումից ստեղծվում է շեղոք մասնիկ:

Մեծ էներգիայով օժտված լիցքավորված մասնիկները կարողանում են ավելի շատ մոտենալ Երկրին և առաջացնում են բևեռափայլի երևույթը: Մագնիսոլորտը անընդհատ փոփոխվում է, սակայն հուսալի կերպով պահում է դեպի Երկրի մակերևույթը սլացող բարձր էներգիայով պրոտոնների ու էլեկտրոնների հոսքը: Մագնիսական դաշտի լարվածության փոփոխակաների (վարիացիաների) և կլիմայական պայմանների ձևավորման մեջ որոշակի կապ է նկատվում: Երկրաբանական պատմության ընթացքում Երկրի մագնիսականությունը ենթարկվել է մեծ փոփոխությունների: Մնացորդային մագնիսականության ուսումնասիրությունից պարզվել է, որ շրթորդական ժամականաշրջանում Երկրի մագնիսական բևեռները մի քանի անգամ փոխել են իրենց տեղերը:

## ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի աշխարհագրական տարածությունը ըստ Կ. Կ. Մար-  
Պոլի և Ի. Ա. Սուետովայի (1978) ընդգրկում է աշխարհագր-  
րական թաղանթը, ամբողջ մթնոլորտը մինչև մագնիսոլորտի  
սահմանը և ծանրահակ դաշտի սահմանները՝ մի տարածու-  
թյուն, որտեղ տեղի են ունենում տիեզերական էներգիայի,  
Երկրի ներքին նյութի ու էներգիայի փոխակերպումներ: Աշ-  
խարհագրական տարածությունը ասիմետրիկ է. դեպի Արե-  
գակը նրա ընդգրկած տարածությունը փոքր է, մինչև 90 հա-  
զար կմ, իսկ հակառակ կողմում՝ հարյուրավոր անգամ մեծ:

## ԵՐԿՐԱԳՆԴԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Երկրագնդի տարբեր ոլորտներ ունեն քիմիական տարբեր  
կազմ: Միջուկում կուտակվել են ծանր մետաղները, հիմնա-  
կանում երկաթը, նիկելը: Մանթիայում տիրապետող տարրեր  
ու միացություններ են՝ MgO, FeO, SiO<sub>2</sub>: Երկրակեղևը կազ-  
մըված է ավելի թեթև տարրերից. հիմնականում թթվածնից՝  
47%, սիլիցիումից՝ 29,5%, ալյումինիումից՝ 8,05%, երկա-  
թից՝ 4,65%, կալցիումից՝ 2,96%, նատրիումից՝ 2,5%, կա-  
լիումից՝ 2,5%, մագնեզիումից՝ 1,87%: Բացի այդ հիմնա-  
կան տարրերից քարոլորտում գտնվում են՝ տիտան, մանգան,  
ֆոսֆոր, ֆտոր, բարիում, ծծումբ, ստրոնցիում, քլոր, ցիրկո-  
նիում, ռուբիդիում, որոնց քանակությունը տատանվում է  
0,45-ից մինչև  $1,5 \cdot 10^{-12}$ %-ի միջև: Կան քիմիական տարրեր  
էլ, որոնց քլարքները<sup>1</sup> արտահայտվում են շնչին մեծությամբ՝  
ռադիում, ակտինիում, պոլոնիում, պլուտոնիում, ռադոն՝  
 $1,1 \cdot 10^{-10}$ — $7 \cdot 10^{-16}$ %:

Այն քիմիական տարրերը, որոնց քլարքները 0,01-ից ցածր  
են, կոչվում են հազվագյուտ: Կան այնպիսիներ էլ, որոնք նը-  
ման քլարքներ ունեն, բայց կուտակումներ չեն առաջացնում,  
դրանք կոչվոս՝ են հազվագյուտ, ցրիվ տալրեր:

Ինչպես տեսանք, քարոլորտի գրեթե կեսը կազմված է  
թթվածնից (քլարքը 47), իսկ թթվածինը սիլիցիումի, ալյու-  
մինիումի հետ կազմում է 84,5%, եթե սրանց գումարենք նաև

<sup>1</sup> Քլարքը քիմիական տարրերի քանակական արտահայտման միավոր է՝  
%: այդպես է կոչվում ի պատիվ ամերիկացի գիտնական Յ. Քլարքի:

երկաթը, նատրիումը, կալցիումը, մագնեզիումը և կալիումը, ապա կտտացվի 99,03 %, նշանակում է Մենդելևեի աղյուսակի մնացած տարրերին բաժին է հասնում 1 %-ից էլ պակաս:

Վերը բերված քլարքները հաշվարկված են կշռային հարաբերությամբ. եթե տրվեն ծավալային տոկոսները, այսինքն զանազան տարրերի ատոմների բռնած ծավալը տարածության մեջ, ապա կնկատենք, որ քարոլորտում տիրապետողը թթվածինն է (91,8 %), որի խոշոր իոնները ուղղակի հպվում են միմյանց, իսկ մնացած իոնները տեղավորվում են թթվածնի իոնների արանքներում:

Ջրոլորտն ամբողջությամբ կազմված է ջրից, որի մեջ լուծված են տարբեր քիմիական տարրեր՝ թթվածին 88,81 %, ջրածին 11,19 % և լուծված աղեր, որոնցում մեծ բաժին են կազմում  $\text{NaCl}$ —78,2 %,  $\text{MgCl}_2$ —9,44 %,  $\text{KCl}$ —1,69 %,  $\text{MgSO}_4$ —6,4 %,  $\text{CaSO}_4$ —3,94 % և այլն:

Այլ քիմիական կազմ ունի մթնոլորտը: Նրա ստորին շերտում՝ ստորին ոլորտում (տրոպոսֆերա) գրեթե ամենուրեք գազերի նույն հարաբերությունն է՝ ազոտ՝ 78,08 %, թթվածին՝ 20,94 %, արգոն՝ 0,93 %, ածխաթթու գազ՝ 0,03 % և այլ գազեր՝ 0,02 %: Կան նաև ջրային գոլորշիներ ու փոշի: Բարձր շերտերում այդ հարաբերությունը փոխվում է. 10—20 կմ-ից մինչև 50—60 կմ թթվածինը առաջացնում է օզոնի շերտ: 80 կմ-ից բարձր Արեգակի ուլտրամանուշակագույն և կորպուսկուլային ճառագայթման ազդեցության տակ գոյություն ունեն թթվածնի և ազոտի լիցքավորված ատոմներ, ազոտի լիցքավորված մոլեկուլներ և ազատ էլեկտրոններ: 1000 կմ-ից բարձր շերտերում մթնոլորտը հիմնականում կազմված է հելիումից, իսկ 2000 կմ-ից բարձր՝ ջրածնից:

Երկրի մթնոլորտի քիմիական կազմը մշտապես փոխվել է: Մոլորակի զարգացման անկենսածին (աբիոգեն) փուլում՝ սրանից մոտ 3—3,5 միլիարդ տարի առաջ թթվածինը բացակայել է. տիրապետել են ածխաթթու գազը, ազոտը և այլ գազեր: Բուսական ծածկույթի ստեղծմամբ  $\text{H}_2\text{O}$  և  $\text{CO}_2$  մոլեկուլները տրոհվել են, ֆոտոսինթեզի պրոցեսում ածխածինը միացել է ջրածնի հետ, թթվածինն ու ջուրը մուտք են գործել մթնոլորտ, օդը հարստացել է թթվածնով, իսկ ածխածնի մի մասը մտնելով ածխաջրերի կազմի մեջ առաջացրել է քարածխի

վիթխարի պաշարներ: Այսպիսով մթնոլորտի ժամանակակից քիմիական կազմը Երկրագնդի էվոլուցիոն զարգացման արգասիք է:

Եթե ընդհանրացնենք Երկրագնդի միջին քիմիական կազմը (մթնոլորտի հետ միասին), ապա կատացվի հետևյալ պատկերը՝ երկաթ՝ 34,6 %, թթվածին՝ 29,5, սիլիցիում՝ 15,2, մագնեզիում՝ 12,7, նիկել՝ 2,39, ծծումբ՝ 1,9, կալցիում՝ 1,13, ալյումինիում՝ 1,09, նատրիում՝ 0,57 % և այլն: Ինչպես տեսնում ենք Երկրի քիմիական կազմը արմատապես տարբերվում է աստեղանյութից, որտեղ տիրապետողները ջրածինն ու հելիումն են:

### ԵՐԿՐԻ ՈՂՈՐՏԱՑԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Երկրագունդը համասեռ չէ: Սկսած նրա կենտրոնից մինչև մթնոլորտի վերին սահմանը՝ այն կազմված է համակենտրոն ոլորտներից: Մոլորակի էվոլուցիայի առաջին փուլում այդ ոլորտները բացակայել են, այն կազմված է եղել սառը պլանետոզիմալներից, իսկ սկզբնական մթնոլորտը՝ ջրածնից ու մեթանից: Արեգակի բոլոր տեսակի ճառագայթները հասել են Երկրի մակերևույթին: Շուրջ 4,5 միլիարդ տարի առաջ, երբ Երկրագնդի զանգվածը հասել է մոտավորապես այժմյան շափերին, սկսվել է խորքային մասերի տաքացումը: Տաքացման էներգետիկ աղբյուրներն էին՝ ժանրահակ (գրավիտացիոն) սեղմումը և ռադիոակտիվ տրոհումը: Երկրի խորքային ջերմաստիճանն այնքան է բարձրացել, որ տեղի է ունեցել մետաղների հալում, Երկրի ձգողական ուժի հետևանքով ծանր նյութերն սկսել են իջնել կենտրոն, իսկ թեթևները, հատկապես կայծքարատները (սիլիկատները) բարձրացել են, կատարվել է նյութերի վերադասավորություն՝ ըստ խտության: Այսպես են առաջացել Երկրի ոլորտները՝ ներքին միջուկը, արտաքին միջուկը, ներքին մանթիան, միջին մանթիան, վերին մանթիան (ասթենոսֆերան), քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը: Երկրի կենտրոնից մինչև քարոլորտի մակերևույթ եղած ոլորտները պայմանականորեն կոչվում են ներքին երկրոլորտներ (գեոսֆերաներ): Ներքին երկրոլորտների ուսումնասիրմամբ զբաղվում են երկրաբանությունը, երկրաֆիզիկան, երկրաքիմիան: Զրոլորտն ու մթնոլորտը արտաքին երկրոլորտ-

ներն են, որոնց ուսումնասիրմամբ զբաղվում են ջրաբանությունը (հիդրոլոգիան), մթնոլորտի ֆիզիկան, օդերևութաբանությունը:

Քարոլորտի, ջրոլորտի և մթնոլորտի շփման զոնայում առանձնացվում է աշխարհագրական ոլորտ-թաղանթը: Սրա սահմաններում, այնտեղ, որտեղ տարածվում են կենդանի օրգանիզմներ, առանձնացվում է կենսոլորտը (բիոսֆերան), որը կենսաբանների ուսումնասիրման առարկան է: Կենսոլորտն իր սահմաններով փաստորեն համընկնում է աշխարհագրական թաղանթին:

Կենսոլորտն այն ոլորտն է, որտեղ կոշտ, հեղուկ և գազային թաղանթները փոխադարձաբար ներթափանցում են միմյանց մեջ: Աշխարհագրական ոլորտը ավելի լայն հասկացություն է, ընդգրկում է նաև ոչ օրգանական գոյացությունները, քանի որ նրա սահմաններում ուսումնասիրության օբյեկտներ են ոչ միայն կենսական պրոցեսները, այլև «անկենդան» բնությունը:

## ԾՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՅԱՄԱՔԻ ՌԵԼԻԵՅԸ

### ԾՐԿՐԱՇԱՐԺԱՅԻՆ (ՍԵՅՍՄԻԿԱԿԱՆ)

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրկրի ներքին կառուցվածքի մասին մեր տեղյակությունը շատ սահմանափակ է: Ծրկրի մակերևույթն ուսումնասիրելիս, մենք հնարավորություն ունենք զննել այն անմիջապես, հետազոտել երկրակեղևի ապարները լաբորատորիաներում, օգտագործել բազմաթիվ մեթոդներ՝ երևույթների ու պրոցեսների օրինաչափությունները մեկնաբանելու համար: Անհնար է Ծրկրի խորքում կատարվող երևույթները անմիջականորեն դիտել: Նյութի վիճակի վերաբերյալ մեր իմացությունը սահմանափակվում է սեյսմիկ ալիքների հաղորդած տեղեկությամբ:

Ծրկրաշարժի ժամանակ առաջանում են երկայնակի, լայնակի և մակերևութային ալիքներ: Սրանք տարբեր խտության միջավայրում տարբեր արագություն ունեն: Ամենամեծ արագություն ունեն երկայնակի ալիքները (P): Լայնակի ալիքների (S) արագությունը ավելի պակաս է, և դրանք անցնում են միայն պինդ միջավայրով, հեղուկ և գազային միջավայր-

րում անմիջապես մարում են: Մակերևութային ալիքները (L) տարածվում են միայն քարոլորտի մակերևութով, ունեն ամենափոքր արագությունը՝ և տարածման ուղղությամբ աստիճանաբար մարում են: Սրանք են, որ ավերածությունները պատճառ են դառնում:

Ակներև է, որ երկրաշարժի օջախից որոշ հեռավորության վրա գտնվող սեյսմիկ կայան ամենից շուտ հասնում են մեծ արագություն ունեցող երկայնակի ալիքները, ապա՝ լայնակի և վերջում՝ մակերևութային: Իմանալով տարբեր ալիքների անցման արագությունը, նրանց տեղ համեմուտ ժամանակամիջոցների տարբերությամբ կարելի է որոշել երկրաշարժի օջախի հեռավորությունը: Երկրի վրա տեղադրված երեք կայանների տվյալներով ճշտությամբ որոշում են երկրաշարժի օջախի տեղը:


Ժամանակակից երկրաշարժագիտությունը (սեյսմոլոգիան) ցույց է տալիս, որ երկրաշարժի ալիքները տարածվում են ոչ միայն կարծր քարոլորտում, այլ նաև մանթիայի ու Երկրի միջուկի մեջ և հատելով Երկրագունդը նորից դուրս են գալիս Երկրի մակերևութի հակառակ կողմը: Նլնելով այն փաստից, որ տարբեր խտություն ունեցող միջավայրում երկրաշարժի ալիքները տարբեր արագություն ունեն, դժվար չէ կռահել, թե Երկրի խորքում նյութի վիճակն ինչպիսին է:

Երկրի տարբեր մասերում տեղի ունեցող ուժեղ երկրաշարժերի գրանցումները բավականաչափ տվյալներ են հաղորդում երկրի խորքում նյութի խտության ու ֆիզիկական վիճակի մասին գաղափար կազմելու համար: Ընդ որում, տարբեր խտության միջավայրերի սահմանում սեյսմիկ ալիքների մի մասը անդրադառնում է և վերադառնալով գրանցվում է երկրաշարժի օջախին մերձակա սեյսմիկ կայանում: Վերջին ժամանակներս երկրակեղևի և ավելի խորը շերտերի ուսումնասիրությունները կատարվում են ոչ միայն բնական, այլև արհեստական երկրաշարժերի՝ պայթյունների միջոցով: Երկրաշարժագիտության տվյալների վերլուծությունից պարզվել է, որ երկրաշարժի երկայնակի ալիքները, հասնելով երկրակեղևի հիմքին՝ Մոհորովիչի<sup>1</sup> մակերևութին (կարճ՝ Մոհոյի մակերևութ)<sup>1</sup>, իրենց արագությունը միանգամից մեծացնում են

<sup>1</sup> Հարավսլավացի գիտնական Ա. Մոհորովիչի անվամբ է կոչվում:

6 կմ/վրկ-ից մինչև 8 կմ/վրկ, այնուհետև արագությունն աստիճանաբար աճելով՝ 2900 կմ խորության վրա հասնում է 13,6 կմ/վրկ-ի: Այս սահմանում արագությունը թռիչքաձև նըվազում է և կազմում 8 կմ/վրկ ու նորից աստիճանաբար աճելով մինչև Երկրի կենտրոն, հասնում է 11 կմ/վրկ-ի: Կայնակի ալիքները 2900 կմ խորությունից (Վիխերտ-Գուտենբերգի սահման) անդրադառնում են և ավելի խորը շեն թափանցում: Այսպիսով, Երկրի խորքում կարելի է առանձնացնել երեք հիմնական ոլորտ՝ քարոլորտ՝ 5—70 կմ, մանթիա՝ մինչև 2900 կմ և միջուկ՝ 2900—6370 կմ:

Երկրի միջուկը բաժանվում է երկու ենթոլորտների՝ ներքին միջուկ և արտաքին միջուկ (նկ. 2): Ներքին միջուկում նյութը կազմված է նիկելային երկաթից և ունի 12 գ/սմ<sup>3</sup> խտություն: Ներքին միջուկի վիճակի մասին մենք միայն դատողություններ կարող ենք անել: Նյութն այնտեղ ունի մեզ համար անհայտ հատկություններ: Ենթադրվում է, որ այնտեղ ջեղմաստիճանը հասնում է 5000-ի, ճնշումը՝ 3,5 մլն մըթնոլորտի:



Նկ. 2 Երկրի ոլորտները

Արտաքին միջուկը գտնվում է 2900—4980 կմ խորություններում. այստեղ ճնշումը կազմում է 1,37—2,7 մլն մթնոլորտ, նյութի խտությունը՝ 9,4—10,8 գ/սմ<sup>3</sup>: Այն նույնպես կազմված է երկաթի ու նիկելի խառնուրդից: Արտաքին միջուկը ունի նյութի պլաստիկ վիճակի հատկանիշներ:

Մանթիան Երկրի կտրվածքում միջանկյալ ոլորտն է՝ կազմված մագնեզիումից, թթվածնից, երկաթի ենթօքսիդից, սիլիկատներից, որոնք առաջացնում են մագմա: Այս նյութերին խառնված են ջուր, քլոր, ֆտոր և ցնդող այլ տարրեր:

Մանթիան ֆիզիկաքիմիական հատկանիշներով բաժանվում է երեք ենթոլորտի: Ատորին մանթիան տարածվում է

700

2900 կմ-ից մինչև 1000 կմ խորությունները, միջին մանթիան՝ 1000 կմ-ից մինչև 300 կմ, վերին մանթիան՝ ասթենոսֆերան (բառացի թարգմանությամբ՝ թույլ ոլորտ) 300 կմ-ից 5—70—80 կմ խորությունները (մինչև Մոհոյի մակերևույթը կամ քարոլորտի ստորին մակերևույթը)։

Մանթիայում ջերմաստիճանն ըստ խորության աճում է՝ քարոլորտի տակ 500—1000°, վերին մանթիայում՝ 1400—1700°, միջին մանթիայում՝ 1700—2400°, ներքին մանթիայում՝ 2400—5400°։ Մանթիայում փափկած, կիսափափկած, հալված ու կիսահալված զանազաններում գործում են կոնվեկտիվ (ուղղաձիգ) հոսանքներ. ծանր նյութերը դանդաղ իջնում են, թեթևները՝ բարձրանում։ Կոնվեկտիվ հոսանքները ասթենոսֆերայում վերածվում են հորիզոնական շիթերի։ Մագմայի շիթերի շնորհիվ երկրակեղևի սալերը տեղաշարժվում են տարբեր ուղղություններով. մի դեպքում բարձրանում են միմյանց վրա, մյուս դեպքում՝ հեռանում իրարից։ Թույլ ոլորտում պերիդոտիտային և բազալտային նյութը գտնվում է ակտիվ վիճակում, այստեղից են սկիզբ առնում հրաբխային արտավիժումները, թույլ ոլորտում ու մասամբ միջին մանթիայում են առաջանում խորաֆոկոս երկրաշարժերը։

### ԵՐԿՐԱԿԵՂԵՎ


Երկրի կտրվածքում ասթենոսֆերայից վեր տարածվում է պինդքարային ոլորտը. սրան անվանում են երկրակեղև։ Այս ոլորտի վերին մասը կոչվում է քարոլորտ (շիթոսֆերա), իսկ ներքին մասը անվանում են ստորին քարոլորտ՝ որտեղ նյութերը բարձր ջերմաստիճանի շնորհիվ փափկած վիճակում են։ Երկրակեղևի ուսումնասիրմամբ զբաղվում է երկրաբանութունը։ Երկրակեղևի մակերևութային ձևերը ուսումնասիրում է երկրաձևագիտությունը (գեոմորֆոլոգիան)։ Երկրակեղևի առաջացման ու զարգացման վերաբերյալ կան շատ, երբեմն հակադիր տեսություններ։

Մինչև XX դարը, երբ գիտության մեջ իշխում էր Երկրի առաջացման Կանտ-Լապլասյան գիտաբնթադրությունը, ենթադրվում էր, որ մոլորակի զարգացման առաջին փուլում հրահեղուկ Երկրագունդը ջերմության ճառագայթման հետեւանքով մակերևույթից տկսել է պաղել, և նրա վրա առաջացել

է երկրակեղև, այստեղից էլ մնաց «երկրակեղև» տերմինը: Պաշելու հետևանքով Երկրի մակերևույթի ծավալը փոքրացել է, երկրակեղևը կծկվել է, և այդ կերպ էլ նրա վրա առաջացել են լեռնաշղթաներ:

XX դարի երկրորդ կեսին, երբ Երկրի ծագման ավելի հավանական գիտահենթադրույթուն ընդունվում է Շմիդտի տեսակետը, երկրակեղևի առաջացումը դիտվում է որպես քիմիական տարրերի անընդհատ շրջապտույտի ոլորտ:

Երկրի կեղևի երկու հիմնական տիպ են առանձնացնում՝ մայրցամաքային (կարճ՝ ցամաքային) և օվկիանոսային: Արբանյ միջև տարբերում են նաև ուֆտային ու անցողիկ զոնաները: Ցամաքային կեղևը կազմված է երեք հիմնական շերտերից՝ նստվածքային, գրանիտային, բազալտային: Օվկիանոսային տիպի կեղևում գրանիտային շերտը բացակայում է կամ շատ աննշան է, ուստի բազալտների վրա անմիջապես գտնվում են նստվածքային ապարները (նկ. 3):



Նկ. 3. Երկրակեղևի տիպերը.

1— նստվածքային ապարներ, 2— գրանիտներ, 3— բազալտներ, 4— թուլուր (ասթենոֆերա):

Այս երկու կեղևները տարբեր հաստություն ունեն. օվկիանոսային կեղևը շատ բարակ է, ընդամենը 3—10 կմ, տարածվում է օվկիանոսների տակ: Ցամաքային երկրակեղևը պլատֆորմներում ունի 30—40 կմ հաստություն, իսկ լեռնային հա-

մակարգերում մինչև 60—80 կմ: Օրինակ, Մեծ Կովկասում՝ մինչև 60 կմ, Հայկական ՍՍՀՄ-ում՝  $50 \pm 2$  կմ և այլն:

Երկրակեղևում գրանիտային և բազալտային շերտերը միմյանցից անջատվում են Կոնրադի մակերևույթով, որը պարզորոշ արտահայտվում է երկրաֆիզիկական մեթոդներով: Լեռնային երկրները սովորաբար բարձրանում են, և ջրբաժանային մասում գրանիտային շերտը հաճախ հայտնվում է երկրի մակերևույթին:

Ցամաքային տիպի երկրակեղևում գրանիտային շերտի առաջացման վերաբերյալ կան մի շարք գիտահնթադրույթուններ: Այս հարցը դեռևս իր վերջնական լուծումը չի ստացել: Ոմանք գրանիտները դիտում են որպես մագմատիկ ծագման ապարներ, մյուսները՝ փոխակերպային (մետամորֆային): Վերջին ժամանակներս Ս. Մ. Գրիգորևը առաջարկել է բոլորովին նոր տեսակետ, ըստ որի գրանիտները առաջացել են բազալտներից՝ դրենածային թաղանթում ջրի և գոլորշիների շրջապտույտի միջոցով:

Ըստ վերոհիշյալ տեսության՝ այսպիսին է գրանիտների առաջացման համառոտ սխեման: Երկրակեղևում որոշ խորութային տակ գոյություն ունի ջրի և ջրային գոլորշիների ուղղաձիգ շրջապտույտ. բարձր ճնշման հետևանքով ջուրը չի կարողանում գոլորշիանալ, իր մեջ լուծում է տարբեր քիմիական տարրեր և հասնում է Մոհոյի մակերևույթին, որտեղ և ջրային հագեցած լուծույթների կրիտիկական ջերմաստիճանի ( $450^\circ$ ) տակ գոլորշիանում է: Քիմիական ծանր տարրերը, որ վերին հորիզոններում լուծվել էին ջրի մեջ, այժմ անջատվում են, մեծացնում Մոխոյի շերտի խտությունը: Ջրային գոլորշիները սկսում են բարձրանալ և քանի որ  $\text{SiO}_2$ -ը ջրային գոլորշու մեջ ալիլի լավ է լուծվում, քան ջրում, ուստի վեր բարձրանալիս գոլորշին իր հետ տանում է նաև սիլիկաթթու: Հասնելով Կոնրադի մակերևույթին, որտեղ ջերմաստիճանը  $374^\circ$  է (թորած ջրի կրիտիկական աստիճանը), գոլորշին նորից վերածվում է ջրի, և քանի որ սիլիկաթթուն ջրի մեջ լավ չի լուծվում, անջատվում է և միջավայրը հարստացնում է  $\text{SiO}_2$ -ով: Հեղուկ ագրեգատային վիճակի անցնելիս՝ ջուրը լուծում է համեմատաբար ծանր տարրերը և նորից իջնում ցած: Անվերջ տեղի ունեցող այս շրջապտույտի միջոցով Մոհոյի հորիզոնը

հարստանում է ծանր տարրերով, կորցնում է  $\text{SO}_2$ , իսկ Կոն-  
րադի մակերևույթը կորցնում է ծանր տարրերը, հարստանում  
է համեմատաբար թեթև  $\text{SiO}_2$ -ով: Այսինքն Կոնրադի մակերե-  
վույթում բազալտը վերածվում է ավելի թեթև գրանիտի:

Բարձրացող լեռնային երկրներում միլիոնավոր տարիներ  
ընթացքում բազալտները Կոնրադի մակերևույթում վերած-  
վում են գրանիտների և հետագայում հասնելով երկրի մակե-  
րևույթին՝ մերկանում են, հողմահարման ենթարկվում, տե-  
ղատարվում, գետերով հասնում են օվկիանոս ու նստում հա-  
տակին:

Օվկիանոսային տիպի երկրակեղևում գրանիտային շերտի  
քացակայությունը բացատրվում է նրանով, որ այստեղ երկ-  
րակեղևը անընդհատ թաղվում է վերին մանթիայի մեջ՝ նրստ-  
վածքային ապարները որոշ խորություն տակ հարստանում են  
ջրային լուծույթներից անջատված նյութերով և ի վերջո դառ-  
նում բազալտներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ օվկիա-  
նոսային տիպի երկրակեղևում նստվածքային ժազման շեր-  
տերի հաստությունը մեծ չէ: Ընդամենը մի քանի կիլոմետր  
հզորություն ունեցող նստվածքների տակ հայտնվում է բա-  
զալտը: Հարց է առաջանում. ի՞նչ են լինում հարյուր միլիո-  
նավոր տարիների ընթացքում կուտակված նստվածքային ա-  
պարները: Պարզվում է, որ դառնալով բազալտներ՝ նրանք  
թաղվում են մանթիայի մեջ, հալվում են և Մոհոյի մակերե-  
վույթով դանդաղ հոսում են լեռնային երկրների տակ, լրաց-  
նելու նրանց բարձրացման հետևանքով առաջացած ծանրա-  
հակ բացասական անկանոնությունը (անոմալիան):

Օվկիանոսային և ցամաքային տիպերի երկրակեղևների  
հաստություն տարբերությունը սովորաբար բացատրվում է  
այսպես կոչված իզոստազիայի երևույթով:

Իզոստազիայի երևույթի էությունն այն է, որ երկրակեղևը  
վերին մանթիայում հիդրոստատիկ իմաստով հավասարակը-  
շռոված է: Որոշ խորություն տակ քարոլորտի հիմքում ճըն-  
շումը միավոր մակերեսի վրա ամենուրեք հավասար է: Իզոս-  
տատիկ հավասարակշռություն ստացվում է շնորհիվ այն բա-  
նի, որ նախ՝ երկրակեղևի հզորությունը հակադարձ համեմա-  
տական է նրա խտությունը (օվկիանոսային կեղևը խիտ լի-  
նելով հանդերձ ավելի բարակ է, քան ավելի փոքր խտու-

թյուն ունեցող ցամաքային կեղևը), ապա՝ վերին մանթիայի նյութի խտությունը տարբեր է: Իզոստազիան ձգտում է կեղևի հավասարակշիռ վիճակի անցնել, սակայն հավասարակշիռ վիճակ չի հաստատվում այն պատճառով, որ ցամաքներն անընդհատ տեղատարվում են, թեթևանում, բարձրանում, իսկ օվկիանոսների հատակում կեղևը ծանրանում է նստվածքային շերտերով: Օրինակ՝ Մեծ Կովկասը տարեկան բարձրանում է 8—12 մմ, մինչդեռ հարևան Կովխիդայի դաշտավայրը իջնում է, Սկանդինավյան թերակղզին բարձրանում է, Նիդերլանդների ափերը իջնում են: Պարզվել է, որ խոշոր շինարարական աշխատանքների հետևանքով բերված շինանյութերի ծանրության ազդեցության տակ ևս նկատվում է երկրակեղևի իջեցում:

Վերը նշվեց, որ երկրակեղևի հզորությունը հակադարձ համեմատական է նրա խտությանը, այսինքն մեծ խտության կեղևը լինում է բարակ, իսկ փոքր խտության կեղևը՝ հաստ: Եթե համեմատենք կեղևի հզորության տարբերությունները խտության տարբերությունների հետ, կստանանք հետևյալ պատկերը: Ամենահաստ ցամաքային կեղևը լեռներում 10—15 անգամ մեծ է օվկիանոսային կեղևի հաստությունից (70 և 5 կմ), մինչդեռ օվկիանոսային կեղևի խտությունը մեծ է ցամաքային կեղևի խտությունից ընդամենը 1,3 անգամ (խտությունը համապատասխանաբար 2,7 և 3,5 գ/սմ<sup>3</sup>): Այստեղ անհամապատասխանություն է ստացվում, որը միայն իզոստազիայի երևույթով բացատրել հնարավոր չէ: Ըստ երևույթին այլ ազդակներ ևս կան՝ վերին մանթիայի նյութի տարբեր խտությունը, որը նպաստում է ցամաքային կեղևի հզորացմանը: Այդ երևույթը բավական հաջող մեկնաբանվում է դրենաժային թաղանթի գոյությունը: Բանն այն է, որ բարձրացող լեռնային երկրներում ցամաքի բարձրացման հետ մեկտեղ աճում է նաև ստորերկրյա ջրերի հիդրոստատիկ ճնշումը, և այդ ջրերը ավելի խորն են թափանցում ու պաղծեցնում են լեռների արմատները:

### ՊԼԱՏՅՈՐՄՆԵՐ ԵՎ ԳԵՈՍԻՆԿԻՆԱԼՆԵՐ

Երկրի կեղևը անհամասեռ է. հանդիպում են և՛ ամուր սալեր, և՛ ավելի շարժուն ու ճկուն հատվածներ: Այժմ առանձ-

նացնում են հետևյալ տալերը՝ խաղաղօվկիանոսյան, ամերիկյան, անտարկտիկական, աֆրիկյան, հնդկական, Եվրասիական: Սրանցից յուրաքանչյուրն ունի տարածության մեջ շարժման իր ուղղութիւնը: Եթե սալերն իրարից հեռանում են, ապա առաջանում են ռիֆտային հովիտներ: Քարոլորտը ճեղքվում է իր ամբողջ հզորութեամբ: Ենթադրվում է, որ պալեոզոյում Երկրագնդի վրա գոյութիւն են ունեցել երկու մեգացամաքներ՝ հյուսիսում Լավրասիան (Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Ասիա), հարավում՝ Գոնդվանան (Աֆրիկա, Արաբական թերակղզի, Հնդկական թերակղզի, Ավստրալիա, Անտարկտիդա): Այս երկու մայրցամաքների միջև տարածվել է Թետիս օվկիանոսը:

Մեզոզոյան դարաշրջանից մայրցամաքները տրոհվել են: Այսպես, Գոնդվանայի կենտրոնում (այժմյան Աֆրիկայի տեղում) երկրակեղևի տակ մագմայի վերընթաց շարժման և այդ հոսանքի ցրման հետևանքով ցամաքը տրոհվել է, նրա բաղադրամասերը հեռացել են միմյանցից՝ ձևավորելով առանձին մայրցամաքներ:

Յամաքների միմյանցից հեռանալու երևույթի առաջին բացատրութիւնը տվել է երկրաֆիզիկոս Ա. Վեգեները 1912 թ.: Այդ գիտաենթադրութիւնը սկզբում շատ հետևորդներ ունեցավ, իսկ հետագայում, հատկապես 1930-ական թվականներին փորձեցին ժխտել այն: Վերջին երեք տասնամյակների ընթացքում, անժխտելի փաստերի հիման վրա, որոշակի ճշտումներ մտցնելուց հետո ապացուցվեց տեսութեան ճշտութիւնը և այժմ այն ստացել է համընդհանուր ճանաչում:

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրութիւններից պարզվել է, որ խոշոր սալերը կարող են մեկը մյուսի վրա բարձրանալ, այնպես, ինչպես Սառուցյալ օվկիանոսում կտրատված պակի (մակերևութային սառցի դաշտը) առանձին կտորներ իրար վրա են բարձրանում: Անժխտելի է, որ խաղաղօվկիանոսային սալը մտնում է ամերիկյան սալի տակ. այդ հանդիպման զոնայում առաջացել է Ատակամայի գեոսինկլինալը: Միևնույն ամերիկյան սալն իր հերթին հեռանում է Եվրոպայից ու Աֆրիկայից, դա նշանակում է, որ Ատլանտյան օվկիանոսը լայնանում է, իսկ Խաղաղ օվկիանոսը՝ նեղանում: Երկրակեղևի նշված խոշոր սալերի սահմաններում պարզորոշ

արտահայտված են կառուցվածքային միավորները՝ պլատֆորմներն ու գեոսինկլինալները:

Պլատֆորմը ֆրանսերեն բառ է, նշանակում է «հարթ ձև»: Պլատֆորմները երկրակեղևի այն ամուր հատվածներն են, որոնց սահմաններում տեկտոնական շարժումներն ու հրաբուխային երևույթները մարել են (Ռուսական հարթությունը, Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասը, Սիբիրական պլատֆորմը և այլն): Պլատֆորմի ուղղաձիգ կտրվածքի հիմքում ընկած են խիստ ծալքավորված և բյուրեղացած ապարներ, դրանց վրա դարավել են հորիզոնական կամ գրեթե անընդուն ծալքավորված նստվածքային ժազման ապարներ: Դա նշանակում է, որ պլատֆորմները մեկ անգամ ծալքավորվելով վերածվել են ամրակուռ (կոնսոլիդացված) մարգերի և այլևս չեն ծալքավորվել:

Պլատֆորմների տարածման շրջաններում տեղի են ունեցել երկրակեղևի դանդաղ, դարավոր տատանումներ (էպիյոդգենային շարժումներ), որոնց ազդեցության տակ ցամաքը իջել է, ծածկվել ծովով և միլիոնավոր տարիների ընթացքում ծովային նստվածքները կուտակվելով՝ քողարկել են ծալքավոր հիմքը: Հնարավոր է, որ պլատֆորմների սահմաններում տեկտոնական շարժումները որոշ չափով ձևափոխեն պլատֆորմի նախնական ձևը:

Բարձրացող մասերը կոչվում են անտեկլիզներ (օրինակ, Միջին Ռուսական բարձրության շրջանը Ռուսական պլատֆորմի սահմաններում), իսկ իջած հատվածները՝ սինեկլիզներ (օրինակ, Վիլյույի սինեկլիզը Սիբիրական պլատֆորմի կենտրոնում):

Պարտադիր չէ, որ պլատֆորմները անպայման ծածկվեն ծովով. պլատֆորմների շատ հատվածներ միլիոնավոր տարիների ընթացքում ծովից դուրս են մնում և ենթարկվում հողմահարման: Դրանք կոչվում են վահաններ (Բալթյան, Ուկրաինական, Անաթարի, Կանադական և այլն): Քանի որ վահաններն անընդհատ մաշվել են արտաքին ազդակների ներգործության հետևանքով, և հողմահարված նյութը գետերի միջոցով տարվել է օվկիանոս. ակներև է, որ վահանները թեթեւվացել են, իզոստազիայի շնորհիվ բարձրացել: Նշանակում է հնագույն վահանների տարածման շրջաններում ծալքավոր

հիմքի արմատները բարձրացել են ու մոտեցել երկրի մակերե-  
վույթին: Այդպիսին է, օրինակ, Ֆինլանդիայի տարածքը:

Պլատֆորմների ծալքավոր հիմքերը ամենուրեք միաժամա-  
նակ շեն առաջացել: Կան պլատֆորմներ, որոնց ծագումը ըս-  
կըսվում է մինչպալեոզոյան դարաշրջանից: Դրանք մինչ-  
քեմբրյան պլատֆորմներն են (Ռուսական, Սիբիրական),  
կան նաև ավելի երիտասարդ պլատֆորմներ (Արևմտասիբի-  
րական, Թուրանի և այլն), որոնք առաջացել են պալեոզոյի  
վերջում՝ հերցինյան ծալքավորութան հետևանքով: Ընթացը-  
րություն կա, որ Երկրի երկրաբանական պատմության ըն-  
թացքում պլատֆորմներն աճում են ի հաշիվ գեոսինկլինալ-  
ների: Վերջիններիս տեղում առաջանում են լեռնաշղթաներ և  
ձուլվում են պլատֆորմներին (օրինակ, Ղազախական ծալքա-  
վոր երկիրը միացել է Արևմտասիբիրական պլատֆորմին):

Պլատֆորմներում երկրակեղևի այլաձևումը (դեֆորմա-  
ցիան) ավելի ակտիվ արտահայտվում է պատվածքների—  
խզվածքների ձևով: Դրա ցայտուն օրինակն է աֆրիկյան բեկ-  
վածքը՝ սկսած Մեռյալ ծովից, մեծ լճերի վրայով մինչև  
Ջամբեզիի գետաբերանը: Նույն կարգի է Բայկալ լճի խզված-  
քը և այլն: Երկրաբանական տարբեր ժամանակաշրջաններում  
այդ հսկայական ճեղքերից դուրս են ժայթքել լավաները և  
առաջացրել են ընդարձակ ծածկույթներ: Այս կարգի ծած-  
կույթները Միջին Սիբիրում առաջացել են պալեոզոյի վեր-  
ջին՝ մեզոզոյի սկզբին և կոչվում են տրապներ:

Ընթացըրություններ կան, որ պլատֆորմների որոշ, հատ-  
կապես սահմանային հատվածներ ժամանակի ընթացքում կա-  
րող են վերածվել գեոսինկլինալների:

Գեոսինկլինալները երկրակեղևի ամենաճկուն և շարժուն  
այն զոնաներն են, որոնց տեղում առաջանում են լեռնաշղ-  
թաները: Վերջերս պարզվել է, որ դրանք սովորաբար գտնվում  
են երկու սալերի սահմանում, և սալերից մեկը բարձրանում  
է մյուսի վրա: Ժամանակակից գեոսինկլինալները խորժովյա  
երկարավուն իջվածքներ են և մեծամասամբ գտնվում են ցա-  
մաքային երկրակեղևի եզրին: Գեոսինկլինալներում երկրա-  
կեղևի իջնելուն զուգընթաց կատարվում է ուժեղ նստվածքա-  
կուտակում: Պատահում են շրջաններ, որտեղ գեոսինկլինա-  
լային ռեժիմի պայմաններում միայն մեկ ժամանակաշրջանի

Խասովածքների հզորութունը անցնում է 10 հազար մետրից: Օրինակ՝ Դոնեցկի, Կուզնեցկի ավազաններում կարբոնի նրատվածքներն ունեն ավելի քան 10 հազ. մ հզորութուն:

Գեոսինկլինալները բնորոշվում են խզման և ճմլման ալլաձևութուններով (դեֆորմացիաներով), երկրաշարժային ու հրաբխային երևույթների մեծ ակտիվությամբ, ծանրահակ ուժի անկանոնությամբ, ապարների փոխակերպությամբ, ներժալթուկների լայն տարածմամբ:

Գեոսինկլինալներն անցնում են զարգացման տարբեր փուլեր. ժամանակի ընթացքում նրանց տեղում երկրակեղևի ծալքավորման ու տեկտոնական բարձրացումների շնորհիվ առաջանում են բարձրաբերձ լեռնաշղթաներ: Աշխարհի բոլոր լեռնաշղթաները մի ժամանակ խորը ծովային գեոսինկլինալներ են եղել. ունեն խիստ ծալքավորված հիմք, մազմային ծագման ներժալթուկներ: Գեոսինկլինալները բարդ տեկտոնական կազմավորումներ են: Նրանց զարգացման, ծալքավորման փուլում առաջանում են ծալքերի բարդ համակարգեր՝ անտիկլինորիումներ և անտիկլինորիումների խմբեր՝ մեզաանտիկլինորիումներ, սինկլինորիումներ և այլն:

Վերջին ժամանակներս ծագեց ծալքավորութունների վերաբերյալ մի նոր տեսություն, որը դրանց պատճառ է համարում երկրակեղևում նյութի խտութունների շրջադասությունը (ինվերսիան), երբ ապարների փոխակերպության (մետամորֆիզմի) պրոցեսում նրանց ծավալը մեծանում է, խտությունը՝ փոքրանում, և տեղի է ունենում կոնվեկցիա:

Ռիֆտային զոնաներ. 1920-ական թվականներից գիտության մեջ մտցվեցին «ռիֆտ» տերմինը և նրա ածանցյալները: «Ռիֆտ» անգլերեն նշանակում է «նեղ կիրճ»: Այժմ դրանք երկրակեղևի այն ճեղքվածքներն են, որոնք հասնում են մեծ խորության: Ռիֆտերը լայն շեն (30—70 կմ, երբեմն՝ նույնիսկ 5—20 կմ), սակայն երկարաձգված են (մի քանի հարյուր կմ, նույնիսկ 1000 կմ և ավելի): Ռիֆտերը առաջանում են երկրակեղևի ձգվելու հետևանքով և ներկայացնում են քարոլորտի վիթխարի պատռվածքներ: Հաճախ պատռվածքների մեջ գրաբեններ (երկրի կեղևի խզումներով իջած հատվածներ) են առաջանում, որոնք լցվում են ջրով (աֆրիկյան մեծ լճերը, Կարմիր ծովը և այլն): Ռիֆտային զոնաներում նկատվում է

հրաբխային ակտիվ գործունեություն, հաճախակի են երկրաշարժերը: Ռիֆտային գրաբեկներում նկատվում են ծանրահակ դրական անկանոնություններ: Տարբերում են ներցամաքային, միջմայրցամաքային, ներօվկիանոսային ռիֆտային զոնաներ: Վերջիններն առաջանում են օվկիանոսատիպ ոչ հաստ երկրակեղևի մեջ:

Ուշագրավ են օվկիանոսային ստորջրյա լեռնաշղթաները, որոնց երկարությունը որոշ անկյան տակ երբեմն անցնում են ռիֆտային խորը իջվածքներ: Հենց այս ռիֆտերի առկայությունը էլ այդ զոնան կոչվում է ռիֆտային: Ռիֆտային ստորջրյա հովիտների խորությունը հասնում է 5—7 կմ-ի, լանջերի թեքությունը՝ 10—20°, տեղ-տեղ՝ նույնիսկ 90°<sup>և</sup> օվկիանոսային ստորջրյա լեռնաշղթաների վրա, ռիֆտային զոնայի սահմանում, բացի երկայնական ռիֆտերից, նկատվում են նաև լեռնաշղթան ուղղահայաց հատող ռիֆտեր: Ստացվում է, որ ռիֆտային զոնաները երկայնակի և լայնակի ռիֆտերի բարդ համակարգեր են:

Խորջրյա իջվածքները երկրակեղևի կառուցվածքային տարրերից են, օվկիանոսների խոր մասերը: Սրանք զբաղեցնում են օվկիանոսի մահիճը (հատակը) 4000 մ-ից ավելի խորը մասերում: 6000 մ-ից խորը հատվածները կոչվում են գերխորքային իջվածքներ (խորջրյա անդունդներ): Վերջիններս մեծ մասամբ ժամանակակից գեոսինկլինալներ են (Ատակամայի, Ալեուիան, Կուրիլյան, Ճապոնական և այլն): Խորքային և գերխորքային իջվածքներում առաջացած ծովային նստվածքներն իրենց բնույթով տարբերվում են ոչ խորը ծովային նստվածքներից:

### ՄԱՆԹԻԱՅԻ ՈՒ ՔԱՐՈՂՈՐՏԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նախորդ բաժնից պարզ դարձավ, որ քարոլորտի տակ գտնվող մանթիան ունի այնքան բարձր ջերմաստիճան, որի պայմաններում նյութերը պետք է գտնվեն հալված կամ փափկած վիճակում: Այդ են վկայում այնքան հաճախ կրկնվող հրաբխային արտավիժումները, երբ հրահեղուկ, բարձր ջերմաստիճանով լավան, մոխիրը կամ շիկացած գազերը դուրս են գալիս երկրի մակերևույթ: Երկրի խորքում բարձր ջերմաս-

տիճանը ուղիորակտիվ տարրերի տրոհման արգասիք է, իսկ օվկիանոսային տիպի երկրակեղևի տակ ջերմության աղբյուր է նաև մանթիայի մեջ թաղվող նստվածքային ապարներում պարունակվող օրգանական նյութերի այրումից (օքսիդացումից) անջատված ջերմությունը: Երկրի խորքային ջերմությունը թափանցում է երկրի մակերևույթ, սակայն Արեգակից ըստացած ջերմության համեմատ այն ունի շնչին մեծություն (5—6 հազ. անգամ փոքր):

Ջերմային արտահոսքի միջին արժեքը ամբողջ Երկրի համար 1,2—1,5 մկկալ/սմ<sup>2</sup> վրկ է (միկրոկալորիա). հազվադեպ հասնում է մինչև 8 մկկալ/սմ<sup>2</sup> վրկ:

Երկրակեղևի մեջ խորանալիս ջերմաստիճանը հետզհետե բարձրանում է՝ օվկիանոսատիպ երկրակեղևում արագ, ցամաքատիպ կեղևում՝ մասնավորապես պլատֆորմներում՝ դանդաղ: Այն հատվածի մեծությունը, որի շափով երկրակեղևում ուղղաձիգորեն խորանալիս տեղի է ունենում ապարների ջերմաստիճանի բարձրացում 1°-ով, կոչվում է երկրաջերմային (գեոթերմիկ) աստիճան: Այն տատանվում է 5—150 մ սահմաններում (Հայկական ՍՍՀ-ում՝ 20 մ): Երկրի կտրվածքի յուրաքանչյուր 100 մ-ում ապարների ջերմաստիճանի բարձրացումը կոչվում է երկրաջերմային (գեոթերմիկ) գրադիենտ: Այն տատանվում է 0,5—20°-ի սահմաններում:

Մանթիայից դեպի երկրի մակերևույթ արտահոսող ջերմային էներգիան հսկայական նշանակություն ունի երկրակեղևի կազմության մեջ: Այդ էներգիայով են պայմանավորված բազմաթիվ երևույթներ ու պրոցեսներ. դրանցից են փոխակերպությունը (մետամորֆիզմը), տաք աղբյուրներն ու գեյզերները<sup>1</sup>, օրգանական նյութի այրումը երկրի խորքում և այլն:

Փոխակերպությունը (մետամորֆիզմ) այն երևույթն է, երբ քարոլորտի ճնշման ու բարձր ջերմաստիճանի պայմաններում միներալների բյուրեղային ցանցը քայքայվում է, և ստեղծվում է սովյալ թերմոդինամիկական պայմաններին բնորոշ ավելի կայուն, մի նոր ցանց, առաինքն՝ ապարները վերաբյու-

<sup>1</sup> Հայերեն գրականության մեջ հաճախ հանդիպում է «հեյզեր», սբջ ճիշտ չէ. բառը ծագում է իսլանդական geysir տերմինից:

րեղանում են: Այսպես, կրաքարը դառնում է մարմար, կավերը վերածվում են բյուրեղային թերթաքարերի և այլն: Հետաքրքիր է նշել, որ փոխակերպված ապարներն էլ երկրի մակերևույթի վրա, ցածր ջերմաստիճանի և աննշան արտաքին ճնշման (1 մթնոլորտ) պայմաններում նույնպես անկայուն են դառնում: Հատիկավոր բյուրեղային ապարները, շղիմանալուվ ջերմաստիճանային ոչ մեծ տատանումներին, հողմահարվում են:

Այսպես ուրեմն, մանթիայում ջերմաստիճանը բարձր է և հասնում է 500—1000—1400°-ի: Նման բարձր ջերմաստիճանի պայմաններում նյութերը փափկում են կամ լրիվ հալվում: Հաճախ է պատահում, որ դարերի ընթացքում ջերմամիջուկային տեակցիաների և օրգանական նյութի այրումից անջատված ջերմուկությունն այնքան է կուտակվում, որ հրաբխային օջախներում մագման սկսում է եռալ, և լավային արտավիժումներ են տեղի ունենում: Մանթիայում հալված զանգվածը մագմա է կոչվում, իսկ երբ դուրս է գալիս երկրի մակերեւույթ և ազատվում գազերից, ընդունված է անվանել լավա: Հրաբխային ակտիվ գործունեությունը հատուկ է որոշակի շրջանների: Պլատֆորմների տակ մագման ավելի հանգիստ է: Նրա բուռն գործունեությունը ծավալվում է երկրակեղևի այն մասերում, որտեղ ռիֆտային ճեղքեր են բացվում, կամ այն մասերում, որտեղ ցամաքային երկրակեղևը բարձրանում է օվկիանոսատիպ երկրակեղևի վրա: Ուշագրավ է, որ օվկիանոսատիպ կեղևում հրաբխականությունը շատ ավելի ակտիվ է, քան ցամաքատիպ կեղևում, կամ նույնիսկ՝ երիտասարդ լեռնային զոնաներում: Այդ հանգամանքը բացատրվում է այն բանով, որ օվկիանոսային կեղևը իջնելով թաղվում է մանթիայի մեջ, և օրգանական նյութերը այրվելով հրաբուխներին սնում են լրացուցիչ էներգիայով:

Վերը արդեն նշվել է քարոլորտի իզոստատիկ հավասարակշռության մասին. սրա հետ հարկ ենք համարում ավելի հանգամանորեն կանգ առնել երկրակեղևի ուղղաձիգ շարժումների վրա: Այդ շարժումները լինում են դանդաղ՝ դարավոր-էպեյրոգեն և ավելի արագ՝ տեկտոնական: Դարավոր տատանումներն ունեն շատ փոքր արագություն, և հազարամյակների ընթացքում ծովափի գիծը աննշան շափերով արշավում է կամ

նահանջում: Այս կարգի շարժումները յուրահատուկ են պլատ-  
ֆորմներին: Երիտասարդ լեռնային երկրներում ուղղաձիգ  
շարժումները ավելի ցայտուն են արտահայտված. երբեմն մի  
քանի վայրկյանի ընթացքում առանձին բեկորներ բարձրա-  
նում կամ իջնում են տասնյակ ու հարյուրավոր մետրերով,  
խզվածքների միջոցով առաջանում են հորստեր ու գրաբեն-  
ներ: Լեռնային երկրներում անընդհատ տեղի են ունենում  
բարձրացումներ ու իջեցումներ, տարեկան մի քանի կամ նույն-  
իսկ տասնյակ միլիմետրերով: Թվում է թե սա մեծ թիվ շէ,  
սակայն եթե սովյալ տեղամասը հարյուր հազար կամ մեկ մի-  
լիոն տարի անընդհատ բարձրանում է, ապա արդյունքը լի-  
նում է զգալի: Տեկտոնական այս շարժումները բաժանվում են  
նորագույն և ժամանակակից տիպերի: Նորագույնը ընդգրկում  
է մի ժամանակահատված, որն սկսվում է նեոգենից (25 մլն  
տարի): Սրանք այն շարժումներն են, որոնցով պայմանավոր-  
ված է լեռնային երկրների մակերևույթի այժմյան տեսքը: Նո-  
րագույն տեկտոնական շարժումների միջոցով մի շարք լեռ-  
նային երկրներ, որոնք համահարթվել, վեր էին ածվել պե-  
նեպլենի, աճեցին, երիտասարդացան (Տյան-Շան, Մերձբայ-  
կալի, Անդրբայկալի լեռնային համակարգերը, Սայանները և  
այլն), շնայած այն հանգամանքին, որ դրանց կառուցվածքը  
հին է (բայկալյան, կալեդոնյան, հերցինյան):

Ժամանակակից տեկտոնական շարժումները վերջին հա-  
զարամյակներում և այժմ տեղի ունեցող շարժումներն են: Դը-  
րանց թափը որոշվում է կրկնակի հարթաշափության միջո-  
ցով: Օրինակ, պարզվել է, որ Արագածը, Գեղամա լեռները  
տարեկան բարձրանում են մի քանի միլիմետրով, իսկ Սևա-  
նի գոգավորությունը, Արարատյան, Շիրակի դաշտերը իջնում  
են: Մեծ Կովկասը, Փոքր Կովկասը բարձրանում են, մինչդեռ  
Ռիոնի և Կուրի իջույթներն իջնում: Վերջին ժամանակներս կա-  
տարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երկ-  
րի կեղևի տարբեր հատվածները (բլոկները) կարճ տարածու-  
թյան վրա կարող են ունենալ հակադիր շարժումներ և լեռնա-  
յին երկրների կյանքում վճռական դեր են խաղում: Հայկական  
լեռնաշխարհի առանձին բլոկներ այժմ իջնում են կամ բարձ-  
րանում, որի հետևանքով այդ լեռնային երկիրն ունի ծալքա-  
բեկորային կառուցվածք: Երկրի մանթիայում, հատկապես վե-

րին մանթիայում տեղի ունեցող շարժումները վճռական նշանակութիւն ունեն ցամաքի ու ծովի տեղաբաշխման, լեռնային համակարգերի առաջացման ու կառուցվածքային այլ տարրերի տեղեղծման համար: Հայտնի է, որ երբ բազալտային լավան պաղում է, նրա մագնիսականութիւնը հաստատովում է Երկրի մագնիսական դաշտին համապատասխան: Հետագայում Երկրի մագնիսական դաշտի փոփոխութիւնը այլևս չի խախտում այդ վիճակը: Այսպիսի մագնիսականութիւնն անվանում են մնացորդային: Իմանալով լավաների արտավիժման ժամանակը, մնացորդային մագնիսականութիւն միջոցով որոշում են այդ ժամանակամիջոցում Երկրի մագնիսական միջօրեականների ուղղութիւնը:

Քարոլորտի տակ հայտնաբերված են բազմաթիւ, արդեն սառած, բազալտային շիթեր-հոսքեր. սրանց մնացորդային մագնիսականութիւնն ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ շորորդական ժամանակաշրջանում մագնիսական բեռները շատ անգամ փոխադարձաբար տեղերը փոխել են:

Մանթիայում տեղի ունեցող պրոցեսների արգասիք են մագմային ներդրումները հատկապես գեոսինկլինալային մասերում: Հրահեղուկ մագման մեծ ճնշման տակ թափանցում է քարոլորտի մեջ և ելք է որոնում դուրս գալու Երկրի մակերեւոյթ, սակայն չկարողանալով լրիւ պատռել մեծ հզորութիւն երկրակեղևը, մնում է նրա ներսում: Սրանց անվանում են ներժայթուկներ (ինտրուզիվներ): Ներժայթուկներում սառեցման պրոցեսն ընթանում է շատ դանդաղ, այդ ընթացքում տեղի է ունենում մագմայի տարբերակում (դիֆերենցում), թեթև նյութերը բարձրանում են վեր, ծանրերը՝ իջնում: Այս օրինաչափութիւնն հիման վրա մագմային ծագման հանքավայրերում որոնման աշխատանքները կատարում են որոշակի ծրագրով: Ակնհերև է, որ թեթև մետաղները տեղադրված կլինեն ներժայթուկի բարձրադիր մասերում, ծանրերը՝ ցածրադիր:

Նման մագմային օջախները՝ բաթոլիտները, լակոլիտները, երակները իրենց շրջապատի վրա որոշակի ազդեցութիւն են թողնում. տեղի է ունենում մասնակի փոխակերպութիւն, մագմայից անջատված ջրային գոլորշիները, գազերը ռեակցիայի մեջ են մտնում շրջապատի ապարների հետ: Օրինակ,

կրիտիկականին մոտ ջերմատիճան ունեցող ջրերը լուծում են բազմաթիվ քիմիական տարրեր. դրանց անվանում են ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթներ: Զրերի բարձրանալուն զուգընթաց՝ ջերմատիճանն իջնում է, լուծված քաղաղրամասերը անջատվում են, նստում ճեղքերի պատերին՝ սկիզբ տալով ջրաջերմային ծառաման հանքավայրերի:

Ներծայթուկների շրջապատում ստորերկրյա ջրերը տաքանալով հաճախ հասնում են կրիտիկական ջերմաստիճանին և գոլորշանում: Այդպիսի տաք մարմինների շրջանում առաջանում են տաք աղբյուրներ ու ավելի նուրբ գոյացութուններ՝ գեյզերներ, որոնք որոշակի պարբերությամբ գործող տաք ջրի ու գոլորշիների շատրվաններ են:

Ինչպես նշվեց, արտածայթուկ (էֆուզիվ) հրաբխականութունը մանթիայում տեղի ունեցող պրոցեսների ուղղակի արտահայտությունն է: Մագման, հաղթահարելով քարոլորտի դիմադրությունը, ճեղքերի միջոցով հասնում է երկրի մակերեւծութ, տարածվում ամեն կողմ, հոսում թեքության ուղղությամբ և առաջացնում լավային ծածկույթներ:

Հրաբխային նյութերը՝ լավան, մոխիրը, խարամը, հրաբխային ումբերը, երկրի մակերևույթին առաջացնում են երբեմն մի քանի հարյուր ու նույնիսկ հազար մետր հաստությամբ ծածկույթ. նշանակում է երկրակեղևն այս դեպքում աճում է ոչ թե ներքևից, այլ՝ վերևից: Դուրս ժայթքած նյութերը վիթխարի ճնշում են գործադրում քարոլորտի վրա, վերջինս ժանրանում է և հետևաբար, պետք է սուզվի ասթենոսֆերայի մեջ: Սուզվելու պրոցեսում հրաբխային երկրի արմատները հալվում են, իսկ երկրակեղևի կտրվածքում յուրաքանչյուր կետին յուրահատուկ նախկին ջերմաստիճանը՝ բարձրանում: Նշանակում է հրաբխային պրոցեսն արտահայտվում է ոչ միայն հրաբխային նյութի արտահոսքով, այլ, ինչպես տեսանք, նաև ուրիշ երևույթներով:

Լավաներն ունեն տարբեր քաղաղրություն. հաշվվում է լավայի մոտ 700 տեսակ: Սրանք, ըստ սիլիկաթթվի պարունակության, բաժանվում են հիմնային, շեղոք և թթու խմբերի: Հիմնային լավաները (բազալտ), ունենալով բարձր ջերմաստիճան (1200—1300°), հոսուն են, լավային ծածկույթի մակերևույթը հարթ է լինում: Թթու լավաները (դացիտ, օբսիդիան

և ալյն), ունենալով  $\text{SiO}_2$ -ի մեծ պարունակություն, մածուցիկ են, դժվարությամբ են հոսում, կուտակվում են հրաբխային ելքի մոտ, խառնարանի շուրջը, կամ առաջացնում են էքստրուզիվ՝ խառնարան շրջանում հրաբուխներ, որոնցում լավան ուղղակի կուտակվում է հրաբխային անցքի գլխին (Արտենի, Սպիտակասար և ալյն):

Զեզոք լավաները միջին դիրք են գրավում (անդեզիտաբազալտ), մեծ թեքությամբ լանջեր շին առաջացնում, ինչպես թթու լավաները: Հրաբխային արտավիժումների հետևանքով գետահովիտներում լավային պատվարներ են գոյանում, և գետերը լճանում են: Այդպիսի լճեր կան Հայկական լեռնաշխարհում (Արփի, Սևան, Փարվանա, Վան և ալյն):

Մանթիայի, քարոլորտի, ջրոլորտի ու մթնոլորտի փոխներգործության ոլորտում են ընթանում լեռնակազմական պրոցեսները: Լեռնակազմությունը տեկտոնական շարժումների ու տեղատարման (դենուդացիայի) համագործակցություն կամ հանրագումար է: Հաճախ լեռնակազմությունը դիտվում է լուր որպես ապարների շերտախմբերի ծալքավորման հետևանք: Այսպիսի մոտեցումը թերի է, որովհետև լեռների գոյացումը ներծին ու արտածին ազդակների փոխներգործության արգասիք է: Աշխարհում չկա մի որևէ լեռնաշղթա, որը միայն տեկտոնական շարժումների արդյունք լինի: Երկրի մակերևույթի ձևավորմանը մասնակցում են նաև հողմահարման ու տեղատարման պրոցեսները: Լեռնակազմական պրոցեսները քարոլորտում տեղի են ունեցել սկսած արխեյան դարաշրջանից և կլինեն նաև ապագայում: Սակայն լեռնակազմության անընդհատ-ընդհատ պրոցեսում դիտվում են ուժգին զարգացման և հարաբերական հանգստի փուլեր: Այսպես, արխեյան և պրոտերոզոյան դարաշրջաններում տեղի ունեցած լեռնակազմական պրոցեսները անվանում են մինչքեմբրյան և Պալեոզոյում տեղի են ունեցել լեռնակազմական ժրեք փուլեր՝ բայկալյան (վերին պրոտերոզոյ-քեմբր), կալեդոնյան (սիլուր-դևոն ժամանակաշրջաններում) և հերցինյան (կարբոն-պերմ ժամանակաշրջանում): Սկսած մեզոզոյան դարաշրջանից մինչև պլիոցեն տևած ծալքավորման ու լեռնակազմության փուլը կոչվում է ալպյան, որը բաժանվում է մի շարք ենթափուլերի՝

մեզ սպասում՝ հին կիմամերյան, նոր կիմամերյան, լարամյան, իսկ  
կայնոզոյում՝ բուն ալպյան (իր ենթափուլերով):

Մանթիայի ու քարոլորտի փոխազդեցութեան հետեանքով  
առաջանում են օվկիանոսի մակարդակի իջեցում կամ բարձ-  
րացում՝ էփստատիկ շարժումներ: Դրանք լինում են՝

1. Օվկիանոսի հատակի ռելիեֆի ձևախախտման (դեֆոր-  
մացիա) հետեանքով՝ օվկիանոսային մահիճի ծավալի փո-  
փոխման դեպքում: Դա կարող է տեղի ունենալ օվկիանոսա-  
տիպ երկրակեղևի իջեցման ու բարձրացման կամ նստվածք-  
ների կուտակման հետեանքով:

2. Օվկիանոսներում ջրի զանգվածի ավելանալու կամ պա-  
կասելու դեպքում: Դա կարող է տեղի ունենալ երկրի մակերե-  
վույթին սառցադաշտերի արշավի կամ նահանջի հետեանքով:  
Սառցապատման փուլերում դեպի օվկիանոս հոսող ջրի քա-  
նակը պակասում է, ջրի մակարդակն իջնում է, իսկ միջսառ-  
ցապատման փուլերում, սառցադաշտերի ծախսի (արլացիայի-  
հալքի) հետեանքով դեպի օվկիանոս հոսող ջրի քանակն ավե-  
լանում է, հետևաբար ծովի մակարդակը բարձրանում է: Երկ-  
րակեղևի տարբեր մասերի բարձրացում-իջեցումների, օվկիա-  
նոսի մակարդակի էփստատիկ տատանումների հետեանքով  
առաջանում են ծովի առաջընթացներ (տրանսգրեսիա) ու  
հետընթացներ (ռեգրեսիա):

Առաջընթացն այն երևույթն է, երբ ծովի մակարդակը  
բարձրանում է, և ծովը արշավում է ցամաքի վրա, ցամաքի  
ցածր մասերը սուզվում են ծովի տակ: Հետընթացի ժամանակ  
հակառակ պրոցեսն է՝ ծովի մակարդակն իջնում է (ծովի մա-  
կարդակը կարող է բացարձակորեն շփոխվել, այս դեպքում  
ցամաքն է բարձրանում և ավազիժը նահանջում է դեպի ծով):  
Ամեն անգամ ծովի նահանջից հետո առաջանում է ծովափնյա  
դարավանդ: Օրինակ, Սկանդինավյան թերակղզին վերջին  
սառցապատման նահանջից հետո թեթևացավ, սկսեց բարձրա-  
նալ, տեղի ունեցավ ծովի հետընթաց, և նրա ավերին առա-  
ջացան դարավանդներ:

Մանթիայի ու քարոլորտի փոխազդեցութեան ներքին արտա-  
հայտվում են նաև մայրցամաքների ու օվկիանոսների առա-  
ջացմամբ ու տեղաբաշխմամբ, ռելիեֆի տարբեր կարգի ձև-

վերի ստեղծմամբ: Այժմ քննարկենք այդ փոխազդեցությունները:

### ՄԱՅՐՅԱՄԱՔՆԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐ

Երկրի ներծին ու արտածին ուժերի ազդեցությամբ երկրակեղևը զգալի ձևախախտումներ (դեֆորմացիաներ) է կրում: Երկրի մակերևութին առաջանում են ուղիղ գծի դրական (ուռուցիկ), բացասական (գոգավոր) և շեղոք (հարթ) ձևեր: Ռելիեֆ ասելով հասկանում ենք երկրի մակերևութի անհարթությունների ամբողջականություն-միագումարությունը:

Ելնելով ուղիղ գծի ձևերի մասշտաբներից՝ առանձնացնում են ուղիղ գծի հետևյալ դասերը՝ համամոլորակային, մեգա-ուղիղ գծի, մակրո կամ խոշոր ուղիղ գծի, մեզո կամ միջին ուղիղ գծի, միկրո կամ մանր ուղիղ գծի:

Համամոլորակային են կոչվում մայրցամաքներն ու օվկիանոսները: Մեգաուղիղ գծի առաջացնում է ուղիղ գծի երկրորդ կարգի ձևեր՝ խոշոր լեռնաշղթաներ, բարձրավանդակներ, խորջրյա իջվածքներ (Կորդիլիերներ, Տիբեթ, Միջերկրական ծովի իջվածքը և այլն):

Խոշոր ուղիղ գծի (մակրոուղիղ գծի) կազմվում է մեգաուղիղ գծի մասերից՝ լեռնաշխարհների առանձին մասեր, լեռնաշղթաներ, գոգավորություններ (Կոկոն-Նոն, Սիբերա Նևադա, Բայկալի գոգավորությունը և այլն): Միջին ուղիղ գծի (մեզոուղիղ գծի) ձևերը առանձնացվում են խոշոր ուղիղ գծի սահմաններում՝ ոչ մեծ լեռնաբազուկներ, հովիտներ, դարավանդներ և այլն: Մանրա-ուղիղ գծի (միկրոուղիղ գծի) ձևերը ամենամանր ձևերն են, սովորաբար առաջանում են արտածին ազդակների ներգործությամբ՝ փոքր ձորակ, կարստային ձագար, դյուն և այլն:

Սագումնաբանական տեսանկյունից ելնելով՝ Ի. Պ. Գերասիմովը և Յ. Ա. Մեշչերյակովը (1964) առանձնացնում են ուղիղ գծի հորինվածքային (ստրուկտուրային) երեք տարրեր՝ 1. երկրատեկտուրա (գեոտեկտուրա), 2. ձևահորինվածք (մորֆոստրուկտուրա), 3. ձևաքանդակ (մորֆոսկոլպտուրա):

Երկրատեկտուրաները այնպիսի հորինվածքներ են, որոնք

ստեղծվում են երկրի ներծին ու տիեզերական ուժերի շնորհիվ: Դրանցից են Երկրի համամոլորակային ու մեզա ձևերը: Զևահորինվածքները հիմնականում երկրաբանական կառույցներ են, ստեղծվել են ներծին ուժերի միջոցով, ապայն մասնակցութուն ունեն նաև արտածին ուժերը (խոշոր ռելիեֆ, միջին ռելիեֆ): Զևաքանդակները ռելիեֆի քանդակված ձևեր են, որ ստեղծվել են արտածին ուժերի ազդեցութամբ (միջին ռելիեֆ, մանրառելիեֆ):

Մայրցամաքներ—սրանք առաջին հայացքից քարտեզի վրա պատկերված խոշոր կղզիներ են, որ ցրված են համաշխարհային օվկիանոսի տարբեր մասերում, սակայն հայեցական այս պատկերացումը շատ թերի է: Մայրցամաքները ծագմամբ օվկիանոսից միանգամայն տարբեր կառուցվածքային տարրեր են: Մայրցամաք կոչվելու համար անհրաժեշտ են հետևյալ հատկանիշները՝

1. Մայրցամաքում երկրակեղևը ցամաքային տիպի է, այսինքն՝ մանթիայի և մթնոլորտի միջև երկրակեղևի մեջ առկա են՝ բազալտային, գրանիտային նստվածքային շերտերը:

2. Յուրաքանչյուր մայրցամաք, որպես միջուկ, պետք է ունենա առնվազն մեկ մինչքեմբրյան պլատֆորմ (Եվրասիան ունի վեցը՝ Թարիմի, Արաբական, Հնդկական, Ռուսական, Սիբիրական, Զինական): Պլատֆորմին հարակից են նախկին գեոսինկլինալային զոնաները, ուր բարձրացել են չեռնային համակարգեր և համակցվել են պլատֆորմի հետ՝ դառնալով մայրցամաքի մասը:

3. Մանթիայի վրա լողացող երկրակեղևը մայրցամաքի հատվածում գտնվում է իզոստատիկ հավասարակշռության մեջ:

4. Մայրցամաքն ունի առնվազն մի քանի միլիոն քառ կմ մակերես:

Եթե վերոհիշյալ հատկանիշները հիմք ընդունենք, ապա մայրցամաքների և օվկիանոսների միջև սահմանը չի համընկնի կիսագնդերի քարտեզի վրա պատկերված մայրցամաքների սահմաններին (Հյուսիսային կիսագունդ): Կառուցվածքային տեսակետից ծովի հատակի մինչև 200 մ խորութուն-

ներում երկրակեղևը ցամաքային տիպի է, հետևաբար մայրցամաքների իրական տարածքն ավելի ընդարձակ է, քան քարտեզի վրա է պատկերված: Այսպես, ՍՍՀՄ-ի հյուսիսային սահմաններում Բարենցի, Կարայի, Լապտևների, Արևելա-Սիբիրական, Չուկոտյան ծովերի հարավային մասերը ծանծաղ են, երկրակեղևն այստեղ ցամաքային է և կազմում է Եվրասիա մայրցամաքի շարունակությունը: Եթե մտովի պատկերացնենք, որ օվկիանոսի մակարդակը իջել է 200 մ-ով, այդ դեպքում ծովի ափագիծը ցույց կտա մայրցամաքների և օվկիանոսի սահմանը: Այն մայրցամաքները, որ առաջացել են Լավրասիայի տրոհումից (Հյուսիսային Ամերիկա, Եվրասիա), առափնյա մասերում ընդարձակ ծանծաղուտներ ունեն, մինչդեռ Գոնդվանայից տրոհված մայրցամաքների սահմանները գրեթե համընկնում են ժամանակակից ծովափնյա գծին (Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա, Անտարկտիդա):

Ժամանակակից աշխարհագրական թաղանթում տեղի են ունենում այնպիսի երևույթներ, որոնք ցամաքում ու ծովում ընթանում են տրամագծորեն հակառակ ուղղություններով: Այսպես, ցամաքների ընդհանուր տեղեկեցն է տեղատարվելը, ծովերինն ու օվկիանոսներինը՝ ծածկվելը ծովային նստվածքներիով: Ցամաքի վրա օդի ոլորտն է, օվկիանոսներում՝ ջրի: Ցամաքի վրա այլ լանդշաֆտներ են ձևավորվում, ծովերում ու օվկիանոսներում՝ այլ: Մարդու գործունեությունը դրսևորվում է ցամաքում, նա ցամաքի վրա է ապրում, ծովը նրա համար անցողիկ միջավայր է և այլն:

Ելնելով այս բոլորից՝ մասնավորապես մարդու աշխատանքային գործունեությունից, հարմար է, որ ցամաքի ու ծովի սահմանը՝ ափագիծը պայմանականորեն համարվի մայրցամաքների սահման, շմոռանալով, որ կառուցվածքային տեսակետից այն մի փոքր այլ է: Այսպիսի սահմաններում մայրցամաքները և օվկիանոսները կունենան տարածքի հետևյալ մեծությունները (աղյուսակ 1):

Մայրցամաքների և օվկիանոսների տարածքը  
բառ Լ. Պ. Շուրաևի (1977)

Մայրցամաքներ	մլն կմ <sup>2</sup>	Օվկիանոսներ	Առանց վարած Օվկիանոսի մլն կմ <sup>2</sup>	Հարավային հետ մլն կմ <sup>2</sup>
Եվրասիա	53,45	Մեծ կամ Խաղաղ	179,68	151,22
Աֆրիկա	30,30	Ատլանտյան	93,36	73,36
Հյուսիսային Ամերիկա	24,25	Հնդկական	74,92	53,65
Հարավային Ամերիկա	18,28	Հյուսիսային		
Անտարկտիդա	13,97	Սառուցյալ	13,10	13,10
Ավստրալիա Օվկիանիայի հետ	8,89	Հարավային	—	69,33
<b>Ընդամենը</b>	<b>149,14</b>		<b>361,06</b>	

Երկրագնդի 361 մլն կմ<sup>2</sup> ընդհանուր մակերեսից ցամաքներին բաժին է ընկնում ավելի քան 149 մլն կմ<sup>2</sup> (29,2%), օվկիանոսներին ու ծովերին՝ 161 մլն կմ<sup>2</sup>—70,8%: Ակնհերև է, որ մեր մոլորակի վրա ծովային տարերքն ավելի ընդարձակ է, քան ցամաքայինը: Եթե ցամաքները հանդես են գալիս կղզիների ձևով, ապա օվկիանոսը միասնական է:

Օվկիանոսները տեղադրված են օվկիանոսային տիպի երկրակեղևի վրա. սրանց հատուկ են նստվածքային շերտերը, որոնք խորքում վերածվում են բազալտների առանց միջանկյալ գրանիտային շերտի: Արդեն նշվել է, որ օվկիանոսային կեղևը շատ բարակ է՝ 5—10—20 կմ: Այստեղ անընդհատ նստվածքագոյացման հետևանքով երկրակեղևը սուզվում է մանթիայի թուլլոբոտի (ասթենոսֆերայի) մեջ, որտեղ նշված խորություններում ջերմային հաշվեկշիռն այնպիսին է, որ ավելցուկ ջերմություն կա և նյութը (բազալտը) պետք է գտնվի հրահեղուկ վիճակում: Օվկիանոսային կեղևում ևս իզոստատիկ հավասարակշռության հակում կա, բայց այդպիսին վերջ-

<sup>1</sup> Օվկիանիայի կղզիները ծագամբ Ավստրալիայից տարբեր են, սրանց միացումը Ավստրալիային պայմանական է:

Նականապես հաստատվել ու հաստատուն ստատիկ վիճակին անցնել շի կարող նստվածքաբոյացման հետևանքով:

Այսպիսով մանթիա-քարոլորտ փոխազդեցութեան ոլորտում օվկիանոսներում երկրակեղևի իջեցման, իսկ ցամաքներում՝ բարձրացման ընդհանուր տենդենց կա. այդ ֆոնի վրա հաճախ կարող են նկատվել մեկուսացած (լոկալ) բնույթի հակառակ շարժումներ, որոնք տեղական գործոնների արգասիք են:


Օվկիանոսների կառուցվածքային տարրերից են ծովերը՝ Վերջիններս առանձնացնելիս՝ հաշվի են առնում մի շարք գործոններ, մասնավորապես ջրաբանական վարքը և երկրակեղևի տիպը: Մովերը հաճախ առաջանում են երկրակեղևի այնպիսի գոգավորութուններում, որոնք իրենց ծագմամբ անմիջապես առընչվում են թուլջուրտի և քարոլորտի ներգործութեան հետ:

Օվկիանոսների ու մայցամաքների աշխարհագրական տեղաբաշխման ուշագրավ հանգամանքներ կան: Ցամաքները ամենամեծ տարածում ունեն հյուսիսային կիսագնդում, շնայած որ այս կիսագնդում էլ ծովերը գրավում են 61 %, իսկ ցամաքը՝ 39 % և միայն 50—70° լայնութունների տակ է, որ ցամաքը գերակշռում է ծովին: Նույն լայնութունների տակ հարավային կիսագնդում հակառակը՝ ցամաքը բացակայում է: Հետաքրքիր փաստերից մեկն էլ այն է, որ հյուսիսային մերձբևեռային լայնութուններում ցամաքը բացակայում է, հարավային կիսագնդում հակառակը՝ օվկիանոսն է բացակայում. արդյունքում ստացվում է հակահամաչափութուն (անտիսիմետրիա):

Եթե փորձենք զոբուսը բաժանել երկու կիսագնդերի այնպես, որ ցամաքները կենտրոնացվեն մեկ կիսագնդում, իսկ օվկիանոսները՝ մյուս, ապա որպես բևեռ պետք է ընդունել Արևմտյան Եվրոպայի Բրիտանական կղզիները: Այս դեպքում Անտարկտիդան, Ավստրալիան ամբողջութեամբ, Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի հարավային ծայրամասերը և Հրնդեկաշինի մի մասը կընկնեն օվկիանոսային կիսագնդի մեջ, մընացած մայրցամաքները՝ Հյուսիսային Ամերիկան, Հարավային Ամերիկայի մեծ մասը, Եվրասիան գրեթե ամբողջութեամբ, Աֆրիկայի մեծ մասը կկուտակվեն ցամաքային կիսագնդում: Այստեղ ևս ստացվում է հակահամաչափութուն: Միևնույն

ժամանակ նշենք, որ հակահամաչափություն նկատվում է Երկրի առանցքի ներկա դիրքում ևս՝ արևելյան կիսագնդում ալիքի շատ ցամաքներ կան, քան արևմտյանում:

Ցամաքների ու օվկիանոսների տեղաբաշխման մեջ կան այն հետաքրքիր փաստեր ևս, սակայն առայժմ սահմանափակվենք սրանով և տեսնենք, թե ցամաքների ու օվկիանոսների տարբեր բարձրություններն ու տարբեր խորությունները ինչ տարածքներ են զբաղեցնում: Այդ նպատակով պետք է կառուցենք բարձրագրական (հիպսոգրաֆիկ) և խորագրական (բաթիմոգրաֆիկ) կորեր (երկուսը միասին մեկ գծագրի վրա (նկ. 4):



Նկ. 4. Երկրի մակերևույթի բարձրագրական (հիպսոգրաֆիկ) և խորագրական (բաթիմոգրաֆիկ) կորը:

Երկրի մակերևույթի բարձրագրական և խորագրական կորը կազմելու համար պետք է ձեռքի տակ ունենալ տեղագրական քարտեզ, որի վրա լինեն հորիզոնականներ (իզոգիպսեր) և իզոբաթներ: Ընտրելով որևէ հատույթ՝ այսինքն երկու հաջորդական հորիզոնականների միջև բարձրությունը, մակերեսաչափիչի (պլանիմետր) միջոցով շահում են այն բոլոր մակերեսները, որոնք գտնվում են երկու հարևան հորիզոնականների կամ իզոբաթների միջև: Ի վերջո ստացվում է մի աղ-

յուսակ, որի առաջին սյունակում տրվում են բարձրությունների միջակայքները (ինտերվալ), իսկ երկրորդում՝ այդ բարձրությունների (կամ խորությունների) բռնած տարածությունը, մակերեսը (կմ<sup>2</sup>): Ստորև բերվող աղյուսակում տրվում են սովյալներ ամբողջ Երկրագնդի վերաբերյալ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Երկրագնդի վրա բարձրությունների և խորությունների բռնած տարածությունները բստ Լ. Պ. Շուրակի (1977)

Ցամաքի բարձրությունները մ-ով	Տարածքը՝ մլն կմ <sup>2</sup> -ով	Օվկիանոսի խորությունները՝ մ-ով	Տարածքը՝ մլն կմ <sup>2</sup> -ով
Ցածի մակ.-ից ցած	0,8	0—200	27,2
0—200	48,2	200—1000	16,3
200—500	33,0	1000—2000	16,3
500—1000	27,0	2000—3000	30,5
1000—2000	24,0	3000—4000	76,7
2000—3000	10,0	4000—5000	117,6
3000-ից բարձր	6,0	5000—6000	72,1
		6000—7000	4,2
		7000—8000	0,26
		8000-ից բարձր	0,09

Այժմ վերը բերած աղյուսակի սովյալները կարտահայտենք գրաֆիկի միջոցով՝ հորիզոնական առանցքի վրա կտեղադրենք տարածքը (կմ<sup>2</sup>), ուղղածիզի վրա՝ բարձրությունները: Ուրեմն, բարձրագրական կամ խորագրական կորը ցույց է տալիս, թե ո՞ր կարգի բարձրությունները կամ խորությունները որքա՞ն տարածություն են գրավում: Հայկական ՍՍՀ բարձրագրական կորը ներկայացված է «Հայկական ՍՍՀ ատլասում» և բազմաթիվ այլ աղբյուրներում:

Ամբողջ Երկրագնդի մակերևույթի համար կազմած բարձրագրական կորի (նկ. 4) վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը: Ցամաքը գրավում է 149 մլն կմ<sup>2</sup>, օվկիանոսը՝ 361 մլն կմ<sup>2</sup>: Ցամաքի բարձրագրական կորի վրա մեծ բարձրությունները շնչին տարածություն են գրավում, համեմատաբար մեծ տարածք ունեն դաշտավայրերն ու միջին բարձրության լեռները: Ցամաքի միջին բարձրությունը կազմում է 870 մ:

Նորագրական կորը ցույց է տալիս, որ օվկիանոսի հատա-

կը մինչև 200 մ խորությունները զբաղեցնում է բավական մեծ՝ մինչև 27 միլիոն կմ<sup>2</sup> տարածութիւն: 200 մ-ից մինչև 3000 մ խորութիւնը, որին անվանում են մայրցամաքային լանջ, զատ ընդարձակ տարածութիւն չի գրավում, ուստի կորն արագութեամբ իջնում է դեպի մայրցամաքային լանջի ստորոտը: Այստեղից կորը թույլ թեքութեամբ իջնում է մինչև 6000 մ խորութիւնները: Կորը ցույց է տալիս, որ Երկրագնդի վրա այս խորութիւնները (3000—6000 մ) ամենից ընդարձակ տարածութիւն են գրավում (ավելի քան 266 մլն կմ<sup>2</sup>): 6000 մ-ից մինչև 11 հազ. մ խորութիւններ ունեցող հատվածները՝ խործովյախ անդունդները մեծ տարածութիւն չեն գրավում: Ինչքան խորութիւնը մեծ է, այնքան գրաված տարածութիւնը փոքր է, ուստի կորը միանգամից իջնում է ցած:

Օվկիանոսի միջին խորութիւնը 3794 մ է (այլ տվյալներով՝ 3704 մ, տե՛ս աղյուսակ 4): Եթե բոլոր ցամաքները մտովի կտրեմք մինչև ծովի մակարդակը և ազատված զանգվածը տեղավորենք օվկիանոսի խոր մասերում, ապա օվկիանոսն էլի կունենա 3000 մ խորութիւն:

Նորագրական կորի միջին մասում գծագրի վրա սխեմատիկորեն պատկերված է մի ելուստ, որը համապատասխանում է ստորջրյա լեռնաշղթաներին: Սրանց ուսումնասիրութիւնը վերջին տասնամյակներում հետաքրքիր տեղեկութիւններ տրվեց թե՛ երկրաբանութեանը, թե՛ աշխարհագրութեանը: Պարզվեց, որ բոլոր օվկիանոսներում կան ստորջրյա լեռնաշղթաներ, որոնք ունեն մի քանի տասնյակից մի քանի հարյուր կիլոմետր լայնութիւն և հազարավոր ու տասնյակ հազարավոր կիլոմետր երկարութիւն: Այդ շղթաների հարաբերական բարձրութիւնները հասնում են 2000—3000 մ-ի. բարձր գագաթները դուրս են գալիս ծովի մակարդակից վեր մի քանի հարյուր ու հազար մ, առաջացնում են հրաբխային կղզիներ (Սուրբ Հեղինեի, Համբարձման, Իսլանդիա և այլն): Ատլանտյան օվկիանոսի կենտրոնում հյոսիսից հարավ S տառի ձևով ձրգվող լեռնաշղթան ավելի երկար ու բարձր է (հաշված օվկիանոսի հատակից), քան Կորդիլիերյան համակարգը Ամերիկայում (հաշված ծովի մակարդակից):

Նշված ստորջրյա լեռնաշղթայի կենտրոնական առանցքային գոտում ձգվում են խոր ուիֆտեր. այդ հատվածում նրստ-

վածքները շատ քիչ են, նույնիսկ բացակայում են: Այստեղ երկրակեղևի խորքից ծովի հատակ են դուրս գալիս բազալտներ: Լեռնաշղթայի առանցքից հեռանալիս նստվածքների հզորությունը մեծանում է, մեծանում է նաև նրանց հասակը. ամենահին նստվածքները ձևավորվել են 160 մլն տարի առաջ: Ատլանտյան օվկիանոսի լայնացումը տեղի է ունեցել և այժմ էլ տեղի է ունենում այս Լեռնաշղթայի ռիֆտային հովիտների լայնացման հաշվին, և ճեղքերից դուրս ժայթքած բազալտային լավան քողարկում է ծովային երիտասարդ նստվածքները:

Ստորջրյա Լեռնաշղթաների հանդիպում ենք նաև Հնդկական, Խաղաղ, Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսներում և առիթ ենք ունեցել նշելու, որ այս Լեռնաշղթաները խիստ բարդված են ռիֆտային հովիտներով:

Օվկիանոսների ամենախորը մասերը կոչվում են անդունդներ: Երանց տեղաբաշխումն ու ծագումը մեր ժամանակների ամենահետաքրքիր ու կարևոր հարցերից մեկն է: Խաղաղ օվկիանոսում անդունդները դասավորված են նույնանուն սալի եզրերում. դրանք են՝ Ալեուսյան, Կամչատկա-Կուրիլյան, Ճապոնական, Ռյու-Կյու, Ֆիլիպինյան, Մարիանյան, Տոնգա, Կերմադեկ, Բուգենվիլի, Սանդվիչյան: Օվկիանոսի բուն հատակին ոչ մի անդունդ չկա: Հնդկական օվկիանոսում ամենախորը անդունդը Ճավայանն է, Ատլանտյան օվկիանոսում՝ Պուերտո-Ռիկոյի և Հարավային Սանդվիչյանը: Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը անդունդներ չունի:

### ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՌԵԼԻԵՖԸ, ՄԻ ՔԱՆԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Մանթիայի ու քարոլորտի փոխներգործության ոլորտում առաջանում են մի քանի հորինվածքային (ստրուկտուրային) տարրեր, որոնք պարզորոշ արտահայտվում են երկրի մակերեւծությունից՝ թե՛ ցամաքներում և թե՛ օվկիանոսի հատակին: Սըրանք ենթարկվելով արտածին ուժերի ազդեցությանը զգալի շափով փոփոխվում են, մշակվում են հոսող ջրերի, քամու, սառցադաշտերի և այլ ազդակների ներգործությամբ, կամ օվկիանոսների ու ծովերի հատակին ծածկվում են նստվածքներով: Այսպիսով երկրի մակերևույթի ռելիեֆը ձևավորվում է ինչպես արտածին, այնպես էլ ներծին ուժերի ու գործոնների

ազդեցութեամբ: Ռեզիստենցիայի մեղաւորները ստեղծման մեջ առաջնայինը ներծին ուժերն են (տեկտոնական շարժումները), որքան ռեզիստենցիայի ձևը փոքր է, այնքան մեծանում է արտածին ազդակի դերը: Վիթխարի լեռնաշղթաների առաջացումը կապվում է ներծին ուժերի հետ, իսկ էրոզիոն ձորակները՝ արտածին՝ ջրի քայքայիչ աշխատանքի հետ: Որքան ներծին ուժերը ձգտում են երկրակեղևը բարձրացնել, ստեղծել բարձրաբերձ լեռնաշղթաներ, այնքան արտածին ուժերը մասնատում, համահարթում են բարձրացող երկիրը: Նշանակում է ներծին ուժերը ներծին ուժերը միմյանց հակադիր են ու միաժամանակ միասնական և ներկայացնում են հակադրութունների միասնություն:

Ցամաքի ռեզիստենցիայի արտաքին ձևերով, թե՛ ծովի մակարդակից ունեցած բարձրութեամբ և թե՛ ծագմամբ շատ բազմազան է, դրանց դասակարգման հարցերով զբաղվում են երկրաձևագետները (գեոմորֆոլոգները): Այս գործում մեծ ավանդ են մուծել սովետական գիտնականները, հատկապես Ի. Ս. Շչուկինը (1946): Ռեզիստենցիայի դասակարգումը տրվում է երկրաձևագիտության ձևաբաններում. այստեղ մենք կնշնշեք երկրի մակերևույթի ռեզիստենցիայի ընդհանուր գծերը: Ակզբում անդրադառնանք ցամաքի ռեզիստենցիային:

Դաշտավայրերը ցամաքի մակերևույթի ամենաբարձրադասակարգածություններն են, ունեն հարթ ռեզիստենցիայի, ծածկված են մեծ մասամբ նստվածքային ծագման ապարների հզոր շերտերով, ծովի մակարդակից բարձր են մինչև 200 մ: Սրանք ծագումնաբանական տեսակետից կապվում են ինչպես ցամաքային, այնպես էլ օվկիանոսային պլատֆորմների հետ (օրինակ՝ Ամազոնի, Միսիսիպիի, Արևմտասիբիրական, Մերձկասպյան դաշտավայրերը): Հարկ է նշել, որ հաճախ «դաշտավայր», «հարթություն» կամ «հարթավայր» տերմինները շփոթություն են առաջացնում: Հարթությունը կամ հարթավայրը կախված չէ բարձրությունից, այն կարող է լինել մեծ բարձրության վրա: Հարթությունը ցույց է տալիս երկրի մակերևույթի ձևը՝ հարթ տարածություն, մինչդեռ դաշտավայրը անպայմանորեն կապվում է մինչև 200 մ բարձրություն ունեցող հարթությունների հետ: Այստեղից էլ՝ սխալ է օգտագործել «Արարատյան դաշ-

տավայր», պետք է ասել Արարեստյան դաշտ կամ Արարատ-  
յան հարթութուն:

Դաշտավայրերը հաճախ առաջանում են երկու իրարից  
տարբեր հորինվածքային միավորների, ասենք լեռնաշղթայի  
ու հարթ պլատֆորմի միջև՝ ցամաքային տատվածքների կու-  
տակման հետևանքով: Դրանցից են Միջագետքի, Ինդոս-Գան-  
գեսի և այլ դաշտավայրերը, որոնք չափերով ավելի փոքր են,  
քան պլատֆորմների վրա տեղադրված դաշտավայրերը: Լեռ-  
նային երկրներից տեղատարված հողմահարման նյութերը նը-  
ման դաշտավայրերում կուտակվելով մեծ ծանրաբեռնվածու-  
թյուն են ստեղծում, և երկրակեղևի այդ հատվածը իջնում է,  
քարոլորտի այդ մասը թաղվում է մանթիայի մեջ, ինչպես  
օրինակ, Պո գետի դաշտավայրը: Կան փոքր դաշտավայրեր էլ,  
որոնք առաջանում են խոշոր գետերի ստորին հոսանքներում՝  
գետաբազուկների կուտակման հետևանքով:

Բարձրավայրերը ցամաքի ռելիեֆի երկրորդ հարկն են կազ-  
մում, տարածվում են 200—500 մ բարձրութունների սահ-  
մաններում: Սակայն այս տերմինը հաճախ օգտագործվում է  
ավելի ազատ, արտահայտում է ընդհանրապես ռելիեֆի ա-  
մեն տեսակի դրական ձև: Այստեղ ևս պետք է հստակութուն  
ձևցնել:

Բարձրավայրերը առաջանում են երկրակեղևի տեկտոնա-  
կան շարժումների, Շիմնականում՝ բարձրացումների հետե-  
վանքով, ընդգրկում են մի քանի հարյուր և հազարավոր քա-  
ռակուսի կիլոմետրեր (Ստավրոպոլյան, Միջին-Ռուսական,  
Մերձվոլգյան բարձրավայրեր և այլն): Մրանք առաջանում են  
ինչպես պլատֆորմների, այնպես էլ ծալքավոր զոնաների  
սահմաններում, օվկիանոսային պլատֆորմներում և այլն:

Ցածր լեռները (500—1000 մ) տարածվում են ծալքավոր,  
ծալքա-բեկորավոր լեռների նախալեռներում: Առաջանում են  
նաև պլատֆորմների սահմաններում՝ էրոզիոն մասնատման  
հետևանքով: Օրինակ՝ Միջին Սիբիրական պլատֆորմի վրա-  
յով հոսող Ստորին, Միջին Տունգուսկա գետերը և նրանց վը-  
տակները խորանալով առաջացրել են լայնարձակ հովիտներ,  
նրանց միջև մնացել են մնացորդային ջրբաժանային ցածր  
լեռներ:

Միջին բարձրության լեռները (1000—2000, երբեմն մինչև

2500 մ) տարածվում են մեծ մասամբ գեոսիսկլինալներում: Առաջացել են լեռնակազմական պրոցեսների շնորհիվ: Աչքի են ընկնում խորը մասնատվածությամբ, տեղատարման պրոցեսների ուժգնությամբ:

Բարձր լեռները (ավելի քան 2000—2500 մ) ուժեղ տեկտոնական բարձրացումների արդյունք են, աչքի են ընկնում էրոզիոն մասնատվածությամբ, տեղատարման թափով, սառցադաշտային ռելիեֆի ձևերով: Կոշտ տեղումների առատության դեպքում սառցադաշտերով են պատվում:

Բոլոր լեռնային երկրներում տեղատարումն ավելի ուժգին է ընթանում, քան դաշտավայրերում ու բարձրավայրերում, ուստի ժամանակի ընթացքում լեռնային երկրները մաշվում են, վերածվում հարթ տեղանքի, այսպես կոչված պենեպլենի (գրեթե հարթության): Եթե տեկտոնական շարժումները դադարեն, ապա Ալպերի կամ Մեծ Կովկասի նման լեռնային մի համակարգ 15—25 միլիոն տարվա ընթացքում կդառնա ծովի մակարդակից ոչ շատ բարձր երկիր-պենեպլեն, ինչպիսին Տինլանդիայի տարածքն է:

Այստեղ հարկ է նշել, որ երկրի մակերևույթի վերը նշված հարկերը ամենուրեք շարժման ու զարգացման մեջ են: Արտաքուստ կայուն վիճակում գտնվող ռելիեֆի ձևերը զարգանում են, և եթե մարդը այդ երևույթը չի նկատում, պատճառը մարդկային կյանքի կարճ տևողությունն է, որի ընթացքում նա ռելիեֆի փոփոխությունները չի կարող ընկալել:

Շատ լեռնային համակարգեր պենեպլենի փուլին հասնելուց հետո կարող են նորից վերածնվել: Դա կարող է տեղի ունենալ նոր տեկտոնական բարձրացումների շնորհիվ: Բարձրացման հետևանքով գետերի էրոզիոն գործունեությունն աշխուժանում է, պենեպլենը մասնատվում, առաջանում են խորը հովիտներ ու էրոզիոն ծագման լեռնաշղթաներ, անտեցեղենտ հովիտներ (նախորդած հովիտներ). դրա տիպիկ օրինակը Տյան-Շանի համակարգն է:

Երկրակեղևի իջեցումներն ու բարձրացումները առաջացնում են երկրի մակերևույթի ձևախախտում (դեֆորմացիա), որի հետևանքով գետային ցանցը վերադասավորվում է: Փոքր Կովկասում գետերը մի ժամանակ հոսում էին Կուրին զուգահեռ, սակայն վերին պլիոցենում տեկտոնական բարձրացում-

ների հետևանքով գետային ցանցը վերականգնվեց, ընդունեց ալժմյան տեսքը: Տեկտոնական շարժումների ու մանթիայի վարքագծի նուրբ ցուցիչները (ինդիկատորներ) գետերն են: Ամենաշնչին շարժումներն անգամ ռելիեֆում արտահայտվում են ոչ բարձր դարավանդների ձևով:

Ստորև քննարկենք ռելիեֆի հորինվածքային տիպերը ծագումնաբանական տեսանկյունից:

Անաճորինվածքները (մորֆոստրուկտուրաները) կարող են լինել՝ պլատֆորմային և փոստինկլինալային: Պլատֆորմային ձևահորինվածքները հիմնականում ստեղծում են դաշտավայրեր ու բարձրավայրեր. նրանց բնորոշ ձևերը հարթություններն են: Պլատֆորմային հարթությունները կազմում են ցամաքի մակերևույթի 55 %-ը, որոնցից միայն 17 %-ը բաժին է ընկնում տեղատարման (դենուդացիոն) կամ մնացորդային հարթություններին: Պլատֆորմային հարթությունների մեծ մասը առաջնային հարթ մակերևույթն է, որը գտնվում է նստվածքային ապարների հարթ, հորիզոնական դասավորության շերտերի վրա. դրանց անվանում են շերտավոր հարթություններ, որոնք սովորաբար ունեն մինչըրրորդական հասակ:

Բացի շերտավոր հարթություններից կան նաև կուտակային (ակումուլացիոն) հարթություններ: Սրանց մակերևույթը հարթ է հողմահարման նյութերի փտերի միջոցով կուտակման հետևանքով:

Փոստինկլինալային ձևահորինվածքները հիմնականում արտահայտված են լեռնային ռելիեֆի տեսքով: Բայց, ինչպես վերը նշվեց, բացառված չէ, որ դրանք արտահայտվեն մնացորդային հարթությունների տեսքով (օրինակ՝ Ղազախական մանրաբլուրը):

Բոլոր լեռնային երկրները, մեծ ու փոքր լեռնաշղթաները ձևահորինվածքներ են, որոնք կարող են լինել երիտասարդ՝ կայնոզոյան տարիքի (ալպյան և խաղաղօվկիանոսյան հասակի), կամ հին լեռներ (մինչմեզոզոյան, մասամբ մեզոզոյան):

Երիտասարդ ծալքավոր լեռներին հատուկ է կառուցվածքով-հորինվածքով պայմանավորված ռելիեֆը. այսինքն՝ լեռնաշղթաները համապատասխանում են անտիկլինալներին, հովիտները՝ սինկլինալներին, գերակշռում են բարձր լեռնա-

յին, գծային դասավորութեան լեռնաշղթաները: Երիտասարդ լեռնային հորինվածքները իրենց տարածութեամբ (41 %) մի փոքր զիջում են հին՝ «վերածնված» (59 %) լեռներին:

«Վերածնված» լեռները հիմնականում հետալատֆորմային լեռներն են, այսինքն գտնվում են պլատֆորմների եզրային մասերում և մեծ մասամբ ծալքա-բեկորավոր են: Երկրակեղևը այստեղ տեկտոնական բարձրացումների-իջեցումների հետևանքով վերածվում է առանձին կոշտերի-բլոկների (օրինակ՝ Հայկական լեռնաշխարհը): Կոշտերի տարբեր բարձրացումների հետևանքով առաջանում են հորստեր (կտրուկ բարձրացած մասեր) և գրաբեններ (իջած մասեր): Վերջիններս հաճախ լցվում են ջրով և դառնում խորը լճեր (Բայկալ, Տանգանիկա, Նյասա և այլն): Ըստ հասակի «վերածնված» լեռները լինում են՝ մեզոզոյան, պալեոզոյան և մինչքամբրյան:

Հրաբխային մարզերի ձևափոխվածքները Երկրի ընդերքից դուրս մղվող մագման, գազերը, մոխիրը և այլն առաջացնում են ուղիղ շատ ձևեր, նույնիսկ երկրի մակերևույթը չհասնելու դեպքում էլ կարող են որոշակի ձևեր ստեղծել:

Հրաբխային ուղիղ ամենաընդարձակ տարածությունը գորավող ձևերից են լավային ծածկույթները Սրանք առաջանում են մագմայի մասսայական արտավիժումներից, երբ ուղիղ բոլոր անհարթությունները մնում են լավային ծածկույթի տակ, ստեղծվում է լավային հարթություն: Առաջներում այդպիսի վիթխարի արտավիժումներ են եղել Հնդկաստանի Դեկանի սարահարթում, Միջին Սիբիրում (սիբիրական տրապներ), Հայկական լեռնաշխարհում: Ներկա փուլում այդպիսի մասսայական արտավիժումներ տեղի չեն ունենում, գործող հրաբուխները մեծ մասամբ կենտրոնական տիպի են, լավան արտավիժում է առանձին կենտրոններից և ընդարձակ տարածություն չի գրավում:

Երբ մագման մինչև երկրի մակերևույթ չի հասնում և երկրակեղևում որոշ խորութեան տակ սառչում է, առաջացնում է ներծայթուկ: Երկրակեղևի տեղատարման հետևանքով ներծայթուկները ժամանակի ընթացքում մերկանում են և դուրս գալիս երկրի մակերևույթ դայկերի, նեկերի, լակոլիտների, բաթոլիտների ձևով:

Հրաբխային երկրներում շատ տարածված են շերտավոր

հրաբուխները. սրանք բազմիցս ժայթքած հրաբուխներ են (պո-  
լիգեն), որոնց լանջերին կարելի է տեսնել տարբեր փուլերում  
ժայթքած լավաներ, մոխիր, ռոտքեր, հրաբխային ավազ և  
ալյն (Զիմբորասո, Կոտոպախի, էլբրուա, Արարատ, Արագած  
և այլն): Այն երկրներում, որտեղ արտավիժում են հիմնային  
լավաներ-բազալտներ, շատ տարածված են լավային լեռնա-  
վահանները (Արագած, Գեղամա լեռներ, Մաունա-Վոա, Ռինգ-  
գետ և այլն):

Թթու լավաները առաջացնում են զառիթափ լանջերով ու-  
լիեֆի ձևեր՝ հրաբխային կոներ (Աժդահակ, Սիս, Արմաղան և  
այլն), էքստրուզիվ կոներ (Արտենի, Սպիտակասար և այլն):  
Հրաբխային կոները մեծ մասամբ պսակավորվում են խառնա-  
բանով, որոնք հետագայում հաճախ լցվում են ջրով և դառ-  
նում խառնարանային լիճ (Աժդահակ, Արմաղան):

Արտածին ուժերի ներգործությամբ հրաբխային գոյացու-  
թյունների մակերևույթին առաջանում են քանդակային  
(սկուլպտուր) ձևեր, հոսող ջրի միջոցով գոյանում են մանր  
ձորակներ-բարանկոսներ, հրաբխային ծածկույթների մեջ ա-  
ռաջացած գետահովիտները ներկայացնում են խնձահովիտներ  
(կանիոններ), որոնց լանջերի վերին մասերը զառիթափ են ու  
կախված:

Ձևափանդակավոր (մորֆոսկուլպտուր) ձևեր. արտածին  
գործոնների խումբը ներգործելով երկրի մակերևույթի վրա՝  
առաջացնում է քանդակային ձևեր: Ձևաքանդակները բա-  
ժանվում են մի քանի խմբի՝ ծանրահակ, ֆլյուվիալ, սառցա-  
դաշտային, ձնագո (նիվալ), սառցույթային, հողմային, արհա-  
լին ձևեր:

Մանրահակ են կոչվում այն բոլոր ձևերը, որոնք առաջա-  
նում են ծանրահակ (գրավիտացիոն ձգողության) ուժերի ներ-  
գործության տակ: Դրանցից են՝ բարային թափվածքները,  
փլվածքները, սողանքները: Այստեղ բացի ծանրահակ ուժից  
մասնակցություն ունեն նաև հոսող ջուրը, սառնամանիքային,  
կարստային, ներլվացման (սուֆոզիա) երևույթները:

Ֆլյուվիալ (ջրային) են կոչվում այն բոլոր ձևերը, որոնց  
ստեղծման մեջ հիմնականը հոսող ջուրն է:

Երկրի մակերևույթի վրայով հոսող ջուրը, որ առաջանում  
է մթնոլորտային սեղումներից, կատարում է էրոզիոն աշխա-

տանք՝ մակերևութային ու հունային էրոզիա: Մակերևութային էրոզիայի (հողի էրոզիա) հետևանքով լվացվում, տեղատարվում են լեռնալանջերը, իսկ հունային կամ գծային էրոզիայի միջոցով առաջանում են գետահովիտներ, ձորակներ: Հունային էրոզիայի հետևանքով լեռնային երկրները մասնատվում են, ռելիեֆի ձևերը էրոզիոն-տեղատարային բնույթ ունեն, լեռնալանջերը կոչվում են տեղատարային (դենուդացիոն): Դրանց տիպիկ օրինակ է Փոքր Կովկասը:

Հունային կամ գծային էրոզիան տեղի է ունենում գետահունի մեջ, որտեղ առանձնանում են խորքային և կողային էրոզիան: Առաջինի միջոցով հովիտը խորանում է, առաջանում են անդնդախոր կիրճեր: Իսկ երկրորդի միջոցով հովիտը լայնանում է, գետը գալարներ (մեանդրներ) առաջացնելով թափառում է հովտի հատակին և այսպես աստիճանաբար այն լայնացնում: Խորքային էրոզիա կատարող գետերը սովորաբար երիտասարդ են, նրանց երկայնակի կտրվածքում կողայատկերը (պրոֆիլը) դեռևս մշակված չէ, այդ գետերի վրա հանդիպում են ջրվեժներ (երբ գետի հոսանքը զառիթափի է հանդիպում, և ջուրը գահավիժում է), սահանքներ (երբ մեծ թեքության հատվածում ջուրը սըընթաց արշավում է խութերի միջոցով):

Գետահովիտները դասակարգում են ըստ տարբեր հատկանիշների. ըստ տեկտոնական հատկանիշի հովիտները լինում են երկայնադիր լայնադիր, շեղադիր: Երկայնադիր հովիտները ձգվում են տեկտոնական կառույցների՝ անտիկլինալների, սինկլինալների, խզվածքների ուղղությամբ: Լայնադիր հովիտները այդ կառույցները հատում են լրիվ կամ համարյա ուղղահայաց: Շեղադիր հովիտները հատում են սուր անկյան տակ: Ծթե հովիտն առաջացել է սինկլինալի մեջ, կոչվում է սինկլինալային, անտիկլինալի մեջ՝ անտիկլինալային, իսկ եթե գտնվում է անտիկլինալի կամ սինկլինալի թևերում և ունի ծալքերի տարածման ուղղությունը, կոչվում է մոնոկլինալային:

Հաճախ է պատահում, որ պենեպլենի վիճակի հասած լեռնային երկիրը տեսնում է նորից բարձրանալ՝ ծերացած գետերի ընթացքին ուղղահայաց կամ համարյա ուղղահայաց, իսկ գետը նրան սղոցում է: Ժամանակի ընթացքում առաջանում է

խոր կիրճ. այդպիսի հովիտները կոչվում են անտեցեղենա (նախորդած), ինչպես օրինակ Բառմի կիրճը Կիրգիզական Ալա-Քաուում, Գյուլադագենի կիրճը Բազումի լեռներում և այլն: Ըստ ձևաբանական տիպերի գետահովիտները լինում են՝ V-աձև, արկղաձև, U-աձև, լայնարձակ ողողատային հովիտներ և այլն:

Լեռնային երկրների մասնատման պրոցեսում գետերի միջոցով հողմահարված նյութերը դուրս են բերվում, որոնք կուտակվում են արտաբերման կոններում: Փամբակ գետի հովտում Բազումի լեռնաշղթայից իջնող ձորերի ու ձորակների ելքերի մոտ առաջացել են արտաբերման կոններ, որոնք միանալով կազմում են արտաբերման կոնների գոտի: Շատ լեռնային երկրների նախալեռնային մասերում առաջանում են կուտակումային հարթություններ՝ պեդիմենտներ:

Ռելիեֆի ջրային-ֆլյուվիալ տիպերից է կարստային ռելիեֆը, երբ հեշտ լուծվող ապարները ջրի միջոցով քայքայվում հեռանում են, տեղում առաջանում են քարանձավներ, կարստային ձագարներ, կարրեր (երկրի մակերևութի վրա խորակոսներ ու ցցվածքներ), կարստային հորեր, շթաքարեր (ստալակտիտներ), պտկաքարեր (ստալագմիտներ) և այլն:

Կարստային երևույթներին մոտ են ներվացման (սուֆոզիոն) երևույթները, երբ գետնի տակ հոսող ջուրը տանում է մանրահատիկ նյութերը, ապա ժամանակի ընթացքում ապարների հարակցականությունը թուլանում է, տեղի են ունենում փլուզումներ, սողանքներ և այլն: Ռուտաստանի տափաստանային շրջաններում շատ տարածված են ներվացման ոչ մեծ գոգավորություններ (ափսեհիկներ):

Քանդակավոր ձևերի մեջ են սառցաբերման (էկզարացիա-յի) և կուտակումային, ձնագոյացուկ ու սառցույթային ձևերը: Սառցաբերման միջոցով ստեղծվում են կրկեսներ, կառտիդներ, քարլինզներ, տրոգներ, խոյան ճակատներ, գանգրահեր ժայռեր, ուղեղներ: Սառցադաշտային բերուկները (մորենները) և հալոցքային ջրերի բերած նյութերը կուտակվելով առաջացնում են զանդրային դաշտեր, մորենային թմբեր ու թմբաշարքեր (օզեր, դրումլիններ և այլն): Սառցադաշտերի եզրային շրջաններում գոյացող լճային ավազաններում կուտակվում են ժապավենաձև կավեր, որոնք հետագայում դառ-

նում են ջրասառցադաշտային (Ֆլյուվիոգլյացիալ) հարթու-  
թյուններ:

Ձնաբծերի տարածման շրջաններում տեղի են ունենում  
ձնագոյացուկ (նիվացիոն) գոգավորություններ: Այն երկրնե-  
րում, որտեղ բազմամյա սառածություն կա, զարգացած են  
ռելիեֆի սառցակալման ձևերը՝ ջրալակոլիտներ (բուլգունյախ-  
ներ), ջերմակարստային գոգավորություններ, ցեխահոսքային  
(սուլիֆլյուկցիոն) դարավանդներ:

Ռելիեֆի քանդակման ջրային-ֆլյուվիալ տիպին է պատ-  
կանում ավաքերումը (աբրազիան), որի շնորհիվ ծովափերն  
ու լճափերը մշակվում են, առաջանում են ծովափնյա ավա-  
քերման պլատֆորմներ (աբրազիոն պլատֆորմ), լողափեր,  
դարավանդներ, բարեր:

Ձևաբանական առանձնահատկությունների, ծագման ու  
հասակի տեսակետից ծովափերը բաժանվում են երեք տիպի՝

1. Երիտասարդ ավաք, որոնք ձևավորվել են ներծին և  
արտածին պրոցեսներով և ծովի կողմից քիչ են ձևափոխվել:

2. Ավաք, որոնք ձևավորվում են առավելապես, ոչ ալիքա-  
յին պրոցեսներով:

3. Ավաք, որոնք ձևավորվել են ալիքային պրոցեսներով:

Ցուրաքանչյուր խմբում առանձնացվում են ենթախմբեր:  
Առաջին խմբում առանձնացնում են առաջնային հարթ և ա-  
ռաջնային մասնատված ավաք: Առաջնային հարթ ավաքը հա-  
տուկ են երիտասարդ ջրավաղաններին, որոնք ունեն տեկտո-  
նական ծագում: Ավաքն ուղիղ են և տեկտոնական խզվածքի  
արդյունք են (Կոլա թերակղզու, Կարմիր ծովի ավաքը):

Առաջնային մասնատված ավաքը շատ բազմազան են, այս-  
տեղ կարելի է առանձնացնել տեկտոնական, էրոզիոն-տեկտո-  
նական, էրոզիոն, սառցադաշտային, սառցադաշտային-տեկ-  
տոնական, հողմային, հրաբխային և այլ ավաք:

Տեկտոնական և էրոզիոն ավաքը առաջանում են ցամաքի  
ընկղմվելով: Դրանցից են դալմաթյան ավաքը: Երբ ընկղմվող  
հովիտները ծովափին զուգահեռ են, առաջանում են ծովա-  
փին զուգահեռ կղզիներ ու ծոցեր (Ադրիատիկ ծովի ավաքը):

Երբ գետահովիտները ծովափին ուղղահայաց են, և ավաքը  
սուզվում են, ապա հովիտները լցվում են ջրով, առաջանում  
են ռիասային ավաք՝ ծովափին ուղղահայաց ծոցեր ու կղզի-

ներ (Պիրենեյան թերակղզու հյուսիս-արևմտյան ափերը): Երբ ցածրադիր կուտակումային ափերը մասնատվում են էրոզիայի միջոցով, կոչվում են լիմաններ (Սև ծովի հյուսիսային ափերը):

Սառցադաշտային-տեկտոնական և սառցադաշտային-էրոզիոն մասնատման շնորհիվ առաջանում են շխերային և ֆիորդային ափեր: Շխերները մանր կղզիներ են, իսկ ֆիորդները նեղ ու երկար զիգագաձև, ծովի հատակ սուզված նախկին սառցադաշտային հովիտներ են: Սոգնե ֆիորդը Սկանդինավյան թերակղզում 220 կմ երկարություն և 1000—1350 մ խորություն ունի:

Օվկիանոսի հատակին ևս տեղի է ունենում ռելիեֆագոյացում. այստեղ առաջացած ձևերը տարբերվում են ցամաքի մակերևույթի ձևերից, որի մասին արդեն նշվել է «Օվկիանոսների» բաժնում: Միայն ասենք, որ օվկիանոսային երկրաձևվաբանության զարգացման գործում մեծ ավանդ են մուծել սովետական գիտնականներ Վ. Պ. Զենկևիչը, Օ. Կ. Լեոնտևը և ուրիշներ:

Ռելիեֆի քանդակված և կուտակային ձևերից են հողմային ձևերը, որոնք առաջանում են քամիների գործունեության հետևանքով (ժայռերի մակերևույթին առաջացած խոռոչները՝ յարդանոցները, սնկաձև ժայռերը, ավազաթմբերը, դյուևները, բարխանները և այլն):

## ԵՐԿՐԻ ԶՐՈՒՈՐՏԸ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3 Ձուրը Երկիր մոլորակի ամենաշարժուն նյութերից է, նրա միջոցով է կատարվում քիմիական համարյա բոլոր տարրերի համաշխարհային շրջապտույտը, և նրանով են պայմանավորված ջրակցումը (հիդրատացիա), էրոզիան, նստվածքների առաջացումը, սառցածին (կրիոգեն) պրոցեսները, ներվացումը կարստային և շատ այլ երևույթներ: Ձուրը կյանքի համար բացարձակ անհրաժեշտություն է. բույսերն ու կենդանիները անհրաժեշտ հանքային նյութերն ստանում են ջրային լուծույթներից, ջուրը մասնակցում է ֆոտոսինթեզի պրոցեսին և

այլն: Զուրը մարդու կենսական պահանջներում առաջնակարգ տեղ է գրավում:՝

1 Ներկրագնդի վրա ջուրը առաջացնում է ոլորտ, որին անվանում են ջրոլորտ (հիդրոսֆերա): Այն տարածվում է սկսած մանթիայից մինչև մթնոլորտ և բաժանվում է երկու ենթոլորտի՝ ա) համասեռ ենթոլորտ՝ օվկիանոսներ, ծովեր, լճեր. այստեղ ոլորտի ամբողջ ծավալում ջուրն անընդմեջ է. բ) ընդհատվող ոլորտ, որտեղ ջուրն ընդմիջվում է, համատարած չէ: Այս ենթոլորտին են պատկանում ամբողջ քարոլորտը, մանթիայի վերին մասը և մթնոլորտի ստորին ոլորտը (տրոպոսֆերան):՝

1 Ելակետ ունենալով Երկրի առաջացման վերաբերյալ Միդտի գիտաենթադրությունը՝ գիտնականները հանգում են այն եզրակացության, որ մոլորակի արտաքին ոլորտում կուտակված ջուրը արտահոսել է ներքին մասերից: Ս. Մ. Գրիգորևը (1971) ցույց է տալիս, որ Երկրի տաքացումը սկսվել է կենտրոնից և ջրի դրենաժային թաղանթն աստիճանաբար դուրս է մղվել երկրի մակերևույթ, իր հետ բերելով ամբողջ ջուրը, և երկրի միջուկում այլևս ջուր չկա: Զուրը վերընթացքի ժամանակ իր հետ բերել է լուծված նյութեր, հատկապես ռադիոակտիվ տարրեր, որոնք կուտակվել են մանթիայում և գրանիտային կեղևում:

1 Մագմայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այստեղ ջրի դերը բավական մեծ է: Բազալտային լավայի զանգվածի 5—8 % -ը ջուր է, գործող հրաբխային շրջաններում մագմայից յուրաքանչյուր տարի անջատվում և մթնոլորտ է մտնում ավելի քան 1 մլրդ մ<sup>3</sup> ջուր: Ըստ Ա. Պ. Վինոգրադովի՝ մագմայում գտնվող ջրի քանակը առնվազն 10 անգամ ավելին է, քան համաշխարհային օվկիանոսի ջրի ծավալն է:


Զրոլորտի ջրի գումարային պաշարները (առանց մանթիայի ջրի) կազմում են 1,4—1,6 մլրդ կմ<sup>3</sup> (1 կմ<sup>3</sup> = 1 մլրդ մ<sup>3</sup>) և Երկրի վրա բաշխված են անհավասարաչափ: Ամենամեծ բաժինն ընկնում է օվկիանոսներին—94 %, մնացած ջրային օբյեկտները միասին՝ 6 % (աղյուսակ 3):՝

Ջրուորտի ծավալը ըստ Մ. Ի. կովիչի (1969)

Ջրուորտի բաղադրամասերը	Մտվալը հազ. կմ <sup>3</sup>	%
Օվկիանոսներ	1,370000	94,2
Ստորերկրյա ջրեր	60000	4,12
(որոնցից ակտիվ)	4000	0,27
Սառցադաշտեր	24000	1,65
Հճեր	230	0,16
Գետեր	1,2	0,0001
Հողաշերտի ջրեր	75	0,005
Մթնոլորտի ջրեր	14	0,001
<b>Ընդամենը</b>	<b>1,5 մլրդ կմ<sup>3</sup></b>	<b>100</b>

Ջրուորտի բոլոր բաղադրիչները (ջրաբանական օբյեկտները) կազմում են մեկ ընդհանրություն, և ժամանակի ընթացքում ջուրը մեկ բաղադրիչից անցնում է մյուսին. ստորերկրյա ջուրը դառնում է գետաջուր և հոսելով օվկիանոս խառնվում է նրան, դառնում է օվկիանոսային ջուր, ապա գոլորշանալով վերածվում է մթնոլորտային ջրի. վերջինս անմիջապես կարող է դառնալ ինչպես սառցադաշտ, այնպես էլ գետաջուր, օվկիանոսային ջուր և այլն: Ջրուորտի ջուրն անընդհատ շարժման ու համաշխարհային շրջապտույտի մեջ է, և ջրի մոլեկուլը գտնվում է այդ շրջապտույտի օղակներից որևէ մեկում:

Ջուրը կազմված է թթվածնից ու ջրածնից: Կշռային միավորներով արտահայտած թթվածինը կազմում է 88,81 %, ջրածինը՝ 11,19 %: Ջրի մոլեկուլը ասիմետրիկ կառուցվածքով, որն աշխարհագրական թաղանթում վճռական նշանակություն է ստանում (նկ. 5): Թթվածնի ատոմը և ջրածնի զույգ ատոմները դասավորված են այնպես, որ նրանց միջև ստացվում է մոտ 105°-ի անկյուն: Այս հանգամանքը բնության կատարելության զարմանալի արտահայտություններից մեկն է: Մեծան դասավորության դեպքում մոլեկուլի մի մասում կենտրոնանում են ջրածնի դրական, իսկ մյուսում՝ թթվածնի բացասական լիցքերը, և մոլեկուլը դառնում է բևեռացված: Այնօժտված է դիպոլային մոմենտով, ուստի կարող է շրջապատում գտնվող նյութերի բյուրեղային ցանցից իոններ պոկել: Այս երևույթին անվանում են հիդրատացում՝ ջրակցում, որը



Նկ. 5. Զրի տարբեր ագրեգատային վիճակներում մալեկուլների դասավորությունը:

քնության մեջ շատ տարածված և օրգանական աշխարհին խիստ անհրաժեշտ պրոցես է: Եթե թթվածնի ատոմի շուրջը ջրածնի ատոմները համաչափ դասավորություն ունենային, ապա ջրի մոլեկուլը կլիներ շեղոք, չէր կարողանա նյութեր լուծել, բույսերն ու կենդանիները չէին կարողանա սնվել, կյանք չէր լինի:]

Զուրն ունի նաև այլ զարմանալի հատկանիշներ, որոնք շատ կարևոր են աշխարհագրական թաղանթի, մասնավորապես կենսոլորտի կյանքում: Դրանցից են ջրի ամենախիտ վիճակի ջերմաստիճանը ( $+4^{\circ}$ ), ծավալային փոփոխությունները՝ տարբեր ագրեգատային վիճակի անցնելիս, էներգիայի կլանումն ու անջատումը այդ պրոցեսում, ջրի մեծ ջերմունակությունը, էլեկտրահաղորդականությունը և այլն:

Նշանի է, որ բոլոր նյութերը ջերմաստիճանի բարձրացումից ընդարձակվում են, իսկ իջեցումից՝ սեղմվում. ջուրը նույնպես օժտված է այդ հատկությամբ, սակայն  $0-4^{\circ}$ -ի տակ հակառակն է նկատվում: Այս անբնականոնությունը (անոմալիան) քնության հրաշալիքներից մեկն է: Նրա շնորհիվ ջրավազաններում տեղի է ունենում կոնվեկցիայի երևույթը  $4^{\circ}$ -ի տակ ջրերը ամենից խիտ են, այդ պատճառով իջնում են ավազանի խոր մասերը, իսկ թեթև ջրերը վեր են բարձրանում, և ջրավազանների տաքացումն ու սառեցումը կատարվում է կոնվեկցիայի միջոցով: Սառելիս ջուրն ընդարձակվում է իր ծավալի  $1/10$  չափով: Այս հատկանիշը նույնպես Երկրի կյանքում ամենակարևորներից է: Թեթև լինելով սառույցը բարձ-

բանում է ջրի մակերևույթ. նշված հատկանիշի բացակայու-  
թյան դեպքում սառույցը ջրից ծանր կլինե՞ր, կիջնե՞ր հատակ,  
և ծովերն ամբողջովին կսառցակալվե՞ին:

9) Ջուրը պինդ (սառույց) վիճակից հեղուկի և հեղուկից գո-  
լորշու վերածվելիս՝ շրջապատից կբանում է հսկայական քա-  
նակի թաքնված ջերմություն: Հալման թաքնված ջերմությու-  
նը մոտ 80 կալ/գ է, գոլորշացմանը՝ մոտ՝ 539 կալ/գ: Այդ ջեր-  
մությունը ծախսվում է մորեկուլների վերադասավորման վրա՝  
սառցի եռհիդրոլը դառնում է ջրի երկհիդրոլ, իսկ վերջինս գո-  
լորշանալիս՝ հիդրոլ: Հակառակ պրոցեսի դեպքում թաքնված  
ջերմային էներգիան անջատվում է և հաղորդվում շրջապա-  
տին: Ջուրը կարող է գոլորշանալ սովորական վերնածին (հի-  
պերգեն) բնական պայմաններում 100°-ից ցածր ջերմաստի-  
ճանում. այս դեպքում գոլորշացման թաքնված ջերմությունը  
բարձրանում է 580—600 կալ/գ: Ջրի տարբեր ագրեգատային  
վիճակների անցնելիս՝ թաքնված ջերմության կլանումն ու ան-  
ջատումը վիթխարի դեր ունի: Անապատում ջուր չկա, և գո-  
լորշացումը գրեթե բացակայում է, Արեգակից ստացված ամ-  
բողջ ջերմային էներգիան մնում է երկրի մակերևույթին, վեր-  
ջինիս ջերմաստիճանը բարձրանում է 70—75°: Ջրառատ եր-  
կրյուններում Արեգակի ջերմության մեծ մասը ձախսվում է գո-  
լորշացման վրա, հողի մակերևույթի ջերմաստիճանը շատ չի  
բարձրանում, մարդու բնակության համար ստեղծվում են նը-  
պաստավոր պայմաններ:

10) Ջուրն ունի մեծ ջերմունակություն (1 կալ/գ. սստ), այ-  
սինքն՝ 1 գ ջուրը 1° տաքացնելու համար անհրաժեշտ է 1 կալ  
ջերմություն: Այլ նյութերի մոտ ջերմունակությունը մի քա-  
նի անգամ փոքր է: Այս հանգամանքը աշխարհագրական թա-  
ղանթում այն նշանակությունն ունի, որ ջրավազանները դառ-  
նում են արեգակնային ջերմության հսկայական կուտակիչ-  
ներ: Ձմեռային ամիսներին, երբ շրջապատում ջերմաստիճա-  
նը ցածր է, այն հաղորդվում է շրջապատին: Բավական է  
Գոլֆստրիմ հոսանքի ջրի ջերմաստիճանը բարձրանա 0,5°-ով,  
որ ձմեռային ամիսներին Արևմտյան Սվրոպայում օդի ջեր-  
մաստիճանը մի քանի աստիճանով բարձրանա:

11) Ջուրն ունի նաև շատ կարևոր կենսաբանական հատկա-  
նիշ: Արեգակի լույսի քվանտի ազդեցության տակ քլորոֆիլի

հատիկներում ջրի մոլեկուլը տրոհվում է ջրածնի ու թթվածնի: Ջրածինը մասնակցում է ածխաջրերի սինթեզին, իսկ ազատ թթվածինը մտնում է մթնոլորտ:

Ն Երկրագնդի վրա բացարձակ մաքուր ջուր չկա: Մերոն նշել ենք, որ ջրի բևեռացված մոլեկուլները, մոտենալով նյութի բյուրեղային ցանցին, նրանից իոններ են պոկում: Ջրի մեջ գցած կերակրի աղի կտորը մի քանի վայրկյանում լուծվում է: Բայց բոլոր նյութերը չեն, որ ջրում անմիջապես լուծվում են: Եթե նյութի բյուրեղային ցանցը շատ ամուր է ջրի մոլեկուլները ազդեցություն չեն ունենում: Օրինակ՝ քվարցը ( $\text{SiO}_2$ ) ունի շատ ամուր բյուրեղային ցանց. նրա կտորը տարիներով կմնա ջրի մեջ, բայց չի լուծվի: Ապակյա շշերում ու անոթներում գտնվող ջուրը նրանց վրա գործնականորեն չի ազդում, և անոթը անվնաս է մնում: Սակայն այս պնդումը բացարձակ չէ. նույնիսկ քվարցը, եթե փոշու աստիճանի մանրացնենք և խառնենք ջրին, այնուամենայնիվ նրանից ինչ-որ քանակ լուծվում է, որը կարելի է հայտնաբերել քիմիական նուրբ անալիզների միջոցով: Ուրեմն, եթե ասում ենք, թե նյութը ջրում անլուծելի է, ապա դա հարաբերական կամ միաձև գործնական իմաստ ունի: Ելնելով սրանից կարող ենք նշել, որ ջրոլորտի ջուրը անպայման պարոսնակում է քիմիական տարրերի որոշ քանակ: Մի տեղ լուծված նյութերն այնքան շատ են, որ կարող են լուծույթից անջատվել, առաջացնել աղերի նստվածքներ, մեկ այլ տեղ՝ այնքան քիչ, որ հազիվ կարելի է հայտնաբերել քիմիական անալիզների միջոցով:

Դերը ջրի վրա ճնշումը մեծանում է, եռման ու հալման ջերմաստիճանները փոխվում են: 217 մթնոլորտ ճնշման դեպքում ջուրը եռում է և գոլորշանում  $374^\circ$ -ում, որին անվանում են կրիտիկական ջերմաստիճան: Սրանից բարձր ջերմաստիճաններում, որքան էլ ճնշումը մեծացնենք, միևնույն է, ջուրը կգտնվի գոլորշի ազդեցատային վիճակում: Եթե ջրի մեջ լուծված են զանազան նյութեր, կրիտիկական ջերմաստիճանը կբարձրանա մինչև  $450^\circ$ :

Երկրակեղևի մեծ խորություններում, որտեղ ջուրը գտնվում է կրիտիկականին մոտ ջերմաստիճաններում, այն ունակ է իր մեջ լուծել ամենատարբեր միներալներ, որոնք Երկրի մակերևույթին անլուծելի են: Խորքային ջրային լուծույթները

զրաջերմային (հիդրոթերմալ) ջրերը վերև բարձրանալով աստիճանաբար թառչում են, նրանց վրա ճնշումն ընկնում է, լուծված նյութերը աստիճանաբար անջատվում են, բյուրեղանում, նստում անցքերի ու ճեղքերի պատերին: Այս եղանակով առաջանում են ջրաջերմային ծափում ունեցող հանքավայրեր:

Ջրոլորտի տարբեր օբյեկտներում ջուրը գտնվում է տարբեր ագրեգատային վիճակներում և ունի ֆիզիկա-քիմիական-տարբեր հատկանիշներ: Ստորև քննարկենք այդ օբյեկտները:

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՕՎԿԻԱՆՈՍ

Նախորդ բաժիններից պարզ դարձավ, որ Երկրագնդի մակերեսի մեծ մասը (մոտ 71 %-ը կամ 361 մլն կմ<sup>2</sup>) բաժին է ընկնում օվկիանոսներին, որոնցում կուտակված է 1,37 մլրդ կմ<sup>3</sup> ջուր:

Պ Ղ յ ո ս ա կ 4

Օվկիանոսների մակերեսը, ծավալը և խորությունը

(ըստ ԼՊԻ-ի ֆաունդալափական լաբորատորիայի ավյալների, 1970)

Օվկիանոս	Մակերեսը հազ. կմ <sup>2</sup>	Ծավալը մլն կմ <sup>3</sup>	Խորությունը մ	
			միջին	առավելագույն
Ատլանտյան ✓	91655	330,1	3602	9218
Հնդկական	76175	284,6	3736	7455
Հյուսիսային Սառուց. հաղաղ	14788	16,7	1131	5450
	178684	707,1	3.57	11022
Համաշխարհային օվկ.	361302	1338,5	3704	11022

Համաշխարհային օվկիանոսը բաժանվում է շոքս մեծ օվկիանոսների (աղյուսակ 4): Այդպիսի բաժանումը պայմանավորված է հատակի ռելիեֆով, ջրի զանգվածի ինքնուրույն շրջանառությամբ: Սրանց միջև ծովային սահմանները պայմանական են: Որոշ հեղինակներ հաղաղ, Ատլանտյան և Հրնդկական օվկիանոսների հարավային մասերի միացումից փորձում են առանձնացնել նաև հիւնգերորդ՝ Հարավային օվկիանոսը, որը շատ պայմանական է և ո՛չ ամենքի կողմից ընդունված:

Խաղաղ օվկիանոսի սահմանները Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի հետ անցնում են Զուկոտյան թերակղզու Ունիկին հրվանդանից մինչև Շիշմարյովի ծոցի մուտքի հրվանդանն անցնող գծով: Հնդկական օվկիանոսի հետ՝ Մալակկայի նեղուցի հյուսիսային եզրով, Արևելա-Հնդկական արշիպելագի հարավ-արևմտյան եզրով մինչև Ավստրալիայի Բուգենվիլի հրվանդանը (հար. լայն.  $14^\circ$ , արևել. երկ.  $120^\circ$ ), Ավստրալիայի ափերով, Բոսսի նեղուցով մինչև Քասամանիա կղզու Սաութ-Իսթ-Փոյնթ հրվանդանը և վերջինիս միջօրեականով՝ Անտարկտիդա: Ատլանտյան օվկիանոսի հետ Հորն հրվանդանից մինչև Անտարկտիդա անցնող միջօրեականով: Որոշ հեղինակներ այս սահմանն անցկացնում են Ֆոլկլենդյան, Հարավային Գեորգիայի, Հարավային Սանդվիչյան և Հարավային Օրկնեյան կղզիներով մինչև Անտարկտիդա:

Ատլանտյան օվկիանոսի և Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի միջև սահմանն անցնում է՝ Նորվեգիայի Ստադլանդ թերակղզուց Շեթլանդական, Ֆարերյան կղզիներով մինչև Իսլանդիա, այստեղից մինչև Անգամասալիկ (Գրենլանդիա), այնուհետև՝ Սուկերտոսկենից մինչև Բաֆֆինի երկրի Մերսի հըրվանդանը, այստեղից Հուդսոնի նեղուցի հարավային՝ Չիլդի հրվանդանը: Հնդկական օվկիանոսի հետ՝ Ասեղի հրվանդանից արևել. երկայնության  $20^\circ$  միջօրեականով մինչև Անտարկտիդա:

Օվկիանոսի մասերն են կազմում ծովերը, ծոցերը, իսկ երկու ջրային ավազանները միմյանց միանում են նեղուցների միջոցով: Ծովերն առանձնանում են մեծ մասամբ ըստ հատակի բնույթի, ջրաբանական ուժերի և ջրամաքների ու կղզիների միջոցով մեկուսացման սկզբունքի: Սակայն կան ծովեր, որոնք պատմական անցյալում ծով են կոչվել և այդպես էլ միջազգային ճանաչում ստացել: Օրինակ, Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում Արաբական ծովը և Բենգալյան ծոցը միմյանց շատ նման են, բայց մեկը պատմականորեն ծոց է կոչվում, մյուսը՝ ծով:

Ըստ առանձնացման տարրերում են՝

1. Եզրային ծովեր. սրանք օվկիանոսի հետ չայն կապ ունեն և վերջինիցս բաժանվում են կղզիներով (Բարենցի, Կարայի, Լապտևների, Արևելաչինական և այլն):

2. Միջամայրցամաքային ծովեր. սրանք գտնվում են առնչվազան երկու մայրցամաքների միջև (Կարմիր, Միջերկրական, Կարիբյան):

3. Ներցամաքային ծովեր. գտնվում են ցամաքի խորքում և օվկիանոսի հետ կապված են նեղուցների միջոցով (Բալթիկ, Սև, Ազովի):

4. Միջկղզային ծովեր. երբ կղզիների խմբերը հոծ օղակ են ստեղծում և օվկիանոսի մի մասը մեկուսացնում են (Ցամախան, Սուլավեսի, Սուլու, Բանդա և այլն):

Օվկիանոսի և ծովերի այն մասերը, որոնք որոշ շահով խորանում են ցամաքի մեջ, բայց լայն կապ ունեն հիմնական ազազանի հետ, կոչվում են ծոցեր: Բայց այստեղ էլ կան շեղումներ, որոնք պատմականորեն են առաջացել, ավանդական են: Օրինակ՝ Նուդսոնի ծոցը ծով կոչվելու բոլոր պայմաններն ունի, սակայն սկզբում այն ծոց են անվանել և այդպես էլ կոչվում է:

Օվկիանոսի ջրային զանգվածները, ի տարբերություն մյուս ջրային օբյեկտների, լուծված քիմիական տարրերի և քանակի ու կազմի տեսակետից համեմատաբար համասեռ են: Դա բացատրվում է այն բանով, որ օվկիանոսային հզոր հոսանքների միջոցով ջրերն անընդհատ խառնվում են: Օվկիանոսային ջրերի աղիությունը 35 ‰ (պրոմիլե) է, այսինքն մեկ լիտր ջրում լուծված է 35 գ աղ: Աղիության տարբերությունները տարբեր աշխարհագրական լայնություններում առաջանում են մթնոլորտային տեղումների, գոլորշացման, գետերի հոսքի և տեղական այլ գործոնների ազդեցությամբ:

Եթե լճերում աղիության տարբերությունները կարող են չինել հազարավոր անգամ, ապա օվկիանոսներում կազմում են մի քանի պրոմիլ միայն: Օվկիանոսի ջրի աղիության աղբյուրը քարոլորտն է, մասամբ նաև մանթիան: Քարոլորտում ու թուլլորտում անընդհատ շրջապտույտ կատարող ջուրը շփվելով շրջապատի նյութերի հետ հարստանում է քիմիական տարրերով: Գետերն իրենց հետ համաշխարհային օվկիանոս են տանում զանազան լուծված նյութեր (տարեկան  $1,5 \cdot 10^{10}$  տ), մինչդեռ օվկիանոսից գոլորշացող ջուրը ազատվում է լուծված նյութերից և գնում դեպի ցամաք որպես համեմատաբար մաքուր ջուր (եթե հաշվի չառնենք խմպովներիզացիան, որի

մասին տե՛ս ստորև): Նշանակում է օվկիանոսի գոյության սկզբից այս հսկա ավազանը դարձել է մի այնպիսի միջավայր, որտեղ կուտակվել են ցամաքից լվացված քիմիական տարրերը:

Եթե օվկիանոսային աղիության հիմնական աղբյուր ընդունենք գետերի բերած լուծված նյութերի տարեկան քանակը, ապա 1 լիտրում 35 գ կուտակվածությունը ստեղծվել է 170—200 միլիոն տարվա ընթացքում: Իսկ դրանից առաջ գետերը մի՞թե լուծված նյութեր չեն բերել: Բանն այն է, որ օվկիանոսում կուտակվող քիմիական տարրերը անընդհատ շրջապտույտի մեջ են, նրանց մի մասը շոր կլիմայական պայմաններում ծովածոցներում առաջացրել է աղերի կուտակումներ: Երևանի սահմաններում միոցենում գոյություն է ունեցել կիսափակ ծոց, որտեղ կուտակվել են աղեր, և այժմ այստեղ ունենք Ավանի աղահանքը: Մովի հատակին կուտակված կրաքարային նստվածքները առաջացրել են հսկայական շերտախմբեր, և այժմ աշխարհի շատ լեռնաշղթաներ (Շվեյցարական յուրա, Մեծ Կովկասի արևմտյան մասը, և այլն) ամբողջությամբ կազմված են ծովային ծառան կրաքարերից:

Այսպիսով օվկիանոսը քիմիական տարրերի համաշխարհային շրջապտույտի այն օղակն է, որտեղ դրանք ժամանակավորապես կանգ են առնում և ապա տալիս են մեծ կուտակումներ: Օվկիանոսի ջրում լուծված հիմնական իոններն են՝  $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$ ,  $\text{HCO}_3^-$ ,  $\text{CO}_3^{2-}$ ,  $\text{Br}^-$ ,  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Sr}^{2+}$  և մինչև 65-ի հասնող այլ տարրեր, նույնիսկ ոսկի, արծաթ, պլատին: Օվկիանոսային ջրի քիմիական կազմում գերակշռում են քլորիդները, մինչդեռ այն սնող գետերում՝ կարբոնատները (աղյուսակ 5): Դա բացատրվում է նրանով, որ օվկիանոսներում ապրող օրգանիզմները իրենց պատյանը կամ կլեմախքը շինելու համար եռանդուն կերպով կլանում են կալցիում, մինչդեռ  $\text{Na}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$  չեն օգտագործվում, սրանք ավելացնում են ջրի միներալացումը: Արևադարձային լայնությունների ծանծաղ ծովերում ապրում են կորալյան պոլիպներ, որոնց պատյանը կազմված է կալցիումի կարբոնատից ( $\text{CaCO}_3$ ): Դարեր ու հազարամյակներ շարունակ կորալյան պոլիպների պատյանները կուտակվելով առաջացրել են կորալյան կղզիներ ու խութեր: Անական է, որ օվկիանոսի ջր-

Մովային և գետային ջրերի ազային կազմը, կշռային տակասներով  
(ըստ Լ. Կ. Դավիդովի, Ա. Ա. Դմիտրիևայի և Ն. Գ. Կոնկինայի, 1973)

Միացություններ	Մովի ջրում	Գետի ջրում
Քլորիդներ	88,7	5
Սուլֆատներ	10,8	10
Կարբոնատներ	0,3	60
Ազոտի, ֆոսֆորի, սիլիցիումի և օրգանական նյութերի միացություններ	0,2	25

ըում կալցիումի կարբոնատի քանակը անտիճանաբար պակասելու է:

Հետ աշխարհագրական լայնության՝ օվկիանոսային ջրի ամենամեծ աղիությունը (36—37‰) նկատվում է արևադարձային լայնություններում, պասսատների առաջացման գոտում, որտեղ մթնոլորտային տեղումները քիչ են, իսկ գոլորշացումը՝ շատ: Իհպի մերձբևեռային շրջանները՝ գոլորշացումը պակասում է, տեղումներն ավելանում են, ուստի աղիությունը ևս պակասում է (35—34‰): Սառուցյալ օվկիանոսի ծովերում 31—33‰ է, իսկ մեծ գետերի գետաբերաններում ու նրանց հարող ծովերում՝ ավելի պակաս: Կարմիր ծովում, Միջերկրական ծովի հարավային մասերում, որտեղ գետեր չեն թափվում, ջրի աղիությունը հասնում է 40‰-ի:

Հետ խորություն՝ աղիության տարբերությունները մեծ չեն՝ մերձբևեռային շրջաններում ըստ խորության աղիությունը 1—2‰-ով մեծանում է, որովհետև հարավից եկող աղի ջրերը մտնում են համեմատաբար պակաս աղի ջրերի տակ: Ցածր աշխարհագրական լայնություններում, որտեղ օվկիանոսի կրտորվածքում նկատվում է ջրերի վերընթաց շարժում, աղիությունը ըստ խորության 1—2‰-ով պակասում է: ]

Օվկիանոսի ջրերում բացի աղերից, լուծված են նաև գազեր: Մթնոլորտում գտնվող գազերը ջրում լուծվում են իրենց պարզիալ ճնշմանը համապատասխան (այն տոկոսային հարաբերությամբ, որպիսին կազմում է տվյալ գազի ճնշումը մթնոլորտի ճնշման մեջ): Սակայն նրանց ծախսը ջրում բոլորովին այլ է: Օրինակ, թթվածինը օգտագործվում է կենդանիների շնչառության համար, մինչդեռ ազոտը, ածխաթթուն և

ալլ գազեր շին օգտագործվում, հետևաբար ջրի մեջ գազերը (մասնավորապես թթվածինը) լավ են լուծվում, և պատահական չէ, որ ձկների վտառները ձգտում են դեպի սառը ջրեր: Օվկիանոսի ջրում լուծված գազերի մեջ բացի թթվածնից կյանքի համար կարևոր նշանակություն ունեն նիտրատները ( $\text{HNO}_3$ ), նիտրիտները ( $\text{HNO}_2$ ), ամոնիումի աղերը ( $\text{NH}_4$ ): Մովի ջրի մեջ կա  $\text{CO}_2$ , որը մուտք է գործում նրա մեջ թուլյուրտից, երբ այրվող օրգանական նյութերից ածխաթթուն անջատվում է: Անցնելով երկրակեղևի միջով այն դեռևս գտնվում է հեղուկ վիճակում, սակայն ծովի ջրում, որոշ խորության տակ, վերածվում է գազի և հաճախ դուրս է գալիս մթնոլորտ: Կան ծովեր, որտեղ գոյություն ունի նաև ծծմբաջրածին: Անծովը 200 մ-ից խորը վարակված է  $\text{H}_2\text{S}$ -ով, ուստի կյանքը պլանտեղ գրեթե բացակայում է:

Օվկիանոսի կտրվածքում, ըստ խորության, գազերի պարունակությունը պակասում է, որովհետև խորը շերտերում, հատկապես թթվածինը օգտագործվում է կենդանիների կողմից: Այստեղ նշանակություն ունի ջրի ուղղաձիգ շրջանառությունը: Ջրի վերընթաց շարժման դեպքում թթվածնի քանակը խորը շերտերում ավելին է, քան մակերևույթին մոտ շերտերում, միայն մակերևույթին հասնելիս թթվածնի քանակը միանգամից ավելանում է:

Մովի ջուրն ունի խտություն և խտությունը նյութի զանգվածի հարաբերությունն է ծավալին: Թորած ջրի խտությունը 1 է, այսինքն՝ նրա 1 սմ<sup>3</sup>-ը կշռում է 1 գ: Քանի որ ծովի ջուրը աղեր է պարունակում, ուստի նրա խտությունը 1-ից մեծ է: Որքան աղերի քանակը ջրում շատ լինի, այնքան խտությունը կմեծանա: Չնայած թորած ու աղիացած ջրերի խտությունների տարբերությունը շատ մեծ չէ, բայց որոշակի նշանակություն ունի: Օրինակ, երբ նավը գետաջրերից ծով է անցնում, կարծես թեթևանում է և մի փոքր վերև է մղվում: Խտությունների տարբերությունները շատ են ազդում սուզանավերի վրա: Մովի ջրերի խտությունները տատանվում են 1,000—1,04 գ/սմ<sup>3</sup> միջև: Այսինքն մեկ խորանարդ մետր քաղցրահամ ջուրը կշռում է 1 տոննա, իսկ աղին՝ մինչև 40 կգ-ով ավելի: Մովի ջրի խտության վրա ազդում է նաև ջեր-

մաստիճանը. սառը ջրերն ավելի մեծ խտություն ունեն, քան տաք ջրերը:)

ՄՕվկիանոսի ջրի խտությունը փոխվում է թե հորիզոնական և թե ուղղաձիգ ուղղությամբ, որը կապվում է ջերմաստիճանային տարբերությունների ու ճնշման հետ: Օվկիանոսի հատակի ջրերը գտնվում են հսկայական ճնշման տակ (մինչև 500—1000 մթնոլորտ), և ջուրը որոշ շափով սեղմված է: Պետք է նշել, որ շնայած ջրի սեղմվածությունը շնչին է, բայց այնուամենայնիվ, նկատելի է: Թորած ջրի սեղմվածության գործակիցը հավասար է 0,0000490, 35% աղիություն ունեցող ջրինը 0°-ում 0,0000442, սեղմվածությունը ազդում է ջերմաստիճանի վրա. ընդարձակվելիս ջուրը՝ ջերմաստիճանը կորցնում է: Այս կարգի ջերմաստիճանային փոփոխությունները (առանց ջերմափոխանակման) կոչվում են ադիաբատիկ:)

Մոլի ջուրն ունի թափանցիկություն, գույն և ակուստիկ հատկանիշներ: Հասնելով ջրին՝ Արեգակի ճառագայթների մի մասն անդրադառնում է (ալբեդոյի երևույթ), մյուս մասը մտնելով ջրի մեջ ցրվում է: Ամենից խորը թափանցում են ուլտրամանուշակագույն ճառագայթները, երկարալիք ճառագայթները կլանվում են ամենավերին շերտում ու խորը չեն թափանցում: 200—300 մ խորության տակ մարդու աչքի համար խավար է, սակայն լուսազգայուն թիթեղը սևանում է, նշանակում է՝ այնտեղ ուլտրամանուշակագույն ճառագայթներ են թափանցում: Ուլտրամանուշակագույն ճառագայթները հասնում են մինչև 500 մ խորություն: Գործնական նպատակներով թափանցիկությունը որոշում են 30 սմ տրամագծով սպիտակ սկավառակի միջոցով: Այն սուզում են ջրի մեջ և դիտում 2 մ բարձրությունից: Երբ սկավառակն անհետանում է, այդ խորությունն էլ արտահայտում է թափանցիկության սահմանը: Ամենամեծ թափանցիկություն առայժմ նկատված է Սարգասյան ծովում՝ 66,5 մ: Օվկիանոսում հասարակածից դեպի բևեռներ թափանցիկությունը փոքրանում է..

Մոլի ջուրը և ծովը գույն ունեն. սրանք տարբեր հասկացություններ են: Ջրի գույնը որոշելիս հենց տեղում նմուշներ են վերցնում և համեմատում են ստանդարտ գունավորված նմուշների հետ (գունաչափական եղանակ). այնինչ ծովի գույնը դիտում են ակից: Մոլի գույնը կախված է եղանա-

կից: Պարզ եղանակի դեպքում ծովը կապույտ երանգ է ունենում, իսկ ամպամած եղանակին՝ մոխրագույն:

Օվկիանոսներում ու ծովերում գիշերային ժամերին երբեմն որոշ հատվածներում լուսավորություն է նկատվում: Ադի ջրերում ապրող որոշ միկրոօրգանիզմներ լույս են արձակում և լուսավորում ծովը: Այս երևույթը կոչվում է ծովի լուսարձակում:

Սովի ջուրն ունի ակուստիկ հատկանիշներ. այն իր միջով անց է կացնում ձայնի ալիքներ: Ալիքի անցման արագությունը կախված է ջրի խտությունից. որքան խտությունը մեծ լինի, այնքան ձայնն արագ կանցնի: Արագությունը տատանվում է 1140—1550 մ/վրկ միջև: Վերջին ժամանակներս ուլտրաձայնի միջոցով որոշում են ծովի խորությունը և հայտնաբերում են ծովում գտնվող առարկաները:

Օվկիանոսներին ջերմություն տվող աղբյուրը Արեգակն է: Երկրի ներքին և այլ ջերմային աղբյուրները գործնականորեն նշանակություն չունեն: Արեգակի ջերմությունից ջրի ջերմաստիճանն այնպես արագ բարձրանալ չի կարող, ինչպես ցամաքինը, որովհետև ջրի մեջ կոնվեկցիա է կատարվում, բացի դրանից ջրի ջերմունակությունը մի քանի անգամ մեծ է ապարների ջերմունակությունից. եթե ցամաքում գետնի մակերևույթին նկատվել է մինչև  $80^{\circ}$ , ապա ծովի վրա ոչ ավել քան  $40^{\circ}$ :

Ցածր աշխարհագրական լայնություններում տաքացած օվկիանոսային ջրերը տեղում շեն մնում, օվկիանոսային հոսանքների միջոցով տեղափոխվում են դեպի մերձքևեռային շրջանները և այնտեղ ջերմությունը հաղորդում են շրջապատին: Այստեղ ջրերը պաղելով ծանրանում են և իջնում օվկիանոսի հատակը ունենալով  $1-2^{\circ}$ , նույնիսկ  $0^{\circ}$ -ից ցածր ջերմաստիճաններ: Այդ նույն ջրերը օվկիանոսի մերձատակային մասով վերադառնում են դեպի հասարակած: Զարմանալի չէ, որ արևադարձային լայնություններում մերձատակային ջրի ջերմաստիճանը  $1-3-5^{\circ}$  է: Արևադարձային լայնությունների տակ օվկիանոսների՝ արևելյան մասերում ջրերը բարձրանալով տաքանում են և նորից տեղափոխվում մերձքևեռային շրջանները: Այս շրջապատույտի մասին ավելի հանգամանորեն կանգ կառնենք օվկիանոսային հոսանքները ուսումնասիրելիս:

Պետք է նշել, որ միևնույն աշխարհագրական լայնություն տակ օվկիանոսի բոլոր մասերում ջրի ջերմաստիճանը նույնը չէ: Դա պայմանավորված է ծովային հոսանքներով: Այսպես, հասարակածային և արևադարձային լայնություններում օվկիանոսի արևմտյան մասն ավելի տաք է, քան արևելյանը: Բարեխառն լայնություններում պատկերը աստիճանաբար փոխվում է, և օվկիանոսի արևելյան մասն է ավելի տաք:

Ջրի ջերմաստիճանը փոխվում է նաև ըստ խորություն. արևադարձային և բարեխառն լայնություններում մակերևույթից դեպի խորքը, ջրի ջերմաստիճանը սկզբում իջնում է թրուխջով, այնուհետև մինչև հատակ նվազում է աստիճանաբար: Մերձբևեռային լայնություններում օվկիանոսը սառցակալված է, ուստի մակերևութային ջրի ջերմաստիճանը ցածր է: Այստեղ որոշ խորությունում հայտնաբերվում են 1—2—3°-ով ավելի բարձր ջերմաստիճան ունեցող ցածր լայնություններից եկած աղի ջրեր, իսկ ավելի խորքում՝ ջերմաստիճանը նորից ընկնում է, սակայն աննշան չափով:

Օվկիանոսներում ջերմության բաշխումը քարտեզի վրա արտահայտում են հավասարաջերմերի (իզոթերմեր) միջոցով (հավասարաջերմը հավասար ջերմաստիճան ունեցող կետերը միացնող գիծն է): Ինչպես մթնոլորտում, որտեղ գոյություն ունեն տարբեր տիպի օդային զանգվածներ, այնպես էլ օվկիանոսում տարբերում են ջրային զանգվածների տարբեր տիպեր, որոնց միջև ևս կան ֆրոնտներ-ճակատներ: 1 2

Ջրային զանգվածների դասակարգումը կատարվում է որոշակի սկզբունքներով: Հաշվի են առնում ջրի ջերմաստիճանը, աղիությունը, թթվածնի պարունակությունը, ֆիզիկական հատկանիշները, կենսաբանական ցուցանիշները և այլն:

Օվկիանոսի ջրի շերտը բաժանում են երկու հիմնական մասի. վերին՝ շարժուն շերտ (օվկիանոսային վերնոլորտ) և ներքին՝ թույլ շրջանառության շերտ (օվկիանոսային ներքնոլորտ): Ջրային զանգվածները հիմնականում շորսն են՝ մակերևութային, միջանկյալ (300—1200 մ), խորքային և մերձհատակային. սրանցից յուրաքանչյուրն ունի նաև տեղական (ռեգիոնալ) հատկանիշներ: Այս զանգվածները իրենց հերթին բաժանվում են հասարակածային, արևադարձային, մերձբևեռային և բևեռային տարատեսակների (արկտիկական և

անտարկտիկական ջրերը պատկանում են բևեռային տարատեսակին):

Օվկիանոսն իր ամբողջ ծավալով կյանքի զարգացման միջավայր է: Նրա կենսաբանական արդյունավետությունը ցամաքի համեմատությամբ ավելի մեծ է: Օրգանիզմներն աշտեղ սնվում են ջրի մեջ լուծված քիմիական տարրերով: Միայն ֆոսֆորիտներն ու նիտրատներն են, որ օվկիանոսում պակասորդային են: Օրգանիզմներին անհրաժեշտ կենսածին տարրերը բերվում են գետերի միջոցով (50—60 %), ափաքերման միջոցով (10—20 %), փոշու միջոցով (10 %): Նյութերի մընացած 20 %-ը ստեղծվում է հենց իրենց՝ օրգանիզմների միջոցով:

Բուսական օրգանիզմներն ապրում են մինչև 150 մ խորություններում, իսկ կենդանիները՝ ջրի ամբողջ շերտում: Կյանքը մեր մոլորակի վրա սկսել է զարգանալ օվկիանոսներում: Կենդանիների դասերն ու ենթադասերը քանակական առումով ծովում եռակի ավելի են, քան ցամաքում:

Օրգանիզմների կյանքի պայմանների տեսակետից օվկիանոսներում առանձնացնում են հետևյալ զոնաները.

1. Ներիտային— ներկայացնում է ցամաքային ծանծաղուտը: Լույսը և հանքային (միներալային) սնունդը առատ են: Ներիտային զոնան բաժանվում է երկու ուղղաձիգ մասերի: Վերին մասը կոչվում է լիթորալ (քարատիպ) կամ մակընթացային զոնա, որտեղ ցամաքը պարբերաբար ծածկվում է ջրով: Ստորին մասը մերձլիթորալն է, որը ջրից երբեք չի ազատվում:

2. Բաթիալ—անցողիկ զոնա է ցամաքային լանջի վրա, որտեղ օրգանիզմները հարմարված են անցողիկությանը:

3. Արխսալ—խոր ծովային զոնա. հավիտենական խավար է, որտեղ ջերմաստիճանը ցածր է, ճնշումը՝ մեծ, թթվածինը՝ քիչ: Օվկիանոսների տարբեր մասերում ձևավորվում են տվյալ պայմաններին հարմարված բույսերի ու կենդանիների որոշակի խմբավորումներ, որտեղ բոլոր օրգանիզմները մեկ ընդհանուր կապակցություն են ստեղծում: Այդպիսի համակցություններին անվանում են կենսացենոզներ:

Ինչպես նշվեց, օվկիանոսների արդյունավետությունը շատ մեծ է: Պլանկտոնի (ջրում կախված միճակում ապրող մանր

օրգանիզմներ) պաշարները կազմում են 36 միլիարդ տ, նեկտոնի (ազատ շարժվող օրգանիզմներ, հիմնականում՝ ձկներ) պաշարները՝ 18 միլիարդ տ, իսկ բենթոսինը (հատակաբնակ)՝ 8 միլիարդ տ: Այս պաշարների մի փոքր մասն է մարդու կողմից օգտագործվում. տարեկան որսում են 50 մլն տ ձուկ, 2 մլն տ կետանմաններ, 1 մլն տ փափկամորթներ ու խեցգետնանմաններ, 1 մլն տ ջրիմուռներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հասարակածային ու արևադարձային ջրերը տեսակներով հարուստ են, բայց արդյունավետություներ մեծ չէ (հատը քիչ է), իսկ բարեխառն և ավելի բարձր լայնությունների ջրերում տեսակները քիչ են, սակայն հատը շատ է, և արդյունավետություներ մեծ է: Ձկներով հատկապես հարուստ են ծանծաղուտները (Գոգեր Բանկը, Նյու-Ֆաունլենդի բանկը) ինչպես նաև տաք ու սառը ծովային հոսանքների շփման զոնաները:

Համաշխարհային օվկիանոսը մարդու սննդի ապագա շտեմարանն է: Այժմ արդեն պարզ է դառնում, որ ցամաքն ապագայում ի վիճակի չի լինելու մարդուն սննդամթերքներով բավարարել և նա արդեն հայացքն ուղղել է օվկիանոս: Սննդից բացի օվկիանոսը տալիս է նաև արժեքավոր ջրիմուռներ, որոնցից ստանում են բրոմ, յոդ և այլ քիմիական տարրեր:

Օվկիանոսների հատակին վերջերս հայտնաբերվել են մետաղների բազմաթիվ հանքավայրեր, հատկապես՝ մանգան, և այժմ միջոցներ են մշակվում դրանք շահագործելու համար: Վերջերս պարզվեց, որ նավթային գլխավոր հարստությունները գտնվում են ցամաքային ծանծաղուտի զոնայում:

Օվկիանոսը էներգիայի խոշոր աղբյուր է: Մակընթացային և ալիքային ուժերը էներգիայի անսպառ ռեսուրսներ են, և մարդն արդեն օգտագործում է դրանք: Օվկիանոսը տրանսպորտային ոլորտ է, որից մարդն օգտվում է հազարամյակներ շարունակ:

Օվկիանոսն աշխարհագրական թաղանթի բաղադրիչն է, նրա անբակտեի մասը: Երկրի վրա ունի մեծ տարածում և համամոլորակային կլիմայի ձևավորման գործում վճռական դեր է կատարում: Չլինել օվկիանոսը, կյանքը ցամաքի վրա անհնար կլիներ: Քանի դեռ բնակչությունը մոլորակի վրա քիչ էր, օվկիանոսը ինքնամաքման մեխանիզմով կարողանում

էր շեղուցանել մարդու բացասական ազդեցութիւնը: Այժմ մարդու ներգործութիւնը այնպիսի շահերի է հասել, որ ծովային կենդանիների մասսայական ոչնչացման, որոշ տեսակների իսպառ անհետացման փաստերը հաճախակի են դարձել:

Օվկիանոսը ներկայումս աղտոտված է: Բազմաթիվ հեղուկատար նավերի աղետների հետևանքով ջրի մակերևույթին առաջացել է նավթի բարակ թաղանթ, և օդի թթվածինը հնարավորութիւն չունի թափանցելու ջրի մեջ, որի հետևանքով կենդանական աշխարհի արդյունավետութիւնը զգալի շահով պակասում է: Օվկիանոս թափած ռադիոակտիվ նյութերը լուրջ սպառնալիք են մարդկանց առողջութեանը: Միակ ելքն է, որ միջազգային համագործակցութեան հուսալի համակարգի միջոցով հսկողութեան վերցվի օվկիանոսի անաղարտութիւնը այն հաշվով, որ այս հսկա ավազանը չդառնա դժբախտութեան ու աղետի օջախ:

### ՄՔՆՈՂՈՐՏԱՅԻՆ ԾԱԳՄԱՆ ԶՐԵՐ

Զրի համաշխարհային շրջապտույտի ընթացքում գոլորշիները ջրոլորտից դուրս գալով թափանցում են մթնոլորտ: Ետ ջրաբաններ ստորին ոլորտում գտնվող ջուրը ևս դասում են ջրոլորտի ջրին:

Օդում գտնվող ջրի ուսումնասիրութեամբ զբաղվում են մթնոլորտի ֆիզիկան և օդերևութաբանութիւնը: Մենք մթնոլորտի ջրերին անդրադառնում ենք այնքանով, որքանով որ դրանք կազմում են ջրի համաշխարհային շրջապտույտի օղակներից մեկը: Մթնոլորտում ջուրը կենտրոնացած է ստորին ոլորտում, որտեղ հարաբերականորեն ժամանակի ցանկացած պահին առկա են միջին հաշվով 14 հազար կմ<sup>3</sup> ջուր: Զուրը հանդես է գալիս պինդ, հեղուկ, գազային ագրեգատային վիճակներով և հեշտութեամբ մեկից անցնում է մյուսին՝ այդ պրոցեսում խլելով կամ անջատելով մեծ քանակի ջերմային էներգիա (թաքնված ջերմութիւն):

Մթնոլորտային ջրի աղբյուրը երկրի մակերևույթն է, գլխավորապես՝ օվկիանոսները: Ամեն տարի օվկիանոսներից և ցամաքի մակերևույթից գոլորշանում է 520—525 հազար կմ<sup>3</sup> ջուր, և բնականաբար նույնքան էլ թափվում է մթնոլորտային

տեղումների ձևով: Սակայն օդի վերին շերտերում, նույնիսկ  
երկրի մակերևույթին (մերձքլեեռային շրջաններում) ջերմաս-  
տիճանը  $0^{\circ}$ -ից կարող է իջնել, որի դեպքում ջուրը սառչում է:  
Ջրային գոլորշիները սկզբում անցնում են հեղուկ փուլի և  
ապա սառչում: Ջրի անբնականոն և զարմանալի հատկա-  
նիշների շարքում կա ևս մեկը, որի մասին հարկ է նշել: Սառ-  
ցից հեղուկ և հեղուկից գազացին վիճակների անցնելիս ջեր-  
մաստիճանները շատ որոշակի են, համապատասխանորեն՝  
 $0^{\circ}$  և  $100^{\circ}$ , ուստի սովորական ճնշման (1 մթն.) պայմաննե-  
րում հնարավոր չէ սառույցը պահել  $0^{\circ}$ -ից բարձր ջերմաստի-  
ճաններում: Հակառակ երևույթը անբնականոն է, և գոլորշին  
ու ջուրը կարելի է պահել գերսառած վիճակում: Սովորական  
պայմաններում օդում կարելի է հանդիպել ջրային գոլորշի-  
ների, սակայն ջրային գոլորշիներ հանդիպում են նույնիսկ  
 $0^{\circ}$ -ից ցածր ջերմաստիճաններում: Օրինակ, սառնամանիքա-  
յին եղանակին ծառերի ճյուղերի ու էլեկտրական հաղորդա-  
լարերի վրա ճենճառ (ջենջառ) է առաջանում, նշանակում է  
օդում գոլորշիներ կան, որ սառում, բյուրեղանում են: Ջուրը  
նույնպես գերսառած վիճակում կարող է մնալ հեղուկ ագրե-  
գատային վիճակում. նրա սառելու համար անհրաժեշտ են  
խտացման (կոնդենսացիոն) միջոցներ:

Մթնոլորտային ջրերը ակտիվ շարժում ունեն: Մի քանի  
օրում օվկիանոսներից գոլորշացած ջուրը, անցնելով հազա-  
րավոր կիլոմետր՝, հայտնվում է ցամաքի խորքում և թափ-  
վում մթնոլորտային տեղումների ձևով: Մթնոլորտում գտնվող  
ջրային գոլորշիները գազերի դիֆուզիայի օրենքի համաձայն  
ձգտում են հավասարաչափ տեղաբաշխման, սակայն բնու-  
թյան մեջ այդպիսի հավասարակշռություն երբեք չի հաստատ-  
վում: Հասարակածային գոտում, որտեղ միշտ օդի վերընթաց  
շարժում կա, գոլորշիները բարձրանում են մթնոլորտի վե-  
րին շերտերը և խտանալով թափվում առատ տեղումների ձե-  
փով: Այստեղ մթնոլորտային տեղումների տարեկան քանակը  
հասնում է մի քանի հալար միլիմետրի:

Մթնոլորտի ընդհանուր շրջանառության սխեմայում արե-  
վադարձային լայնությունների տակ տիրապետում են վար-  
ընթաց հոսանքները: Այստեղ, մթնոլորտում շատ քիչ գոլոր-  
շիներ կան, որոնք խտանալու պայմաններ չունեն: Այդ պատ-

ճառով էլ տեղումներն աննշան են, օդի հարաբերական խոնավութիւնը նվազագույն է՝ 20—40 %, իսկ երբեմն՝ նորէն-իակ 10 %-ից պակաս:

Բարեխառն լայնութիւններում գոլորշիների խտացման և տեղումների առաջացման համար նորից բարենպաստ պայմաններ են ստեղծվում, և դրանց քանակն ավելանում է: Մերձբևեռային շրջաններում ցածր շերմաստիճանի պատճառով օդում խոնավութիւնը քիչ է, գոլորշացման պրոցեսը թույլ է արտահայտված, տեղումները քիչ են:

Մթնոլորտային տեղումները, որ առաջանում են գոլորշիների խտացման ճանապարհով, այնուամենայնիվ պարունակում են որոշ քանակի լուծված նյութեր: Օդում եղած փոշին, գազերը, լուծվելով ջրի մեջ, հասնում են երկրի մակերևույթ: Հայկական ՍՍՀ-ում կատարած հետազոտութիւնները (Հ. Կ. Գաբրիելյան, Հ. Հ. Բոզոյան, 1964) ցույց են տալիս, որ մթնոլորտային տեղումների միջոցով մեր հանրապետության տարածքի յուրաքանչյուր 1 կմ<sup>2</sup>-ը տարեկան ստանում է 10—30 տոննա քիմիական տարրեր: Մովափնյա շրջաններում ալեքսիաման ժամանակ ծովի ջրի կաթիլների մի մասը օդի մեջ գոլորշանում է, իսկ լուծված աղերը փոշու ձևով օդային հոսանքների միջոցով տեղափոխվում են հալարավոր կիլոմետրեր և մթնոլորտային տեղումների ժամանակ նորից ջրի մեջ լուծվելով հասնում են գետնին: Մովալի ծագման աղերի՝ այս ճանապարհով տեղափոխութիւնը կհշվում է շաղացրում (իմպուլվերիզացիա): Մովերին հարփկից շրջաններում ներշաղացրումը բավական ուժգին է արտահայտված (մինչև 100—150 ա/կմ<sup>2</sup>):

### ՑԱՄԱՔԱՅԻՆ ՉՐԵՐ

Ջրոլորտի մի մասը անշատ-անշատ ջրային օբյեկտների ձևով գտնվում է ցամաքի վրա, կամ քարոլորտի խորքում: Արևմտային ընդհանուր առմամբ կոչվում են ցամաքային ջրեր. դրանցից են՝ գետերը, լճերը, ճահիճները, սառցադաշտերը, բազմամյա սառածութիւն ոլորտի, տորերկրյա և կենսոլորտի ջրերը:

Ցամաքային ջրերը գտնվում են փնընդհատ շարժման մեջ: Երկրագնդի ծանրահակ ուժի ազդեցութիւնը նրանք թեքու-

թյան ուղղությամբ շարժվում են և ի վերջո հայտնվում են օվկիանոսում: Ցամաքից դեպի օվկիանոս հոսող գետերի ջրի քանակը տարեկան կազմում է 38 հազ. կմ<sup>3</sup>, որը եթե հավասարաչափ բաշխենք ցամաքի մակերևույթին, կկազմի 294 մմ հաստությամբ մի շերտ: Ցամաքից օվկիանոս տեղափոխված ջրի քանակը՝ հոսքը, կարող է արտահայտվել ինչպես ծավալային միավորներով (մ<sup>3</sup>, կմ<sup>3</sup>), այնպես էլ հոսքի շերտի բարձրությամբ՝ մմ: Վերջինս մեծ մասամբ 1 մ-ից պակաս է, ուստի արտահայտում են մմ-ով: Վերը բերած թվերը ընդգրկում են գետեչի, ստորերկրյա ջրերի և սառցադաշտերի այն ջրերը, որոնք նոյից մտնում են գետերի մեջ: Եթե այս հոսքին գումարենք նսև անմիջապես օվկիանոսի ափամերձ շրջաններում բեռնաթափվող ստորերկրյա ջրերը, ապա ցամաքից դեպի օվկիանոս հոսող ջրի քանակը կավելանա 2000—3000 կմ<sup>3</sup>-ով, դրան պետք է ավելացնել նաև անմիջապես օվկիանոս իջնող այսբերգների ջրի պարունակությունը՝ 2500—3000 կմ<sup>3</sup>: Ընդհանուր հոսքը ցամաքից կկազմի շուրջ 44—45 հազ. կմ<sup>3</sup>: Ի դեպ նշենք, որ մարդու համար առայժմ գործնական նշանակություն ունեն միայն այս ջրերը: Այժմ համառոտակի ժանտթանանք ջրուղուի ցամաքային ջրերին:

Ա) Գետեր. փո է կոչվում երկրի մակերևույթի վրա որոշակի հունով մշապես հոսող ջրհոսքը: Եթե հոսքը ընդհատվող է, ապա դրանց անվանում են ժամանակավոր գետեր: Գետերը մարդկան, կյանքում եղել են ամենակարևոր ջրային օբյեկտները. նրան, ափերին են ծագել հնագույն քաղաքակրթությունները (Եփրատ, Տիգրիս, Նեղոս, Գանգես, ՑանՑզի, Խուան-Նե և այլ):

Յուրաքանչյուր գետ ունի ակունք՝ այն տեղը, որտեղից գետը սկիզբ է առնում: Նա կարող է լինել աղբյուր, լճակ, ճահիճ և այլն: Այնտեղ, որտեղ գետի ջուրը խառնվում է այլ ջրային ավազանի ջրին, կոչվում է գետաբերան, որտեղ էլ փոխվում է գետի էրոզիոնի հիմքը՝ բազիսը: Ակունքից մինչև գետաբերան գետը էրոզիոն աշխատանք է կատարում և միայն այստեղ է դադարեցնում բոզիոն գործունեությունը:

Գետը հոսում է հունով, որն ունի վերին, միջին և ստորին հոսանքի հատվածներ: Վերին հոսանքում գետը առվորաբար կատարում է քայքայիչ ախատանք, միջին հոսանքում տե-

դափտխում է կոշտ նյութերը, իսկ ատորին հոսանքում դրանք նստում են, կուտակվում:

Գետը ձախ և աջ ափերից ընդունում է վտակներ: Այ՛ն վտակները, որ թափվում են հիմնական գետի մեջ կոչվում են առաջին կարգի. առաջին կարգի մեջ թափվողները՝ երկրորդ կարգի և այլն: Կան գետեր (օրինակ՝ Ամազոնը), որ ունեն մինչև 12—17 կարգի վտակներ: Գետն իր բոլոր վտակների հետ կազմում է գետային ցանց: Վերջինիս երկարությունը կլի- նի բոլոր վտակների ու հիմնական գետի երկարությունների գումարը:

Ցամաքի այն տարածությունը, որի վրա ձևափրվում է գետային ցանցը և այդ տարածքից ջրերը հոսում են դեպի այդ գետը, կոչվում է ջրհավաք ավազան, որը շափվում է կմ<sup>2</sup> միավորներով: Երկու հարևան ջրհավաք ավազանների միջև սահմանը կոչվում է ջրբաժան գիծ: Վերջինս լեռնախին երկրներում պարզորոշ է արտահայտված, իսկ հարթավայրային ու ճահճային շրջաններում բավական անորոշ է: Եթե գետի աջակողմյան և ձախակողմյան ավազանները միմյանց հավասար են, ապա ավազանն ամբողջությամբ սիմետրիկ է: Սակայն կան գետեր, որոնց ավազանները երկու ափերում հավասար չեն զարգացած (օրինակ՝ Կուբանը): Գետավազանի անհամաչափությունը արտահայտում են անհամապիտվության գործակցի միջոցով, որը ցույց է տալիս, թե մեկ ափի ավազանը քանի անգամ է մեծ մյուս ափի ավազանից:

Յուրաքանչյուր գետ ունի հովիտ և հան: Գետահովիտը երկրի մակերևույթի այն երկարավուն, խոր իջվածքն է, որի հատակային մասով հոսում է գետը: Հիլիտները կարող են լինել տեկտոնական և էրոզիոն:

Հունը գետահովտի հատակային այն մասն է, որ ծածկված է ջրով: Հորդացման ու վարարման ժամանակ հունը լայնանում է, զբաղեցնում է հովտի հատակը՝ ընդարձակ տարածությունը, իսկ սակավաջուր ժամանակ՝ մի նեղ շերտ: Հովտի հատակի այն մասը, որ ջրով է ծածկված ոչ միշտ, այլ երբեմն՝ վարարումների ու հորդացման ժամանակ, կոչվում է ողողահուն (ողողատ, պոյմա):

Գետերը դարերի ու հազարամյանների ընթացքում սղոցում են իրենց հունը, խորանում երկր/կեղևի մեջ, առաջացնում

անդնդախոր կիրճեր, սրանց լանջերը ժամանակի ընթացքում աստիճանաբար մաշվում են և վերածվում լայն հովիտների:

Շատ գետահովիտներում պարզորոշ արտահայտված են գետային դարավանդները: Դրանք հին հունի և ողողատի մընացորդներն են. գետը խորացրել է հունը և հին հունը մնացել է ավելի բարձր նիշերի վրա: Դարավանդներն առաջանում են ինչպես երկրի մակերևույթի բարձրացման հետևանքով, այնպես էլ երբ էրոզիայի հիմքը՝ բազիսը իջնում է (ժովը նահանջում է): Կան գետահովիտներ, որոնց մեջ դարավանդների սանդուղք է առաջացել (Արաքս, Կուր, Դնեպր և այլն):

Յուրաքանչյուր գետ ժամանակի ընթացքում մշակում է իր հունը և ձգտում է երկայնակի կողապատկերը (տրամատը, պրոֆիլը) մոտեցնել հավասարակշռության տրամատին (նկ. 6):



Նկ. 6. Գետի երկայնակի և լայնակի կտրվածքները:

Գետի երկայնակի կտրվածքի կողապատկերը սկզբում անկանոն ու աստիճանաձև տեսք է ունենում: Ժամանակի ընթացքում սահանքները, ջրվեժները վերանում են, ստեղծվում է մի այնպիսի տրամատ, որը մոտենում է իդեալականին. սա հավասարակշռության տրամատն է: Տրամատի վերին հատվածում կորը ձգտում է ուղղահայացին, իսկ ստորին հոսանքում՝ հորիզոնականին: Հավասարակշռության տրամատ է կոչվում այն պատճառով, որ գետի ջրի զանգվածի և արագության միջև հաստատվում է մի այնպիսի համագործակցություն, որտեղ գետի կենդանի ուժը ամբողջ երկարությամբ

հաստատուն է մնում: Եթե գետի կենդանի ուժը նշանակենք  $F$ , ջրի զանգվածը՝  $m$ , իսկ արագությունը՝  $v$ , ապա

$$F = \frac{m \cdot v^2}{2},$$

Դա նշանակում է, որ գետի վերին հոսանքում ջրի փոքր զանգվածին համապատասխանում է մեծ արագություն, իսկ ատորին հոսանքում՝ մեծ զանգվածին՝ փոքր արագություն:

Գետի ակունքի և գետաբերանի բացարձակ բարձրությունների տարբերությունը կոչվում է անկում, որ արտահայտվում է մետրերով. օրինակ, Հրազդանի ակունքը Սևանն է, ունի 1898 մ բարձրություն, իսկ գետաբերանը՝ Արաքսը՝ 800 մ, նշանակում է անկումը 998 մ է: Գետն ունի նաև թեքություն, որը գետի որեէ հատվածի անկման հարաբերությունն է երկարությանը: Եթե գետի երկարությունը 1500 կմ է, իսկ անկումը՝ 600 մ, ապա թեքությունը՝  $i$ -ն կարտահայտվի հետևյալ կերպ՝

$$i = \frac{600}{1500 \cdot 1000} = 0,0004 \text{ կամ } 0,4 \text{ ‰}$$

Հարթավայրային գետերի թեքությունը փոքր է. որքան թեքությունը մեծ լինի, այնքան գետը հիդրոէներգետիկ պաշարներ շատ կունենա: Այստեղից էլ առաջանում է գետերի էներգիան: Գետի պոտենցիալ էներգիայի հզորությունը արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$N = 1000 QH \text{ կգ} \cdot \text{մ} / \text{վրկ}$$

որտեղ  $N$ -ը հզորությունն է,  $Q$ -ն՝ գետի ջրի ծախսը,  $H$ -ը անկումը, 1000-ը՝ 1 մ<sup>3</sup> ջուրն է արտահայտած լիտրերով: Սակայն գետերի հզորությունը սովորաբար արտահայտում են կիլովատերով 1 կՎտ = 102 կգ·մ/վրկ: ՍՍՀՄ բոլոր գետերի պոտենցիալ հզորությունը կազմում է 500 մլն կՎտ: էլեկտրակայանի 1 ժամում արտադրած էլեկտրաէներգիան կոչվում է կիլովատ ժամ (կՎտժ):

Գետի լայնակի կտրվածքն անվանում են կենդանի կտրորվածք, որովհետև այնտեղով անընդհատ ջուր է անցնում: Կենդանի կտրվածքի մակերեսը ( $F$ ) հավասար է գետի լայ-


նության (1) և միջին խորության (h<sub>բլ</sub>) արտադրյալին  
 $F = 1 \cdot h_{բլ}$

Գետի կենդանի կտրվածքի մակերեսը ուղիղ կապի մեջ է գետի մակարդակի հետ, մակարդակի բարձրացմանը զուգընթաց մեծանում է կենդանի կտրվածքի մակերեսը:

Գետի կենդանի կտրվածքում ջրի մակերևույթը հորիզոնական է, սակայն զանազան ազդակների ազդեցությամբ փոխվում է: Այսպես՝ հյուսիսային կիսագնդում հոսող գետերի մոտ ջուրը աջ ափին ավելի բարձր է, քան ձախ ափին, որն առաջանում է Ծրկրի պտտման հետևանքով: Այս երևույթն առաջին անգամ նկատվել է Ռուսաստանում ակադեմիկոս Կ. Մ. Բերի կողմից: Բերը նկատեց, որ գետերը հյուսիսային կիսագնդում ավելի շատ քանդում են իրենց աջ ափը, և այդ օրինակաբանությունը կոչվեց Բերի օրենք: Հետագայում այն մըշակվեց ֆրանսիացի Գ. Կորիոլիսի կողմից և անվանվեց կորիոլիսյան ուժ: Այս ուժի ազդեցության տակ հյուսիսային կիսագնդում շարժվող մարմինները անկախ շարժման ուղղությունից (բացառությամբ հասարակածով շարժվողների) շեղված են աջ, իսկ հարավային կիսագնդում՝ ձախ:

Գետերի կենդանի կտրվածքում մակարդակի տարբերություններ նկատվում են նաև գետի գալարների հատվածներում: Այստեղ ջրի կորագիծ շարժման ընթացքում առաջացած կենտրոնախույս ուժերի շնորհիվ գոգավոր ափերում ջրի մակարդակը բարձրանում է, և այդ ափերը քայքայվում են, իսկ ուռուցիկ ափերում ջրի հոսանքի ուժը թուլանում է, և նրա բերած նյութերը նստում են: Գետի գալարները (մեանդրերը) աստիճանաբար լայնանում են, և հաճախ է պատահում, որ երկու գալարների միջևորմը պատուվում է, և գետը կարճ ճանապարհով է անցնում: Գալարի մնացած հատվածը վերածվում է հնահուն լճակի: Այդպիսի հնահուններ (ստարիցա) շատ վաղ հարթավայրային գետերի ողողատներում (նկ. 7):

Ջրի շարժումը բնության մեջ երկու տարատեսակ ունի՝ լամինար և տուրբուլենտ: Լամինար շարժման դեպքում արագության վեկտորը մեծությամբ ու ուղղությամբ ամենուրեք հաստատուն է մնում: Տուրբուլենտի դեպքում շարժումը քառասային է՝ մրրկային. ջրի յուրաքանչյուր մոլեկուլ ունի իր ուղղությունը և արագությունը: Այդ տիպի է լեռնային գետերի



Նկ. 7. Հնահունների առաջացումը

ջրի շարժումը: Դանդաղահոս գետերի մերձհունային մասում շարժումը լամինար է, վերին մասերում՝ տուրբուլենտային: Փորձերով ապացուցված է, որ լամինարից տուրբուլենտ և տուրբուլենտից լամինար շարժումներին անցումը կատարվում է հոսանքի որոշակի արագության և խորության պայմաններում: Լամինար շարժման արագությունը (V) որոշվում է Դարսիի բանաձևով՝

$$V = Ki$$

իսկ տուրբուլենտ շարժման արագությունը՝ Շեզիի բանաձևով  $V = C \sqrt{Ri}$ , որտեղ K-ն՝ ֆիլտրացիայի գործակիցն է, i-ն՝ թեքությունը, C-ն՝ խորդուրորդության գործակիցը, R-ը՝ հիդրավիկ շառավիղը (կենդանի կտրվածքի մակերեսի հարա-

բերութիւնը այդ կտրվածքում թրջված պարագծի երկարությանը):

Տարբեր գետեր ունեն տարբեր արագութիւններ: Լեռնային գետերը մեծ արագությամբ են հոսում, հարթավայրայինները՝ դանդաղ: Որքան գետի թեքութիւնը մեծ լինի, այնքան արագութիւնը մեծ կլինի:

Գետը որոշակի քանակի ջուր է տանում: Յուրաքանչյուր վայրկյանում գետի կենդանի կտրվածքով անցած ջրի քանակը կոչվում է գետի ծախս, որը շափվում է մ<sup>3</sup>/վրկ միավորներով: Գետի ծախսը արտահայտում են գրաֆիկորեն. հորիզոնական առանցքի վրա նշում են ժամանակը, ուղղահայացի վրա՝ ծախսը (նկ. 8): Որքան գետի մակարդակը բարձրանա,



Նկ. 8. Գետի ծախսի գրաֆիկը:

այնքան ջրի ծախսը կմեծանա: Ջրի ծախսի և մակարդակի փոխհարաբերութիւնը ժամանակի ընթացքում կոչվում է ջրաչափն ուսում:

Գետերի ջրաբանության մեջ հոսող ջրի քանակական արտահայտութիւնը վճռական նշանակութիւն ունի. այդ պատճառով էլ, քանի դեռ պարզաբանված չէ գետի հոսքը, հնարավոր չէ որևէ շինարարական աշխատանք կատարել և ջուրն օգտագործել տնտեսական նպատակներով:

Գետի հոսք ասելով հասկանում ենք գետի կենդանի կտրվածքով ժամանակի որևէ հատվածում անցած ջրի քանա-

կը (ամիս, տարի և այլն): Ակնհերև է, որ հոսքի մասնավոր դեպքը գետի ծախսն է՝ մեկ վայրկյանում անցած ջրի քանակը: Գետի տարեկան հոսքը տաքցվում է ջրի ծախսի և տարվա վայրկյանների քանակի ( $31,6 \cdot 10^6$ ) արտադրյալից: Ստացված ջրի քանակը կտա հոսքի ծավալը: Բայց հոսքը կարելի է արտահայտել նաև հոսքի շերտի բարձրությամբ, այսինքն թե՛ ջրի որչա՛փ հաստություն շերտ կստացվի (մմ-ով արտահայտած), եթե հոսքի ծավալը հավասարաչափ բաշխենք գետավազանի մակերևույթին:

Ջրաբանության մեջ հոսքի արտահայտման մեկ այլ միավոր (բնութագրություն) էլ կա: Դա հոսքի մոդուլն է, որը ցույց է տալիս, թե գետավազանի յուրաքանչյուր միավոր մակերեսը (կմ<sup>2</sup>) 1 վայրկյանում քանի լիտր ջուր է տալիս գետին:

Մթնոլորտային տեղումների մի մասը գոլորշանում է կամ ներծծվում, իսկ մյուս մասը երկրի մակերևույթին հոսք է առաջացնում: Տեղումների այն մասը, որը հոսք է առաջացնում, կոչվում է հոսքի գործակից: Հյուսիսային երկրներում, որտեղ գոլորշացումը թույլ է, հոսքի գործակիցի մեծությունը հասնում է 0,8—0,9-ի (80—90%), իսկ հարավի տաք կամ անապատային երկրներում հոսքի գործակիցը փոքրանալով մոտենում է 0-ի:

Գետերը սնվում են անձրևաջրերով, ձյան հալոցքային, սառցադաշտային և ստորերկրյա ջրերով: Տարբեր երկրներում այդ բաղադրիչների հարաբերությունը տարբեր է: Հասարակածային երկրներում ձյուն ու սառցադաշտ չկա, այստեղ գետերը սնվում են անձրևաջրերով ու ստորերկրյա ջրերով, մերձբևեռային երկրների գետերում մեծ է ձնհալքի ու սառցադաշտերի ջրերի բաժինը:

Գետերի սնման մեջ մեծ է կլիմայի դերը, և ինչպես Ա. Ի. Վոյեյկովն է նշում գետը կլիմայի ածանցյալը կամ արգասիքն է: Վոյեյկովը տվեց գետերի կլիմայական դասակարգումը և առանձնացրեց հետևյալ տիպերը՝

1. Գետեր, որոնք իրենց ջուրը ստանում են դաշտավայրերից ու ոչ բարձր լեռների (մինչև 1000 մ) ձնհալքից (Հյուսիսային Սիբիրի, Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի գետերը):

2. Լեռնային շրջանների ձևհալթից ու սառցադաշտերից անվող գետեր (Ամու-Դարյա, Սիր-Դարյա):

3. Անձրևներից սնվող գետեր, որոնք հորդանում են ամառը (Ամազոն, Կոնգո, Ամուր):

4. Գետեր, որոնք սնվում են գարնան ձևհալթից և անձրևաջրերից և հորդանում են գարնանն ու ամռան սկզբին (Վոլգա, Դոն, Դնեպր և այլն):

5. Գետեր, որոնք սնվում են անձրևաջրերից և որոնց ջրի մակարդակը բարձր է ձմռանը, բայց տատանումները մեծ չեն (Արևմտյան Եվրոպայի գետերը):

6. Տարվա ցուրտ ժամանակաշրջանում անձրևներից սնվող գետեր (միջերկրածովյան տիպի):

7. Գետազրկութուն. կլիմայի շորության պատճառով գետեր չկան (Սահարա, Գոբի, Կարա-Կում):

8. Ժամանակավոր գետեր, երբ անձրևային ժամանակամիջոցը կարճատև է, գետերը ժամանակավոր են (Հյուսիսային Ղրիմ, Կուր-Արաքսյան դաշտավայր և այլն):

9. Գետազրկութուն սառցապատման պատճառով (Գրենլանդիա, Անտարկտիդա):

Այժմ գետերի դասակարգման ամենարեդունված սխեման Մ. Ի. Լվովիչինն է, որը ծագումնաբանական սկզբունքից է ելնում: Դասակարգման հիմքում ընկած է գետը սնող աղբյուրների մասնակցությունը հոսքի ձևավորման մեջ: Ցուրաքանչյուր աղբյուրի համար երեք աստիճան է ընդունում՝ ձյան, անձրևի և ստորերկրյա ջրերի համար այդ աստիճաններն են՝ մինչև 80 %, 50—80 % և 50 %-ից պակաս, իսկ սառցադաշտայինի համար՝ 50 %-ից ավել, 25—50 և 25 %-ից պակաս: Եթե գետի տարեկան հոսքում 80 %-ից ավելին թված առաջին երեք աղբյուրներից որևէ մեկին է հասնում, ապա գետը պատկանում է ամբողջությամբ ձևհալթային կամ անձրևային կամ ստորերկրյա սնման գետերի տիպին: Եթե նշված աղբյուրներից մեկը տալիս է հոսքի 50—80 %-ը, ապա գետը պատկանում է այսպես կոչված առավելապես ձևհալթային, առավելապես անձրևային և առավելապես ստորերկրյա սնման տիպին: Եթե սնման աղբյուրը տալիս է հոսքի մինչև 50 %-ը, ապա գետը պատկանում է խառը սնման տիպին:

Գետի աչք կամ այն տիպին պատկանելը սնման սառցա-

դաշտային բաղադրիչի մասնակցությամբ տեղի է ունենում այդ դեպքի համար վերը բերած աստիճանավորմամբ: Այսինքն, եթե գետի սնման մեջ 50 %-ից ավելին տալիս են սառցադաշտային հալոցքային ջրերը, կոչվում են սառցադաշտային սնման գետեր, 25—50 %-ի դեպքում՝ առավելապես սառցադաշտային, իսկ մինչև 25 %-ի դեպքում՝ խառը սնման գետեր:

Աշխարհում շատ քիչ են այն գետերը, որոնք սնվում են միայն մեկ աղբյուրից. գետերի մեծ մասը խառը սնում ունի: Օրինակ՝ Արարատյան դաշտում Մեծամոր գետը սկսվում է Մեծամոր (Այդր) լճից և ունի ստորերկրյա սնում: Այդպիսի գետեր հազվադեպ են պատահում: Հայկական ՍՍՀ գետերը սնվում են ձնհալքից, ստորերկրյա ջրերից ու անձրևներից: Հրաբխային ծածկոցների գոյության շնորհիվ ստորերկրյա ջրերն առատ են և սնման մեջ զգալի տեղ են գրավում:

Գետերի ջրի զգալի ավելացումը տարվա որոշ եղանակին կաշվում է հորդացում: Այն տեղի է ունենում սնման փոփոխման հետևանքով: Տարբեր երկրներում հորդացումը կատարվում է տարվա տարբեր եղանակներին: Օրինակ, հասարակածային երկրներում մթնոլորտային տեղումները հավասարաչափ են բաշխված, և ցայտուն արտահայտված հորդացումներ չեն նկատվում. ամռանը ջրի քանակը մի փոքր ավելանում է: Սավաննաների զոնայում ցայտուն արտահայտված է ամառային հորդացումը՝ զենիթային անձրևների ժամանակ, իսկ ձմռանը տեղումները խիստ նվազում են, և գետերը դառնում են սակավաջուր: Միջերկրական ծովի ավազանում մըթնոլորտային տեղումների առավելագույն քանակը թափվում է ձմռանը, ուստի գետերը հորդանում են այդ ժամանակ, իսկ ամռանը՝ նույնիսկ խապառ չորանում են: Բարեխառն լայնություններում ձմռանն առաջանում է կայուն ձնածածկույթ, որը հալվում է գարնանը. սրան գումարվում են նաև անձրևների ջրերը, և հորդացումը տեղի է ունենում գարնանն ու ամռան սկզբին: Մուսսոնային երկրներում (Հնդկաստան, Հնդկաչին, Հեռավոր Արևելք, ԱՄՆ-ի հարավ-արևելյան շրջաններ և այլն) գետերը հորդանում են ամռանը՝ մուսսոնային անձրևների ժամանակամիջոցում: Ամռանը հորդանում են նաև այն գետերը,

որոնք սնվում են բարձր լեռների սառցադաշտերից (Կուբան, Քերեք, Ամու-Դարյա և այլն):

Գետերում նկատվում են նաև վարարումներ, որոնք պատահական պատճառների հետևանք են (տեղատարափ անձրևները, լճալին պատվարների պատուվելը և այլն): Վարարումները հաճախ բուռն բնույթ ունեն և շատ վտանգավոր են: Վարարումների մի տեսակը սելավներն են, երբ ջրի զանգվածում զգալի տեղ են գրավում կոշտ նյութերը (40—60 % և ավելի): Սրանք աղետալի երևույթներ են և հսկայական ավերածություններ են կատարում: Սելավներ սովորաբար լինում են շոր կլիմայական պայմաններ ունեցող տեղերում, որտեղ տեղումները տեղատարափ բնույթ ունեն (Միջին Ասիական հանրապետությունները, Անդրկովկասը և այլն):

Գետի հոսքի բնութագրիչների փոփոխությունները տարվա ընթացքում կոչվում են գետի ռեժիմ (վարք): Այստեղ առանձնացվում են մի քանի փուլեր, դրանցից գլխավորները երկուսն են՝ հորդացման և սակավաջրության փուլերը: Հայկական ՍՍՀ-ում գետերի հորդացման հիմնական փուլը գարնանն է, երկրորդ ավելի թույլ արտահայտվածը՝ աշնանը: Սակավաջրությունը հիմնականում ամռանն է, երկրորդը՝ ձմռանը:

Տարբեր գետեր տարբեր ռեժիմ ունեն: Սովետական Միության գետերի ջրային ռեժիմով զբաղվել են շատ գիտնականներ: Հայտնի են հատկապես Բ. Գ. Զայկովի, Պ. Ս. Կուզինի կողմից առաջարկված սխեմաները:

Ինչպես արդեն նշել ենք, գետերը կատարում են էրոզիոն աշխատանք, անդադար սղոցում են հունը, իսկ ավազանում թափված մթնոլորտային տեղումները լվանում են լեռնալանջերը և կոշտ նյութերը հասցնում են գետին: Ստորերկրյա ջրերը շրջանառություն կատարելով ապարների շերտախմբերի մեջ լուծում են որոշ միներալներ և հարստանում լուծված իոններով: Գետերը ջրի հետ տանում են լուծված, կախված և գլորվող նյութեր, որոնք միասին կազմում են գետերի կոշտ հոսքը:

Գետի քիմիական ծախս ասելով հասկանում ենք նրա փենդանի կտրվածքով 1 վայրկյանում անցած լուծված նյութերի քանակը՝ արտահայտած կշռային միավորներով: Գետի քիմիական ծախսը որոշելու համար պետք է որոշել գետաջրի

միաներալացումը, այսինքն 1 լիտր ջրում պարունակվող իոնների գումարը և այն բազմապատկել ջրի ծախսի արժեքի հետ: Օրինակ. եթե ջրի հանքայնացումը 300 մգ/լ է, իսկ ջրի ծախսը 12 մ<sup>3</sup>/վրկ, ապա ակներև է, որ իոննական ծախսը  $Q_{\text{էր}} = 300 \cdot 1000 \cdot 12 = 3600000$  մգ = 3,6 կգ/վրկ: Նշենք, որ քիմիական ծախսը կարելի է արտահայտել նաև շոր նստվածքի ձևով: Իոննական ձևից շոր նստվածքին անցնելիս՝ բոլոր իոնները գումարվում են, իսկ  $\text{HCO}_3$  իոնը կիսով պակասում է:

Գետի կախված նյութերի ծախսը ստանալու համար նախ պետք է որոշել ջրի պղտորությունը՝ 1 լիտր ջրում պարունակվող կախված նյութերի քանակը մգ կամ գ արտահայտությամբ և այն բազմապատկել ջրի ծախսի արժեքի հետ:

Գործող նյութերի քանակը որոշվում է հատուկ որսիչ սարքերի օգնությամբ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ գետի հատակում գլորվող մասնիկների մեծությունը կախված է ջրի հոսանքի արագությունից, որն արտահայտվում է էրիի բանաձևով՝

$$W = A \cdot V^6$$

որտեղ  $W$ -ն մասնիկի զանգվածն է,  $V$ -ն՝ ջրի արագությունը, իսկ  $A$ -ն՝ գործակից է և ցույց է տալիս, որ եթե հոսանքի արագությունը կրկնակի մեծանա, ապա գլորվող զանգվածը կմեծանա 26-ով, այսինքն՝ կդառնա 64 գ: Ահա թե ինչու լեռնային հեղեղներն ու սելավները, ունենալով ընդամենը մի քանի մ/վրկ արագություն, այդպիսի ավերածություններ են կատարում:

Բացառիկ է գետերի դերը ժողովրդական տնտեսության մեջ: Սրանց վրա կառուցում են հիդրոէլեկտրակայաններ, ոռոգիչ ջրանցքներ, շրմուղներ, շլյուզներ: Գետերն օգտագործվում են որպես տրանսպորտային ուղիներ, ձկնորսական ավազան: Գետերի ջրի ռացիոնալ օգտագործման և հոսքի կարգավորման համար ստեղծում են ջրամբարներ, որպեսզի հորդառատ ժամանակամիջոցի ջրերը կուտակեն՝ սակավաջուր ժամանակաշրջանում օգտագործելու համար: 20-րդ դարում աշխարհի շատ երկրներում գետերի վերափոխման շատ մեծ աշխատանքներ են կատարվել: Ռուսական հարթության մի

շարք գետեր (Վուգան, Դոնը, Դնեպրը և այլն) լրիվ կարգավորված հոսք ունեն և ծառայում են մարդուն:

Անհրաժեշտ է նշել, որ բնակչության աճին ու տեխնիկայի առաջընթացին զուգընթաց մեծացել է գետաջրերի աղտոտվածությունը: Արդյունաբերական ձեռնարկություններից, խոշոր քաղաքների կոյուղիներից գետերի մեջ բաց են թողնվում կեղտաջրեր, որոնք երբեմն այնքան շատ են, որ գետաջրի հետագա օգտագործումը վտանգավոր է դառնում: ԳՑՀ-ում Ռուբ գետի ջուրը այժմ թունավոր է, մեզ մոտ Սովետական Հայաստանում Փամբակ, Դերեդ, Հրազդան, Ողջի գետերի ջրերը խիստ աղտոտված են: Միևնույն ժամանակ գետաջրերն աղտոտվում են նաև գյուղատնտեսության կողմից (հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների օգտագործումից):

Գետաջրերի անաղարտությունը պահպանելու նպատակով ստեղծվել են կեղտաջրերի մեխանիկական, քիմիական ու կենսաբանական մաքրման կայանքներ: Աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում այժմ գետաջրերի մաքրման հարցերին առաջնակարգ տեղ է տրվում, և ստեղծվում են մաքրման կայանքներ: Մեզ մոտ այդպիսի մեծ կայանք է տեղադրվել Հրազդան գետի վրա Քաղսի գյուղի մոտ:

Բ) Լճեր Ծամաքի ջրերի մեջ կարևոր ջրային օբյեկտներ են լճերը: Լճեր են կոչվում ցամաքում գտնվող ջրավազանները, որոնք կամ անհոսք են, կամ էլ կապը օվկիանոսի հետ միակողմանի է: Սրանց գումարային մակերեսը կազմում է 2,7 մլն կմ<sup>2</sup>, ջրի ծավալը՝ 230 հազ կմ<sup>3</sup>: Լճերը ցամաքում գրտնրվող դանդաղ ջրափոխանակման ավազաններ են, որոնց վերաբերում են նաև ջրամբարները: Ըստ ջրափոխանակման՝ լճերը լինում են հոսուն (Բայկալ, Սևան, Լադոգա, Ամերիկայի Մեծ լճերը) և անհոս լճեր (Վան, Կապուտան, Արալյան և այլն): Քանի որ լճերը դանդաղ ջրափոխանակման ավազաններ են, նրանց ջրի մեծ մասը մարդու համար անօգտագործելի է: Օգտագործվում են միայն շարժուն (դինամիկ) պաշարները: Հաստատուն (ստատիկ) պաշարները օգտագործելու դեպքում՝ ջրի մակարդակը կիջնի, ինչպես այդ տեղի ունեցավ Սևանում:

Ըստ ծագման լճերը լինում են տեկտոնական, հրաբխային խառնարանների, լավային արգելափակման, սառցադաշտային, մետեորիտային-երկնաքարային, ջրաէրոզիոն, ջրակու-

տակումային, փլվածքային, հողմային, պատվարային, օրգանածին: Ամենից մեծ լճերը պատկանում են տեկտոնական տիպին:

Յուրաքանչյուր լիճ ունի մահիճ-հուն, որտեղ կարելի է առանձնացնել ափամերձ (լիթորալ) և խոր (պրոֆունդալ) մասերը: Լճի ձևաչափական տարրերն են՝ մակերեսը, երկարութունը, լայնութունը, միջին և առավելագույն խորութունները, ծավալը և այլն:

Տեսեսական օգտագործման տեսակետից շատ կարևոր է ջրի ծավալի հաշվարկը: Դրա համար անհրաժեշտ է ունենալ լճի հատակի տեղագրական քարտեզը: Ընտրելով որոշ հատույթ՝ հաշվում են երկու հաջորդական իզոբաթների պարփակած մակերեսները և պրիզմաների կամ հատած կոնի ծավալի բանաձևով որոշում են երկու հաջորդական իզոբաթների միջև ընկած ջրի ծավալը: Պրիզմաների մեթոդով ստացվում է հետևյալը՝

$$W = \frac{h(F_1 + F_2)}{2} + \frac{h(F_2 + F_3)}{2} + \dots + \frac{h(F_{n-1} + F_n)}{2}$$

հատած կոնի բանաձևով՝

$$W = \frac{h}{3} (F_1 + F_2 + \sqrt{F_1 F_2})$$

որտեղ  $h$ -ը հատույթն է,  $F_1$ ,  $F_2$ ,  $F_3$  և այլն իրար հաջորդող իզոբաթների պարփակած մակերեսները:

Լճի ծավալի և մակարդակի միջև ֆունկցիոնալ կապ կարգան մակարդակը բարձրանա, ծավալը կմեծանա:

Լճերն ունեն սնման և ջրի ծախսի բաղադրիչներ, որոնց միջոցով կազմվում է ջրի հաշվեկշռի հավասարումը՝

$$x + y_q + y_u + k = z + y_l + y_s + q \pm \Delta w$$

որտեղ  $X$ -ը տեղումներն են լճի վրա,  $Y_q$ -ն՝ գետերի հոսքը դեպի լիճ,  $Y_u$ -ը՝ ստորերկրյա ջրերի մոստքը դեպի լիճ,  $K$ -ն՝ խտացած գոլորշիների քանակը (կոնդենսացումը) անմիջապես լճի վրա,  $Z$ -ը՝ գոլորշացումը լճից,  $Y_l$ -ն՝ գետերի հոսքը լճից,  $Y_s$ -ն՝ ֆիլտրումը լճից,  $q$ -ն՝ մարդկանց կողմից օգտա-


գործած ջրի քանակը,  $\Delta W$ -ն՝ դիտարկվող ժամանակամիջոցում լճի ջրի պակասումը կամ ավելացումը:

Միշտ չէ, որ լճի ջրի հաշվեկշռի բանաձևն այդ տեսքն ունի: Կան լճեր, որոնցից գետեր դուրս չեն գալիս, ջուրը ծախսվում է միայն գոլորշացման վրա: Օրինակ՝ անհոսք լճերի համար բանաձևը հետևյալ տեսքը կընդունի՝

$$x + y_1 + y_2 = z$$

Լճերի ջրի հաշվեկշռը կապվում է լճավազանի բնակլիմայական պայմանների հետ և ունի սեզոնային բնույթ: Ջրառատ սեզոնում մուտքը դրական է, տեղումներով աղքատ սեզոնում՝ բացասական, որի հետևանքով էլ լճի մակարդակի տատանումներ են տեղի ունենում:

Լճերի մակարդակը, կապված սնման ու ծախսի հետ, անընդհատ փոփոխվում է: Դա արտահայտում են գրաֆիկորեն՝ հորիզոնական առանցքի վրա նշում են ժամանակը, ուղղահայացի վրա՝ մակարդակը. գրաֆիկի կորը ցույց կտա մակարդակի տատանումների ընթացքը (նկ. 9): Վերլուծելով լճի



9. Լճի մակարդակի տատանումների գրաֆիկը:

մակարդակի տատանումների գրաֆիկը, կարելի է գաղափար կազմել լճավազանի ֆիզիկա-աշխարհագրական պայմանների մասին:

Լճերի ջուրը, ըստ քիմիական կազմի, շատ բազմազան է. կան բարձր լեռնային լճեր, որոնց ջրի աղիությունը շափվում է մի քանի տասնյակ մգ/լ, կան լճեր էլ, որտեղ 1 լ ջրում լուծ-

ված է մինչև 400 գ աղ, և ավելցուկը նստում է ինքնախառն աղի ձևով (Բասկունչակ, Կարա-Քողազգյու):

Ըստ աղիության՝ լճերի ջուրը տարբերակվում է 3 խմբի՝ քաղցրահամ՝ մինչև 3 ‰ աղի պարունակությամբ, աղիացած՝ մինչև 24,7 ‰ և աղի՝ ավելի քան 24,7 ‰: Ըստ աղային կազմի՝ լճերը լինում են՝ սոդային կամ կարբոնատային, սուլֆատային և քլորիդային: Առաջինները բնորոշ են Նյուսիսային կամ բարձր լեռնային երկրներին, սուլֆատային լճերը հատուկ են բարեխառն լայնությունների հարավային մասի երկրներին (տափաստանային, կիսաանապատային զոնաներ), իսկ քլորիդային լճերը մեծ մասամբ գտնվում են անապատային շրջաններում:

Ջրավազաններում աղերի անջատման մի շատ կարևոր օրինաչափություն կա, սկզբում նստում են վատ լուծվող աղերը՝ կարբոնատները ( $\text{CaCO}_3$ ,  $\text{Na}_2\text{CO}_3$  և այլն), այնուհետև՝ սուլֆատները ( $\text{Na}_2\text{SO}_4$ ) և ապա՝ ամենալավ լուծվող քլորիդները ( $\text{NaCl}$ ,  $\text{KCl}$ ): Եթե որևէ լիճ անցել է աղիության տարբեր փուլեր, ապա նրա նստվածքների հիմքում կլինեն կարբոնատներ, նրանից վեր՝ սուլֆատներ, իսկ վերին շերտում՝ կերակրի աղ:

Լճերի աղիությունը ջրի մուտքի-ելքի արգասիքն է: Այն լճերը, որոնք հոսուն են, շատ աղի լինել չեն կարող (Սևանը, Բայկալը, Հյուսիսային Ամերիկայի մեծ լճերը): Մեծ աղիություն ունեն այն լճերը, որոնք անհոս են և ջրի ելքը միայն գոլորշացումն է (Վանա, Բալխաշ, Մեծ Աղի, Մեռյալ ծով և այլն): Բարձր աշխարհագրական լայնություններում ձևավորված լրճերում աղիությունը մեծ լինել չի կարող, որովհետև գոլորշացումը ավելի քիչ է, քան տեղումների քանակը: Մեծ աղիություն ունեն այն լճերը, որոնց ավազանում խոնավացման գործակիցը 1-ից փոքր է: Այս օրինաչափությունը կարող է խախտվել այն դեպքում, երբ լիճը սնվի աղերի մեծ կուտակում ունեցող ջրերով (աղահանքերի ջրերով):

Լճերը տաքանում են Արեգակի միջոցով. տաքացումը կամ սառչելը տեղի է ունենում կոնվեկցիայի շնորհիվ: Հայտնի է, որ ամենախիտ ու ծանր ջուրը 4°-ի տակ է: Գարնանը կամ աշնանը, երբ ջրի և օդի ջերմաստիճանային պայմանները արագ փոխվում են 4°-ի, խիտ ջրերը իջնում են, իսկ ավելի թե-

թև ջրերը բարձրանում վեր, մինչև որ ավազանում հաստատվում է համաչեբմություն (հոմոթեբմիա)։ Գրանից հետո ջրերի շարժումը գրեթե դադարում է, ամռանը հաստատվում է ուղիղ ջրաշերտավորում, այսինքն՝ վարից վեր ջերմաստիճանը բարձրանում է, իսկ Արեգակի ջերմությունը թափանցում է խորքը ջերմահաղորդականության միջոցով։ Ձմռանը հաստատվում է հակառակ ջրաշերտավորում՝ հատակում  $4^{\circ}$ -ի ջուր է, դեպի վեր ջերմաստիճանն իջնում է մինչև  $0^{\circ}$ , և առաջանում է մակերևութային սառույց։ Գարնանը սառույցն հալվում է, լիճն սկսում է տաքանալ և տաքացած ջրերը ավելի ծանր լինելով, իջնում են ցած, խորքային թեթև ջրերը բարձրանում են, կոնվեկցիան շարունակվում է այնքան, մինչև որ ամբողջ ավազանի ջուրը հասնի  $4^{\circ}$ -ի և հաստատվի համաչեբմություն, հետագա տաքացումը արդեն կատարվում է ջերմահաղորդականության միջոցով և այսպես շարունակ։

Լճի ջրի կտրվածքում ջերմաստիճանային կորը երեք մասի է բաժանվում մակերևութին՝ մինչև 4—6 մ էպիլիմնիոնի (վերնաջուր) շերտն է, որտեղ ջերմաստիճանը ամռանը բարձր է, նրանից ներքև մետալիմնիոնի (միջնաջրի) շերտն է. սա հաստ չէ, կազմում է 1—3 մ, որտեղ ջերմաստիճանի թռիչք է կատարվում։ Ավելի խորը՝ մինչև հատակ, ջրի ջերմաստիճանը դանդաղ է իջնում. այս շերտին անվանում են հիպոլիմնիոն (խորաջուր)։

Ըստ ջերմային հատկանիշների՝ տարբերում են լճերի երեք տիպ.

1. Սառ լճեր. սրանք այն լճերն են, որոնք տաքածվում են մերձրևեռային երկրներում և տարվա մեջ, մեծամասամբ, ունեն ջերմաստիճանային հակադարձ ջրաշերտավորում։

2. Բարեխառն երկրների լճեր, որոնք ամռանը ունեն ուղիղ, իսկ ձմռանը՝ հակադարձ ջրաշերտավորում։

3. Տաք լճեր. սրանցում տարվա մեծ մասում նկատվում է ուղիղ ջրաշերտավորում։

Ձմեռային ամփսներին բարեխառն ու մերձրևեռային երկրներում նկատվում են սառցային երևույթներ։ Լճային սառցի ամենատարածված տեսակը մակերևութային սառույցն է։ Լինում է նաև խորքային և հատակային սառույց։ Վերջինս առաջանում է գերսառեցած լճերում, որտեղ եռանդուն ջրա-

չրջանառութիւն կա, որի հետեանքով մակերեսային ջրերը շին սառչում, հատակամերձ մասերում ջրի շարժումը թուլանում է, և հատակի առարկաներն ու ապարները սառցակալվում են:

Պետք է նշել, որ լճի ջուրը գտնվում է մշտական շարժման մեջ: Գոյութիւն ունի թե հորիզոնական և թե ուղղաձիգ ջրաշրջանառութիւն: Մեծ լճերում նկատելի են հոսանքները: Լճերում նկատվում է ալիքավորում, ափամերձ շրջաններում տեղի է ունենում ալիքախում ալյուպես, ինչպես ծովերում, որին անվանում են ափաքերում (արբազիա): Վերջինիս գործունեութեամբ լճափերին ձևավորվում են ափաքեր պլատֆորմներ՝ լողափեր: Երբ լճի մակարդակն իջնում է, և նոր ափաքեր պլատֆորմ է ձևավորվում, նախկինը մնում է ավելի վեր և ներկայացնում է լճային դարավանդ:

Լճերի վրա հաճախ առաջանում են կանգնած ալիքներ՝ սեյշեր: Սրանք սովորաբար առաջանում են մթնոլորտային ճնշման տարբերութիւններից: Երբ մեկ փուլում ճնշումը քարձր է, ջրի մակարդակը իջնում է, մյուս փուն՝ բարձրանում: Սեյշանում նկատվում են մինչև 20—25 սմ բարձրութեան սեյշեր:

Լճային ավազանները կենսական միջավայր են, և այստեղ կենդանի օրգանիզմներն ավելի շատ են, քան նույն ֆիզիկաաշխարհագրական պայմաններում ձևավորված գետերում: Լճի կենսական պայմանները տարբեր խորութիւններում տարբեր են: Այսպես, լիթորալ զոնայում լույսն ու սնունդը շատ է, ապրում են բույսեր, որոնցով սնվում են կենդանիները: Հատակային խորը մասերում՝ պրոֆունդալ զոնայում լույսը քիչ է, բույսեր չկան, թթվածինը նույնպես պակաս է. այս պայմաններում կենդանական աշխարհը համեմատաբար աղքատ է: Լճի ջրի մնացած զանգվածում՝ պելագիալ զոնայի վերին մասերում (էպիլիմնիոնի շերտում) ապրում են բուսական օրգանիզմներ (ջրիմուռներ), որոնք ֆոտոսինթեզ են կատարում: Խորը մասերում կենդանապլանկտոնն է (զոոպլանկտոնը), որն օգտագործում է բուսական պլանկտոնը: Լճերի նեկտոնը շատ բազմազան է, արտահայտված է ձկների տարբեր տեսակներով, որոնք ունեն արդյունագործական նշանակութիւն:

Ամեն տարի լճում ստեղծվում է որոշակի քանակի կենսական զանգված, որին անվանում են կենսաբանական արդ-

յունակալեւորութիւն: Եթե նույն քանակութեամբ էլ կենսազանգ-  
ւած քայքայվում է, ապա կենսաբանական շրջանառութիւնը  
համասարակշռվում է: Կան լճեր, որտեղ կենսազանգւած ա-  
վելի շատ է առաջանում, քան քայքայվում է, ուստի կենսա-  
զանգւածի ծավալը մեծանում է: Օրինակ, տայգայի զոնայի  
լճերում բուսական զանգւածները մեծանում են և վերածվում  
տորֆի:

Լճերը, ըստ կենսաբանական պայմանների, լինում են՝

1. Օլիգոտրոֆ. պարունակում են քիչ քանակի կենսածին  
տարրեր, աղքատ են պլանկտոնով, ջուրը թափանցիկ է, թըթ-  
վածնի քանակը շատ է: Սրանց խմբին են պատկանում բարձր  
լեռնային և մերձքլեռային լճերը (Կարելիայի, Շվեդիայի,  
Հյուսիսային Կանադայի լճերը, Սեւեւը, Տեւեպկոյեն և այլն):

2. Դիստրոֆ լճերը աղքատ են սննդանյութերով, օրգանա-  
կան նյութերի մեջ գերակշռում են հումիկային թթուները, ջրի  
գույնը գորշ է, ֆիտոպլանկտոնը և բարձրակարգ ջրային բու-  
սականութիւնը թույլ են զարգացած, լճի հատակին կուտակ-  
վում է տորֆային տիղմ, որը սնունդ չի կարող լինել կենդա-  
նիններին, թթվածինը քիչ է: Այդպիսի լճեր կան Մերձբալթյան  
երկրներում, տայգայի զոնայում:

3. էվտրոֆ լճերը հարուստ են կենսածին սննդանյութերով,  
հատկապես՝ ազոտի և ֆոսֆորի միացութիւններով, խորը  
շեն, բուսական և կենդանական աշխարհը փարթամ է, ջրի թա-  
փանցիկութիւնը փոքր է, մերձհատակային մասում թթվածնի  
պակասորդ կա, ջրի գույնը գորշ է, գարնանը լիճը ծաղկում է:  
էվտրոֆ լճերը տարածված են ՍՍՀՄ Եվրոպական մասի կենտ-  
րոնում, Սեւեւային կենտրոնում և այլն:

Լճերը իրենց զարգացման ընթացքում անցնում են երի-  
տառարդութեան, հասունութեան, ծերութեան փուլերը, և վեր-  
ջում շորանում են կամ բուսածածկվում: Օրինակ՝ անտառա-  
յին զոնայի շատ լճեր դարձել են ճահիճներ, ապա՝ մարգա-  
գետիններ:

Լճի հատակում անընդհատ նստվածքներ են կուտակվում:  
Ալիքների պատճառով լիթորալ զոնայում նստում են խոշորա-  
հատիկ նստվածքները, իսկ պրոֆունդալում՝ մանրահատիկ  
նյութերը: Լճի հատակի մեծ մասը ծածկված է լճային տիղ-  
մով, որն օրգանական ու անօրգանական նյութերի խառնուրդ

է: Տիրումի վերին հորիզոնը կիսահեղուկ զանգված է, որն քստ խորության խտանում է: Անօրգանական բաղադրիչը տիրումի մեջ որքան շատ լինի, այնքան մոխրայնությունը մեծ կլինի: Սապրոպելային տիրումը ունի մեծ մասամբ մոխրի փոքր պարունակութուն, բնորոշ է էվտրոֆ լճերին, կազմված է հիմնականում մեռած պլանկտոնից: Տորֆային տիրումը հատուկ են դիստրոֆ լճերին, որոնց նյութը դրսից է բերված:

Բացի տիրումից լճերում նստում են նաև աղեր, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Կան լճեր, որտեղ հատակի անօդակյաց պայմաններում տեղի է ունենում օրգանական նյութերի քայքայում, առաջանում են ծծմբաջրածին, մեթան, էթան և այլն, որոնց շնորհիվ էլ այսպիսի տիրումը բուծիչ հատկանիշներ ունի և օգտագործվում է բժշկության մեջ:

Գ) Ճանհններ. ճահիճ է կոչվում երկրի մակերևույթի այն հատվածը, որն ավելցուկ խոնավություն ունի և ծածկված է տորֆի շերտով: Տորֆի շերտի գոյությունը անհրաժեշտ պայման է, այլապես հասարակածային երկրներում ևս կան ավելցուկ խոնավություն ունեցող շատ տեղամասեր, որտեղ ջուրը կանգնած է, սակայն սրանք իսկական ճահիճներ չեն, այլ խոնավության ավելցուկով տարածքներ:

Ճահիճները առաջանում են երկու ճանապարհով՝ ցամաքի ճահճացմամբ կամ ջրավազանների ճահճացմամբ: Ցամաքի ճահճացում տեղի է ունենում այն դեպքում, երբ փոխվում են տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները, ջրաջերմային ռեժիմը: Օրինակ, անտառային հրդեհից հետո ջրի տրանսպիրացիան (բույսերի կողմից ջրի գոլորշացումը) վերանում է, բարձրանում է գրունտային (գետնահողային) ջրերի մակարդակը, և ճահիճ է առաջանում: Ջրավազանների ճահճացումը տեղի է ունենում այն դեպքում, երբ լիճն աստիճանաբար ծանծաղում է (վերածվում է ճահճի):

Ճահիճները բաժանվում են երկու մեծ խմբի՝ բարձրադիր և ցածրադիր: Առաջինները կամ օլիգոտրոֆ ճահիճները զբտնըվում են ռելիեֆի դրական (ուռուցիկ) ձևերի վրա: Այստեղ աճող բույսերի արմատները գետնահողային ջրերից կտրված են, մինչև լային սնունդը կարող է մուտք գործել միայն մըթնոլորտից, տեղումների հետ միասին: Հանքային սննդի սովի-

պայտաններում բույսերի աճը դանդաղ է կատարվում, աճում են հիմնականում քիչ պահանջկոտ սֆազեումային ջրիմուռները: Երկրորդ խումբը՝ ցածրադիր կամ էվտրոֆ ճահիճներն են: Սրանք տեղադրված են ուղիների բացասական ու ցածրադիր ձևերի մեջ, հանքային սնունդն առատ է, աճում են սննդի նկատմամբ պահանջկոտ բույսեր՝ հիպոմնեային կանաչ մամուռներ, կեչի, բոշխեր, եղեգն և այլն:

Ճահիճները դանդաղ ջրաշրջառութային ջրային օբյեկտներ են: Նշենք, որ դրանք փոքր ջրատվութուն ունեն, ուստի նրանցից սկիզբ առնող գետերը ջրառատ լինել չեն կարող: Զբոսային զանգվածի մեծ մասը առաջացնում է մեռյալ զոնա, միայն մակերևութից մինչև 20—30 սմ խորութուններում է, որ ջուրը շրջապատույտ է կատարում:

Ճահիճները մեծ տարածում ունեն բարեխառն լայնութունների հյուսիսային ու մերձբևեռային շրջաններում՝ տունդրայում, անտառային զոնայի հատկապես հյուսիսային մասերում (Արևմտա-Սիբիրական դաշտավայր, Ռուսական հարթության հյուսիսային մաս, Մերձբալթյան երկրներ և այլն): Ճահիճների ու ալվեյցուկային խոնավութուն ունեցող տարածքների ընդհանուր մակերեսը Երկրագնդի վրա կազմում է 350 մլն հեկտար, այդ թվում ՄՍՀՄ-ում 210 մլն հեկտար:

Ճահճային լանդշաֆտները մարդուն քիչ պիտանի են, ուստի պայթար է տարվում ճահիճները շրջանելու, դրանք մարգագետիններ կամ վարելահողեր դարձնելու համար: Ճահճի շորացումը կատարվում է ցամաքուրդման—դրենաժային ցանցի միջոցով՝ փորում են խորը ջրանցքներ, որոնցով գետնահողային ջրերը հոսելով հեռանում են, և գետնահողը շորանում է: Ճահիճների շորացման մեծ աշխատանքներ են կատարվում Մերձբալթյան հանրապետություններում, Պոլսիում, Կոլխիդայում:

Դ) Զուրկ կենսոլորտում Բուր օրգանիզմները ջուր են պարունակում և սնունդը ստանում են ջրի մեջ լուծված վիճակում: Կան ջրիմուռներ, որոնց մարմնի 99 % -ը ջրից է կազմված: Մարդու օրգանիզմում ջուրը կազմում է 65 %: Զուրկ օրգանիզմների սննդառության պրոցեսում ոչ միայն տրանսպորտի դեր է կատարում, այլև որպես բաղադրամաս մասնակցում է օրգանական նյութի ստեղծմանը՝ ֆոտոսինթեզի պրոցեսին:

Ջրի մեծ քանակ գոլորշանում է ինչպես բույսերի տերեւների միջոցով, այնպես էլ կենդանիների մարմնից: Այսպիսով, ջրի համաշխարհային շրջապտույտի մեջ օրգանիզմները մի մեծ օղակ են առաջացնում: Հաշվումները ցույց են տալիս, որ օրգանական աշխարհի գոյության ընթացքում օվկիանոսի ջուրը առնվազն տասն անգամ անցել է բույսերի ու կենդանիների մարմնով:

Ե) Սառցադաշտեր. շրտըրտի շատ դանդաղ ջրաշրջանառության օղակը սառցադաշտերն են: Սառցադաշտը ցամաքում սառցային զանգվածների բնական կուտակումն է, առաջացած պինդ տեղումներից, որոնք օժտված են ակտիվ շարժմամբ: Այստեղ ջուրը երկար ժամանակ կուտակվում է, կանգ է առնում (հարաբերական իմաստով) և ապա հալվելով՝ նորից մասնակցում է շրջապտույտին: Երկրի սառցադաշտերում ամբարված է 24 մլն կմ<sup>3</sup> քաղցրահամ ջուր:

Սառցադաշտն առաջանում է այնտեղ, որտեղ մթնոլորտային կոշտ տեղումների հաշվեկշիռը դրական է. արսինքն՝ ձյուն ավելի շատ է գալիս, քան կարող է հալվել, ուստի ավելցուկը կուտակվում է և տեղծում սառցադաշտեր:

Բարձր լեռնային երկրներում, հեռվից դիտելիս, պարզ նրկատելի է մի սահման, որից բարձր մասերում ձյուն է կուտակված: Այդ սահմանը ձմռանն իջնում է, իսկ ամառը՝ բարձրանում և հասնում է ամենաբարձր դիրքին, որին ձյան կլիմայական սահման կամ ձնագիծ են անվանում:

Ձնագիծը տարբեր երկրներում տարբեր բարձրության վրա է գտնվում: Ամենաբարձր դիրք ընդունում է արևադարձային լայնությունների տակ, պասսատների գոտում, որտեղ մթնոլորտային տեղումները քիչ են: Օրինակ՝ Տիրեթում, Պամիրի արևելյան մասերի լեռներում ձնագիծը բարձրանում է մինչև 5500—6000 մ: Բուն հասարակածում ձյան սահմանը շատ բարձր չէ (4000—4500 մ), որովհետև լեռներում ձյուն շատ է գալիս, բացի այդ ամպամածությունը մեծ է, իսկ արևացիան (հալքը) այնքան ուժգին չէ, ինչպես արևադարձներում: Արեւվադարձներից դեպի բևեռներ ձյան սահմանը նորից իջնում է և հասնում երկրի մակերևույթին: Արարատի վրա ձյան սահմանը 4200 մ-ի վրա է:

Թարմ ձյունը շատ օդ է պարունակում: Նրա խտությունը

ընդամենը 0,1 գ/սմ<sup>3</sup> է: Սակայն երկար ժամանակ նստելով, ծանրահակ ուժի ազդեցությամբ, աստիճանաբար խտանում է, ջերմաստիճանային տատանումների շեղումով ստանում է հատիկավոր կառուցվածք և դառնում է հատիկավայրեն (ֆիոն): Վերջինիս խտությունը 0,3 գ/սմ<sup>3</sup> է: Խտացման պրոցեսը շարունակվում է, հատիկավայրեն դառնում է հատիկասառույց-ֆիոնային սառույց՝ մինչև 0,6 գ/սմ<sup>3</sup> խտությամբ: Հատիկասառույցի մեջ օդը քիչ է, մանր հատիկները քայքայվում են, հարցքի ջուրը կլանվում է մեծ հատիկների կողմից: Այդ ժամանակ տեղի է ունենում ռեթիկուլյար (սառցազոդման) պրոցեսը, երբ հատիկները իրար են կպչում և սառում: Հատիկասառույցի հետագա խտացումից առաջանում է սառցադաշտային (գլեչերային) սառույց, որի խտությունը 0,9 է: Սառույցն ունի պլաստիկ հատկություն, կարողանում է հոսել, ընդունել հունի ձևը:

Լեռնային երկրներում սառցադաշտեր առաջանում են գոգավորությունների մեջ: Զրբաժանային բարձր մասերից ձյունը քամիների միջոցով տեղափոխվում է և կուտակվում գոգավորությունների մեջ, երբ քամու ուժը թուլանում է: Գոգավորությունների մեջ կուտակվում են նաև ձյան հյուսերից առաջացած ձնազանգվածները:

Բարձր լեռնային երկրներում ձնահյուսերը շատ տարածված երևույթներից են: Մեծ թեքություն ունեցող լանջերից ու ժերպերից ձյան վիթխարի զանգվածները պոկվում են ու գահավիժում ցած՝ ավերելով ճանապարհին հանդիպած արգելքները, մարդու ձեռքով շինված կառույցները: Ձյան հյուսերը հաճախ են լինում գարնանը (նույնիսկ ամենաչնչին պատճառից, կրակոցից, բղավոցից և այլն): Աչպերում, Կովկասում, Միջին Ասիայի լեռներում, Կորդիլիերներում ձնահյուսերը հսկայական դեր են կատարում՝ սառցադաշտերին սնելու տեսակետից: Ձյան մեկ հյուսի ժամանակ միլիոնավոր խորանարդ մետրերով ձնազանգված է իջնում լեռներն ի վար:

Լեռնային սառցադաշտերը առաջանում են ձյան սահմանից վեր ընկած գոգավորություններում՝ սառցադաշտային կրկեսներում: Այստեղից դուրս են գալիս լեզվակներ ու իջնում ձյան գծից շատ ցած, որտեղ և հալվում են: Կան սառցադաշտեր, որոնք ընդունում են սառցադաշտ-վտակների: Գրանց եր-

կարուժյուհը հասնում է մի քանի տասնյակ կիլոմետրի (Ֆեդ-  
չենկոյի, Ինիլչեկի, Խիսպարի և այլ)։

Սառցադաշտերն ունեն սեման և բռնաթափման (հալման)  
մարզեր։ Մեման մարզը ձյան գծից վեր է, իսկ բռնաթափմանը՝ ներքև։

Ինչպես նշվեց, սառցադաշտն ունի ակտիվ շարժում։ Նրա  
սեման մարզից սառցային զանգվածները հոսում են դեպի լեզ-  
վակը։ Շարժման ընթացքում շփվելով տրոգային հովտի հա-  
տակին՝ սառույցն ու նրա մեջ սառած քարաբեկորները հըս-  
կայական քայքայիչ աշխատանք են կատարում, որին անվա-  
նում են սառցաքերում (էկզարացիա)։ Սառցաքերման շնոր-  
հիվ առաջանում են կրկեսներ, կառեր, կառոիդներ, սառցա-  
դաշտային տաշտակաձև տրոգներ (տաշտահովիտ)։

Սառցադաշտերը տեղափոխում են քայքայված ապարները  
և կուտակում լեզվակի եզրին։ Սառցադաշտային նստվածքնե-  
րին անվանում են մորեններ-սառցաբերուկներ, իսկ սառցա-  
դաշտային ջրերից անջատված նստվածքներին՝ ջրասառցա-  
դաշտային (ֆլուվիոգլացիալ նստվածքներ)։ Մեր հանրապե-  
տությունում սառցաբերուկների խոշոր կուտակումներ կան  
Արագածի վրա, իսկ ջրասառցադաշտային նստվածքներ՝ Արա-  
գածի, Գեղամա, Վարդենիսի լեռների ստորոտներին։ Սառցա-  
բեր հսկա կուտակումներ կան նաև Ռուսական հարթության  
հյուսիսային մասերում (Վալդայան, Կլին-Դիմիտրովյան և այլ  
բարձրավանդակներ ու թմբաշարքեր)։

Սառցադաշտի ծախսը կոչվում է արլացիա, որը կատար-  
վում է հիմնականում հալվելու միջոցով, որոշ դեպքերում սա-  
ռույցները հեռանում են նաև խոշոր բեկորներով՝ պոկվելով  
սառցադաշտից և սահելով դեպի օվկիանոս առաջացնում են  
սառցասարեր (այսբերգներ)։ Այդպիսի սառցասարեր պոկ-  
վում են Անտարկտիդայի ու Գրենլանդիայի ծածկութային  
սառցադաշտերից։

Սառցադաշտերը հարվում են Արեգակի ջերմութայան շնոր-  
հիվ, գերազանցապես ամռան ամիսներին, որը նպաստավոր  
հանգամանք է շորային երկրների համար։ Միջին Ասիայում,  
օրինակ, ջրի մեծ պահանջարկ կա ամառային ամիսներին և  
այդ ժամանակ էլ տեղի է ունենում սառցադաշտերի հալքը։  
Վերջին ժամանակներս փորձեր են կատարվում կարգավորելու

արւացիան. եթէ անհրաժեշտ է սառցի հոանդուն հալք, ապա ինքնաթիռից տե փոշի են ցանում սառցադաշտի վրա, իսկ հալքը թուլացնելու համար օգտագործում են ապիտակ փոշի, որից ալտեդոն մեծանում է:

Երբ սառցադաշտում սառցային զանգվածի մուտքը գերազանցում է հալքին (դրահան հաշվեկշիռ), ապա լեզվափի շարժանում սառցադաշտն աճում է, արշավում, իսկ եթէ սառցի մուտքի-ելքի հաշվեկշիռը բացասական է, սառցադաշտը կըրճատվում է և նահանջում: Արշավի և նահանջի պատճառ կարող է դառնալ մթնոլորտային կոշտ տեղումների քանակի և օդի ջերմաստիճանի փոփոխությունը:

Երկրի զարգացման պատմության ընթացքում եղել են սառցապատման մի քանի դարաշրջաններ, որոնք ընդմիջվել են միջսառցապատման դարաշրջաններով: Սառցադաշտերի արշավները եղել են Երկրի զարգացման բոլոր դարաշրջաններում: Դրանց ապացույցները հնագույն սառցաբերուկներն են (տիլիտները): Կայնոզոյում վերին պլիոցենից սկսած հաշվում են շորս սառցապատում՝ գլունց, մինդել, ռիս, վյուրմ: Վերջին սառցապատումը՝ վյուրմյանը (Վալդայանը) վերացել է ընդամենը 8—10 հազար տարի առաջ: Նշված սառցապատումների մեջ ամենազորեղը եղել է ռիսյանը (Ռուսական հարթության վրա այն կոչվում է դնեպրյան), որը ծածկել է ամբողջ Հյուսիսային Եվրոպան, լեզվակներով իջել է Դնեպրի և Դոնի հովիտները: Սովետական Հայաստանում պահպանվել են վերջին երկու՝ ռիսյան ու վյուրմյան սառցապատումների հետքերը:

Սառցապատման պատճառները կապված են ինչպես արտաքին՝ տիեզերական (Արեգակի ճառագայթման լարվածության փոփոխման), այնպես էլ Երկրի վրա տեղի ունեցող տեկտոնական շարժումների, ծովի ու ցամաքի փոխհարաբերության փոփոխման, մթնոլորտում CO<sub>2</sub> գազի քանակի փոփոխման (ջերմոցային էֆեկտի փոփոխման) և այլ երևույթների հետ:

Սառցադաշտերի դասակարգման վերաբերյալ կան բազմաթիվ սխեմաներ. այս ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Վ. Գ. Հոբսը, Ս. Վ. Կալեսնիկը: Ստորև բերվում է

սառցադաշտերի դասակարգման համառոտ սխեման (կրճատումներով), ըստ Լ. Պ. Շուրաևի (1977):

Բոլոր սառցադաշտերը բաժանվում են 4 դասի՝ դրանք էլ՝ 11 տիպի

### I դաս. սկզբնական սառցադաշտեր

1. Կառային սառցադաշտեր. զբաղեցնում են կառային գոգավորությունները և ձյան գծից ցած շեն իջնում:
2. Հրաբխային կոներրի սառցադաշտեր, ֆիռնային դաշտերը գտնվում են խառնարաններում, լեզվակներն իջնում են ցած:
3. Լեռնագագաթների սառցադաշտեր. զբաղեցնում են տաք գոտու ամենաբարձր լեռնագագաթների գոգավորությունները. անջատ-անջատ, միմյանցից մեկուսացած են:
4. Կախված սառցադաշտեր. գտնվում են զառիթափ լանջերին, սնման և հոսքի մարզերը գոգավորությունների մեջ շեն, այլ ուղղակի լանջին, կարծես կախված են, նրանց ծայրամասերից սառցային զանգվածները պոկվում են և թափվում հովիտների մեջ:

### II դաս. հովտային սառցադաշտեր

5. Ալպյան տիպի. սնման մարզից դուրս է գալիս մեկ լեզվակ:
6. Բարդ հովտային (կովկասյան) տիպ. կազմված է գլխավոր սառցադաշտից և նրան միացող վտակներից:
7. Միջինասիական տիպ. տնվում է ոչ միայն ֆիռնային դաշտից, այլ նաև ձյան հյուսերից (թուրքեստանյան տիպ):
8. Հիմալայան (դենդրիտային) տիպ. սառցադաշտերը միանալով ծառանման պատկեր են ստեղծում:

### III դաս. սառցադաշտերի միակցություն կամ սառցադաշտային կոմպլեքսներ

9. Սառցադաշտային սարավանդ (սկանդինավյան տիպ). սառցադաշտը ծածկում է ոչ միայն գոգավորությունները, այլև ջրբաժանները, նրանից դուրս

են գալիս մի քանի լեզվակներ:

10. Նախալեռնային սառցադաշտեր (մալլասպինյան տիպ). լեռներից իջնող հովտային սառցադաշտերը միանում են, նախալեռներում ստեղծում են մեկ ընդհանուր խոշոր սառցադաշտ (սկանդինավյան տիպին հակառակ):

11. Շպիցբերգենյան տիպ. ծածկում է լեռնային երկիրն ամբողջությամբ, տեղ-տեղ սառցադաշտի տակից դուրս են դալիս սրածայր լեռնագագաթներ, սառցադաշտի մակերևույթին արտահայտված է սառցատակ ուղիների ընդհանուր պատկերը:

#### IV դաս. կղզային և մայրցամաքային սառցադաշտեր

Այս դասի մեջ տիպեր չեն առանձնացվում. բնորոշվում է նրանով, որ սառցադաշտերը ծածկում են մայրցամաքը կամ կղզին ամբողջությամբ (Անտարկտիդա, Գրենլանդիա): Սառցատակ ուղիներ սառցադաշտի մակերևույթին արտահայտված չէ, սառցադաշտը մեծ հզորություն ունի, վահանաձև ծածկում է կղզին կամ մայրցամաքը:

Աշխարհի լեռնային խոշոր սառցադաշտերից են Եվրոպայում՝ Ալեշի, Գորներ, Տիշեր, Յուստեդալ, Վատնա, Սվալբարդ, Կովկասում՝ Դիխաու, Բեզինգի, Տվեբեր, Ցաններ: Միջին Ասիայում՝ Տեղչենկոյի, Ինիլչեկի, Զերավշանի, Ալթայում՝ Մյունսու, Պրեւալսկու, Կարակորումում՝ Բալտորո, Բիաֆո, Խիսպար, Հիմալայներում՝ Ռոնգրեկ: Հյուսիսային Ամերիկայում սառցադաշտային մեծ կենտրոն է Ալյասկայի լեռնաշղթան: Մթնոլորտային տեղումներն այստեղ շատ են, և առաջացել են հզոր սառցադաշտեր՝ Մալլասպին, Մեծ սառցադաշտ, Վան-Նորն, Հարավային Ամերիկայում՝ Խունկալ, Պոլերաս, Նոր Զելանդիայում՝ Քասմանի, Մուրչիսոնի, Գոդլի սառցադաշտերը: Աֆրիկայում սառցադաշտեր կան Քիլիմանջարո, Քենիա, Ռուվինզորի գագաթների վրա, սակայն մեծ չեն: Սառցադաշտերի ընդարձակ զանգվածներ կան Կանադական արշիպելագում, Շպիցբերգենի, Տրանց-Իոսիֆի, Ցան-Մայնեն, Նոր Երկիր, Հյուսիսային Երկիր կղզիներում:

Ժամանակակից սառցապատ տարածությունը Երկրագնդի վրա կազմում է 14,5 մլն կմ<sup>2</sup> (ցամաքի տարածքի 10 %-ը)

սառցի ժապալը 24 մլն կմ<sup>3</sup>, որի 98,6 % -ը գտնվում է բևեռա-  
յին երկրներում: Եթե բոլոր սառցադաշտերը հալվեն, ապա  
օվկիանոսի մակարդակը կբարձրանա 60 մ-ով: Սառցադաշ-  
տերում կուտակված քաղցրահամ ջրի վիթխարի պաշարները  
մարդու համար մեծ պաշար-ռեզերվ են, որոնց օգտագործու-  
մը ապագայում գործնական մեծ նշանակություն է ունենա-  
լու:

2) Բազմամյա սառածություն (հավերժական սառցույթ):  
Ջրոլորտի դանդաղ ջրաշրջանառության օղակներից մեկը բազ-  
մամյա սառածությունն է: Այն երկրներում, որտեղ օդի տարե-  
կան միջին ջերմաստիճանը —3—5°-ից ցածր է, որոշ խորու-  
թյան տակ գետնահողը-գրունտը շուրջ տարի սառած է: Բազ-  
մամյա սառածության տարածման շրջաններում (ցամաքի տա-  
րածքի 20 % -ը) ամառային ամիսներին երկրի մակերևույթի  
ամենավերին մասը հալչում է: Այդ շերտը կոչվում է գոր-  
ծունյա շերտ: Ամեն տարի հալչող շերտի հաստությունը կազ-  
մում է 30 սմ-ից մինչև 3 մ, որը կախված է ամռան տևողու-  
թյունից և ջերմության մուտքից: Տունդրայի զոնայում ամա-  
ռը կարճատև է, գործունյա շերտի հաստությունը հազիվ հաս-  
նում է 30—50 սմ-ի: Գեպի հարավ գործունյա շերտը հաստա-  
նում է, Սիբիրի հարավային շրջաններում ու Հյուսիսային Մոն-  
ղոլիայում հասնում է 2,5—3 մ-ի: Այս շերտում փշատերև ծա-  
ռատեսակները կարողանում են հաջողությամբ զարգանալ:

Սառցույթի հզորությունը (հաստությունը) երկրի տարբեր  
մասերում տարբեր է՝ սկսած մի քանի տասնյակ սանտիմետ-  
րից մինչև 700—800 մ: Միջին Սիբիրի Հյուսիսային մասե-  
րում նկատվում է ամենահզոր սառցույթը: Բազմամյա (հա-  
վերժական) սառցույթի մեջ հանդիպում են հալված հատ-  
վածներ. դրանք կոչվում են հալույթներ (տալիկներ): Հալույ-  
թը կարող է միջանցիկ լինել, ընդգրկել ամբողջ սառցույթը:  
Այդ դեպքում ենթասառցույթային ջրերը հալույթի միջով դուրս  
են գալիս երկրի մակերևույթ:

Բազմամյա սառած գետնահողերի տարածման մարզերում  
առաջանում են վտանգավոր երևույթներ՝ մակասառույց (նա-  
լեղ), ջերմակարստի երևույթներ: Մակասառույցն առաջանում  
է հետևյալ կերպ. սառած գետնահողի տակից ջրերը ելք գտ-  
նելով դուրս են գալիս երկրի մակերևույթ և նույն տեղում էլ

սառչում, առաջացնելով սառցի հսկայական կուտակումներ, որոնք կարող են խափանել երկաթուղիների, խճուղիների շահագործումը: Հաճախ է պատահում, որ ջուրը դուրս է գալիս շենքի մեջ և սառչում: Ջերմակարստը այն երևույթն է, երբ սառած գետնահողը տեղ-տեղ հարվելով ձևախախտման պատճառ է դառնում, շենքեր են քանդվում, առաջանում են մասնր գոգավորություններ, որոնք լցվում են ջրով: Բազմամյա սառածության շրջաններում ռելիեֆի տարածված ձևերից են ջրալակուիտները (յակուտերեն՝ բուլգունյախ), ցեխասահքի կամ ցեխահոսքի (սուիֆլյուկցիա) դարավանդները (որոնց մասին արդեն նշվել է):

Բազմամյա սառածության շրջաններում շինարարական աշխատանքները կապված են մեծ բարդությունների հետ: ՄՄՀՄ-ում մշակվում են նոր մեթոդներ, որոնց օգնությամբ հաջողությամբ լուծվում են սառցույթի հետ կապված դժվարություններ:

է) Ստորերկրյա ջրեր ընդհանուր անվան տակ հասկանում ենք այն բոլոր ջրերը, որոնք գտնվում են երկրի մակերևույթի տակ: Երկրակեղևի վերին շերտերում ջուրը գտնվում է երեք տարբեր՝ պինդ, հեղուկ, գազային վիճակներում, կամ մտնում է նյութերի բյուրեղային կազմի մեջ և կամ բավական ամուր կերպով միացած է զանազան նյութերի հետ ու նրանցից անջատվել կարող է միայն 100°-ից բարձր ջերմաստիճաններում:

Ստորերկրյա ջրերը մթնոլորտային տեղումների արգասիք են. առաջանում են երկու ճանապարհով՝ ներծծանցման (ինֆիլտրացիայի) և խտացման (կոնդենսացիայի) միջոցով: Ներծծանցման դեպքում գետնին թափված մթնոլորտային տեղումները գետնահողերի միջով քամվում են կամ ճեղքերի միջոցով թափանցում են երկրի խորքը (ինֆիլուացիոն ջրեր): Խտացումը (կոնդենսացիան) այն երևույթն է, երբ ապարների ծակոտիներում ու ճեղքերում գտնվող օդի միջի գոլորշիները շփվելով սառն ապարներին՝ առաջացնում են կաթիլներ այնպես, ինչպես որ ամուսնը սառը ջրով լցված անոթի պատերը դրսից ծածկվում են ջրի մանր կաթիլներով: Ներծծանցման և խտացման ջրերը միասին կոչվում են վադոզային (մթնոլորտային ծագման ջրեր):

Կան ջրեր էլ, որ ունեն մագմային ծագում, անջատվում են

մաքմայից: Սրանց անվանում են կուսական (յուզինիլ) ջրեր, որովհետև առաջին անգամ են դուրս գալիս երկրի մակերևույթ: Կուսական ջրերը լայն տարածում չունեն, արտահոսում են հրաբխային շրջաններում, այն էլ ոչ մեծ քանակությամբ:

Երկրի կեղևում ջրի քանակը հիմնականում պայմանավորված է ապարների ծակոտկենություններով ու ճեղքայնությամբ. սրանցով է պայմանավորված նաև ջրունակությունը: Վերջինս մի քանի տարատեսակ ունի՝

1. Լրիվ ջրունակություն: Սա ջրի այն քանակն է, որ գերունտը կարող է ընդունել ծակոտիների լրիվ հագեցման դեպքում:

2. Կապիլյար կամ մազական ջրունակություն: Ջրի այն քանակը, որ ապարի մազական անցքերը կարող են ընդունել:

3. Մոլեկուլային ջրունակություն: Ջրի այն քանակը, որ ապարը կարող է պահել մոլեկուլային ձգողական ուժի միջոցով:

Ապարների ծակոտիներում սվյալ պահին գոյություն ունեցող ջրի քանակը կոչվում է ապարների բնական խոնավություն, որը սովորաբար արտահայտվում է ապարի զանգվածի նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ՝

$$a = \frac{P_1 - P_2}{P_2} 100 \%$$

որտեղ  $P_1$  և  $P_2$ -ը ապարի կշիռն է մինչև շորացումը և շորացումից հետո:

Լրիվ ջրունակ ապարները ընդունակ են ազատ հոսքի միջոցով որոշ քանակությամբ ջուր տալ: Այս երևույթը կոչվում է ջրատվություն: Մեծ ջրատվություն ունեն խոշորահատիկ և ճեղքավորված գետնահողերը, իսկ մանրահատիկ ծակոտկեն գետնահողերը, շնայած մեծ ծակոտկենությանը, ունեն փոքր ջրատվություն, որովհետև նրանց մոտ մեծ է մոլեկուլային ջրունակությունը:

Երկրակեղևը կազմող ապարներն ու նրանց շերտախմբերը որոշակի ջրային հատկանիշներ ունեն և բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ջրաթափանց (խիճ, ավազ, ճեղքված լավաներ և այլն) և ջրամերժ (հոժ գրանիտ, մարմար, քվարցիտ): Այս երկուսի միջև կան կիսաթափանցներ, որոնք դրժվարությամբ են անցկացնում ջուրը (ոչ շատ մանրահատիկ

կապակազաններ, լյոս, տորֆ, մերգելներ և այլն): Կան ապարներ, որոնց բեկորները ջրամերժ են, սակայն ամբողջ շերտախումբը ջրաթափանց է խիստ ճեղքոտվածությամբ շնորհիվ: Օրինակ՝ Հայկական ՍՍՀ հրաբխային ծածկույթները կազմված են ճեղքված լավաներից, և մթնոլորտային տեղումները նրանց միջով արագությամբ քամվում են ու լեռների ստորոտներում դուրս են հորդում հզոր աղբյուրների ձևով:

Ապարներում կան ստորերկրյա ջրերի մի քանի տեսակներ.

1. Քիմիապես կապված կամ կոնստիտուցիոն ջուրը մշտնում է նյութի մոլեկուլի կազմի մեջ, ջրի հեռացման դեպքում միներալը քայքայվում է (օրինակ,  $\text{Fe}_2\text{O}_3 + 3\text{H}_2\text{O} \rightarrow 2\text{Fe}(\text{OH})_3$ )

2. Բյուրեղացած ջուրը մտնում է մի շարք միներալների կազմի մեջ, տաքացնելիս ջուրը հեռանում է, իսկ միներալը հատկանիշները փոխում է, բայց չի քայքայվում, օրինակ, գիպսը ( $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O} \rightarrow \text{CaSO}_4 + 2\text{H}_2\text{O}$ ):

3. Գոլորշակեայ ջուրը գտնվում է ապարի ծակոտիներում և շարժվում է գազի առաձգական հատկանիշներին համապատասխան:

4. Հիգրոսկոպիկ ջուրը ապարի մակերևույթին նստած է մոլեկուլների մեկ շերտի հաստությամբ և պահվում է կլանման (սորբցիոն) ուժերի (մոլեկուլային ձգողական ուժի) միջոցով, ապարից հեռանում է միայն գոլորշացման միջոցով:

5. Քաղանքային ջուրը շրջապատում է ապարի մակերևույթը թաղանթի ձևով, թույլ է միացած ապարին, բույսերը դժվարությամբ են յուրացնում:

6. Մագնական (կապիլյար) ջուրը գտնվում է մագնական անցքերում, երկրի ձգողական ուժերին չի ենթարկվում, այլ հաղթահարելով դրանք՝ շարժվում է մագնական (մենիսկային) ուժի միջոցով: Շատ կարևոր նշանակություն ունի բույսերի համար:

7. Մանրահակային (գրավիտացիոն) ջուրը՝ ապարների ճեղքերում ազատ հոսող ջուրը, որ ենթարկվում է երկրի ձգողական ուժի օրենքներին:

8. Զուրը պինդ վիճակում (սառույց):


9. Ներքջային ջուր՝ հողի մեջ գտնվող բույսերի դեռևս չքայքայված քիչներում պարունակվող ջուրը:

Մրկրի մակերևույթի տակ առաջին ջրատար շերտի ջրերը

անվանում են գետնահողային (գրունտային) ջրեր, նրանցից ավելի խորը փոսվող ջրատար հորիզոններում փոսվող ջրերը՝ միջջրտային: Մինչև գետնահողային ջրին հասնելը՝ հողի ու գետնահողի մեջ կան հողաշերտի ջրեր: Երկրագնդի վրա այդ ջրերի քանակը հասնում է 75 հազ. կմ<sup>3</sup>, որը մոտ երկու անգամ շատ է տարվա ընթացքում գետերի միջոցով դեպի օվկիանոս տարվող ջրից: Հողաշերտի ջրերի քիմիական հատկանիշները ամբողջությամբ կախված են հողագրունտների հատկանիշներից: Օրինակ՝ տայգայի զոնայում ջրերը քաղցրահամ են, բայց օրգանական թթուների առատության պատճառով թթու են: Անապատային երկրներում տարածված աղուտներում հողաշերտի ջրերը հաճախ ունեն հագեցման սահմանին մոտ աղիություն և այլն:

Հողաշերտի ջրերը քացառիկ դեր ունեն հողագործության մեջ: Մազական անցքերն ի վեր գնացող ջուրը հանքային սընունդ է մատակարարում բույսերին, մասնակցում է լուսասինթեզին (ֆոտոսինթեզին):

Գետնահողային ջրերի ազատ մակերևույթին անվանում են գետնահողի ջրի հայելի: Վերջինս հազվադեպ է լինում հորիզոնական. սովորաբար որոշ թեքություն ունի, և ջուրը հոսում է այդ թեքությամբ: Այն միջջրտային ջրերը, որոնք պարփակված են ջրամերժ շերտերի միջև և ունեն հիդրոստատիկ ճնշում, կոչվում են արտեզյան: Որպեսզի արտեզյան ջրերը երկրի մակերևույթ շատրվանեն, անհրաժեշտ է, որ այդ ջրերի ազատ մակերևույթը (պիեզոմետրիկ մակերևույթ) ավելի բարձր լինի, քան երկրի մակերևույթն է (նկ. 10): Ավելի քան 1000



Նկ. 10. Արտեզյան ջրերի առաջացման սխեման:

արտեղյան հորատանցք է փորված Արարատյան դաշտում, որտեղ ջրերը լայնորեն օգտագործվում են ժողովրդական տնտեսության մեջ:

Ստորերկրյա ջրերի շարժումը մեծ մասամբ լամինար բնույթ ունի, և ծակոտիների մեջ ջրի շարժման արագությունը որոշվում է Գարսիի բանաձևով՝

$$V=KI$$

Այսինքն արագությունն ուղիղ համեմատական է ծծանցման (Ֆիլտրացիայի) գործակցի (K) և թեքության (i) արտադրյալին: Ծծանցման գործակիցը ապարի ծակոտիներում ջրի անցման տարածությունն է օրվա ընթացքում՝ մետրերով հաշված (մ/օր): Թվապես այն հավասար է ծծանցման արագությանը:  $V=K$ , եթե i-ին հավասար է 1-ի, այսինքն՝ ջուրը քամվում է ուղղահայաց ուղղությամբ:


Ստորերկրյա ջրերի ելքերը երկրի մակերևույթին կոչվում են աղբյուրներ, առաջանում են այնտեղ, որտեղ ջրատար հորիզոնները հատվում են երկրի մակերևույթով: Սովորաբար աղբյուրների ելքերը լինում են լեռնալանջերում ու գետահովիտներում: Աղբյուրները լինում են վերընթաց և վարընթաց: Առաջին դեպքում ջրատար հորիզոնից ջուրը ճնշմամբ է վեր բարձրանում, իսկ վարընթաց աղբյուրում՝ ազատ հոսելով: Հաճախ աղբյուրների ջրերը դուրս են գալիս մեծ խորություններից և ունեն բարձր ջերմաստիճան, հատկապես հրաբխային շրջաններում, և բխում են տաք աղբյուրների ու գեղդերների ձևով:

Գեյզերները, ի տարբերություն սովորական տաք աղբյուրների, գործում են որոշակի պարբերությամբ. մեկ անգամ շատրվանելուց հետո դադարում են և որոշ ժամանակ է անհրաժեշտ, որ երկրի խորքում հավաքվող ջուրը տաքանա, հասնի կրիտիկական ջերմաստիճանին, եռա և գոլորշիները մեծ ճնշմամբ դուրս մղեն գեյզերի անցքում կուտակված ջուրը: Գեյզերները նուրբ գոյացություններ են և լայն տարածում չունեն: ՍՍՀՄ-ում գեյզերների տարածման միակ օջախը Կամչատկայում է՝ Գեյզերնայա գետի հովիտը:

Ստորերկրյա ջրերի վարքը (ոսծիմը) կախված է կլիմայից, քանի որ դրանք սնվում են տեղումներից: Տարվա ընթացքում ստորերկրյա ջրերի մակարդակը տատանվում է, որն

արտահայտում են գրաֆիկորեն՝ հորիզոնական առանցքի վրա նշում են ժամանակը, ուղղաձիգի վրա՝ մակարդակը: Գրաֆիկը ցույց կտա մակարդակի տատանման ընթացքը ժամանակի մեջ (նկ. 11):

ԿՏ



Նկ. 11. Ստորերկրյա ջրերի մակարդակի տատանումների գրաֆիկ:

Սովետական Հայաստանում գետնահողի ջրերի ամենաբարձր մակարդակը գարնանն է, ձմռանը ժամանակ, իսկ ամենացածր մակարդակը՝ ամռանը և ձմռանը, երբ սնումը դադարում է, կամ մթնոլորտային տեղումները լինում են ձյան ձևով:

Գետահողի տներում գետի և գետնահողի ջրերի միջև որոշակի կապ է հաստատվում: Երբ տեղումները պակասում են, և գետի մակարդակն իջնում է, գետնահողի ջրերը հոսում են դեպի գետը: Տեղումներն ավելանալու դեպքում գետի մակարդակը բարձրանում է, գետնաջրերը թափանցում են ջրատար հորիզոն և լրացնում գետնահողի ջրերի պաշարները:

Ստորերկրյա ջրերի միներալացումն ու քիմիական կազմը մեծապես կախված են ապարների հատկանիշներից: Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծածկույթների տակից դուրս եկող աղբյուրների ջրերը շատ թույլ միներալացում ունեն 50—100—200 մգ/լ և աշխարհի լավագույն ջրերի շարքն են դասվում: Փոքր միներալացման պատճառն այն է, որ հրաբխային երիտասարդ լավաները ջրի մեջ վատ են լուծվում, և մթնոլորտային ծագման ջրերը լուծված բաղադրիչներով շատ շքեղ հարստանում: Երկրի մակերևույթին կան շրջաններ,

որոնք կազմված են հեշտ լուծվող կրաքարերից, սրանց մեջ շրջանառություն կատարող ջրերը հարստանում են լուծված նյութերով. (օրինակ՝ Արևմտյան Վրաստանի կարստային շրջանների ջրերը): Որքան երկարատև շրջապտույտ կատարեն ստորերկրյա ջրերը, այնքան նրանց միներալացումը կըմեծանա: Օրինակ, Արարատյան արտեզյան ավազանում վերին հարկերի ջրերը պիտանի են խմելու և ոռոգման համար, մինչդեռ ստորին հորիզոնների ջրերը, երկար ժամանակ այնտեղ մնալով, աղիացել են և պիտանի չեն:

Ստորերկրյա ջրերը ապարների ծակոտիներում շարժվելով աստիճանաբար ազատվում են վնասակար բակտերիաներից, ուստի ջրամատակարարման համար ավելի հուսալի աղբյուրներ են: Լեռնային երկրներում տարածված աղբյուրները այս տեսակետից անփոխարինելի են:

Քարոլորտի մեծ խորութուններում, դանդաղ շրջանառության ոլորտում փոսվող ջուրը մեծ ճնշման տակ է, ուստի մինչև 374°-ում այն կարող է դեռևս հեղուկ վիճակում մնալ, իսկ հազեցած լուծույթները մնում են հեղուկ 450°-ում: Այդ ջրերը ունակ են իրենց մեջ լուծելու շատ միներալներ, ուստի երկրի մակերևույթ բարձրանալով առաջացնում են հանքային աղբյուրներ:

Հանքային աղբյուրների ելքերը համընկնում են երկրակեղևի խոշոր բեկվածքների հետ և այդ պատճառով շատ տարածված են ծալքավորված ու հրաբխային շրջաններում: Հանքային աղբյուրներով շատ հարուստ է Սովետական Հայաստանը (Արզնու, Հանքավանի, Բջնիի, Զերմուկի, Սևանի ավազանի և այլ աղբյուրներ): Դրանց հիման վրա ստեղծվել են առողջարաններ:

Մեծ է ստորերկրյա ջրերի դերը մի շարք ֆիզիկաաշխարհագրական պրոցեսներում, ինչպես օրինակ, ներլվացումը (սուֆոզիան), կարստային երևույթները, տողանքները: Ներլվացումը այն երևույթն է, երբ ջրատար հորիզոնում հոսող ջուրը իր հետ տանում է մանրահատիկ մասնիկները, որի հետևանքով նրա հարակցականութունը թուլանում է, և շատ հաճախ, շերտերը իրենց սեփական ծանրության ազդեցության տակ նստում են, առաջացնում են ներլվացման ոչ մեծ գոգավորութուններ:

Կարստային երևույթները կապված են ջրի լուծողունակության հետ: Հեշտ լուծվող ապարները՝ կրաքարը, գիպսը ջրի միջոցով հեռանում են՝ առաջացնելով քարանձավներ, խոռոչներ և այլն: Կարստը իր անունն ստացել է Ադրիատիկ ծովի ափին գտնվող Կարստի սարավանդից, որտեղ այդ երևույթները շատ են: Կարստային քարանձավներ վերջերս հայտնաբերվել են Սովետական Հայաստանի Ծղեգնաձորի շրջանում, որոնք ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում:

Սողանքային երևույթները ներգլացման արդյունք են՝ գետահովտում, լեռնալանջերի վրա, ծովափերում ջրատար հորիզոնը հաճախ թեքված է լինում և ջրերը թեքությամբ հոսելով դուրս են գալիս երկրի մակերևույթ՝ իրենց հետ բերելով մանրահատիկ մասնիկներ: Վերին շերտերի հարակցականութունը խախտվում է, և զանգվածները թեքությամբ սահում են ցած: Սողանքային երևույթները զարգացած են Վոլգայի աջ ափին, Արիմում, Կովկասում, Սովետական Հայաստանի տարածքում և այլն: Մեր հանրապետությունում սողանքներ տարածված են Հրազդանի, Շաղափի, Ախուրյանի, Աղստևի հովիտներում և այլն:

## ՄԹՆՈՒՈՐՏ

Երկրի ոլորտների մասին խոսելիս նշեցինք, որ 'Երկրի կարծր կեղևից՝ քարոլորտից և ջրոլորտից բարձր տարածվում է զազային ոլորտը՝ մթնոլորտը (ատմոսֆերա): Երկիր մոլորակի զարգացման — 5 մլրդ տարիների ընթացքում մթնոլորտը միշտ եղել է: Այդ ոլորտը պահպանվում է Երկրի շուրջ շնորհիվ մոլորակի ձգողական մեծ ուժի, իսկ վերջինս նրա խտության արգասիքն է: Եթե խտությունը 5,52-ից շատ պակաս լիներ, ապա օդը վաղուց ցնդած կլիներ այնպես, ինչպես դա տեղի է ունեցել Լուսնի վրա: Սակայն եթե օդը Երկրից չի հեռացել, ապա նրա կազմի մեջ մեծ փոփոխություններ են կատարվել: Մթնոլորտի այժմյան կազմն ու կառուցվածքն այնպիսին են, որ ներկայիս օրգանական աշխարհի գոյության

ու զարգացման համար ամենարարենպաստ պայմաններն են ստեղծվել: Համառոտակի քննարկենք այդ հարցերը:

### ՄՔՆՈՂՈՐՏԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ժամանակակից մթնոլորտի ներքին շերտը՝ ստորին ոլորտը (ստրոպոսֆերան) հետևյալ կազմն ունի

Նրկրի մթնոլորտը անկանոն (անոմալ) կազմ ունի. այստեղ համարյա բացակայում են տիեզերքում գերիշխող ջրածինն ու հելիումը:

Նրկրի զարգացման մինչքամբերյան ժամանակաշրջանում

Գազը	Մտվալը,
	%-ով
Ազոտ	78,08
Թթվածին	20,94
Արգոն	0,93
Ածխածին գազ	0,03
Այլ գազեր	0,02

մթնոլորտը լքված է եղել ջրածնով, ամիակով, ածխածին գազով, բավական շատ են եղել ջրային գոլորշիները: Զրածինը ժամանակի ընթացքում ցնդել է, ուստի ամենուրեքակազույն ճառագայթների ազդեցությամբ ջուրը քայքայվել է՝ տալով ջրածին ու թթվածին: Վերջինս միանալով ամիակի հետ անջատել է ազատ ազոտ ու ջուր, իսկ ածխածինը բաղադրության մեջ եղած ածխածինը կոնտակվել է օրգանական նյութի մեջ՝ առաջացնելով հանքային վառելանյութի պաշարներ:

Մթնոլորտի թթվածնի անջատման հզոր ազդակ եղավ ֆոտոսինթեզի երևույթը, որն օվկիանոսում սկսվեց դեռևս արխեի դարաշրջանում, իսկ ցամաքի վրա դեռևս ժամանակաշրջանից և, անընդհատ ավելանալով, հասավ մոտ 21 %-ի:

Մթնոլորտում շնչին քանակով կան կրիպտոն, քսենոն, նեոն, հելիում, ջրածին, օզոն, յոդ, մեթան, ամիակ, ծծմբաջրածին: Կան նաև ջրային գոլորշիներ, որոնց քանակը ստորին ոլորտի շերտում կարող է հասնել մինչև 4 %-ի: Բացի վերը նշվածներից, մթնոլորտը պարունակում է աերոզոլներ (կախված վիճակում գտնվող փոշին, գործարանային ծուխը, ծովային ծագման աղեր և այլն): Սրանց դերը մեծ է ջրային գոլորշիների խտացման ժամանակ:

Ի տարբերություն Նրկրի այլ ոլորտների՝ մթնոլորտն ըստ բարձրության նոսրանում է և ստիճանաբար անցնում է միջմոլորակային տարածության յայդ անցումն այնքան աննկատ է, որ դժվար է սահման դնել: Եթե մթնոլորտի սահմանը հա-

մարեմք նրա մազնիսուղորտի սահմանը, ապա հաստությունը կկազմի 90 հազար կմ, իսկ այն սահմանը, որտեղ մարդը կարող է շնչել ու ապրել՝ 6—7 կմ, ուստի գրականության մեջ հանդիպող սահմաններն ու մթնոլորտի հաստության տվյալները պայմանական են:

Մթնոլորտն ուղղաձիգ ուղղությամբ կազմված է մի քանի շերտից (նկ. 12):

ա. Ստորին ոլորտը (տրոպոսֆերա) ամենաներքին շերտն է՝ 8—18 կմ հաստությամբ. այստեղ են կատարվում մթնոլորտային երևույթները՝ տեղումներ, ամպամածություն, ցիկլոններ և այլն: Այստեղ է կենտրոնացած մթնոլորտի զանգվածի 80 %-ը: Երկրի մակերևույթի վրա օդի ճնշումը կազմում է սնդիկի սյան 760 մմ, այսինքն՝ 1013 մբ (միլիբար), որը հավասար է 1013 · 10<sup>2</sup> Պա (պասկալ): 1 Պա = 10<sup>-2</sup> մբ, կամ 1 մբ = 100 Պա) և 1 սմ<sup>2</sup> մակերեսի վրա կազմում է 1 կգ-ից մի փոքր ավելի: Ստորին ոլորտի վերին սահմանում ճնշումը կազմում է 280 մբ (28 · 10<sup>3</sup> Պա): Այսպիսի ցածր ճնշման պայմաններում մարդը չի կարող ապրել:


բ. Ստորևադադարի (տրոպոպաուզա) շերտը ստորին ոլորտից վեր, մոտ 1 կմ հաստությամբ անցումային շերտ է:

գ. Վերնադադար (ստրատոսֆերա) տարածվում է մինչև 50—55 կմ բարձրությունները: Ստորին վերնոլորտում մինչև 20 կմ ջերմաստիճանը գրեթե անփոփոխ է՝ —60—70°, որից վեր աստիճանաբար բարձրանում է, անցնում է 0°-ից: Այստեղ օդը տաքանում է անմիջականորեն Արեգակից, օզոնի (O<sub>3</sub>) շերտը կլանում է ճառագայթների մի մասը (հատկապես կարճալիք), ինչպես նաև կորպուսկուլային, օհնոգենյան և այլն, որոնք սպանիչ են օրգանիզմների համար:

դ. Միջնալուրտը (մեզոսֆերա) տարածվում է 55—80 կմ, անցումային շերտ է, որտեղ ջերմաստիճանը նորից նվազում է մինչև —90°C:

ե. Միջևադադարի շերտը (մեզոպաուզա) տարածվում է 80—90 կմ-ի միջև. ջերմաստիճանը հաստատուն է՝ 180°:

զ. Ջերմալուրտը (թերմոսֆերա) 90—1000 կմ-ի միջև ընկած ոլորտն է, որտեղ ջերմաստիճանն ըստ բարձրության աճում է. այն 600 կմ-ի վրա հասնում է 1500°-ի, որից հետո փչնում է: Այստեղ մոլիկուլներն ու ատոմները ուղտրամանուշա-



Նկ. 12. Մթնոլորտի կառուցվածքի սխեման (ըստ Խ. Գ. Պողոսյանի և Զ. Լ. Տուրնետի):

- 1— Լեռների ամենամեծ բարձրությունը, 2— օվկիանոսի ամենամեծ խորությունը, 3— ստորին ամպեր, 4— կոնվեկցիայի ամպեր, 5— փետրավոր ամպեր, 6— սառափյա ամպեր, 7— արծաթագույն ամպեր, 8— Պիկարի ստրատոստառը, 9— «Օռոտվիաքիմի» ստրատոստառը, 10— ռադիոազոնդեր, 11— օդերևութաբանական հրթիռներ, 12— երկրաֆիզիկական հրթիռներ, 13— Երկրի արհեստական արբանյակներ, 14— ձայնի ալիքների անդրադարձում, 15— միջին ալիքների անդրադարձում, 16— կուրճ ալիքների անդրադարձում, 17— բևեռափայլ ստաբիլ իոնոլորտում, 18— բևեռափայլ վերին իոնոլորտում, 19— երկնաքարեր, 20— օդերի ամենամեծ կուտակումը:

կազույն, էլեկտրական, ռենտգենյան ճառագայթների ազդեցության տակ տրոհվում են, առաջանում է պլազմա՝ լիցքավորված էլեկտրոնների ու պրոտոնների խառնուրդ: Օդն այստեղ իոնացված է, ուստի կոչվում է նաև իոնոլորտ (իոնոսֆերա): Իոնացումն ըստ բարձրության թուլանում է, առավել իոնացված ոլորտը 300—400 կմ բարձրության վրա է: Ռադիոալիքները, հասնելով սրան, անդրադառնում են, իոնոլորտը կլանում է ռենտգենյան ճառագայթների մեծ մասը:

է. Արտաֆին ոլորտը (էկզոսֆերա) տարածվում է 1000 կմ-ից բարձր՝ մինչև 2000—3000 կմ. այստեղ գազերի մոլեկուլների շարժման արագությունը մոտենում է կրիտիկականին (11,2 կմ/վրկ), ուստի նրանց մի մասը պոկվում է մթնոլորտից և անցնում միջմոլորակային տարածություն:

### ՄԹՆՈՂՈՐՏԻ ԴԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹՈՒՄ

Բացառիկ է օդի դերը աշխարհագրական թաղանթում: Օդը թափանցիկ է, և նրա միջով Արեգակի ճառագայթները առանց դժվարության հասնում են երկրի մակերևույթ, սակայն այդ ճառագայթների մի մասը ցրվելով մթնոլորտում ցերեկային ժամերին լուսավորում է Երկիրը:

Երկրի վրա լույսի ցրման հետևանքով նույնիսկ Արեգակի բացակայության դեպքում՝ արևածագից առաջ և մայրամուտից հետո, երկար ժամանակ դեռևս լույս է, և կարելի է առարկաները նշմարել: Ցրված ճառագայթներն այնքան լույս են տալիս, որ անտառում բարձր ծառերի ստվերում կանաչ բույսեր են աճում, և Արեգակի ուղիղ ճառագայթների բացակայության պայմաններում ֆոտոսինթեզ է կատարվում:

Մայրամուտից հետո հորիզոնի վրա երևում է զոդիակային լույսը՝ կոնաձև տեսքով, գլուխը կլորացած և անհայտանում է, երբ բոլորովին մութ է: Այս լուսավորումը տեղի է ունենում, ըստ երևույթին, պլազմայում՝ Արեգակի ճառագայթների անդրադարձման հետևանքով: Բացի զոդիակային լուսավորումից հորիզոնի հակառակ կողմում նկատվում է նաև հակալուսավորում: Վերջին ժամանակներս կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Երկրից 1,5 մլն կմ հեռավորության վրա, Արեգակի հակառակ կողմում գոյություն ունի ծանրահակ թաքստոց, որտեղ գտնվում է մանրա-

Երկնաքարային (միկրոմետեորիտային) փոշի, որը Երկրի հետ միասին մեկ տարում պտտվում է Արեգակի շուրջը: Այս թաքստոցում գտնվող փոշին ազատ կերպով լուսավորվում է և Երկրի վրայից նշմարելի է:

Երկնակամարի լուսավորման հետաքրքիր երևույթ է բևեռափայլը (հյուսիսափայլ), որ երևում է բևեռային գիշերնեքին աշխարհագրական բարձր լայնություններում: Բևեռափայլը լուսավորում է շրջապատը Լուսնի նման:

Մթնոլորտը երկրի ամենաշարժուն տարրն է. երկրի մակերևույթին նրա արագությունը հասնում է վայրկյանում մինչև 100 մ, իսկ մթնոլորտի վերին շերտերում՝ ավելի քան 250 մ: Ուղղաձիգ շարժումները կազմում են մինչև 10—20 մ/վրկ: Այսպիսի արագ տեղաշարժերն են պատճառը, որ մթնոլորտն ամենուրեք ունի նույն բաղադրությունը:

Օդը հիմնականում թափանցիկ է Արեգակի ճառագայթների համար, հատկապես սպեկտրի տեսանելի տիրույթում, նըրանք հասնում են մինչև երկրի մակերևույթ և տաքացնում: Իսկ օդը տաքանում է հիմնականում գետնին շփվելով:

Մթնոլորտն այն միջավայրն է, որտեղ տեղի են ունենում օքսիդացման պրոցեսները, որոնք շատ տարածված են Երկրագնդի մակերևույթի այն շերտերում, որտեղ թթվածին կա: Օդը կյանքի միակ միջավայրն է, և այն կենդանիները, որոնք թոքերով են շնչում, օգտագործում են օդի թթվածինը: Բույսերը ևս օդի միջավայրում են ապրում, նրանից վերցնում են CO<sub>2</sub> գազը և լուսասինթեզ կատարում: Օդի միջավայրում է կատարվում ապարների հողմահարումը, երկրորդական միներալների սինթեզը: Մթնոլորտում են կազմավորվում տեղումները և բազմաթիվ շրջանառական պրոցեսներ՝ ցիկլոններ, անտիցիկլոններ, պասսատներ, մուսսոններ, բրիզներ (ծովագեփյուռ) և այլն: Մթնոլորտի միջոցով է կատարվում նաև քիմիական տարրերի օդային տեղաշարժը (միգրացիան):

Մթնոլորտում ջրային գոլորշիներն ու CO<sub>2</sub> գազը առաջացնում են այսպես կոչված ջերմոցային էֆեկտ՝ մթնոլորտը իր միջով բաց է թողնում Արեգակի ճառագայթների հիմնական մասը գրեթե ամբողջությամբ, սակայն դժվարությամբ է անցկացնում Երկրից կատարվող երկարալիք ճառագայթումը: Այնպես, ինչպես ջերմոցում ապակին պահում է ներսի ջերմու-

թյունը, նույն էֆեկտը ստեղծվում է մթնոլորտում: Պարզվում է, որ այս տեսակետից բացառիկ է ածխաթթու գազի դերը: Եթե ածխաթթու գազը օդում ավելանա, ապա ջերմոցային էֆեկտը կուժեղանա, և Երկրագնդի մակերևույթին ջերմաստիճանը կբարձրանա: Այժմ աշխարհում տարեկան այրում են մոտ 8—9 մլրդ տ վառելիք, և այրումից ստացված ածխաթթու գազը մուտք է գործում մթնոլորտ, մեծացնում է ջերմոցային էֆեկտը: Եթե Երկրագնդի վրա չլիներ ջերմոցային էֆեկտը, ապա երկրի մակերևույթի միջին ջերմաստիճանը, այժմյան 15-ի փոխարեն, հավասար կլիներ —3°-ի: ]

### ՄԹՆՈԼՈՐՏԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Երկիրն Արեգակից ստանում է ջերմային, լուսային և կորպուսկուլային ճառագայթներ: Արեգակի զանգվածում տեղի ունեցող միջուկային ռեակցիաներից ստացված ջերմային էներգիան փոխարկվում է ճառագայթայինի: Արեգակի սպեկտրը կազմված է տարբեր երկարության ճառագայթներից: Երկրի մթնոլորտից դուրս 1 սմ<sup>2</sup> մակերեսը 1 րոպեում ստանում է 1,98 կալորիա, կամ 1,381 կվտ/մ<sup>2</sup>, որին անվանում են արեգակնային հաստատուն: Մթնոլորտից դուրս դա հաստատուն է, բայց երկրի մակերևույթի միավոր մակերեսին հասած ճառագայթային էներգիայի քանակությունը միանգամայն տարբեր է՝ կախված վայրի ֆիզիկաաշխարհագրական պայմաններից, օդի թափանցիկությունից, աշխարհագրական լայնությունից:

Երկրագնդից Արեգակից ստանում է տարեկան  $5,74 \cdot 10^{24}$  ջոուլ ( $1,37 \cdot 10^{24}$ ) կալորիա: էներգիայի այս քանակությունը բավական է 36 մ հաստությունք սառցի շերտը հալեցնելու համար:

Պարզկա եղանակին Արեգակի ճառագայթների մեծ մասը համնում է երկրի մակերևույթ, սրան անվանում են արեգակնային ուղիղ ճառագայթում: Ճառագայթների մի մասը կլանվում է փոշու, օրասղեղների (աէրոզոլների) ու գոլորշիների կողմից, ցրվում է, գետին է հասնում տարբեր անկյունների տակ: այդպիսի ճառագայթումը անվանում են ցրված: Օրինակ, ամպումած եղանակին Արեգակը չի երևում, բայց ցրված ճառագայթների շերտի վ շրջապատում լույս է: 'Իսպի բեռնները՝ ցը-

ըրիվ ճառագայթների բաժինը մեծանում է: Ուղիղ և ցրիվ ճառագայթների գումարից ստացվում է միապումար ճառագայթումը, որից կախված է Երկրագնդի, ավելի ճիշտ աշխարհագրական թաղանթի ջերմային ռեժիմը:

Հստ բարձրության միապումար ճառագայթումը մեծանում է: Օրինակ՝ Արարատյան դաշտում այն կազմում է 1,4 կալ/սմ<sup>2</sup> ըոպե, իսկ Արագածի կամ Գեղամա լեռների բարձր մասերում՝ 1,7 կալ/սմ<sup>2</sup> ըոպե:

Երկրի մակերևույթը հիմնականում տաքանում է Արևի ուղիղ ճառագայթներից: Որքան ճառագայթների անկման անկյունը երկրի մակերևույթի նկատմամբ 90°-ին մոտ լինի, այնքան ճառագայթային էներգիան մեծ կլինի: Արևադարձային լայնություններում երկրի մակերևույթը շատ է տաքանում, մինչդեռ մերձբևեռային շրջաններում ճառագայթների անկման անկյունը երկրի մակերևույթի նկատմամբ փոքրանում է, այդ պատճառով էներգիան թուլանում է: Երկրագնդի մակերևույթի վրա միապումար ճառագայթման արժեքը արևադարձային լայնություններում կազմում է տարեկան 180—220 կկալ/սմ<sup>2</sup>, հստարակածային երկրներում՝ 100—140, քարեխառն երկրներում՝ 80—100, մերձբևեռային երկրներում՝ 80 կիլոկալորիայից պակաս: Հասարակածային երկրներում ջերմության քանակը պակասում է մեծ ամպամածուկյան պատճառով: Ջերմության մուտքը տարվա ընթացքում միշտ նույնը չէ, ենթակա է անզոնային տատանումների:

Երկրի մակերևույթ հասած ճառագայթները նրա կողմից ըրիվ շին կլանվում: Ճառագայթների մի մասը անդրադարձվում է: Անդրադարձած և ստացված ճառագայթների հարաբերությունը կոչվում է ալբեդո, որն արտահայտվում է տոկոսներով: Օրինակ, թայրմ ձյան ալբեդոն 90 % է, անտառինը՝ 15—20 %, վարած հողինը՝ 10 %: ջրի մակերևույթին ալբեդոն խիստ տարբեր է (2—80 %), կախված ճառագայթների անկման անկյունից:

Մթնոլորտը ջերմություն ստանում է թե անմիջականորեն Արեգակից, թե գետնից, այդ էներգիան ճառագայթարձակում է դեպի միջոլորտային տարածություն և, միևնույն ժամանակ, նորից դեպի երկրի մակերևույթ: Այս վերջինին անվանում են հանդիպակաց ճառագայթում: Երկրի մակերևույթից

կատարված ճառագայթման և հանդիպակաջ ճառագայթման տարբերությունը կոչվում է էֆեկտիվ ճառագայթարձակում:

Ճառագայթային էներգիայի մուտքի ու ելքի տարբերությունը կոչվում է ճառագայթային հաշվեկշիռ կամ մնացորդային ճառագայթում. այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$R=Q+D+E-C-U$$

որտեղ  $R$ -ը ճառագայթման հաշվեկշիռն է,  $Q$ -ն՝ ուղիղ ճառագայթումը,  $D$ -ն՝ ցրիվը,  $E$ -ն՝ հանդիպակացը,  $C$ -ն՝ անդրադարձ ճառագայթումը,  $U$ -ն՝ երկրի մակերեսի ճառագայթումը: Եթե  $E$ -ն և  $U$ -ն արտահայտենք էֆեկտիվ ճառագայթարձակման միջոցով ( $Y$ ), ապա բանաձևն ավելի պարզ տեսք կստանա՝

$$R=Q+D-Y-C$$

Ամբողջ Երկրափնդի համար ճառագայթային հաշվեկշիռը գրական է, բացի մերձբևեռային ոլորտ շրջաններից (Գրենլանդիա, Անտարկտիդա): Մովի վրա այդ հաշվեկշիռն ավելի մեծ արժեք ունի, քան ցամաքում, որովհետև ցամաքի արեղոն ավելի մեծ է, քան ծովինը: Սակայն դրական հաշվեկշիռը դեռևս չի նշանակում թե ջերմության ավելցուկը կուտակվում է և բարձրացնելու է երկրի մակերևույթի ջերմաստիճանը: Այդ ավելցուկը ծախսվում է գոլորշացման վրա կամ հաղորդվում է շրջապատին: Այսպես, օվկիանոսային տաք հոսանքները արևադարձային շրջաններից մերձբևեռային երկրներ են տանում ջերմային էներգիայի մեծ պաշարներ և մեղմացնում են այդ վայրերի կլիման:

Ճառագայթման հաշվեկշռի ամենամեծ արժեք ունեն Արարական ծովը ( $140$  կկալ/սմ<sup>2</sup>), Հնդկական օվկիանոսի ավստրալական ծովափը ( $120-140$  կկալ/սմ<sup>2</sup>): Բարեխառն երկրրենրում հաշվեկշիռը հասնում է  $30-50$  կկալ/սմ<sup>2</sup>. Մովեցարկան շայաստանի ճառագայթային հաշվեկշիռը  $50$  կկալ/սմ<sup>2</sup> է:

Ճառագայթային հաշվեկշիռն ունի ինչպես տարեկան, այնպես էլ՝ օրական ընթացք: Բարեխառն երկրներում ամենամեծ հաշվեկշիռ նկատվում է ամռանը, իսկ օրվա մեջ՝ կեսօրից մի փոքր անց: Գիշերն ու ձմռանը հաշվեկշիռը դառնում է բացասական:

Ճառագայթային հաշվեկշիռը ջերմային հաշվեկշռի կարե-  
 վորագույն բաղադրիչն է: Զերմային հաշվեկշիռը ցույց է տա-  
 լիս, թե արեգակնային ճառագայթային էներգիան ինչպես է  
 փոխարկվում ջերմայինի՝

$$R = LE + P + A$$

որտեղ R-ը ճառագայթային հաշվեկշիռն է, LE-ն՝ գոլորշաց-  
 ման թաքնված ջերմությունը, P-ն՝ տուրբուլենտ ջերմափո-  
 խանակությունը Երկրի մակերևույթի և մթնոլորտի միջև, A-ն՝  
 ջերմափոխանակությունը երկրի մակերևույթի և ստորագիբ  
 գետնահողի միջև:

Երկրի մակերևույթի տարեկան ջերմային հաշվեկշիռը  
 հետևյալ պատկերն ունի՝

1. Արեգակնային ճառագայթումը մթնոլորտի

վերին սահմանում . . . . .	1000 կկալ/սմ <sup>2</sup>
2. Ստորին ոլորտի գնդաձևության շնորհիվ նրա միավոր մակերեսին հասնում է	250 կկալ/սմ <sup>2</sup>
3. Անդրադառնում է (ալբեդո) 33%	83 կկալ/սմ <sup>2</sup>
4. Ստորին ոլորտը յուրացնում է . . .	167
5. Ստորին ոլորտը կլանում է . . .	59
6. Հասնում է երկրի մակերևույթին և նրա կողմից կլանվում . . .	108
7. էֆեկտիվ ճառագայթարձակում . . .	36
8. Զերմային ճառագայթային մնացորդ (հաշվեկշիռ) . . . . .	72
9. Գոլորշացման համար կատարվող կո- րուստ . . . . .	60
10. Տուրբուլենտ ջերմափոխանակություն	12
11. Երկրի երկարալիք (ջերմային). ճառագայթումը . . . . .	167

Երկրի մակերևույթի կողմից ստացած ջերմությունը ձեռ-  
 փոխվում է ու վերաբաշխվում: Այն ծախսվում է գոլորշաց-  
 ման, օդի տուրբուլենտ ջերմափոխանակման վրա: Ամենից  
 շատ ջերմություն ծախսվում է գոլորշացման վրա (արևա-  
 դարձային օվկիանոսներում մինչև 120—140 կկալ/սմ<sup>2</sup> տա-  
 րի) մինչդեռ անապատային շրջաններում ջրի պակասության

զատճառով գոլորշացման վրա շնչին ջերմություն է ծախսվում: Ամբողջ Երկրագնդի մասշտաբով գոլորշացման վրա ծախսվում է Արեգակից ստացած ճառագայթային էներգիայի 80 % -ը, իսկ տուրբուլենտ ջերմափոխանակման վրա՝ 20 %:

Այն ջերմությունը, որ ծախսվել էր գոլորշինների խտացման ժամանակ նորից վերադարձվում է մթնոլորտ, որպես խտացման (կոնդենսացման) թաքնված ջերմություն: Վերջինս հասկապես ակնառու է հասալրակածային շրջանի ստորին ուղղատում, որտեղ կան օդի վերընթաց հոսանքներ և առատ տեղումներ: Արևադարձային գոտիներում տեղումների քաղաքակալության պատճառով այդ կարգի ջերմության անջատում գրեթե չկա, իսկ բարեխառն լայնությունների տակ տեղումների ավելացման հետ մեկտեղ գոլորշիների խտացումից անջատվող էներգիան նորից ավելանում է:

Մթնոլորտը Արեգակի ճառագայթներից անմիջականորեն քիչ է տաքանում: Այդ ճանապարհով ստացվում է նրա ջերմության միայն  $\frac{1}{3}$ -ը: Զերմության  $\frac{2}{3}$ -ը մթնոլորտն ստանում է գետնից՝ վերջինիս հետ շփվելով տուրբուլենտային ջերմափոխանակմամբ: Այս հանգամանքը վճռական նշանակություն ունի օվկիանոս-մթնոլորտ և ապա՝ մթնոլորտ-ցամաք ջերմափոխանակման մեջ: Օվկիանոսից անջատված ջերմությունը տաքացնում է օդը, որը տեղափոխվելով ցամաք՝ մեծ դեր է խաղում կլիմայի ձևավորման մեջ: Բավական է ասել, որ 1 մ<sup>3</sup> ջուրը 1° պահելու դեպքում օդին հաղորդում է այնքան ջերմություն, որ 3000 մ<sup>3</sup> օդի ջերմաստիճանը 1°-ով բարձրանում է: Գոլֆստրիմ հոսանքի վրա մեկ օրվա ընթացքում տուրբուլենտ ջերմափոխանակման շնորհիվ օդը կարող է տաքանալ մինչև 20°-ով: Ահա թե ինչու Գոլֆստրիմը հսկա վառարանի նման ջերմացնում է ամբողջ Հյուսիսային Եվրոպան:

Երկրագնդի մթնոլորտի տարբեր մասերի միջև հորիզոնական ուղղությամբ ջերմափոխանակությունը կատարվում է օդային զանգվածների տեղաշարժերի միջոցով, որը մեր մոլորակի վրա հաճախադեպ երևույթ է:

Զերմափոխանակությունը, ցամաքի մակերևույթից դեպի գետնի խորքը, կատարվում է ջերմահաղորդականության միջոցով: Որքան մակերևութային ու խորքային ջերմաստիճանների տարբերությունը մեծ լինի, այնքան ջերմահաղորդակա-

նությունը կմեծանա: Զերմաստիճանի օրական տատանումները կարող են հաղորդվել մինչև 1 մ խորության, իսկ սեզոնայինները՝ 10—15 մ:

Գոյություն ունեն օդի ջերմային վարքի (ռեժիմի) արտահայտման մի քանի ցուցանիշներ, որոնցից հիմնականներն են՝

1. օրվա միջին ջերմաստիճանը,
2. միջինօրական ջերմաստիճանները ըստ ամիսների,
3. միջինամսական ջերմաստիճանը,
4. բազմամյա միջին ամսական ջերմաստիճանը,
5. տարեկան միջին ջերմաստիճանը,
6. բազմամյա տարեկան միջին ջերմաստիճանը,
7. բացարձակ առավելագույն և քացարձակ նվազագույն

ջերմաստիճան (ամսական, տարեկան, բազմամյա): Զերմության վարքի նշված տարրերի դիտարկումները կատարվում են օդերևութաբանական կայաններում:

Ամբողջ Երկրագնդի համար բացարձակ առավելագույն ջերմաստիճանը ստվերում եղել է  $57,8^{\circ}\text{C}$  (Լիբիա՝ էլ-Ազի, Ամերիկայում՝ Մահլան հովիտ), իսկ Քար անապատում՝  $53^{\circ}$ : ՍՍՀՄ-ում առավելագույնը եղել է  $50^{\circ}$  (Միջին Ասիայի հարավում), իսկ Հայկական ՍՍՀ-ում՝  $42^{\circ}$  (Արարատյան դաշտ, Մեղրի): Բացարձակ նվազագույն եղել է Անտարկտիդայում՝  $-94^{\circ}$  1960 թ., ՍՍՀՄ-ում՝ Օյմյակոնում  $-71^{\circ}$ , Հյուսիսային Ամերիկայում՝  $-62,8^{\circ}$ , Հայկական ՍՍՀ-ում  $-46^{\circ}$  (Արփի լճի ափին՝ Շուրաբադում):

Եթե Երկրագնդի մակերևույթին օդի ջերմային վարքը կախված լիներ միայն արեգակնային ճառագայթումից, ապա հասարակածում ջերմաստիճանը կլիներ  $39^{\circ}$ , իսկ բևեռներում՝  $-44^{\circ}$ , ջերմաստիճանները կնվազեին հասարակածից բևեռ շարժվելիս, իսկ հավասարաջերմերը կդասավորվեին գուգահեռականների ուղղությամբ (սուլար-արևային ջերմաստիճաններ): Բայց ջերմության բաշխումը բացի ճառագայթման լարվածությունից կախված է նաև ցամաքի ու ծովի տեղաբաշխումից, օդային զանգվածների շարժումից, լեռնաշղթաների ուղղությունից ու բարձրությունից, ցամաքի մակերևույթի բլրնայից, օդի խոնավությունից, մարդու աշխատանքային գործունեությունից: Ահա այս ազդակները փոխում են արևային ջերմաստիճանները, և հավասարաջերմերը ցամաքներում ու-

ժողովրդում առ արդդություններ են տարևտամ, նկատվում են նաև փակ հավասարաչեղմներ:

Վերլուծելով հունվարյան և հուլիսյան հավասարաչեղմների քարտեզները, կարող ենք գտնել մի քանի օրինաչափություններ. հունվարին հյուսիսային կիսագնդում ձմեռ է, հարավայինում՝ ամառ: Հասարակածից հյուսիս մինչև հյուսիսային բևեռ ամենուրեք ծովն ավելի տաք է, քան ցամաքը, ուստի հավասարաչեղմները օվկիանոսում բարձրանում են հյուսիս, իսկ ցամաքում իջնում են հարավ. Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասում կորերը շատ ցայտուն արտահայտված ծունկի են առաջացնում:  $0^{\circ}$ -ի հավասարաչեղմը Կենտրոնաֆոն Եվրոպայով կտրուկ իջնում է հարավ: Նորվեգիայի հյուսիսային մասն ու Կովկասը նույն հավասարաչեղմի տակ են, չնայած որ Նորվեգիան հազարավոր կիլոմետրերով ավելի հյուսիս է: Այսպիսի պատկեր ստեղծվում է Գոլֆստրիմի ազդեցության շնորհիվ: Գրեթե նույն պատկերն է Խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում: Հավասարաչեղմները կտրուկ ծունկ են առաջացնում: Սիրիոյում ու Կանարայում հավասարաչեղմները փակ կորեր են ստեղծում որովհետև օվկիանոսի վրա —  $35-40^{\circ}$  և պակաս ջերմաստիճաններ չեն նկատվում: Մայրցամաքների արևմտյան ափերին արևադարձային լայնություններում ջերմաստիճանը իջնում է օվկիանոսային սառը հոսանքների պատճառով:

Հարավային կիսագնդում հավասարաչեղմները կտրուկ արտահայտված ծովածքներ առաջացնում են օվկիանոսների արևելյան ափերին, որտեղ ազդում են փոխհատուցման (կոմպենսացիոն) հոսանքները (Պերուական, Բենգուելյան, Արևմտա-ամստրալական), մինչդեռ արևմտյան ափերին տաք հոսանքների շնորհիվ ջերմաստիճանները բարձր են: Հունվարին հարավային կիսագնդում ցամաքներում պարզ արտահայտված են փակ հավասարաչեղմներ. վերջիններս ցույց են տալիս, որ ամենաբարձր ջերմաստիճանները ցամաքում են: Բարձր ջերմաստիճաններով (ավելի քան  $35^{\circ}$ ) աչքի է ընկնում Ավստրալիան:

Հուլիսյան հավասարաչեղմների քարտեզը ցույց է տալիս, որ հյուսիսային կիսագնդում ցամաքի վրա ավելի տաք է, քան ծովում, ուստի հավասարաչեղմները ցամաքում բարձրանում են

հյուսիս, որն ավելի ցայտուն արտահայտված է Հյուսիսային Ամերիկայի արևմտյան և Ասիայի արևելյան ափերին: Ցամաքում նկատվում են փակ հավասարաչեքումեր (մինչև  $35^\circ$ ), մինչդեռ ծովում այդպիսի բարձր ջերմատիճաններ չկան: Մովային սառը հոսանքների շրջանում (Կալիֆոռնիական, Կոնարյան) հավասարաչեքումերը ժուճկ են առաջացնում գետի հարավ:

Հարավային կիսագնդի ջերմային վարքի վրա մեծ ազդեցություն ունեն օվկիանոսային հոսանքները: Տաք հոսանքների շրջաններում (Բրազիլական, Ասեդի, Արևելա-Ավստրալական հոսանքներ) հուլիսյան հավասարաչեքումերը իջնում են հարավ: Իսկ սառը հոսանքների տարածման շրջաններում հեկատակը, բարձրանում են հյուսիս: Հարավային կիսագնդի բարեխառն գոտում, որտեղ համատարած օվկիանոս է, հավասարաչեքումերը ունեն զուգահեռականների ուղղություն:

Երկրագնդի վրա առանձնացվում են հետևյալ ջերմային գոտիները՝

1. Տաք գոտին տարածվում է հասարակածի երկու կողմերում մինչև  $30^\circ$  լայնությունները. որպես սահման ընդունվում են տարեկան միջին  $20^\circ$  հավասարաչեքումերը հյուսիսային ու հարավային կիսագնդերում:

2. Բարեխառն գոտին տարածվում է տարեկան միջին  $20^\circ$  հավասարաչեքումից մինչև ամենատաք ամսվա  $10^\circ$  հավասարաչեքումերը (հյուսիսային կիսագնդում մինչև տայգայի հյուսիսային սահմանը): Հարավային կիսագնդում գոտին ցայտուն արտահայտված չէ:

3. Ցուրտ գոտին տարածվում է ամենատաք ամսվա  $+10^\circ$  հավասարաչեքումից մինչև  $0^\circ$  հավասարաչեքումը:

4. Մշտական սառնամանիքի գոտին տարածվում է ամենատաք ամսվա  $0^\circ$ -ի հավասարաչեքումից մինչև բևեռ, որտեղ տարին թողր սառնամանիք է:

Պետք է նշել, որ հյուսիսային կիսագնդը հարավայինից ավելի տաք է, և Երկրի ջերմային հասարակածը աշխարհագրականից հյուսիս է տեղադրված:

Երկրի ջերմային վարքում մայրցամաքներն ունեն ցամաքային կլիմա: Վերջինս աչքի է ընկնում ջերմաստիճանային՝ ինչպես սեզոնային, այնպես էլ օրական մեծ տատանումներ:

քով, տեղումների աղքատութեամբ, շորայնութեամբ: Մովաջին փլիման յուրահատուկ է օվկիանոսների ու ցամաքների մերձ-ժուլյան մասերին, որտեղ ջերմատեղեանային տատանումները փոքր են, խոնավութունն ու տեղումները՝ առատ:

Ջերմային վարքում իրենց ազդեցությունն են թողնում չեաները, լեռնային ռելիեֆը: Ըստ բարձրութեան՝ ջերմատեղեանը յուրաքանչյուր 100 մետրին իջնում է 0,6°-ով: Լեռնային փոզավորություններում, հատկապես ձմեռային ամիսներին ջերմաշերտավորումը հակառակ բնույթ է ստանում, առաջանում է շրջադասություն (ինվերսիա)՝ ջերմատեղեանի բարձրացում ըստ բարձրության:

### ՕՊՏԻԿԱԿԱՆ, ՁԱՅՆԱՑԻՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՑՔՆԵՐ

Մթնոլորտում տեղի ունեցող օպտիկական երևույթներից են՝ երկնքի գույնը, լուսաբեկումը (ռեֆրակցիան), օդատեսիլը (միրածը), գալսն, ծիածանը, կեղծ արևը, ըլուսային սյուները, լուսային խաշերը և այլն:

Երկինքը լինում է երկնագույն, կապտավուն, սպիտակավուն, մոխրագույն և այլն: Պարզ երկնքի դեպքում այն երկնագույն է. Արեգակի ճառագայթների մոլեկուլային ցրում է կատարվում, որի դեպքում ավելի շատ ցրվում են կարճալիք ճառագայթները: Երբ օդի մեջ փոշին շատ է, առկա են օդազուլեր և խոշոր մասնիկներ, ապա ճառագայթների ցրումը կախված չէ ալիքի երկարությունից, և երկնակամարը սպիտակավուն է երևում: Ամպամած երկինքը երբեմն դառնում է մոխրագույն: Որքան բարձրանում ենք լեռներն ի վեր, երկինքը կապտավուն է դառնում, ապա՝ մուգ մանուշակագույն և սև: Արևածագի ու մայրամուտի ժամանակ Արեգակը կարմրավուն է երևում այն պատճառով, որ օդի հաստ շերտի միջով անցնելիս կարճալիք ճառագայթները կլանվում են, և մեզ ափելի շատ հասնում են երկարալիք կարմիր ճառագայթները:

Մթնոլորտի մեջ տարբեր խտության միջավայրեր անցնելիս ճառագայթները բեկվում են, առարկան երևում է ոչ այնտեղ, որտեղ իրականում գտնվում է. այդ երևույթին անվանում են լուսաբեկում (ռեֆրակցիա):

Օպտիկական երևույթներից է օդատեսիլը (միրածը): Սա կապվում է անկանոն լուսաբեկման հետ: Հեռվում երևում են

առարկաներ, որոնք բաղորովին այլ տեղում են գտնվում: Օդատեսիլը հաճախ է ընկում անապատներում. մարդիկ տեսնում են օազիսներ ու լճեր, որոնք ամենեփն էլ այդտեղ չկան. մարդը մոտենում է օազիսին, օդատեսիլը անհետանում է:

Գալուն այն երևույթն է, երբ Արեգակի կամ Լուսնի շուրջը երևում են լուսավոր օղակներ: Սրանք առաջանում են, երբ երկնակամարում շերտավոր ամպերի բարակ շերտ կա կամ թույլ մառախուղ:

Միածանը օպտիկական երևույթներից ամենացայտունն ու հաճախադեպն է: Առաջանում է այնտեղ, որտեղ Արեգակի ճառագայթները լուսավորում են անձրևի մանր կաթիլները. ճառագայթները բեկվում են անձրևի կաթիլների մեջ՝ առաջացնելով դիսպերսիա՝ տարամիտում (ինչպես եռանկյուն պրիզմայի մեջ):

Նյութական միջավայրում մասնիկների երկայնակի տատանումները, հասնելով մարդու ականջին, առաջացնում են ձայնի զգացում: Բնության մեջ կան շատ երևույթներ, որոնք ձայնային ալիքներ են ստեղծում՝ ամպրոպը, քամին, ջրվեժը, ալեբախտվայրուրը և այլն: Հասարակական միջավայրում ևս ձայնային ալիքներ են արձակվում՝ մարդու բղավոցը, կրակոցը, մեքենաների ձայնը, ինքնաթիռի հոնդյունը և այլն: Մթնոլորտում ձայնի ալիքի միջին արագությունը մեկ վայրկյանում 333 մ է, ջերմաստիճանի բարձրացման դեպքում արագությունը մեծանում է, խոնավությունը ևս ազդում է ձայնի արագության վրա:

Նրբ ձայնի ալիքը մեկ միջավայրից անցնում է մյուսը, տեղի է ունենում բեկման ու անդրադարձման երևույթը: Անդրադարձման երևույթին անվանում են արձագանք, որ շատ տարածված է լեռնային երկրներում, երբեմն ձայնը արձագանքվում է մի քանի անգամ:

Մթնոլորտում գոյություն ունեն նաև էլեկտրական երևույթներ, որոնք կապված են լիցքերի և լիցքավորված մասնիկների՝ իոնների հետ: Մթնոլորտի իոնացումը տեղի է ունենում արեգակնային կարճալիք, ռադիոակտիվ և տիեզերական ճառագայթման ազդեցության տակ: Վերջիններիս ներգործությամբ օդի մոլեկուլին հաղորդվում է էներգիա, որի շնորհիվ ատոմի միջուկի ազդեցության ոլորտից արտաքին

էլեկտրոններից մեկը, օժտված բացասական լիցքով, հեռանում է: Սրա հետևանքով ատոմը ստանում է դրական լիցք: Մթնոլորտի իոնացումը նպաստում է էլեկտրահաղորդականությանը, որն, ըստ բարձրության, մեծանում է: 7—8 կմ բարձրության վրա էլեկտրահաղորդականությունը 15—20 անգամ ավելի է, քան երկրի մակերևույթին:

Մթնոլորտի էլեկտրական դաշտի բարձր լարվածության և օդի իոնացման պայմաններում հաճախ սրածայր առարկաների ծայրին առաջանում են էլեկտրական պարպումներ և լուսարձակում: Այդ տեսանելի պարպումներին անվանում են «էլմի կրակներ»:

Մթնոլորտի էլեկտրական երևույթներից ամենատարածվածը կայծակն է, որ կապված է ջերմային ու դինամիկ շատ բարդ պրոցեսների հետ: Ամպրոպային ամպերում էլեկտրական լիցքերը անշատովում են, ամպի ստորին մասում կուտակվում են բացասական լիցքերը, իսկ վերին մասում դրական: Ստեղծվում է էլեկտրական ուժեղ դաշտ թե նույն ամպի տարբեր մասերում, թե տարբեր ամպերի միջև: Երբ լարվածությունը հասնում է սահմանաչին չափին, կատարվում է պարպում:

Կայծակները ըինում են գծային, տափակ, գնդային և այլն: Ամպրոպ ու կայծակ ամենից հաճախ լինում է արևադարձային ու հասարակածային երկրներում: Օրինակ, Ճավա կղզում տարեկան 220 օր ամպրոպային է:

էլեկտրական երևույթներից է բևեռափայլը, որ տեղի է ունենում խիստ նոսր օդում 80—1000 կմ բարձրության վրա: Արեգակից Երկիր հասնող պրոտոններն ու էլեկտրոնները գրքավում են Երկրի մագնիսական դաշտի կողմից և շարժվելով այդ դաշտի ուժագծերի ուղղությամբ, մագնիսական բևեռներում փոխազդելով օդի ատոմների վրա, առաջացնում են լույսի ճառագայթում: Բևեռափայլի երևույթն ամենից մեծ կըրկընելիություն ունի մագնիսական բևեռների շրջանում և բևեռային գիշերներին միակ լուսատուն է դառնում:

### ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԸ, ՄԹՆՈՂՈՐՏԱՑԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

Մթնոլորտում կան ջրային գոլորշիներ: Նույնիսկ ամենաչոր անապատում օդը բացարձակ չոր չէ: Օդի խոնավության

աղբյուրը օվկիանոսն է. այստեղից ջուրը գոլորշանալով մըտնում է ստորին ոլորտ, որտեղ վեր բարձրանալիս, ջրմասստիճանի անկման հետևանքով, գոլորշիները խտանում են, դառնում տեղումներ և թափվում են օվկիանոսի վրա՝ կազմելով խոնավության տեղական փոքր շրջանառություն:

Սակայն խոնավության մի մասը օդային հոսանքների հետ քնում է դեպի ցամաքի խորքը, թափվում է տեղումների ձևով և առաջացնում ցամաքային ջրեր, որոնց մասին արդեն խոսվել է:

Գոլորշացում ասելով հասկանում ենք ֆիզիկական այն երևույթը, երբ ջուրը հեղուկ ագրեգատային վիճակից անցնում է գազայինի: Գոլորշացում տեղի է ունենում նաև բույսերից (տրանսպիրացիա): Հաճախ տեղումների 20—40 % -ը նորից մթնոլորտ է անցնում տրանսպիրացիայի միջոցով:

Գոլորշացում կարող է տեղի ունենալ ջրի առկայությամբ: Կան շատ չոր անապատներ, որտեղ ջուր չլինելու պատճառով գոլորշացումը գրեթե բացակայում է: Օդերևութաբանության մեջ ընդունված է ու գործածական «գոլորշունակություն» տերմինը, որի տակ հասկանում են գոլորշացման ունակությունը ջրի առկայության պայմաններում: Ակներև է, որ անապատային շրջաններում գոլորշունակությունը շատ մեծ է, տարեկան կարող է գոլորշանալ 2000—3000 մմ և ավելի ջրի շերտ (Սահարայում՝ մինչև 4500 մմ): Յուրաքանչյուր տարի Երկրագնդի մակերևույթից գոլորշանում է 520 հազ. կմ<sup>3</sup> ջուր, որը կազմում է 1020 մմ մի շերտ, ընդ որում օվկիանոսից ավելի շատ է գոլորշանում, քան ցամաքից: Որքան օդի ջրմասստիճանը բարձրանում է, այնքան օդը շատ գոլորշիներ է ընդունում:

Օդի խոնավությունն արտահայտելու համար կան հետևյալ բնութագրիչները.

1. Բացարձակ խոնավությունը՝ (e) 1 մ<sup>3</sup> օդի մեջ պարունակվող ջրային գոլորշիների քանակն է՝ արտահայտած գրամներով կամ առաձգականությամբ (սնդիկի սյան ճնշմամբ՝ մմ կամ մբ):

2. Տեսակարար խոնավությունը (S), 1 գ կամ կգ խոնավ օդում գտնվող ջրային գոլորշիների քանակը՝ արտահայտված գրամներով:

3. Հագեցման առաձգականությունը (E) խոնավության այն քանակն է, որ անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար, նույն միավորներով արտահայտած, ինչ բացարձակ խոնավությունը:

4. Հարաբերական խոնավությունը (r) օդի բացարձակ խոնավության հարաբերությունն է հագեցման առաձգականությանը՝ արտահայտած տոկոսներով

$$r = \frac{e}{E} 100 \%$$

5. Խոնավության պակասորդը՝ (d), օդի հագեցման առաձգականության և բացարձակ խոնավության տարբերությունն է

$$d = E - e$$

6. Ցողի կետը՝ (T) այն ջերմաստիճանն է, որի դեպքում օդում եղած ջրային գոլորշիները հագեցնում են օդը:

Ինչպես կլիմայական մյուս գործոնները, այնպես էլ խոնավությունն ունի զոնայական բաշխում: Առավելագույն խոնավություն դիտվում է հասարակածային խոնավ անտառների զոնայում. այստեղ հարաբերական խոնավությունը մըշտապես բարձր է: Մերձարևադարձային և արևադարձային գոտիներում այն պակասում է, որոշ շոր անապատներում հասնում է նվազագույնի՝ 5—10—15 %-ի: Այնուհետև՝ բարեխառն երկրներում ավելանում է, մերձբևեռային շրջաններում հասնում է առավելագույնի: Սակայն դա չի նշանակում, որ խոնավությունն այստեղ շատ առատ է: Բանն այն է, որ ցածր ջերմաստիճանի պատճառով ամենաշնչին քանակի բացարձակ խոնավությունը կարող է հագեցնել օդը:

Բացարձակ խոնավությունն ամենից բարձր է հասարակածային խոնավ անտառներում, դեպի բևեռները այն աստիճանաբար պակասում է: Չնայած անապատներում հարաբերական խոնավությունը փոքր մեծություն ունի, սակայն բացարձակ խոնավությունն ավելի մեծ արժեք ունի, քան մերձբևեռային երկրներում, որտեղ հարաբերական խոնավությունը մեծ է: Դա ամբողջովին կախված է օդի ջերմաստիճանից:

Օդի բացարձակ խոնավության օրական ու տարեկան ըն-

թացքը համապատասխանում է օդի շերմատիճանների ընթացքին. ցերեկը և ամռանը՝ բարձր, գիշերը և ձմռանը՝ ցածր. Հարաբերական խոնավությունն ունի հակառակ ընթացքը՝ ամռանը և ցերեկը այն ցածր է, ձմռանը և գիշերը՝ բարձր (շերմատիճանի ցածր լինելու պատճառով՝ անգամ քիչ քանակի՝ գոլորշիները կհագեցնեն օդը):

Այն երևույթը, երբ գոլորշիները վերածվում են կաթիլների, կոչվում է խտացում (կոնդենսացիա), իսկ երբ վերածվում են սառցի (ձյուն, կարկուտ)՝ սուբլիմում (սուբլիմացիա): Գոլորշիների խտացման համար անհրաժեշտ է երկու բան՝ շերմատիճանի իջեցում մինչև ցողի կետի հասնելը և խտացման միջուկներ կամ կորիզներ (օդազուլեր, փոշի), որոնց շուրջը ձևավորվում են կաթիլները: Գոլորշիների խտացման ամենատարածված եղանակը օդային զանգվածների վերընթաց շարժումն է, որի ընթացքում օդը, երկրի մակերևույթից վեր բարձրանալիս, ընդարձակման պատճառով պաղում է, և խտացման մակարդակին հասնելու դեպքում գոլորշիները խտանում են: Ցողի կետի վիճակը կարող է ստեղծվել ոչ միայն ստորին ոլորտի վերին շերտերում, այլև երկրի մակերևույթին, երբ գիշերը ճառագայթարձակման հետևանքով գետինը պաղում է: Այս դեպքում առաջանում է ցող, եղյամ, ճենճառ: Ծթն խոնավությունը խտանում է օդի գետնամերձ շերտում, առաջանում է մառախուղ (ցրտեցման և գոլորշացման տարբերակներով):

Ջրային գոլորշիները ստորին ոլորտում որոշ բարձրություն վրա խտանալով առաջացնում են ամպեր: Սրանք կարող են կազմված լինել ջրի կաթիլներից կամ սառցի բյուրեղիկներից, կարող են լինել նաև խառը: Ամպերը բաժանվում են հարկերի՝ ստորին՝ մինչև 2 կմ բարձրությունը, միջին՝ մինչև 2—6 կմ և վերին՝ 6 կմ-ից բարձր:

Ամպերը դասակարգվում են ըստ բարձրության և արտաքին տեսքի: Ըստ բարձրության բաժանվում են չորս ընտանիքի, սրանք էլ 10 դասի:

Առաջին ընտանիք՝ վերին հարկ (6000 մ-ից բարձր)

1. Փետրավոր— Cirrus (Ci) կազմված են սառցե բյուրեղներից, երկրնակամարը ծածկում են պիտակ, բարակ շերտով, ունեն թելային կառուցվածք, տեղումներ չեն տալիս:

2. Փետրա-կույտավոր—Cirrocumulus (Cc) կազմված են սառցե բյուրեղներից. սպիտակ բարակ շերտով կամ թմբային ամպեր են, տեղումներ չեն տալիս:
3. Փետրա-շերտավոր—Cirrostratus (Cs) բարակ, սպիտակաշերտ ամպեր են, տեղումները գետնին չեն հասնում:

Երկրորդ ընտանիք՝ միջին հարկ (2000—6000 մ)

4. Բարձր կույտավոր—Alto cumulus (Ac) կազմված են մանր կաթիլներից, սպիտակ, երբեմն մոխրագույն, ալիքավոր, կույտավոր, թմբավոր ամպեր են:
5. Բարձր շերտավոր—Altostratus (As) կազմված են փաթիլներից ու մանր կաթիլներից: Արեգակն ու Լուսինը երևում են, սրանք ծածկում են ամբողջ երկնակամարը, ամռանը անձրևը գետնին չի հասնում, ձմռանը թույլ ձյուն է գալիս:

Յրրորդ ընտանիք՝ ստորին հարկ (2000 մ-ից պակաս)

6. Շերտա-կույտավոր—Stratocumulus (Sc) կազմված են միևնույն չափի կաթիլներից, առաջացնում են մոխրագույն շերտեր և թմբեր, սովորաբար տեղումներ չեն լինում:
7. Շերտավոր—Stratus (St) միատարր մոխրագույն շերտ է առաջացնում, նման է մառախուղի. ծածկում է երկնակամարը, կարող է թույլ անձրև կամ ձյուն տեղալ:
8. Շերտա-անձրևաբեր—Nimbostratus (Ns) կազմված է ներքևում խոշոր, իսկ վերևում մանր կաթիլներից. մուգ մոխրագույն շերտ է առաջացնում, լինում են համամաղ տեղումներ:

Չորրորդ ընտանիք՝ ուղղաձիգ զարգացման ամպեր

9. Կույտավոր—Cumulus (Cu) կազմված են կաթիլներից. կայուն համակարգ է առանց տեղումների: Խիստ բարձր ամպեր են՝ կույտավոր ու գմբեթավոր դազաթներիով սովորաբար տեղումներ չեն տալիս:
10. Կույտա-անձրևաբեր Cumulonimbus (Cb) առաջացնում են խիտ կույտեր, ներքևում կազմված են կաթիլներից, վերևում՝ սառցե բյուրեղներից. տալիս

են առատ տեղումներ, կարկուտ, ուղեկցվում են ամպրոպներով:

Երկնակամարի ամպամածությունը արտահայտվում է բա-  
երով (10-բալյան համակարգ): 1 բալը համապատասխա-  
նում է երկնակամարի 10 %-ին: Երբ երկնակամարը լրիվ ամ-  
պամած է, ամպամածությունը 10 բալ է: Երկրագնդի համար-  
միջին ամպամածությունը 5,4 բալ է: Ամենամպամած վայ-  
րերն են Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների հյուսիսային  
մասերը, իսկ ամենափոքր ամպամածությունը բնորոշ է անա-  
պատներին: Ամպամածության ուսումնասիրությունը և նրա  
կանխատեսումը գործնական մեծ նշանակություն ունի:

Մթնոլորտային տեղումներ են կոչվում մթնոլորտից ըս-  
տացված հեղուկ կամ պինդ ագրեգատային վիճակների պատ-  
կանող ջրերը: Դրանք լինում են հորիզոնական (ցող, եղյամ,  
ճենճառ) և ուղղաձիգ (անձրև, կարկուտ, ձյուն, բանջարբու-  
սուկ): Մթնոլորտային տեղումները դասակարգում են ըստ  
արտաքին ձևի և ըստ ծագման: Ըստ արտաքին ձևի լինում են.

1. Մանրամաղ անձրև՝ մանր կաթիլներից է՝ կազմված  
(0,25 մմ) և համասեռ տեղումներ են:

2. Անձրև՝ կազմված է 0,25 մմ-ից ավելի մեծ կաթիլներից,  
գալիս է շերտա-անձրևային, կույտաանձրևային ամպերից:

3. Ձյուն՝ թափվում է փաթիլների ձևով:

4. Թաց ձյուն՝ ձյան ու անձրևի խառնուրդ է:

5. Բանջարբուսուկ՝ առաջանում է գերպաղած ջրի կա-  
թիլների պնդանալու կամ ձյան հատիկավորվելու հետևանքով:

6. Կարկուտ՝ շերտային կառուցվածք ունեցող սառցային  
գունդ է 1—25 մմ, երբեմն ավելի մեծ. առաջանում է կույտա-  
անձրևաբեր ամպերից՝ մեծ բարձրություններում՝ օդի ուժեղ  
վերընթաց հոսանքի դեպքում:

Մագման տեսակետից տեղումները լինում են՝

1. Համամաղ. տևական տեղումներ են և կապված են մթ-  
նոլորտային ճակատների հետ:

2. Հորդառատ կամ տարափային տեղումներ. հատուկ են  
անկայուն ջերմաշերտավորում ունեցող օդային զանգվածնե-  
րին և մթնոլորտային ցուրտ ճակատներին: Այս տեղումներն  
ունեն մեծ ինտենսիվություն ու կարճատև են, հաճախ ուղե-  
կցվում են ամպրոպներով:

3. Մանրամաղ անձրև կամ ձմռանը՝ սառցային բյուրեղներ, Սրանք թափվում են կայուն ջերմաշերտավորման օդային զանգվածների շրջադասական (ինվերսիոն) շերտի սահմաններում առաջացած խիտ շերտավոր և շերտակույտավոր ամպերից: Զանազանում են նաև ներզանգվածային և ճարձատային տեղումներ:

Պետք է նշել, որ ծովային կլիմայի պայմաններում հիմնականում շատ են մանրամաղ, համամաղ տեղումները: Օրեր շարունակ երկնակամարը ամպամած է, և անձրև է մաղում: Չոր ցամաքային երկրներին հատուկ են տեղատարափ անձրևները: Եղել են դեպքեր, երբ դրանց ինտենսիվությունը հասել է 10—15 մմ/րոպե և ավելի: Հայկական ՍՍՀ-ում դիտվել են մինչև 6 մմ/րոպե, Ադրբեջանական ՍՍՀ-ում մինչև 9 մմ/րոպե և այլն: Մեծ ինտենսիվությամբ աչքի են ընկնում նաև արևադարձային զենիթային անձրևները: Սրանք թափվում են հիմնականում կեսօրից հետո, երբ օդի վերընթաց շարժումները հասնում են առավելագույնի: Ընդհանրապես տեղումներ ավելի շատ լինում են օրվա երկրորդ կեսին:

Քարտեզի վրա այն գծերը, որոնք միացնում են նույն քանակն ունեցող տեղումների վայրերը, կոչվում են իզոգիետներ (հավասարատեղումներ) իզոգիետների քարտեզը պարզ պատկերացում է տալիս մթնոլորտային տեղումների տարածական բաշխման մասին: Աշխարհում ամենից շատ տեղումներ գալիս են Հնդկաստանի Զիրապունջա կայանում (Բրահմապուդրա գետի ավազանում), Աֆրիկայի Կամերուն լեռան վրա, Հավայան կղզիներում (տարեկան 10—11 հազ մմ):

Ամենից քիչ տեղումներ ունեն՝ Ատակամա, Սահարա, Արաբական, Նեֆուզ, Վիկտորիա և այլ անապատներ (տարեկան 50 մմ-ից պակաս): ՍՍՀՄ-ում ամենից առատ տեղումներ գալիս են Աջարական ԻՍՍՀ-ի Սև ծով ուղղված լեռնալանջերում (տարեկան 2500—3000 մմ), ամենից քիչ՝ Կարակում անապատում (80 մմ-ից պակաս):

Տեղումների բաշխումը ըստ սեզոնների տարբեր երկրներում տարբեր է: Հասարակածային խոնավ անտառներում մթնոլորտային տեղումները հավասարաչափ են, որովհետև այստեղ միշտ օդային զանգվածները վերընթաց շարժում ունեն: Սավաննաների զոնայում տեղումների առավելագույն քանակը

ամուսնն է, ձմռանը տիրապետում են շոր օդային զանգվածները (ցամաքային պասսատները), տեղումներ չկան:

Ինչպես արևադարձային, այնպես էլ մերձարևադարձային ու բարեխառն գոտիների սահմաններում մթնոլորտային տեղումները հաճախ տեղատարափ անձրևների բնույթ ունեն և կարճատև են: Միջերկրական ծովի ավազանում տեղումները հիմնականում թափվում են ձմռանը, ամռանը գրեթե չեն գալիս: Առատ տեղումներ են թափվում ցամաքի մուսսոնային կլիմա ունեցող երկրներում՝ Հնդկաստանում, Արևելյան Զինաստանում, Հնդկաչինում, Բրազիլական բարձրավանդակի հարավում, ԱՄՆ-ի հարավ-արևելյան մասում: Ամռանը ծովից փչող օդային զանգվածները, անցնելով ցամաքի վրայով, տալիս են առատ տեղումներ:

Տեղումները առատ են հատկապես, երբ ծովից եկող օդային զանգվածները բարձրանում են լեռնալանջերն ի վեր (օրինակ՝ Հիմալայան լեռներում, Կորդիլիերներում, Մեծ Կովկասի սևծովյան լանջերին, Ճապոնիայում, Հավայան կղզիներում և այլն):

Բարեխառն գոտում մթնոլորտային տեղումները կազմում են 500—800 մմ, սակայն բարենպաստ ռելիեֆային պայմաններում կարող են հասնել 2000—3000 մմ-ի: Մերձբևեռային երկրներում տեղումների քանակը նորից պակասում է մինչև 200—400 մմ:

Բարեխառն ու ցուրտ երկրներում ձմեռային ամիսներին տեղումները գալիս են ձյան տեսքով, և առաջանում է կայուն ձնածածկույթ: Ձյուն է գալիս նաև տաք գոտու բարձր լեռնային շրջաններում: Կան շատ երկրներ, որտեղ լեռներում ձյունը պահպանվում է նույնիսկ կլոր տարին, առաջանում են սառցադաշտեր: Որքան մոտ բևեռներին, այնքան ձնածածկույթի հաստությունն ու տևողությունը մեծանում է: Օրինակ՝ Քայմիր թերակղզում երկրի մակերևույթը ձյան ծածկույթից ազատ է մնում ընդամենը 2—3 ամիս: Շատ տեղերում ձյունը կուտակվում է և առաջացնում է ծածկութային սառցադաշտեր (Շպիցբերգեն, Գրենլանդիա, Անտարկտիդա):

Երկրագեղի կլիմաների ձևավորման մեջ վճռական դեր ունեն վերը քննարկված ջերմությունն ու խոնավությունը: Այս երկու տարրերը հանդես են գալիս տարբեր փոխհարաբերու-

թյամբ: Կան վայրեր, որտեղ  $u'$  ջերմությունն է առատ, և՛ խոնավությունը. այլ տեղերում ջերմությունն առատ է, խոնավությունը՝ պակասորդային (անապատներ). մեկ ուրիշ տեղ՝ խոնավությունն է առատ, բայց ջերմությունը պակասորդային է (տունդրա):

Ջրա-ջերմային փոխհարաբերությունների արտահայտման մի քանի եղանակներ ու բանաձևեր կան, որոնցից առավել մեծ գործածություն ունեն երկուսը՝

1. Խոնավացման գործակիցը, որը մթնոլորտային տեղում-ների քանակի ( $X$ ) և գոլորշունակության ( $Z$ ) հարաբերությունն

$$է՝ K = \frac{X}{Z}$$

Եթե  $K$ -ն 1-ից մեծ է, նշանակում է վայրը խոնավությամբ ապահովված է, լրացուցիչ խոնավության կարիք չկա: Օրինակ տունդրայում տեղումների քանակը 400 մմ է, իսկ գոլորշացման ունակությունը՝ 200 մմ,  $K = \frac{400}{200} = 2$ : Չոր երկրներում,

ինչպես օրինակ Արարատյան դաշտում, տեղումների քանակը 250—300 մմ է, մինչդեռ գոլորշունակությունը 1000 մմ-ից ավել,  $K = 0,3$  և պակաս: Այդպիսի շրջանները արհեստական ոռոգման կարիք ունեն:

2. Չորության ինդեքսը՝  $\frac{R}{L\Gamma}$ , որտեղ  $R$ -ը տարվա ճառագայթային հաշվեկշիռն է,  $L$ -ը գոլորշացման թաքնված ջերմությունը,  $\Gamma$ -ը տեղումների քանակը: Ցուրտ գոտուց հարավ ինդեքսը մեծանում է. տունդրայում՝ 0,3, անտառային գոնայում՝ 0,3—1,1, տափաստաններում՝ 1,1—2,3, կիսաանապատներում՝ 2,3—3,4, իսկ եթե ինդեքսը 3,4-ից մեծ է, երկիրն անապատային է:

Արդեն նշվել է, որ ստորին ոլորտում օդը գտնվում է անքնդհատ շարժման մեջ: Օդի շրջանառական պրոցեսները կբըննարկվեն հաջորդ գլխում: Այդ պրոցեսներում կարևոր դեր են խաղում օդային զանգվածները:

Օդային զանգված է կոչվում ընդարձակ տարածքի վրա միատարր ջրա-ջերմային հատկանիշներով օժտված օդը: Ստորին ոլորտում առանձնացվում են շորս հիմնական օդային

զանգվածներ, որոնցից յուրաքանչյուրն ունի երկու տարբերակ՝ ծովային և ցամաքային: Այդ օդային զանգվածներն են՝

1. Արկտիկական (հարավային կիսագնդում՝ անտարկտիկական). կազմավորվում են Արկտիկայում կամ Անտարկտիկայում, օժտված են ցածր ջերմաստիճաններով, մեծ հարաբերական խոնավությամբ, ստեղծում են սառնամանիքային եղանակներ: Ձմռանը ներխուժելով Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի հյուսիսային մասերը գրավում են ընդարձակ տարածություններ: Մովային և ցամաքային տարատեսակները իրարից քիչ են տարբերվում: Ձմռանը ՍՍՀՄ-ում գերակշռող զանգվածներն են:

2. Բարեխառն լայնությունների օդային զանգվածներ. գրական հին աղբյուրներում սրանց անվանում էին նաև բևեռային կամ բորեալ: Ձմեռը մեղմ է, ամառը՝ ոչ շատ տաք, խոնավությունը՝ բավարար: Տարբերությունը ծովային և ցամաքային տարատեսակների մեջ մեծ է: Մովային տարատեսակը ձևավորվում է օվկիանոսի վրա և շարժվելով դեպի ցամաք, տալիս է առատ տեղումներ: Ցամաքային տարատեսակը համեմատաբար չոր է: ՍՍՀՄ-ում այս օդային զանգվածներն ունեն մամենամեծ կրկնելիությունը:

3. Արևադարձային. ձևավորվում են արևադարձային լայնություններում: Ցամաքային տարատեսակը շատ չոր է, ունի բարձր ջերմաստիճաններ, աննշան խոնավություն, որի պատճառով ձևավորվում են անապատներ: Մովային տարատեսակը անցնելով օվկիանոսի վրայով հարստանում է խոնավությամբ և տեղափոխվելով ցամաքի վրա տալիս է առատ տեղումներ: (Թրազիլական բարձրավանդակի եզրային մասերը):

4. Հասարակածային. ձևավորվում է հասարակածային զոնայում և նրան հարակից լայնություններում: Զերմաստիճանը միշտ բարձր է՝ 23—30°, խոնավությունն՝ առատ: Մովային և ցամաքային տարատեսակները գրեթե նույնն են:

Վերը նշված օդային զանգվածների շորս տիպերից առաջին երեքը ՍՍՀՄ տարածքում ունեն մեծ զարգացում:

Օդային զանգվածներն իրենց առաջացման տեղում չեն մնում: Նրանք տարածվում են այս ու այն կողմ: Շարժման ընթացքում հաճախ փոխում են իրենց հատկանիշները և վերածվում այլ օդային զանգվածի: Նման երևույթին անվանում

են փոխաձևութուն (տրանսֆորմացիա): Օրինակ, Հայկական լեռնաշխարհում բարեխառն լայնութունների օդային զանգվածները փոխաձևվելով ձմռանը վերածվում են արկտիկականի, իսկ ամռանը՝ արևադարձայինի:

Երկու օդային զանգվածների սահմանը կամ անջատման գիծը կոչվում է ճակատ: Իրականում այն գիծ չէ, այլ թեք հարթութուն, երբեմն այդ հարթութունը տարածվում է մինչև ստորին ոլորտի վերին սահմանը և կարող է ունենալ մի քանի հարյուր կիլոմետր լայնութուն:

Ճակատի գիծը քարտեզի վրա ուղիղ չէ. այն առաջացնում է գիգզագներ ու լեզվակներ, որոնցում էլ ձևավորվում են ցիկլոններն ու անտիցիկլոնները (վերջիններս կուսումնասիրվեն շրջանառական պրոցեսների բաժնում):

Երկրագնդի վրա յուրաքանչյուր վայր ժամանակի որևէ կարճ հատվածում (օր, ժամ) ունի օդերևութաբանական տարրերի որոշ կոմբինացիա-զուգակցութուն: Մի տեղ անձրև է գալիս, մյուսում՝ արևոտ եղանակ է, մեկ այլ վայրում մրրիկն է մոլեգնում: Մթնոլորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակը տվյալ վայրում ժամանակի որոշ պահին կոչվում է եղանակ: Մարդն ապրում է աշխարհագրական թաղանթում, մթնոլորտի մեջ, ուստի նրա տնտեսական գործունեությունը շատ դեպքերում պայմանավորված է եղանակով (ցանքը, բերքահավաքը, օդային հաղորդակցությունը, նավարկությունը և այլն): Կանխագուշակելով սպասվելիք եղանակը՝ հնարավորություն է ստեղծվում վնասագերծել տարերային աղետները (կարկուտը, ցրտահարությունները):

Տեղի եղանակի երկարամյա վարքը (ռեժիմը) կլիման է:

Կլիման ձևավորվում է մի շարք գործոնների համագործակցությամբ, որոնցից հիմնականներն են՝ ճառագայթային հաշվեկշիռը, մթնոլորտի շրջանառությունը և երկրի մակերևւղութի բնույթը: Տարբեր երկրներում կլիմայագոյացնող գործոնները տարբեր համադրություններ են ստեղծում, ուստի և տարբեր կլիմաներ: Աշխարհում կլիմաները շատ տարբեր են: Ամենից հայտնի են կլիմայագետներ Վ. Պ. Կյոպպենի, Լ. Ս. Բերգի և Բ. Պ. Ալխսովի դասակարգումները: Վ. Կյոպպենը առանձնացնում է կլիմայական հինգ գոտիներ՝

A-շոգ, B-չոր, C-բարեխառն-տաք, D-ն քարեխառն-ցուրտ,

Ե-ցուրտ: Գոտիների սահմաններում առանձնացնում է 11 տիպ՝ դրանք են՝

1. Af-խոնավ արևադարձային անտառների
2. Aw-սավաննաների
3. Bs-տափաստանների
4. Bw-անապատների,
5. Cs-միջերկրածովային
6. Cw-չինական
7. Cf-բարեխառն-տաք, խոնավ
8. Dw-անդրբայկալյան
9. Df-ցուրտ-խոնավ ձմեռներով
10. ET-տունդրայի
11. EF-ձյան

Զարգացնելով Կյոպպենի դրույթները՝ Լ. Ս. Բերգը նրա դասակարգմանը տվեց ավելի աշխարհագրական բնույթ, որտեղ հաշվի են առնված ռելիեֆի, հողաբուսական ծածկույթի կապը կլիմայի հետ, սրանք դիտվում են որպես մեկ ամբողջություն: Լ. Բերգը առանձնացրեց կլիմայական 11 զոնաներ՝ տունդրայի, տայգայի, բարեխառն զոնայի լայնատերև անտառների, բարեխառն զոնայի մուսոնների, տափաստանների, արտաարևադարձային անապատների, միջերկրածովային, մերձարևադարձային անտառների, արևադարձային անապատների, սավաննաների, խոնավ արևադարձային անտառների: Լեռներում, բացի վերը նշված զոնաներից, առանձնացվում է կլիմայի 12-րդ տիպը՝ հավերժական սառնամանիքի կլիման:

Վ. Պ. Կյոպպենի և Լ. Ս. Բերգի դասակարգումներում հիմք են ընդունված կլիմաների արտաքին հատկանիշները: Նրանց ծագման հարցերը մնում են ստվերում: Ահա հաշվի առնելով այս հանգամանքը Բ. Պ. Ալիսովը առաջարկեց կլիմաների իր դասակարգումը, որը հիմնված էր կլիմաների ձևավորման, ծագումնաբանական սկզբունքի վրա: Այստեղ հիմնական գործոնը դարձավ օդային զանգվածների տիպը և դրանց շրջանառությունը:

Յուրաքանչյուր կիսագնդում նա առանձնացնում է յոթ կլիմայական գոտի՝ շորս հիմնական՝ հասարակածային, արևադարձային, բարեխառն և արկտիկական (անտարկտիկական)

և երեք միջանկյալ՝ մերձհասարակածային, մերձարևադարձային և մերձարկտիկական (մերձանտարկտիկական): Հիմնական գոտիներն ունեն իրենց հատուկ օդային զանգվածները, և շուրջ տարի այդ օդային զանգվածներն են ձևավորում կլիման: Միջանկյալ գոտիներում (որոնք ունեն «մերձ» նախածանցը) տարվա ցուրտ և տաք կեսերում տիրապետում են մեկ հարավային, մեկ հյուսիսային՝ հարևան գոտու օդային զանգվածները: Նշված գոտիների կլիմաների մանրամասն նկարագրությունը տրվում է կլիմայագիտական դասընթացում:

Մթնոլորտի և գետնի մակերևույթի փոխազդեցության ոլորտում ձևավորվում են նաև մանրակլիմաները (միկրոկլիմաները): Մանրակլիման տեղանքի փոքր հատվածի վրա տեղական առանձնահատկությունների հանրագումարն է: Օրինակ՝ ձորակի մանրակլիման տարբերվում է շրջապատի կլիմայից՝ այստեղ քամիները թույլ են, ջերմաստիճանը բարձր է: Պուրակի մանրակլիման զգալիորեն տարբեր է նրա շուրջը տարածվող տափաստանի կլիմայից և այլն:

Մանրակլիմայական պայմանները կարևոր գործոն են քաղաքաշինության, արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման գործում: Օրինակ, հաշվի առնելով քամիների ուղղությունը՝ գործարանը պետք է կառուցել այնտեղ, որտեղից ծուխը բնակելի թաղամասերին չի հասնի:

Մարդը, իր աշխատանքային գործունեության ընթացքում, կլիման պետք է օգտագործի լավագույն ձևով: Կլիմայական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը մեր ժամանակի ամենակարևոր պրոբլեմներից մեկն է:

Մարդը ոչ միայն պասիվ ձևով է օգտվում կլիմայական պայմաններից, հարմարվում է դրանց, այլև ակտիվ կերպով ներգործում է նրա վրա. մանրակլիման փոխում է ցանկալի ուղղությամբ: Ծահիճների շորացումը, անապատների ոռոգումը, անտառային զանգվածների ստեղծումը, պայթարը կարկտահարության դեմ, արհեստական ջրամբարների ստեղծումը և այլն զգալի կերպով փոխում են տվյալ վայրի ջրաջերմային պայմանները:

Միաժամանակ պետք է նշենք, որ գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց տեղի է ունենում մթնոլորտի, օդային զանգվածների աղտոտում: Գործարանների ծուխն ու վնա-

սակար գազերը, ավտոմեքենաների արտազատումները շատ վայրերում թունավորում են մթնոլորտն այն աստիճան, որ այնտեղ ապրելը դառնում է վտանգավոր: Խոշոր քաղաքներում նկատվում է թունավոր սմոգ՝ ծխի ու գազերի այնպիսի խառնուրդ, որը խիստ վնասակար է մարդու առողջությանը:

Ժամանակակից գիտությունը մշակել է անթափոն արդյունաբերություն ստեղծելու սկզբունքներն ու մեթոդները, և այժմ քաղաքակիրթ շատ երկրներում պայքար է տարվում օդային ավազանը մաքուր պահելու ուղղությամբ: Մի ժամանակ Մոսկվան տառապում էր գործարանների ծխից. այժմ դարձել է աշխարհի ամենամաքուր քաղաքներից մեկը:

## ԿԵՆՍՈՒՈՐՏ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսոլորտ է կոչվում Երկրագնդի այն ոլորտը կամ թաղանթը, որտեղ օրգանիզմներ են ապրում: Կենսոլորտ (բիոսֆերա) տերմինը առաջարկել է երկրաբան է. Ջյուսը 1875 թվականին, իսկ կենսոլորտի ուսմունքը ստեղծել է Վ. Ի. Վերնադսկին (1967) XX դարի 1920—30-ական թվականներին:

է. Ջյուսի պատկերացմամբ կենսոլորտը վերաբերում է միայն օրգանիզմներին: Ակադ. Վ. Ի. Վերնադսկին, զարգացնելով Վ. Վ. Դոկուչաևի գաղափարները, կենսոլորտին տվեց շատ ավելի խոր իմաստ, կենսոլորտ ասելով՝ նա հասկանում էր ոչ միայն կենդանի օրգանիզմները, այլև նրանց բնակության միջավայրը:

Կենսոլորտը ընդգրկում է քարոլորտի վերին շերտը, ջրոլորտը՝ ամբողջությամբ և մթնոլորտը՝ մինչև օզոնի շերտը (20—30 կմ): Որքան երկրի մակերևույթից հեռանում ենք (թե վեր, թե վար), այնքան օրգանիզմների թիվը պակասում է: Կենսոլորտում կենսական նյութի զանգվածը կազմում է  $1,4 \cdot 10^{12}$  տոննա, տարեկան աճը՝  $2,3 \cdot 10^{11}$  տ և վերջին 1 մլրդ տարվա ընթացքում ստեղծվել է  $2 \cdot 10^{20}$  տ, այսինքն՝ երկրի կեղևից 10 անգամ մեծ զանգված:

Կենսոլորտը Երկրագնդի վրա համամոլորակային, անընդմեջ է, որը մերձբևեռային լայնություններում ու շոր անպատեններում շատ ընկճված է, օրգանիզմների քանակը շատ չէ,

իսկ մնացած զոնաներում հազեցնում է միջավայրը: Նույնիսկ Անտարկտիդայի կենտրոնական մասերում, որտեղ կլիմայական պայմանները խիստ անբարենպաստ են, այնուամենայնիվ մանր օրգանիզմներ են հանդիպում, իսկ ամենաբարձր լեռներում, ձյան մակերևույթին ու խորքում ապրում են բակտերիաներ: Արագածի կատարից վերցրած ապարի 1 գ-ի մնջ տասնյակ հազարավոր մանրօրգանիզմներ են հայտնաբերվել: Կենսոլորտը մանրօրգանիզմների թագավորություն է. դրանք հասարակ աչքով չեն երևում, բայց ամենուրեք կան, իսկ բարենպաստ պայմաններում հողի մեջ 1 սմ<sup>3</sup>-ում հաշվվում են միլիարդներով:

Նրկրազնդի վրա օրգանիզմները ունեն զարգացման համար օպտիմալ պայմաններ: Նրանք 0—40° ջերմաստիճաններում շատ լավ աճում են ու զարգանում, բայց ապրում են նաև շատ բարձր ու շատ ցածր ջերմաստիճաններում: Այսպես, մի շարք բակտերիաների բեղմնիկներ (սպորներ) կարող են դիմանալ մինչև —253°, ալլ բեղմնիկներ եռացնելու դեպքում կենսունակությունը չեն կորցնում և դիմանում են 140°-ի տակ: Նրանք դիմանում են նաև ճնշման մեծ տարբերությունների՝ սկսած մեկ հազարերորդական միլիբար ճնշումից մինչև 10 մթն. ճնշումը, իսկ ծովային կենդանիների մեջ կան այնպիսիները (օրինակ՝ կետերը), որոնք մեկ ժամվա ընթացքում կարող են իջնել մինչև 1000 մ խորությունները, որտեղ ճնշումը 100 մթն. է: Ֆիլիպինյան անդունդից դուրս բերած գետնահողի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ բակտերիաներ, որոնք դիմանում են 1000 մթն. ճնշման տարբերությունների:

Կենսոլորտը լայն փոխհարաբերություններ ունի մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի հետ: Նրկրազնդի վրա չկա որևէ արտածին պրոցես, երևույթ, որին օրգանիզմները մասնակցություն չունենան: Հողագոյացումը, հողմահարումը, նստվածքագոյացումը, միներալների սինթեզը կատարվում է օրգանիզմների ու օրգանական նյութի ակտիվ մասնակցությամբ: Լեռնային երկրներում կան կրաքարեր, դիատոմիտներ, ուղիւյարներ մնացորդներ, հասպիսներ, կորալների պատյանների մնացորդներ, քարածուխ, նավթ, այրվող թերթաքարեր և ալլ գոյացություններ, որոնք օրգանիզմների կուտակման

արգասիք են: «Կյանքը,—գրում է Վ. Ի. Վերնադսկին,—իրենից ներկայացնում է Երկրի մակերևույթի վրա ոչ թե արտաքին, պատահական երևույթ, այլ այն սերտորեն կապված է Երկրի կեղևի կառուցվածքի հետ, մտնում է և նրա մեխանիզմի մեջ և այդ մեխանիզմով կատարում է մեծագույն կարևորության ֆունկցիաներ»<sup>1</sup>:

Օրգանիզմների դերը Երկրի կեղևի ու ջրոլորտի հորինվածքում ակնհայտ դարձավ հատկապես մանրադիտակի գյուտից հետո (17-րդ դարի վերջ): Ահա երեք հարյուրամյակ է մանրէակենսաբանությունը զարգանում է և մեծ ծառայություն է մատուցել կենսոլորտի ճանաչման գործին:

Բացառիկ է օրգանիզմների և օրգանական թթուների դերը լանդշաֆտային թաղանթում: Օրգանիզմները նախ և առաջ էներգիայի կուտակիչներ են: Գեոևս կարբոնի ժամանակաշրջանում քարածուխների մեջ կուտակված արեգակնային էներգիան այժմ մարդը լայն շափով օգտագործում է իր կարիքների համար:

Հատկապես արագ բազմացման հակում ունեն մանրօրգանիզմները: Օրինակ՝ դիատոմեան ութ ժամում կարող է ստեղծել այնպիսի զանգված, որպիսին Երկրագունդն է: Մեկ բակտերիան անարգել զարգանալու դեպքում 4—5 օրում կլցնեք համաշխարհային օվկիանոսը: Այդ պոտենցիալ հնարավորությունները երբեք չեն իրագործվում, այլապես Երկրագունդը վաղուց ոչնչացած կլիներ մանր օրգանիզմների հարձակումներից: Կենսոլորտի զարգացումն ունի իր օրինաչափությունները. շրջակա միջավայրը իր ազդեցությունն ունի, և օրգանիզմների զարգացումն ու բազմացումը կարգավորված բնույթի է: Բնությունը ինքնակարգավորման մի զարմանալի մեխանիզմով է օժտված: Բոլոր օրգանիզմները փոխալայմանավորված են միմյանցով, և ավելորդ ոչինչ չկա:

Օրգանիզմների կարևոր հատկանիշներից է սերտ փոխհարաբերությունը միջավայրի հետ և նյութափոխանակությունը: Յուրաքանչյուր օրգանիզմ կարողանում է նյութեր (քիմիական տարրեր) ընդունել, յուրացնել (ասիմիլացիա) և արտանետել (դիսիմիլացիա): Օրգանիզմն իր մարմինը կառուցում է միջա-

<sup>1</sup> В. Н. Вернадский, Биосфера, 1926, с. 27.

վայրից վերցրած նյութերով: Միջավայրի փոփոխության հետ փոխվում է նաև օրգանիզմի վարքագիծը, և այդ ընթացքում մի հիմնական միտում է նկատվում՝ զարգացում պարզից բարդը: Կենսոլորտի զարգացման սկզբնական փուլում տիրապետել են ցածրակարգ օրգանիզմները, միլիարդավոր տարիների էվոլյուցիայի շնորհիվ է միայն, որ առաջացել են բարձրակարգ կենդանիներ և դատողունակ մարդը:

Օրգանիզմը բազմացման մեխանիզմով է օժտված: Մեկած անհատները ժառանգում են ծնողների հատկանիշները: Կենսաբանական այս իներցիան կոչվում է ժառանգականություն: Մակայն օրգանիզմը բացի ժառանգականությունից օժտված է նաև փոփոխականությամբ՝ զարգացման ընթացքում ձգտում է նոր հատկանիշներ ձեռք բերել, հենց այդ նորն էլ էվոլյուցիայի խթան է:

Բնության մեջ գոյություն ունի օրգանիզմների բնական ընտրություն. միջավայրում դիմանում են այն անհատները, որոնք ավելի լավ կարող են հարմարվել միջավայրի փոփոխություններին, նվազ հարմարվածները ոչնչանում են: Մարդը դեռևս վաղուց է սովորել ջրկեղ օրգանիզմների՝ իրեն անհրաժեշտ հատկանիշները և օգտագործելով ժառանգականության ու փոխանակության օրինաչափությունները արհեստական ընտրություն է կատարել, որին անվանում են սելեկցիա:

Կենսոլորտի կազմի մեջ են մտնում հողը, բուսական և կենդանական օրգանիզմները, որոնք գտնվում են ցամաքի վրա կամ նրա ոչ մեծ խորություններում, օվկիանոսներում, ծովերում, մթնոլորտում: Քանի որ օրգանիզմները միջավայրի ծնունդն են, ապա ոչ օրգանական ծագում ունեցող միջավայրը ևս կենսոլորտի բաղադրիչն է դառնում, ուստի ծավալային իմաստով կենսոլորտն ու աշխարհագրական թաղանթը համընկնում են միմյանց:

## Հողը

Հողը յուրահատուկ բնապատմական գոյացություն է, որը ժամանակի ու տարածության մեջ անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Բնութագրվում է բերրիությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց: Դեռևս անհիշելի ժամանակներից մարդը օգտագործել է հողը և աստիճանաբար ճանաչել

է նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, սակայն գիտական հողագիտության հիմնադիրը համարվում է Վ. Վ. Դոկուչաևը (1846—1909): Նա հողը դիտում էր որպես մի շարք բնական գործոնների՝ կլիմայի, ռելիեֆի, երկրի հասակի, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեության փոխազդեցության արգասիք:

Հողը կազմված է երեք՝ պինդ, հեղուկ և գազային բաղադրիչներից, որոնք խորապես փոխթափանցված են: Հողի կազմում նախնական նյութը մայր ապարն է, որը մեծ փոփոխություններ կրելուց հետո՝ ի վերջո դառնում է հող: Մայր ապարը սկզբում ծածկվում է մանր օրգանիզմներով (բակտերիաներ, բորբոսասնկեր, ճառագայթասնկեր), որոնց կենսագործունեության հետևանքով արտանետված թթուները քայքայում են ապարը, հնարավորություն է ստեղծվում ավելի կատարյալ օրգանիզմների՝ քարաբոսների զարգացման համար: Հողագոյացման առաջին փուլում ֆիզիկական հողմահարման շնորհիվ ապարների միներալային մասնիկները միմյանցից անջատվում են. դրա հետևանքով ապարի հողի հետ շփման մակերեսը աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Ֆիզիկական ու կենսաքիմիական հողմահարման համատեղ ներք թուլությամբ զանգվածային ապարները ժամանակի ընթացքում վերածվում են մանր-մասնատված (դիսպերս) մասնիկներից կազմված մի զանգվածի, որտեղ մանր օրգանիզմների կենսագործունեությունը հասնում է առավելագույն չափերի: Նշենք, որ հողի մակերեսին մանր օրգանիզմների կենսագործունեությունը սահմանափակ է. Արեգակի ուղիղ, մասնավորապես ուլտրամանուշակագույն ճառագայթումը սպանիչ է նրանց համար, ուստի հողի ներքին շերտերում է, որ միկրոօրգանիզմներն ունեն բուռն աճ ու մեծ զանգված:

Հողի քիմիական կազմը շատ կարևոր է բույսերի համար, քանի որ նրանք անհրաժեշտ հանքային նյութերը վերցնում են հողից:

Մայր ապարներում այս կամ այն տոկոսային հարաբերություններ պարունակվում են՝  $\text{SiO}_2$ ,  $\text{Al}_2\text{O}_3$ ,  $\text{Fe}_2\text{O}_3$ ,  $\text{CaO}$ ,  $\text{MgO}$ ,  $\text{Na}_2\text{O}$ ,  $\text{K}_2\text{O}$ ,  $\text{P}_2\text{O}_5$  և շատ այլ օքսիդներ, որոնք մտնում են միներալների կազմի մեջ: Սակայն դրանք հրբեմն այնքան պինդ

բյուրեղաձևն ցանց են ստեղծում, որ ջրի մեջ շին լուծվում, հետևաբար և շին կարող օգտագործվել բույսերի կողմից: Հնարավոր է, օրինակ, որ  $K_2O$ -ի քանակը հողում լինի 1—3%, բայց բույսերը տառապեն կալիումի պակասից: Դա այն պատճառով, որ կալիումը մտնում է դժվարալուծ միներալների կազմի մեջ:

Ապարատեսակները իրենց կնիքն են դնում նրանց վրա ձևավորվող հողերի վրա: Այսպես, կրաքարերի վրա հողերը հարուստ են կալցիումով, սակայն շատ աղքատ՝ կալիումից, ֆոսֆորից, մինչդեռ մագմածին ապարների վրա ձևավորված հողերում այդ տարրերի քանակը բավարար է լինում:

Հողառաջացման պրոցեսում առաջնային միներալների քայքայման ժամանակ առաջանում են նոր՝ երկրորդական միներալներ, որոնց սինթեզի պրոցեսում մեծ է մանրօրգանիզմների դերը: Օրինակ, Հայկական ՍՍՀ հրաբխային բարձրավանդակում սինթեզվել են մոնտմորիլոնիտ, բեյդելիտ, ջրափայլարներ, օպալ, կալցիտ և այլն: Սրանք արտածին երևույթների արգասիք են:

Հողի կազմում գտնվում են նաև օրգանական միացություններ՝ ազոտ պարունակող միացություններ, ճարպեր, ածխաջրեր, սպիտակուցներ, ամինաթթուներ, դաբաղանյութեր և այլն: Սրանց քանակը հողում կարող է հասնել 15 %-ի: Օրգանական նյութերի մեծ մասը՝ 80—85 %-ը, մասնակցում է միացությունների մի հատուկ տեսակի առաջացմանը, որին անվանում են հումուս: Սրա հիմքը հումուսային թթուներն են՝ հումինային, կրենովյան, օպոկրենովյան և այլն:

Հողի մեջ ապրող մանրօրգանիզմները բաժանվում են երկու խմբի՝ օդակյաց (աէրոբ) և անօդակյաց (անաէրոբ): Առաջինները ապրում են թթվածնի առկայության պայմաններում, երկրորդները՝ բացակայության և շնչառության համար օգտագործում են շրջապատում քիմիական ռեակցիաներից անջատված թթվածինը: Օդակեցիկ պայմաններում մեռած բուսական ու կենդանական օրգանիզմների քայքայումը կատարվում է մինչև վերջ՝ առաջանում են հիդրատներ ու աղեր: Անօդակեցիկ պայմաններում քայքայումը կիսատ ու դանդաղ է, առաջանում է մեթան, ամիակ, ծծմբաջրածին, ածխաթթու

գազ: Երկաթը առաջացնում է ջրում լավ լուծվող ենթօքսիդ (FeO),

Մանրօրգանիզմների դերը շատ մեծ է հողում օդի ազոտը կլանելու-կապելու գործում: Ազոտ ֆիքսող բակտերիաները կարողանում են օդից ազոտը կլանել ու մասնակցել սպիտակուցների սինթեզին. այդ բակտերիաների շնորհիվ հողը հարստանում է ազոտով:

Հողի ամենակարևոր հատկանիշներից մեկը կլանողունակութունն է, որի շնորհիվ կարողանում է կլանել գազեր, հեղուկներ, լուծված նյութեր և պինդ մասնիկներ: Այս երևույթի համակողմանի ուսումնասիրությունը կատարել է Կ. Կ. Գեդրոյցը: Նա հողի կլանունակության մի քանի տիպ է առանձնացնում՝ կենսաբանական, քիմիական, ֆիզիկաքիմիական, ֆիզիկական:

Հողառաջացման պրոցեսում շատ մեծ է հողային կոլոիդների նշանակությունը: Սրանք հողի մանր մասնիկները ցեմենտացնում են, առաջացնում են կնձիկներ: Այս պրոցեսում մեծ է կալցիումի դերը:

Հողի ֆիզիկական հատկանիշներից է մեխանիկական կազմը՝ տարբեր ֆրակցիաներին նրա փոխհարաբերությունը: Տարբերում են հետևյալ ֆրակցիաները՝ ա) հողի կմախքային (քարային) մասը կազմված է 3 մմ և ավելի մեծ մասնիկներից. բ) ավազ — 3—0,5 մմ, գ) փոշի — 0,5—0,001 մմ, դ) տիղմ — 0,001 մմ: Մեխանիկական կազմի տեսակետից հողերը բաժանվում են՝ 1. ավազային հողեր (90—100 % կազմված է ավազից), 2. ավազակավային (80—90 % կազմված է ավազից, մնացածը կավ է), 3. կավաավազային (50—80%-ը ավազ է, մնացածը՝ կավ), կավային՝ (50—20%-ավազ, իսկ 50—80 % -կավ):

Հողերը դասակարգվում են նաև ըստ ծագման և առանձնացվում են հետևյալ տիպերը՝ սևահողեր, ենթամոխրային (պոդզոլային) հողեր, լատերիտային, շագանակագույն, մոխրագորշ, մոխրահողեր, հիդրոմորֆ (աղուտներ), ալկալի հողեր, ճահճահողեր: Սրանք տեղաբաշխված են զոնաներով:

Խիտ բնակչություն ունեցող երկրներում հազարամյակների շարունակ հողն օգտագործվում է դաշտավարության ու այգի-գործությունների համար: Ամեն տարի բերքի հետ միասին հողից

հեռանում են հանքային նյութեր, և, բնականաբար, հողն աղ-  
քատանում է սննդարար նյութերից: Բացի այդ, տեղանքի նույ-  
նիսկ ամենաաննշան թեքությունների դեպքում մակերևութային  
ջրերը իրենց հետ տանում են մանրահողի որոշ քանակ, տեղի  
է ունենում հողի էրոզիա:

Լեռնային երկրներում հողի վարը պետք է կատարել հորի-  
զոնականների ուղղությունով, որպեսզի լանջով իջնող ջուրը  
կուտակվի ակոսների մեջ, ու էրոզիան թուլանա: Սակայն շատ  
հաճախ ագրոկանոնները խախտվում են, լանջը վարում են  
վերից վար, իսկ դա նպաստում է հողի էրոզիայի ուժեղաց-  
մանը: Հողի էրոզիային նպաստում է նաև լեռնալանջերի վրա  
անասունների շփից ավելի արածեցումը: Առաջանում են  
բուսականությունից զուրկ կածաններ, հողը քայքայվում է:  
Մարդու գործունեության ազդեցության արդյունք են նաև  
ոռոգիչ (իռիգացիոն) ու ճանապարհային էրոզիան:

Աշխարհի բոլոր երկրներում հողի էրոզիայի պատճառով  
գրեթե անպետքացի են զգալի տարածություններ: Հողի վե-  
րին՝ բերքատու հորիզոնի տեղատարմամբ նրա արդյունավե-  
տությունն ընկել է. խնդիր է դրվում բարձրացնել հողի բեր-  
քատվությունը, պայթար ծավալել հողի էրոզիայի դեմ, հողին  
լրացուցիչ խոնավություն տալ: Աշխարհում ոռոգվող հողա-  
տարածությունների մակերեսը հասել է 500 միլիոն հեկտարի:


#### ԲՈՒՍԱԿԱՆ ՍԱՄԿՈՒՅՑ

Բուսական ծածկույթը, որպես կենսոլորտի բաղադրիչ,  
ուսումնասիրվում է երկրաբուսաբանության (գեոբոտանիկա-  
յի) կողմից: Բուսական ծածկույթը իր տարողությամբ կենսո-  
լորտում առաջինն է:

Երկրաբուսաբանության ուսումնասիրման հիմնական օբ-  
յեկտը բուսական համակեցություններն են, որոնց անվանում  
են բուսացենոզ (ֆիտոցենոզ), սրանց կառուցվածքը, փոխներ-  
գործությունը միջավայրի հետ, տարածման օրինաչափու-  
թյունները: Բուսացենոզը համասեռ տարածքի վրա աճող բու-  
սական ծածկույթի այնպիսի խմբավորումն է, որին բնորոշ է  
միօրինակ կազմը, կառուցվածքը, համադրությունը, փոխհա-  
րաբերությունը: Օրինակ՝ տայգա, լեռնային մարգագետին,  
մանգրային անտառ, սավաննա և այլն:

Բուսական ծածկույթի ամենահիմնական գործունեությունը ֆոտոսինթեզի (լուսասինթեզ) երևույթն է՝ Երկրի վրա զարմանահրաշ երևույթներից մեկը: Ֆոտոսինթեզի միջոցով ըստեղծվում է օրգանական նյութ, և կուտակվում է արեգակնային էներգիայի վիթխարի քանակությամբ:

Ֆոտոսինթեզի երևույթը ամենաընդհանուր գծերով բացատրվում է հետևյալ կերպ. լույսի ճառագայթն ընկնելով քլորոֆիլի հատիկի վրա, տրոհում է նրա մեջ գտնվող ջուրը, միևնույն ժամանակ օդից վերցնելով  $\text{CO}_2$  գազը՝ այն ևս տրոհում է, և բաղադրամասերից սինթեզվում են ածխաջրեր, իսկ ազատ թթվածինը և ջրի մնացորդը արտանետվում են հետևյալ ռեակցիայով



Կանաչ բույսերը ստանալով վիթխարի քանակության արեգակնային էներգիա, ստեղծում են միլիարդավոր տոննաներով օրգանական նյութ, օդ է արտանետվում գնազային թթվածին, և արմատապես փոխում են մեր մոլորակը, Տիմիրյազևի խոսքերով ասած, նրա վրա տիեզերական գործոնի դեր են կատարում:

Բույսերը յուրաքանչյուր տարի օդի ածխաթթու գազից կապում են 175 միլիարդ տոննա ածխածին, որի զգալի մասը կլանում է ծովային բուսապլանկտոնը: Նման կլանման դեպքում մթնոլորտի ածխածինը բույսերին կբավարարեր միայն 300—400 տարի, սակայն այրման ու նեխման հետևանքով օրգանական նյութի ածխածինը, նորից միանալով թթվածնին, մտնում է մթնոլորտ, լրացնում  $\text{CO}_2$ -ի պաշարները: Սրան նպաստում է հրաբխային պրոցեսներից անջատված ածխաթթու գազը, որը թուլլոլորտից (ասթենոսֆերայից) օվկիանոսային կեղևի միջոցով դեպի օվկիանոս և ապա մթնոլորտ է դուրս գալիս:

Բույսն ապրում և իր կենսագործունեությունը ծավալում է միջավայրում՝ հողի, օդի, ջրի, ջերմության, այլ բույսերի շրջապատի մեջ, որոնց որոշակի ազդեցությամբ վերջին հաշվով պայմանավորվում է և բույսի աճը: Այս բոլոր գործոնները

միասին կոչվում են էկոլոգիական պայմաններ, իսկ այն գիտությունը, որ ուսումնասիրում է բույսերի աճման միջավայրը, բույսի ու միջավայրի փոխհարաբերությունը, կոչվում է բույսերի էկոլոգիա: Համառոտակի քննենք այդ միջավայրի տարրերը:

Լույսի դերը վերևում նշվեց, որ ֆոտոսինթեզը կատարվում է լույսի քվանտի ազդեցության տակ: Լիակատար մթության մեջ բույսը ապրել չի կարող: Տարբեր բույսեր լույսի նրկատմամբ տարբեր պահանջկոտություն ունեն: Օրինակ՝ խեժափիճին սիրում է առատ լույս, եղևնին կամ հաճարենին կարող են ապրել ստվերում: Բակտերիաները խուսափում են լույսից, նրանք մթության մեջ շատ լավ են աճում: Կան բույսեր էլ, որոնք լավ են աճում երկարատև օրվա ընթացքում՝ ցորենը, տարեկանը, ճակնդեղը և այլն: Այլ բույսեր շուտ են հասունանում համեմատաբար կարճատև օրվա լուսավորության պայմաններում՝ ծխախոտ, սոյա, եգիպտացորեն, բամբակենի: Եթե լուսավորությունը սովյալ բույսի պահանջից ցածր է, ապա այն ոչնչանում է: Չափից ավելի լուսավորությունը, ուլտրամանուշակագույն ճառագայթումը նույնպես վնասակար է:

Տերևը կլանում է նրա վրա ընկած ճառագայթների 75 %-ից ավելին, որից ֆոտոսինթեզի համար օգտագործում է 1—5 %-ը, մնացածը ծախսվում է տրանսպիրացիայի վրա, որպես գոլորշացման թափնված ջերմություն, մասամբ նաև տերևի տաքացման վրա:

Ջերմության դերը Յուրաքանչյուր բույս ապրում է ջերմաստիճանային որոշակի սահմաններում (սովորաբար 0—70°): Ամենացածր ջերմաստիճանը բույսերի մեծ մասի համար ջրի սառչելու աստիճանն է՝ 0°-ը, որի դեպքում նյութափոխանակությունը դադարում է: Ամենաբարձրը այն ջերմաստիճանն է, որի դեպքում բուսական սպիտակուցները մակարդվում են:

Յուրաքանչյուր բույս ունի զարգացման օպտիմալ ջերմաստիճան: Սա այնպիսի ջերմաստիճան է, որի դեպքում բույսն ունի ամենալավ աճը: Բույսերի մեծ մասի մոտ այդ ջերմաստիճաններն են 10—30°-ը: Պատահական չէ, որ հասարակածային ու արևադարձային անտառներում բուսականությունն այդքան փարթամ է. այստեղ բուսաճեցողությունը (վե-

գետացիա) կատարվում է կլոր տարի, մինչդեռ բարեխառն ու մերձբևեռային երկրներում՝ միայն ամռանը:

Ջրի դեբը Ջուրը բուսական ծածկույթի համար ստեղծում է այն միջավայրը, որտեղ հնարավոր է պրոտոպլազմայի կենսագործունեությունը: Մինչև որոշակի աստիճան տաքանալով՝ բույսը ջրի մեծ ջերմունակության շնորհիվ դանդաղ է պաղում, և ջերմաստիճանային տատանումները մեծ լինել չեն կարող: Ջուրը մակերևութային մեծ լարվածության շնորհիվ կարողանում է ցողունի մազական անցքերով բարձրանալ մի քանի տասնյակ ու նույնիսկ հարյուր մետր: Ջուրն այնքան ուժեղ լուծիչ չէ, որ լուծի ամեն մի պատահական նյութ, նյութերը նրա մեջ չափավոր կերպով են լուծվում, որը բույսի համար շատ կարևոր ու նպաստավոր հանգամանք է, և այդ վիճակում ջուրը բույսին մատակարարում է անհրաժեշտ քանակի իոններ:

Բույսը հողից իր սնունդն ստանում է ջրի մեջ լուծված վիճակում: Ջուրն այստեղ խաղում է նաև փոխադրիչի դեր. հասնելով կանաչ տերևներին՝ մասնակցում է ֆոտոսինթեզի երեվույթին, որը բույսերի կենսագործունեության ամենակարևոր պրոցեսն է: Եզրպտացորենի մեկ անհատը բուսաճեցողության շրջանում հողից ծծում է 200 Վ ջուր, որից ֆոտոսինթեզին մասնակցում է ընդամենը 400 գ, մնացածը գոլորշանում է:

Եթե հողի մեջ բավարար քանակությամբ ջուր չկա, բույսերը թոշնում են ու ոչնչանում: Սակայն պատահում է, որ հողի մեջ ջրի բավարար քանակության պայմաններում բույսը ջրի կարիք է զգում, վրա է հասնում այսպես կոչված ֆիզիոլոգիական չորությունը՝ բույսն ավելի շատ է տրանսպիրացիա կատարում, քան գետնից ջուր ծծելու և տերևներին հասցնելու հնարավորությունն է: Պատահում է խոնավ անտառներում լիանները ծայրամասում չորանում են, շնայած արմատները բավարար խոնավության մեջ են:

Տարբեր բույսեր ջրի նկատմամբ տարբեր պահանջ ունեն: Կան բույսեր, որոնք խիստ չորադիմացկուն են՝ սրանք քսերոֆիտներն են (չորաբույսերը), անապատային բույսերը (սաքսաուլ, սարսազան, ուղտափուշ, օշինդր և այլն): Միջակ խոնավության պայմաններում աճող բույսերը կոչվում են մեզոֆիտներ (կաղնի, հաճարենի, սոճի և այլն): Այն բույսերը, որոնք սիրում են խոնավություն և հողի մեջ ջուրը միշտ պետք է

առատ լինի, կոչվում են խոնավասեր (հիգրոֆիտներ)։ դրանցից են պտերները, եղևնին, ձիաձետը և այլն։ Այն բույսերը, որոնք աճում են ջրով հագեցած հողի մեջ (ցողունը օդի մեջ է, իսկ արմատները ջրում են), կոչվում են ջրասերներ (հիգրոֆիտներ)՝ եղեգն, բրինձ և այլն։ Վերջապես կան բույսեր էլ, որոնք ամբողջապես ջրի մեջ են աճում և կոչվում են ջրաբույսեր (հիդրատոֆիտներ)։ Սրանց տերևները երբեմն փոփոխում են ջրի վրա (ջրխոտ, ջրաշուշան, վիկտորիա ռեգիա և այլն)։

Շատ բույսեր ձեռք են բերել ջրառատ սեզոնում ջուր կուտակելու ունակություն՝ չոր սեզոնում օգտագործելու համար։ դրանք կոչվում են սուկուլենտներ (ազավա, ալոէ, կակտուս և այլն)։ Բույսերի որոշ տեսակներ կարողանում են արագ աճ կատարել և 3—4 շաբաթում այն ավարտում են. չոր ժամանակաշրջանում կենսագործունեությունը դադարում է, բայց չեն ոչնչանում։ Եթե դրանք միամյա են, կոչվում են կարճակեցներ (էֆեմեր), եթե բազմամյա են՝ էֆեմերոիդներ։

Խոնավությամբ հարուստ երկրներում բուսական ծածկութթը հարուստ է թե՛ տեսակներով, թե՛ քանակությամբ։ Օրինակ, հասարակածային Աֆրիկայում աճում է 13 հզ. տեսակ, իսկ Սահարայում՝ 300։ Սակայն տեսակներով հարուստ լինելը դեռևս չի նշանակում բուսականության հարստություն։ Օրինակ՝ Արարատյան գոգավորությունը տեսակներով հարուստ է, սակայն չի կարելի ասել, որ այն հարուստ բուսականություն ունի։ Դրան հակառակ, Սիբիրում կան անտառներ, որտեղ դաուրյան խեթափիճի է աճում, բուսականությունը հարուստ է, մինչդեռ տեսակները շատ քիչ են։

Վայրի խոնավությունն ազդում է բույսերում կատարվող ածխաջրերի ու սպիտակուցների քանակի վրա։ Որքան վայրը խոնավ լինի, այնքան ածխաջրերը շատ կլինեն, իսկ սպիտակուցները՝ քիչ։ ՍՍՀՄ Եվրոպական մասում հյուսիսարևմուտքից դեպի հարավարևելք բույսերում կուտակվող ածխաջրերը պակասում են, իսկ սպիտակուցները՝ ավելանում։ Հասարակածային խոնավ անտառներում ածխաջրեր ավելի շատ են կուտակվում, քան բարեխառն գոտու անտառներում։ Չոր կլիմա ունեցող երկրներում ուժեղ գոլորշացման շնորհիվ պտուղներն ավելի քաղցր են լինում։

Օդի դեբը Օդի գազային կազմի նկատմամբ բույսն ան-

տարբեր է, բացառութեամբ ածխածինի գազի: Մնացած գազերը՝ ազոտն ու թթվածինը բույսի կողմից չեն յուրացվում: CO<sub>2</sub>-ի պարունակութունն օդում 0,03% է, 1 %-ի պայմաններում բույսերն արդեն թունավորվում են:

Օդի շարժումը բույսի համար ունի այն նշանակությունը, որ տրանսպիրացիան ուժեղանում է, իսկ ուժեղ քամու դեպքում ցողունը ծովում է, բույսը ծուռ է աճում: Քամու դերը շատ մեծ է նաև սերմերի ու ծաղկափոշու տարածման տեսակետից: Բոլոր ծաղկավոր բույսերի 10 %-ը բեղմնավորվում է քամու միջոցով:

Հողի դերը Բույսն ապրում է հողից վերցրած հանքային սննդով: Տարբեր բույսեր տարբեր հողերում են աճում: Կան բույսեր, որոնք թթու հողերում են լավ աճում (սֆագնումային ջրիմուռները), մեկ այլ բույս՝ կարմրահողի վրա (թեյի թուփը), երրորդը՝ ավազային հողի վրա (սոճին), չորրորդը՝ աղակալած հողի վրա՝ աղաբույսեր (հալոֆիտներ), և այլն: Սեվահողի վրա լավ աճում են հացահատիկները, շաքարի ճակնդեղը, արևածաղիկը:

Կենդանական աշխարհի դերը Կենդանական օրգանիզմները չեն կարող անօրգանական նյութից օրգանական նյութ ըստեղծել և որպես պատրաստի սնունդ օգտագործում են բույսը, կլանում են օդի թթվածինը, որը բույսն է արտադրել: Այս տեսակետից կենդանին բույսի հակամարտիկն է. միևնույն ժամանակ կենդանի օրգանիզմները մեծ դեր են կատարում փոշոտման և սերմերի տեղափոխման գործում:

Երկրի բուսական ծածկույթի տեղաբաշխման մեջ կարելի է նշել մի շարք օրինաչափություններ: Ամենից առաջ զոնայականությունը, որն ունի համամոլորակային բնույթ: Արևմտիկայի սառցային անապատներից մինչև հասարակած կլիմայի փոփոխման հետ փոխվում են բուսական զոնաները՝ տունդրա, տայգա, խառն անտառներ, լայնատերև անտառներ, անտառատափաստան, տափաստան, կիսաանապատ, անապատ, մերձարևադարձային անտառներ, արևադարձային անապատներ, սավաննաներ, խոնավ հասարակածային անտառներ:

Բուսական զոնաների երկարությամբ կարելի է նշել նահանգական (պրովինցիալ) հատկանիշների փոփոխություն-

ներ՝ մերձծովյան մասերում բուսականությունն այլ բնույթ ունի, ցամաքի խորքում՝ այլ:

Լեռնային երկրներում պարզորոշ արտահայտված է բարձրադիր գոտիականությունը: Որքան լեռնային երկիրը մոտ է հասարակածին, այնքան զոնաների սպեկտրը հարուստ է:

Բուսականության տարածման օրինաչափություններից են ներզոնայականությունը, արտազոնայականությունը, անզոնայականությունը:

Ներզոնայական (ինտրոզոնայական) են կոչվում այն բուսական համակեցությունները, որոնք ինքնուրույն զոնա չեն ստեղծում և կարող են գտնվել այլ զոնաների մեջ, օրինակ՝ ազուտները, ճահիճները և այլն:

Արտազոնայականություն (էքստրազոնայականություն) է կոչվում այն երևույթը, երբ բուսական համակեցությունը դուրս է գալիս իր զոնայի սահմաններից և թափանցում է այլ զոնա: Օրինակ, յակուտական տալգայի զոնայում տարածվել է տափաստանային լանդշաֆտ, կամ կաղնու պուրակները տարածվում են տափաստանային զոնայում և այլն:

Անզոնայական են այն բոլոր բուսական համակեցությունները, որոնք ինքնուրույն զոնա չեն ստեղծում, տարածված են աշխարհով մեկ, օրինակ՝ ջրիմուռները):

Երկրագնդի բուսական ծածկույթը բաժանվում է 6 բուսաաշխարհագրական (ֆլորիստիկական) մարզերի՝ Նեոտրոպիկական (նորարևադարձային), Պալեոտրոպիկական (Հնդ-արևադարձային), Ավստրալական, Կապի, Անտարկտիկական, Հոլարկտիկական:

#### ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Կենտրոտի ամենաակտիվ բաղադրիչը կենդանական օրգանիզմներն են: Սրանց առավելությունը բույսերի նկատմամբ այն է, որ հնարավորություն ունեն փոխելու իրենց տեղը և բնակության համար ավելի հարմար միջավայր որոնելու: Կենդանիների կյանքը, ինչպես բույսերինը, կախված է էկոլոգիական պայմաններից:

Լույսը կենդանին օգտագործում է սննդի որոնման պրոցեսում և իր կենսագործունեության ընթացքում: Կենդանի-

ների մեծ մասը լույսի պայմաններում է սնվում. բայց կան կենդանիներ, որոնք ուժեղ լույսի դեպքում թաքնվում են (օրինակ՝ շղթիկները), կամ ցերեկային ժամերին մտնում են բները և դուրս են գալիս սնվելու գիշերը կամ արեամուտից հետո (օր.՝ անապատային հողաբնակ կենդանիները):

Ջերմութունը շատ կարևոր ազդակ է կենդանիների համար և ֆիզիոլոգիական պրոցեսների գործոն է: Ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների համար գոյութուն տնեհ օպտիմալ ջերմաստիճաններ: Ցածր ջերմաստիճանների դեպքում բջիջների մեջ աղային ու սպիտակուցային լուծույթները կարող են սառչել: Բարձր ջերմաստիճանների դեպքում մի շարք ֆերմենտներ քայքայվում են: Իսկ սպիտակուցները մակարդվում են: Կենդանիների այն տեսակները, որոնք կարողանում են ջերմաստիճանների մեծ տարբերություններ տանել, կոչվում են էվրիթերմ կենդանիներ, այն կենդանիները, որոնք շատ զգայուն են ջերմաստիճանների նկատմամբ՝ ստենոթերմ կենդանիներ: Կաթնասուններն ունեն մարմնի կայուն ջերմաստիճան, որը պահպանվում է համապատասխան օրգանների միջոցով:

Ջուրը կենդանիների համար ամենակենսական նյութերից մեկն է: Ոչ մի կենդանի առանց ջրի չի կարող ապրիվ վիճակում ըինել: Օրգանիզմները սնվում են ջրի միջոցով:

Այն կենդանիները, որոնք տանում են խոնավության մեծ տարբերություններ, կոչվում են էվրիհիգրոբիոտներ (կաթնասուններ, թռչուններ, միջատներ): Իսկ ստենոհիգրոբիոտները կարող են ապրել միայն որոշակի խոնավության պայմաններում:

Օդը կենդանական աշխարհի համար շատ կարևոր է, քանի որ բոլոր կենդանիները շնչում են թթվածին և այն օգտագործում ֆիզիոլոգիական այրման համար: Օդի շարժումը նշանակություն ունի մարմնից ջուրը գործառնելու տեսակետից:

Գետնահողը (գրունտը) կենդանուն ծառայում է որպես բնակության վայր. շատ կենդանիներ բները շինում են հողի մեջ, միջատների մի մասը կյանքի զգալի ժամանակամիջոցն անց է կացնում հողում: Հողն այն միջավայրն է, որտեղ տեղի է ունենում մեծած օրգանիզմների նեխման պրոցեսը:

Կենդանի օրգանիզմի աճն ու զարգացումը կախված է սննդից: Կենդանիների սնունդը բազմազան է, այս բազմազանություն մեջ կարելի է առանձնացնել երկու խումբ՝ բուսատուն և կենդանատուն կենդանիներ: Բոլոր կենդանիները փոխհարաբերվում են միմյանց և բուսական աշխարհի հետ, ընդ որում, այդ հարաբերության հիմքում ընկած է սննդի պրոբլեմը: Կենդանական աշխարհում շատ է զարգացած մակարածությունը (պարագիտիզմ):

Կենդանական աշխարհը շատ ավելի լայն տարածում ունի օվկիանոսում: Մովսիսին կենդանիների առանձնահատկությունը ջրում շնչելու ունակությունն է: Նրանք կարողանում են ջրում լուծված թթվածինը չուրացնել:

Կենդանիների մի մասը նստակյաց կյանք է վարում, ամրանում է ծովի հատակին, մյուսները կախված են ջրում, երրորդները օժտված են ակտիվ շարժմամբ և սնունդ հայթայթելու համար հարյուրավոր ու հազարավոր կիլոմետրեր են կտրում-անցնում: Մեծ խորություններում կենդանիները օգտագործում են պատրաստի սնունդ. կամ գիշատիչներ են և կամ յուրացնում են վերևից ընկնող մեռած օրգանիզմների օրգանական նյութը: Կողացող կենդանիներն ունեն լողալու հարմարանքներ, բացի այդ նրանց տեսակարար կշիռը պետք է մոտ լինի ջրի տեսակարար կշռին, այլապես կենդանին կամ կտուգվի, կամ դուրս կգա ջրի մակերևույթ: Ջրում հավասարակշռվելու համար կենդանին հարմարանքներ տւնի:

Օվկիանոսի ամբողջ կտրվածքում կենդանիների ամենամեծ քանակությունը վերին՝ մինչև 200 մ խորություններում է, որտեղ բուսապլանկտոնը առատ ու զարգացած է: Ջրային կենսացենոզներում առանձնանում են կենդանիների երկու խումբ՝ բենթալ (հատակաբնակ) և պելագիալ (ջրի շերտում ապրողներ):

Կենդանիների այն համակեցությունը, որը հատուկ է որևէ քիչ թե շատ միատարր տարածքի (բիոտոպի), կոչվում է կենդանացենոզ (զոոցենոզ): Այն բնականաբար մտնում է որոշակի կենսացենոզի մեջ: Իսկ կենսացենոզը բուսական ու կենդանական օրգանիզմների օրինաչափ խմբավորությունն է սովյալ տարածքի վրա, որտեղ գոյության պայմանների էկոլոգիական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունների

ընդհանրութիւն կա: Ցամաքի վրա կենսացենոզի կազմում տիրապետողը բույսերն են, ծովում՝ կենդանիները:

Բուսացենոզը, կենդանացենոզը (երկուսը միասին՝ կենսացենոզ) երկրի մակերևույթի մթնոլորտի, ջրոլորտի, հողի տվյալ հատվածի հետ միասին ստեղծում են մի փոխադարձ կապակցված համալիր, որին անվանում են կենսաերկրացենոզ (քիոզոցենոզ): Այս տերմինը գիտութեան մեջ մտցրել է ակադ. Վ. Ն. Սուկաշևը, և ըստ էութեան իրենից ներկայացնում է լանդշաֆտը, միայն կենսաերկրացենոզի հասկացութեան տակ շեշտը դրվում է կենսացենոզի վրա:

Բույսերի ու կենդանիների տեսակները միասին կազմում են ավելի քան 2 միլիոն: Սակայն միայն տեսակների քանակով չէ, որ օրգանիզմներն աչքի են ընկնում, նրանց կարևոր հատկանիշը կենսական ակտիվութիւնն է:

Նրկրի ոլորտների մեջ կենսոլորտը ամենից կենդանին ու կատարյալն է: Ակադ. Վ. Ի. Վերնադսկին իր կյանքի մեծ մասը նվիրեց կենսոլորտի ուսումնասիրութեանը, և կենսոլորտի ժամանակակից պատկերացմամբ մենք նրան ենք պարտական: Նա ցույց տվեց, որ ժամանակակից օվկիանոսն ու մթնոլորտի թթվածինն ունեն օրգանական ծագում, ավելի քան 3 միլիարդ տարվա ընացքում օրգանիզմները մի քանի անգամ իրենց մարմնով անց են կացրել ամբողջ օվկիանոսի ջուրը և մթնոլորտի կազմում ստեղծել են 21 % թթվածին: Վ. Ի. Վերնադսկին բացատրեց բուսական օրգանիզմների բացառիկ նշանակութիւնը արեգակնային էներգիայի պահեստավորման գործում, ապացուցեց, որ շկա արտածին որևէ պրոցես, որտեղ կենդանի օրգանիզմները մասնակցութիւն չունենան: Նա հանգեց այն կարևոր եզրակացութեան, որ քիմիական տարրերի կազմակերպվածութեան ամենակատարյալ ձևը կենդանի օրգանիզմներն են:

Մարդը, պատկանելով օրգանական աշխարհին, միևնույն ժամանակ իշխող դեր է խաղում, իր գիտակցութեամբ ղեկավարող գործոն է, ուղղութիւն է տալիս կենսական պրոցեսներին: Վերջին երկու-երեք հարյուրամյակներում կենսոլորտը կրել է մարդու ազդեցութիւնը և զգալի չափով փոփոխվել է: Այդ ժամանակամիջոցում աշխարհի անտառային տարածութիւնները կրճատվել են 70 %-ով, շատ կենդանիներ ու

բուլսեր իտպառ վերացել են: Օրինակ, Գեղամա չեռների ժայ-  
ռապատկերներում կան բազմաթիվ կենդանիներ՝ եղջերու-  
ներ, վայրի ձի, առյուծ, քարայծ և այլն, որոնք այժմ Հայ-  
կական լեռնաշխարհում չկան:

Կենդանական ու բուսական աշխարհը պահպանության ու  
պաշտպանության կարիք ունի: Դա հատկապես հրատապ է  
խիտ բնակչություն ունեցող երկրներում: Տարբեր երկրների  
ու ամբողջ աշխարհի համար կազմված է «Կարմիր գիրք»,  
որտեղ նշված են անհետացման եզրին հասած կենդանիներ-  
ը: Մարդը պետք է օգնի այդպիսի կենդանիների բազմաց-  
մանը:

Կենդանական ու բուսական տեսակների աճի և բազմաց-  
ման նպատակով մարդիկ կատարում են տեղափոխություն-  
ներ ու բնությունը հարստացնում են նոր տեսակներով: Այս-  
պես, Չուդ լճից Սևան բերվեց սիգ կոչվող ձուկը, որն այժմ  
արդյունագործական նշանակություն ունի: Խոսքովի անտա-  
ռում բազմանում է ռատուրական բծավոր եղջերուն, իսկ Մե-  
ծամտր լճում՝ Արգենտինայից բերված ճահճային կուղբը  
և այլն:

Կենսոլորտը կուսական վիճակում պահել հնարավոր չէ,  
սակայն կարելի է որոշ հատվածներ հանել մարդու օգտա-  
գործման տրորտից և թույլ տալ, որ բնությունը զարգանա  
բնականոն ճանապարհով: Այս նպատակով շատ երկրներում  
ստեղծվել են պետական արգելոցներ, արգելավայրեր ու ազ-  
գային պարկեր: Արգելոցներում մարդու տնտեսական-  
արտադրական գործունեությունն արգելված է, (մարդկանց  
թույլ է տրվում մուտք գործել միայն դիտելու համար): Դրանցից  
կարելի է նշել՝ Աֆրիկայում՝ Սերենգետիի արգե-  
լոցը, ԱՄՆ-ում՝ Յելոսթոունյանը, Բանֆը՝ Կանադայում և  
այլն: ՍՍՀՄ-ում՝ Ղրիմի արգելոցը, Ասկանյա-Նովան, Բելո-  
վեժեցկայա-Պուշչան, Թեբերդայինը և ուրիշներ, որոնց թի-  
վը 1980 թվականին 117 էր: Սովետական Հայաստանի ար-  
գելոցներից են՝ Դիլիջանի, Խոսքովի անտառի կամ Գառնիի,  
Շիկահողի, Սևանի ազգային պարկը (իր մի քանի արգելոց-  
ներով ու արգելավայրերով):

Կենսոլորտի պահպանությունը մասնավոր հարց չէ:  
Բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսո-

ըորտից, և մարդը իր գիտակցական ներգործությամբ պետք է կենսոլորտը պահի ամենաբարվոք վիճակում:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ

Աշխարհագրական թաղանթ տերմինը գիտության մեջ մտցրել է ակադ. Ա. Ա. Գրիգորևը 1932 թվականին: Նա առանձնացրեց երկրի մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի և կենսոլորտի փոխադարձ ազդեցության և փոխներթափանցման, միմյանցով պայմանավորված ինքնուրույն աշխարհագրական թաղանթը:

[Աշխարհագրական թաղանթն ընդգրկում է մթնոլորտի ներքին շերտը մինչև օզոնի էկրանը, ջրոլորտը ամբողջությամբ և քարոլորտի վերին շերտը, մինչև ուր մարդը ծավալում է իր աշխատանքային գործունեությունը] Այս սահմաններում աշխարհագրական թաղանթը համընկնում է կենսոլորտին: Սակայն աշխարհագրական թաղանթն ավելի լայն հասկացություն է այն իմաստով, որ պարունակում է ոչ միայն կենսոլորտը, այլ նույն ծավալում պարունակվող ոչ օրգանական ոլորտը (մայր ապարներ, ջուր, օդ): Կ. Կ. Մարկովը (1978) աշխարհագրական թաղանթ և կենսոլորտ հասկացությունները նույնացնում է: Նա գրում է. «Կենսոլորտը ոչ միայն ինքը կենդանի նյութն է, այլև ամբողջ ջերմադինամիկական թաղանթը (տարածությունը), որի մեջ կենտրոնացված է կյանքը: Կյանքի տարածումը աշխարհագրական թաղանթում՝ կենսոլորտում ամենուր է, այսինքն միջանցիկ է» (էջ 53):

Աշխարհագրական թաղանթից այն կողմ, ըստ Մարկովի, աշխարհագրական տարածությունն է, որի մասին արդեն ասվել է:

[Աշխարհագրական ուսումնասիրության անմիջական օբյեկտը՝ աշխարհագրական թաղանթն է: Այն եռաչափ է՝ ծավալային: Նրա կարևորագույն կառուցվածքային բաղադրիչներն են մայրցամաքները, օվկիանոսները, օդային օվկիանոսը՝ ստորին ոլորտը: Ավելի խոր մասնատման դեպքում առանձնացվում են աշխարհագրական գոտիներ, զոնաներ, նրանց ավելի ենթակա այլ հորինվածքային միավորներ, մինչև

լանդշաֆտը և լանդշաֆտի ձևաբանական (մորֆոլոգիական) մասերը: Մինչև այժմ բազմաթիվ փորձեր են կատարվել աշխարհագրական թաղանթում ստեղծելու աշխարհագրական հորինվածքների ստորակարգություն (հիերարխիա), սակայն դեռևս որոշակի կոնկրետ արդյունքների չեն հասել, և ուսումնասիրությունները շարունակվում են:

Սոաչափ աշխարհագրական թաղանթում նրա ոլորտները միմյանց մեջ են թափանցել: Մենք արդեն տեսանք, որ ջրոլորտը խոր կերպով մտել է քարոլորտի խորքը, մասնակցում է այնտեղ տեղի ունեցող երևույթներին (լուծում, կարստային երևույթներ, ներվաջում, ցեխասահք, սողանքներ): Օդային ոլորտը թափանցելով քարոլորտ մասնակցում է օքսիդացման (վերականգնման) պրոցեսներին, օդի դոլորշիները մասնակցում են ստորերկրյա ջրի առաջացմանը, մթնոլորտի մեջ մեծ ծավալ գրավող ազոտը ազոտ ֆիքսող բակտերիաների միջոցով մասնակցում է կենսական պրոցեսներին, կենդանի օրգանիզմները կենսաքիմիական հոդմահարմամբ քայքայում են մայր ապարները, ստեղծում են երկրորդական միներալներ և աչքն: Օվկիանոսների հատակին կուտակվում են նստվածքների շերտեր, որտեղ ծնվում են ցամաքների մարմինը կազմող նստվածքային ապարներ: Եվ այսպես, կարելի է թվել բազմաթիվ երևույթներ, որոնք ցույց կտան, թե քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը և կենսոլորտը որքան սերտորեն են միմյանց կապված:

Կ. Կ. Մարկովը, Օ. Պ. Դորրոդեևը, Յ. Գ. Սիմոնովը, Ա. Ի. Սուետովան (1978) աշխարհագրության մեջ նոր տերմին են մտցրել՝ «միջանցիկ ֆիզիկական աշխարհագրություն» (сквозная физическая география) և ցույց են տալիս, թե աշխարհագրական թաղանթում երևույթներն ու պրոցեսները տարբեր ոլորտներում որքան միջանցիկ են:

Աշխարհագրական ոլորտը կամ թաղանթը նյութական է: այնտեղ հանդիպում են Մենդելևեևի աղյուսակում տեղ գտած բոլոր քիմիական տարրերը: Այդ մասին մենք համառոտակի ակնարկել ենք նախորդ բաժիններում: Այստեղ ամփոփ ձևով տալիս ենք քիմիական տարրերի քլարքները: Վերահիշյալ աշխատության մեջ (Կ. Կ. Մարկով և ուրիշներ, 1978) բերված է 92 քիմիական տարրերի տարածումը աշխարհագրական

Քաղանթի տարբեր ոլորտներում: Ստորև բերվում է այդ աղ-  
յուսակը կրճատումներով (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Աշխարհագրական քաղանթի մի քանի բնիական տարրերի միջին  
կազմը Բարդարտում, հողում, օրգանիզմներում, շրջապատում,  
մթնոլորտում՝ կշռային տոկոսներով (ըստ Քլարեի, Գոլդշիդի,  
Յեքսմանի, Վինգրադսի)

Քիմիական տարրը	Երկրակեղև	Հող	Բույս	Կենդանի	Գետեր	Օվկիանոս	Մթնոլորտ
H	1,00	—	10,00	10,05	11,10	10,72	$3 \cdot 10^{-2}$
He	$1 \cdot 10^{-4}$	—	—	—	—	—	$1,2 \cdot 10^{-3}$
Li	$5 \cdot 10^{-3}$	$3 \cdot 10^{-3}$	$1 \cdot 10^{-5}$	—	—	$1,5 \cdot 10^{-5}$	—
Be	$4 \cdot 10^{-1}$	( $n \cdot 10^{-4}$ )	—	—	—	—	—
C	0,35	2,0	18,00	18,25	$2,24 \cdot 10^{-3}$	$2 \cdot 10^{-3}$	—
N	0,04	$1 \cdot 10^{-1}$	$1 \cdot 10^{-1}$	2,65	$6,7 \cdot 10^{-5}$	$1 \cdot 10^{-5}$	75,51
O	49,13	49,0	70,0	65,04	88,79	35,82	23,01
Na	2,4	0,63	$2 \cdot 10^{-2}$	$2,6 \cdot 10^{-1}$	$1,03 \cdot 10^{-2}$	1,056	—
Mg	2,35	0,6	$7 \cdot 10^{-2}$	$4 \cdot 10^{-2}$	$6,1 \cdot 10^{-4}$	$1,4 \cdot 10^{-1}$	—
Al	7,45	7,13	$2 \cdot 10^{-2}$	$n \cdot 10^{-4}$	$1,2 \cdot 10^{-4}$	$1 \cdot 10^{-6}$	—
Si	26,00	33,00	$1,5 \cdot 10^{-1}$	$n \cdot 10^{-3}$	$9,6 \cdot 10^{-4}$	$5 \cdot 10^{-5}$	—
P	0,12	$8 \cdot 10^{-2}$	$7 \cdot 10^{-2}$	$8 \cdot 10^{-1}$	—	$5 \cdot 10^{-6}$	—
S	0,10	$8,5 \cdot 10^{-2}$	$5 \cdot 10^{-1}$	$2,1 \cdot 10^{-1}$	$7,2 \cdot 10^{-4}$	$8,8 \cdot 10^{-2}$	—
Cl	0,2	$1 \cdot 10^{-2}$	$n \cdot 10^{-2}$	$2,5 \cdot 10^{-1}$	$2 \cdot 10^{-3}$	1,89	$n \cdot 10^{-6}$
K	2,35	1,36	$3 \cdot 10^{-1}$	$2,7 \cdot 10^{-1}$	$3,8 \cdot 10^{-4}$	$3,8 \cdot 10^{-2}$	—
Ca	3,25	1,37	$3 \cdot 10^{-1}$	1,4	$3,63 \cdot 10^{-3}$	$4 \cdot 10^{-2}$	—
Tl	0,61	$4,6 \cdot 10^{-1}$	$1 \cdot 10^{-4}$	$n \cdot 10^{-5}$	—	$1 \cdot 10^{-7}$	—
Fe	4,2	3,8	$2 \cdot 10^{-2}$	$2 \cdot 10^{-2}$	$2,6 \cdot 10^{-4}$	$5 \cdot 10^{-6}$	—

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ լիմիտական  
տարրերը աշխարհագրական թաղանթի տարբեր ոլորտներում  
անհավասար են բաշխված, ընդ որում յուրաքանչյուր ոլոր-  
տում նկատվում է մի քանի տարրերի գերակշռություն.  
Քարոլորտում՝ O, Si, Al, Fe, Ca, K, Np, Mg, կենդանի  
օրգանիզմներում՝ O, C, H, N, որոնք միասին կազմում են  
96 %-ը: Բուսական օրգանիզմներում O, C, H տարրերը  
կազմում են 98 %:

Աշխարհագրական թաղանթում նյութերի համաշխարհա-

յին շրջապտույտի ընթացքում (տե՛ս հաջորդ գլուխը) խոր-  
քային սպարները բարձրանալով երկրի մակերևույթ հողմա-  
հարվում են, որն ուղեկցվում է թթվածնի, մասամբ նաև  
ածխածնի, ջրածնի կլանմամբ. առաջանում են նոր մինե-  
րալներ: Երկրորդական միներալները, որոնք ստեղծվում են  
վերնածին (հիպերգեն) պայմաններում (այսինքն՝ երկրի  
մակերևույթի վրա), հարուստ են նշված քիմիական տարրե-  
րով: Կենդանի օրգանիզմները միջավայրից վերցնում են  
3—4 քիմիական տարր և նրանցից ստեղծում շատ բարդ օրգա-  
նական նյութեր: Սակայն ախալ կլիներ կարծել, թե կենդանի  
օրգանիզմը միայն նշված չորս քիմիական տարրերով կա-  
րող է ապրել ու գոյություն պահպանել: Մնացած քիմիական  
տարրերի քանակն օրգանիզմում փոքր է, բայց ունի կենսա-  
կան նշանակութուն: Առանց ազոտի, ֆոսֆորի, կալիումի,  
կալցիումի և մանրատարրերի (միկրոէլեմենտների)՝ բույսը  
չի կարող լիարժեք զարգանալ և ոչնչանում է:

Աշխարհագրական թաղանթի բոլոր բաղադրիչները միև-  
նույն արժեքն ու նշանակութունը չունեն: Կան բաղադրիչ-  
ներ, որոնք առաջնային են, մյուսները՝ երկրորդային, սա-  
կայն որոշակի պայմաններում կարող են դառնալ առաջնա-  
յին: Այսպես, բոլոր տիպի ցամաքային լանդշաֆտների ձև-  
վորման գործում կլիման առաջնային է, և շենք կարող գրտ-  
նել մեկ այնպիսի բնական համալիր, որտեղ կլիման վճռա-  
կան նշանակութուն չունենա: Ուրեմն, կլիման ղեկավարող  
կամ առաջնային բաղադրիչ է: Քննենք մեկ ուրիշ բաղադրիչ՝  
հողը. արդյո՞ք ամենուրեք հող կա և այն բնության համա-  
լիրի կազմակերպման մեջ առաջնային է: Պարզվում է, որ  
կան վայրեր, որտեղ հող չկա, ինչպես օրինակ Անտարկտի-  
դայում կամ քարքարոտ անապատներում: Նշանակում է ա-  
ռանց հողի էլ կարող է լանդշաֆտը ձևավորվել, հետևաբար  
կլիմային հավասար նշանակութուն չունի և տվյալ դեպքում  
երկրորդական բաղադրիչ է:

Կան այնպիսի բաղադրիչներ, որոնք մի դեպքում երկրոր-  
դական են, այլ դեպքում՝ առաջնային: Վերը բերված օրի-  
նակում հողը երկրորդական էր, սակայն տափաստանային  
զոնայի ձևավորման մեջ վճռական գործոնի դեր է կատա-  
րում. առանց սևահողի տափաստան անհնար է պատկերաց-

նել: Մեկ ալ օրինակ՝ սառցադաշտը բազմաթիվ զոնաներում բացակայում է, և զոնաները ամենեկին էլ շեն տուժում դրանից. նշանակում է երկրորդական բաղադրիչ է, սակայն երբ ուսումնասիրության օբյեկտը Անտարկտիդան է, ապա այստեղ բնականաբար սառցադաշտը դառնում է առաջնային բաղադրիչ: Այսպիսով աշխարհագրական թաղանթի բաղադրիչներից մի քանիսն առաջնային են (կլիման, ռելիեֆը, երկրաբանական հիմքը), մյուս մասը՝ երկրորդական, որոշակի պայմաններում դառնում են առաջնային (հողը, բուսականութունը, ջուրը և այլն):

[Աշխարհագրական թաղանթի ամենակարևոր հատկանիշը ամբողջականութունն է, նրա բոլոր բաղադրիչների միասնականութունը:] Այդ միասնականության մեջ նյութերը կարող են շարժման ու զարգացման տարբեր ոլորտներում փոխել իրենց ազդեցատային վիճակը. դա հատկապես վերաբերում է Երկրագնդի վրա այնքան մեծ տարածում ունեցող ջրին: Տարբեր ազդեցատային վիճակներում գտնվող նյութը տարբեր տրակական հատկանիշներ ունի: Անտարկտիդայում ավելի քան 20 միլիոն կմ<sup>3</sup> սառցային զանգվածը բոլորովին տարբեր է օվկիանոսային ջրի հատկանիշներից, վերջինս էլ տարբեր է օդում պարունակվող ջրի գոլորշիների հատկանիշներից:

[Աշխարհագրական թաղանթը միասնական է, նրա բոլոր բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց և պայմանավորում են իրար:] Այստեղ անընդհատ տեղի է ունենում նյութի շարժում ու շրջապտույտ: Շրջապտույտի էներգետիկ աղբյուրներն են Արեգակի էներգիան ու Երկրի ներքին էներգիան:]

Եթե որևէ պրոցեսի վրա էներգիա է ծախսվում, ապա մեկ ալ, նրան հակառակ երևույթի կամ պրոցեսի ընթացքում այդ էներգիան անջատվում է: Ածխաջրերի կուտակման ժամանակ արեգակնային էներգիան պահեստավորվում է, Պոլյն ածխաջրերի քայքայման՝ փտման պրոցեսում կամ այլման ժամանակ էներգիան անջատվում է: Ուրեմն, աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող պրոցեսները էներգիայի կլանման ու անջատման պրոցեսներ են. ընդ

որում գրեթե բոլոր արտածին պրոցեսների շարժիչ ուժը Արեգակի էներգիան է:

Աշխարհագրական թաղանթում արեգակնային էներգիայի մի մասն է մասնակցում երկրային պրոցեսներին. նրա մի մասը կլանվում է մթնոլորտի վերին շերտերի կողմից (ուտ-րամանուշահագույն ճառագայթները, պլազման և այլն): Արեգակի ճառագայթներից բացի, Երկիր են հասնում նաև տիեզերական (կոսմիկական) և այլ ճառագայթներ: Աշխարհագրական թաղանթի հորինվածքի մասին ավելի մանրամասն կանգ կառնենք հինգերորդ գլխում:


**ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ  
ԴԻՆԱՄԻԿԱՆ**

**ՆՅՈՒԹԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԹԱՂԱՆԹՈՒՄ**

Աշխարհագրական թաղանթում, ինչպես տեսանք, բոլոր երևույթներն ու պրոցեսները փոխկապակցված են: Անընդհատ տեղի է ունենում նյութի և էներգիայի փոխանակում՝ շրջապտույտ: Այդ շրջապտույտում ամենից ավելի ակնառու է երևույթների միջանցիկ բնույթը: Աշխարհագրական թաղանթի միասնականությունը պայմանավորված է հենց այդ շրջապտույտով:

Ամենամեծ շրջապտույտը տիեզերականն է: Յուրաքանչյուր տարի տիեզերքից Նրկիրը ստանում է երկնաքարեր և երկնաքարային փոշի՝  $10^6$  տ: Միևնույն ժամանակ Նրկրի մթնոլորտից հեռանում են ջրածնի և հելիումի ատոմներ: Սակայն այս շրջապտույտը, նյութական կազմի տեսակետից, տարբեր է՝ երկնաքարային նյութն իր քիմիական բաղադրությամբ նման չէ հելիումին ու ջրածնին, Նրկրի մակերևույթից դեպի մանթիան և ապա դեպի միջուկ անցնում են ծանր տարրերը, իսկ միջուկից և մանթիայից դեպի մթնոլորտ արտանետվում են թեթև նյութերը, որոնք ի վերջո հեռանում են դեպի տիեզերք: Այսպիսով, միևնույն ժամալի մեջ Նրկրի խտությունը աստիճանաբար մեծանում է:

Բացի տիեզերք—Նրկիր շրջապտույտից գոյություն ունեն երկրային շրջապտույտներ՝ երկրաբանական (քարոլորտային), մանթիայի մեջ, ցամաքից դեպի օվկիանոս, օվկիանոսից դեպի ցամաք, կենսաբանական շրջապտույտ: Ավելի փոքր շրջապտույտներ կան ցամաքի տարբեր մասերի միջև, ցամաքի ու մթնոլորտի միջև, օվկիանոսի ու մթնոլորտի միջև և այլն (նկ. 13): Նշված բոլոր շրջապտույտների մեջ ամենից մեծը այն շրջապտույտն է, որ տեղի է ունենում ցամաքից դեպի օվկիանոս, օվկիանոսի հատակից դեպի մանթիա, այնտեղից երկրակեղևի սակով դեպի ցամաք և քարոլորտի



Նկ. 13. Նյութերի համաշխարհային շրջապտույտի սխեման: 1— մանթիայի նյութ, 2— պինդ նյութեր, 3— ջուր, 4— շրային գույք-շիններ, 5— նյութի արտահոսում դեպի տիեզերք, 6— նյութի մուտք տիեզերքից:

վերընթաց շարժումով՝ դեպի երկրի մակերևույթ: Նշված շրջապտույտի մասին արդեն առիթ ունեցել ենք խոսելու, միայն ավելացնենք, որ ցամաքից դեպի օվկիանոս տարեկան տեղափոխվում է  $1,5 \cdot 10^{10}$  տ նյութ, որից  $1,3 \cdot 10^{10}$  տ՝ կախված ու գլորվող վիճակում, իսկ  $0,2 \cdot 10^{10}$  տ՝ լուծված վիճակում: Նշված  $1,3 \cdot 10^{10}$  տ կաշտ նյութերին գրավարվում են օրգանական նյութեր, և յուրաքանչյուր տարի օվկիանոսի հատակին նստում է  $1,5 \cdot 10^{10}$  տ նստվածք: Հաշվումները ցույց են տալիս (Դոբրոդեև, 1978), որ Երկրագնդի նստվածքային ապարները կազմում են  $2 \cdot 10^{18}$  տ. այդքան նստվածք ծովի հատակին կարող էր առաջանալ ընդամենը 130 միլիոն տարվա ընթացքում: Իսկ ո՞ր են դրանից առաջ կուտակվածները: Պատասխանն արդեն տրվել է երկրորդ գլխում: Դրանք թաղվել են մանթիայի մեջ, վերածվել մանթիայի նյութի և հրաբխային ապարների ձևով մասնակցել քիմիական տարրերի համաշխարհային շրջապտույտին:

Երկրի ներքին վիճակը քննարկելիս մենք առիթ ունեցանք խոսելու մանթիայի ու քարոլորտի փոխհարաբե-

բուժյունների, ցամաքային սալերի, պլատֆորմների, գեո-սինկլինալների մասին: Այստեղ ավելի հանգամանորեն կանգ կառնենք նյութերի այն շրջապատույտի վրա, որի շնորհիվ տեղի են ունենում տեկտոնական շարժումները:

XX դարում ապացուցված է համարվում այն փաստը, որ քարոլորտի շարժումները, ծալքավորումները, տեկտոնական բարձրացումները, հրաբխականությունը կապվում են մանթիայում տեղի ունեցող շրջանառական պրոցեսների հետ: Երկրի մակերևույթը փոփոխող ներքին ուժերի արգասիքը տեկտոնական շարժումներն են, որոնց մասին, սկսած XVIII դարի վերջից, կան բազմաթիվ տեսություններ: XVIII դ. վերջին և XIX դարի սկզբին ձևավորվեցին երկրաբանական երկու դպրոց՝ պլուտոնականներ և նեպտունականներ: Առաջինները տեկտոնական շարժումների դրդապատճառ համարում էին Երկրի ներքին ջերմությունը՝ «ստորգետնյա հուրը»: Նեպտունականները ժխտում էին ներքին ջերմության դերը, գտնում էին, որ բոլոր տեսակի ապարները, նույնիսկ գրանիտը ծովային ծագում ունեն և եթե հանդիպում են նստվածքային ապարների թեքված շերտեր, ապա նրանք այդպես էլ թեք առաջացել են: XIX դարի սկզբին պլուտոնականների կողմնակիցները շատ ավելի հետևորդներ ունեին, քան նեպտունականները:

1852 թվականին Ֆրանսացի գիտնական էլի դը Բոմոնը առաջարկեց կոնտրակցիոն տեսությունը, որը հենվում էր Երկիր մոլորակի առաջացման Կանտ-Լապլասյան գիտաենթադրության վրա: Կոնտրակցիոն տեսության համաձայն՝ ծալքավորությունները առաջանում են Երկրի կեղևի սեղմման հետևանքով: Այս տեսությունը համընդհանուր ճանաչում ստացավ և իշխում էր մինչև XX դարի սկիզբը: Սակայն դարասկզբին Կանտ-Լապլասյան գիտաենթադրության ժխտումը մեծ հարված հասցրեց կոնտրակցիոն տեսությանը և այժմ նրա դեմ կան լուրջ փաստարկներ: Տեսությունը ժխտված չէ, ավելին՝ նրանից սերվել է նոր ուղղություն, որին անվանում են նեոկոնտրակցիոնիզմ: Այս ուղղության կողմնակիցները վերցնելով կոնտրակցիոն տեսության ուսուցանող կողմերը ցույց են տալիս, որ Երկրի կեղևը այնուամենայնիվ

սեղմվում է, և սրա վրա էլ կառուցում են տեսութայան հիմնական դրույթները:

XX դարի սկզբին հայտնի դարձավ մանթիայում ռադիոակտիվ նյութերի տրոհման պրոցեսը և դրա հետևանքով ստացվող էներգիան: Բնական է, որ տեկտոնական շարժումների մեկնարանման ասպարեզում առաջացան նոր պրոբլեմներ, հետևաբար և նոր տեսություններ: Դրանցից մեկը ճգնում էր ապացուցել, որ Երկրագունդը ոչ թե սեղմվում է, այլ ընդհակառակը՝ ընդարձակվում է (օսցիլիացիոն գիտա-ենթադրություն), առաջ քաշվեց տրոփային (պուլսացիոն) տեսությունը, որի համաձայն Երկրի կեղևի ընդհանուր սեղմման ֆոնի վրա տեղի են ունենում լայնացման կարճ փուլեր:

XX դարի առաջին քառորդում հրապարակ եկավ Ջոլիի գիտաենթադրությունը այն մասին, որ Երկրի կեղևի տակ ռադիոակտիվ նյութերի տրոհման հետևանքով ջերմություն է կուտակվում, որը հալեցնում է բազալտային մահիճը: Սակայն այդ տեսությունը ֆիզիկայի տեսանկյունից անհիմն էր: Թադիոակտիվ նյութերի տրոհումը գրանիտային շերտում ավելի ուժգին է, ուստի գրանիտներն ավելի շուտ պետք է հալվեն, քան բազալտները: Մագեցին նոր տեսություններ՝ ասթենոլիտային, ռադիոմիգրացիոն (Վ. Վ. Բելոուսով) և այլն, որոնք նույնպես տեկտոնական շարժումները կապում էին ռադիոակտիվ տարրերի տրոհման հետ:

1930-ական թվականներին Վ. Բեմելենը առաջարկեց ունդացիոն գիտաենթադրությունը: Ըստ հեղինակի՝ մանթիայում տեղի ունեցող կոնվեկտիվ շարժումները շեն կարող կապված լինել միայն ջերմաստիճանային տարբերությունների հետ. այստեղ խոշոր դեր ունի նյութերի ծանրահակ տարբերակումը (գրավիտացիոն դիֆերենցում), որի շնորհիվ առաջանում են ուղղաձիգ շարժումներ, որոնց հետևանքով էլ՝ տեկտոնական բարձրացում-իջեցումներ:

1950-ական թվականների վերջին տիեզերական թռիչքների կապակցությամբ առաջացավ մի նոր գիտություն՝ մոլորակագիտությունը (պլանետոլոգիա), և ծագեց նոր տեկտոնական՝ ռոտացիոն գիտաենթադրությունը, որը և տեկտոնական շարժումների պատճառը համարում է Երկրի իր առանցքի շուրջը պտտվելը, նրանից առաջացած մակընթացության

երևույթը: Մակընթացության հետևանքով Երկրի պտույտը աստիճանաբար դանդաղում է, ուստի տեղի է ունենում Երկրի ձևի փոփոխություն, սա էլ առաջացնում է երկրակեղևի սեղմման ու ձգման երևույթներ: Ըստ այս տեսության՝ Երկրի պտույտի ամենակարևոր հետևանքներից մեկն այն է, որ հասարակածային գոտում երկրակեղևի տակ նյութի շարժման արագությունը մեծանում է, որը ցամաքների տեղաշարժի պատճառներից մեկն է դառնում:

Վերջին տարիներս Երկրի ծագման մասին Շմիդտի գիտահետազոտության հիման վրա մոբիլիստական ըմբռնողությունը նոր քայլ կատարեց՝ ստեղծվեց մի նոր՝ նեոմոբիլիզմի դպրոց: Այս ըմբռնմամբ՝ մայրցամաքային կոշտերի (սալերի) հորիզոնական տեղաշարժը մեկնաբանվում է հնթակեղևվային նյութի ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական շարժումներով, որի մասին մենք արդեն նշել ենք Երկրորդ գլխում (տե՛ս Վեգեների գիտահետազոտությունը):

Այսպիսով, Երկրագնդի վրա սալերի շարժման, գեոսինկլինալային զոնաներում երկրակեղևի սուզման, լեռնաշղթաների բարձրացման և հրաբխային պրոցեսները կապված են մանթիայի նյութի շրջապտույտի հետ, որը արտահայտվում է ուլտրաֆի մեծ և միջին ձևերի ստեղծման միջոցով:

Նյութերի համաշխարհային մեծ շրջապտույտի մեջ լեռնագոյացման պրոցեսը երկու իրար հակադիր երևույթների արտահայտություն է: Դրանցից մեկը լեռնային երկրի բարձրացումն է, իսկ մյուսը՝ բարձրացող երկրի քայքայումն ու տեղատարումը (դենուդացիա): Առաջին պրոցեսը մարդու համար աննկատ է թվում, որովհետև շատ դանդաղ է կատարվում, և շարժումը ուղղաձիգ ուղղությամբ է՝ տարեկան մի քանի կամ մի քանի տասնյակ միլիմետր: Միայն բարձր ճշտության հարթաչափության հիման վրա կարելի է այդ շարժումը «որսալ»: Մինչդեռ տեղատարման պրոցեսը չափազանց ակնառու է, որովհետև կատարվում է հորիզոնական կամ մերձհորիզոնական ուղղությամբ՝ հազարավոր կիլոմետրեր: Այսպես, Ալթայյան լեռնային համակարգից հողմահարված նյութերը Օբ գետի միջոցով հասնում են Կարայի ծով, կամ Հարեշական բարձրավանդակից լվացված նյութերը նեղոսը տանում է մինչև Միջերկրական ծով և այլն:

Ամփոփելով նշենք, որ Երկիր մոլորակի վրա տեղի է ունենում նյութերի համամոլորակային անընդհատ շրջապտույտ, որը աշխարհագրական թաղանթի գոյության ձևն է:

### ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՏԱՐՈՒՄ

Մայրցամաքի մարմինը կազմող կարծր ապարները մըթնոլորտային, կենսոլորտային գործոնների ազդեցության տակ կերպարանափոխվում են: Այս երևույթն անվանում են հողմահարում:

Խորքային (արխալ) պայմաններում առաջացած ապարները հիպերգեն (վերնածին) միջավայրում (երկրի մակերեւվույթի վրա) անկայուն են: Այս ապարների բյուրեղային ցանցի ձևավորման ժամանակ շրջապատում եղել են բարձր ճնշում (մի քանի հազար մթնոլորտ) և բարձր ջերմաստիճան: Վերնածին ոլորտում ճնշումը կտրուկ իջել է մինչև 1 մթնոլորտ (իսկ լեռներում ավելի պակաս), ջերմաստիճանը՝ նույնպես: Այս պայմաններում մայր ապարը ներքուստ վերակառուցվելու հակում ունի, ձգտում է ստեղծել տվյալ ջերմադինամիկական պայմաններում կայուն բյուրեղային ցանց: Սակայն ապարները իրենք, առանց արտաքին միջամտության, չեն կարող վերակազմավորվել: Արտաքին ազդակները՝ Արեգակի ջերմությունը, ջերմաստիճանային տատանումները, ապարի ծակոտիներում ջրի սառչելը, մանրօրգանիզմներից արտաթորված թթուները, օրգանիզմների մեխանիկական ներգործությունը, ջրի լուծիչ հատկությունը, այն ուժերն են, որոնց միջոցով մայր ապարը կերպարանափոխվում է: Տեղի է ունենում ապարի մանրացում, քայքայում, այն լուծվում է ջրի մեջ, ու մի շարք քիմիական տարրեր հեռանում են, միջավայրում մանրօրգանիզմների ակտիվ մասնակցությամբ սինթեզվում են երկրորդական միներալներ:

Սովետական Հայաստանի գրեթե բոլոր հրաբխային ծածկույթներն այժմ իրենց վրա կրում են հողմահարման կեղև, ինչպես նաև հողի շերտ: Ոչ ոք չի տարակոստում, որ սրանք լավաների հողմահարման արգասիք են:

Հողմահարման պրոցեսը համամոլորակային է, միայն թե տվյալ ֆիզիկաաշխարհագրական պայմաններում գերակշռում են այս կամ այն գործոնները: Անապատում օրական

շերմաստիճանների մեծ տատանումների հետևանքով գերակշռում է մեխանիկական հողմահարումը, Անտարկտիդայում՝ սառնամանիքայինը, հասարակածային խոնավ անտառներում՝ կենսաքիմիականը: Երբ զանգվածային մայր ապարները ժամանակի ընթացքում վերածվում են կավի, տեղի է ունենում լատերիտացում, գրանիտի տեղում ի վերջո մնում է բոքսիտ:

Տեղատարումը (դենուդացիա) մանրացված նյութի տեղափոխման երևույթն է, որը կատարվում է օդի, ջրի, սառցադաշտերի, կենդանի օրգանիզմների միջոցով, ծանրության ուժի ներգործությամբ: Տեղատարման պրոցեսի էներգետիկ աղբյուրը Արեգակն է: Պետք է նշել, որ հողմահարման ու տեղատարման սահմանը բավական անորոշ է. այս երկուսը միասին են հանդես գալիս: Օրինակ՝ ջուրը, մտնելով ժայռի ճեղքի մեջ, սառչելով լայնացնում է ճեղքը և բեկորը պոկվում է, տեղաշարժվում: Հենց այդ շարժումը նշանակում է տեղատարում: Հայկական ՍՍՀ-ի հրաբխային ծածկույթներում շատ են տարածված քարացրոնները (շինգիլները): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեքության վրա գտնվող քարաբեկորները սառչելու հետևանքով շարժվում են տարեկան մի քանի միլիմետր: Այս պրոցեսը և հողմահարում է և տեղատարում: Քամին գետնից բարձրացնելով ավազի հատիկները հարվածում է ժայռին, մաշում է, ժամանակի ընթացքում ժայռերը սնկի տեսք են ստանում: Սրանք այսպես կոչված էոլային (հողմային) երևույթներ են: Ուրեմն, այստեղ երկու պրոցեսը՝ ապարի քայքայումը և քայքայված նյութի տեղափոխությունը միաժամանակ են տեղի ունենում:

Հողմահարված նյութերի օդային տեղաշարժը (միզրացիան) Երկրագնդի վրա շատ տարածված երևույթ է, օդի միջոցով նյութերը տեղափոխվում են հազարավոր կիլոմետրեր: Հայտնի են դեպքեր, երբ արևադարձային թայֆունները կործանել են տներ, արմատախիլ են արել հաստաբուն ծառերը, հողաշերտը մի քանի սմ, նույնիսկ տասնյակ սմ հաստությամբ տեղահանվել է, տեղափոխվել ու նստել է առ տեղ:

Անապատներում քամիները վերադասավորում են ավազի ու փոշու շերտը, առաջացնում են փոշու մրրիկներ: ՍՍՀՄ-ի

Մերձկասպյան դաշտավայրում, Ղազախստանում հաճախակի են «սև մլրբիկները»։ դրանք հսկայական վնաս են հասցրելով ժողովրդական տնտեսությանը։ Քամիների միջոցով հողաշերտը տարվում է (հողմային կամ քամու էրոզիա) և նրստելով դաշտերում ու այգիներում առաջացնում է անկառուցվածք (անստրուկտուր) հողի շերտ, որը նույնպես վնաս է բերում դաշտավայրությանը։ Քամին կուտակում է փոշի, որից առաջանում է լյոսի շերտ։ ՍՍՀՄ Եվրոպական մասում, Կենտրոնական Եվրոպայում, Չինաստանում լյոսը լայնորեն տարածված է, և ըստ վերջին ուսումնասիրությունների՝ հողմային ծագում ունի։

Տեղատարման պրոցեսներում շատ մեծ է ջրի դերը։ Շարժունակության տեսակետից ջուրը օդից հետո երկրորդն է և էրոզիոն վիթխարի աշխատանք է կատարում։ Ջրի կողմից կատարած էրոզիան տեղատարման ուղորտներից մեկն է. այն հիմնականում բաժանվում է երկու տարատեսակի՝ մակերեւվութային էրոզիա (հողի էրոզիա) և հունային էրոզիա (գետային էրոզիա)։ Հունային էրոզիան անընդհատ պրոցես է։ Հնոող ջուրը քայքայիչ աշխատանք է կատարում գետի ակունքից մինչև գետաբերան։ Աշխարհի բոլոր գետերը դեպի օվկիանոս են տանում տարեկան  $1,5 \cdot 10^{10}$  տ կախված, գլորվող ու լուծված նյութեր։ Գետերի խորքային էրոզիայի հետեւանքով լեռնային երկրները մասնատվում են, առաջանում են անդնդախոր կիրճեր։

Տեղատարման պրոցեսների մեջ զգալի աշխատանք են կատարում սառցադաշտերը։ Սառցադաշտը նստած է երկրի մակերևութին և իր շարժման ընթացքում հունը մաշում է։ Սառույցը շի կարող անմիջականորեն ապարները քայքայել, որովհետև դրանք ավելի կարծր են. սառցադաշտի հիմքում գտնվող քարաբեկորը շարժվելով սառցի հետ միասին հղկում է հունը, միևնույն ժամանակ ինքն էլ հղկվում է։ Սառցադաշտը լեռնային երկրից դուրս է բերում լեռնալանջերից նրավրա թափված քարաբեկորները։ Սառցադաշտային բերվածքները՝ սառցաբերուկները կոչվում են մորեններ, իսկ սառցադաշտի հալոցքային ջրերի բերվածքները ջրասառցադաշտային (ֆլուվիոգլացիալ) նստվածքներ։ Սրանք մեծ տարածում ունեն նախկինում սառցապատված լեռնային երկրը։

ներում: Իտալիայում մորենային կուտակումներն առաջացրել են արգելափակման լճեր՝ Կոմոն, Գարդան Լագոմաջիորե. ալպյաիսի լճեր կան Կովկասում, Միջին Ասիայում, Կորդիլիերներում:

Նյուֆի համաշխարհային շրջապտույտի օղակներից մեկը նստվածքադոյացումն է: Նստվածքները գոյանում են օվկիանոսում ու ծովում, լճերում, ցամաքի գոգավոր մասերում, լանջերի ստորոտին: Օվկիանոսներում նստվածքները առաջանում են գետերի բերվածքներից, ավաքերումից, հրաբխային արտավիժումների նյութերից, տիեզերական փոշուց, օվկիանոսում ապրող օրգանիզմների մնացորդներից:

Օվկիանոսի հատակին ամենից մեծ տարածում ունեն պելագիալ նստվածքները, ցամաքներին մոտ գոնայում՝ հեմիպելագիալ, իսկ ցամաքային ծանծաղուտում՝ ցամաքածին (տերրիգեն) նստվածքները: Օվկիանոսներում հանդիպում են նստվածքների ծագումնաբանական բոլոր խմբերը՝ ցամաքածին, կենսածին, հրաբխածին, քիմիածին (քեմոգեն), բազմածին (պոլիգեն): Սակայն տիրապետող են պելագիալ ծագման կենսածին ու բազմածին նստվածքները:

Կրային կենսածին նստվածքները (գլխավորապես Ֆորամիլիֆերային) կուտակվում են բաց օվկիանոսում՝ կարգունատագոյացման կրիտիկական խորությունների վերև: Միլիցիումային կենսածին նստվածքները (դիատոմային, ադիոլյարային) կուտակվում են այն լայնություններում, որտեղ օրգանիզմների կենսական ակտիվությունը մեծ է: Օվկիանոսում առաջանում են նաև կարմիր կավ, քիմիածին (քեմոգեն) նստվածքներ (գլխավորապես կիսափափ ծոցերում): Նստվածքները ժամանակի ընթացքում ենթարկվում են դիագենեզի, կատագենեզի և մետագենեզի:

Դիագենեզը ապարների առաջացման առաջին փուլն է, երբ օվկիանոսի հատակում տեղմը աստիճանաբար կերպարանափոխվում է, որոշ բաղադրիչներ լուծվում են, տեղի է ունենում իոնների փոխանակություն: Դիագենեզին հաջորդում է կատագենեզը, երբ նստվածքներն սկսում են խտանալ, վերածվել քարային նյութի, ավելի ուշ՝ մետագենեզի փուլում ապարների մեջ խոր փոփոխություններ են կատար-

վում, սկսվում է փոխակերպության (մետամորֆիզմ) երե-  
վույթը:

Լճային նստվածքների մասին խոսվել է համապատաս-  
խան բաժնում, այստեղ միայն նշենք, որ շրջապատույտի ըն-  
թացքում նյութերը լճային նստվածքներում երկար ժամա-  
նակ կանգ են առնում, դուրս են գալիս ակտիվ շարժման  
ոլորտից: Հետագայում հնարավոր է, որ էրոզիոն երևույթնե-  
րը ընդգրկեն լճային նստվածքները ևս, և նորից այդ նյու-  
թերը մտնեն շրջապատույտի ոլորտը: Օրինակ՝ Շիրակում, Լե-  
նինականյան գոգավորության մեջ նստած վերին պլիոցենյան  
լճային նստվածքները Ախուրյան գետի միջոցով տեղատար-  
վում են:

Ցամաքային նստվածքներն առաջանում են թե՛ քամու աշ-  
խատանքների և թե՛ ծանրահակ ուժի հետևանքով: Այս  
նստվածքները շատ քաղմազան են, կուտակվում են լեռնա-  
լանջերին կամ ստորոտներին և կոչվում են լանջակուտակ  
(դելտավիալ): Սրանք տեսակավորված չեն, լեռնալանջերից  
իջնում են ջրի շիթերի կամ ծանրահակ ուժի ազդեցության  
տակ: Բոլոր լեռնային երկրներում թույլ թեքության լանջե-  
րին ու ստորոտներին կհանդիպենք լանջակուտակ նստվածք-  
ների: Լանջակուտակ նստվածքներ գոյանում են նաև լանջա-  
սահմի (դեֆլուվիցիա) միջոցով, երբ ջերմաստիճանային  
տատանումների ու սառելու հետևանքով նստվածքներում  
առաջանում են ժալալային փոփոխություններ և փխրուն  
նստվածքները լանջով աստիճանաբար ցած են սահում:

Ցամաքային նստվածքներից են գետաբերուկային (ալլու-  
վիալ) և հեղեղաբերուկ (պրոլյուվիալ) նստվածքները: Ցա-  
մաքային ժաղման նստվածքների շարքին են դասվում նաև  
տորֆը, ճահճային տիղմն ու օրգանական այլ նստվածքներ:

### ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹՈՒՄ

Երկրագունդը տիեզերքից ստանում է երկու տեսակի  
էներգիա՝ արեգակնային ու տիեզերական: Արեգակնային  
ճառագայթումը կազմում է  $5,8 \cdot 10^{24}$  ջոուլ/տարի ( $1,37 \cdot 10^{24}$   
կալ) և մոտ 10 հազ. անգամ գերազանցում է Երկրի խորքից  
ստացած էներգիային: Տիեզերքից Երկիրը ստանում է  
 $3,8 \cdot 10^{16}$  ջոուլ/տարի: Վերը բերած թվերից ակներև է, որ

տիեզերքից ստացած էներգիան Արեգակի տվածի համեմատ  
մոտ հարյուր հիսուն միլիոն անգամ փոքր է, ուստի գործնա-  
կանորեն վերնածին (հիպերգեն) պրոցեսներում ոչ մի նշա-  
նակութուն չունի:

«Մթնոլորտ» բաժինը քննարկելիս մենք ցույց տվեցինք,  
որ Արեգակից ճառագած էներգիան ամբողջովին Երկրի մա-  
կերևույթ չի հասնում: Օրգանական աշխարհի համար վտան-  
գավոր ճառագայթների մեծ մասը կլանվում է տարբեր  
ոլորտների էկրանների կողմից: Երկրին հասնում է  $2,3 \cdot 10^{24}$   
ջոուլ/տարի ( $5,5 \cdot 10^{23}$  կալ), որի մեծ մասը ժախսվում է գո-  
լորշացման վրա:

Երկրի մակերևույթ հասած էներգիան, համագործակցելով  
Երկրի ծանրահակ ուժի հետ, պայմանավորում է մթնոլորտի  
և ջրոլորտի շրջապտույտները: Արեգակնային ճառագայթու-  
մը, Երկրի վրա գործի դնելով շրջանառական տարբեր ոլորտ-  
ներ, գրեթե ամբողջությամբ վերածվում է ջերմության և ճա-  
ռագայթաարձակման միջոցով նորից վերադառնում է տիե-  
զերք: Սակայն այդ շրջապտույտը փակ չէ. ճառագայթների  
մի մասը ֆոտոսինթեզի միջոցով քիմիական էներգիայի ձե-  
վով կուտակվում է կենսազանգվածի մեջ: Կենսոլորտում ա-  
մեն տարի կուտակվում է  $3,3 \cdot 10^{21}$  ջոուլ, իսկ կենսոլորտում  
կենտրոնացած կենսազանգվածը պարունակում է  $4,2 \cdot 10^{23}$   
ջոուլ. այդ նշանակում է, որ օրգանական աշխարհում կու-  
տակված էներգիան յուրաքանչյուր 10—15 տարում նորոգ-  
վում է: Օրգանիզմների մեռնելուց հետո տեղի է ունենում  
օքսիդացման պրոցես, նրանց մեջ կուտակված քիմիական  
էներգիան վերածվում է ջերմայինի, և միայն մի փոքր մասը  
կուտակվելով դառնում է հումուսային նյութի քիմիական  
էներգիա:

Օրգանական նյութի մի մասը, օվկիանոսի հատակում  
սուզվելով մանթիայի մեջ և այնտեղ օքսիդանալով, վերած-  
վում է ջերմային էներգիայի: Վերջին ժամանակների ուսում-  
նասիրությունները ցույց են տալիս, որ հողմահարման են-  
թարկվելիս մի քանի միներալների բյուրեղային ցանցը էներ-  
գիա է կլանում: Երկրի խորքում այդ միներալների վերաբյու-  
րեղացման ժամանակ էներգիան անջատվում է և մտնում շըր-  
ջապտույտի մեջ:

էնեղբայրիկ աղբյուրների մեջ վերջին ժամանակներս արդեն զգալի տեղ է գրավում մարդկային հասարակության տնտեսական գործունեության հետևանքով արտադրվող էներգիան: 1970 թ. այն կազմում էր  $10^{19}$  ջոուլ, իսկ 2100 թ. կկազմի  $10^{22}$  ջոուլ (Կ. Կ. Մարկով, 1978): Այդ էներգիայի մի մասը նորից արեգակնային էներգիան է, որ կուտակվել է կաուստոթիոլիտների (վառելանյութերի) մեջ, մյուս մասը՝ թափվող ջրի էներգիան է: Աստիճանաբար աճում է միջուկային ռեակցիաներից ստացած էներգիայի արտադրությունը, որը Արեգակի հետ անմիջական կապ չունի:

Հստ էներգետիկների համաշխարհային 7-րդ կոնֆերանսի նյութերի՝ 2000 թ. էլեկտրաէներգիայի 50 %-ը կստացվի միջուկային ռեակցիաներից: Գիտնականների մի մասը զրտնում է, որ մարդու կողմից արտադրած էներգիան քարձրացնելու է երկրի մակերևույթի շերմաստիճանը:

Բազմամյա դիտումներից պարզվել է, որ ինչպես Երկրի մակերևույթի, այնպես էլ մթնոլորտի շերմաստիճանները շին փոխվում: Երկիրը և մթնոլորտը գտնվում են էներգետիկ հավասարակշռության մեջ: Զերմության այն քանակը, որ ստանում են Երկիրն ու մթնոլորտը, ի վերջո վերադարձվում է տիեզերական տարածություն: Երկրի մակերևույթին հասնում է արեգակնային ճառագայթման 50 %-ը, այս քանակի 0,3 մասը ճառագայթվում է, 0,55 մասը մթնոլորտ է մրտնում ջրային գոլորշիների հետ՝ թաքնված շերմության ձևով, իսկ 0,15 մասը մթնոլորտ է անցնում կոնվեկտիվ շերմափոխանակման միջոցով: Մթնոլորտը Երկրի համար տաք վերմակի դեր է կատարում: Մթնոլորտի բացակայության դեպքում երկրի մակերևույթի շերմաստիճանը  $33^{\circ}$ -ով ցածր կլիներ, քան այժմ է նկատվում:

Երկրի մակերևույթը տարբեր լայնությունների տակ տարբեր շափով է տաքանում: Վ. Վ. Շուլեյկինը այս երևույթը անվանում է առաջին կարգի շերմային մեքենա: Երկրորդ կարգի շերմային մեքենա Շուլեյկինը համարում է երկրի մակերևույթի տարբեր բնույթի՝ ցամաքների ու օվկիանոսների տարբեր կերպով տաքացման հետևանքով առաջացած, օդային զանգվածների հորիզոնական շարժումը և այդ շարժ-

ման հետևանքով ջերմության տեղաշարժը՝ ծովից ցամաք և ցամաքից ծով (մուսսոնները):

Ջերմային շրջապտույտները սերտորեն կապված են օվկիանոսային և մթնոլորտային շրջապտույտների հետ: Այսինքն, թե՛ օվկիանոսային և թե՛ մթնոլորտային շրջապտույտները ջերմաստիճանային տարբերությունների արգասիք են: Հասարակածային և արևմտարևելյան գոտիներում տաքացած ջրերը արեգակնային էներգիան տանում են մերձբևեռային շրջաններ, այստեղ այն հաղորդվում է շրջապտույտին, օդը տաքանում է:

Մուսսոնային երկրներում ամառային ամիսներին օդային զանգվածները ծովից թափանցում են ցամաք, շնայած ցամաք փոխադրվող օդը ավելի ցածր ջերմաստիճան ունի, սակայն իր հետ բերում է մեծ քանակի խոնավություն, որը պարունակում է գոլորշացման թաքնված ջերմության վիթխարի պաշար: Ցամաքի վրա գոլորշիները խտանալով՝ այդ ամբողջ ջերմային էներգիան հաղորդում են օդին: Չմեռային ամիսներին ցամաքից ծով փչող օդային զանգվածները ճառագայթային ցրտեցման հետևանքով ունեն ցածր ջերմաստիճան: Սրանք շարժվելով դեպի ծով մասամբ տաքանում են, ընդունում են գոլորշիներ և բարձրանում վեր՝ իրենց հետ տանում են գոլորշացման թաքնված ջերմություն, որը հաղորդվում է շրջապտույտին (երբ գոլորշիները խտանում են): Ջերմությունից ու խոնավությունից զրկված օդը վերին շերտերով ուղղվում է դեպի ցամաք: Այսպիսով մուսսոնային շրջապտույտի ընթացքում ամռանը ցամաքի վրա, ձմռանը ծովի վրա, մթնոլորտի վերին մասում (որտեղ տեղումներ են ձևավորվում) ջերմության մեծ պաշարներ են կուտակվում: Նույն մեխանիզմով ջերմաշրջանառություն է կատարվում օրական բրիզների (ծովագեպիտու) միջոցով՝ երբ ցերեկը քամին փչում է ծովից ցամաք, գիշերը՝ հակառակը:

Ջերմության շրջապտույտը երկրի մակերևույթի և մթնոլորտի միջև կատարվում է ոչ միայն ճառագայթմամբ, այլ նաև գոլորշացման թաքնված ջերմության անջատման միջոցով: Բնական է, որ տաք երկրներում, որտեղ գոլորշացումն ինտենսիվ է արտահայտված, այդ պրոցեսում շատ ջերմություն է կլանվում, մինչդեռ ցուրտ երկրներում, որտեղ գոլոր-

շացումը թույլ է, ջերմության ծախսը փոքր է: Անապատային շրջաններում ջրի բացակայության պայմաններում երկրի մակերևույթին գոլորշացման վրա ջերմություն չի ծախսվում, համապատասխանաբար էլ օդի վերին շերտերում ջերմություն չի անջատվում:

### ՄՔՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, Երկրագնդի վրա ամենաշարժուն տարրը օդն է, որը երկրի մակերևույթի վրա կարող է շարժվել վայրկյանում մի քանի տասնյակ և նույնիսկ 100 մ արագությամբ: Օդի հորիզոնական շարժումը կոչվում է քամի: Վերջինս առաջանում է մթնոլորտի ճնշման տարբերության հետևանքով՝ բարձր ճնշման վայրից քամին փչում է ցածր ճնշման վայրը:

Մթնոլորտի ճնշումը օդի սյան ճնշումն է երկրի մակերեւույթի վրա, նրա կշիռը: Պարզվել է, որ հազարավոր կիլոմետրեր հաստություն ունեցող օդի շերտը երկրի մակերեւույթի վրա ունի սնդիկի 760 մմ բարձրության շերտին համասար ճնշում ( $45^\circ$  լայնության տակ, ծովի մակարդակին,  $0^\circ$ -ի դեպքում): Այսինքն, եթե Երկիրը շրջապատված լիներ սնդիկով, ապա այդ շերտի հաստությունը կլիներ 76 մմ:

Մթնոլորտի ճնշումը չափում են նաև միլիբարերով ( $1 \text{ մբ} = 0,75 \text{ մմ սնդիկի սյան ճնշմանը}$ ):


$0^\circ$ -ի տակ սնդիկի թառությունը 13,595 է, 760 մմ բարձրություն ունեցող սնդիկի սյունը 1 սմ<sup>2</sup> հիմքի վրա կկշռի 1033,2 գ, հետևաբար մթնոլորտի կշիռը 1 սմ<sup>2</sup>-ի վրա կազմում է 1 կգ 33 գ: Մթնոլորտի ճնշումը արտահայտում են նաև դիներով կամ նյուտոններով: Նորմալ ճնշումը կլինի 1013250 դին/սմ<sup>2</sup> կամ 1,013250.10<sup>5</sup> Ն/սմ<sup>2</sup>: 1 մլն դինը հավասար է 1 բարի: 1 բարը =  $10^5$  Ն/սմ<sup>2</sup>, բարի մեկ հազարերորդականը կոչվում է միլիբար, 1 մբ =  $10^2$  Ն/սմ<sup>2</sup>, կամ 0,75 մմ սնդիկի սյան ճնշման, 1 մմ սնդիկի սյունը = 1,33 մբ: Օդկայաններում ճնշումն արտահայտում են միլիբարերով: Վերջերս մթնոլորտի ճնշումը արտահայտում են նաև պասկալներով:

Հայտնի է, որ մթնոլորտի ճնշումն ըստ բարձրության նվազում է. քանի որ մթնոլորտի բարձր շերտերում օդը շատ նոսր է, ուստի վերևում՝ մթնոլորտի շերտի պակասեցմանը զուգընթաց, ճնշումն ընկնում է երկրաշափական պրոգրեսիայով: Այդ փոփոխությունը արտահայտվում է բարոմետր-

դրիկ աստիճանով (բարոմետրիկ աստիճանը մետրերի այն քանակն է, որի դեպքում ըստ բարձրության ճնշումն ընկնում է 1 մմ-ով կամ 1 մր-ով: Սովի մակարդակին այն հավասար է 8 մ/մր կամ 10,5 մ/մմ, 5 կմ բարձրության վրա՝ 15 մ/մր և այլն:

Մթնոլորտի ճնշման տարածումը երկրի մակերևույթի վրա կոչվում է բարիկական կամ ճնշման դաշտ, որը փոփոխվում է թե՛ տարածության, թե՛ ժամանակի մեջ: Երկրի մակերևույթի վրա հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գծերն անվանում են իզոբարներ (հավասարաճնշում): Բայց ցամաքի մակերևույթը հարթ չէ, ունի բարձր ու ցածր մասեր. իզոբարներ կազմելու համար ռելիեֆի բոլոր բարձրությունները բերվում են ծովի մակարդակին: Օրինակ, եթե Երևանում ճնշումը 670 մմ է, ծովի մակարդակին բերելով՝ կստացվի 765,2 մմ: Երևանի բարձրությունը ծովի մակարդակից 1000 մ է.  $1000:10,5$  (բարոմետրիկ աստիճան) = 95,2, գումարելով 670-ին՝ կստանանք 765,2 մմ:

Ինչպես նշեցինք, օդի դինամիկայի՝ քամիների առաջացման համար անհրաժեշտ է ճնշումների տարբերություն. այդ տարբերությունն ստացվում է երկրի մակերևույթի անհավասար տաքացման հետևանքով: Ինչպես ցույց է տալիս նկ. 14-ը, եթե մթնոլորտի երկու իրար հարևան սյուները հավասար են տաքանում (Ա), ապա նրանց մոտ ծավալային տարբերություններ չկան: Մեկ այլ դեպքում (Բ), աչ կողմի



Նկ. 14. Քամիների առաջացման սխեման:


սյունը տաքացել է և ընդարձակվել, բարձրացել է վեր, այնտեղ օդի մի մասը տեղափոխվում է ձախ սյան վրա, որի հետևանքով վերջինիս ճնշումը երկրի մակերևույթին բարձրանում է, իսկ աջակողմյանի ճնշումը՝ պակասում: Ակներև է, որ ձախակողմյան սյունից օդի մի մասը գետնի մակերևույթով պետք է տեղափոխվի դեպի աջ, որը և քամին է: Որքան ճնշումների տարբերությունները մեծ լինեն, այնքան քամին

ուժգին կլինի. ուրեմն քամու արագությունը ուղիղ համեմատական է ճնշման գրադիենտի մեծությանը: Իզոբարների քարտեզի վրա քամու ուղղությունը միշտ իզոբարի գծին ուղղահայաց է: Այնտեղ, ուր իզոբարների գծերը միմյանց շատ են մոտենում, ճնշումների տարբերությունները մեծ են, և քամիներն ուժգին են:

Քամիների առաջացման այս նախնական պատկերացումից հետո այժմ ցույց տանք մթնոլորտի համաշխարհային շրջապտույտի սխեման: Օդի համաշխարհային շրջապտույտը ընդգրկում է ամբողջ ստորին ոլորտը: Օդային զանգվածները մի շարք օղակներ անցնելով, հասարակածային շրջաններից հասնում են բևեռային շրջաններ: Ստորին ոլորտում օդի վիթխարի շրջանառության շնորհիվ նրա բաղադրության մեջ եղած ամենաաննշան տարրերությունները համահարթվում են: Այս շրջանառության էներգիայի աղբյուրը Արեգակն է, իսկ պրոցեսի վրա ազդող ուժերն են Կորիոլիսյան ուժը և երկրի մակերևույթի տարբեր շերտացման հետևանքով առաջացած ճնշումների տարբերությունները:

Քննարկենք շրջանառության պատկերը այն դեպքում, երբ պայմանականորեն ընդունենք, որ Երկիրը իր առանցքի շուրջը չի պտտվում: Ինչպես ցույց է տալիս գծագիրը (նկ. 15), մերձբևեռային շրջաններում ցուրտ է, գոյություն ունի բարձր ճնշում, իսկ հասարակածային շրջաններում՝ ցածր: Նշանակում է գետնի մակերևույթի վրա բևեռներից օդը պետք է ուղղվի դեպի հասարակած, այնտեղ բարձրանա վերև՝ ստորին ոլորտի վերին շերտերը, այնտեղից հակառակ ուղղությամբ կշարժվի դեպի բևեռ, և շրջանառությունը շատ պարզ տեսք կստանա: Բայց Երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը և կորիոլիսյան ուժի շնորհիվ հյուսիսային կիսագնդում շարժվող մարմինները շեղվում են դեպի աջ (անկախ շարժման ուղղությունից), իսկ հարավային կիսագնդում՝ ձախ: Հենց այս ուժն էլ մեծ բարդություն է առաջացնում, և բևեռի ու հասարակածի միջև շրջապտույտի մեկ օղակի փոխարեն առաջանում են երեքը (նկ. 15):

Հասարակածում տաքացած ու թևթևացած օդը բարձրանում է վեր՝ ստորին ոլորտ և ուղղվում է հյուսիս կամ հարավ: Սրանք անտիպասատներն են, որ անցնում են 4—6—8



Եկ. 16. Մթնուրտի շրգապատայտի սխեման:

կմ բարձրութեան վրա, սակայն ճանապարհին շեղվում են աջ (հյուսիսային կիսագունդ) շհասած 35° լայնութեանը, այնքան են շեղվում, որ ունենում են արևմտյան ուղղութիւն<sup>1</sup>: Նշանակում է անտիպասսատները շկարողացան բևեռ հասնել և կուտակվեցին 30—35 աստիճան լայնութիւնների տակ: Այստեղ, բնականաբար մթնուրտի ճնշումը՝ Երկրի մահերևութիւն մեծանում է և քանի որ հասարակածում ճնշումը ցածր է, քամիների մի մասը շարժվում է դեպի հասարակած և շեղվելով դեպի աջ՝ ունենում է հյուսիս արևելյան ուղղութիւն (հարավային կիսագունդում ձախ շեղվելու պատճառով քամու ուղղութիւնը հարավ արևելյան է): Մրանք պասսատներն են, որոնք ցամաքի վրա շատ շոր քամիներ են: Պասսատների գոտում օդի մի մասը ուղղվում է դեպի հասարակած, իսկ մյուս մասը ուղղվում է դեպի հյուսիս: Մրանք, հասնելով մինչև 50—60° լայնութիւնները, այնքան են շեղվում աջ (հյուս. կիսագունդ), որ ունենում են արևմտյան ուղղութիւն: Ատլանտյան օվկիանոսից այդ քամիները բերում են խոնավութիւն

<sup>1</sup> Քամիների ուղղութիւնը քննուկած է անվանել հորիզոնի այն կողմի անունով, որտեղից փչում են:

ու շերմություն: Ուրեմն բարեխառն լայնություններում տիրապետող են արեամայան քամիները: Իսլանդական մինիմումի շրջանից ցիկլոնները արեամայան քամիների միջոցով թափանցում են Եվրոպա ու հասնում մինչև Արևելյան Սիբիր:

50—60° լայնություններում նորից ցածր ճնշում է. վերեքարձրացած օդի մի մասը ստորին ոլորտի վերին շերտերով ուղղվում է դեպի պասսատների գոտին, իսկ մյուս մասը՝ բեկու: Այստեղ վարընթաց հոսանքի միջոցով իջնում է երկրի մակերեսով և ուղղվում դեպի 50—60° լայնությունները՝ ճանապարհին շեղվելով դեպի աջ: Սրանով փակվեց երրորդ օղակը: Նույն օղակներն առաջանում են հարավային կիսագնդում: Այստեղ կորիոլիսյան ուժի ազդեցությամբ քամիները ամենուրեք շեղվում են դեպի ձախ: Այսպիսով, մթնուլորտի ընդհանուր շրջապտույտի ախնայում ստացվում է երկու ցածր ճնշման գոտի (հասարակածային, բարեխառն) և երկու՝ բարձր ճնշման՝ պասսատների ու արկտիկական (անտարկտիկական):

Մթնուլորտի վերը նշված շրջապտույտը առանձին օղակներում կարող է խախտվել տեղական պատճառներից: Օրինակ՝ ցամաքի ու ծովի տեղաբաշխման պատճառով Իրանի հարավում, թար անապատում ամռանը պետք է բարձր ճնշում լիներ, այստեղից պասսատները պետք է փչին դեպի ծով, սակայն պատկերը բոլորովին հակառակն է. հաստատվում է ճնշման իրանական մինիմումը, որն իրեն է ձգում Հնդկական օվկիանոսի խոնավ օդը:

Հարավային կիսագնդում պասսատները այնքան զորեղ են, որ հաճախ հասնում են հասարակած ու անցնում հյուսիսային կիսագոլուծ: Այստեղ նրանք շեղվում են դեպի աջ, միանում են մուսսոններին և ներխուժում Հնդկաստան, Հընդկաշին, դրա համար էլ այստեղի մուսսոնները այդքան զորեղ են:

Մթնուլորտի ընդհանուր շրջապտույտում առանձնացնում են բարձր ճնշման ու ցածր ճնշման մարզեր: Բարձր ճնշումը յուրահատուկ է Ազոբյան ու Կալիֆոռնիական մաքսիմումներին: Այս շրջաններում ձևավորվում են պասսատներ, և, բնականաբար, ճնշումը բարձր է: Բացի դրանից նպաստող հանգամանք են նաև տաք ծովային հոսանքները՝ Կանարյան ու

Պալիֆոննիական փոխհատուցման (կոմպենսացիոն) հոսանքները, որոնց շփվող օդը սառչելով ծանրանում է, ճնշումը մեծանում է, և այստեղ միշտ ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա) է լինում, մատախուղը սովորական երեվույթ է:


Ցածր ճնշման պարզորոշ արտահայտված կենտրոններն են Իսլանդական ու Ալեության կենտրոնները. սրանք առաջնում են այն պատճառով, որ օվկիանոսային տաք հոսանքները մեծապես փոխում են Իսլանդիայի ու Ալեության կղզիների շրջանների սուլյար (արևային) ջերմաստիճանները, դրանից էլ ճնշումը փոքրանում է ու հաճախակի ձևավորվում են ցիկլոններ:

Արևադարձային լայնությունների տակ ձևավորվում են բարձր ճնշման կենտրոններ, հատկապես Ազորյան ու Հավայան մաքսիմումները: Հարավային կիսագնդում զուգաշափոթեն դասավորվում են ցածր և բարձր ճնշման գոտիները:

Մթնոլորտային ճնշումն արտահայտող քարտեզները կարելի է կազմել ոչ միայն երկրի մակերևույթի համար, այլև ցանկացած բարձրության մակարդակի համար: Առենք թե հիմք է ընդունվում 9 կմ բարձրությունը, այսինքն 500 մր, իզոթարային մակերևույթը. այստեղ ստացված իզոթարերը ճնշումների զգալի տարբերություններ են տալիս: Արևադարձների տակ մինչև 588 մր, իսկ բևեռային շրջաններում 500—505 մր. ուրեմն 500 մր իզոթարիկ մակերևույթը հորիզոնական չէ, այլ ունի կիսի ինչ-որ պատկեր է ստեղծում, ուստի պայմանականորեն այն անվանում են բարիկական կամ ճնշումաչափական ունի կիսի: Այդպիսի քարտեզի օգնությամբ հեշտությամբ կարելի է որոշել, թե քամիներն այդ բարձրության վրա ինչ ուղղություն ունեն:

Մթնոլորտի համաշխարհային շրջապտույտի ընդհանուր ֆոնի վրա կան տեղական բնույթի ավելի փոքր շրջապտույտներ. դրանցից են՝ մուսսոնները, ցիկլոնները, անտիցիկլոնները, բրիզները, բորան և այլն:

Մուսսոնային շրջապտույտը տեղի է ունենում օվկիանոսի ու ցամաքի միջև: Չմեռային ամիսներին ցամաքն ավելի սառն է, մթնոլորտային ճնշումը՝ բարձր, ուստի քամիները ուղղվում են դեպի ծով (նկ. 16): Ամռանը ծովի վրա է ճնշ-



Նկ. 16. Մուստենների սառչացման սխեման:


շումն ավելի բարձր, ուստի քամիներն ուղղված են ծովից ցամաք: Մուստենները շատ զարգացած են Հնդկաստանում, Հնդկաչինում, Արևելյան Չինաստանում, Հեռավոր Արևելքում, ԱՄՆ-ի հարավ-արևելյան մասում և այլն: Հայկական լեռնաշխարհում նույնպես նկատվում է մուստենային թույլ շրջանառություն. ձմեռային ամիսներին լեռնաշխարհում հաստատվում է բարձր ճնշում, մինչդեռ Սև և Կասպից ծովերի վրա օդը համեմատաբար տաք է, ու նկատվում է վերջնից շարժում: Հայկական լեռնաշխարհից քամիները ուղղվում են Սև և Կասպից ծովեր: Ամռանը նշված ծովերի վրա ճնշումը բարձր է, մինչդեռ լեռնաշխարհում տաք է, օդի վերջնից շարժում կա, ուստի և ծովերից քամիները ուղղվում են դեպի լեռնաշխարհ՝ ամռան սկզբին տալիս են տեղումներ, հատկապես դեպի ծով ուղղված լանջերին: Ամռան երկրորդ կեսին տեղումները խիստ պակասում են այն պատճառով, որ այդ տարածքի վրա արևադարձային օդային զանգվածներ են հաստատվում:

Մուստենային կլիմա ունեցող երկրներում ցայտուն արտահայտված է կլիմայական տարրերի սեզոնային ութմը՝ ամռանը խոնավության առատություն է, ձմռանը չոր է՝ տեղումների նվազագույն քանակ:

Բրիզային (ծովազեփյուռ) քամիների մեխանիզմը նույնն է, ինչ որ մուստեններինը. այստեղ քամիները ուղղությունը փոխում են օրական երկու անգամ՝ գիշերը ցամաքից ծով, ցերեկը՝ հակառակը: Բրիզների երևույթը նկատվում է ծովի

միայն օրը մասերում մասերում՝ 20—40 կմ զոնայում: Բրիգաներ նկատվում են նաև լճերի ափերին (օրինակ՝ Սևանի ափին):

Օդի տեղական շրջանառության տարատեսակներից մեկը ֆյուն քամիներն են, որոնք տարբեր երկրներում ունեն իրենց հատուկ անունները: Նրա առաջացման մեխանիզմն այսպիսին է (նկ. 17). երբ լեռնաշղթայի երկու կողմերում մթնոլորտի ճնշումները տարբեր են, ապա բարձր ճնշման մարզից քամիները քամահար լանջով բարձրանում են, քամատակ լանջով՝ իջնում: Բարձրացող օդը պարունակում է խոնավության որոշ քանակ և վեր բարձրանալով ադիաբատիկ (անջերմանց) սառեցման է ենթարկվում, յուրաքանչյուր 100 մ բարձրանալիս ջերմաստիճանն իջնում է  $0,6^{\circ}$ -ով: Եթե լեռան բարձրությունը 2 հազ. մ է, —  $10^{\circ}$  ունեցող օդը մինչև կատար բարձրանալիս կորցնում է  $12^{\circ}$  և դառնում —  $22^{\circ}$ : Բայց վերև բարձրացող օդի մեջ խոնավությունը խտանում է, և տեղումներ են առաջանում, անջատված թափված ջերմությունը հաղորդվում է շրջապատին, որի շնորհիվ լանջով վեր բարձրացող օդի ջերմաստիճանը շատ չի իջնում:



Նկ. 17. Ֆյուն քամիների առաջացման սխեման:

Քամատակ լանջով իջնող օդի ջերմաստիճանն արագությամբ բարձրանում է յուրաքանչյուր 100 մ-ին  $1^{\circ}$ -ով, որովհետև օդն արդեն չորացել է, ապա 2000 մ իջնելիս B կետում ջերմաստիճանը բարձրանում է  $20^{\circ}$ -ով և դառնում է  $-2^{\circ}$ : Հակադիր լանջում նույն բարձրության վրա —  $10^{\circ}$  էր: Նշանակում


է ֆյուն քամիները սովորաբար տաք են և ձմեռային ամիսներին կարող են ուժեղ ձնհալք առաջացնել: Քիչ շին դեպքերը, երբ ֆյուն քամիները Արարատյան գոգավորությունից Գեղամա լեռների վրայով թափանցում են Սևանի ավազան և ձմռան կեսին Կամոյում ձնհալք առաջացնում:

Ֆյուն քամիներին նման է բորան: Այս քամին առաջանում է լեռնաշղթայի երկու կողմերում ջերմային հատկանիշներով տարբեր օդային զանգվածների ճնշումների տարբերությունից: Օրինակ՝ Նովոռոսիյսկի մոտ Կովկասյան լեռնաշղթան հազիվ 500 մ բարձրություն ունի. եթե Հյուսիսային Կովկասում տիրապետում է սառն օդային զանգվածը — 20° ջերմաստիճանով, իսկ Սև ծովի վրա տաք է՝ 10°, ապա լեռնաշղթան հաղթահարող օդի ջերմաստիճանն ընկնում է 3°-ով և դառնում է — 23°, հակառակ՝ քամատակ լանջն իջնելիս ջերմաստիճանը բարձրանում է 5°-ով, և ծովին հասնելիս օդն ունի — 18°, այն դեպքում, երբ տեղում օդի ջերմաստիճանը 28°-ով բարձր է (10°): Բնական է, հանկարծակի փչող այս սառը քամին ավերածությունների պատճառ կարող է դառնալ: Եղել են դեպքեր, երբ Նովոռոսիյսկում կանգնած նավերը արագ սառցակալվել են ու խորտակվել, կամ հեռագրասյունների վրա սառցի այնպիսի շերտ է գոյացել, որ սյուները այդ ծանրությանը շին դիմացել: Նման քամի ձմռանը փչում է նաև Բաքվում և կոչվում է Բաքվի Նորդ, Բայկալում՝ Սարմա, Ցրանսիայում, Ռոնա դետի հովտում՝ Միստրալ և այլն:

Տեղական քամիներից են լեռնահովտային քամիները, որոնք Հայկական ՍՍՀ-ում լավ զարգացած են: Ցերեկային ժամերին, մինչև կեսօր հովիտները տաքանում են ավելի շատ, քան հարթության վրա գտնվող ազատ օդը: Մինչև կեսօր օդը վերընթաց շարժում ունի՝ հովիտներով դանդաղ բարձրանում է: Կեսօրից հետո լեռան բարձր մասերից ավելի ծանր օդը հովտով իջնում է դեպի հարթություն՝ հովտի հատակը՝ բերելով գովություն: Ամռանը այդ քամին Սևանից Երևան է բերում թարմ օդ, և ջերմաստիճանը զգալիորեն իջնում է:

Օդի շրջանառության կարևոր տարրերից են ցիկլոններն ու անտիցիկլոնները: Ցիկլոնը ճնշման (բարիկական) այնպիսի համակարգ է, որի կենտրոնում նկատվում է նվազագույն ճնշում, իսկ եզրերում՝ բարձր: Նշանակում է քամիներ-

րը եզրերից ուղղվում են կենտրոն: Նկ. 18-ում պատկերված են համակենտրոն հավասարաճնշումներ-իզոբարեր, կենտրոնում ճնշումը ցածր է, եզրերում՝ բարձր: Քամիները ձգտում են կենտրոն. եթե Երկրագունդն իր առանցքի շուրջը շարժվեր, ապա քամիները կհասնեին ցիկլոնի կենտրոն և ցիկ-



Նկ. 18. Ցիկլոնի և անտիցիկլոնի սխեման:

լոնը կփակվեր: Բայց մենք գիտենք, որ հյուսիսային կիսագնդում շարժվող մարմինները շեղվում են դեպի աջ. ահա այստեղ է ցիկլոնի առաջացման բարդությունը: Ցիկլոնի կենտրոնում օդի հորիզոնական շարժում գրեթե չկա, գոյություն ունի վերընթաց շարժում, իսկ շրջապատից եկող քամիներն այնքան են շեղվում աջ, որ ստացվում է ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ քամիների համակարգ: Ցիկլոնի կենտրոնում օդի վերընթաց հոսանքի շնորհիվ տեղումներ են գալիս: Ցիկլոնի այն մասում, որտեղ քամիները հարավային կողմից են գալիս, ջերմաստիճանը բարձր է, իսկ հյուսիսից եկող քամիները լինում են սառը (հյուսիսային կիսագնդում):

Ցիկլոնները օդային զանգվածների հետ շարժվում են: Եթե որևէ վայրի վրայով ցիկլոն է անցնում, ապա սկզբում տաք քամիներ են փչում (հարավ-արևելքից), հետո ցիկլոնի կենտ-

ըսնն է անցնում, տեղումներ են գալիս, իսկ վերջում հյուսիսարևմուտքից փչում են թիկունքային, սառը քամիներ:

Յիկլոնները սովորաբար առաջանում են երկու տարբեր օդային զանգվածների սահմանների ճակատներում, երբ այդ ճակատները լեզվակներ են առաջացնում: Տար օդի լեզվակը սառն օդային զանգվածների շրջապատում անպայման ցիկլոն է առաջացնում: Բերենք Իսլանդական միհիմումի օրինակը:

Գոլֆստրիմ տաք օվկիանոսային հոսանքը Իսլանդիայի շրջանում տաքացնում է օդը, մինչդեռ Գրենլանդիայում, Սառուցյալ օվկիանոսում կամ Սկանդինավյան թերակղզում օդը սառն է: Նշանակում է Իսլանդիայից հեռանալիս ճնշումն արագորեն բարձրանում է, ստեղծվում է իսկական ցիկլոնային իրադրություն: Ձմեռային ամիսներին, երբ ջերմաստիճանային ու ճնշման դրադիենտներն ավելի մեծ են, գրեթե ամեն շաբաթ Իսլանդիայի շրջանում ցիկլոն է ձևավորվում և արևմուտք-արևելք տեղաշարժի միջոցով տեղափոխվում է արևելք (արևմտյան քամիների միջոցով): Նույն պատկերը տեսնում ենք նաև Ալեուիան միհիմումի շրջանում: Իսլանդիան ցիկլոնների իսկական ծննդավայր է, այստեղից է, որ ցիկլոններն արշավում են Եվրոպա:

Արևադարձային ցիկլոններին անվանում են թայֆուններ. սրանք ձևավորվում են  $5-20^\circ$  լայնությունների տակ, քամիների արագությունը մեծ է, երբեմն հասնում է 60 մ/վրկ: Թայֆուններն ունեն որոշակի ուղղություն՝ խաղաղ օվկիանոսում սկսվում են արևադարձների տակ, անցնում են օվկիանոսի արևմտյան ափ, հասնում են Չինաստան ու Ճապոնիա, մինչև Կուրիլյան կղզիներ ու Բերինգի ծով: Ատլանտյան օվկիանոսում՝ Անտիլյան կղզիների վրայով՝ Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափերով մինչև Նյու-Ցաունլենդ: Կենտրոնական Ամերիկայում թայֆունը կոչվում է խուրրագանես, Հյուսիսային Ամերիկայում՝ Տորնադո, Հարավ-արևելյան Ասիայում՝ Քայֆոն, Ավստրալիայից հյուսիսարևմուտք՝ Վիլլի-Վիլլի:

Արևադարձային թայֆունները շատ վտանգավոր են թե՛ ցամաքի և թե՛ ծովի վրա. նրանք քանդում են շենքեր, խորտակում հավեր և, ի տարբերություն բարեխառն լայնությունների

ցիկլոնների, փոքր շափեր ունեն: Շատ թափոնների տալիս են կանացի անուսներ՝ «նենսի», «ժաննետ» և այլն: Սրանց առաջացման պատճառն այն է, որ խոնավությունը հագեցած օդային զանգվածներում ցիկլոնների օդի վերընթաց շարժման ընթացքում գոլորշիները խտանում են և անջատում թափված ջերմություն, որն իր հերթին խթանում է վերընթաց շարժումը: Մթնոլորտի ճնշումն ընկնում է, առաջանում են փոթորիկալիքամիներ: Որոշ թափոններում բուռն վերընթաց շարժման հետևանքով լինում են առատ տեղումներ: Դրանց քանակը մեկ օրվա ընթացքում հասնում է 1000—1100 մմ-ի (Մանիլայում՝ մինչև 1168 մմ): Թափոնի կենտրոնում 15—30 կմ տրամագծով օդի վարընթաց շարժում է եկատվում, եղանակը պարզկա է ու հանգիստ (թափոնի «աչք»):

Մթնոլորտում երբեմն առաջանում են մրրկածն պտտահողմեր, որոնք ծագում են ամպրոպային ամպերում և ձագարի նման ձգտում են դեպի երկրի մակերևույթ և, երբ հասնում են այնտեղ, ստորին մասում լայնանում են: Պտտահողմերում օդը մեծ արագությամբ պտտվում է կենտրոնի շուրջը, մեծ մասամբ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Երբեմն քամու արագությունն ու վերընթաց շարժումը այնքան ուժգին են լինում, որ այն քանդում է շենքեր, մարդկանց ու կենդանիները բարձրացնում վեր: Սովորում պտտահողմերը ջուրը բարձրացնում են մինչև 800—1000 մ: Սրանք ամենից հաճախ լինում են ԱՄՆ-ում, Ասիայի արևելյան մասերում, ՍՍՀՄ-ի հարավային շրջաններում:

Պտտահողմերին նման են փոշու մրրիկները («Ստտանի քամի»), որ հաճախ առաջանում են ՍՍՀՄ հարավային ջրջաններում, հատկապես Մերձկասպյան դաշտավայրում ու Ղազախստանում: Սրանք տեղական շատ փոքր «ցիկլոններ» են, նույն մեխանիզմն ունեն, ինչ որ ցիկլոնները. վերընթաց շարժման հետևանքով մեծ քանակությամբ փոշի են բարձրացնում ու տեղափոխում այլ վայրեր:

Ի տարբերություն ցիկլոնների՝ անտիցիկլոնները բարձր ճնշման համակարգեր են. կենտրոնում ճնշումը բարձր է, իսկ շրջապատում՝ ցածր: Այս դեպքում քամիները կենտրոնից ձգտում են դեպի եզրերը, սակայն ճանապարհին շեղվում են դեպի աջ հյուսիսային կիսագնդում, դեպի ձախ՝ հարավային

կիսագնդում, և ստացվում է քամիների համակարգ ժամացույցի սլաքի ուղղութեամբ հյուսիսային կիսագնդում (հարավային կիսագնդում՝ հակառակը): Անտիցիկլոնի ուղղաձիգ կտրվածքի կենտրոնում եկատվում է օդի վարընթաց շարժում: Մենք արդեն գիտենք, որ վարընթաց շարժման դեպքում գոլորշիների խտացում չի կատարվում, ներքև իջնող օդը տաքանում է, եշահակում է նրա մեջ գտնվող գոլորշիները խտանալու փոխարեն ընդարձակվում են, հարաբերական խոնավութունն քնկնում է: Անտիցիկլոնի տիրապետման շրջանում ամպեր չեն գոյանում, երկինքը պարզ է, գիշերային ժամերին ուժգին ճառագայթարձակում է կատարվում, ձմռանը սառնամանիքներ են առաջանում:

Չմեռային ամիսներին ստացիոնար անտիցիկլոններ առաջանում են Ասիայի և Կանադայի ամենացամաքային շրջաններում: Ասիական անտիցիկլոնին անվանում են նաև Միբիրական կամ Մոնղոլական. նրա կենտրոնը գտնվում է Բայկալ լճից հարավ-արևելք և իզոբարների համակենտրոն կորերը դասավորվում են նրա շուրջը: Այդ կորերը առաջացնում են երկու ճյուղավորութուն՝ մեկը դեպի Չուկոտյան թերակղզի, իսկ մյուսը՝ Հյուսիսային Ղազախստանի վրայով դեպի Արևմտյան Սվրապա: Ի պատիվ այն հայտնաբերողի՝ այս ճյուղին անվանում են Վոյեյկովի բարոմետրիկ առանցք: Այդ առանցքից հյուսիս քամիները ունեն հարավարևմուտքից հյուսիսարևելք, իսկ առանցքից հարավ՝ հյուսիսարևելքից հարավարևմուտք ուղղութուն: Չմեռային ամիսներին այս առանցքից արկտիկական օդային զանգվածները հաճախ թափանցում են նաև Անդրկովկաս ու հասնում Հայաստան: Ասիական կամ Միբիրական անտիցիկլոնից քամիները ուղղվում են դեպի Խաղաղ օվկիանոս (Չմեռային մուսսոն), որոնք բերում են սառնամանիքային եղանակներ:

Անտիցիկլոնի դեպքում տեղումներ չեն լինում: Օրինակ, Ամուր գետի ավազանում՝ Միբիրական անտիցիկլոնի տարածման մարզում ձյուն գրեթե չի գալիս, այստեղ տեղումներ գալիս են ամառային մուսսոնի ժամանակ:

Մթնոլորտում, ինչպես նշեցինք, քամիներն ունեն հորիզոնական բնույթ, բայց օդային զանգվածների շարժում կատարվում է նաև ուղղաձիգորեն: Ուղղաձիգ շարժումներն ան-

վանում են կոնվեկտիվ շարժումներ: Դրանց պատճառը հիմնականում երկրի մակերևույթի անհամաչափ տաքացումն է: Գետինը տարբեր տեղերում տարբեր շափով է տաքանում: Սև գույնի գետնահողը շուտ է տաքանում, բուսածածկ հողը՝ ուշ: Այստեղից էլ առաջանում են օդի կոնվեկտիվ հոսանքներ: Բայց կոնվեկտիվ շարժումների առաջացման մեջ մեծ նշանակություն ունի նաև ռելիեֆը: Օրինակ, հովիտներով օդային զանգվածը բարձրանում է մինչև ջրբաժան, ապա շարունակում է վերընթաց շարժումը:

Կոնվեկտիվ շարժումների մեծ խթան է գոլորշիների խտացման թաքնված ջերմությունը: Գոլորշիների խտացման դեպքում անջատված ջերմության շնորհիվ շրջապատի օդը տաքանում է և ավելի ուժգին է բարձրանում վեր: Օրինակ՝ նկատվել են դեպքեր, երբ Կալկաթայի շրջանում կոնվեկտիվ հոսանքների բարձրությունը հասել է 18 կմ-ի, և տեղացել է խոշորահատիկ կարկուտ:

Մթնոլորտի ուղղաձիգ բարձրացումը կամ իջեցումը կախված է ջերմաստիճանային ուղղաձիգ գրադիենտից ու անջերմանց (ադիաբատիկ) գրադիենտից: Ընթացողինք, մթնոլորտում ըստ բարձրության յուրաքանչյուր 100 մետրին ջերմաստիճանը ընկնում է  $1^\circ$ , վերև բարձրացող օդը անջերմանց (ադիաբատիկ) կերպով յուրաքանչյուր 100 մետրին կորցնում է  $1^\circ$ , նշանակում է այդ օդը իր ուղղաձիգ կտրվածքի յուրաքանչյուր կետում ունի նույն ջերմաստիճանն ու խտությունը, ինչ որ շրջապատում է: Այս դեպքում առաջանում է օդային զանգվածի անտարբեր հավասարակշռություն:

Մեկ այլ դեպքում, ենթադրենք ուղղաձիգ ջերմաստիճանային գրադիենտը 100 մետրին  $0,6^\circ$  է. եթե վեր բարձրացող օդը ենթարկվում է անջերմանց սառեցման  $1^\circ$ -ով, նշանակում է նրա խտությունն ավելի մեծ է, քան շրջապատի օդինը. այս դեպքում օդի մասնիկը կձգտի իջնել ցած, մինչև որ հավասարվի իրեն համապատասխան խտության օդի հետ, ուստի ստեղծվում է կայուն հավասարակշռություն:

Երբորդ դեպքում, եթե օդի ջերմաստիճանային գրադիենտը մեծ է անջերմանցից, ապա վեր բարձրացող ամբողջ օդը ավելի թեթև է, ուստի բարձրանում է, իսկ ներքև իջնող զանգվածը՝ շրջապատի օդից ավելի ծանր է, ուստի իջնելու

հակում ունի: Այս դեպքում մենք գործ ունենք օդային դանդա-  
վածի անկայուն հավասարակշռության հետ:

Վերընթաց հոսանք ունեցող օդի ջերմաստիճանն իջնում է  
և պայմաններ են ստեղծվում տեղումների առաջացման հա-  
մար: Երբեմն փոքր տարածության վրա արագորեն ձևավոր-  
վող կոնվեկտիվ հոսանքները կարկտահարության պատճառ  
են դառնում, որն ավելի ակնառու է լեռնային երկրներում:  
1983 թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին կոնվեկտիվ շար-  
ժումները Սովետական Հայաստանի տարածքում առաջացրե-  
ցին կարկտահարության բազմաթիվ դեպքեր:


Մինչև այժմ մենք քննարկեցինք մթնոլորտային շրջանա-  
ռության զանազան հարցեր: Տեսանք, որ օդն անընդհատ  
շարժման մեջ է: Այդ շրջանառական պրոցեսները միայն օդի  
շարժումներ չեն, այլ նաև ջերմության ու խոնավության վե-  
րաբաշխման հզոր ազդակներ: Օդինակ, պասսատները օվ-  
կիանոսի վրայից խոնավությունը տանում են դեպի հասա-  
րակածային շրջան, բայց խոնավության հետ՝ վիթխարի քա-  
նակի թաքնված ջերմություն, որն ազատվում է հասարակա-  
ծային գոտու օդի վերին շերտերում: Ատլանտյան օվկիանոսի  
հյուսիսային մասում ձևավորված ցիկլոնները, տեղափոխվե-  
լով Սվրասիա, իրենց հետ բերում են նախ՝ մեծ քանակու-  
թյամբ խոնավություն և ապա՝ թաքնված ջերմություն, որը  
հաղորդվում է ցամաքի վրայի օդի վերին շերտերին:

Խոնավության համաշխարհային մեծ շրջապտույտը կա-  
տարվում է մթնոլորտի ընդհանուր և մասնավոր շրջանառու-  
թյունների միջոցով: Օդի ամեն տեսակի շրջանառություն  
միաժամանակ ջրային գոլորշիների շրջանառություն է, որի  
տարբեր օղակներում արտաքին ազդակների ներգործությամբ  
չուրը գազային ագրեգատային վիճակից անցնում է հեղուկ  
կամ պինդ վիճակի և թափվում է տեղումների ձևով:

## ՋՐՈՂՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՒԹՅՆԵՐ

Շարժման ակտիվության տեսակետից, մթնոլորտից հետո  
ջրոլորտը երկրորդն է: Ջրոլորտը քննարկելիս տեսանք, որ  
չուրը անընդհատ շարժման մեջ է: Գոլություն ունեն ջրի տե-  
ղական (փոքր) և համաշխարհային (մեծ) շրջապտույտներ:  
Փոքր կամ տեղական է կոչվում այն շրջապտույտը, երբ ցա-

մաքից կամ ծովի մակերևույթից տեղի է ունենում ջրի գոլորշացում, և այդ գոլորշիները բարձրանալով վեր խտանում են ու թափվում երկրի մակերևույթին: Այս դեպքում գոլորշացումը ( $Z$ ) հավասար կլիմի տեղումների քանակին ( $X$ ), ինչպես դա պատկերված է նկ. 19-ի Ա-ում: Ջրի մեծ շրջապտույտը ավելի բարդ է (նկ. 19, Բ): Օվկիանոսից գոլորշիները բարձրանում են մթնոլորտ, մի մասը տեղումների ձևով թափվում է օվկիանոսի վրա ( $X_0$ ), իսկ մյուս մասը ( $D$ ) տեղափոխվում է ցամաք և այնտեղ առաջացնում մթնոլորտային տեղումներ ( $X_G$ ): Սրանց մի մասը նորից գոլորշանում է և հեռանում ցամաքի խորքը ( $Z_G$ ), մի մասը ներծծվում է գետնի մեջ և առաջացնում է ստորերկրյա ջրեր ( $Y_1$ ), մի



Նկ. 19. Ջրի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում:  
 Ա — փոքր շրջապտույտ, Բ — մեծ շրջապտույտ:

մասն էլ գետերի միջոցով հեռանում է դեպի օվկիանոս ( $Q_1$ ): Այն մասը, որ նորից գոլորշանալով գնացել էր ցամաքի խորքը ( $Z_G$ ), այնտեղ առաջացնում է տեղումներ ( $X_2$ ), նրանից առաջանում են ստորերկրյա ջրեր ( $Y_2$ ), գետեր ( $Q_2$ ), նորից գոլորշացում, և այսպես ցամաքի վրա խոնավությունը շարունակում է շրջանառական օղակների առաջացնել: Այս դեպքում շրջանառությունը կարտահայտվի հետևյալ կերպ՝

$$Z_0 = X_0 + D$$

Պարզվել է, որ  $D$ -ն ի վերջո հավասար է  $Q + Y$ -ի, իսկ  $Q$ -ն և  $Y$ -ը համապատասխանաբար առաջանում են  $Q_1 + Q_2 + \dots + Q_n$  կամ  $y_1 + y_2 + \dots + y_n$  գումարներից: Ըստ Մ. Ի. Լվովիչի, գետերը ցամաքից օվկիանոս են տանում տարեկան 41,8 հազար կմ<sup>3</sup> ջրային զանգված:

Երկրի վրա յուրաքանչյուր տարի ջրի ընդհանուր շրջանա-

ուսթյանը մասնակցում է 520 հազար կմ<sup>3</sup> ջուր, այդքան էլ վերադառնում է երկրի մակերևույթ: Զրի շրջապտույտի վրա ծախսվում է արեգակնային էներգիա, որը դժվար չէ հաշվարկել: Մեզ հայտնի է, որ յուրաքանչյուր 1 գ ջուր գոլորշացնելու համար անհրաժեշտ է մոտ 600 կալ: Գոլորշացող ջրի քանակը 520 հազ. կմ<sup>3</sup> է, այսինքն  $5,2 \cdot 10^{20}$  գ, որը բազմապատկելով 600-ով կստանանք  $3,1 \cdot 10^{23}$  կալ, կամ  $3,1 \cdot 10^{20}$  կկալ (Արեգակի տված ջերմության մոտ 60 %-ը):

Խոնավության ներցամաքային շրջանառության հարցը ունի կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն: Նույն քանակի խոնավության դեպքում, եթե հնարավոր է կրկնակի արագացնել խոնավության տեղական շրջապտույտը, տեղումների քանակը կավելանա երկու անգամ: Դա նշանակում է, որ օդում եղած խոնավությունը երկրորդ անգամ կայցելի բույսերին: Խոնավության շրջապտույտի արագացումը շոր երկրներում կավելացնի տեղումների քանակը, իսկ ճահճային խոնավ երկրներում շրջապտույտի դանդաղեցումը կպակասեցնի դրանք, և ճահճները կչորանան: Այժմ այդպիսի փորձեր կատարվում են, և կան որոշ հաջողություններ:

Գիտության ու տեխնիկայի զարգացումը կստեղծի հնարավորություններ մթնոլորտային տեղումների առաջացման պրոցեսը կառավարելի դարձնելու, ստիպելու խոնավությանը ավելի հաճախ իջնել երկրի մակերևույթ՝ գյուղատնտեսության մեջ ավելի ուսցիտնալ օգտագործվելու համար:

Այժմ քննարկենք օվկիանոսում տեղի ունեցող շրջանառական երևույթները: Օվկիանոսում ջրի անընդհատ շարժում կա: Զուրը տեղափոխվում է թե հորիզոնական և թե ուղղաձիգ ուղղությամբ: Զրի շարժիչ ուժերն են՝ խտության տարբերությունները, որ առաջանում են ջերմաստիճանի ու աղիության փոփոխություններից, քամիները, մակերևացության-տեղատրվության երևույթները, մթնոլորտի ճնշման տարբերությունները, ջրի մուտքի-ելքի հաշվեկշիռը, գետերի հոսքը և այլն:

Ակզբում անդրադառնանք ջրի ուղղաձիգ շարժումներին: Այստեղ ջրի ջերմաստիճանը, աղիությունը և խտությունը այն բնութագրիչներն են, որոնց տարբեր զուգակցման դեպքում

տեղի են ունենում ջրի մոլեկուլների ուղղաձիգ շարժումները: Նշված բնութագրիչների անհավասար փոփոխությունների հետևանքով առաջանում են դրանց ուղղաձիգ և հորիզոնական գրադիենտները, միաժամանակ և այնպիսի երևույթներ, որ ձգտում են վերացնել այդ գրադիենտները. այսպես է առաջանում ջրի խառնվելու երևույթը: Թված բնութագրիչների գրադիենտները կարող են լինել դրական և բացասական: Օրինակ, եթե խտության գրադիենտը դրական է (այսինքն՝ ըստ խորության խտությունը մեծանում է), ապա ջրային զանգվածները գտնվում են հավասարակշռված վիճակում, իսկ բացասական գրադիենտի դեպքում ծանր ջրերը կլինեն վերևում և կսկսեն իջնել ցած, թեթև ջրերը կբարձրանան. նշանակում է՝ ջրային զանգվածները գտնվում են անհավասարակշիռ վիճակում:

Ջրի ուղղաձիգ շարժումները լինում են երկու տեսակ՝ մոլեկուլային և տուրբուլենտային (վերջինիս մեջ էլ՝ կոնվեկտիվ և ֆրիկցիոն տարատեսակները): Մոլեկուլային շարժումները մոլեկուլների քաոսային, ջերմային շատ աննշան շարժումներն են և գործնական նշանակություն չունեն: Օվկիանոսային ուղղաձիգ շարժումներում ջրի արագությունը մակերևութային շերտում հավասար է մեկ վայրկյանում սանտիմետրի հազարերորդական մասին, խորքում՝ տասնհազարերորդ մասի մեծությանը (1 ս/վրկ—0,01 ս/վրկ):

Տուրբուլենտ շարժումն առաջանում է ջրի ներքին շփման (մածուցիկության) և մրրկած և շարժման (ֆրիկցիոն տեղափոխություն) հետևանքով: Օվկիանոսներում ֆրիկցիոն տեղաշարժը կապված է ալիքավորման հետ:

Քամու միջոցով առաջացած ալիքավորումը տարածվում է մինչև ալիքի երկարության կեսի չափ խորությունները: Ինչպես արդեն նշել ենք, կոնվեկտիվ շարժումներն առաջանում են ջրի մակերևութային շերտում՝ նրա խտության մեծացման հետևանքով: Ըստ տուրբուլենտականության՝ օվկիանոսում առանձնացնում են երեք շերտ: Վերին, որտեղ ջրերն անընդհատ խառնվում են քամիների, օվկիանոսային հոսանքների ու կոնվեկցիայի հետևանքով: Այս շերտը միատարր է: Երկրորդը ներքին շերտն է, հասնում է մինչև հատակամերձ շրջանը, որտեղ տուրբուլենտականությունը թույլ է և արտահայտված

է առանձին օջախներով: Ծրրորդը մերձհատակային շերտն է շուրջ 10 մ հաստութեամբ, որը գտնվում է ամբողջովին մակ-ընթացային ուժերի ազդեցութեան տակ և ունի բարձր տուր-բուլենտականութիւն:

Տուրբուլենտային, մոլեկուլային և կոնվեկտիվ շարժում-ների դերը շատ մեծ է տարբեր տիպի ջրային զանգվածների ձևավորման մեջ: Այնպես, ինչպես օդային զանգվածները՝ մթնոլորտում, օվկիանոսում ևս տարբերում են ջրային զանգ-վածներ: Այդ զանգվածների առանձնացման մեջ հաշվի են առնվում ջերմաստիճանը, աղիութիւնը, թթվածնի պարունա-կութիւնը, օպտիկական հատկանիշները, կենսաբանական ցուցանիշները և այլն:

Ամենից առաջ օվկիանոսներում առանձնացնում են երկու շերտ ըստ խորութեան՝ 1. օվկիանոսային վերնոլորտ, 2. ստո-րին ոլորտ: Առաջինը շարժուն շերտն է, որտեղ տեղի են ու-նենում կոնվեկցիոն երևույթներ: Ծրկրորդը խորը մասերն են թույլ ջրափոխանակութեամբ և կոնվեկցիայի երևույթների բացակայութեամբ:

Առանձնացվում են հետևյալ ջրային զանգվածները՝ մա-կերևութային, միջանկյալ, խորքային և մերձհատակային: Չնայած նրան, որ մակերևութային ջրային զանգվածները ընդգրկում են 300—500 մ խորութիւնները, նրանցից է կախ-ված մնացած ջրային զանգվածների ձևավորումը: Նշված շորս զանգվածները օվկիանոսների տարբեր մասերում տար-բեր բնույթ ունեն:

Ջրային զանգվածները փոխվում են նաև հասարակածից դեպի բևեռ: Այստեղ էլ առանձնացվում են հասարակածային, արևադարձային, մերձբևեռային, բևեռային ջրային զանգ-վածները: Սրանք տարածվում են ոչ միայն մակերևութային, ջրային զանգվածների վրա, այլև ընդգրկում են մնացած բո-լոր խորքային զանգվածները: Ստացվում է ջրային զանգված-ների 16 տեսակ:

Հասարակածային մակերևութային ջրային զանգվածներն ունեն տարբեր ջերմաստիճան և համեմատաբար պակաս աղիութիւն, ոչ մեծ խտութիւն. այստեղ գոյութիւն ունի ջրի բարդ շրջանառութիւն:

Արևադարձային մակերևութային ջրերին հատուկ է բարձր

աղիութիւն, բարձր ջերմաստիճան և ջրի ուղղաձիգ իջեցում անտիցիկլոնային մարզերում: Սրանք օվկիանոսի արևմտյան մասերից տեղափոխվում են դեպի բարեխառն լայնութիւններ, իսկ արևելյան մասում՝ դեպի հասարակած:

Մերձբևեռային մակերևութային ջրերը գտնվում են արեւմտարձային ու բևեռային ջրերի միջև, ունեն բնութագրիչների (ջերմաստիճան, խտութիւն և այլն) մեծ խալտարդեւտութիւն: Հյուսիսային կիսագնդում սրանք ամենից շատ տարածված են Խաղաղ օվկիանոսում, իսկ Ատլանտյան օվկիանոսում՝ միայն ծայր հյուսիսարևմուտքում:

Բևեռային (արկտիկական, անտարկտիկական) ջրերը սառն են ( $-1,2-1,5^{\circ}$ ), պակաս աղիութիւնամբ ( $32,5-34,6\%$ ), ձևավորվում են արկտիկական ճակատից (Ֆրոնտից) դեպի բևեռ ընկած տարածութիւնում, դեպի հատակ իջնող ջրային զանգվածներից, որոնք այնուհետև օվկիանոսների մերձհատակային մասով վերադառնում են հասարակած: Միջանկյալ ջրային զանգվածները դրավում են 300—500 մ-ից ցածր մինչև 1000—1400 մ խորութիւնները և առավելագույն հզորութիւն ունեն Սառուցյալ օվկիանոսում:

Համաշխարհային օվկիանոսի խորքային ջրային զանգվածները ձևավորվում են բարձր աշխարհագրական լայնութիւններում, մակերևութային ու միջանկյալ ջրային զանգվածների միախառնումից, այնտեղ, որտեղ ծավալվում է ցիկլոնային գործունեութիւն (Իսլանդական, Ալեուտիան միւնիստաներ): Այս ջրերը միատարր են, ունեն 2000—2500 մ հզորութիւն:

Մերձհատակային ջրային զանգվածները ձևավորվում են վերևից իջնող ջրային զանգվածների փոխակերպումից (տրանսֆորմացիա)՝ հատկապես բարձր աշխարհագրական լայնութիւններում (տե՛ս օվկիանոսային հոսանքների ախման): Սրանց հզորութիւնը 1000—1500 մ է: Ինչպես խորքային, այնպես էլ մերձհատակային ջրային զանգվածները շարժվում են դեպի հասարակած: Համաշխարհային օվկիանոսում ամենից մեծ զանգված ունեն անտարկտիկական մերձհատակային ջրերը, որտեղ ջերմաստիճանը ցածր է, թթվածնի պարունակութիւնը՝ մեծ: Սրանք Խաղաղ օվկիանո-

սում թափանցում են նաև Հյուսիսային կիսագունդ (մինչև Հյուսիսային լայնության 10—20°:


Ջրոլորտում-օվկիանոսում, ջրաշրջանառության ամենացայտուն երևույթը օվկիանոսային հոսանքներն են: Ջրի հորիզոնական շարժումը օվկիանոսում կոչվում է օվկիանոսային հոսանք (ծովերում՝ ծովային): Սրանք առաջանում են տարբեր պատճառներից (քամին, մթնոլորտային ճնշման տարբերությունը, ջրի խտության տարբերությունը, Լուսնի ու Արեգակի մակընթացային ուժերը, գետերի հոսքը, գոլորշացումը և այլն): Օվկիանոսային հոսանքները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների՝ ըստ կայունության (կայուն, անկայուն, ժամանակավոր), ըստ խորության (մակերևութային, խորքային, մերձհատակային, մերձափնյա), ըստ ջերմաստիճանի (տաք, սառը), ըստ աղիության (աղի, քաղցրահամ), ըստ շարժման բնույթի (ուղղաձիգ, կորագիծ, ցիկլոնային, անտիցիկլոնային):

Մինչև օվկիանոսային հոսանքների սխեմայի քննարկումը մեկնաբանենք էկվանի օրենքը: 20-րդ դարի սկզբին Վ. Վ. էկվանը, ուսումնասիրելով երկու տարբեր խտություններ ունեցող միջավայրերի շարժման օրինաչափությունները, գրտավ, որ նրանց շփման մակերևութում շարժումը մեկ միջավայրից մյուսին է հաղորդվում որոշ անկյան տակ: Դա տեղի է ունենում կորիոլիսյան ուժերի ազդեցությամբ: Պարզվեց, որ Հյուսիսային կիսագնդում օվկիանոսային հոսանքները քամու ուղղության նկատմամբ 45°-ի տակ դեպի աջ են շարժվում, հարավային կիսագնդում՝ ձախ: Ապացուցեց, որ օվկիանոսի մակերևութից դեպի խորքը շարժման փոխանցումը ուղեկցվում է շեղումով՝ անընդհատ դեպի աջ ու որոշ խորության տակ ստանում է հակառակ ուղղություն: Այս հանգամանքը մեծ բարդություն է մտցնում օվկիանոսային հոսանքների մեխանիզմի մեջ:

Օվկիանոսային ջրերի շարժման ամենահիմնական գործոնը մշտական, մեկ ուղղությամբ փշող քամիներն են (դրեյֆային հոսանքներ): Եթե համաշխարհային օվկիանոսը մտովի կտրենք միջօրեականի հարթությամբ, ապա հոսանքները կարելի է պատկերացնել հետևյալ կերպ (նկ. 20):

Հասարակածային լայնություններում ու արևադարձներում

չրերն ունեն վերընթաց շարժում, (նկ. 20, Ա) հատակից բարձրանում են մակերևույթ, այստեղից ուղղվում են դեպի բևեռային շրջաններ՝ իրենց հետ տանելով ջերմություն: Բևե-



Նկ. 20. Օվկիանոսային հոսանքների սխեման:  
 Ա— ուղղաձիգ կտրվածքում, Բ— վերևից դիտելիս:

ռային շրջաններում ջերմությունը հաղորդվում է օդին, ցրերը պաղում են, խտանում, ծանրանում են և իջնում հատակ, ապա այդտեղից նորից վերադառնում են հասարակած: Սրանց ջերմաստիճանը ցածր է, և երբ բարձրանալով դուրս են գալիս օվկիանոսի մակերևույթ, շրջապատի համեմատ առեն են: Նշված պաղ ջրերը նկատվում են օվկիանոսի արևելյան մասերում՝ արևադարձային լայնությունների տակ, որտեղից պասսատների ազդեցությամբ տեղափոխվում են արևմուտք, որի հետևանքով օվկիանոսի մակարդակն իջնում է: Հենց այս հանգամանքը ստիպում է, որ ջրերը հատակից բարձրանան և լրացնեն պասսատների կողմից տարած ջրերի պակասորդը և կոչվում են փոխհատուցման (կոմպենսացիոն) հոսանքներ (Պերուական, Կալիֆոռնիական, Կանարյան, Բենգուելյան, Արևմտաավստրալական):

Այժմ քննարկենք օվկիանոսային հոսանքների սխեման հորիզոնական հարթության վրա (նկ. 20, Բ): Պատկերացնենք մի օվկիանոս, որը ձգվում է երկու բևեռային շրջանների միջև: Հասարակածի երկու կողմերում պատկերված են պաս-

սատները (1, 2), սրանց ազդեցութեամբ օվկիանոսային ջրերը շարժման մեջ են մտնում  $45^\circ$  անկյան տակ (էկվանի օրենք) և ուղղվում են դեպի արևմուտք: Սրանք հյուսիս-պասսատային (3) և հարավ-պասսատային (4) հոսանքներն են: Հասնելով օվկիանոսի արևմտյան ափին՝ հոսանքները հեռանում են հասարակածից (5, 6) և շարժվում ափին զուգահեռ, բայց կորիոլիսյան ուժի ներգործութեամբ շեղվում են արևելք և վերադառնում օվկիանոսի արևելյան ափը, որտեղ առաջացել էին՝ փոխհատուցման հոսանքները (9, 10), միանում են նրանց և լրացնում պասսատների կողմից տարած ջրերի պակասորդը: Ստացվում է երկու օղակ. հյուսիսային կիսագնդում ժամացույցի սլաքի ուղղութեամբ, հարավային կիսագնդում՝ հակառակ: Սակայն այս ընդհանուր ֆոնի վրա կարելի է առանձնացնել նաև մանրամասներ: Հարավային կիսագնդում բարեխառն լայնություններում տիրապետում են արևմտյան դրեյֆային քամիները, սրանց ազդեցութեամբ առաջանում է հզոր դրեյֆային հոսանք, որին անվանում են Արևմտյան դրեյֆի հոսանք (8): Սա ցամաքների շհանդիպելով համաշխարհային օվկիանոսով շրջապատույտ է կատարում և առանձին ճյուղերով խառնվում փոխհատուցման հոսանքներին:

Հյուսիսային կիսագնդում օվկիանոսի հյուսիսում արևմուտքից արևելք ընթացող հոսանքները (Գոլֆստրիմ, Կուրոսիո) դառնում են Հյուսիս-Ատլանտյան ու Հյուսիսխաղաղօվկիանոսային հոսանքներ (7) և բարձր լայնություններում առաջացնում են երկու փոքր՝ հակառակ ուղղութեամբ պտտվող հոսանքներ (Իրմինգերյանը՝ Ատլանտյան օվկիանոսում, Ալյասկայինը՝ խաղաղ օվկիանոսում (11): Հյուսիսատլանտյան հոսանքի մի ճյուղը՝ Նորվեգականը թափանցում է Նորվեգական ծով (12), որից Շպիցբերգենյան ենթաճյուղը ուղղվում է դեպի համանուն կղզեխումբը, իսկ Նորգակայինը՝ դեպի Բարենցի ծով: Սառուցյալ օվկիանոսում այս տաք հոսանքի ջրերը պաղում են, խտությունը մեծանում է, և այդ ջրերը սուզվում են օվկիանոսի խորքը:

Հասարակածային շրջանում, երկու պասսատային հոսանքների միջև առաջանում է հասարակածային հակահոսանք, որն ուղղվում է արևմուտքից արևելք (13):

Խաղաղ օվկիանոսի հոսանքներն են. ա) հյուսիսային կիսագնդում՝ հյուսիս-պասսատային, Կուրոսիո, Հյուսիս-խաղաղօվկիանոսյան, Ալյասկայի, Բերինգի նեղուցից իջնող՝ Օյասիս կամ Կամչատկայի, բ) հարավային կիսագնդում՝ հարավ-պասսատային, Արևմտա-Ավստրալական, Արևմտյան դրեյֆի, Պերուական: Երկու կիսագնդերի միջև զարգանում է հասարակածային հակահոսանքը:

Ատլանտյան օվկիանոսի հոսանքներն են. ա) հյուսիսային կիսագնդում՝ հյուսիս-պասսատային, Անտիլյան, Ֆլորիդայի, Գոլֆստրիմ, Հյուսիս-Ատլանտյան, Նորվեգական, Շպիցբերգենի, Նորդկապի, Իրմինգբրի Գրենլանդական, Լաբրադորական, Կանարյան, Գվինեական. բ) հարավային կիսագնդում՝ հարավ-պասսատային, Բրազիլական, Ֆոկլենդյան, Արևմտյան դրեյֆի, Բենգուելական:

Հնդկական օվկիանոսի հոսանքներն են՝ հարավ-պասսատային, Սոմալիի, Մուսսոնային, Մոզամբիկի, Ասեդի, Արևմտյան դրեյֆի, Արևմտա-Ավստրալական: Հնդկական օվկիանոսը հյուսիսային կիսագնդում մեծ տարածություն չի գրավում: Այստեղ հյուսիս-պասսատային հոսանքը զարգացած չէ:

Օվկիանոսային հոսանքներն ունեն տարբեր արագություններ: Մերձհասարակածային շրջանում արագությունը հասնում է 35 սմ/վրկ (ժամում 1300 մ), իսկ Ֆլորիդայի նեղուցում ժամում մինչև 8 կմ, սա առավելագույն արագությունն է, որ նկատված է համաշխարհային օվկիանոսում: Բարեխառն լայնություններում սկզբում արագությունը պակասում է 1—2—սմ/վրկ, իսկ 50—60° լայնություններում նորից աճում է 10—20 սմ/վրկ: Օվկիանոսի հատակում մերձհատակային հոսանքների արագությունը փոքր է՝ 0,2—1,0 սմ/վրկ:

Օվկիանոսային հոսանքները ջերմափոխանակման տեսակետից հսկայական նշանակություն ունեն: Արևադարձային լայնություններում տաքացած ջուրը հասնում է մերձբևեռային երկրներ, որտեղ ջրի ջերմությունը հաղորդվում է շրջապատին: Տաք օվկիանոսային հոսանքների շնորհիվ Նորվեգական և Բարենցի ծովերը ձմռանը չեն սառչում մինչև Շպիցբերգենի ափերը: Բոլոր երեք օվկիանոսներում էլ հոսանքներն առաջացնում են ջերմային անբնականոնություն


(անոմալիաներ): Բացասական անկանոնություն ստացվում է փոխհատուցման հոսանքների ազդեցության ուղորտում, որովհետև այդ հոսանքներում ջրերը խորքային ծագում ունեն, գալիս են բեկոային շրջաններից, ջերմաստիճանը 17—20° է, ուստի մթնոլորտում ստեղծվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա): Օդը վարընթաց շարժում ունի, և մթնոլորտային տեղումներ չեն գալիս, ցամաքի ափամերձ շրջաններում տարածվում են անապատներ:

Տաք հոսանքները, որ ցածր աշխարհագրական լայնություններից անցնում են բարձր լայնություններ, կլիմայի մեղմացման շատ մեծ ազդակներ են, մինչդեռ սառը հոսանքները, որ բարձր լայնություններից են գալիս, ցրտեցնում են շրջապատի կլիման: Օրինակ, Լաբրադոր և Սկոնե թերակղզիները գտնվում են նույն լայնության տակ: Սկոնեն (Շվեդիա) Գոլֆստրիմի ազդեցության տակ այնքան տաք է, որ այստեղ խաղող է աճում, իսկ Լաբրադորում, համանուն սառը հոսանքի պատճառով, համատարած տունդրա է: Ալյասկայի հարավային ափերին ջուրը ձմռանը չի սառչում, անտառներ են աճում, իսկ Կամչատկայում նույն լայնության տակ տունդրա է:

Ջրոլորտի շրջանառական պրոցեսների մեջ ուրույն տեղ են գրավում մակընթացությունն ու տեղատվությունը: Մակընթացությունն այն երևույթն է, երբ Լուսնի կամ Արեգակի ձգողության ուժի հետևանքով Երկրի մակերևույթին ջրային զանգվածները բարձրանում են (լրիվ ջուր) և իջնում (փոքր ջուր): Երբ Լուսինը, Երկիրը և Արեգակը լինում են մեկ ուղիղ գծի վրա, մակընթացությունն ավելի ուժեղ է լինում, որովհետև Լուսնի և Արեգակի մակընթացային ուժերը գումարվում են:

Մակընթացությունը Երկրի վրա առաջանում է Լուսնի դիմաց և հակառակ կողմում, իսկ տեղատվություն՝ այն բոլոր մասերում, որտեղ Լուսնից եկող ճառագայթները շոշափում են Երկրի մակերևույթը (նկ. 21, A և B կետերը):

Մակընթացության երևույթի բացատրությունը շատ դուրին դարձավ, երբ XVII դարի վերջին Ի. Նյուտոնը հայտնագործեց համաշխարհային ձգողության օրենքը, այն է՝ երկու երկնային մարմինների փոխադարձ ձգողության ուժն ուղիղ



Նկ. 21. Մակրնթացության-տեղատվության սխեման:

Համեմատական է այդ երկու զանգվածների ( $M$ ,  $m$ ) արտադրյալին, հակադարձ համեմատական՝ նրանց հեռավորության ( $R$ ) քառակուսուն:

$$F = f \frac{M \cdot m}{R^2},$$

Չնայած Լուսինը Արեգակի համեմատ շատ փոքր է, սակայն մոտ լինելով Երկրին՝ նրա կողմից առաջացրած մակրնթացությունն ավելի քան երկու անգամ ուժեղ է Արեգակի կողմից առաջացրած մակրնթացությունից:

Երկիրը և Լուսինը Արեգակնային համակարգում հանդես են գալիս որպես մեկ ընդհանուր մարմին, ունեն մեկ ընդհանուր ծանրության կենտրոն, որի շուրջը նրանք պտտվում են: Բայց քանի որ Երկրի զանգվածը 81,5 անգամ մեծ է Լուսնի զանգվածից, ապա երկու մարմինների ծանրության կենտրոնը գտնվում է Երկրի մեջ՝ կենտրոնից 0,73 երկրային շառավղի ( $R$ ) հեռավորության վրա: Համատեղ պտտման ընթացքում առաջանում են կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժեր: Կենտրոնախույս ուժը Երկրագնդի վրա ամենուրեք Լուսնին հակառակ ուղղություն ունի, և ուժագծերը միմյանց զուգահեռ են: Իսկ Լուսնի ձգողական ուժի ուժագծերը կենտրոնախույս ուժի նկատմամբ որոշ անկյուն են կազմում, ուստի կարելի է գտնել նրանց համագործը (Նկ. 21):

Ինչպես գծագրից երևում է, Երկրագնդի աջ կեսում ջրերը ձգտում են D կետ, իսկ ձախ կողմում՝ C կետ: C և D մասերում մակընթացություն է, իսկ A և B մասերում ու այդ կետով անցնող շրջագծի բոլոր մասերում՝ տեղատվություն: Այսպիսով Լուսնի դիմաց և հակառակ կողմում Երկրի վրա ջուրը բարձրացած է, իսկ Երկրագունդը պտտվում է այդ երկու սապատների տակով, փաստորեն մակընթացության ալիքը անընդհատ արևելքից անցնում է արևմուտք: Պարզված է, որ լուսնային օրը Երկրի վրա 50 րոպեով ավելի երկար է, քան արեգակնային օրը, ուստի յուրաքանչյուր հաջորդական մակընթացության ու տեղատվության միջին ժամանակամիջոցը կազմում է 6 ժամ 12 րոպե 30 վայրկյան:

Մակընթացության երևույթը ոչ միայն օվկիանոսում է նկատվում, այլ նաև քարոլորտում ու մանթիայում: Օրական երկու անգամ երկրակեղևը բարձրանում ու իջնում է, հասարակածում այդ բարձրացումը հասնում է 50 սմ-ի: Մակընթացային ալիքի ազդեցությամբ Երկրի կեղևում մանրադիտային ճեղքեր են առաջանում, որոնցով ջրերը ձգտում են դեպի արևմուտք (Երկրի պտտմանը հակառակ): Այս շրջապտույտը օվկիանոսի գոյության ողջ ընթացքում դանդաղեցրել է Երկրի պտույտը: Ենթադրվում է, որ պալեոգոյից մինչև մեր օրերը Երկրի պտույտի արագությունը 4 ժամով պակասել է, այսինքն պալեոգոյի սկզբում Երկիրը պտտվում էր 20 ժամում, իսկ այժմ՝ 24:

Մինչև վերջերս մակընթացային ալիքի ուժը հնարավոր չէր օգտագործել: Այժմ արդեն մշակված է այդ ուժի օգտագործման սկզբունքային սխեման: ՄՍՀՄ-ում կառուցված է մակընթացային էլեկտրակայան Կուլա թերակղզում:

Ջրոլորտի շրջապտույտի կամ շրջանառական պրոցեսներում ամենուրեք հանդիպող երևույթներից են ալիքները, ալիքավորման երևույթը: Ալիքներն առաջանում են մի քանի պատճառներից, որոնցից առաջինը քամին է, ապա՝ երկրաշարժը: Ալիքներում ջուրը ունի տատանողական շարժում ուղղաձիգ ուղղությամբ, շրջանաձև ուղեծրով. հորիզոնական ուղղությամբ այն չի տեղափոխվում: Ալիքի շարժումը թվացող է, իրականում շարժվում է ալիքի ձևը:

Ամենից վտանգավորը երկրաշարժից առաջացած ալիք-

ներն են՝ ցունամիս, որ կարող է մեկ, մեկ և կես օրում պտտվել Երկրագնդի շուրջը: Նման ալիքների բարձրությունը հասնում է 10—15 մետրի, երբեմն նույնիսկ՝ 18 մ-ի:

Ալիքների միջոցով ջրավազանի վերին շերտերի ջուրը խառնվում է, իսկ ափի մոտ ալիքները կատարում են վիթխարի ափաքերման (աբրազիոն) աշխատանք: Առայժմ ալիքների էներգիան դեռևս չի օգտագործվում: 1 մ<sup>2</sup> ուղղահայաց մակերեսի վրա ալիքի հարվածի ուժը կարող է հասնել տասնյակ տոննայի և եթե տեխնիկապես հնարավոր լինի այդ ուժը որսալ, ապա մարդկությունը կստանա էներգիայի անսպառ աղբյուր:

### ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՆԵՐ

Քիմիական տարրերի համաշխարհային շրջապտույտի մեջ օրգանիզմները հատուկ օղակ են ներկայացնում և իրենց միջով անց են կացնում բազմաթիվ նյութեր: Արդեն նշել ենք, որ մթնոլորտի թթվածինը օրգանական ծագում ունի, իսկ ջրոլորտի ջուրը մի քանի անգամ անցել է օրգանիզմների միջով: Բոլոր լեռնային երկրներում կարելի է հանդիպել օրգանական ծագում ունեցող կրաքարերի: Օրգանական աշխարհի տարեկան արդյունավետությունը կազմում է  $2,32 \cdot 10^{11}$  տ, եթե վերջին 1 մլրդ տարում արդյունավետությունն ընդունենք անփոփոխ, ապա անցած ժամանակամիջոցում օրգանիզմների միջով անցել է  $2 \cdot 10^{20}$  տ քիմիական տարր, որը 10 անգամ գերազանցում է երկրակեղևի զանգվածին:

Ածխաջրերը տեղեկներից անցնելով ճյուղերին, ապա արմատին, մտնում են շատ ավելի քարդ ռեակցիաների մեջ, ստեղծվում են սպիտակուցներ, ճարպեր, ալկալոիդներ և այլն:

Բույսերը կառուցված են ոչ միայն ածխաջրերից: Նրանց մարմնի կառուցման համար անհրաժեշտ են նաև ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, ծծումբ և այլ տարրեր, որպիսիք բույսը վերցնում է հողից: Այս քիմիական տարրերը բույսի մեջ կուտակվում են բարդ միացությունների ձևով: Նշված պրոցեսն անվանում են միներալային միացությունների կենսական կուտակում, որը հետագա փոփոխման տեսակետից դառնում է գրեթե անշարժ: Քիմիական տարրերը

բույսի մեջ մնում են հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ: Լիբանանյան մայրին ապրում է 6 հազ. տարի, նրա մեջ քիմիական տարրերի մի մասը նույնքան տարի հարաբերական անշարժության մեջ է:

Շատ օրգանիզմներ (կենդանիները, մանրօրգանիզմների մեծ մասը, անջլորոֆիլ բույսերը, ինչպես օրինակ՝ սնկերը) հետերոտրոֆ են, այսինքն անընդունակ են անօրգանական միներալներից ստեղծել օրգանական նյութ. նրանք օգտագործում են պատրաստի օրգանական նյութը և նրանով կառուցում իրենց մարմինը:

Կենսոլորտի շատ կարևոր բնութագրիչներից մեկը նրանում պարունակվող կենսազանգվածն է, նրա տարողությունը, որ սովորաբար արտահայտում են ցենտներներով՝ մեկ հեկտարին: Շատ կարևոր բնութագրիչ է կենսազանգվածի զարգացման արագությունը, այսինքն, թե որքան կենսազանգված է ստեղծվում մեկ տարվա ընթացքում մեկ հեկտարի վրա: Այդ տեսակետից կարևոր դեր ունի բուսական ծածկույթը, որ մեծ աճ է տալիս: Կենդանական աշխարհի տարեկան աճի արագությունը կազմում է ընդամենը 1—2%: Կան լանդշաֆտներ, որտեղ մեծ է կենսազանգվածի ինչպես տարողությունը, այնպես էլ արագությունը: Փարթամորեն աճող հասարակածային անտառներում կենսազանգվածը կազմում է մի քանի հազար ցենտներ մեկ հեկտարի վրա: Մեծ է նաև տարեկան աճը՝ մի քանի հարյուր ցենտներ: Ակներև է, որ հողից վերցրած ու կենսաբանական շրջապտույտի մեջ մտած քիմիական տարրերը նույն արագությամբ էլ բույսի մեռնելուց հետո անցնում են հող: Այստեղ մեռած օրգանիզմների քայքայումը տեղի է ունենում զարմանալի արագությամբ:

Կան լանդշաֆտներ, որտեղ կենսազանգվածի տարողությունն ու արագությունը միմյանց հավասար են: Դրանք տափաստանային լանդշաֆտներն են: Կան այնպիսի լանդշաֆտներ էլ, որտեղ կենսազանգվածի տարողությունը մեծ է, սակայն արագությունը՝ փոքր (օրինակ՝ Տայգայի լանդշաֆտը): Տոննդայում և՛ կենսազանգվածի տարողությունն է փոքր և՛ արագությունը: Կենսազանգվածի տարողության (A) և արագության (B) միջև գոյությունն ունի որոշակի հարաբերու-

թյուն՝  $K = \frac{B}{A} \cdot 100$ : Այն ցույց է տալիս, թե կենսազանգ-

վածի ստեղծման արագությունը ամբողջ կենսազանգվածի որ տոկոսն է կազմում:

Բոլոր լանդշաֆտներում կենսազանգվածներում ամենից մեծ կուտակում ունեն թթվածինը, ածխածինը, ազոտը, այսինքն՝ օդային գաղթիչները (միգրանտները): Թթվածինը կազմում է 70 %, որի մեծ մասը միացած է ջրածնին որպես ջրի բաղադրիչ:

Կենդանի օրգանիզմները և բույսերը ունեն որոշ քիմիական տարրերի կուտակման հակում: Որոշ ջրիմուռներ կուտակում են բրոմ, յոդ, երկաթ, ստրոնցիում: Դիատոմային ջրիմուռները կուտակում են սիլիցիում: Ուրեմն բուսական աշխարհը քիմիական տարրերի շրջապտույտի ոլորտում կենսաքիմիական պատենեշի դեր է կատարում: Նշենք նաև այն, որ բուսական և կենդանական օրգանիզմների տարբեր մասեր միաժամանակ շին կլանում տարբեր քիմիական տարրեր: Օրինակ, ծառերի մոտ մետաղները ամենից շատ տերևներում են կուտակվում, ավելի քիչ՝ արմատներում, ամենից քիչ՝ փայտանյութի մեջ:

Այն քիմիական տարրերը, որոնց պակասության պատճառով բույսը լավ չի աճում, կոչվում են պակասորդային. դրանց ավելացումը աշխուժացնում է բույսերին:

Եթե քիմիական տարրերը լանդշաֆտում այնքան շատ են, որ վնասում են բույսերին, այդ դեպքում կոչվում են ավելցուկային: Պակասորդային կարող են լինել P, N, K, Cu, Co, J, Mg և այլն. ավելցուկային՝ Cl, Na, S, Cu, Ni, Fe, Ca և այլն:

Բույսերն իրենց կենսագործունեության ընթացքում մթնոլորտ են արտանետում զանազան քիմիական տարրեր՝ Na, P, Ca, Mg, K, Cu, Hg, J, Zn և այլն, որոնք անձրևների միջոցով չվացվում ու հեռանում են: Բույսերն արտանետում են նաև ցնդող նյութեր՝ ֆիտոնցիդներ (հոտ, բուրմունք): Սրանք բարեկամներին գրավելու և թշնամիներին վանելու համար են: Մաղիկների բուրմունքից միջատները մոտենում են նրանց և փոշոտում կատարում, կամ բույսը ուժեղ հոտ արձակելով՝ սպանում է վնասակար բակտերիաներին: Հայտնի


է՝ սոխի, սխտորի ֆիտոնցիդները մարդկանց որոշ հիվանդութիւնների համար սպանիչ են:

Կենսական զանգվածի կուտակման հետ տեղի է ունենում մեռած օրգանիզմների նեխման, քայքայման պրոցես, որը կենսաբանական շրջապտույտի օղակն է: Քայքայման ժամանակ տեղի է ունենում հակառակ պրոցես, թթվածինը կլանվում է՝ օքսիդացման ժամանակ արտադրվում է  $\text{CO}_2$ : Օրգանական նյութի քայքայմանը մասնակցում են մանրօրգանիզմները, որոնք լանդշաֆտը մաքրում են օրգանական մնացորդներից և բարդ օրգանական միացութիւններից ստեղծում են ավելի պարզ միացութիւններ: Այս պրոցեսում կատարվում է քիմիական տարրերի միներալացում, և անջատվում է այն քիմիական էներգիան, որը կուտակվել էր ֆոտոսինթեզի ժամանակ:

Կենսոլորտը քննարկելիս նշեցինք, որ մանրօրգանիզմների միջոցով տեղի է ունենում որոշ քիմիական տարրերի ու միացութիւնների կուտակում՝ զանազան միներալների ձևով: Օրինակ, կալցիումի կարբոնատը կամ նատրիումի սուլֆատը շոր կլիմայական պայմաններում կուտակվում են: Այս կարգի միներալների առաջացումը (կալցիտ, գիպս և այլն) քիմիական տարրերի կենսաբանական շրջապտույտի օղակներից մեկն է կազմում:


Օդային գաղթիչների (միգրանտների)՝ թթվածնի, ածխաթթու գազի կենսաբանական շրջապտույտի մասին արդեն խոսվել է: Շատ կարևոր է նաև ազոտի շրջապտույտը: Սպիտակուցների և այլ բարդ օրգանական միացութիւնների մեջ ազոտը անհրաժեշտ բաղադրիչ է: Բայց բույսերն ու կենդանիները չեն կարող օդի ազոտը անմիջականորեն կլանել, նրանք ազոտը ձեռք են բերում հողից, որտեղ ապրող ազոտֆիքսող բակտերիաները, պալարաբակտերիաները կարողանում են օդի ազոտը կլանել ու մատչելի դարձնել բույսերին:

Այն բակտերիաները, որոնք կարողանում են ամիակը օքսիդացնել և դարձնել ազոտային թթու, կոչվում են նիտրիտային բակտերիաներ: Այդ ունակցիան ընթանում է հետևյալ կերպ՝



և ազատված է ներգիան (148 կկալ) օգտագործվում է ածխաթթու գազից կամ կարբոնատների ածխածնից օրգանական նյութի սինթեզի պրոցեսում: Ամիակի օքսիդացումը մինչև ազոտային թթու կոչվում է ազոտաֆիքսման պրոցեսի առաջին փուլ:

Այն բակտերիաները, որոնք ազոտային թթուն օքսիդացնում են ու դարձնում ազոտական թթու, կոչվում են նիտրատային բակտերիաներ (Nitrobacter): Այդ ռեակցիան ընթանում է հետևյալ կերպ՝



Նիտրոբակտերը ազատվող է ներգիան կարողանում է օգտագործել օրգանական նյութի քիմսինթեզի համար: Նիտրոբակտերիաների կողմից ազոտային թթվի վերածումը ազոտականի կոչվում է ազոտաֆիքսման երկրորդ փուլ:

Նիտրատային ու նիտրիտային բակտերիաներն ունեն 1—1,8 միկրոն մեծություն: Նիտրիտային բակտերիաները շատ շարժուն են, ունեն մինչև 30 միկրոն երկարության բեղիկներ, ապրում են լավ օդաշրջանառություն ունեցող հողերում: Նիտրատային բակտերիաները բեղիկներից զուրկ են և շարժունակ չեն, սակայն նույնպես ապրում են օդակեցիկ (աէրոբ) պայմաններում, երբ օպտիմալ ջերմաստիճանը 28—30° է:

Հողում ստեղծված նիտրատները ջրի մեջ լուծված վիճակում անցնում են բույսի մեջ և մասնակցում նրա կենսական պրոցեսներին, մասնավորապես՝ սպիտակուցների սինթեզին: Տեղի է ունենում վերականգնման ռեակցիա, որը կլանում է արեգակնային էներգիա. ազոտի միջին քանակը սպիտակուցներում կազմում է 15—18 %:

Ազոտաֆիքս բակտերիաների ու բույսերի արմատային համակարգի միջև սերտ կապ ստեղծելու նպատակով ցանքից առաջ սերմերը վարակում են ազոտաբակտերներով: Պարզվում է, որ մանրօրգանիզմների կենսագործունեության շնորհիվ յուրաքանչյուր տարի մեկ հեկտար հողում, հատկապես սևահողերում, կարող է կուտակվել մինչև 300 կգ ազոտային թթու:

Հողի ազոտի ավելացմանը մեծապես նպաստում են

ամպրոպները, կայծակը: Բարձր ջերմաստիճանի տակ ազոտն ու թթվածինը միանում են, անձրևի հետ թափանցում հող  $\text{NO}_2$  կամ  $\text{NO}_3$  միացությունների ձևով և յուրացվում են բակտերիաների կողմից: Ազոտական թթուն նպաստում է նաև հողում դժվարալույծ ֆոսֆատների լուծմանը, և ստացված դյուրաշարժ ֆոսֆորը մատչելի է դառնում բույսերին:

Հողում ազոտի կուտակմանը մեծապես նպաստում են նաև պալարաբակտերիաները: Սրանք համագործակցության մեջ մտնելով թիթեռնածաղկավոր բույսերի հետ՝ 1 հեկտար տարածության վրա տարեկան ֆիքսում են 150—200 կգ ազոտ:

Քիմիական տարրերի կենսաբանական շրջապտուլտի ամենամեծ օղակը հող-բույս-կենդանի-մարդ օղակն է: Իրենց կենսագործունեության համար օրգանիզմները կատարում են նյութափոխանակություն: Նյութափոխանակման պրոցեսը բաժանվում է երկու մասի՝ յուրացում՝ ասիմիլացիա և արտանետում՝ դիսիմիլացիա: Ասիմիլացիան այն երևույթն է, երբ օրգանիզմը շրջապատից վերցնում է իրեն անհրաժեշտ նյութերը և դրանք յուրացնում: Դիսիմիլացիան հակառակ երևույթն է՝ օրգանիզմը իրենից հեռացնում է այն բոլոր նյութերը, որոնք այլևս պետք չեն: Ասիմիլացիան և դիսիմիլացիան միասին կազմում են նյութերի կենսաբանական շրջապտուլտը:

Բուսական օրգանիզմները հողից կլանում են անհրաժեշտ բոլոր հանքային նյութերը, իսկ օդից՝ ածխածին: Խոտակեր կենդանիները օրգանական նյութ սինթեզելու հնարավորություն չունեն և օգտագործում են պատրաստի ածխաջրեր, սպիտակուցներ, ճարպեր, ալյսինքն՝ բուսական սնունդը:

Կան շատ կենդանիներ, որոնք որպես մնունդ օգտագործում են ոչ թե բուսական զանգվածը, այլ՝ կենդանական: Դրանք գիշատիչներն են:

Մարդն օգտագործում է ինչպես բուսական, այնպես էլ կենդանական ծագման սնունդ:

Կենսաբանական շրջապտուլտը աշխարհագրական թաղանթի կյանքում ամենակենտրոնական, ամենակարևոր տեղն է զբաղեցնում, կենսաբանական շրջապտուլտը հենց ինքը կյանքն է, կենսոլորտի գոյության ձևը:

Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող վերոհիշյալ բոլոր շրջապտույտները ոչ թե մեկուսացած են, ալ միմյանց հետ սերտորեն կապված են, լրացնում են միմյանց, մեկը պայմանավորված է մյուսով: Օրինակ, օդային և օվկիանոսային շրջապտույտների կապը: Հասարակածային շրջաններից օդը ուղղվում է դեպի բևեռ և ի վերջո այնտեղ է հասնում երեք խոշոր շրջապտույտների ոլորտներ անցնելուց հետո: Այնտեղից օդը բարդ շրջապտույտներով հասնում է հասարակած: Նույն միտումն ունեն օվկիանոսային հոսանքները, որոնք համաշխարհային շրջապտույտի ընթացքում բևեռներից շարժվում են հասարակած: Արդեն նկարագրել ենք, թե պասսատ քամիների ազդեցությամբ օվկիանոսի ջրերը ինչպես են դրվում շարժման մեջ, կամ դրեյֆային քամիները բարեխառն լայնություններում ջրային զանգվածներին ինչպես են շարժման մեջ դնում: Այստեղից ակներև է օդային և ջրային շրջապտույտների կապը: Այդպիսի կապ կարելի է տեսնել մուսսոնների միջև:

Այժմ տեսնենք, թե ծովային հոսանքներն ինչպես են ազդում մթնոլորտի շրջանառական պրոցեսների վրա: Փոխհատուցման (կոմպենսացիոն) սառը հոսանքների շրջաններում (Կանարյան, Բենգուելական, Կալիֆոռնիական, Պերուական, Արևմտա-Ավստրալիական) օդը շփվելով սառը ծովին զգալիորեն պաղում է և ծանրանում: Հաստատվում է հաստատուն-ստացիոնար անտիցիկլոն, քամիներն ուղղվում են դեպի բարձր ճնշման մարզի եզրերը՝ օգնելով պասսատներին: Այս փոխհատուցման հոսանքները, ծնունդ առնելով պասսատ քամիների ազդեցությունից, իրենք էլ նպաստում են պասսատների հզորացմանը, որից էլ հզորանում են հյուսիս-պասսատային և հարավ-պասսատային հոսանքները:

Կանարյան սառը հոսանքի շրջանում ձևավորվող ճնշման Ազորյան մաքսիմումը, երբեմն ընդարձակվելով, ընդգրկում է ամբողջ Հարավային Եվրոպան:

Ձմեռային ամիսներին Ասիական (Սիբիրական) անտիցիկլոնի հետևանքով քամիները Ճապոնական, Օիոտի ծովերում սառուլյցները մղում են դեպի հարավ-արևելք: Նույնաման երևույթ է նկատվում նաև Լաբրադորական սառը հո-

սանքի շրջանում, որի ազդեցութեան տակ Գուֆստրիմ հոսանքը մի փոքր ծովում է, ծունկ է առաջացնում:

Այսպիսով, մթնոլորտի և օվկիանոսի շրջանառական պրոցեսները փոխապայմանավորված են և միմյանց շարունակութուն են կազմում:

Մենք դիտեցինք ջրի մեծ և փոքր շրջապտույտները, տեսանք, որ Արեգակի ջերմային էներգիայի միջոցով տարեկան 520 հազ. կմ<sup>3</sup> ջուր գոլորշանում է և նույնքան էլ վերադառնում է երկրի մակերևույթ: Սակայն գոլորշիների շարժումն ու շրջապտույտը առանց օդային զանգվածների չի կարող կատարվել: Օդային զանգվածները գոլորշիների տեղափոխման միջոց են:

Ինչպես տեսնում ենք, ջրի և մթնոլորտի շրջապտույտների միջև գոյութուն ունի սերտ օրգանական կապ: Եթե օդը տեղափոխում է ջրային գոլորշիներ, ապա գոլորշիներն էլ իրենց հերթին տեղափոխում են թափված ջերմութուն: Այստեղ ևս առկա է շրջանառական պրոցեսների փոխադարձ կապն ու փոխապայմանավորվածութունը:

Սերտ կապեր գոյութուն ունեն ջերմութեան ու խոնավութեան շրջապտույտների և կենսաբանական շրջապտույտների միջև, որտեղ դրանք ավելի բարդ են ու բազմակողմանի: Կենսաբանական շրջապտույտը քիմիական տարրերի շրջապտույտ է: Բույսը ստեղծում է օրգանական նյութ, որը հետագայում կարող է ընկնել դանդաղ շրջապտույտի ոլորտը և միլիոնավոր տարիներ մնալ շերտերի մեջ (կառուտորիոլիտների ձևով): Եթե սրանով ավարտենք շրջապտույտը, ապա այն շատ թերի ու կիսատ կամնա: Տոտոսինթեզի, սպիտակուցների ու ճարպերի սինթեզի ժամանակ կլանվել է արեգակնային էներգիա, որի շրջապտույտը կատարվում է քիմիական տարրերի շրջապտույտի հետ միաժամանակ, նրան զուգահեռ, և ազատվում է այն ժամանակ, երբ օրգանական նյութը քայքայվելով (օքսիդանալով) նորից հանքայնացվում է: Նույնը տեղի է ունենում նաև ջրի հետ: Քիմիական տարրերի կենսաբանական շրջապտույտը կատարվում է ջրի միջոցով, առանց ջրի այն տեղի ունենալ չի կարող: Կենսաբանական շրջապտույտը քիմիական տարրերի էներգիայի ու ջրի

շրջապատույտի անանջատելի զուգորդությունն է, նրանց միմյանցից անջատել հնարավոր չէ:

Նյութերի ու էներգիայի շրջապատույտների միջև ավելի բարդ կապակցություններ կան, որ տեղի են ունենում քարոլորտի խորքում ու մանթիայում: Դրանց մասին արդեն նշել ենք Երկրի ներքին վիճակը նկարագրելիս:

Նյութերի շրջապատույտը Երկրի վրա նրանց գոյության ձևն է: Նյութը այլ կերպ գոյություն ունենալ չի կարող, քան՝ շարժման մեջ:

Երկիր մոլորակի վրա քիմիական տարրերի շրջապատույտները ինչպես ոլորտների ներսում, այնպես էլ նրանց միջև կարող են լինել՝ մեխանիկական (ֆիզիկական), քիմիական, ագրեգատային, կենսաբանական:

Մեխանիկական (ֆիզիկական) շրջապատույտի ընթացքում նյութը տեղաշարժվում է առանց հատկանիշները փոխելու: Օրինակ՝ գետը իր վերին հոսանքներում գլորում է հսկա քարաբեկորներ, առանց ապարի ներքին հատկանիշները խախտելու, կամ քամին մի վայրից մյուսն է տանում ավազի հատիկներ. այդ ընթացքում ավազի հատիկների ներքին՝ կառուցվածքային հատկանիշները մնում են նույնը:

Շրջապատույտի քիմիական ձևի դեպքում նյութերի հատկանիշները փոխվում են: Այս ձևը մեծ մասամբ տեղի է ունենում երկրի մակերևույթին՝ ջրի միջոցով: Նյութը կարող է շրջապատույտի ոլորտն ընկնել իոնական ձևով: Սկզբում կատարվում է ջրակցում (հիդրատացիա), նյութի բյուրեղային ցանցից իոնները պոկվելով անցնում են ջրի մեջ և լուծված վիճակում մասնակցում են շրջապատույտին: Նյութերի շրջապատույտի քիմիական ձևը գոյություն ունի նաև մանթիայում, քարոլորտում: Մանթիայում բարձր ջերմաստիճանի ու ճնշման պայմաններում տարբեր նյութերի ատոմները լուծված են մանթիայի նյութի մեջ:

Ագրեգատային շրջապատույտն ընդգրկում է նյութերի երեք տարբեր ագրեգատային վիճակները: Մանթիայում նյութերը հեղուկ, պինդ և գազային վիճակում են. բնական է, եթե միջավայրն ամբողջովին պինդ է, շրջապատույտ կատարվել չի կարող: Այդ պինդ միջավայրում միայն հեղուկ և գազային

բաղադրիչները կարող են շարժվել, իրենց հետ տանելով նաև պինդ նյութեր:

Ծրկրի մակերևութի վրա ամենաշարժուն տարրերը օդն ու ջուրն են, որոնք գտնվում են գազային ու հեղուկ ագրեգատային վիճակներում և շարժման ոլորտում իրենց հետ տանում են նաև պինդ նյութեր:

Նյութերի շարժման ու շրջապտույտի կենսաբանական ձև-վի դեպքում քիմիական տարրերի հատկանիշները փոխվում են, առաջանում է նյութի նոր՝ կատարյալ ձև՝ ածխաջրեր, սպիտակուցներ, ճարպեր և այլն: Վերջիններս շարժման ու շրջապտույտի ընթացքում կյանք են ստեղծում:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ՌԻԹՄԻԿ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ռիթմը երևույթների ու առարկաների օրինաչափ, որոշակի հաջորդականությամբ կրկնելիությունն է: Ռիթմը կարող է լինել երաժշտության, ճարտարապետության, կենսաբանության մեջ և այլն: Օրինակ կենդանիների շնչառությունը, սրտի բաբախյունը, ծովի ալեբախությունը, մարդու ամենօրյա աշխատանքային պրոցեսը և այլն:

Աշխարհագրական թաղանթում բազմաթիվ երևույթներ ու պրոցեսներ որոշակի կրկնելիություն ունեն՝ Երկրի օրական պտույտն իր առանցքի շուրջը, Երկրի տարեկան պտույտը Արեգակի շուրջը, մակընթացություն-տեղատվությունը, ալիքավորումը և ալեբախությունը, գետերի հորդացումը, բույսերի աճեցողությունը (վեգետացիան), աղուտների առաջացումը, ջրավազաններում պլանկտոնի գաղթը, գեյզերների գործունեությունը, սառցադաշտերի արշավն ու նահանջը, լճերի մակարդակի տատանումները և շատ այլ երևույթներ:

Կան ռիթմեր, որոնք միանգամայն կանոնավոր պարբերություն ունեն, որը կարելի է որոշել վայրկյանի հազարերորդականի ճշտությամբ (օրը, տարին և այլն). սրանց անվանում են կանոնավոր ռիթմեր կամ պարբերական ռիթմեր: Կան և այնպիսիք, որոնք պարզորոշ արտահայտված են, սակայն պարբերությունը որոշակի չէ (սառցապատումները, կլիմայական փոփոխությունները, լճերի մակարդակի տատանումները). սրանց անվանում են փոփոխական կամ ցիկլային ռիթմեր: Քննարկենք կանոնավոր կամ պարբերական ռիթմերը:


Երկրագունդն իր առանցքի շուրջը պտտվում է 23 ժամ, 56 րոպե 04 վայրկյանում, և բոլոր հիմքերը կան կարծեկու, որ մեր մոլորակը իր կենսագրության առաջին փուլում ավելի արագ է պտտվել:

Երկրագնդի օրական պտույտը կատարվում է երևակայական առանցքի շուրջը, որի ծայրերը Երկրի վրա առաջացնում են հյուսիսային և հարավային բևեռները: Երկրի ֆնդաձևության և օրական պտույտի հիման վրա ստեղծվում է աստիճանացանցը՝ միջօրեականները, զուգահեռականները, որոնց միջոցով հեշտությամբ կարելի է որոշել Երկրագնդի վրա գտնվող ցանկացած կետի կոորդինատները: Կոորդինատներն արտահայտվում են աշխարհագրական լայնությամբ ու երկայնությամբ:

Աշխարհագրական լայնությունը Երկրագնդի վրա գտնվող որևէ A կետից դեպի Երկրի կենտրոն (O) տարած շառավղի (ծանրության ուժի ուղղության) և հասարակածային հարթության (B, B<sub>1</sub>) միջև կազմվող անկյունն է (α): Աշխարհագրական լայնությունը ցույց է տալիս A կետի հեռավորությունը հասարակածից՝ աղեղի աստիճաններով արտահայտած: Քանի որ զուգահեռականները հասարակածի նկատմամբ զուգահեռ են, ապա նրանց վրա գտնվող ցանկացած կետից դեպի Երկրի կենտրոն տարած շառավղի և հասարակածային հարթության միջև նույն անկյունը կտացվի: Հասարակածից հյուսիս մինչև բևեռ աշխարհագրական լայնություններն աճում և հասնում են 90°-ի. սա ամենաբարձր լայնությունն է: Նույն ձևով էլ լայնությունները աճում են նաև հարավային կիսագնդում հասնելով 90°-ի՝ հարավային բևեռում: Հասարակածից հյուսիս լայնությունները կոչվում են հյուսիսային լայնության, դեպի հարավ՝ հարավային լայնության:

Քայց միայն լայնությամբ հնարավոր չէ Երկրագնդի վրա կետի տեղը որոշել, անհրաժեշտ է իմանալ նաև աշխարհագրական երկայնությունը: Աստիճանացանցում երկայնությունները պատկերում են միջօրեականները: Եթե Երկրագունդը հատենք մի այնպիսի հարթությամբ, որն անցնի Երկրի առանցքով, ապա մոլորակը հնարավոր կլինի մտովի կիսել երկու հավասար մասերի: Այն գիծը, որ կատացվի

միջօրեականի հարթության և Երկրի մակերևույթի հատումից, կկոչվի միջօրեականի գիծ: Ակներև է, որ բոլոր միջօրեականները կհատվեն աշխարհագրական բևեռներում: Պայմանականորեն ընդունված է սկզբնական ( $0^\circ$ ) միջօրեական համարել Գրինվիչի (Լոնդոն) աստղադիտարանի վրայով անցնող միջօրեականը, որտեղից էլ կատարվում է երկայնության հաշվարկը:



Ֆկ. 22. Աշխարհագրական լայնության և երկայնության պատկերացումը:

Երկայնություն ասելով հասկանում ենք սկզբնական ( $0^\circ$ -ի) միջօրեականի հարթության և ցանկացած կետով անցնող միջօրեականի հարթության միջև կազմված երկնիստ անկյունը: Հասարակածային հարթության վրա այդ անկյունը ներկայացված կլինի միջօրեականներից սկսվող և երկրի կենտրոնում հատվող շառավիղներով (նկ. 22):  $0^\circ$  միջօրեականից արևելք մինչև  $180^\circ$  երկայնությունը կլինի արևելյան երկայնության, դեպի արևմուտք  $180^\circ$  արևմտյան:

Երկրի օրական պտույտի հետևանքով մեր մոլորակի վրա առաջանում են մի շարք երևույթներ: Ստորև քննենք այդ երևույթներից մի քանիսը:

Գիշեր ու ցերեկ Երկրագունդը պինդ, անթափանց մարմին է, ուստի Արեգակի ճառագայթները կարող են լուսավորել այդ գնդի այն մասը, որն ուղղված է դեպի լուսատուն, իսկ հակառակ մասում կլինի մութ: Մեկ օրվա պտույտի ընթացքում Երկրի վրա գտնվող որևէ կետը մեկ անգամ անցնում է Արեգակի դիմացով (ցերեկ), մեկ անգամ հակառակ կողմով (գիշեր): Եթե Երկրագնդի առանցքը Արեգակի ճառագայթների նկատմամբ ուղղահայաց լիներ, ապա բոլոր գուգահեռականների վրա գտնվող կետերը 12 ժամ կլինեին

Արեգակի դիմաց, 12 ժամ հակառակ կողմում, ուտի ցերեկն ու գիշերը կունենային հավասար տևողություն: Բևեռներում Արեգակը միշտ կսահեր հորիզոնի վրայով: Քանի որ Սրկրագնդի առանցքը ուղեծրի հարթության նկատմամբ թեքված է  $66,5^\circ$ , ապա վերը նշված գիշերահավասարի երևույթը տարվա մեջ միայն երկու անգամ է նկատվում՝ մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին: Մերձբևեռային լայնություններում ամռանը և ձմռանը օրական ութամյա խախտվում է և վերածվում սեզոնային ութամյի՝ ցերեկը երկարելով ընդգրկում է մի քանի ամիս, այդ նույն ժամանակ գիշերը չի լինում, կամ հակառակը՝ առաջանում է բևեռային գիշեր, և Արեգակը բոլորովին չի երևում (տե՛ս տարեկան ութամբը բաժինը):

### ԺԱՄԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Սրկրագունդը գնդաձև է, և նրա տարրեր մասերում օրվա նույն ժամը լինել չի կարող: Մի մասում կեսօր է, մեկ այլ տեղ՝ մայրամուտ, արևածագ կամ գիշեր: Ինչպե՞ս ցույց տալ ժամանակը: Նշենք, որ միջօրեականի վրա բևեռից բևեռ ամենուրեք օրվա նույն ժամն է: Եթե Սրկրագունդը 24 ժամվա ընթացքում մեկ պտույտ է կատարում, ապա յուրաքանչյուր միջօրեական մեկ ժամում անցնում է  $15^\circ$  ( $360 : 24$ ), ուրեմն Սրկրագունդը կունենա 24 ժամային գոտի: Այդ գոտիները ձգվում են բևեռից բևեռ, և ժամային գոտու միջին ժամանակը ընդունված է գոտու միջին մասով անցնող միջօրեականի ժամանակը: Սովետական Միության տարածքով անցնում է 11 ժամային գոտի, սակայն միշտ չէ, որ ժամային գոտին երկու կողմից անպայման սահմանափակված է միջօրեականներով: Հաճախ պետությունների կամ վարչական միավորների տարածքից մի փոքրիկ հատված ընկնում է հարևան ժամային գոտու մեջ: Այդ դեպքում ժամերի հաշվարկի բարդություններից խուսափելու համար տարածքն ամբողջովին պայմանականորեն մտցնում են մեկ ընդհանուր ժամային գոտու մեջ: Օրվա սկիզբը համարվում է  $180^\circ$ -ի միջօրեականը: Ուրեմն մեր երկրում նոր տարին առաջինը դիմավորում են Չուկոտյան թերակղզու բնակիչները:

Սովետական Միության մեջ ժողովրդական տնտեսության որոշ ճյուղեր ղեկավարվում են Մոսկվայի ժամանակով (եր-

կաթուղին, օդային տրանսպորտը և այլն): Տվյալ ժամային գոտու և Մոսկվայի ժամանակների տարբերությունը իմանալու համար պետք է իմանալ Մոսկվայի երկայնության և տվյալ վայրի երկայնության տարբերությունը: Օրինակ՝ Մոսկվան գտնվում է երկրորդ ժամային գոտում (արևելյան երկ. 37°), իսկ Իրկուտսկը՝ 7-րդ (արևելյան երկ. 105°) նրանց տարբերությունը 5 ժամ է: ( $105 - 37 = 68 : 15 = 4,5$ , այսինքն՝ եթե 4-ից ավելի է, նշանակում է ընկնում է հաջորդ՝ 5-րդ գոտու մեջ): Եթե Մոսկվայում ցերեկվա 12-ն է, ապա Իրկուտսկում կլինի 17-ը: Սովետական Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը գտնվում են երրորդ ժամային գոտում, որտեղ միջին ժամանակը Մոսկվայի ժամանակից առաջ է 1 ժամով, իսկ Լոնդոնից՝ 3 ժամով: Այստեղ հարկ է նշել դեկրետային ժամանակի մասին: Դեկրետային ժամանակը պայմանական է. տնտեսական նպատակներով Սովետական Միության մեջ գործածության մեջ գտնվող ժամանակը 1930 թվականից մեկ ժամ առաջ է գոտու աստղաբաշխական ժամանակից: 1982 թ. ամառային ամիսներին ժամանակը 1 ժամով ևս առաջ է տարված (ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը), սա ևս նշանակություն ունի էլեկտրաէներգիայի խնայողության ու այլ տնտեսական առումով:

Տարբեր գոտիների ժամանակը տարբեր ննուններով է կոչվում. օրինակ, Լոնդոնի ժամանակը (զրոյական ժամային գոտի) կոչվում է համաշխարհային կամ արևմտաեվրոպական, առաջին գոտունը՝ Միջինեվրոպական, երրորդ գոտունը՝ Արևելաեվրոպական, իսկ ՄՍՀՄ-ում այդ գոտին՝ Մոսկովյան և այլն:


### ԿՈՐԻՈՂԻՍԻ ՈՒԺԸ

Երկրի իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով առաջանում է ուժ, որը շարժվող մարմիններին հյուսիսային կիսագնդում շեղում է դեպի աջ, հարավայինում՝ ձախ: Այդ մասին մենք բազմիցս ակնարկել ենք, սակայն բացատրություն չենք տվել: Այժմ քննենք այդ ուժի ներգործության երկվայթը՝ այն դիտելով աշխարհի հյուսիսային բևեռից:

Շարժվող մարմինների ուղղությունը աշխարհի առանցքի նկատմամբ ուղղագիծ է, բայց երկրի մակերևույթի վրա այդ

մարմնի շարժումը տեղի է ունենում պտտվող ոլորտի մեջ, որտեղ հորիզոնը շարժվող մարմնի տակ հյուսիսային կիսագնդում պտտվում է դեպի ձախ, իսկ հարավայինում՝ աջ: Եթե դիտողը գտնվում է հորիզոնի կենտրոնում, ապա մարմնի շարժումը հյուսիսային կիսագնդում շեղվում է դեպի աջ, հարավայինում՝ ձախ:

Կորիոլիսյան ուժի պատկերավոր արտահայտությունը տեսնում ենք Ֆուկոյի ճոճանակի տատանումների մեջ: Ճոճանակը աշխարհի առանցքի նկատմամբ միշտ նույն հար-



—→ 1  
- - -→ 2  
Նկ. 23. Կորիոլիսյան ուժի ազդեցության սխեման:  
1— շարժվող մարմնի ուղղությունը,  
2— շեղման ուղղությունը:

թուլթյան ուղղությամբ է տատանվում, մինչդեռ ճոճանակի տակ գտնվող երկրի մակերևույթը պտտվում է. թվում է, թե ճոճանակն է շարժվում դեպի աջ (հյուսիսային կիսագնդում) կամ դեպի ձախ (հարավային կիսագնդում) (նկ. 23): Հասարակածից բևեռ գնալիս կորիոլիսյան ուժը մեծանում է, հասարակածի տակ շեղում չի կատարվում:

Կորիոլիսյան շեղող ուժը արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$F = 2\omega \cdot v \cdot \sin\varphi$$

որտեղ  $\omega$ -ն Երկրի պտտման անկյունային արագությունն է,  $v$ -ն՝ շարժվող մարմնի արագությունը,  $\varphi$ -ն աշխարհագրական լայնությունը: Այս ուժի ազդեցության տակ գետերը հյուսիսային կիսագնդում քանդում են աջ ափը, և այն լինում է զառիթափ (Վոլգա, Ենիսեյ և այլն): Մի ժամանակ, երբ Երկրագունդն ավելի արագ է պտտվել, կորիոլիսյան ուժն ավելի գորեղ է եղել, շատ հնարավոր է, որ մթնշղթրտի ընդհանուր շրջապտույտի սխեման մի փոքր ալլ պատկեր է ունեցել: Բարձր ճնշման (պասսատների) գոտին հասարակածին ավել-

լի մոտ է եղել, գուցե 3-ի փոխարեն 4 շրջապտույտ է տեղի ունեցել:

### ՕՐԱԿԱՆ ԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՔՄԸ

Օրական ռիթմերի մեջ կենսաբանական ռիթմը շատ ցայտուն է արտահայտված: Կենդանիների մեծ մասը գիշերը քուն է մտնում, որը շատ կարևոր կենսական պրոցես է. բայց կան կենդանիներ, որոնք ցերեկը խուսափում են լույսից և աշխուժանում են գիշերը (օրինակ՝ բաղլիճները, ուտիճները և այլն): Բույսերի ֆոտոսինթեզը կատարվում է ցերեկային ժամերին. մայրամուտից հետո այդ պրոցեսը կանգ է առնում: Լճավազաններում ցերեկային ժամերին պլանկտոնը իջնում է խոր շերտերը, գիշերը՝ բարձրանում: Կենդանիներից շատերը ունեն սնման որոշակի ժամանակ և ամեն օր նույն ժամին են սնվում:

Մարդու համար բնությունը նույնպես ստեղծել է օրական ռիթմ՝ գիշերը նա հանգստանում է, ցերեկը արթուն վիճակում ծավալում իր աշխատանքային գործունեությունը:


Այլ ռիթմեր Օրական ռիթմերն արտահայտված են նաև այլ ասպարեզներում: Օրինակ՝ ջերմաստիճանի օրական ռիթմը: Եթե կազմելու լինենք ջերմաստիճանի օրական ընթացքի գրաֆիկը, ապա կնկատենք, որ ամենաբարձր ջերմաստիճանը կլինի ժամը 13—14-ին, կորը գիշերը կիջնի, առավոտյան կնկատվի նվազագույն ջերմաստիճանը: Ցայտուն արտահայտված օրական ռիթմ ունի հարաբերական խոնավությունը՝ ունենալով ջերմաստիճանին հակառակ ընթացք: Օրական ռիթմ ունի մթնոլորտի ճնշումը՝ գիշերը՝ բարձր, ցերեկը՝ ցածր և այլն: Օրական ռիթմեր ունեն գոլորշացումը, լեռնահովտային քամիները, տեղումները (զենիթային անձրևներ) և բազմաթիվ այլ երևույթներ:

### ԵՐԿՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՌԻՔՄԵՐԸ

Երկրագունդը պտտվում է Արեգակի շուրջը մեկ տարվա ընթացքում՝ 365 օր, 6 ժամ, 9 րոպե, 9,6 վայրկյանում (աստղային տարի): Պտույտը կատարվում է էլիպսաձև ուղեծրով, էլիպսի ֆոկուսներից մեկում գտնվում է Արեգակը: Երկիրը արևամերձ կետում (պերիհելիում) լինում է հունվարի 3-ին

(հեռավորությունը 147 մլն կմ), ամենահեռու կետում (աֆելիում)՝ հուլիսի 5-ին (հեռավորությունը՝ 152 մլն կմ): Ուղեծրի երկարությունը 940 մլն կմ է, այդ ճանապարհը Երկիրն անցնում է 29,8 կմ/վրկ միջին արագությամբ: Արևամերձ կետում արագ է անցնում, ամենահեռու կետում՝ դանդաղ: Այս բանը իր արտահայտությունն է գտել Կեպլերի օրենքում՝ մոլորակի վեկտոր շառավիղը հավասար ժամանակամիջոցում գծում է հավասար մակերես:

Երկրի պտույտը Արեգակի շուրջը տարվա սեզոնների-եղանակների առաջացման պատճառ է դառնում: Տարվա եղանակները առաջանում են այն պատճառով, որ Երկրագնդի առանցքը ուղեծրի հարթության նկատմամբ թեքված է  $66,5^\circ$ : Քննարկենք այդ երևույթը (նկ. 24): Մինչ այդ նշենք, որ



Նկ. 24. Տարվա եղանակների առաջացումը. Երկրագնդի դիրքը և Արևի ճառագայթների ուղղությունը հունիսին:

Արեգակի մեծության ու հեռու լինելու հետևանքով դեպի Երկիր եկող ճառագայթները միմյանց նկատմամբ զուգահեռ են: Այս ճառագայթները մերթ հյուսիսային կիսագունդն են շատ տաքացնում, մեկ՝ հարավային: Դեկտեմբերի 22-ի դիրքում Արեգակի ճառագայթները Երկրի մակերևույթը շոշափում են A, B կետերում, նրանց միջև անցնող կետագիծը Երկրագունդը բաժանում է երկու մասի՝ Արեգակի դիմաց լուսավորված, իսկ հակառակ կողմում՝ մութ մասն է: Երկրագնդի

առանցքի թեքության պատճառով լույսը մութից բաժանող շրջագիծը Երկրագնդի վրա ոչ թե անցնում է բևեռներով, այլ հյուսիսային լայնության 66,5°-ից հարավային լայնության 66,5°-ը, Արեգակի ճառագայթները ուղղահայաց ընկնում են հարավային լայնության 23,5°-ի տակ (հարավային արևադարձ)։ Ակնհերև է, որ յուրաքանչյուր զուգահեռական հյուսիսային կիսագնդում ավելի երկար ժամանակ անցնում է գիշերային, իսկ հարավային կիսագնդում՝ ցերեկային կեսով։ Հյուսիսային բևեռային շրջագծից հյուսիս մինչև բևեռ Արեգակը չի երևում, բևեռային գիշեր է, իսկ հարավային բևեռային շրջագծից հարավ մինչև բևեռ բևեռային ցերեկ է, Արեգակը երբեք մայր չի մտնում։ Այսպիսով, այս դիրքում՝ դեկտեմբերին հյուսիսային կիսագնդում ձմեռ է, հարավայինում՝ ամառ։

Այժմ քննարկենք մարտի 21-ի դիրքը։ Չնայած Երկրագնդի առանցքը թեք է, բայց Արևը լուսավորում է բևեռից բևեռ։ Գծագրի վրա երևացող կիսագունդը լուսավորվածն է, մյուս կողմում՝ մութը։ Քանի որ լույսը մութից բաժանող շրջագիծը անցնում է բևեռների վրայով, նշանակում է Երկրի վրա գտնվող յուրաքանչյուր կետ 12 ժամ անցնում է լույսի միջով, 12 ժամ՝ խավարի՝ գիշերահավասար է, նշանակում է՝ գարուն է։ Նույն պատկերն է նաև սեպտեմբերի 23-ին՝ աշնան գիշերահավասարի օրը։

Հունիսի 22-ին Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ այնպիսին է, որ հյուսիսային կիսագունդն ավելի շատ է լուսավորված և ավելի շատ ջերմություն է ստանում։ Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են հյուս. լայնության 23,5°-ի տակ (հյուսիսային արևադարձ)։ Լույսը մութից բաժանող շրջանագիծը անցնում է հյուս. լայնության 66,5°-ից մինչև հար. լայնության 66,5°-ը այնպես, որ հյուսիսային բևեռային շրջագծից մինչև բևեռ Արեգակը մայր չի մտնում՝ բևեռային ցերեկ է։ Գրան հակառակ՝ հարավային բևեռային շրջագծից մինչև բևեռ Արեգակը բնավ չի երևում՝ բևեռային գիշեր է։ Ակնհերև է, որ հյուսիսային կիսագնդում գտնվող որևէ կետ երկար ժամանակ է անցնում լուսավորված մասով՝ ցերեկը երկար է, մինչդեռ հարավային կիսագնդում գիշերն է

երկար: Վեց ամիս անցնելուց հետո հակառակ պատկեր է՝ հարավային կիսագնդում է ամառ, հյուսիսայինում՝ ձմեռ:

Քեռոային գիշերվա և քեռոային ցերեկվա տևողութունը քեռոներում հասնում է վեց ամսվա, իսկ քեռոային շրջագծի վրա տարվա մեջ միայն մեկ օր է, որ Արեգակը բոլորովին մայր չի մտնում: Որքան մոտենում ենք քեռոներին, քեռոային գիշերվա և ցերեկվա տևողութունը մեծանում է:

Տարվա եղանակների (սեզոնների) հերթափոխութունը ամեն տարի կանոնավոր ձևով կրկնվող երևույթ է, շատ ցայտուն արտահայտված ուրիշ:

Տարվա ուրիշ կենսոլորտում. Քե՛ր բուսական և թե՛ կենդանական աշխարհը ունեն սեզոնային վարք, և ամեն տարի նույն սեզոններին նրանց մոտ տեղի են ունենում նույն երեվույթները:

Գարնանը սերմը ծլում է, զարգանում է բուսաճեցողութունը (վեգետացիան), շարունակվում է մինչև աշուն, բույսը պրտուղ է տալիս և մահանում (միամյա բույսեր): Բազմամյա բույսերը, պտղատու ծառերը գարնանը զարթոնք են ապրում, սկսվում է հյութաշարժը, ամառվա ընթացքում տեղի է ունենում օրգանական նյութի՝ ածխաջրերի, սպիտակուցների, ճարպերի սինթեզ, պտղակալում, աշնանը՝ տերևաթափ, հյութաշարժը դադարում է: Այս փուլերը շատ ցայտուն են արտահայտված մերձարևադարձային, բարեխառն, մերձքեռոային գոտիներում:

Հասարակածային խոնավ անտառներում պատկերն այլ է. այստեղ տարվա եղանակներ չկան, միշտ տաք է ու խոնավ, բուսաճեցողության պրոցեսը յուրաքանչյուր անհատ բույսի մոտ իր ընթացքն ունի, այնուամենայնիվ տարվա ուրիշը, թեև թույլ, արտահայտված է: Շատ ցայտուն են արտահայտված սավաննաների սեզոնային փուլերը՝ ամռանը բույսերի բուռն աճ, ձմռանը՝ ամեն ինչ շորանում, խանձվում է:

Կենդանական աշխարհը նույնպես ենթարկվում է սեզոնային ուրիշին: Կան շատ կենդանիներ, որ ձմռանը քուն են մըտնում, նրանց կենսագործունեութունը տարվա տաք կեսին է ծավալվում: Շատ կենդանիներ միայն գարնանն են բեղմնավորվում, մյուսները տարվա ընթացքում փոխում են ազվամազը, մորթը: Թռչունները ամեն տարի գարնանը տաք եր-

կրրննրից չվում են մերձբեկեռային երկրներ, այնտեղ են ձուղնում, ձագեր հանում և աշնանը վերադառնում:

**Ռիթմը մթնոլորտում և ջրոլորտում:** Տարվա ընթացքում բոլորապատույտ (ցիկլային) երևույթները պարզորոշ նկատվում են նաև մթնոլորտում և ջրոլորտում: Մենք տեսանք, որ մուսսոնները տարվա ընթացքում երկու անգամ իրենց ուղղությունը փոխում են: Բարեխառն ու ցուրտ երկրներում տեղումները ձմռանը լինում են ձյան ձևով, առաջանում է կայուն ձնածածկույթ, որը գարնանը հալվում է: Արևադարձային մի շարք երկրներում տեղումների առավելագույն քանակը թափվում է այն ժամանակ, երբ Արեգակի ճառագայթները ուղղահայաց են ընկնում երկրի մակերևույթին (ամռանը):

Սեզոնային ռիթմը ցայտուն է արտահայտված տվյալ վայրի ջերմաստիճանների, խոնավության և օդերևութաբանական այլ տարրերի տարեկան ընթացքում: Կան շատ երևույթներ, որ կապված են տարվա միայն մեկ սեզոնի հետ (օրինակ՝ կարկտահարությունը, բեկեռափայլը, Սիբիրական անտիցիկլոնը, ջերմաստիճանային շրջադասությունը և այլն):

Սեզոնային ռիթմը հատկապես լայն տարածում ունի ջրոլորտում: Գետերի մեծ մասում սեզոնային ռիթմը ցայտուն է արտահայտված: Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են գարնանը, իսկ ամռանն ու ձմռանը դառնում են սակավաջուր: Մեկ այլ տեղ, օրինակ Ամուրի ավազանում, հորդացումն ամռանն է, Միջերկրական ծովի ավազանում՝ ձմռանը և այլն: Սկսած մերձարևադարձային գոտուց մինչև բեփեռային շրջանները ձմռանը ջրավազաններում նկատվում են սառցային երևույթներ: Լճերում ձմռանը հակառակ ջրաշերտավորում է, ամռանը՝ ուղիղ (տե՛ս լճերի բաժինը): Սառցադաշտերի հալքը կատարվում է ամռանը, ստորերկրյա ջրերի (աղբյուրների) ելքը տարվա տարբեր սեզոններին նույնը չէ:

### **ԱՐԵՊԱԿՆԱՅԻՆ ԲՈՂՈՐԱՊՏՈՒՅՏՆԵՐ (ՑԻԿԼՆԵՐ)**

Արեգակնային ճառագայթման պրոցեսը միշտ նույնը չէ, արտահայտված է 11 տարվա բոլորապատույտով, որն իր ազդեցությունն է ունենում Երկրի վրա: Օրինակ, 1980 թվականին արեգակնային ակտիվությունը մեծացավ և զգալի ազդեցություն ունեցավ եղանակի վրա:

Աշխարհագետ է. Բրուքները ուսումնասիրելով աշխարհի մի շարք լճերի մակարդակների տատանումները, հանգեց այն եզրակացության, որ գոյություն ունի կլիմայական փոփոխությունների 35 տարվա բոլորապտույտ:

Գոյություն ունեն նաև բազմադարյան բոլորապտույտներ: Դրանց ընթացքում կլիման մեկ խստանում է, մեկ՝ մեղմանում: Ճառագայթային լարվածության մեծացման դեպքում սառցադաշտերը նահանջում են, տեղի է ունենում սառցադաշտերի ինտենսիվ հալք, ճառագայթման լարվածության փոքրացման դեպքում՝ սառցադաշտերի արշավ: Երկրի սառցապատման բոլորապտույտների մասին մենք նշել ենք սառցադաշտերի բաժնում:

Երկրագնդի երկրաբանական պատմության ընթացքում տեղի են ունեցել տեկտոնական բոլորապտույտներ, որ գիտնականներից շատերը կապում են Գալակտիկայի բոլորապտույտների հետ: Նրանք գտնում են, որ Արեգակնային համակարգը Գալակտիկայի կենտրոնի շուրջը պտտվում է մոտ 200 միլիոն տարվա ընթացքում, հենց այդ ժամանակամիջոցում էլ լինում են ծալքավորությունների և հարաբերական հանգստի ժամանակաշրջաններ: Կալեդոնյան, հերցինյան և ալպյան ծալքավորությունները համապատասխանում են այդ բոլորապտույտներին:

Կան գիտաենթադրություններ, որ Երկիրը մեր Գալակտիկայի կենտրոնի շուրջը պտտվելիս անցնում է տարբեր խտության միջավայրերով և Արեգակից ստացվող ճառագայթների լարվածությունը փոխվում է, որն անպայմանորեն ազդում է Երկրի ջերմային ռեժիմի վրա: Շատ գիտնականներ սառցապատումների պատճառ են համարում Արեգակի ճառագայթային էներգիայի մերթ ընդ մերթ նվազումը:

Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող ութմային երևույթներն ունեն իրենց օրինաչափություններն ու կրկնելիության որոշակի կարգ ու պարբերություն: Մարդը, ճանաչելով այդ օրինաչափությունները, կարողանում է կանխագուշակել աշխարհագրական թաղանթի զարգացման ընթացքը, իսկ դա շահագանց կարևոր է ժողովրդական տնտեսության, բնության վերափոխման ու պահպանության շատ խընդիրներ լուծելու համար:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աշխարհագրական թաղանթը, որպես օբյեկտիվ ռեալականություն, անընդհատ զարգանում է: Զարգացումը նյութական օբյեկտների անշրջելի, որոշակի ուղղվածություններ օրինաչափ փոփոխություն է, շարժման բարձրագույն ձևը: Զարգացումը բնորոշվում է ստորինից (պարզից) բարձրը (բարդը), հին որակից դեպի նոր որակը օրինաչափ անցումով: Զարգացումը օբյեկտների կառուցվածքի ու կազմության այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր վիճակ: Զարգացումը նյութի և գիտակցության շարժման բարձրագույն ձևն է: Զարգացումը ընթանում է ժամանակի մեջ, և միայն ժամանակն է, որ ցույց է տալիս երևույթի ուղղվածությունը:

Զարգացումն ամբողջությամբ վերցրած առաջադիմական ուղղվածություն ունի, վերընթաց պարուրաձև շարժում է, դրսևորվում է էվոլուցիայի և հեղափոխության ձևով: Երկրի անցած ամբողջ ուղին էվոլուցիայի ու հեղափոխության ուղի է եղել:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աշխարհագրական թաղանթում գոյություն ունեցող շորս ոլորտները՝ քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը և կենսոլորտը զարգացել են փոխադարձ կապի ու ներգործության մեջ: Երկրի բացարձակ հասակը մոտ 5 միլիարդ տարի է՝ քարոլորտում ամենից հին ապարների բացարձակ հասակը 3,5 միլիարդ տարի է, դրանից առաջ մոտ 1—1,5 միլիարդ տարի Երկրի մակերևույթին առաջացել է կեղև, բայց ըստ երևույթին այն սուզվել է մանթիայի մեջ, կամ հրաբխային ուժգին արտավիժումների ժամանակ ամրացած կեղևը թաղվել է բազալտային նոր ծածկույթի տակ ու սուզվել մանթիայի մեջ: Այդ մասին մենք շատ քիչ բան գիտենք:

Երկրակեղևի ավերի հավաստի պատմությունն սկսվում է արխեյան դարաշրջանից: Նրան հաջորդում են պրոտերոզոյան, պալեոզոյան, մեզոզոյան, կայնոզոյան դարաշրջանները: Արխեյան և պրոտերոզոյան դարաշրջանները նախորդում են Երկրի երկրաբանական պատմությանը և միասին կոչվում

են մինչքեմբրո: Չնայած պալեոզոյից մինչև մեր օրերը անցել է 570 միլիոն տարի (Ֆաներոզոյ), սակայն այդ ժամանակահատվածում միաբջիջ օրգանիզմների հետագա զարգացումից ստեղծվեց ամենաբարդ, մտածող օրգանիզմը՝ մարդը իր ժամանակակից տեխնիկայով ու մշակույթով:

Արխեյան դարաշրջանը սկսվել է ավելի քան 3,5 միլիարդ տարի առաջ, տեւել է 1—1,5 միլիարդ տարի: Այդ դարաշրջանում առաջացած գերազանցապես բյուրեղային ապարները այժմ մերկանում են հնագույն վահաններում՝ Կոլա թերակղզում, Ֆինլանդիայում, կանադական վահանում և այլն:

Ջրի հեղուկ ագրեգատային վիճակի անցնելու համար պայմաններ առաջացել են արխեյում, և այս դարաշրջանում է ձևավորվել համաշխարհային օվկիանոսը: Արխեյի ամենակարևոր իրադարձութունը օրգանական նյութի սինթեզն է: Կյանքը սկսվում է արխեյից:

Պրոտերոզոյան դարաշրջանը սկսվել է 2,6 միլիարդ տարի առաջ, տեւել է մոտ 2 միլիարդ տարի (մինչև քեմբրի ժամանակաշրջանը, որ սրանից 570 միլիոն տարի առաջ է եղել): Այդ դարաշրջանում ձևավորվել են Ռուսական, Սիբիրական, Հնդկական, Չինա-Կորեական, Հարավ-Չինական, Աֆրիկյան, Ավստրալական, Անտարկտիկական, Բրազիլական, Կանադական պլատֆորմներն ու վահանները: Պրոտերոզոյի ապարները՝ գրանիտները գնեյսները, բյուրեղային թերթաքարերը խիստ ծալքավորված են:

Մինչքեմբրում, անցած ավելի քան 3 միլիարդ տարվա ընթացքում երկրակեղևի տարբեր մասերում եղել են ծալքավորման պրոցեսներ (առնվազն՝ 6), ցամաքները տրոհվել են, սկզբում եղել է Մեգազեյ հսկայական ցամաքազանգվածը, որը միջին սյրոտերոզոյում տրոհվել է: Սահմանազատվում են Նեոզեյի պլատֆորմներն ու զեոսինկլինալները:

Պալեոզոյան դարաշրջանը սկսվել է 570 միլիոն տարի առաջ, տեւել է 340 միլիոն տարի և բաժանվում է 6 ժամանակաշրջանի (աղյուսակ 7): Պալեոզոյում մեծ իրադարձութուններ են տեղի ունեցել: Ստորին քեմբրում եղել է բայկալյան, միջին պալեոզոյում (սիլուր-դեոն)՝ կալեդոնյան, ապա՝ հերցինյան (կարբոն-պերմ) ծալքավորութունները: Սրանք մինչքեմբրյան պլատֆորմների եզրային մասերում գտնվող զեո-

ի հեկտրինալներում առաջացրել են բարձրաբերձ լեռնաշղթաներ: Հետագայում դրանք քայքայվել, տեղատարվել են ու հարթվել: Սակայն այդ շղթաներից շատերը ենթարկվել են նորագույն տեկտոնական շարժումների (միոցենից մինչև մեր օրերը), նորից բարձրացել են, նորից մասնատվել՝ գետերի էրոզիոն աշխատանքի հետևանքով: Մալքավորումները ուղե-

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ ?

Երկրաբանական ժամանակագրության աղյուսակ

Հարարերական ժամանակագրութուն		Տևողութունը մլն տարի	Սկիզբը մլն տարի առաջ	Կարևոր իրադարձությունները
դարաշրջան, տևողութունը մլն տարի	ժամանակաշրջանի նշանները			
1	2	3	4	5
Կալեդոնյան (նոր կյանք) 67 + 3	Անթրոպոգեն (Q) շորթրդական (պոստպլիոցեն)	1,5	1,5—0	Ժամանակակից կենդանական աշխարհը, սառցապատումներ, էրոզիա, տեղատարում, մարդու առաջացումը:
	Նեոգեն (N) (պլիոցենի և միոցենի բաժիններով)	23,5	25—1,5	Ալպյան ծալքավոր գոտու լեռնային երկրների կազմավորում, հրաբխականություն, միոցենում՝ տաք կլիմա, ջերմասեր բույսեր ու կենդանիներ, պլիոցենում ցրտեցում և շորացում, ժամանակակից կենդանական աշխարհի ձևավորում:
	Պալեոգեն (օլիգոցենի, էոցենի, պալեոցենի բաժիններով)	42	67—27	Ինտենսիվ տեկտոնական շարժումներ (ալպյան գոտի), հրաբխականություն, էոցենում՝ ծովի առաջին թաց, օլիգոցենում՝ հետընթաց, կաթնասունների, ծածկասերմ բույսերի, թևավորողների, լիորոտանիների զարգացում:
Մեզոզոյան (միջին կյանք)	Կավին (K)	70	137—67	Կարամյան ծալքավորություն, ծածկասերմերի առաջացում, ծովի առաջընթաց:

1	2	3	4	5
163±10	Յուր (Y)	58	195-137	Նոր և հին կիմմերյան ծալ- քավորութիւններ, հրա- բխականութիւն, թուր- ների առաջացում:
	Տրիաս (T)	35	230-195	Սողունների առաջացում, ծովի հետընթաց, Գոնդ- վանայի տրոհման սկիզ- բը, հրաբխականութիւն:
Պալեոզո- յան (հին կյանք) 340±10	Պերմ (P)	55	285-230	Հերցինյան ծալքավորու- թիւն, հրաբխականու- թիւն, սիբիրական տը- րպանների առաջացում, ցամաքային սողունների երևան գալը:
	Կարբոն (C)	65	350-285	Հերցինյան ծալքավորու- թիւն, ծառարույսերի, ձարխոտերի երկկենցաղ- ների զարգացում, քա- րածխի կուտակում:
	Դևոն (D)	55	405-350	Կալեդոնյան ծալքավորու- թիւն, հրաբխականու- թիւն, ցամաքային բույ- սերի, երկկենցաղների, միջատների առաջացում:
	Սիլուր (S)	35	440-405	Կալեդոնյան ծալքավորու- թիւն, հրաբխականու- թիւն, կորալների ձևնե- րի, հատվածոտանիների առաջացում:
	Օրդովիկ (O)	60	500-440	Անողնաշարավորների, կա- րալների զարգացում:
	Քեմբր (E)	70	570-500	Ծովի անաջընթաց, ջրի- մուռների զարգացում, տրիլոբիտներ, բրախիո- պոդներ, պտերոպոդներ, սառցապատում:
Ուշպրո- տերոզո- յան (PR)	Վենգ	80-110	680-570	Ծալքավորութիւններ, հր- րաբխականութիւն, պը- լատֆորմների ձևավո- րում, ջրիմուռների, բա- պուլանների, հատվածո- տանիների առաջացում:
	Իտիֆեյ	~1000	1600-680	Պլատֆորմների ձևավորում, ուտորակարգ օրգանիզմ- ների առաջացում:
Վաղպրո- տերոզո- յան	Հիբաթան- վում	1000	2600-1600	Ծալքավորութիւններ, հր- րաբխականութիւն, պար- զազայն օրգանիզմների առաջացում:
Միոցեն (հնա- գույն, AR)	--	1000	3500-2600	Երկրակեղևի ձևավորում, օվկիանոսների առաջա- ցում, կյանքի ծագումը:

կցվել են ներծայթուկ (ինտրուզիվ) ներարկումներով, որոնց մեջ այժմ հայտնաբերվում են բազմաթիվ հանքային հարուստութուններ (Ուրալ, Ղազախական ծալքավոր երկիր, Ալթայ, Ապալաչներ և այլն)։ Ուժեղ հրաբխականություն է եղել հատկապես կարբոնի ժամանակաշրջանում, առաջացել են բազմաթիվ ներծայթուկներ։


Պալեոզոյում երկրակեղևի տատանումների շնորհիվ պլատֆորմների շատ հատվածներ ծածկվել են ջրով, ծովի հատակին առաջացել են նստվածքների շերտախմբեր, որոնք տեղ-տեղ հասնում են 10—15 կմ հաստությամբ։ Պալեոզոյը ցամաքում բուսական ու կենդանական աշխարհի բուռն զարգացման դարաշրջան է եղել։

Մեզոզոյի դարաշրջանն ընդգրկում է 163 միլիոն տարի։ Լեռնակազմական պրոցեսները շարունակվել են։ Տրիասում տեղի է ունենում սիբիրական տրապների ձևավորումը, որ սկսվել էր դեռևս պերմում։ Նկատվում է ծովերի հետընթաց, սկսվում է Գոնդվանա մայրցամաքի տրոհումը։ Միջին մեզոզոյում (յուրա) տեկտոնական շարժումներն ուժեղանում են (հին կիմմերյան, նոր կիմմերյան ալքավորություններ), նկատվում են հրաբխային երևույթներ։ Մեզոզոյի վերջում (կավճի ժամանակաշրջան) եղել է արամյան ծալքավորությունը, որի հետևանքով առաջացել են Կորդիլիերները և Հեռավոր Արևելքի մի շարք լեռնաշղթաներ։

Կայնոզոյան դարաշրջանը տևել է 67 միլիոն տարի և ստորաբաժանվում է պալեոգենի, նեոգենի, շորրոդական կամ անթրոպոգեն (պոստպլիոցեն) ժամանակաշրջանների։ Ամբողջ կայնոզոյի ընթացքում երկրակեղևը կրել է ալպյան ծալքավորության տարբեր փուլերի ազդեցությունը։ Ծալքավորություններն ուղեկցվել են հրաբխականությամբ. առաջացել են Ալպ-Հիմալայան ծալքավոր գոտին և Խաղաղ օվկիանոսային օղակի մերձծովյան լեռնաշղթաները։ Տեղի են ունեցել նորագույն տեկտոնական շարժումներ ոչ միայն ալպյան ծալքավոր գոտիներում, այլև ավելի հին՝ հերցինյան, կալեդոնյան, բայկալյան ծալքավորությունների մարզերում։

Ակներև դարձավ, որ երկրակեղևի ձևավորման սկզբից մինչև մեր օրերն ընկած վիթխարի ժամանակահատվածում (3,5 միլիարդ տարի) երկրակեղևն անընդհատ ենթարկվել է

փոփոխութիւններին՝ առաջացել են գետտինկլինալներ ու լեռնաշղթաներ, վերջիններս տեղատարվել ու հարթվել են և նորից ընդգրկվել ավելի ուշ ժամանակների տեկտոնական շարժումների ոլորտը: Այդ ամբողջ ժամանակամիջոցում Երկրի ընդերքից դուրս են ժայթքել հրաբխային նյութեր, ներարկվել են ներծայթուկներ, տեղի է ունեցել մագմայի տարբերակում՝ դիֆերենցում: Քարոլորտի զարգացման նման ընթացքը կշարունակվի նաև ապագայում:



Նկ. 25. Երկրի երկրաբանական փուլերի սանդակ (ըստ Կ. Կ. Մարկովի 1978)

Ջրուլարտի զարգացումը սկսվել է այն պահից, երբ երկրի կարծր կեղևի վրա ջրի հեղուկ ագրեգատային վիճակ է առա-

չացել: Այդ տեղի է ունեցել հավանաբար շուրջ 3 միլիարդ տարի առաջ: Անցած ամբողջ ժամանակաշրջանում ջրոլորտի շրջապատույտը քարոլորտի միջով հսկայական դեր է կատարել վերջինիս լվացման ու աղազերծման գործում: Այն քիմիական տարրերը, որոնք հեշտությամբ են լուծվում ջրի մեջ, այդ շրջապատույտի ընթացքում հեռացել են դեպի համաշխարհային օվկիանոս, ինչպես օրինակ քլորը:

Օվկիանոսների հատակում կուտակվել են հսկայական քանակության նստվածքներ. նրանց մի մասը, գեոսինկլինալներում ծալքավորվելով, դուրս է եկել լեռնաշղթաների ձևով, իսկ ավելի պինդ կառուցվածք ունեցող օվկիանոսային կեղևի հատվածներում նստվածքները սուզվել են մանթիայի մեջ: Զրոլորտի զարգացման ընթացքում օվկիանոս մուտք գործած աղերը կուտակվելով առաջացրել են աղահանքեր (կիսափայծովերում) կամ օրգանածին նստվածքներ: Օվկիանոսը դարձել է օրգանական աշխարհի օրրան, որտեղից էլ օրգանիզմները տարածվել են ցամաքի վրա:

Մթնոլորտի զարգացումը ավելի երկար ժամանակամիջոց է ընդգրկում: Սկզբում, շուրջ 3—5 միլիարդ տարի առաջ, մթնոլորտը բոլորովին այլ կազմ ուներ, թթվածին գրեթե չի եղել, գերակշռել են  $H_2O$ ,  $CO_2$ ,  $NH_3$ : Արխեյի վերջից սկսած առաջանում են օրգանիզմներ, որոնք օգտագործում են մթնոլորտում գտնվող  $CO_2$  և  $NH_3$  գազերը:

Դեռևս պրոտերոզոյում առաջացած ջրիմուռներն ու այլ օրգանիզմները ֆոտոսինթեզ կատարելով, օդը հարստացրել են թթվածնով, սակայն թթվածնի ուժեղ հոսքը դեպի մթնոլորտ տեղի է ունեցել սկսած դեռնի ժամանակաշրջանից, երբ բույսերը ցամաքի մակերևույթին մասսայական տարածում են ստացել: Կարբոնի ժամանակաշրջանը հայտնի է բուսական ծածկույթի փարթամությամբ: Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակաշրջանում էլ մթնոլորտում հաստատվել է գազերի ժամանակակից փոխհարաբերությունը: Մթնոլորտում գոյություն ունեցող ածխածին գազը ֆոտոսինթեզի միջոցով տրոհվել է, և ածխածինը կուտակվել է կառուտորիոլիտների ձևով՝ ազատելով օդը կենդանական աշխարհի համար վնասակար այդ գազից:

Զերմամիջուկային, քիմիական, օրգանական ռեակցիաներ-

րի շնորհիվ երկրակեղևից դեպի մթնոլորտ, այնուհետև դեպի միջմոլորակային տարածություն են անցնում թեթև գազեր, ինչպես ջրածինն ու հելիումն են: Երկրագունդը ամեն տարի որոշակի քանակությամբ գազեր է կորցնում, բայց դրա փոխարեն նոր նյութ է ստանում երկնաքարերի ու տիեզերական փոշու միջոցով: Մանթիայից յուրաքանչյուր տարի շուրջ մեկ միլիոն տոննա գազ է արտանետվում դեպի մթնոլորտ և լրրացնում վերջինիս պաշարները: Ըստ երևույթին մթնոլորտում գազերի ընդհանուր քանակությունը հաստատուն է մնում, միայն մուտքի ու ելքի գազային կազմը տարբեր է:

Կենսոլորտի զարգացումը շատ ավելի բարդ ընթացք է ունեցել: Մոտ 3 միլիարդ տարվա ընթացքում միաբջիջ պարզագույն օրգանիզմներից ստեղծվել են միլիոնավոր տեսակի բուսական ու կենդանական օրգանիզմներ, վերջապես ստեղծվել է բանական մարդը:

Քարոլորտում կենսածին փուլի սկզբում (3 միլիարդ տարի առաջ), ուժեղ կատիոնների գերակշռությունը (9,83%) ուժեղ անիոնների նկատմամբ (0,1679%) ստեղծում էր միջավայրի ուժեղ հիմքային ռեակցիա, որը մեծ խոչընդոտ էր օրգանիզմների զարգացման համար: Սակայն, ինչպես ենթադրում է Ա. Ի. Պերելմանը, օրգանիզմներն այդ ժամանակամիջոցում ձեռք են բերում ընտրություն կատարելու ունակություններ և միջավայրից կլանում են ավելի շատ անիոններ, քան կատիոններ, որով և հիմքային ռեակցիան մասամբ իստեղծվեց մարմնի մեջ շեղոքացնում են:

Մինչքեմբրի պարզունակ անապատային լանդշաֆտներում (3 միլիարդ տարուց մինչև 570 մլն տարի, մինչև պալեոզոյ) ցամաքի վրա գոյություն ունեին միայն բակտերիաներ, ջրիմուռներ: Պրոտոբրոզոյի վերջում առաջանում են առաջին պսիլոֆիտները, որոնցից հետագայում առաջանում են բարձրակարգ բուսական օրգանիզմներ: Այս էտապում հողմահարման պրոցեսներն ընթանում էին վերականգնման ռեակցիայի միջավայրում, իսկ այդ պայմաններում կատարվում է Fe-ի և Mn-ի ջրային տեղաշարժ (միգրացիա):

Մովային միջավայրում ապրող կապտականաչ ջրիմուռները կուտակում էին  $\text{CaCO}_3$ ՝ մթնոլորտից խլելով  $\text{CO}_2$  և արտաթորելով  $\text{O}_2$ :

Մինչքեմբրի պարզունակ անապատային լանդշաֆտների զարգացման ողջ ժամանակամիջոցը Ա. Ի. Պերելմանը բաժանում է երկու մեծ փուլի՝ վերականգնման միջավայրի փուլ և օբսիդացման միջավայրի փուլ: Վերջինս հանդես է գալիս պլոտերոգոյում, երբ մթնոլորտում ազատ թթվածին է հայտնվում:

Պալեոզոյան դարաշրջանը օրգանական աշխարհի և կենսոլորտի բուռն զարգացման դարաշրջան եղավ: Քեմբրից սկսած մեծ զարգացում ապրեցին տրիլոբիտները, փափկամորթները, կորալները (բուստերը): Մովերում ապրում էին նաև գրապտոլիտներ, որոնք ոչնչացան օրդովիկում: Պալեոզոյի սկզբում՝ օրդովիկ-սիլուրում ցամաքի վրա առաջացան կենդանիներ (բազմոտանիներ), այնուհետև՝ առաջին անողնաշարները (մասնավորապես ձկները), որոնք դեռնում արդեն դուրս եկան ցամաք (ստեգոցեֆալներ): Պալեոզոյի վերջում առաջանում են խոտակեր ու գիշատիչ սողուններ: Բուսական ծածկույթը հատկապես բուռն զարգացում ապրեց դեռնից, երբ առաջացան ծառանման պտերները, կալամիտները, ձարխոտերը, ձիաձետները, գետնամուշկերը, սիզելյարները և շատ այլ բույսեր, որոնց բարձրութունը հասնում է 30 մ և ավելի, սրանց ածխացումից առաջացան քարածխի հզոր կուտակումներ: Պերմում առաջանում են առաջին փշատերևազգիները:

Մեզոզոյան դարաշրջանը տևեց 163 միլիոն տարի: Դեռևս պալեոզոյում (պերմ), կլիմայի շրթացման հետևանքով, կարբոնում առաջացած բուսատեսակները մասամբ ոչնչացան: Մեզոզոյի սկզբում տիրապետող էին փշատերևազգիները, պտերները, ձիաձետները: Յուրայի ժամանակաշրջանում կլիման դառնում է ավելի խոնավ, կավճում տեղի է ունենում բուսական ծածկույթի ամենամեծ փոփոխությունը՝ մերկասերմերին փոխարինում են ծածկասերմերը, որ սկսել էին ձևավորվել դեռևս յուրայում. մեզ են հասել սոսին, դափնիին, ֆիկուսը, մագնոլիան, լորագգիները: Դրանց զուգահեռ զարգացան նաև փշատերևները (հատկապես սեքվոյան, կարմրածառը, սոճին):

Կենդանական աշխարհում ևս մեծ փոփոխություններ տեղի ունեցան: Խոշոր երկկենցաղները՝ ստեգոցեֆալները ոչնչա-

ցան, արտակարգ զարգացում ապրեցին խոշոր սողունները (պտերոդակտիլ): Յուրայում առաջացավ առաջին ատամնավոր թռչունը՝ արխեոպտերիքսը, ծովերում՝ ձկների նոր տեսակներ: Մեզոզոյի հենց սկզբից առաջացան կաթնասուններ, սակայն մինչև դարաշրջանի վերջը նրանք մեծ զարգացում չունեցան, ուժեղ առաջադիմեցին միայն կայնոզոյում:

Պալեոգենում ուժեղ զարգացում են ապրում ծածկասերմերը: Մառային բուսականութունը ձեռք է բերում ժամանակակից տեսք: Հյուսիսային կիսագնդում ձևավորվել էին երկու հիմնական բուսաաշխարհագրական նահանգներ (պրովինցիաներ)․ մեկը զբաղեցնում էր Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասերը, Շպիցբերգենը, Սիբիրի հյուսիսային մասը, Հեռավոր Արևելքը: Այստեղ աճում էին կաղնի, բոխի, շագանակենի, կեչի, բարդի, հունական ընկուզենի և այլն:

Երկրորդ նահանգը ընդգրկում էր Արևմտյան Եվրոպան, Ուկրաինան, Կովկասը, Ղազախստանը, Ասիայի արևադարձային մասերը, Մեքսիկան․ այստեղ տարածված էին մշտադալար արևադարձային բույսեր՝ արմավենի, դափնի, եղեգն, պտերներ: Պալեոգենի վերջում կլիմայի ընդհանուր շորացմանը զուգընթաց տեղի է ունենում բուսական աշխարհի շորայնացում (քսերոֆիտացում), մեծ տարածում են ստանում տերևաթափ անտառները:

Պալեոգենի սկզբում մեզոզոյի բոլոր սողունները ոչնչացան․ դրանց փոխարեն զարգացան կաթնասունները: Հատկապես էոցենում առաջացան իսկական գիշատիչներ, սմբակավորներ, կրծողներ, միջատակերներ, կետանմաններ: Աֆրիկայում առաջանում են կնճիթավորներ ու կապիկներ: Ավստրալիայում, որ կավճի ժամանակաշրջանում արդեն անջատված էր, յուրահատուկ պարկավորներ առաջացան, էոցենում Հարավային Ամերիկան է լրիվ անջատվում, որտեղ օրգանական աշխարհի զարգացումն ընթանում է ինքնուրույն ուղիով: Պալեոգենի ծովային կենդանական աշխարհին շատ բնորոշ են ֆորամինիֆերներն ու նումուլիտները, կորալները (բուստերը):

Նեոգենում բուսական ծածկույթը ձեռք բերեց ժամանակակից տեսք: Հյուսիսային կիսագնդի կլիման տաք էր ու խոնավ: Որոշ հեղինակների կարծիքով հասարակածն անցնում

էր գրեթե Հայկական լեռնաշխարհի վրայով: Սիրիոյում այդ ժամանակ գերիշխում էին լայնատերև ծառատեսակները, Արևմտյան Եվրոպայում՝ մշտադալար բուսականութունը: Միոցենի վերջում ու պլիոցենի սկզբում նկատվում է կլիմայի խստացում. այսպես կոչված պոլտավայի բուսականությանը փոխարինում է տարգայան տերևաթափ բուսականութունը:

Կենդանական աշխարհում մեծ զարգացում են ապրում կաթնասունները, ընդ որում Հյուսիսային Ամերիկան արդեն լրիվ յառանձնացած էր և ինքնուրույն զարգացում ունեւր: Միոցենի վերջում Ամերիկայի ու Ասիայի միջև ցամաքային կապ է հաստատվում, Ասիայից Ամերիկա և հակառակ ուղղությամբ կենդանական աշխարհի խոշոր գաղթ է կատարվում: Հարավային Ամերիկան, Աֆրիկան ու Ավստրալիան զարգանում են ինքնուրույնաբար:

Անթրոպոգենը բավական մանրամասն է ուսումնասիրված: Կենդանիների բրածո մնացորդները, բույսերի ծաղկափոշին, բեղմնիկները (սպորները) բավական թարմ են պահպանված: Անթրոպոգենի կլիմայաշերտագրական բաժանման հիմք հիմնականում համարվում է Ա. Պենկի և է. Բրուքների 1909 թվականին կազմած սխեման, որտեղ առանձնացված են սառցապատումների 5 փուլեր (գլացիալներ), որոնք ընդմիջվել են տաքացումներով (ինտերգլացիալներ): Սառցապատումներից երկուսը (Դանուբի և Գյունցի) վերագրում են վերին պլիոցենին, իսկ երեքը (մինդել, ուիս, վյուրմ)՝ անթրոպոգենին: Սառցապատումները մեծ ազդեցություն են ունեցել օրգանական աշխարհի վրա: Կլիմայի ցրտեցման ժամանակամիջոցում լանդշաֆտային զոնաները մոտեցել են հասարակածին, իսկ միջսառցադաշտային ժամանակամիջոցում՝ հեռացել հասարակածից: Սառցապատումների հետևանքով միջին լայնութուններում մերձարևադարձային բուսականութունն իր տեղը զիջել է տերևաթափ անտառներին ու տափաստաններին: Արևմտյան ու Հարավային Եվրոպայի ծովերն են թափանցել փափկամորթների հյուսիսային տեսակներ: Նեոգենի կենդանական աշխարհի շատ ներկայացուցիչներ ոչնչացել են, զարգացել են մամոնտները, փղերը, ընգեղջյուրները, Ստեյնոնի ձին և այլն: ՍՍՀՄ-ում ընդունված է հետևյալ սխեման՝ Օկա-

յի, դնեպրյան, մոսկովյան, վալդայան սառցապատումների փուլերը:

Սառցապատումների հետևանքով համաշխարհային օվկիանոսի մակարդակը մինչև 100—120 մ դանդաղ (էվստատիկ) տատանումներ է ունեցել: Բերինգի նեղուցի տեղում Ալյասկան ու Չուկոտյան թերակղզին միացել են, Ասիայի բնակիչները գաղթել են դեպի Ամերիկա (մոտ 20—30 հազ. տարի առաջ):

Անթրոպոգենը ստորաբաժանվում է պլեյստոցենի (ստորին, միջին, վերին) և հոլոցենի: Պլեյստոցենում Ալպ-Հիմալայան գոտում ու Խաղաղ օվկիանոսի եզրային լեռներում տեկտոնական շարժումները շարունակվել են, որոնք ուղեկցվել են հրաբխականությանը. հրաբուխներից շատերը գործում են առ այսօր:

Անթրոպոգենում առաջացել է ժամանակակից մարդը, և նրա ծագման պրոցեսն անվանում են անթրոպոգենեզ-մարդածնություն: Վերջինս ընդգրկում է երեք շրջան: Առաջինը հղել է 2—3 միլիոն տարի առաջ, երբ գոյություն ունեին մարդու նախահայրերը՝ բարձրակարգ պրիմատները: Սրանք որպես գործիք օգտագործում էին քարը, փայտը, կենդանու ոսկորները: Երկրորդ շրջանում մարդիկ պատրաստում էին գործիքներ, օգտագործում էին կրակը, կառուցում էին պարզունակ բնակարաններ (շելյան և աշելյան մշակույթի ժամանակաշրջաններ): Երրորդ շրջանում մարդիկ (նեանդերտալս) ունեին ժամանակակից մարդու ֆիզիկական կառուցվածքը: 40—50 հազար տարի առաջ զարգանում է կոլեկտիվ համախումբավածությունը և լեզվով հաղորդակցվելը:

Հայկական լեռնաշխարհում անթրոպոգենում տեղի են ունեցել տեկտոնական բարձրացումներ ու իջեցումներ, հրաբխային արտավիժումներ, որոնց հետևանքով առաջացել են պատվարային լճեր: Լեռնային բարձր մասերում տեղի են ունեցել սառցապատումներ (միջին չորրորդական և վերին չորրորդական ժամանակաշրջաններում): Երկու սառցապատումները անժխտելի են, իսկ ավելի վաղ սառցապատումների հետքերը որոշակի չեն:

Հայկական լեռնաշխարհը մարդու առաջացման օրրաննե-

րից մեկն է եղել. այստեղ պահպանվել են մարդածնության բոլոր շրջանների նյութական կուլտուրայի հետքերը:

Ինչպես տեսանք, Երկրի աշխարհագրական թաղանթը սկըսել է ձևավորվել դեռևս արխեյան դարաշրջանի սկզբում և ա.նցած 3,5—4 միլիարդ տարվա ընթացքում շատ մեծ փոփոխություններ է կրել: Զարգացումը, ինչպես նշվել է, տեղի է ունեցել թե էվոլուցիոն և թե հեղափոխիչ ճանապարհով:

Աշխարհագրական թաղանթի զարգացման ընթացքում հեղափոխիչ գալարապտույտներն ավելի կարճատև են, քան էվոլուցիոնը: Օրինակ՝ ծալքավորումները կամ հրաբխային պրորոցեսները կատարվել են հեղափոխիչ բռնկումների ձևով: Օրգանական աշխարհում եղել են այնպիսի բռնկումներ, երբ որոշ օրգանիզմներ մասսայաբար ոչնչացել են, և հաջորդ ժամանակաշրջանում նրանցից հետք անգամ չի մնացել: Հեղափոխիչ մեծ իրադարձություն էր, օրինակ, ծածկասերմ բույսերի առաջացումը կավճի ժամանակաշրջանում:

Աշխարհագրական թաղանթի զարգացումը, մասնավորապես օրգանական աշխարհինը, կապված է իմպուլսների հետ: Աշխարհագրական գրականության մեջ երկար ժամանակ վիճաբանություններ են եղել այդ իմպուլսների վերաբերյալ: Մի շարք հեղինակներ գտնում են, որ դրանք արտաքին են, իսկ մյուսները կապում են ներքին ուժերի հետ: Ս. Վ. Կալեսնիկը (1955) վերլուծելով եղած տեսակետները, տալիս է այդ զարգացման հետևյալ երկու կողմերը՝

1. Զարգացման հիմքը առարկաների մեջ է. արտաքին ներգործությունը սոսկ զարգացման պայման է:

2. Ներքին և արտաքին ազդեցությունների փոխհարաբերությունը արտացոլում է ոչ թե երևույթների մեկուսացումը, այլ նրանց համընդհանուր կապը: Միչուրիչյան կենսաբանության կողմից հաստատված օրգանիզմների և միջավայրի միասնությունը այդ կապի ամենացայտուն օրինակներից մեկըն է:

Հանդաֆտային կամ աշխարհագրական թաղանթը զարգանում է իր ներքին հակադրությունների ուժով: Արտածին ազդեցությունները (օրինակ՝ արեգակնային ճառագայթումը) այդ զարգացման սոսկ պայմաններն են, որոնք, անշուշտ, շատ կարևոր են: Սակայն արտաքին ներգործությունը ազդում է

միայն ներքին գործոնների միջոցով: Զերմության ազդեցությամբ ձվից ճուտ է դուրս գալիս, բայց այդ նույն շերմությունը փայտից ճուտ ստեղծել չի կարող, ուստի ներքին և արտաքին ազդեցությունները պետք է դիտել միայն միասնության մեջ:

Լանդշաֆտային կամ աշխարհագրական թաղանթի այսօրվա վիճակը ոչ միայն ժամանակակից բաղադրիչների փոխներգործության հետևանք է, այլև Երկրի ամբողջ զարգացման արգասիքը: Ելնելով սրանից՝ լանդշաֆտների ժամանակակից պատկերը ըմբռնելու համար անհրաժեշտ է իմանալ նաև նրանց անցյալը:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Աշխարհագրական թաղանթի նյութական կազմի, ոլորտների փոխհարաբերության, հորինվածքի տեսական հարցերով զբաղվեց ակադ. Ա. Ա. Գրիգորևը:

Աշխարհագրական թաղանթը (գեոսֆերա) ամբողջական, ինքնազարգացող նյութական համակարգ է, որը գտնվում է հարաբերական հավասարակշռության վիճակում: Աշխարհագրական թաղանթում կառուցվածքային միավորների առաջացման պրոցեսին մասնակցում են երկու՝ ներծին և արտածին ուժեր: Ներծին ուժերը առաջանում են ռադիոակտիվ տարրերի տրոհման հետևանքով, որի ընթացքում առաջանում է ջերմային էներգիա: Քարոլորտի խորքում, հատկապես թույլ ոլորտում, օրգանական նյութի այրման ժամանակ անջատված էներգիան (կուտակված արեգակնային էներգիան), գումարվելով ռադիոակտիվ տարրերից անջատված էներգիային, առաջացնում է տեկտոնական շարժումներ ու հրաբխականություն:

Ներծին ուժերը ձգտում են երկրի մակերևույթին առաջացնել անհարթություններ, լեռնաշղթաներ, բարձրավանդակներ: Այդ ուժերի միջոցով տեղի են ունենում երկրակեղևի բարձրացումներ, իջեցումներ:

Արտածին ուժերը Արեգակի էներգիայի ածանցյալներն են: Այսպես, ջերմաստիճանային տատանումները հողմահարման պատճառ են դառնում. այդ նույն էներգիան է մթնոլորտային տեղումների, օդային զանգվածների շարժման, սառցադաշտերի զարգացման, գետերի էրոզիոն աշխատանքի շարժիչ ուժը:

Ներծին և արտածին ուժերի փոխներգործության մեջ տեսնում ենք դիալեկտիկայի հիմնական օրենքի արտահայտու-

թյունը՝ հակադրությունների միասնությունը: Որքան ուժգին է տեղաձուլում լեռնային երկիրը, այնքան շատ է թեթևանում, ավելի շատ է դուրս մղվում մանթիայի կողմից: Աշխարհագրական թաղանթի նշված էներգետիկ աղբյուրները պայմանավորում են այդ կառուցվածքների ձևավորման ու զարգացման օրինաչափությունները:

Երկրի ներծին ուժերի արգասիք են մայրցամաքները, օվկիանոսի հատակը, երկրատեկտուրաները (գեոտեկտուրաները), ձևահորինվածքները (մորֆոստրուկտուրաները): Երկրի ներքին ուժերն ու նրանց արգասիք հորինվածքները զոնայական տարածում չունեն, սրանք անզոնայական են:

Երկրի արտածին ուժերը զոնայական դասավորություն ունեն, որի պատճառը, ինչպես նշվել է, Երկրագնդի գնդաձևությունն է. սրանից էլ ծագում է հորիզոնական զոնայականության երևույթը: Այսպիսով, Երկրի ներծին և արտածին ուժերի ազդեցությամբ աշխարհագրական թաղանթում ստեղծվում է կառույցների մի բարդ հորինվածք, որտեղ զոնայական և անզոնայական տարածքային միավորների սահմանները հատվում են՝ առաջացնելով աշխարհագրական տեղատարածքներ (ռեգիոններ):

Աշխարհագրական թաղանթը զարգացել է ներքին և արտաքին՝ թե՛ նյութական և թե՛ էներգետիկ պաշարների (ռեսուրսների) հաշվին, և պատմական զարգացման ընթացքում նրա զանգվածը մեծացել է, իսկ կազմը՝ բարդացել: Նրա զարգացման որոշակի փուլում տեղի է ունեցել ամենանշանակալի իրադարձությունը՝ Երկրի վրա կյանքի առաջացումը, որից փոփոխություն կրեցին Երկրի օդային, ջրային ոլորտները, քարոլորտը: Աշխարհագրական թաղանթում ամենակարևոր իրադարձությունների վերաբերյալ պարզ պատկերացում տալիս է նկ. 25-ը:

Աշխարհագրական թաղանթը բացի ոլորտներից ունի նաև հորինվածքային տարրեր՝ մայրցամաքների բաժիններ (սեկտորներ), աշխարհագրական գոտիներ ու զոնաներ, ավելի փոքր միավորներ՝ ձևահորինվածքներ, ձևաքանդակներ, լանդ-

շաֆտներ և այլն: Սրանցից կարևորների մասին խոսենք մի փոքր հանգամանորեն: Օվկիանոսների ու մայրցամաքների մասին երկրորդ գլխում արդեն խոսվել է, կրկնությունից խուսափելու համար անցնենք ռելիեֆի ամենախոշոր տարրերին:

## ՆՐԿՐԻ ՄԵԳԱՌԵԼԻԵՖԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրի աշխարհագրական թաղանթում, ինչպես արդեն նշվել է երկրորդ գլխում, ամենակարևոր հորինվածքային տարրերից մեկը ռելիեֆն է: Այն առաջացել է Երկրի ներծին և արտածին գործոնների փոխադարձ ներգործությամբ: Երկրի քարոլորտի մակերևույթը ունի անհարթություններ՝ բարձրացված մասեր մինչև 7—8 կմ բարձրությամբ (Ջոմոլունգմա—8848 մ) և ցածրադիր մասեր, որոնք ծովի մակերևույթից ցածր են 9—11 կմ (Մարիանյան անդունդ՝ 11022 մ) ուրեմն՝ քարոլորտում երկրի շառավիղը ամենուրեք նույն երկարությունը չունի: Բացի այն, որ Երկրագունդը եռառանցք պտտվող էլիպսոիդ է, ռելիեֆի անհարթությունների պատճառով շառավղի երկարության տարբերությունները նույնպես մեծ են (մինչև 20 կմ):

Ցամաքների ու ծովերի բաշխման օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս երկու կառուցվածքային տարրերը իրար հակառակ են դասավորված: Եթե Երկրագնդի մեջ տարբեր ուղղություններով տանենք անհամար տրամագծեր, սպա դրանց ծայրերը հակոտնյա կլինեն, այսինքն՝ ծայրերից մեկը 95% հավանականությամբ դուրս կգա ցամաքի վրա, իսկ մյուս ծայրը՝ ծովի, և միայն 5%-ով այդ ծայրերը միատիպ կլինեն: Այնուհետև, ցամաքները մեծամասամբ հյուսիսային կիսագնդում են և արևելյան: Ցամաքները դեպի հարավ վերջանում են սեպաձև: Հարավային մայրցամաքներում գոյություն ունի ուրվագծերի զուգահեռականություն: Լեռնաշթանները թե ցամաքում, թե օվկիանոսում մեծամասամբ ունեն զուգահեռականի կամ միջօրեականի ուղղություն, վերջապես երկրատեկտոնիկների, դաշտավայրերի ու լեռների ծագումն ու տեղաբաշխումը Երկրագնդի վրա որոշակի օրինաչափություն ունի (Ա. Մ. Ռյաբչիկով, 1972):

Օրկրագնդի հորինվածքային տարրերից լեռնային երկրները զբաղեցնում են 43%, իսկ դաշտավայրա-պլատֆորմային երկրները՝ 57%: Լեռնային երկրները Ծվրոպայում կազմում են 30%, Ասիայում՝ 57%, Աֆրիկայում՝ 16, Հյուսիսային Ամերիկայում՝ 44, Հարավային Ամերիկայում՝ 23, Անտարկտիդայում՝ 26% (Գ. Մ. Բելյավսկի, 1967):

Վերը նշված հորինվածքային առանձնահատկություններն ունեն իրենց բացատրությունը, կապված են որոշակի երկրաբանական պայմանների հետ:

Ինչպես արդեն նշվել է, Վեգեների դրիֆտային տեսությունը (կամ մորիլիզմի տեսություն) այժմ համընդհանուր ճանաչում է ստացել և ապացուցվում է դիտարկումներով: Այդ դրիֆտի (տեղաշարժի) շնորհիվ ցամաքներն անջատվել են միմյանցից, ստեղծելով խոշոր կառուցվածքային միավորներ: «Գեոմոր Զելենշեր» ամերիկյան հետազոտական նավից վերջերս կատարած դիտումները ցույց են տալիս, որ որքան Հարավային Ամերիկայից հեռանում ենք դեպի Ատլանտյան օվկիանոսի կենտրոնական ստորջրյա լեռնաշղթան, ապարների հասակը փոքրանում է՝ 100—140 մլն տարվանից մինչև 1 մլն տարի: Հարավային Ամերիկյան Աֆրիկայից հեռանում է տարեկան 4 սմ, իսկ Հյուսիսային Ամերիկյան Ծվրոպայից՝ 6 սմ: Խոշոր հորինվածքային միավորների տրոհումն սկսվել է 200 մլն տարի առաջ: Ծվրասիան ըողում է արևելք, Ավստրալիան՝ հյուսիս-արևելք, Անտարկտիդան՝ հարավ: Միայն Աֆրիկան է հարաբերականորեն անշարժ: Հորինվածքային այս պատկերի բացատրությունը առ այսօր վիճելի է: Կան նույնիսկ հակադիր կարծիքներ: Ա. Մ. Ռյաբչիկովը (1972) առավելություն է տալիս Գ. Ն. Կատերֆելդի (1962) ռոտացիոն գիտաեզրակացությունը: Համառոտակի անդրադառնանք նրա դրույթներին:

Գիտաենթադրությունը ելնում է հետևյալ սկզբնական փաստացի նյութից: Բնօրեն (նորմալ) էլիպսոիդը երեք առանցք ունի՝ երկու իրար հավասար առանցքներ հասարակածային հարթության վրա և մեկ կարճ՝ բևեռային առանցք: Մեր մոլորակն ունի սրտաձև (կարդոիդալ) էլիպսոիդի ձևը: Այս էլիպսոիդում հասարակածային առանցքները իրար հավասար չեն: Հասարակածային մեծ առանցքը անցնում է Աֆ-

րիկայից (արևելյան երկայնության 15°) մինչև Խաղաղ օվկիանոս (արևմտյան երկայնության 165°): Փոքր առանցքը նրան ուղղահայաց է, անցնում է արևելյան երկայնության 105°-ից դեպի արևմտյան երկայնության 75°-ը. նրանց տարբերությունը կազմում է 425 մ (այլ տվյալներով՝ 213 մ): Պարզվում է, որ հյուսիսային բևեռային շառավիղը (ցամաքի մակերևույթից հաշված, այսինքն՝ Սառուցյալ օվկիանոսի հատակը) 100 մ-ով ավելի երկար է, քան հարավային բևեռային շառավիղը: Ստացվում է, որ Երկիրը մի փոքր տանձաձև է՝ հյուսիսում դուրս է փքված, իսկ հարավում՝ ներս ընկած և, որպեսզի հավասարակշռություն ստացվի, ստեղծվել է Անտարկտիդան: Հասարակածային միջին շառավիղը 21382 մետրով երկար է բևեռային միջին շառավիղից:

Կատերֆելդը վերը նշված հանգամանքները բացատրում է Լուսնի ազդեցությամբ: Ըստ այս հեղինակի, Երկիր—Լուսին կրկնակի երկնային մարմնի զարգացման առաջին փուլում Երկրի օրական պտույտի պարբերությունն ու Լուսնի՝ Երկրի շուրջը պտտվելու պարբերությունը հավասար են եղել, և Լուսինը գտնվելիս է եղել Խաղաղ օվկիանոսի դիմաց: Խաղաղ օվկիանոսում և նրան հակառակ Աֆրիկայում առաջացել են մակընթացային ալիքներ: Հետագայում Երկրի զանգվածի խրտացման և Երկրի շառավղի փոքրացման հետևանքով պտտման արագությունը մեծացել է, օրը՝ կարճացել: Մյուս կողմից Խաղաղօվկիանոսյան մակընթացային սապատի ազդեցությամբ մեծացել է Լուսնի՝ Երկրի շուրջը պտտվելու արագությունը, և Լուսինն աստիճանաբար հեռացել է Երկրից:

Երկրի՝ իր առանցքի շուրջը պտտման պարբերության և Լուսնի՝ նրա շուրջը պտտման պարբերության խախտման հետևանքով միակողմանի մակընթացային ձևախախտումը (դեֆորմացիան) այլևս Լուսնի կողմից չէր կարող պահպանվել, և Խաղաղօվկիանոսյան ուռուցքը (սապատը) սկսել է իջնել ու ծածկվել ջրով: Աֆրիկյան ուռուցքը ավելի քիչ է իջել: Այսպիսով Երկրի հորինվածքային տարրերից երկուսը՝ Խաղաղօվկիանոսյան և Աֆրիկյան ուռուցքները (սապատները) առաջացել են դեռևս Երկրի ու նրա կեղևի զարգացման արշալույսին: Հետագայում, Երկրի պտտման հետևանքով հասարակածային տարբեր շառավիղների համահարթման պրոցեսը

(200 մլն տարվա տիեզերական բուրապտույտ) կեղևի զանգվածների լարվածութունների տեղիք է տվել, առաջացել են նոր ակտիվ գոտիներ՝ էպեյրո-տալասոգեն (դարավոր տատանումների-ծովածին) և համադրական կրիտակական կամ լեռնագրական (ամենամեծ կողային լարվածութուն)։

Հանրագումարի բերելով իր տեսութունը՝ հեղինակը Երկրի մակերևույթի վրա առանձնացնում է լայնական ակտիվ գոտիներ, միջօրեական ակտիվ գոտիներ, ակտիվ կենտրոններ ու նրանց հակոտնյան (անտիպոդներ)։ Օրինակ, Սառուցյալ օվկիանոսի հակոտնյան Անտարկտիդան է։

Երկրի սրտակերպ (կարդոիդալ) էլիպսոիդի անհամաչափութունը (ասիմետրիան) ցույց է տալիս, թե յուրաքանչյուր ցամաքին ինչու է համապատասխանում հակառակ կողմի հակոտնյան՝ օվկիանոսը։ Այստեղ գործում է պտտվող մոլորակի ինքնահավասարակշռման հզոր համակարգը, երբ առաջանում է ավելի կայուն նորմալ էլիպսոիդի ձև ձեռք բերելու ձգտում։

Կատերֆելդի ուտացիոն գիտաենթադրութունը անշուշտ ունի թույլ կողմեր, դեռևս կան շատ չպարզաբանված հարցեր։ Ապացուցված չէ, որ Երկրի պտույտը գնալով արագանում է, կան ավելի շատ ապացույցներ արագության պակասեցման օգտին։ Նրա հիպոթեզը հակասում է մոբիլիզմի վարկածին, որը մեր օրերում շատ հետևորդներ ունի։

Երկրի կեղևի զարգացման ամբողջ ընթացքում, ըստ Վ. Ե. Խաինի (1964), տեղի է ունեցել բարախում, տրոփում (պոլսացիա)։ Երկրակեղևը մերթ ընդարձակվել է, մերթ՝ սեղմվել, ընդ որում տիրապետողը եղել է սեղմման պրոցեսը։ Հեղինակը Երկրի տեկտոնական զարգացման պատմութունը բաժանում է 5 խոշոր ցիկլերի-բուրապտույտների։

1. Կատարխեյ (3500—2700 մլն տարի առաջ). զարգացել են միայն օվկիանոսային (բազալտային) պլատֆորմները (տալասոկրատոնները)։ Օվկիանոսը խոր չի եղել, սկսել են ձևավորվել լայն էվգեոսինկլինալները, որտեղ փուլի վերջում սկսվել է մագմայի գրանիտացում և փոխակերպում— մետամորֆիզմ, առաջացել է ֆոտոսինթեզի երևույթը։

2. Արխեյի սկիզբը (2700—1900 մլն տարի առաջ), ձևա-

վորվել են առաջին ցամաքային պլատֆորմները. տեղի է ունեցել մագմայի գրանիտացում:

3. Պրոտերոզոյ (1900—1350 մլն տարի առաջ). նեո գեոսինկլինալների միջոցով կատարվել է ցամաքային պլատֆորմների՝ պրակրատոնների տրոհումը:

4. Բայկալյան (ուշ պրոտերոզոյան, 1350—600 մլն տարի առաջ). բնորոշ է վահանների ընդարձակումն ու միացումը (էվ և միոգեոսինկլինալների հաշվին) ծալքավորությունների երեք փուլի ընթացքում ստեղծվում են ժամանակակից մայրցամաքների պլատֆորմային հիմքեր և շարժուն գոտիներ (Խաղաղօվկիանոսյան օղակ, Միջերկրական գոտի):

5. Պալեոզոյան դարաշրջանից սկսվում է հինգերորդ փուլը, խոշոր բոլորապտույտ (մեզացիկլ) է և քաժանվում է կալեդոնյան, հերցինյան և ալպյան բոլորապտույտների: Այս մեզացիկլի ընթացքում է, որ ցամաքները ձեռք բերեցին ժամանակակից պատկերը:

Երկրի տրոփային զարգացումը արտահայտվում է նրա բոլորապտումամբ: Լեռնակազմական (օրոգեն) բոլորապտույտները (կալեդոնյան, հերցինյան, ալպյան) և Երկրի բևեռային սեղմման ռիթմերը շատ լավ համընկնում են «տիեզերական տարվա» հետ, այսինքն՝ Արեգակնային համակարգի Գալակտիկայի շուրջը պտտվելու ժամանակամիջոցի հետ (190—200 մլն տարի): Երբ Երկիրը հեռանում է Գալակտիկայի կենտրոնից, փոքրանում է մոլորակի սեղմվածությունը, իսկ մոտենալու դեպքում՝ մեծանում է:

Սեկտորայնության հարցը հանգամանորեն քննարկված է Ա. Մ. Ռյաբչիկովի կողմից (1972): Ստորև սեկտորայնությունը մեկնաբանվում է ըստ այդ հեղինակի:

Աշխարհագրական լայնակի գոտիներն առանձնացվել են ջերմության ռեժիմի, օդային զանգվածների և նրանց շրջապտույտի հիման վրա և ներքին կառուցվածքով համասեռ չեն: Այս հարցն առաջին անգամ մեկնաբանվել է Ա. Ա. Գրիգորևի կողմից (1966): Արդեն նշել ենք, որ ցամաքների մեծ մասում առանձնացվում են երեք սեկտոր՝ երկու մերձծովյան և մեկ՝ ցամաքային:

Սեկտորայնությունը ոչ թե գոտիականության հետ համահավասար աշխարհագրական հորինվածք է, այլ երկրոր-

դական: Բևեռային և մերձբևեռային շրջաններում ջերմության պակասը առաջացնում է գերխոնավություն, ուստի սեկտորայինությունը թույլ է արտահայտված: Հյուսիսամերիկյան և Ծվրասիական մերձարկտիկայում առանձնացվում են երկու մերձօվկիանոսյան և մեկական ցամաքային սեկտոր: Բարեխառն գոտու համար բնորոշ են օդի արևմտյան տեղաշարժերը, որոնք, ինչպես և ցիկլոնային գործունեությունը, դեպի արևելք թուլանում են:

Ցամաքի արևելյան ափին, ծովի ու ցամաքի ջերմային պայմանների խիստ տարբերությունների պատճառով առաջանում է անդրարևադարձային մուսսոնային շրջապտույտ, ցամաքից փչում է ցուրտ քամի: Ամռանը ճնշման գրադիենտը հակառակ ուղղություն ունի, քամիները փչում են ծովից ցամաք: Բարեխառն գոտում ևս երեք սեկտոր է նկատվում՝ երկու օվկիանոսային, մեկ ցամաքային: Արևելյան մերձօվկիանոսյան սեկտորում զոնաները միջօրեականի ուղղություն ունեն, ցամաքայինում՝ լայնակի: Այդ երևույթը ցույց է տալիս, որ ծովափից հեռանալիս ջերմության ու խոնավության գրադիենտները ավելի արագ են փոխվում, քան միջօրեականի ուղղությամբ, ուստի զոնաները ափին զուգահեռ են դասավորվում (ԱՄՆ, Հեռավոր Արևելք): Այնտեղ, որտեղ և՛ զուգահեռականի, և՛ միջօրեականի ուղղությամբ գրադիենտները նույնն են, զոնաները կամայական դասավորություն ունեն. դրա պատճառն այն է, որ որպես հիմնական գործոն հանդես են գալիս այլ գործոններ, ինչպես օրինակ, ձևահորինվածքային առանձնահատկությունները (օրինակ՝ Արևմտյան Ծվրոպան): Ցամաքային սեկտորում, որտեղ զոնայականության հիմքում ընկած է ջերմության գրադիենտը (խոնավության քիչ թե շատ միօրինակության պայմաններում), զոնաներն ունեն լայնակի դասավորություն (Ռուսական հարթություն, Արևմտյան Սիբիր, Հյուսիսային Աֆրիկա):

Մերձարևադարձային գոտիներում տեղի է ունենում օդային զանգվածների սեզոնային փոփոխություն: Փոփոխությունները տարբեր սեկտորներում տարբեր կերպ են արտահայտված: Չմռանը ամբողջ գոտում տիրապետում կամ գերակշռում է բարեխառն լայնությունների օդը, տեղի է ունենում արևմտյան տեղաշարժ, ցիկլոնային գործունեություն,

որը դեպի արևելք թուլանում է: Աշնանը և գարնանը ցիկլոնածնումը շատ ակտիվանում է նաև արևելքում (թայֆուններ): Ամռանը ամենուրեք տիրապետում է արևադարձային օդը: Յամաքների արևելյան ափերում, բարեխառն գոտում, զարգանում է անդրարևադարձային մուսսոնը, որի հետևանքով ամռանը տեղումներն առատ են. այս գոտու մնացած մասերում տիրապետում է անտիցիկլոնային վիճակ: Այստեղ ևս պարզորոշ արտահայտված են երեք սեկտորներ՝ արևմտյան (միջերկրածովային), ցամաքային (շուրջ տարի շոր) և արևելյան (մուսսոնային):

Արևադարձային գոտում ճնշման գրադիենտը ուղղված է դեպի հասարակած, տիրապետում է բարձր ճնշումը (պասսատային գոտի): Անտիցիկլոնների արևմտյան ծայրամասերում (խոսքը ցամաքի մասին է) անապատները հասնում են ծովափ. շնայած ծովը մոտիկ է, հարաբերական խոնավութունը մեծ է, բայց օդի վարընթաց հոսանքի պատճառով տեղումներ չեն գալիս: Արևելյան ծայրամասերում ծագում է մուսսոնային շրջապտույտը, ուստի արևադարձային գոտում առանձնանում է երկու սեկտոր՝ ցամաքային (անապատային) և արևելյան մուսսոնային՝ զոնաների միջօրեական դասավորությամբ: Մովափին դասավորված են անտառներ, իսկ ցամաքի խորքում՝ նոսրանտառ, թփուտներ:

Մերձհասարակածային զույգ գոտիների համար շատ բնորոշ է օդային զանգվածների սեզոնայնությունը՝ ձմռանը՝ արևադարձային, ամռանը՝ հասարակածային, սակայն ցամաքի արևելյան ափերում պասսատները անցնելով օվկիանոսի վրայով խոնավություն են բերում: Մերձհասարակածային գոտում կա երկու սեկտոր՝ արևելյան (շուրջ տարի խոնավ) և արևմտյան (ամառը՝ խոնավ, ձմեռը՝ չոր): Հասարակածային գոտում նշվում է արևելյան ափի սեզոնային խոնավ սեկտոր և մշտական խոնավ արևմտյան սեկտոր:

## ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՈՆԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի մակերևույթի երկչափ տարածման հիմքում ընկած է հորիզոնական զոնայականությունը, որի գիտական հիմնավորման պատիվը պատկանում է Վ. Վ. Դոկուլակին: Դոկու-

չափի կամ նույնիսկ Լ. Ս. Բերգի ժամանակներում (20-րդ դարի առաջին քառորդ) աշխարհագրական զոնայականութունը միայն մեկ նշանակություն ունի։ Երկրագունդը բաժանվում էր զոնաների։ 20-րդ դարի երկրորդ կեսին զոնայականության մեջ հանդես եկան արդեն երկու հասկացություններ՝ աշխարհագրական գոտիներ և աշխարհագրական զոնաներ, որոնք միմյանցից տարբեր են, ընդ որում, գոտին քիչ մեջ կարող է ընդգրկել մի քանի զոնա։

Աշխարհագրական թաղանթի հորիզոնական մասնատման մեջ ամենախոշոր միավորը գոտին է։ Երկրագնդի աշխարհագրական թաղանթը բաժանված է 13 աշխարհագրական գոտիների (աղյուսակ 8)։

Աշխարհագրական գոտիներն ունեն զուգահեռականների ուղղություն և առաջին հերթին պայմանավորված են Արեգակի ճառագայթային էներգիայի քանակով։ Այնուհետև դրանք պայմանավորված են մթնոլորտի ընդհանուր շրջապտույտով։ Ցուրաքանչյուր գոտի ունի իրեն հատուկ օդային զանգվածը։

Աղյուսակ 8

Երկրագնդի աշխարհագրական գոտիները (ըստ Կ. Մարկովի, Օ. Գորոդեևի, Յ. Սիմոնովի, Բ. Սայեստովայի, 1978)

Գոտու անվանումը	Տարածքը մլն կմ <sup>2</sup>	%
Արկտիկական	14,45	3
Մերձարկտիկական	17,62	3
Քարեխառն	53,22	10
Մերձարևադարձային	39,72	8
Արևադարձային	80,77	16
Մերձհասարակածային	38,65	4
Հասարակածային	22,07	4
Մերձհասարակածային	30,11	6
Արևադարձային	55,10	19
Մերձարևադարձային	33,78	7
Քարեխառն	34,47	7
Մերձանտարկտիկական	23,93	5
Անտարկտիկական	26,19	5
	510,08	100

Աղյուսակում բերված գոտիներից երեք զույգը ունեն «մերձ» մասնիկը՝ մերձարկտիկական, մերձարևադարձային, մերձհասարակածային։ Սրանք շնչեն իրենց ինքնուրույն օ-

դայի՛ն զանգվածները և տարվա տարբեր եղանակներին ընդունում են իրենցից հյուսիս կամ հարավ տարածված հարեւան գոտուն բնորոշ օդային զանգվածները: Ամռանը ընդունում են հասարակածին մոտ գոտու օդային զանգվածները, ձմռանը՝ բևեռամերձ գոտունը: Այսպիսի տեղաշարժերի արգասիքն այն է, որ «մերձ» մասնիկով գոտում կլիմայական պայմանները ունեն ցայտուն արտահայտված սեզոնայնություն՝ նայած որ օդային զանգվածներն են տիրապետում:

Գոտիների կազմում ամենամեծ բաղադրիչները (հորինվածքային միավորները) զոնաներն են: Ա. Ա. Գրիգորևը (1964) գրում է, որ աշխարհագրական գոտիների առանձնացման հիմքում ընկած են Երկրի մակերևույթի ջերմային պայմանների տարբերությունները, իսկ զոնաների առանձնացման հիմքում՝ ճառագայթային հաշվեկշռի տարբերությունները և երկրի մակերևույթի խոնավությունը (տեղումների քանակը), այսինքն՝ ջրա-ջերմային ռեժիմը: Ընդ որում օվկիանոսներում խոնավությունը շոնի այն նշանակությունը, ինչ՝ ցամաքում: Այդ պատճառով էլ օվկիանոսների գոտիներում գրեթե չկան ջրա-ջերմային տարբերություններ, որոնք զոնաներ առաջացնեին, ուստի օվկիանոսներում զոնաներ չկան:

Զոնան բնական գոտու մի մասն է, որն առանձնացվում է ջրա-ջերմային ռեժիմի համեմատաբար միատարր հատկանիշներով: Զոնաների բնութագրության մեջ օգտագործում են խոնավացման գործակիցը, շրտության ճառագայթային ինդեքսը և այլ գործակիցներ:

Եթե գոտիներն ունեն լայնակի ուղղություն, ապա զոնաները, շրտության գործակցի մեծությունից կախված, կարող են ունենալ այլ ուղղություններ ևս, երբեմն նաև միջօրեականի ուղղություն, ինչպես այդ նկատվում է Հյուսիսային Ամերիկայում (պրերիաների զոնա): Ելնելով սրանից գոտիները անվանում են «լայնակի գոտիներ», իսկ զոնաները՝ «հորիզոնական զոնաներ»:

Զոնաների կլիմայական պայմանները ամբողջ երկարությամբ միատարր չեն, ցամաքի ափամերձ մասերն ավելի մեղմ են, մինչդեռ կենտրոնական մասերում շոր է: Այստեղից էլ ծագում է սեկտորայնության գաղափարը, որի մասին արդեն նշել ենք:

Այժմ քննարկենք սեզոնայինութունը եռաշափ համակարգում (ինչպես մթնոլորտում, այնպես էլ ջրոլորտում ու քաղցրոլորտում): Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող երևույթներն ու պրոցեսները փոփոխվում են ոչ միայն հորիզոնական, այլ նաև ուղղաձիգ ուղղություններ, և այդ փոփոխություններն ավելի լավ են ուսումնասիրված ջրոլորտում ու մթնոլորտում:

Մարդու գործունեության համար կարևոր երևույթ է բարձրադիր գոտիականությունը լեռներում: Ի տարբերություն հորիզոնական զոնայականության՝ լեռնային երկրների զոնայականությունը, ըստ բարձրության, հարմար է անվանել «բարձրադիր գոտիականություն», սակայն այս գոտին չպետք է շրջափոխել լայնակի գոտիների հետ:

Բարձրադիր գոտիականությունը շատ աղբյուրներում անվանվում է նաև «ուղղաձիգ գոտիականություն», կամ «ուղղաձիգ զոնայականություն»:

Բարձրադիր գոտիականությունը լեռներում արտահայտված գոտիականությունն է, իսկ ուղղաձիգ գոտիականությունը վերաբերում է թե ցամաքին և թե ծովին, այսինքն ընդգրկում է նաև բարձրադիր գոտիականությունը: Ինչ վերաբերում է ուղղաձիգ զոնայականությանը, ապա այն պետք է գործածությունից հանել, որովհետև ուղղաձիգ գոտիականությունն արտահայտում է երևույթի էությունը:

Որքան լեռնային երկիրը մոտ է հասարակածին, այնքան բարձրադիր գոտիների սպեկտրը ընդարձակ կլինի՝ գոտիները շատ կլինեն:

Այսպիսով, աշխարհագրական թաղանթի եռաշափ վերլուծությունը ցույց է տալիս երեք անհամասեռություն՝ հորիզոնական զոնայականություն, սեկտորայինություն և բարձրադիր գոտիականություն:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ  
(ՄԻՄԵՏՐԻԱՆ), ՄՈՏԱՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ (ԴԻՄԻՄԵՏՐԻԱՆ),  
ՀԱԿԱՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ (ԱՆՏԻՄԻՄԵՏՐԻԱՆ),  
ԱՆՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ (ԱՍԻՄԵՏՐԻԱՆ)

Աշխարհագրական թաղանթում նկատվում են երևույթներ, որոնք համապատասխանում են կամ զուգաշափոք են կրկնվում են եր-

կու կիսագնդերում, երևույթներ էլ կան, որոնք հակադիր են: Համաշափությունը, նույնն է՝ զուգաշափությունը (սիմետրիան), այն երևույթն է, երբ առարկան կամ երևույթը որևէ առանցքի կամ հարթության երկու կողմերում համաշափորեն կրկնվում է: Գունդը համաշափ է, եթե այն կիսենք և մոտեցնենք հայելուն, ապա գնդի մեկ կեսի հայելանման պատկերը գունդը կամբողջացնի: Գնդի համաշափությունը կատարյալ է, որովհետև ցանկացած ուղղությամբ կիսելու դեպքում ստացված կիսագնդերը համաշափ կլինեն: Կան շատ առարկաներ, որոնք ունեն համաշափություն որոշակի հարթությամբ կըտրելու դեպքում: Օրինակ, կոնը կարելի է համաշափորեն կիսել միայն գագաթից դեպի հիմքը իջնող ուղղահայաց հարթություններով:

Պարզվում է, որ աշխարհագրական թաղանթում ևս գոյություն ունի համաշափություն, որն արտահայտվում է ջերմության բաշխման, մթնոլորտի համաշխարհային շրջապտույտի, աշխարհագրական գոտիների և այլ բնութագրիչների մեջ: Օրինակ, Հյուսիսային կիսագնդի արևադարձային գոտուն հարավային կիսագնդում համապատասխանում է նույնանուն գոտին, բարեխառն գոտիները համապատասխանում են միմյանց և այլն:

Սակայն համաշափությունը ընդհանուր առմամբ արտահայտվում է խոշոր ընդհանրացումների դեպքում, երբ երկվույթները դիտում ենք համամոլորակային տեսանկյունից: Ավելի մանրակրկիտ (մեծ մասշտաբի) ուսումնասիրության դեպքում համաշափությունը զգալի չափով խախտվում է:

Մոտաճամաշափությունն (դիսիմետրիա) այն երևույթն է, երբ համաշափության ընդհանուր ֆոնի վրա նկատվում են շեղումներ, որոնցից առարկայի ու երևույթի համաշափությունը զգալի չափով խախտվում է: Մոտահամաշափության ցայտուն օրինակ կարող է լինել աշխարհագրական թաղանթի զոնայականությունը: Հյուսիսային և հարավային կիսագնդերում աշխարհագրական զոնաները տարբեր են, որոշ զոնաներ հարավային կիսագնդում նույնիսկ բացակայում են: Մոտահամաշափությունը ցայտուն արտահայտված է սառցոլորտում (կրիոսֆերայում) և ջրոլորտում: Այսպես, երկու կիսագնդերի բևեռային շրջաններում կան սառցածածկ տարածու-

թյուններ, բայց Անտարկտիդայում սառցադաշտը համատարած է, իսկ հյուսիսային կիսագնդում՝ առանձին օջախներով, կամ հյուսիսային կիսագնդում բարեխառն ու մերձբևեռային շրջաններում բազմամյա սառածություն կա, իսկ հարավային կիսագնդում այն շատ սահմանափակ տարածում ունի:

Մտտահամաչափությունը ցայտուն է օվկիանոսների տարածման մեջ: Հարավային կիսագնդում որոշ լայնությունների տակ օվկիանոսը համատարած է, մինչդեռ նույն լայնությունների տակ հյուսիսային կիսագնդում օվկիանոսները (Խաղաղ և Ատլանտյան) ընդմիջվում են մայրցամաքներով: Շատ տեղերում օվկիանոսի մտտահամաչափությունը վերածվում է հակահամաչափության:

Հակահամաչափություն (անտիսիմետրիա) այն վիճակն է, երբ առարկաների ու երևույթների դասավորությունը կենտրոնական հարթության կամ առանցքի նկատմամբ հակառակ պատկերն ունի: Օրինակ՝ Երկրագնդի մի մասում բարձր լեռնաշղթա է, իսկ տրամագծորեն հակառակ կողմում՝ խոր գետտինկլինալ: Դրա ամենացայտուն օրինակը Անտարկտիդան ու Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսն են: Վերջինիս զոգավորությունը համապատասխանում է նույն մեծության ցամաք:

Աշխարհագրական թաղանթում կան նաև անհամաչափ (ասիմետրիկ) երևույթներ: Անհամաչափության դեպքում իրերի ու առարկաների դասավորությունն ասիպիսին է, որ հրենարավոր չէ համաչափության տարր գտնել: Օրինակ՝ տձև քարաբեկորի վրա ոչ մի համաչափություն չի գտնվի: Աշխարհագրական թաղանթում անհամաչափ երևույթներից են ծովերի բաշխումը Երկրագնդի վրա՝ կղզիների ձևը, հենց ինքը՝ գեոիդը իր մանրամասներով, հյուսիսային կիսագնդի մի քանի զոնաներ՝ տունդրան, տափան, որոնց նմանակները հարավային կիսագնդում չկան:

Համաչափության ու մտտահամաչափության տեսության զարգացման գործում զգալի ավանդ մուծեց Ի. Ի. Շաֆրանովսկին (1968): Նա գտնում է, որ Երկրի մակերևույթի յուրաքանչյուր մեծ ու փոքր հատվածներում գոյություն ունի Երկրի ձգողական ուժի կոնաձև դաշտ, և Երկրի վրա բոլոր մարմինները կրում են այդ դաշտի ազդեցությունը: Եթե մարմինը աճում է վեր, ապա ձեռք է բերում կոնաձև տեսք, եթե աճում

է հորիզոնական ուղղութեամբ, ապա ձգողական ուժը նրան թերթաձև (տերեաձև) տեսք է տալիս: Կոնաձև են հրաբխային գազաթնները, էրոզիոն լեռնաշղթաները, կարստային ձագարները: Տերեաձև են արտաբերման կոներն ու տեղատարման հարթությունները, դելտաները և այլն:

### ✓ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Երկրի ներքին կառուցվածքին ծանոթանալիս (գլուխ երկրորդ) արդեն անդրադարձել ենք մայրցամաքներին, օվկիանոսներին և այլ կառուցվածքային տարրերի: Այս բաժնում մեկնաբանվելու է մայրցամաքների ու օվկիանոսների հատակի մակերևույթի բնույթը:

Գեոֆիզի մակերևույթը խիստ խորդուգորդ է. նրա մասերը, որոնք ծովից դուրս են եկել և ունեն գրանիտային միջուկ, ցամաքային կեղևի հատվածներ են (մայրցամաքներ): Այն մասերը, որոնք գրանիտային միջուկներ չունեն և կազմված են բազալտային ու նստվածքային շերտերից, ներկայացնում են օվկիանոսային երկրակեղևը, որի վրա էլ տեղավորված են օվկիանոսները:

Բացի այն, որ կառուցվածքային այս խոշոր տարրերը տարբերվում են ներքին հորինվածքով, տարբեր են նաև արտաքինապես: Քննարկենք օվկիանոսի հատակի ու ցամաքի ռելիեֆըն առանձին-առանձին:

Մովի հատակի ռելիեֆը շատ բանով է տարբերվում ցամաքի ռելիեֆից: Ցամաքի անհարթությունները կարելի է տեսնել, շոշափել: Յուրաքանչյուր ոք ցանկացած պահին կարողանում է դիտել ու ընկալել շրջապատը: Օվկիանոսի կամ ծովի հատակը քողարկված է ջրի շերտով. նրա անհարթությունների մասին մենք գաղափար ենք կազմում միայն խորաչափական քարտեզների օգնությամբ:

Չախախորաչափի (էքոլոթի) գոտուր հնարավորություն տվեց շատ մատչելի ձևով կազմել նավի անցած ուղու հատակի տրամատը (պրոֆիլը): Բազմաթիվ տրամատների միջոցով հնարավոր է դարձել բավական ճշգրիտ պատկերացում ստանալ օվկիանոսի հատակի ռելիեֆի մասին:

Ինչպես ցամաքի, այնպես էլ օվկիանոսի հատակի կա-

առցվածքային խոշոր տարրերի առաջացումը կապվում է տեկտոնական շարժումների հետ, ուստի և դրանք ունեն բավական շատ ընդհանուր գծեր, սակայն երբ ուսումնասիրությունները կատարվում են խոշոր մասշտաբով, այսինքն՝ փոքր տարածությունները՝ ավելի մանրակրկիտ ձևով, պատկերը փոխվում է, որովհետև ռելիեֆագոյացնող գործոնները ծովի հատակում այլ են, իսկ ցամաքում բոլորովին տարբեր: Օվկիանոսի հատակում տեղի է ունենում նստվածքագոյացում, և երկար ժամանակահատվածում ռելիեֆի ձևերը քողարկվում են նստվածքային շերտախմբերի տակ: Ուրեմն, ընդհանուր ուղղությունն այն է, որ օվկիանոսի հատակում տեղի է ունենում ռելիեֆի համահարթում, քողարկում նստվածքային շերտերի տակ, մինչդեռ ցամաքում ռելիեֆագոյացնող գործոններն այնքան շատ են, որ տեղի է ունենում ռելիեֆի քանդակման անընդհատ պրոցես. հետևապես, օվկիանոսի հատակի ռելիեֆը ցամաքի համեմատ ավելի թույլ է մասնատված:

Օվկիանոսի հատակում կան բազմաթիվ լեռնաշղթաներ, խորջրյա ավազաններ, բարձրավանդակներ, ուֆտային հովիտներ: Դրանք հանգամանորեն ուսումնասիրվեցին հատկապես 20-րդ դարի երկրորդ, երրորդ քառորդներում, հայտնաբերվեցին հազարավոր կիլոմետրերի լեռնաշղթաներ, հրաբխային սարավանդներ ու առանձին գագաթներ:

Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում սովետական գիտնականները հայտնաբերեցին կոմոնոսովի ու Մենդելևի լեռնաշղթաները, և դրանց երկու կողմերում էլ՝ խորընկա ավազանները: Հայտնաբերվեց Նանսենի ստորջրյա շեմքը, որով Սառուցյալ օվկիանոսի կենտրոնական մասի ավազանը ածառվում է Նորվեգական ու Գրենլանդական ծովերի գոգավորություններից:

Ատլանտյան օվկիանոսի հատակի ռելիեֆի ամենաբնորոշ կառուցվածքային տարրը S տառի ձևով գծվող ստորջրյա լեռնաշղթան է (Ատլանտյան լեռնաշղթա): Մի քանի տեղերում լեռնաշղթայի բարձր գագաթները ջրից դուրս են գալիս (Ազորյան կղզիներ, Համբարձման կղզի և այլն): Լեռնաշղթայից արևմուտք և արևելք տարածվում են խորը ջրային ավազաններ (Հյուսիսամերիկյան, Բրազիլական, Արգենտինյան, Անգոլական, Կապի): Աֆրիկայի հարավային ծայրամասից մին-

չև Ատլանտյան շղթայի հարավային ծայրը ձգվում է Կետայի լեռնաշղթան: Երկուսի միացման տեղում՝ Տրիստան-Դա-Կունյա և Գոֆ կղզիներն են: Ատլանտյան օվկիանոսում խոր-ջրյա անդունդները երկուսն են՝ Պուերտո-Ռիկոյինը և Հարավային Սանդվիչյանը:

Հնդկական օվկիանոսը ունի տեսակետից բաժանվում է հրկու մասի՝ արևմտյան և արևելյան: Դրանց միջև սահմանն անցնում է Շրի-Լանկայից մինչև Կերգելեն կղզին ձրգվող Կենտրոնական Հնդկական լեռնաշղթայով: Արևելյան մասի հատակը միապաղաղ է, բարձրացումներ ու կղզիներ չեկան Կամ քիչ են: Ճավա կղզուց ոչ հեռու գտնվում է Ճավայան խորջրյա անդունդը, որը Հնդկական օվկիանոսում միակն է:

Հնդկական օվկիանոսի արևմտյան մասի հատակը շատ տարասեռ է, կան բազմաթիվ կղզեխմբեր, որոնց միջև էլ՝ մի քանի փոքավորություներ:

Խաղաղ օվկիանոսի հատակի կառուցվածքն ավելի բարդ է: Ուշագրավ է, որ այստեղ ևս օվկիանոսի արևելյան կեսն ունի ավելի հարթ հատակ, Ամերիկայի ափերի մոտ գտնվում են Ատլանտյան, Գվատեմալայի խորջրյա անդունդները: Օվկիանոսի արևմտյան մասում հակադրություները մեծ են: Այստեղ կան բազմաթիվ կղզեխմբեր, նրանց միջև՝ խորջրյա անդունդներ՝ Կուրիլյան, Ճապոնական, Ռյուկյու, Ֆիլիպինյան, Մարիանյան, Բուգենվիլի, Նոր-Հեբրիդյան, Տոնգա, Կերմադեկ: Ստորջրյա լեռնաշղթաներից են՝ Հավայանը, Փաննինգը (Կենտրոնական պոլինեզական սպորադներ): Վերջինին զուգահեռ՝ Մարշալյան և Զիլբերտի կղզիների շարքով Ռոսսի ծովից հյուսիս ձգվում է մեկ այլ լեռնաշղթա՝ Հարավ-Խաղաղ-օվկիանոսյան լեռնաշղթան և այլն:

Խաղաղ, Ատլանտյան և Հնդկական օվկիանոսներում հատակի ունի տեսակետից կարելի է նկատել մի քանի օրինաչափություներ. օվկիանոսների կենտրոնական մասերում խորություներն ավելի փոքր են, քան եզրերում, որտեղ և գտնվում

վում են անդունդները: Այնուհետև, ոչ մի տեղ անդունդների կողքին ստորջրյա լեռնաշղթաներ չկան, սակայն կան ցամաքային լեռնաշղթաներ:

Ցամաքի ուելիեֆը շատ բազմազան է: Նախ նշենք, որ բոլոր մայրցամաքները բացի Անտարկտիդայից, զույգ-զույգ են՝ Հյուսիսային—Հարավային Ամերիկա, Եվրոպա—Աֆրիկա, Ասիա—Ավստրալիա: Յուրաքանչյուր մայրցամաք հարավում վերջանում է եռանկյունաձև: Ցամաքներն արևմուտքում ունեն ծոցեր, իսկ արևելքում՝ ելուստ-թերակղզիներ: Ցամաքների արևելյան մասերում կան բազմաթիվ կղզեխմբեր, արևմուտքում դրանք բացակայում են: Կղզեխմբերը ուռուցիկ մասով ուղղված են դեպի արևելք, իսկ միջօրեականի ուղղությամբ ձգվող կառուցվածքային խոշոր տարրերը հյուսիսում տեղաշարժված են դեպի արևմուտք և ստացել են S տառի ձևը (Կորդիլիերներ, Միջին-Ատլանտյան ստորջրյա լեռնաշղթա և այլն): Յուրաքանչյուր մայրցամաքում առանձնացվում են երկու գոտի՝ միջին-ցածրադիր և եզրային-բարձրադիր: Այսպիսի պատկերը հակադիր է օվկիանոսի հատակի բնութթին, որտեղ ամենաբարձրը կենտրոնական մասն է:

Ցամաքի ուելիեֆի ամենացատուն տարրերը լեռներն ու դաշտավայրերն են: Աչքի են ընկնում լեռնաշղթաների երկու հիմնական գոտաններ՝ Խաղաղօվկիանոսյան օղակը և Ալպ-Հիմալայան գոտին:

Երկրի կեղևի զարգացման պրոցեսում, ինչպես նաև համաշխարհային օվկիանոսի հետ փոխներգործության հետևանքով առաջացել են կղզիներ: Դրանց ընդհանուր տարածությունը 9,9 մլն կմ<sup>2</sup> է, խոշորները, որ ունեն ավելի քան 200 հազար քառ կմ մակերես, տասն են (աղյուսակ 8):

Ըստ ծագման բոլոր կղզիները խմբավորվում են հետևյալ կերպ.

Մայրցամաքային՝ պլատֆորմային, մայրցամաքային լանջի, լեռնագրական, կղզիների խմբերի, մերձարկտիկ, շխերային, դալմաթյան, ֆիորդային, ցամաքալեզվակների և սլաքների, դելտային:

## Աշխարհի ամենախոշոր կղզիները

	Ցարածքը, հազ. կմ <sup>2</sup>
Փրենլանդիա	2176
Նոր Գվինեա	829
Կալիմանտան (Քորնեո)	734
Մադագասկար	590
Բաֆֆինի երկիր	512
Սամաուրա	435
Մեծ Բրիտանիա	230
Հոնսյու	223
Վիկտորիա	212
Էլսմիրի երկիր	200

Ինֆեաւուլյն՝ հրաբխային, լավային ճեղքային արտավիժման-վահանաձև և կոնային, կորալական, մերձափնյա խութեր, պատնեշային (բարիերային) խութեր, ատոլներ: Մայրցամաքային կղզիները ծագումով կապված են մայրցամաքների հետ, նրա շարունակութունն են կազմում, իսկ ինքնուրույն կղզիները մայրցամաքների հետ անմիջական կապ չունեն, նրանք ինքնուրույն ծագում ունեն:

Արտածին ազդակներով ստեղծված կառուցվածքներ Յամաքի վրա արտածին ազդակների ներգործությամբ առաջանում են ռեյտեֆի մի քանի ձևեր, որոնք խմբավորվում են ջրաէրոզիոն, սառցադաշտային, հողմային (էոլային) և գրավիտացիոն (ժանրահակ) տիպերում:

Ջրաէրոզիոն ձևերը հանդես են գալիս մակերևութային լրվացման և հունային էրոզիայի ձևերով: Մակերևութային լրվացման ձևին անվանում են հողի էրոզիա: Վերջինս տեղի է ունենում մթնոլորտային տեղումներից առաջացած մակերևութային հոսքից՝ ջրաշիթերի միջոցով: Մանրահողը լանջերից վլացվելով հասնում է գետերին և նրանց միջոցով հեռանում օվկիանոս:

Հունային էրոզիան առաջացնում է հովիտների տարբեր ձևեր: Կան հովիտներ, որոնք ունեն մի քանի հարյուր ու հազար մետր խորութուն: Հավասարակշռության տրամատին (պրոֆիլին) հասած գետերը ձգտում են հովիտը լայնացնել: Հանդիպում են գետահովիտներ, որոնք ունեն մի քանի տասնյակ ու հարյուրավոր կիլոմետր լայնութուն:

Հովտի մի տեսակը ձորակն է: Վերջինիս լայնակի կտրր-վածքը ունի «V» տառի ձև: Միջին-Ռուսական, Մերձվոլգյան քարձրավայրերում ձորակները զգալի վնաս են պատճառում գյուղատնտեսությանը՝ տարածքը անպետքանում է, հողը՝ տեղատարվում: Դա ավելի արագ է տեղի ունենում այնտեղ, որտեղ սևահողի տակ գոյություն ունի լյոսի շերտ:

Ջրաէրոզիոն ձևերի մեջ կան ոչ միայն քանդակված, այլև կուտակումային ձևեր՝ հարթություններ, գետաբեր-ալյուվիալ դաշտավայրեր, սելավային ու հեղեղաբեր (պրոլյուվիալ) նստվածքային հարթություններ, գետային դելտաներ, արտաբերման կոներ և այլն:

Արտածին ուժերի կողմից ստեղծված ուղիների ձևերից են սառցադաշտային սառցաբերման (էկզարացիայի) ձևերը՝ կառերը, կրկեսները, կարոտիդները, գանգրահեր ժայռերը, տրոգները (տաշտաձև հովիտները) և այլն: Սառցադաշտային կուտակման ձևեր՝ զանդրային դաշտեր, սառցաբերուկ (մորենների) տարբեր տիպեր, ջրասառցադաշտային (ֆլյուվիոգլյացիալ) նստվածքներ և այլն: Սրանք բնորոշ են բևեռային երկրներին, կամ փարձր լեռներին, որտեղ կա սառցադաշտային գործունեություն:

Հողմային (էոլային) ձևերը ստեղծվում են քամու միջոցով: Դրանցից են ավազային դյունները, քարխանները, թմբավոր ավազները, հողմային հողմահարման ձևերը՝ սնկաձև ժայռերը, հողմախոռոչները (յարդանգները): Որտեղ զարգացած են հողմային երևույթներն ու ձևերը, այնտեղ ջրաէրոզիոն ձևերը լայն տարածում չունեն: Հողմային և ջրաէրոզիոն ձևերը հակամարտիկներ են և հազվադեպ են միասին գործում:

Գրավիտացիոն (ծանրահակ) ուժի միջոցով առաջացած ձևերը ինքնուրույն, առանց այլ ազդակների ներգործության, ստեղծվել չեն կարող: Ջուրը, սառույցը նախադրյալներ են ըստեղծում, որ գետնահողը շարժման մեջ դրվի և ծանրահակ ուժի միջոցով շարժվի: Այդպիսի երևույթներ են սողանքները, փլվածքները, ցեխասահքը (սոլիֆլուկցիան), ձնահյուսերը և այլն: Ծանրահակ ուժի միջոցով շարժման մեջ են դրվում զանազան լանջերի գետնահողերը: Հորիզոնական կամ մերձհո-

րիզոնական հարթություններում ծանրահակ ուժերը ուղիղ ֆիզիկական ձևեր առաջացնել շին կարող:

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԻ ԶՈՆԱՑԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Արդեն նշել ենք, որ զոնայական երևույթները Երկրագնդի վրա նրա գնդաձևություն արգասիքն են, այսինքն՝ արեղակ-նային էներգիան աշխարհագրական տարբեր լայնություններում տարբեր քանակական արտահայտություն ունի, որի հետևանքով առաջանում են ջերմային արևային (սոլյար) գոտիներ, դրանով էլ պայմանավորված են ճնշման, տեղումների գոտիական և հողաբուսական ծածկույթի ու կենդանական աշխարհի զոնայական արտահայտությունները:

Աշխարհագրական զոնայականության պարզ պատկերացման համար մի խումբ աշխարհագետներ (Ա. Մ. Ռյաբչիկով, Ծ. Ն. Լուկաշովա, Գ. Մ. Իգնատև, Լ. Ա. Միխայլովա, Ռ. Ա. Երեմով, Ն. Վ. Ալեքսանդրովսկայա, 1963) այդ զոնաներն ու գոտիները խոշոր ընդհանրացումներով տեղադրել են երևակայական ցամաքի վրա, որն ունի շուտ տված տանձի ձև (նկ. 26):

Ինչպես ցույց է տալիս սխեման, ցամաքն ամենից մեծ տարածում ունի հյուսիսային կիսագնդում, որի շնորհիվ ցամաքային հատվածներին-սեկտորներին համապատասխանող զոնաներն ընդարձակ են: Հարավային կիսագնդում այդ զոնաները սեպավորվում են: Հարավային կիսագնդի զոնաները ընդհանուր գծերով կրկնում են հյուսիսային կիսագնդի զոնաներին: Պարզվում է, որ շատ զոնաներ դասավորված են ոչ թե լայնակի, ինչպես մենք սովոր ենք տեսնել ՍՍՀՄ Եվրոպական մասի քարտեզի վրա, այլ՝ միջօրեականի ուղղությամբ:

Զոնայականությունը հիմնված է Երկրագնդի ջրա-ջերմային վարքի վրա, ուստի հասարակածից մինչև բևեռ զոնաները փոխվում են հետևյալ հերթականությամբ՝ հասարակածային անտառներ, մերձհասարակածային փոփոխական խոնավություն անտառներ, սավաննաների, արևադարձային անապատների, մերձարևադարձային տափաստանների, անտառատափաստանների, անտառների (լայնատերև, խառը, փշատերև),



անտառատունդրայի, տունդրայի, բեռնային սառցային անապատների զոնաների:

Ստորև համառոտակի քննենք աշխարհագրական թաղանթի բնական գոտիները, իսկ նրանց սահմաններում՝ բնական զոնաները:

Հասարակածային գոտի Տարածվում է Ամազոնի դաշտավայրում, Կենտրոնական Աֆրիկայի արևմտյան մասում (Կոնգոյի ավազան), Գվինեական ծովափին, Ինդոնեզական կղզիներում: Ամբողջությամբ ծածկված է խոնավ հասարակածային անտառներով (գիլեյներ): Ճառագայթային հաշվեկշիռը  $70-80$  կկալ/սմ<sup>2</sup> տարի, շուրջ տարի ջերմաստիճանը  $24-27^\circ$  է, ջուրն առատ է, գումարային խոնավացումը, այսինքն տեղումների և հոսքի տարբերությունը մոտ  $1400$  մմ է: Ջերմության, խոնավության, կենսաբանական պրոցեսների սեզոնային ուժեղ արտահայտված չէ: Շատ ուժգին է ընթանում կենսաքիմիական հողմահարումը, տեղի է ունենում քիմիական տարրերի ջրային տեղաշարժ (միգրացիա)՝ մանրօրգանիզմների անմիջական աջակցությամբ: Ձևավորվում է ալիտ հողմահարման կեղև, տեղում մնում են ալյումինի և մասամբ երկաթի օքսիդները, որի հետևանքով հողի գույնը կարմրադեղնավուն է, հողերը լատերիտային են:

Ջրաջերմային վարքը շատ նպաստավոր է օրգանիզմների զարգացման համար. ուստի կենսաբանական շրջապտույտի և տարողությունն է մեծ և արագությունը: Վերջինս հասնում է  $4000$  ց/հա: Աճում են մշտադալար ծառատեսակներ, բնական պայմանները թույլ են տալիս ստանալ տարվա ընթացքում երեք բերք: Մեծ հարաբերական խոնավության և ֆոտոսինթեզի փոքր ուժգնության պայմաններում (ամպամածության ու անտառներում ծառերի ստվերի տակ լուսավորության պակասության պայմաններում) բույսերի մեջ սպիտակուցները քիչ են ( $8-10\%$ ): Այս գոտու պտուղները արևադարձայինի նման քաղցր չեն: Բարձր խոնավության պատճառով գյուղատնտեսական կուլտուրաների թիվը մեծ չէ, սահմանափակվում է խոնավասերներով՝ բրինձ, կառուկատու ծառ, կոկոսյան արմավենի, եգիպտացորեն, բանան և այլն:

Բնական բուսական ծածկույթն աչքի է ընկնում տեսակների բազմազանությամբ: Շատ բնորոշ է բուսականության

բազմահարկութիւնը: Հասարակածային գոտու զոնաներն են՝ հասարակածային խոնավ անտառներ և հասարակածային տերևաթափ անտառներ:

Մերձհասարակածային գոտին երկու կողմից ձգերում է հասարակածային գոտին: Բաժանվում է երկու զոնայի՝ սավաննաների և մուսսոնային անտառների: Ճառագայթային հաշվեկշիռը 70—75 կկալ/սմ<sup>2</sup> տարի է: Ամռանը ամբողջ գոտին գտնվում է հասարակածային օդային զանգվածների ազդեցութեան տակ, ուստի նույն կլիմայական պայմաններն են, ինչ որ հասարակածի վրա: Չմռանը հասարակածային օդը քաշվում է մյուս կիսագունդ, ուժեղանում է արևադարձային օդային զանգվածների՝ պասսատների ազդեցությունը. գոտին շորային է, տեղումները քիչ են, ըստ որում սավաննաներում շոր սեզոնն ավելի երկարատև է, քան խոնավը, այնինչ մուսսոնային անտառներում դիտվում է հակառակը: Կենսաքիմիական հողմահարման թափը մեծ է, ընթանում է հողերի լատերիտացման եռանդուն պրոցես, որն ունի սեզոնային ուրիշ. ձմռանը թուլանում է, ամռանը՝ ուժեղանում:

Մուսսոնային անտառներում կենսաբանական շրջապտույտի արագութիւնը կազմում է 2000—3500 գ/հա, իսկ սավաննաներում՝ 1200—1700 գ/հա շոր զանգված:

Սավաննաները արևադարձային անտառատափաստաններ են, որտեղ խզտային բուսականութեան ընդհանուր ֆոնի վրա աճում են ծառատեսակների պուրակներ կամ առանձին-առանձին ծառեր (բաոբաբ, ակացիա, արմավենի, իսկ Ավստրալիայում՝ էվկալիպտներ և այլն): Չոր սեզոնի շնորհիվ պրտուղների շաքարայնութիւնը և սպիտակուցների քանակը մեծ է: Չոր ժամանակ արհեստական ոռոգում կատարելու դեպքում կարելի է տարեկան երեք քերք ստանալ: Բերքատվութեան բարձրացումը կախված է պարարտանյութերի օգտագործումից: Աֆրիկական, բրազիլական, ավստրալական սավաննաներում դեռևս կան հատվածներ, որոնք յուրացված չեն շրի պակասի պատճառով: Սավաննաների խոտային ծածկույթը նույնիսկ դարար ժամանակ կոշտ է:

Արևադարձային գոտի. տարածվում է Աֆրիկայում (Սահարա, Կալահարի, Նամիբ), Ասիայում (Ռուր-էլ-Խալի, Նեֆուզ, Քար), Ավստրալիայում (Մեծ Ավազային, Վիկտորիա):

Հիմնականում անապատներ են, որտեղ շուրջ տարի տիրապետում են պասսատները: Մերձարևադարձային գոտու անապատների հետ կազմում են մի հսկայական լայն զոնա, որը գրավում է ցամաքի մակերևույթի 1/7-րդ մասը: Ճառագայթային հաշվեկշիռը 60—70 կկալ/սմ<sup>2</sup> տարի է. ամբողջ տարին տաք է ու շոր: Տեղումների քանակը 50—200 մմ: Արևադարձային անապատներում միշտ շոգ է, ամռանը միջին ջերմաստիճանը կազմում է 30—37°, երբեմն ավելի քան 50—55°. ջերմաստիճանային օրական տատանումները մեծ են, հարաբերական խոնավութունը միշտ փոքր է՝ 20—40%, երբեմն իջնում է 10%-ից:

Անապատում կենսական պրոցեսները թույլ են զարգացած: Բույսերն ունեն խոր արմատային ցանց, որպեսզի կարողանան խոնավություն գտնել: Խոնավառատ ամիսներին աճում են կարճակեցներ (էֆեմերներ) ու բազմամյա կարճակեցներ (էֆեմերոիդներ): Կենսաբանական շրջապտույտի արագութունը անապատներում մոտենում է 0-ի կամ հեկտարին մի քանի ցենտներ, կիսաանապատներում մի փոքր ավելին է: Բույսերի ստորգետնյա մասերն ավելի մեծ զանգված ունեն, քան վերգետնյա: Օժտված են ավելի մեծ օսմոսային ճնշմամբ և կարողանում են հողից կորզել խոնավության նույնիսկ ամենաչնչին քանակը:

Արևադարձային գոտու արևելյան մասերը մայրցամաքներում ունեն մուսսոնային կլիմա, որտեղ տարածվում են սեզոնային առատ խոնավությամբ անտառներ: Սրանք քիչ են տարբերվում մերձհասարակածային մուսսոնային անտառներից: Եթե արևադարձային անապատների զոնայում հողերը կմախքային են, պարզունակ գորշահողեր ու մոխրահողեր, աղուտներ, ապա մուսսոնային անտառներում՝ կարմրահողեր ու դեղնահողեր:

Արևադարձային գոտին յուրացման կարիք ունի: Դրա համար անհրաժեշտ է լուծել քաղցրահամ ջրի պրոբլեմը: Մինչև այժմ յուրացված ոռոգելի տարածություններում մշակում են՝ բամբակ, բրինձ, արևադարձային պտուղներ:

Մերձարևադարձային գոտի. հյուսիսային կիսագնդում ընդգրկում է ընդարձակ տարածություններ: Ճառագայթային հաշվեկշիռը 50—60 կկալ/սմ<sup>2</sup> տարի է: Ամառային ամիսնե-

րին գերիշխում են արևադարձային օդային զանգվածները. պասսատների գոտին շարժվում է հյուսիս, և մերձարևադարձային երկրները ամբողջովին հայտնվում են այդ օդային զանգվածների տակ. ամռանը ջերմաստիճանը բարձրանում է այնքան, որքան արևադարձային գոտում ( $30-32^{\circ}$ , առանձին դեպքերում՝  $45-50^{\circ}$ ), մթնոլորտային տեղումները շատ սակավ են:

Ձմռանը պասսատների գոտին քաշվում է դեպի հասարակած, և մերձարևադարձային գոտին հայտնվում է բարեխառն օդային զանգվածների գերիշխանության տիրույթում, առաջանում են ցիկլոններ, տեղումներ: Ձմեռային ջերմաստիճանները շատ ցածր չեն ( $5-10^{\circ}$ ), բայց պատահում են մինչև  $20^{\circ}$  սառնամանիքներ:

Մերձարևադարձային գոտում առանձնանում են միմյանցից տարբեր արևմտյան, կենտրոնական և արևելյան սեկտորներ, որոնք զոնաների արժեք ունեն: Արևելյան սեկտորը մուսսոնային է՝ անտառային ծածկույթով: Ամառային մուսսոնը բերում է առատ խոնավություն (Արևելյան Չինաստան, Կորեա, Ֆլորիդա, ԱՄՆ-ի հարավ-արևելյան մասերը, Հարավ-արևելյան Ավստրալիա, Հարավ-արևելյան Աֆրիկա, Բրազիլական բարձրավանդակի ծայր հարավը և այլն), այս գոտու արևմտյան սեկտորը ամենից լավ արտահայտված է Միջերկրական ծովի ավազանում՝ Հարավային Եվրոպայում, Փոքր Ասիայի ավամերձ մասերում, Հյուսիսային Ամերիկայում (Կալիֆոռնիայում), Ավստրալիայի հարավ-արևմտյան մասում: Ձմռանն ունի խոնավ մեղմ կլիմա, ամռանը՝ չոր ու շոգ, բուսականությունը հարմարված է սեզոնային ութմին, կոշտատերև է՝ չորակյաց հատկանիշներով:

Գոտու կենտրոնական սեկտորը կլոր տարի չոր է, ընդարձակ տարածություն են գրավում անապատներն ու կիսաանապատները (Կարա-Կում, Տակլա-Մական, Գոբի, Իրանական, Մեծ Ավազանի և այլն):

Մուսսոնային շրջաններում տարածված են դեղնահողեր, կարմրահողեր. չոր մերձարևադարձներում՝ գորշահողեր, դարչնագույն հողեր, մոխրահողեր, աղուտներ: Միջերկրածովյան մերձարևադարձներում՝ գորշ-կամրավուն, գորշ դարչնագույն, դեղնավուն հողեր: Կենսաբանական շրջապտույտի ա-

բազուկոսներ անապատներում հեկտարի վրա մի քանի ցենտներ է, կամ ավելի պակաս. Միջերկրածովային ավազանում 40—100 ց, խսկ մուսսոնային անտառներում՝ մինչև 130—200 ց/հա:

Մուսսոնային անտառները մարդու գործունեության շնորհիվ մեծ մասամբ վերածվել են ցանքատարածությունների, որտեղ մշակում են բրինձ (Արևելյան Չինաստան):

**Բարեխառն գոտի.** Հյուսիսային կիսագնդում ցամաքը ամենից ընդարձակ տարածություն է զբաղեցնում, հարավային կիսագնդում՝ փոքր: Հյուսիսային կիսագնդում գոտու մեջ սեկտորայնությունը ամենից լավ է զարգացած, և կենտրոնական՝ ցամաքային սեկտորում զոնայականությունը ստանում է իր դասական արտահայտությունը:

Հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում, բացառությամբ արևելյան ծայրամասի, տիրապետում է օդային զանգվածների արևմուտքից արևելք տեղաշարժը, ցիկլոնները շարժվում են արևելք, տեղումների քանակը արևմտյան սեկտորում շատ է, դեպի արևելք՝ նվազում է: Արևելյան սեկտորում օվկիանոսային սառը հոսանքների ազդեցության պատճառով (Լաբրադորական, Կամչատկայի) աշխարհագրական զոնաներն իջնում են հարավ: Արևելյան սեկտորներն ունեն ավելի անբարենպաստ կլիմա, քան արևմտյանները: Ճառագայթային հաշվեկշիռը 40—20 կկալ/սմ<sup>2</sup> տարի է:

Բարեխառն գոտու ցամաքային սեկտորը Եվրասիայում ունի շատ մեծ զարգացում: Այստեղ հարավից հյուսիս տարածվում են՝ անապատային, կիսաանապատային, տափաստանային, անտառատափատանային, լախատերև, խառը և փշատերև անտառները, որոնցից յուրաքանչյուրը խնդրույն զոնա է կազմում:

Անապատային զոնայում ամառը շոգ է ու շոր, հուլիսի միջին ջերմաստիճանը 28—30° է, առանձին դեպքերում՝ 45°: ձմռանը ցուրտ է, հունվարին —5—10°, երբեմն՝ —30°, տեղումները՝ 100—200 մմ: Հողերը անապատային հողեր են, մոխրահողեր, աղուտներ. բուսականությունը թույլ է զարգացած, կենսազանգվածի տարեկան աճը 2—10 ց/հա է:

Կիսաանապատային կլիման մի փոքր ավելի մեղմ է, բայց ձմռանը ավելի ցուրտ է, քան անապատներում: Հողերը գրեթե

նույնն են, բուսական ծածկույթը ներկայացված է օշինդրով, ուղտափշով, կարճակեցնեքով (էֆեմերներով): Կենսազանգվածի արագությունը 10—30 ց/հա տարի է:

Տափաստանային զոնան տարածվում է Միջին Գանուբյան դաշտավայրից մինչև Արևելյան Չինաստան: Ամառն այստեղ տաք է (18—22°), երբեմն ջերմաստիճանը բարձրանում է 40°, ձմեռը արևմուտքում մեղմ է (3—4°), արևելքում՝ —10—20°. առանձին դեպքերում՝ —40—45°, տեղումների տարեկան քանակը 300—600 մմ: Չմռանը ձյուն է գալիս, հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառվա շորությունն ու կարճատևությունը հնարավորություն չեն ստեղծում մանրօրգանիզմների կողմից բուսական մնացորդների արագ քայքայմանը, և հումուսը կուտակվում է: Այստեղ տարածված են սեահողեր կամ շագանակագույն հողեր: Բուսականությունը խոտային է, վերերկրյա մասը՝ միամյա: Աճում են՝ փետրախոտ, շյուղախոտ, սիզախոտ, տիպչակ: Սակայն բնական բուսածածկույթը խախտված է. մշակվում են հացահատիկներ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ և այլ կուլտուրաներ: Տափաստանային բուսականությունը բնական վիճակում տալիս է 40—100 ց/հա զանգված:

Տափաստանային զոնան լավ արտահայտված է նաև Հյուսիսային Ամերիկայում (պրերիաներ), որը ձգվում է Փայոտո լեռներին զուգահեռ՝ հյուսիսից հարավ: Հարավային Ամերիկայում տափաստանները տարածվում են Արգենտինայում և կոչվում է Պամպա:

Եվրասիայում տափաստաններից հյուսիս տարածվում են անտառատափաստանները: Այս զոնայում տափաստանային ու անտառային լանդշաֆտները միմյանց միահյուսվում են: Հուլիսյան միջին ջերմաստիճանը 18—20° է, հունվարին —3—4°-ից մինչև —15—20° (Արևմտյան Սիբիր), տեղումների քանակությունը 400—600 մմ: Անտառատափաստանի վրայով է անցնում խոնավացման գործակցի հավասարաչիծը՝ այն իզոգիծը, որի արժեքը 1,0 է: Այդ զոնայից հարավ 1-ից պակաս է, իսկ հյուսիս՝ 1-ից բարձր: Շատ գիտնականների կարծիքով խոնավացման գործակցի 1 արժեքը այն սահմանն է, որտեղ դեռևս կարող են ծառեր աճել: Ավելի ցածր արժեքի դեպքում անտառներ չեն աճում:

Անտառատափաստանում հողերը սեահողեր են, մարգագետնային սեահողեր, տեղ-տեղ՝ անտառային գորշահողեր: Զոնայում նպաստավոր պայմաններ կան հացահատիկների, շաքարի ճակնդեղի մշակման համար:

Անտառատափաստանային զոնայից հյուսիս տարածվում է անտառային զոնան, որի մեջ առանձնացնում են երեք ենթազոնաներ (որոշ հեղինակներ դրանք ինքնուրույն զոնաներ են համարում)՝ լայնատերև անտառների, խառը և փշատերև անտառների (տայգա) ենթազոնաներ: Արևմտյան Եվրոպայի մեծ մասում լայնատերև ու խառն անտառներ են, փշատերև անտառներն աճում են Սկանդինավյան թերակղզում, Ռուսական ու Արևմտա-Սիբիրական հարթությունների հյուսիսային մասում ու Միջին Սիբիրում, ձեռավոր Արևելքում: Անտառային զոնան Արևմտյան Եվրոպայում ունի մեղմ կլիմա, հունվարին միջին ջերմաստիճանը արևմուտքում  $2-4^{\circ}$  է, Կենտրոնական Եվրոպայում՝  $-2-6^{\circ}$ , Արևմտյան և Արևելյան Սիբիրում՝  $-15-25^{\circ}$ : Ամռանը ջերմաստիճանային տարբերությունները մեծ չեն ( $10-20^{\circ}$ ): Եթե ձմռանը ջերմաստիճանների անկումը կատարվում է արևմուտքից արևելք, և ամենացածր ջերմաստիճանները նկատվում են Յակուտական ԻՍՍՀ-ում, ապա ամռանը ջերմաստիճանի անկումը կատարվում է հարավից դեպի հյուսիս:

Անտառային զոնայում տեղումներն ամենուրեք բավարար են: Արևմտյան մասում՝ 800—1000 մմ, դեպի արևելք նվազելով հասնում են 350 մմ-ի, սակայն, ամենուրեք խոնավացման գործակիցը 1-ից բարձր է, երբեմն հասնում է 2—3-ի: Լայնատերև անտառների տակ ձևավորվել են գորշ անտառային հողեր, իսկ փշատերև անտառներում՝ պոդզոլային (ենթամոխրային): Վերջիններս ունեն թթու ռեակցիա. այդպիսի հողերը օգտագործելու համար անհրաժեշտ են հողաբարելավման (մելիորատիվ) միջոցառումներ, հատկապես կրայնացում: Անտառների արդյունավետությունը շատ տարբեր է՝ տարեկան 50-ից մինչև 120 ց/հա: Արևմտյան Եվրոպայի անտառների մեծ մասը ոչնչացված է, նրանց տեղում այժմ ցանքատարածություններ են: Համեմատաբար բնական վիճակում են Արևմտյան Սիբիրի, Միջին Սիբիրի և ձեռավոր Արևելքի անտառները:

Բարեխառն գոտին Հյուսիսային Ամերիկայում ունի նույն զոնաները, որոնք բնորոշ են Եվրասիային, սակայն նրանք այլ դասավորություն ունեն: Ամերիկայում նրանց հերթափոխությունը արևելքից արևմուտք է, զոնաները ձգվում են հյուսիսից հարավ, դա շատ ակնհերև է անտառատափաստանում ու տափաստանում: Տայգան արդեն ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:

Մերձարկտիկական (մերձանտարկտիկական) գոտին բնորոշվում է ջերմության պակասորդով. Հյուսիսային կիսագնդից ցամաքում այն լայն գոտի է կազմում, հարավային կիսագնդում զբաղեցնում է աննշան տարածք:

Ջերմության անբավարարության պատճառով ծառային բուսականությունը բացակայում է, ամենուրեք տարածվում է տունդրան: Անտառի ու տունդրայի սահմանում ստեղծվել է անցողիկ՝ անտառատունդրայի զոնան: Կենսաքիմիական պրոցեսները շատ դանդաղ են ընթանում, տարածված են ճմաճահճային հողեր, բուսականությունն աղքատ է (բարաբոսեր, մամուռներ, բոշխեր): Անցողիկ զոնայում թզուկ ծառատեսակներ ու թփուտներ են տարածված: Ամենուրեք բաղմամյա սառածություն կա. բուսաճեցողության (վեգետացիոն) ժամանակաշրջանը շատ կարճ է՝ 2—3 ամիս:

Արկտիկական (անտարկտիկական) գոտի. ճառագայթային հաշվելիչոր ձմռանը բացասական է, ամռանը՝ դրական. տարվա միջինը՝ բացասական: Ջերմություն ստանում է նաև ծովային ու օդային հոսանքների միջոցով: Ամռանը հաճախ ջերմաստիճանը 0°-ից բարձրանում է, բայց բավարար չէ սառցի շերտը հալեցնելու համար: Ցամաքային ծագման սառցադաշտերը ծածկում են 16,3 մլն կմ<sup>2</sup> մակերես:

Անտարկտիդան ունի ավելի դաժան կլիմա, քան Արկտիկան: Այստեղ 1965 թվականին գրանցվել է -94,5°:

## ՋՈՆԱՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՋՈՆԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ

Եթե Երկրի մակերևույթը համասեռ լիներ, ապա զոնաները կձգվեին զուգահեռականների ուղղությամբ: Սակայն իրականում երկրի մակերևույթը անհամասեռ է, և բացի զոնայականությունն առաջացնող գործոններից գոյություն ու-

նեն անզոնայական գործոններ, որոնք մեծապես ազդում են զոնայականության վրա: Դրանք այն ուժերն են, որ ծնվում են Երկրի ընդերքից, և Երկրի գնդաձևությունը նրանց վրա չի ազդում: Դրանցից ամենազորեղը տեկտոնական շարժումներն են:

Տեկտոնական շարժումների հետևանքով ստեղծվում են բարձրաբերձ լեռնաշղթաներ ու ամբողջական լեռնային երկրներ, որոնք խախտում են քնական զոնաների տարածումը, առաջացնում են բարձրադիր գոտիականություն՝ տվյալ զոնայից սկսած դեպի բևեռ զոնաների սպեկտրով:

Երբեմն տեկտոնական բարձրացումների փոքր չափերի պատճառով սպեկտր չի ստեղծվում: Այս դեպքում նրա վրա ձևավորվում են դեպի բևեռ ընկած հարևան զոնային հատուկ լանդշաֆտները: Այս երևույթը տվյալ զոնայի ֆոնի վրա այնուամենայնիվ զգալի շեղում է: Ստավրոպոլյան բարձրավայրը Մերձկասպյան դաշտավայրի կիսաանապատային լանդշաֆտային զոնայի նկատմամբ մեկ աստիճան բարձր է, և նրա վրա ձևավորվել են տիպիկ տափաստաններ: Նման օրինակներ կարելի է տեսնել Ղազախական ծալքավոր երկրում, Միջին Սիբիրում և այլն:

Անզոնայական գործոն է հրաբխականությունը: Հրաբխային գործունեության շնորհիվ ստեղծվում են վիթխարի ծածկույթ-տրապներ, որոնք ոչնչացնում են, այրում երկրի այդ հատվածի կենսացենոզը, ստեղծում են լավային ծածկոց: Որոշ ժամանակ անց ստեղծվում է բոլորովին նոր՝ երիտասարդ կենսացենոզ, որը միանգամայն տարբերվում է տվյալ զոնային հատուկ կենսացենոզներից:

Հրաբխային գործունեության հետևանքով հրաբխային գազերի ազդեցության տակ բավական ընդարձակ տարածություն վրա օրգանական աշխարհը ոչնչանում է, և երկար ժամանակ է պահանջվում նրա վերականգնման համար: Վերականգնումը կատարյալ չի կարող լինել, որոշ տեսակներ ոչընչանում են առհավետ: Այսպիսով անզոնայական գործոնները աշխարհագրական (տվյալ դեպքում լանդշաֆտային) զոնաների դասակարգման ու ձևավորման մեջ շատ խոշոր նշանակություն են ստանում:

Մինչև այժմ տարբեր առիթներով, տարբեր գլուխներում քննեցինք համամտլորակային մասշտաբի աշխարհագրական կառուցվածքները. այս բաժնում խոսքը գնալու է աշխարհագրական թաղանթի ավելի փոքր կառուցվածքային միավորների՝ լանդշաֆտների մասին: Վերջին մի քանի տասնամյակներում լանդշաֆտագիտությունը խոշոր առաջընթաց է կատարել:

«Լանդշաֆտ» տերմինը ծագում է գերմաներեն Land-schaft բառից, որ նշանակում է տեղամաս, բնապատկեր: Աշխարհագրության մեջ, գրական տարբեր աղբյուրներում օգտագործվել են տարբեր տերմիններ (գեոխոր—երկրատարածք, բնատեղամաս, աշխարհագրական ասպեկտ, տարրական լանդշաֆտ, բնական շրջան, տարածքային համալիր, երկրացենոզ և այլն), որոնք լանդշաֆտի արտահայտություններն են՝ տարածքային համալիրներ: Վերջին ժամանակներս լանդշաֆտի հասկացությունն աստիճանաբար բյուրեղացել է՝ բազմիմաստ նշանակությունից դարձել է օբյեկտիվորեն գոյություն ունեցող կոնկրետ հասկացություն:

Լանդշաֆտի բնորոշման բազմաթիվ ձևակերպումներ կան (Լ. Ս. Բերգ, Ն. Ա. Սոլնցև, Ա. Գ. Իսաչենկո, Գ. Լ. Արմանդ, Յ. Կ. Նֆրեմով, Ֆ. Ն. Միլկով, Ն. Ա. Գվոզդեցկի և ուրիշներ): Այստեղ կարևորը ձևակերպման բովանդակությունն է: Բազմաթիվ ձևակերպումներից կարելի է դուրս բերել մեկ ընդհանուր միջին ձևակերպում՝ լանդշաֆտը երկրի մակերևույթին գտնվող այնպիսի տարածքային համալիր է, որտեղ միօրինակ երկրաբանական հիմքը, ռելիեֆի տիպը, կլիման, ջրերը, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը ըստեղծում են մեկ ընդհանուր միասնություն, որն իր յուրահատկություններով տարբերվում է հարևան լանդշաֆտներից:

Հարկ է նշել, որ լանդշաֆտագիտության մեջ ստեղծվել են երկու հիմնական ուղղություններ՝ «տեղատարածքային» («ռեգիոնալ») և «տիպաբանական»: Առաջին ուղղության ներկայացուցիչները լանդշաֆտի տակ հասկանում են կոնկրետ տարածք (օրինակ՝ Արարատյան դաշտը, Կոլխիդայի դաշտավայրը, Կարագիե գոգավորությունը, Արագածի մերձկատարային սարավանդը, Լոռվա սարավանդը և այլն): Տիպա-

բանական ուղղության ներկայացուցիչները լանդշաֆտի տակ հասկանում են լանդշաֆտի տիպը՝ առանց որևէ կոնկրետ տարածքի հետ կապելու: Օրինակ՝ տայգայի, տունդրայի, անապատային և այլ լանդշաֆտներ: Այս երկու ուղղութիւնները միմյանց հակադիր չեն, այլ լրացնում են միմյանց:

Լանդշաֆտը կազմված է բաղադրիչներից: Նրա կազմում են՝ երկրաբանական հիմքը, ռելիեֆը, կլիման, ջրերը, հողը, բուսականութունը, կենդանական աշխարհը: Լանդշաֆտի կազմում մարդը բոլորովին ուրույն՝ ղեկավարող դեր ունի: Որպես կենդանի էակ նա մտնում է լանդշաֆտի մեջ, բայց միևնույն ժամանակ այն բաղադրիչն է, որ ուղղութիւն է տալիս նրա զարգացման ընթացքին: Որքան զարգանում է գիտութիւնն ու տեխնիկան, այնքան մարդու դերը մեծանում է:

Լանդշաֆտը բաժանվում է նաև ավելի փոքր տարածքային միավորների, որոնց անվանում են լանդշաֆտի ձևաբանական (մորֆոլոգիական) մաս. դրանք են՝ ֆացիան, բնատեղամասը, տեղանքը:

Ֆացիան ֆիզիկա-աշխարհագրական ամենափոքր և այլևս շմասնատվող միավորն է: Լանդշաֆտագետների մի խումբ (Գ. Ն. Անենսկայա և մյուսները, 1963) գտնում է, որ ֆացիան արտաբնական բնական տարածքային համալիր է, որի երկարութիւնը պահպանվում է մակերևութային ապարների միևնույն քարապարային (լիթոլոգիական) կառուցվածքը, ռելիեֆի և խոնավութիւնի միևնույն բնույթը, մի մանրակլիմա, մի հողատեսակ և մի կենսացենոզ: Ֆացիաները կարող են լինել արմատական (երբ մայր ապարները առաջնային են, դեռևս չձեռնարկված) և ածանցյալ (մարդու կողմից վերափոխված, երկրորդական): Ֆացիան կարող է լինել ձորակի լանջը, ճահճային մի փոքր հատված, քարակարկառը, գետի ողողատը, ձնաբիծը, կարստային ձագարը և այլն:

Լանդշաֆտի ձևաբանական ավելի մեծ միավոր է բնատեղամասը, որը կազմված է երկու և ավելի ֆացիաներից: Միջին ռելիեֆի յուրաքանչյուր ձև իրենից ներկայացնում է բնատեղամաս (զոգավորութիւն, գետահովիտ, հրաբխային զանգված), իսկ բնատեղամասը միավորում է ֆացիաների յուրօրինակ համակարգ: Բնատեղամասերը լինում են հիմնական (կամ տիրապետող) և երկրորդական (կամ ենթակա): Առա-

ջիւնները կազմում են լանդշաֆտի հիմքը և գրավելով ավելի մեծ մակերես ստեղծում են լանդշաֆտի հիմնական ֆոնը: Երկրորդական բնատեղամասերը հազվադեպ են հանդիպում և մեծ մակերես չեն զբաղեցնում:

Տեղանքը այնպիսի բնական տարածքային հատալիք է, որը շնայած ավելի բարդ կառուցվածք ունի, քան բնատեղամասը, բայց դեռևս լանդշաֆտ չէ: Օրինակ, ենթադրենք լավային սարավանդի մի մասում, որպես մնացորդային ռելիեֆ կա վատահողային (բեդլենդային) մի հատված, որը միանգամայն պարզորոշ անշատվում է մնացած հատվածներից: Այն կներկայացնի տեղանք, որի յուրաքանչյուր մանր ձորակը մի բնատեղամաս է, իսկ նրանց տարբեր լանջերը՝ ֆաջիաներ:

Հաճախ տարածքի բնական պայմաններն այնքան բարդ ու բազմազան են լինում, որ ֆաջիան, բնատեղամասն ու տեղանքը բավարար չեն, կարիք է զգացվում մտցնելու միջանկյալ միավոր ևս՝ ենթատեղամաս:

Ինչպես նշեցինք, լանդշաֆտից փոքր միավորները ընդունված է անվանել ձևաբանական մասեր: Լանդշաֆտից մեծ միավորներին անվանում են կարգաբանական միավորներ: Ֆիզիկա-աշխարհագրական շրջանացման մեջ գոյութուն ունի կարգաբանական միավորների երկու համակարգ՝ զոնայական ու անզոնայական (ազոնայական):

Լանդշաֆտի ուսումնասիրութունն ունի գործնական նշանակութուն՝ լանդշաֆտային հանույթը պարզում է տարածքի պիտանելիության աստիճանը ժողովրդական տնտեսության մեջ: Մանրակրկիտ հանույթի միջոցով բացահայտում են պակասորդային և ավելցուկային քիմիական տարրերը, որի հիման վրա կազմակերպում են արհեստական պարարտացում, պարզաբանում են տարածքի ջրա-ջերմային վարքը (ռեժիմը), հողերի էրոզիայի և բազմաթիվ այլ հարցեր: Լանդշաֆտային հանույթի օգնությամբ հեշտանում է տարածքի օգտագործման ուղղության որոշումը:

Մերձերևանյան շրջանում (մինչև Գառնի) 1950-ական թրվականներին անտառատնկման աշխատանքներ կատարվեցին, բայց անտառը չաճեց այն պատճառով, որ նախքան անտառատնկումը լանդշաֆտային հետազոտություններ չկատարվե-

ցին, և տարածքի ջրա-ջերմային վարքի մասին տվյալները շատ թերի էին: Պարզվեց, որ այստեղ խոնավացման գործակիցը 0,25—0,3 է, որի պայմաններում առանց արհեստական ոռոգման անտառը չի կարող աճել: Եթե լանդշաֆտային հանույթ կատարվեր, և պարզվեր տարածքի բնության իսկական պատկերը, նման կոպիտ սխալ թույլ չէր տրվի: Երբ պարզ դարձավ սխալի էությունը, ձեռնարկեցին այլ միջոցառումներ (դարավանդավորում, արհեստական ոռոգում) որոնք, անշուշտ, կտան դրական արդյունքներ: Մի շարք առաջավոր տնտեսություններում արդեն կատարվել են խոշոր մասշտաբի լանդշաֆտային հանույթներ և լանդշաֆտային քարտեզի օգնությամբ ավելի հաջողությամբ են տեղաբաշխում դաշտավարության ճյուղերը, անասնապահությունը:

Լանդշաֆտային հանույթն օգնում է ոչ միայն գյուղատրնտեսությանը, այլև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին՝ արդյունաբերության տեղաբաշխմանը, տրանսպորտին և այլն: Լանդշաֆտային հանույթի միջոցով պարզաբանվում են բնության պահպանության ու հարստացման շատ հարցեր՝ էրոզիայի դեմ պայքարի ուղղությունը, հողերի քարելավումը, ջրային պաշարների, բուսական ու կենդանական աշխարհների պահպանության հարցերը:

## ՄԱՐԴԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԸ

## ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Ժամանակակից կենսաբանությունը տվյալներով մարդը և կապիկը ծագել են միևնույն նախահորից: Ընդ որում մարդու ծագումը ոչ միայն նոր քայլ է էվոլուցիոն զարգացման ընթացքում, այլև քանակական ու որակական թռիչք: Մարդու առաջացմամբ ստեղծվեց նաև նախնադարյան հասարակություն, որն արդեն ընդունակ էր ստեղծել արտադրության ոլորտ, աշխատանքային գործիքներ, որոնց միջոցով կարողացավ ներգործել բնության վրա:

Մարդու իսկական նախահայրը դեռևս չի հայտնաբերվել: Ամենապարզունակ մարդկանց են պատկանում պիտեկանտրոպուսը և սինանտրոպուսը, որոնք միավորում էին թե կապիկների և թե մարդու հատկանիշները: Առաջինը հայտնաբերվել է Ճավա կղզում, երկրորդը՝ Չինաստանում՝ Պեկինի մոտ, այնուհետև բազմաթիվ վայրերում: Հետագայում էվոլուցիոն զարգացման ընթացքում ծնվեց նեանդերթալյան մարդը, որին անվանում են Homo primigenius: Վերջինս մարդածնման ամենացածր աստիճանն է և գոյություն է ունեցել 200 հազ. տարի առաջ:

Նեանդերթալյան մարդուց անցումը դեպի ժամանակակից մարդը (Homo sapiens) տեղի ունեցավ 60—100 հազար տարի առաջ բավական ուժեղ թռիչքով: Փոխվեց նրա թե՛ ձևաբանական տեսքը և թե՛ գիտակցականությունը, նյութական կուլտուրան: Վերջինս ստորին պալեոլիթից անցնելով միջին քարեդարը (մեզոլիթ), ապա վերին քարեդար, հասավ այսօրվան:

Մարդն առաջացել է ոչ թե մեկ, մեկուսացած, կենտրոնում, այլ ընդարձակ տարածության վրա սկսած Եվրոպայի հարավային մասից, Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի վրայով դեպի Հարավային Ասիա անցնող գոտում, ընդգրկ-

կելով նաև Կովկասը, Միջին Ասիան, Հյուսիս-արևելյան Աֆրիկան: Ամերիկան ու Ավստրալիան բնակեցվել են մարդկանց գաղթի շնորհիվ: Ամերիկան՝ Ասիայից (Բերինգի նեղուցի տեղում առաջացած կամրջով (10—25 հազ. տարի առաջ), իսկ Ավստրալիան՝ Ինդոնեզիայի վրայով:

Ժամանակակից մարդը (Homo sapiens) տարածքային առումով առաջացնում է անթրոպոլոգիական (մարդաբանական) խմբեր: Ապրելով տարբեր ֆիզիկաաշխարհագրական պայմաններում՝ մարդը կրեց որոշ փոփոխություններ: Այդ խմբերից առաջացան ռասաներ: Ռասայական տարբերություններն արտահայտվում են մազերի և մաշկի գույնով, շրթունքների ու քթի ձևով և այլն:

Այժմ տարբերում են երեք հիմնական մեծ ռասաներ, որոնք ստորաբաժանվում են յոթ փոքր ռասաների: Մեծ ռասաներն են՝ 1. հասարակածային կամ նեգրո-ավստրալոիդներ, 2. եվրասիական կամ եվրոպոիդներ, 3. ասիական կամ մոնղոլոիդներ:

Հասարակածային ռասայի ներկայացուցիչներն ունեն գանգուր մազեր, մուգ մաշկ, քիթը լայն է, շրթունքները՝ հաստ: Այս ռասայի ներկայացուցիչներն են՝ նեգրոիդները, ավստրալոիդները:

Եվրասիական ռասային պատկանողները ունեն փափուկ մազեր, մաշկը սպիտակ է կամ ցորենագույն, աչքերը՝ մուգ կամ մոխրա-երկնագույն, շրթունքները՝ բարակ, քիթը՝ նեղ: Այս ռասայի մեջ առանձնացվում են՝ հարավ-եվրոպոիդական, կամ հնդ-միջերկրական և հյուսիս-եվրոպոիդական կամ բալթյան փոքր ռասաները: Հայերը պատկանում են եվրոպոիդ ռասայի արմենոիդ մարդաբանական տիպին:

Ասիական ռասայի ներկայացուցիչներն ունեն ուղիղ մազեր, մաշկը դեղնավուն է (տարբեր երանգներով), աչքերի բացվածքը՝ նեղ: Ասիական ռասայի մեջ են մտնում՝ հյուսիս-մոնղոլոիդական կամ ցամաքային, հարավ-մոնղոլոիդական կամ խաղաղօվկիանոսյան, ամերիկյան փոքր ռասաները:

Ռասայական տարբերությունները առաջացել են մարդկանց բնակության վայրի ֆիզիկա-աշխարհագրական պայմանների տարբերություններից: Բոլոր ռասաներն ուղեղի զարգացման տեսակետից գտնվում են միևնույն մակարդակի վրա:

Սովետական Միությանում ու ժողովրդա-դեմոկրատական երկրներում ռասայական տարբերությունների մասն մի դրսե-վորում պատժվում է օրենքով: Բոլոր ռասաների ներկայա-ցուցիչները օգտվում են հավասար իրավունքներից:

Ռասայական անհավասարության «տեսությունը» ոչ մի քննադատության չի դիմանում: Առաջավոր գիտությունն ու պրակտիկան ցույց տվեցին, որ «ցածր» համարվող ռասա-ները այժմ առաջադիմության մեծ քայլեր են կատարում, ստեղծել են ժամանակակից մակարդակի գիտություն, մշա-կույթ, արվեստ:

Հինքարեդարի (պալեոլիթի) վերջում մոտավորապես 50 հազար տարի առաջ Երկրագնդի բնակչությունը ենթադրաբար կազմում էր մոտ 3 մլն մարդ, աճը շատ դանդաղ էր՝ 1000 տարվա ընթացքում 15%: Նեոլիթում-նորքարեդարում, 12—7 հազ. տարի առաջ մարդիկ սկսեցին տեղաշարժվել իրենց ա-ռաջացման օրրանից և բնակեցնել բոլոր բնական զոնաները, որը տարաբնակեցման ամենակարևոր փուլն է եղել: Հենց այդ ժամանակ կատարվեց հնդեվրոպական ժողովուրդների մեծ գաղթը՝ նրանց բնակության կենտրոնից՝ Փոքր Ասիայից ու Հայկական լեռնաշխարհից դեպի Եվրոպա ու Ասիա:

Մեր թվականությունից երկու հազարամյակ առաջ Երկ-րագնդի բնակչության թիվը հասավ 50 մլն, իսկ աճի տեմ-պը 1000 տարում՝ 40%-ի: Մեր թվականության 1000 թվին Երկրի վրա ապրում էր 275 մլն մարդ: Գնալով աճի տեմպերը մեծացան: 1650 թվին բնակչության թիվը հասավ 550 մլն-ի, և բնակչության կրկնապատկման համար բավական էր 200 տարի: 1900 թվին Երկրագնդի վրա ապրում էր 1617 մլն մարդ, 1940 թ.՝ 2295 մլն մարդ: Եթե 19-րդ և 20-րդ դարերի սահմանում բնակչության կրկնապատկման համար անհրա-ժեշտ էր 100 տարի, ապա 20-րդ դարի երկրորդ կեսին՝ 50 տարի: 1980 թ. Երկրագնդի բնակչության թիվը հասավ 4,5 միլիարդի, դարի վերջին կհասնի 6 միլիարդի:

## ✓ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդը բնության մեջ նոր ուժ է: Բոլոր կենդանի օրգա-նիզմները բնության բաղադրիչներն են և ապրում են բնու-թյան տված բարիքներով: Բնությունը հավասարակշռված

համակարգ է. հնարավոր չէ, որ մեկ օրգանիզմ այնքան զարգանա, որ ոչնչացնի մյուսներին: Եղել են դեպքեր, երբ հեղափոխիչ բունկումների ձևով որոշ օրգանիզմներ անբնականոն (անոմալ) կերպով բազմացել են (օրինակ՝ մորեխը, թիթեռները, առնետները և այլն) ավերել են շրջապատում ամեն ինչ, թվում է թե նրանցից այլևս փրկութուն չկա, սակայն հենց այդ բունկումն էլ պայմանավորեց նրանց ոչնչացումը սննդի սպառման, հիվանդութունների տարածման և այլ պատճառներով: Այսպիսով, Վաշխարհագրական թաղանթում բոլոր բաղադրիչները գտնվում են փոխադարձ կապի մեջ և պայմանավորում են միմյանց: Այս բազմաբաղադրիչ համակարգում մարդը ձեռք է բերել ուրույն ու ղեկավարող դեր: ✓

Եթե քարեդարում մարդը բավարարվում էր բնության տրված բարիքներով, ապա հետագայում մարդկային ուղեղի կատարելագործման և տեխնիկայի զարգացման շնորհիվ նրա գործունեությունը դարձավ ավելի ակտիվ, ներգործությունը բնության վրա դարձավ ավելի զորեղ, քան անցած դարաշրջաններում: Անցած միլիարդավոր տարիների ընթացքում բնությունը զարգացել է բնականոն, դանդաղ ընթացքով: Վերջին հազարամյակներում, հատկապես 20-րդ դարում, բնության վրա ներգործման հզոր միջոցներով մարդու ազդեցությունը դարձել է առաջնակարգ ու ղեկավարող գործոն. մարդը բնության մեջ մի նոր ուժ է, որն առաջներում չի եղել: Ելնելով սրանից Վ. Ի. Վերնադսկին մարդկության զբաղեցրած ոլորտին անվանում է նոոսֆերա, գիտակցության ոլորտ: ✓ Մարդուն շրջապատող բնությունը՝ երկրաբանական հիմքը, ռելիեֆը, կլիման, ջուրը, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը, երկրի ընդերքի հարստությունները, էներգիայի աղբյուրները և այլն վերառնելով հասարակական արտադրության ոլորտի մեջ՝ մարդիկ ստեղծում են աշխարհագրական միջավայր, որը հասարակության գոյության ու զարգացման բնական անհրաժեշտ հիմքն է: Ս. Վ. Կալեսնիկը աշխարհագրական միջավայրին վերագրում է չորս հատկանիշ՝ 1. Աշխարհագրական միջավայրը մարդկային հասարակությանը շրջապատող երկրային բնությունն է. 2. Աշխարհագրական միջավայրը մարդկային հասարակության բնական շրջապատն է. 3. Աշխարհագրական միջավայրը բնության և

հասարակության փոխադարձ ազդեցության ոլորտն է. 4. Աշխարհագրական միջավայրը ժամանակի ընթացքում ընդարձակվում է: ✓

Կան հեղինակներ, որոնք նույնացնում են աշխարհագրական թաղանթը և աշխարհագրական միջավայրը: Այդպիսի պնդումը ճիշտ չէ, որովհետև աշխարհագրական թաղանթի ոչ բոլոր մասերն են մտնում մարդու աշխատանքային գործունեության ոլորտի մեջ:

✓ Գիտության ու տեխնիկայի զարգացումը խթանում է աշխարհագրական միջավայրի սահմանների ընդարձակմանը: ✓ Նորքարեդարում (նեոլիթում) ընդամենը 7—10 հազար տարի առաջ մարդը ճանաչում էր իր շրջապատը, ընդամենը մի քանի տասնյակ, ու հազվադեպ՝ հարյուր կմ տրամագծով: Արդեն ստրկատիրական հասարակարգում աշխարհագրական միջավայրի սահմանները մարդու համար շատ ընդարձակվեցին: Եգիպտացիները հասան մինչև Զիբրալթար, Ալեքսանդր Մակեդոնացին՝ Հունաստանից մինչև Հնդկաստան ու Միջին Ասիա: Կապիտալիզմի զարգացման փուլում մարդու համար այլևս չճանաչված տարածքներ չկային: 20-րդ դարի երկրորդ կեսին մարդը խորախցիկով (բաթիսկաֆով) թափանցեց օվկիանոսի անդունդները, հորատանցքերը հասան 10 կմ խորության, տիեզերական նավերը հասան Լուսին, Վեներա, Մարս:

Մարդը ոչ միայն աշխատում է թափանցել Երկրի խորքերը ու տիեզերական տարածությունները, այլև՝ ատոմի միջուկ ու այնտեղից կորզել վիթխարի էներգիա:

Աշխարհագրական միջավայրն ու մարդը գտնվում են որոշակի փոխհարաբերության մեջ: Մարդը բնությունից վերցրնում է նյութեր, որոնցից ստանում է սնունդ, հագուստ, տրանսպորտ գործածության իրեր, մեքենաներ: Այս հանգամանքը բոլորին հայտնի է, և ոչ ոք չի կարող ժխտել աշխարհագրական միջավայրի դերը մարդու համար, սակայն, աշխարհագրական միջավայրի և հասարակության զարգացման միջև եղած կապի գնահատմանը ցուցաբերվում են տարբեր մոտեցումներ: Այս հարցում երկու հակադիր խմբեր կան: Գիտնականների մի խումբ հարում է աշխարհագրական մատերիալիզմին ու աշխարհագրական դետերմինիզմին, իսկ ամերիկյան որոշ գիտնականներ՝ էնվայրոնմենտալիզմին: Սրանք աշ-

խարհագրական միջավայրը դերագնահատում են, տալով ներ-  
քան վճռական դեր հասարակության զարգացման մեջ:

Շ. Լ. Մոնտեսքյուն աշխարհագրական մատերիալիզմի խո-  
շոր ներկայացուցիչ էր և գտնում էր, որ կլիման է որոշում  
հասարակության զարգացումը: Կլիման ազդում է մաքուր հո-  
գեկանի վրա, հոգեկանը՝ կենցաղի, սովորույթների, հասար-  
ակության կառուցվածքի, օրենքների վրա: Ամերիկյան ու  
անգլիական ժամանակակից փիլիսոփաներից շատերը, հետե-  
վելով Մոնտեսքյոյին, կլիմային տալիս են վճռական դեր:

Գ. Տ. Բլոկը՝ աշխարհագրական մատերիալիզմի մյուս խո-  
շոր ներկայացուցիչը, գտնում է, որ մարդկային կուլտուրայի  
վրա ներգործում են կլիման, հողը, բուսականությունը, սը-  
նունդը, իսկ հոգեկան աշխարհի վրա՝ բնության ընդհանուր  
պատկերը: Ըստ նրա՝ տաք երկրներում սննդի նշանակությունը  
նրն այնքան մեծ չէ, որքան ցուրտ երկրներում, բնակչության  
աճը տաք երկրներում ավելի մեծ պետք է լինի, աշխատան-  
քային ռեսուրսները ավելի մեծ աճ ունենան, հետևաբար աշ-  
խատավարձը պետք է ցածր լինի: Ի վերջո՝ աշխատավարձի  
չափը կախման մեջ է կլիմայից:

Աշխարհագրական դետերմինիզմի ներկայացուցիչները (Կ.  
Ռիտտեր, է. Ռեկլյու, Լ. Մեյնիկով և ուրիշներ) կլիմայի փո-  
խարեն մարդկային հասարակության զարգացումը կապում  
էին ամբողջ լանդշաֆտի հետ, ոչինչ չավելացնելով Մոնտեսք-  
յոյի տեսությունը: Դետերմինիստները ճգնում էին ապացու-  
ցել, որ մարդկանց ապրելակերպը, հասարակական հարաբե-  
րությունները մեկընդմիջտ կանխորոշված են բնության կող-  
մից: Ստացվում է, որ սոցիալական անհավասարությունը աշ-  
խարհագրական միջավայրի արգասիք է, և այն փոխել հնա-  
րավոր չէ:

Աշխարհագրական դետերմինիստները 19-րդ դարի վերջին  
պնդում էին, որ աշխարհագրական միջավայրը վճռական դեր  
է խաղում մարդկային հասարակության ներքին զարգացման  
գործում, իսկ 20-րդ դարի առաջին կեսին արդեն, շեշտը դըր-  
վում էր պետությունների արտաքին քաղաքականության վրա,  
սրն էլ կանխորոշված է բնության կողմից: Աշխարհագրա-  
կան դետերմինիզմից ծնվեց երկրաքաղաքականությունը (գեո-

պոլիտիկան)՝ քաղաքական երևույթների աշխարհագրական մեկնարանման «տեսությունը»:

Աշխարհագրական միջավայրի դերի գնահատման մյուս ուղղությունը թերագնահատում է աշխարհագրական միջավայրի դերը, գտնելով, որ հասարակության զարգացումը միջավայրից կախված չէ: Սա էլ մյուս ծայրահեղությունն է՝ աշխարհագրական նիհիլիզմը, որը նույնքան վնասակար է, որքան դետերմինիզմը:

Միայն դիալեկտիկական մատերիալիզմն է, որ աշխարհագրական միջավայրին տալիս է իրեն պատշաճ դերը հասարակության զարգացման մեջ: Աշխարհագրական միջավայրը հասարակական կյանքի զարգացմանը նպաստում է կամ խանգարում: Հասարակության զարգացման գործում նա չէ՝ որոշիչը: Վճռականը արտադրության եղանակն է, որն ընդգրկում է թե՛ արտադրողական ուժերը, թե՛ մարդկանց արտադրական հարաբերությունները: Արտադրությունը փոփոխվում է և իր հետ փոխում է հասարակական կարգը: Հասարակությունը բնությունից վերցնում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի, նյութական բարիքների ստեղծման համար: Առանց աշխարհագրական միջավայրի հասարակությունը գոյություն ունենալ չի կարող: Միևնույն ժամանակ աշխարհագրական միջավայրը չի կարող պատճառ լինել հասարակական կյանքի արմատական փոփոխման համար: Հասարակական կյանքի փոփոխությունները տեղի են ունենում շատ արագ, մինչդեռ բնությունը փոխվում է շատ դանդաղ ու աննկատ:

Աշխարհագրական միջավայրը տարբեր ձևով է ազդում զարգացման տարբեր մակարդակ ունեցող հասարակության վրա: Տեխնիկայի բացակայության պայմաններում մարդը բնությունից վերցնում էր այն, ինչ անմիջականորեն մատչելի էր: Այժմ, հզոր տեխնիկայի դարում, առաջնորդում անմատչելի նավթային հարստությունները դուրս են բերվում մի քանի կիլոմետր խորությունից, էլեկտրական էներգիան հաղորդվում է հազարավոր կիլոմետրեր, օվկիանոսային հարստությունները մատչելի են դառնում մարդուն, արդեն օգտագործվում է ատոմի խորքում թաքնված էներգիան և ապագայում տիրապետող է դառնալու այն:

Հասարակութիւնը որքան զարգանում է, մարդն այնքան անկախ է դառնում տարերային աղետների նկատմամբ: Միևնույն ժամանակ աշխարհագրական միջավայրի հետ ունեցած նրա կապերը ընդարձակվում են: Այսպիսով, աշխարհագրական միջավայրը ոչ մի դեպքում չի կարող որոշել հասարակութեան զարգացումը. հասարակութիւնն իր հերթին միջավայրից անկախ գոյութիւն ունենալ չի կարող: V

✓ Մարդկային հասարակութեան ներգործութիւնը աշխարհագրական միջավայրի վրա «մարդ-բնութիւն» փոխհարաբերութեան երկրորդ կողմն է: Մարդկութեան զարգացման տարբեր փուլերում մարդու ազդեցութիւնը բնութեան վրա տարբեր չափեր է ընդունել: Կա մեկ ընդհանուր միտում՝ որքան արտադրութեան եղանակը կատարելագործվում է, այնքան մարդու ազդեցութիւնը բնութեան վրա մեծանում է: Այժմ երկրի ընդերքից հանվում է միլիոնավոր տոննաներով քարածուխ, նավթ, երկաթ, գունավոր մետաղներ, ամեն տարի մարդը վարում է 3 մլրդ մ<sup>3</sup> վարելահող, օգտագործում է մոտ 5 հազար կմ<sup>3</sup> ջուր, փոխում է գետերի ուղղութիւնը, ոռոգում է միլիոնավոր քառ կմ կիսաանապատներ ու անապատներ, շորացնում է ճահիճներ, տնկում է անտառներ: Մարդը կարողացել է ստեղծել օգտակար բույսերի ու կենդանիների նոր տեսակներ, արմատապես և անդարձելիորեն փոխելով լանդշաֆտները՝ ստեղծել է վիթխարի քաղաքներ: Վերը նշված բոլոր կարգի փոփոխութիւններն ու ազդեցութիւնները աճի շատ մեծ տեմպեր ունեն:

Փամանակակից գիտատեխնիկական առաջընթացն իր հետ բերում է նաև մի շարք նեղատիվ երևույթներ, որոնք անխուսափելի են: Աշխարհագրական թաղանթը կրում է այնպիսի ազդեցութեաններ, որոնց հետևանքները երբեմն անդարձելի փոփոխութեաններ են առաջացնում և կարող են խախտել բնութեան հավասարակշռութեանը: Քննարկենք դրանցից մի քանիսը: V

Մարդը և երկրակեղևը Մարդն իր աշխատանքային գործունեութեամբ ծավալում է աշխարհագրական միջավայրում. մարդու ազդեցութեամբ ուղիների ձևերը փոխվում են, առաջանում են անթրոպոգեն (մարդածին) ձևեր: Սրինակ, Գանեցիկի առաջանում անարդյունավետ, հանքից դուրս բերված գրա-

տարկ» ապարները կուտակում են հսկայական քուրների ձևով: Արեգակի ճառագայթների տակ ապարը շորանում է, փշրվում, քամու դեպքում թանձր փոշի է բարձրանում: Ողջի գետի ավազանում, Ղափանի և Քաջարանի պղնձա-մոլիբդենային հանքերի շրջանում անարդյունավետ ապարների թափվածքները մեծ տարածություն են գրավում և սելավների առաջացման լուրջ վտանգ են ներկայացնում: Նույն գետի ավազանում կամ վտակների վրա կառուցվել են «պոշապահեստներ», որոնք ևս մարդածին ձևեր են և կարող են սելավներին կոշտ նյութ տալ: Լեռնային երկրներում հողատարածությունները նպատակային օգտագործելու նպատակով լեռնալանջերին ստեղծում են դարավանդներ: Ճանապարհներ կառուցելիս կտրում են լանջերի շատ հատվածներ և վերին մասերի փրկորուն նստվածքների ճնշման տակ լանջասահք (դեֆլուկցիա) է առաջանում: Քաղաքներ ու բնակավայրեր կառուցելիս օբեկտի անհարթությունները համահարթվում են և այլն:

Տեխնիկայի զարգացման շնորհիվ մարդը թափանցել է քարոլորտ. փորում է թունելներ, հանքահորեր, հորատանցքեր: Խոշոր կառույցների՝ քաղաքների, ջրամբարների ծանրության տակ երկրակեղևի այդ հատվածը կքվում է: Հանքահորերից դուրս բերած նյութերի տեղը մնում են դատարկ տարածություններ, շատ հաճախ դրանց առաստաղը փլվում է, տեղիք տալով ավերածությունների: Բաքվի նավթահանքերի շահագործման հետևանքով երկրի մակերևույթն իջնում է: Մարդկային գործունեության հետևանքով սողանքային երեփույթներն աշխուժանում են:

Մեծ է մարդածին ազդեցությունը հողի և ընդհանրապես, երկրի մակերևույթի էրոզիայի պրոցեսում: Հողը փխրունացնելու դեպքում այն ավելի մատչելի է դառնում ինչպես ջրային, այնպես էլ հողային էրոզիային: Երբ լեռնալանջը վարում են թեթուլթյան ուղղությամբ, յուրաքանչյուր սկոս անձրևաչրի համար հարմար ուղի է դառնում, և մանրահողը արագությամբ լվացվում է, լեռնալանջերն արագ մերկանում են, առաջանում են ձորակներ և էրոզիոն այլ ձևեր, /

Մարդը և մթնոլորտը Մթնոլորտը բնական վիճակում ունի որոշակի կազմ, բայց մարդու գործունեության հետևանքով զգալի չափով փոփոխվում է, և դա այժմ շատ լուրջ վտանգ

է ներկայացնում: Այժմ աշխարհում այրում են մոտ 10 մլրդ տ պայմանական վառելանյութ, ընդ որում յուրաքանչյուր 15 տարին մեկ արտադրական կարողությունները կրկնապատկվում են: Արդյունաբերությունը յուրաքանչյուր տարի մըթնոլորտ բաց է թողնում 2 մլրդ տ օդազուլ (աէրոզուլ):

Մթնոլորտն աղտոտող աղբյուրներից են՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, ջեռուցիչները, գյուղատնտեսությունը, անտառային հրդեհները, հրաբխային երևույթները, տիեզերական փոշին, ջրավազանների ակիքավորման պրոցեսները:

Մարդածին աղտոտիչների մեջ տրանսպորտը առաջին տեղում է: Համաաշխարհային ավտոպարկն այժմ ունի ավելի քան 300 մլն ավտոմեքենա և մթնոլորտ է արտանետում տարեկան ավելի քան 60 մլն տ ածխաջրածիններ, 260 մլն տ շմուլ գազը ԱՄՆ-ում 2 շնչին մեկ ավտոմեքենա է ընկնում, և այդ երկրում մթնոլորտը ամենից աղտոտվածն է:

Եեկ ինքնաթիռը 1000 կմ տարածության վրա ծախսում է այնքան թթվածին, որքան մարդը մեկ տարվա ընթացքում: Մթնոլորտի աղտոտման մեջ մեծ է հատկապես մետաղաձուլական և քիմիական գործարանների բաժինը: Շմուլ գազի (CO) միայն 1/3 մասն է տալիս բնությունը, 2/3-ը ստացվում է մարդու գործունեությունից: Շմուլ գազը, նրա ածանցյալները մթնոլորտում մարդու համար թունավոր են: Ընկնելով օրգանիզմի մեջ՝ այդ գազը խլում է արյան թթվածինը, առաջացնում է կարբոքսիհեմոգլոբին, և մարդը շուտով մահանում է: Մթնոլորտում գոյություն ունեցող 140 մլրդ տ ածխաթթու գազի 10%-ը մարդածին է, որը հարաճուն կերպով ավելանում է:

Մի շարք ածխաջրածիններ Արեգակի լույսի ազդեցությամբ օհակցիայի մեջ են մտնում ազոտի օքսիդների հետ. դրա հետևանքով անջատվում են գազեր, որոնք պարունակում են O<sub>3</sub> (օզոնիդներ), դրանք ավելի թունավոր են, քան CO-ն:

Արդյունաբերության կողմից մթնոլորտ նետվող ծծմբային գազը (SO<sub>2</sub>) թունավոր է: Եթե մեկ խորանարդ մետր օդում պարունակվում է 400—500 մգ SO<sub>2</sub>, ապա այդ օդն արդեն թունավոր է թե մարդկանց և թե բուսական ու կենդանական օրգանիզմների համար: Շատ հաճախ ծծմբային գազի հետ

մեկտեղ մթնոլորտ է արտանետվում ծծմբային անհիդրիդ ( $\text{SO}_3$ ), որն արագությամբ վերածվում է ծծմբական թթվի:

Քիմիական արդյունաբերությունը մթնոլորտ է արտանետում քլոր, ֆտոր, ամիակ, օդազոլեր, ծուխ, ցեմենտի փոշի (տարեկան 120 մլն տ) և այլն: Մթնոլորտ նետվող տարատեսակ փոշու տարեկան քանակությունը կազմում է մոտ 3 մլրդ տ, որը 2000 թվին կարող է կրկնապատկվել:

Մթնոլորտի աղտոտվածությունը իր կնիքն է դնում կլիմայի վրա: Ածխածին գազը առաջացնում է ջերմոցային էֆեկտ, և նրա ավելացումը տանում է դեպի տաքացում: Վերջին 100 տարում  $\text{CO}_2$ -ի քանակը ավելացել է 10%-ով, և 2000 թվին երկրի ջերմաստիճանը կբարձրանա  $0,5^\circ$ -ով: Մըթնոլորտ է արտանետվում 200—400 մլն տ օդազուլ, որը փոքրացնում է Արեգակի ճառագայթման լարվածությունը, և Երկրի ջերմաստիճանն իջնում է: Մթնոլորտի ջերմային ուժի վրա ազդում են նաև վառելիքից արտադրված ջերմությունը և էլեկտրական էներգիայի փոխարկումը ջերմային էներգիայի: Ջերմային ու ատոմային էլեկտրակայաններում օգտակար գործողության գործակիցը 20—35% է: Այստեղ ջերմության զգալի մասը հաղորդվում է շրջապատին, և ստեղծվում է մըթնոլորտի ջերմային աղտոտում: Մեծ քաղաքներում ջերմաստիճանը մի քանի աստիճանով ավելի բարձր է, քան շրջակա տարածություններում, որը մարդու գործունեության արգասիքն է: Նշված բոլոր հանգամանքները, անշուշտ, գործոններ են, որոնք ազդում են Երկրի կլիմաների վրա:

Մթնոլորտի աղտոտումը ամենից ավելի ազդում է բուսականության վրա, թուլանում է ֆոտոսինթեզի ակտիվությունը, խանգարվում է ֆերմենտատիվ պրոցեսների համաձայնեցումը, փոքրանում է երաշտադիմացկունությունը, ցրտադիմացկունությունը և այլն: Բաւական է ասել, որ եթե մըթնոլորտում 1 միլիոն մասի մեջ ծծմբային անհիդրիդի 0,01—0,02 մաս գոյություն ունի, ապա քարաքոսները տնչանում են:

Կենդանական աշխարհը և մարդիկ նույնպես մթնոլորտի աղտոտվածությունից շատ են տուժում. առաջանում են շրնչառական օրգանների հիվանդություններ, թունավորումներ: Աղտոտվածության դեմ պայքարելու համար մշակում են վնա-

սակար տարրերի սահմանային կուտակվածությունների գործակիցներ (ՍԿԳ) և որոշակի նորմաներ, բնակավայրերի մթնոլորտի աղտոտվածության աստիճանին հետևելու համար:

Վայրի կլիմայական պայմանները նպաստում են կամ խանգարում մթնոլորտի աղտոտման երևույթին: Ամենից մեծ աղտոտվածությունն նկատվում է անտիցիկլոնային եղանակի դեպքում: Արարատյան դաշտում, մասնավորապես Երևանում, ձմռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա): Սառը օդը, լցվելով գոգավորության մեջ, չի շարժվում, գործարանների ծուխն ու մթնոլորտը աղտոտող բոլոր բաղադրիչները մնում են տեղում, մեծացնում են աղտոտման աստիճանը:

Մթնոլորտի աղտոտման պայմաններում առատ տեղումները լվանում են վնասակար, թունավոր նյութերը:

Մթնոլորտի աղտոտվածությունն ամենից մեծ է խոշոր քաղաքներում (նորմայից 150 անգամից ավել), իսկ գյուղական վայրերում ընդամենը 10 անգամ ավել, քան օվկիանոսների վրա: Ամենից մեծ աղտոտվածությամբ աչքի են ընկնում ԱՄՆ-ը, ԳՖՀ-ն, Ճապոնիան:

Արդյունաբերական մեծ քաղաքներում գործարանների ծուխը և ավտոմեքենաներից արտազատված գազերը խիստ աղտոտում են միջավայրը, առաջանում է սմոգ: Ելնելով աշխարհագրական պայմաններից՝ 3. Գ. Երմակովը (1973) առանձնացնում է սմոգի երեք տիպ՝ 1. սառցային, որ հատուկ է մերձբևեռային և բևեռային երկրներին, 2. լոնդոնյան, երբ ցածր ջերմաստիճանի և առատ խոնավության պայմաններում վառելիքի այրումից մթնոլորտ նետվող վնասակար ու թունավոր նյութերը մեծ կուտակում են տալիս, նկատվում են մահացության դեպքեր: Նման տիպի սմոգ հաճախ է լինում Արևմտյան Եվրոպայի քաղաքներում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում (աշնանը և ձմռանը), 3. լուսաքիմիական (քիմիական) սմոգի այս տիպը առաջանում է մեծ մասամբ մերձարևադարձային երկրներում, իսկ բարեխառն երկրներում՝ ամռանը, տրանսպորտի ու արդյունաբերության կողմից արտանետված գազերից: Լուսաքիմիական ռեակցիաների ժամանակ առաջանում են նոր թունավոր միացություններ (ֆոտոօքսիդանտներ): Այսպիսի սմոգ լինում է Լոս-Անջելեսում:

Մթնոլորտն ունի ինքնամաքրման ունակություն: Փոշու ալն մասնիկները, որոնք 10 միկրոնից մեծ են, օդի մեջ բարձրանում են ոչ ավելի քան մի քանի հարյուր մետր և նստում են աղտոտող աղբյուրից ոչ հեռու: 4—10 միկրոն մեծության մասնիկները օդի տուրբուլենտականության շնորհիվ բարձրանում են մինչև 1 կմ և, ընկնելով օդային հոսանքների մեջ, տեղափոխվում են հազարավոր կիլոմետրեր: ԴՊՏ փոշին հասել է Անտարկտիդա: 3—4 միկրոնի մասնիկները շատ կայուն են, անձրևների միջոցով դժվար են լվացվում: 1 միկրոնի մեծության մասնիկները շարժվում են գազանման և հեշտությամբ մտնելով թոքերը՝ կուտակվում են:

Մթնոլորտում գտնվող ածխաջրածինները, ընկնելով օզոնի շերտը, արագությամբ օքսիդանում են: Օզոնի շերտը ոչ միայն պաշտպանում է օրգանիզմներին ուլտրամանուշակագույն ճառագայթների մահացու ազդեցությունից, այլև մաքրում է ստորին ոլորտը որոշ վնասակար միացություններից: Ստորին ոլորտում էլ ինքնամաքրման երևույթներ են կատարվում: Օրինակ՝  $\text{CO}_2$  գազի կյանքի տևողությունը շորս ամիս է, տաք երկրներում այն արագ միանում է թթվածնին:  $\text{CO}$ -ի և  $\text{CO}_2$ -ի մի մասը լուծվում է օվկիանոսի ջրի մեջ, հետագայում առաջացնում է կարբոնատներ և այլ միացություններ: Ցամաքի վրա բազմաթիվ մանրօրգանիզմներ կարողանում են կլանել մթնոլորտում գտնվող վնասակար տարրերն ու միացությունները: Սակայն մթնոլորտի ինքնամաքրման ունակություններն անսահման չեն: 20-րդ դարում աղտոտման պրոցեսն այնքան է մեծացել, որ ինքնամաքրման մեխանիզմը անզոր է դառնում:

Հաշվարկները ցույց են տալիս, որ օրինակ, այրման պրոցեսների վրա ծախսվող թթվածնի քանակը հարյուրավոր անգամ ավելի է, քան ֆոտոսինթեզից ստացվող թթվածնի քանակն է: Այս և նման հանգամանքները այժմ արդեն անհանդրատացնում են մարդկությանը: Մթնոլորտում թթվածնի պակասը կարող է հանգեցնել շատ անցանկալի և անդարձել երևույթների: Արդի գիտության խնդիրն է մշակել միջոցառումներ՝ մթնոլորտում կատարվող այդ կարգի փոփոխությունների դեմ:

Ժամանակակից գիտությունը մշակել է մթնոլորտի աղ-

տոտվածութիւնն դեմ պայքարի միջոցառումներ, որոնք բա-  
ժանվում են երեք խմբի՝

1. Աղտոտողների թիվը պակասեցնել:

2. Պաշտպանել մթնոլորտը աղտոտումից՝ վնասակար  
նստվածքների ցրման, շեղաբացման ճանապարհով:

3. Միջոցառումներ, որոնք ուղղված են խելացի ձևով տե-  
ղաբաշխելու աղտոտող ձեռնարկութիւններն ու աղբյուրները:  
Վերջին ժամանակներում մթնոլորտի անաղարտութիւնը  
պահպանելու ուղղութիւնով որոշակի աշխատանք է կատար-  
ված (ոնգոնում, Բուդապեշտում, Լոս-Անջելեսում, Բիրմինգ-  
համում, Բրոսելում և այլուր: Սովետական Հայաստանում  
օդի ամենամեծ աղտոտվածութիւնն նկատվում է Երևանում,  
Կիրովականում, Ալավերդում: Այժմ կոնկրետ միջոցառումներ  
են մշակվում այդ քաղաքների օդը մաքրելու համար:

Մարդը և ջրվորը Մարդը շատ ջուր է օգտագործում:  
Ինչպես բնութիւնն մյուս բաղադրիչները, այն ևս աղտոտվում  
է երբեմն այն աստիճան, որ անպետք է դառնում հետագա  
օգտագործման համար: Պատահում են դեպքեր, երբ ջուրն  
այնքան է թունավորվում արդյունաբերական թափոններով,  
որ գետի մեջ լողանալը մահացու է դառնում:

Այժմ բոլոր երկրներում միասին վերցրած տարեկան օգ-  
տագործում են մոտ 5 հազ. կմ<sup>3</sup> ջուր: Զրի ամենախոշոր սպա-  
ռոտը գյուղատնտեսութիւնն է, այստեղ օգտագործվող 3 հա-  
զար կմ<sup>3</sup> ջուրն ամբողջովին գոլորշանում է: Կոմունալ տնտե-  
սութիւնն մեջ ամեն տարի օգտագործվում է մոտ 1,5 հազ.  
կմ<sup>3</sup>, որի 20% -ը անվերադարձ կորչում է, իսկ 1 հազ. կմ<sup>3</sup>  
ջուրը աշխարհագրական միջավայր է վերադարձվում կեղտա-  
ջրերի ձևով: Արդյունաբերութիւնը ևս մեծ քանակութիւնով  
(500 կմ<sup>3</sup>) ջուր է օգտագործում, որի մեծ մասը նորից աշ-  
խարհագրական միջավայր մուտք է գործում կեղտոտված ձե-  
վով (360 կմ<sup>3</sup>), որի վնասագործման համար անհրաժեշտ է  
առնվազն 12—15 անգամ ավելի ջուր: Արդյունաբերութիւն  
քարագցման արդի տեմպերի պայմաններում 2000 թվականին  
կեղտաջրերի քանակը կբազմապատկվի:

Այն գետերն ու լճերը, որոնք 3—4 տասնամյակ առաջ մա-  
քուք էին, ներկայումս աղտոտվածութիւնն պատճառով ան-  
օգտագործելի են դարձել:

Արդյունաբերութիւնը գետերի մեջ է բաց թողնում այսպէս կոչված դետերգենտներ—սինթետիկ, մակերևութային ակտիվ թունավոր նյութեր, որոնք դժվարութեամբ են քայքայվում ու երկար ժամանակ պահպանվում են՝ առաջացնելով փրփուրի հաստ շերտ: Սրանք օրգանական աշխարհի համար թունավոր են: Արդյունաբերական թափոնները պարունակում են նաև ծանր մետաղներ՝ սնդիկ, կապար, ցինկ, պղինձ, քրոմ, մանգան և այլն: Այդ թափոնների մեջ վան նաև ռադիոակտիվ տարրեր, թունաքիմիկատներ, պետիցիդներ:

Երբ հանքային սննդանյութերի ավելորդ քանակութիւնը հասնում է շճերին, խախտվում է նրանց բնութեան հավասարակշռութիւնը, ուժեղ զարգանում են բուսապլանկտոնը, ինչպես նաև այլ բարձրակարգ օրգանիզմներ: Բուսապլանկտոնի մեռնելուց հետո օրգանական նյութերի օքսիդացման համար պահանջվում է թթվածնի մեծ քանակ, կուտակվում է ծծմբաջրածին: Պայմաններն այնպես են փոխվում, որ լիճն սկսում է «մեռնել»:

XX դարի սկզբում համաշխարհային օվկիանոսը դեռևս անաղարտ էր, այժմ արագորեն աղտոտվում է: Նավթային արդյունաբերութիւնը, նավթատար տրանսպորտը տարեկան 15 մլն տ նավթանյութ է բաց թողնում, և ջրի մակերևույթն ամենուրեք ծածկված է նավթի ու յուղի բարակ շերտով, որը խանգարում է գազափոխանակութեանը, բուսապլանկտոնի աճը կաշկանդվում է, նվազում է թթվածնի արտադրութիւնը: Դա հանգեցնում է մթնոլորտի թթվածնի պակասեցմանը:

Բնական ջրերի անաղարտութեան պահպանումը մարդու համար մեծ նշանակութիւն ունեցող հարց է, այն այժմ կենսական նշանակութիւն է ստացել:

Գոյութիւն ունի կեղտաջրերի մաքրման երեք հիմնական մեթոդ՝ մեխանիկական, քիմիական, կենսաբանական և սըրանց կոմբինացիաները, համադրութիւնները:

Կեղտաջրերի մաքրման պրոբլեմի լուծման եղանակներից մեկը արդյունաբերութեան մեջ տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործումն է, որի շնորհիվ հնարավոր կդառնա կեղտաջրերի օգտագործումը փակ բոլորապտույտի՝ ցիկլի ձևով: Արդյունաբերութեան մեջ պետք է հնարավորին շափ քիչ ջուր օգտագործել, աստիճանաբար անցնել «չոր» արտադրութեան:

Առաջներում 1 ա նավթի մշակման համար օգտագործվում էր 35 մ<sup>3</sup> ջուր, իսկ ժամանակակից նավթավերամշակման գործարաններում՝ 0,4 մ<sup>3</sup>:

Բնական ջրերի խնայողության ճանապարհին մեծ նշանակություն է ստանում ոռոգվող տարածություններում ջրի օգտակար գործողության գործակցի բարձրացումը. շատ դեպքերում այդ գործակիցը 0,4—0,5 է, պետք է հասցնել 0,7—0,8-ի: Դրան կարելի է հասնել ջուրը փակ խողովակներով տեղափոխելու, ավելի կատարելագործված ոռոգման մեթոդներ կիրառելու միջոցով:

Ջրերի նպատակային օգտագործման ճանապարհին կարևոր նշանակություն է ստանում ջրոլորտի մի քանի դժվար յուրացվող օբյեկտների յուրացումը, ինչպես օրինակ քարոլորտում խորադիր արտեզյան ջրերի, սառցադաշտերի ջրի օգտագործումը և այլն:

Ջրոլորտի ամենամեծ զանգվածի՝ օվկիանոսի ջրի օգտագործումը դեռևս շատ սահմանափակ է: 1960 թվականին աշխարհի բոլոր այն սարքերը, որոնք աղազերծում են ծովի ջուրը, տվել են օրական 40 հազ. մ<sup>3</sup> ջուր, 1969 թ.՝ 950 հազ. մ<sup>3</sup>: Առայժմ ծովի ջրի աղազերծումը բայն մասշտաբներ չունի, անհրաժեշտ է կատարելագործել աղազերծման տեխնոլոգիան, իջեցնել ջրի ինքնարժեքը: Ծովի ջրի աղազերծումը մասսայական ու էժան կդառնա կառավարվող ջերմամիջուկային ռեակցիաների յուրացումից հետո, երբ մարդը կունենա շատ էժան էներգիա: —

Մարդը և բուսական աշխարհը Աշխարհագրական միջավայրում մարդն ամենից ուժգին ներգործել է բուսական ծածկույթի վրա: Անցած 300 տարվա ընթացքում աշխարհի անտառների 2/3-ը ոչնչացել է մարդու ձեռքով: Համեմատաբար անաղարտ են մնացել Ամազոնի ավազանի, Արևմտյան և Արեւվելյան Սիբիրի անտառները: Անտառի ոչնչացումը տեղի է ունենում ոչ միայն անտառանյութ ստանալու համար, այլև ցանքատարածություններ ստեղծելու նպատակով: Միջին դարերում Եվրոպայի մեծ մասը անտառածածկ էր, այժմ միայն անտառների պատռուկներ են մնացել:

Ս. Վ. Կալեսնիկը (1955), վկայակոչելով Գ. Մարշին, գրում է, որ 1420 թվականին պորտուգալացիները հայտնաբերեցին

Մադեյրա կղզին, որն այն ժամանակ ամբողջութեամբ անտա-  
ռածածկ էր: Անտառն հրդեհեցին ցանքատարածութիւններ  
ստեղծելու նպատակով: Յոթ տարի շարունակ հրդեհը մոլեգ-  
նում էր, հեռվից կղզին երևում էր որպես հսկա խարույկ, ան-  
տառը լրիվ ոչնչացավ:

Մարդը գիտակցաբար թե՛ անգիտակցաբար ազդում է բու-  
սացենոզների տեսակային կազմի վրա: Սուրբ Հեղինեի կրղ-  
զին հայտնաբերելու տարում՝ 1501 թ., այնտեղ աճում էր բույ-  
սերի 60 տեսակ, այժմ դրանց թիվը հասել է 750-ի: Ավստրա-  
լիայում կակտուսներ չկային, մարդն այնտեղ կակտուս տա-  
րավ, վերջինս բազմանալով շարիք դարձավ այդ աշխարհա-  
մասի համար: Անտառատափաստաններում, տափաստանե-  
րում և այլ լանդշաֆտային զոնաներում բուսականութիւնը  
մարդու ձեռքով ոչնչացել է, նրա տեղը այժմ կուլտուրական  
բույսեր են աճում: Մշակվող հողատարածութիւնները Երկ-  
րագնդի վրա կազմում են 1200 մլն հա, որտեղ մշակում են  
1500 տեսակ բույսեր: Մարդու կողմից ցանվող բույսերի մեծ  
մասը հիբրիդներ են, որոնց մոտ զարգացել են հարմարվա-  
ծութիւն հատկանիշներ:

Բնակչութեան աճին զուգընթաց մեծանում է բուսական  
սննդի պահանջը: Խոպան տարածութիւններ քիչ են մնացել,  
ուստի բուսական սննդի ավելացումը պետք է տեղի ունենա  
կուլտուրական բույսերի արդյունաբերութեան բարձրացման  
ճանապարհով:

Մարդը և կենդանական աշխարհը Մարդը կենդանական  
աշխարհից օգտվում է սնունդ, հագուստ ստանալու համար և  
կենդանիները օգտագործում է որպես տրանսպորտային մի-  
ջոց, իսկ մանրօրգանիզմները՝ թթվեցման, մակարդման, քայ-  
քայման և այլ նպատակներով:

Կենդանական աշխարհի շատ տեսակներ մարդու կողմից  
ոչնչացել են: Գեղամա լեռներում և քարձր լեռնային այլ  
զանգվածների վրա պահպանված ժայռապատկերներում կան  
շատ կենդանիների պատկերներ, որոնց բնորոշները վերացել  
են Հայկական լեռնաշխարհում: Ամերիկայի յուրացման ժա-  
մանակաշրջանում այնտեղ ապրում էին մոտ 20 մլն զուրբեր-  
անխնա որսի հետևանքով այդ կենդանիները իսպառ վերաց-  
վեցին, մի կերպ պահպանված 2—3 տասնյակ զուրբեր պաշտ-  
294

պանութեան տակ առնվեցին, և այժմ դրանք բազմանում են մարդու հսկողութեամբ: Նույնը կարելի է ասել եվրոպական ու կովկասյան գուբերի մասին:

- ՍՍՀՄ-ում ոչնչացման եզրին էին հասել իշայծյամը, սամուրը և շատ այլ կենդանիներ. պետութեան միջամտութեամբ դրանք այժմ քաղմանում են:

Մարդը երբեմն մեկ աշխարհամասից մյուսն է տանում կենդանիներ՝ առանց հետեանքների մասին մտածելու: Օրինակ, ճագարները Ավստրալիայում շարիք դարձան: Մտածված տեղափոխությունը, անշուշտ, դրական արդյունք է տալիս: Օրինակ, սիգ ձուկը Սևան է բերվել էադոզա և Չուդ լճերից, հաջողութեամբ բազմանում է և արդյունագործական նշանակություն ունի: Սևանի իշխանը Իսիկ-Կուլ լճում շատ նպաստավոր պայմաններ գտավ, և առանձին հատեր կշռում են 14—16 կգ:

Բնակչութեան աճին գուզընթաց վայրի կենդանիների քանակը պակասում է, և շատ երկրներում վայրի կենդանական աշխարհի պահպանութեան համար օրենսդրական միջոցառումներ են կիրառվում, կազմվել է «Կարմիր գիրք», որտեղ գրանցված են այն կենդանիները, որոնց որսն արգելված է, և այդ կենդանիները պետութեան պաշտպանութեան տակ են առնված: Կենդանիների ու բույսերի պահպանութեան ու պաշտպանութեան լավագույն օջախները ազգային պարկերն ու արգելոցներն են:

Մարդը նորքարեդարում ընտելացրեց մի շարք կենդանիներ, և նրանց խաչաձևումից ստացվել են խոշոր եղջերավորների մինչև 400, ոչխարների՝ 250 տեսակ, 150 տեսակի ձիեր, շների 350 տեսակներ, հավերի 100 տեսակ և այլն:

Քնտանի կենդանիների մեծ բազմազանությունը խաչաձևման արգասիք է: Ելնելով բնակլիմայական պայմաններից ու կենդանիների արդյունավետությունից՝ ստանում են այնպիսի հիբրիդներ, որոնք և լավ են հարմարվում աշխարհագրական միջավայրին և բարձր արդյունավետություն ունեն:

Մարդը և լանդշաֆտները Մարդն ապրում է լանդշաֆտում, ուստի պետք է հետևի այդ միջավայրի պահպանութեանը: Շատ դեպքում տնտեսական գործունեության հետեանքով խախտվում է լանդշաֆտների էկոլոգիական ու դինամիկ հա-

վասարակշռութիւնը՝ Բազմաթիւ օրինակներ ցույց են տալիս, որ շափոց ավել ծանրաբեռնված լանդշաֆտները կորցրել են իրենց հավասարակշիռ վիճակը: Գրա օրինակներից մեկը Սևանն է, նրա ավազանը: Ըճի մակարդակը 18 մ իջեցնելու հետևանքով խախտվեց բնութիւն հավասարակշռութիւնը, ջրի զանգվածի (դարավոր պաշարների) փոքրանալու հետևանքով՝ ջերմային պաշարները ևս փոքրացան, լիճն այժմ ամեն տարի սառցակալում է, որի հետևանքով գազափոխանակութիւնը ևս խախտվեց, առաջացավ թթվածնի սով, որն էլ իր հերթին կործանարար է իշխան ձկան համար: Ջրի շերտի նվազելու պատճառով Մեծ Սևանի հատակը Արեգակի կողմից լուսավորվում է, որի հետևանքով նպաստավոր պայմաններ են ստեղծվել ջրիմուռների զարգացման համար, և լիճը գնում է դեպի էվտրոֆացում: Որպեսզի մասամբ վերականգնվի Սևանի հավասարակշռութիւնը, անհրաժեշտ է առաջին հերթին բարձրացնել ըճի մակարդակը: Ներկայումս գործում է Արփա—Սևան ջրատարը, որը տարեկան տեղափոխում է 250 մլն մ<sup>3</sup> ջուր, որը սակայն ըճի մակարդակը կարող է պահել հաստատուն նիշի վրա: Մակարդակի հետագա բարձրացման նպատակով կառուցվում է Որոտան—Սևան ջրատարը, և մի շարք այլ միջոցառումներ են մշակվում:

Մարդու կողմից լանդշաֆտում կատարված յուրաքանչյուր փոփոխութիւն ունենում է իր ազդեցութիւնը: Եթե դեկավարող գործոնն է խախտվում, ապա լանդշաֆտն ամփոփումի կարող է փոխվել: Երբ անհրաժեշտութիւն կա ներգործել բնութիւն վրա, ապա ամենամանրակրկիտ ձևով պետք է ուսումնասիրվեն ներգործող ազդակները, որպեսզի կանխագուշակվեն լանդշաֆտի հնարավոր այն փոփոխութիւնները, որոնք կարող են ունենալ անուղղելի ու վնասակար հետևանքներ: Հյուսիսային Ամերիկայի մեծ լճերում մի ժամանակ միլիոնավոր տոննաներով ձուկ էին որսում, քնական պայմաններում ձուկը հաջողութեամբ բազմանում էր: Երբ կառուցեցին Նիագարա ջրվեժը շրջանցող նավարկելի ջրանցք, ոչ մեկի մտքով չէր անցնում, որ դրանով ձուկը կանհետանա: Պարզվեց, որ Օնտարիո լճում ապրում են այսպես կոչվող քարադայցներ, որոնք խժռում են ձկնկիթը: Մինչև ջրանցքի կառուցումը նրանք չէին կարող հաղթահարել Նիագարա ջրը-

վեժը, իսկ ջրանցքով բարձրացան դեպի էրի լիճը, այնտեղից մյուս ըճերը և ոչնչացրին ձկներին: Այդպիսի օրինակները բազմաթիվ են:

Մի ժամանակ ակտիվ պայքար էր ծավալվել գայլերի դեմ, ամենուրեք նրանց ոչնչացնում էին: Պարզվեց, որ դրանից կենդանական աշխարհը տուժում է: Տունդրայում եղջերունների մեջ հիվանդութուններ տարածվեցին: Պատճառն այն է, որ գայլերի համար ավելի մատչելի էին թույլ ու հիվանդ եղջերունները, որոնց և ոչնչացնում էին: Այժմ շատ երկրներում վայրի կենդանական աշխարհը առողջացնելու նպատակով գայլեր են ներմուծում:

Վերը շարադրածից ակնառու է դառնում այն, որ աշխարհագրական թաղանթում բոլոր բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց, և, փոխելով մի բաղադրիչը, կարող է փոխվել բնությունն ամբողջությամբ:

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՐԼԵՄԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ-ՌԱՅԻՈՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Աշխարհագրական թաղանթի նյութական ու էներգետիկ այն բաղադրիչները, որոնք օգտագործվում են մարդու կողմից, կոչվում են քնական ռեսուրսներ (քնաղբյուրներ): Այդ ռեսուրսների շրջանակը գիտության ու տեխնիկայի առաջընթացի շնորհիվ անընդհատ լայնանում է: Քարածուխը դասվեց էներգետիկ ռեսուրսների շարքը կապիտալիզմի դարաշրջանում. ատոմային էներգիայի օգտագործման գյուտից հետո միայն ուրանը դարձավ շատ և կարևոր քնական ռեսուրս: Եթե հնում մարդիկ օգտագործում էին Մենդելեևի աղյուսակի տարրերից 18-ը, 18-րդ դարում՝ 29, 19-րդ դարում՝ 54, ընթացիկ դարի կեսերին արդեն՝ 80:

Աշխարհագրական միջավայրում քնական ռեսուրսները շատ են և բաժանվում են երեք հիմնական խմբի՝ անսպառ, վերականգնելի և անվերականգնելի քնապաշարներ: Անսպառ են Արեգակի էներգիան, քամու, մակնիթացային էներգիան և այլն: Վերականգնելի են կոչվում այն բոլոր ռեսուրսները, որոնք օգտագործման ոլորտում նորից առաջանում են և շին սպառվում (օրինակ՝ գետերի ջուրը, բուսական ու կենդանական օրգանիզմները, ինքնանիստ աղը և այլն): Անվերականգնելի են

այն ռեսուրսները, որոնք մեկ անգամ օգտագործելուց հետո սպառվում են, այլևս չեն վերականգնվում (օրինակ՝ քարածուխը, երկաթահանքը, գունապտոր մետաղների հանքանյութերը)։

Արտադրության ընդլայնման շնորհիվ՝ բնական ռեսուրսներից շատերը այնպիսի թափով են օգտագործվում, որ շուտով սպառվելու են։ 20-րդ դարում աշխարհի մի շարք հանքավայրեր արդեն սպառվել են։ Նավթային ռեսուրսներն աշխարհում 1980 թվականին կազմում էին 70—80 մլրդ տ, ազդանշաններ կան, որ դրանք 21-րդ դարում կսպառվեն, ուստի մարդը պետք է գտնի էներգիայի ուրիշ աղբյուրներ։

Բնական ռեսուրսները ըստ բնույթի քաժանվում են մի քանի խմբերի՝

1. Էներգետիկ ռեսուրսների խմբին են պատկանում արեգակնային, ջրային, հողմային, մակընթացային, ջրավազանների աշխարհում, վառելիքային (քարածուխ, նավթ, գազ, փայտ, տորֆ, այրվող թերթաքար), ջերմամիջուկային, Ծրկրի ներքին էներգիան։

2. Հանքային ռեսուրսները մետաղային, ոչ մետաղային հանքային հարստությունները, շինանյութերն են։

3. Կլիմայական ռեսուրսները ջերմային, խոնավության, կուրորտային, հանգստի կազմակերպման (ռեկրեացիոն) ռեսուրսներն են։

4. Զրային ռեսուրսները օվկիանոսների ու ծովերի, գետերի, լճերի, ստորերկրյա, հանքային, սառցադաշտերի, տաք աղբյուրների, գեյզերների ջրերն են։

5. Հողային ռեսուրսները հողերի տարատեսակներն են։

6. Քուսական ռեսուրսները անտառներն են, մարգագետինները և այլ բուսացենոզներ, մշակովի կուլտուրաները։

7. Կենդանական ռեսուրսները կենդանացենոզներն են ու ընտանի կենդանիները։

Ցուրաքանչյուր երկրի զարգացման մակարդակն այժմ որոշվում է էներգետիկ ռեսուրսների օգտագործման չափով։ Էներգիայի աղբյուրները քաղմազան են։ Առայժմ աշխարհում նրանց մեջ առաջին տեղը գրավում է վառելիքային էներգիան։

Երկրագնդի վրա էներգիայի օգտագործումը տարեցտարի աճում է։ Ըստ Ա. Յ. Արքատովի (1977) այժմ աշխարհում

արտադրվում է տարեկան 9—10 մլրդ ՏՊՎ (տոննա պայմանական վառելիք): 2000 թվականին էներգիայի արտադրությունը կհասնի 16—24 մլրդ ՏՊՎ-ի:

էներգետիկ ուսուրսների համաշխարհային պաշարները, ըստ Արբատովի, հետևյալ պատկերն ունեն (10<sup>12</sup> ՏՊՎ).

Օրգանական վառելիք . . . . . 6—8

Ուրան (ուսուրսներում օգտագործելու համար) . . . 8—25

Մովի ջրի ուրանը . . . . . 7000

Մովաջրի լիթիում (ջերմամիջուկային սինթեզում օգտագործելու համար) . . . 800000

Մովաջրի դեյտերիում (ջերմամիջուկային սինթեզում օգտագործելու համար) . . . 600 000 000

Պոտենցիալ էներգիայի այս պաշարները առայժմ լրիվ օգտագործվել չեն կարող. մասսայական շահերով օգտագործվում է միայն օրգանական վառելիքը, ուրանի օգտագործումը նոր է սկսվել:

Ա ղ յ ու ս ա կ 10

Ոչ սոցիալիստական աշխարհի վառելիքային պաշարները և հանույթը մլրդ ՏՊՎ (ըստ Բ. Բ. Սիմոնյանի, 1980)

Վառելիք	Պաշարները 1970-ական թթ.	Հանույթը 1970-ական թթ.	Ապահովվածությունը տարիներով
Նավթ	75,3	2,26	33
Քնական գազ	40,6	0,97	42
Քարածուխ	740,0	1,2	617

Իր գոյության ամբողջ ընթացքում մարդկութունը օգտագործել է 80—85 մլրդ ՏՊՎ, որի կեսը՝ վերջին 25 տարում: Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, վառելիքային պաշարները (նավթը և գազը) մեծ հեռանկարներ չունեն: Եթե մինչև 21-րդ դարի սկիզբը էներգիայի այլ աղբյուրներ չգտնվեն, մարդկութունը կկանգնի էներգետիկ լուրջ վտանգի առջև:

Համաշխարհային էներգահաշվեկշռում իշխողը նավթն է: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ 1973 թ. պաշարները 74,3 մլրդ տ է: Վերջին հրկու տասնամյակում նրա հանույթում մեծ թոփշ է նկատվում: Հետագայում գլխավոր տեղերն զբաղեցնելու են

միջոսակաշին էներգիան, նավթը, գազը: Վերջին կես դարում նավթի օգտաւործումը յուրաքանչյուր 14—15 տարում կրկնապատկվում է, հանույթի աճը եռակի ավելին է, քան բնակչության աճը: Նավթի ու գազի արդյունաբերությունը էներգետիկ ճյուղերի մեջ ամենից դինամիկն է:

Եթե 1960-ական թվականներին կոշտ վառելիքի օգտագործումը աճել է 15% -ով, հիդրավլիկ և ատոմային էներգիաներինը՝ 80% -ով, ապա նավթինը՝ 118, իսկ գազինը՝ 130% -ով: Ընդ որում, համաշխարհային էներգետիկայի կենտրոնները զարգացած կապիտալիստական երկրներից տեղափոխվեցին զարգացող երկրները (Մերձավոր և Միջին Արևելք). այստեղ է կապիտալիստական աշխարհի նավթի հետախուզված պաշարների 60—65% -ը: 1980 թ. աշխարհում արտադրվել է ավելի քան 3 մլրդ տ նավթ. նման տեմպերով օգտագործման դեպքում 3—5 տասնամյակ անց ածխաջրածինները կսպառվեն:

Քարածուխը ամենից մեծ պաշարներ ունեցող վառելիքն է: Հատկապես արժեքավոր է վերին պալեոզոյան (կարբոն) քարածուխը՝ անտրացիտը, որի պաշարները կազմում են 1077 մլրդ տ: 20-րդ դարի առաջին քառորդում քարածուխը և փայտը ամենից ավելի գործածական վառելանյութերն էին (90%), առայժմ ոչ ավելի է, քան 30%: Քարածխի օգտագործումն աճում է ջերմակայաններում, կոքսաքիմիական արդյունաբերության մեջ և սինթետիկ, հեղուկ վառելանյութեր ստանալու պրոցեսում:

Վառելիքային ռեսուրսների մեջ այրվող թերթաքարերի, տորֆի, փայտի դերը մեծ չէ: Դրանք ունեն տեղական նշանակություն: Օրինակ, տորֆ օգտագործվում է միայն ՍՍՀՄ-ում:

էներգետիկ ռեսուրսների մեջ արեգակնային էներգիան, մեծ պոտենցիալ ունենալով հանդերձ ( $6,4 \cdot 10^{17}$  կվտ ժ), դեռևս քիչ է օգտագործվում: Աշխարհի շատ երկրներում ստեղծվել են սարքեր, որոնց օգնութամբ արեգակնային էներգիան օգտագործվում է, սակայն այդ սարքերի հզորությունը փոքր է, դեռևս մասսայական չափով չի օգտագործվում. այդ էներգիայի օգտագործումը դեռևս գտնվում է փորձնական փուլում:

Ըստ արևմտաեվրոպացի մի շարք հեղինակների (Չ. Բաջն-հաուեր, է. Շմակե, 1973), էներգետիկ ռեսուրսների օգտագործումը ՏՊՎ-ով 1977 թ. եղել է՝ 5,8 մլրդ տ, 1980 թ.՝ 10,9

վրդ տ, 2000 թ. կլինի 25,5 վրդ տ, իսկ 2050 թվականին քնակչությունը մեկ տարում կօգտագործի այնքան էներգիա, որքան մինչև այժմ օգտագործվել է էներգիայի գյուտից հետո:

Քամու էներգիան (100 վրդ կվտ) հայտնի է շատ վաղուց և շատ երկրներում այն օգտագործվել է հողմաղացներում: Այժմ արտադրվում են հողմային շարժիչներ, որոնց հզորությունը մեծ չէ: Քամու էներգիայի օգտագործումը նպատակահարմար է այն երկրներում, որտեղ քամին մշտական է:

Վիթխարի շափերի պոտենցիալ էներգիա ունի մակընթացության ալիքը (1 վրդ կվտ): Մինչև վերջին ժամանակներս այդ աղբյուրը յուրացված չէր: Օգտագործման համար այն մատչելի դարձավ միայն 20-րդ դարում: Աշխարհում առաջին մակընթացային կայանը կառուցվել է ՍՍՀՄ-ում՝ Կուլա թերակղզում (Կիսլոյե Գուբա), երկրորդ էլեկտրակայանը կառուցել է Ֆրանսիան: Դրանք մեծ հզորություն չունեն, առայժմ շահագործումը թանկ է նստում:

Մեծ պոտենցիալ էներգիա են պարունակում քամուց առաջացած ծովային (դրեյֆային) ալիքները: Առ այսօր դեռևս հնարավոր չէ այն օգտագործել. ապագան ցույց կտա, թե ինչ ձևով յուրացնել այդ էներգիան:

Հիդրոէներգիայի պաշարները կազմում են 5,6—6 վրդ կվտ, որը տարեկան կտա 20—25·10<sup>12</sup> կվտ ժ, սակայն գործնականում կարող է օգտագործվել մոտ 5·10<sup>12</sup> կվտ ժ: Հիդրոէներգիայի արտադրությունն աճում է. 1980 թ. աշխարհի էներգետիկ հաշվեկշռում այն կազմում էր 5%, սակայն էներգիայի այլ տեսակների արտադրության ամփելի արագ աճի շրջանորհիվ հիդրոէներգիայի տեսակարար կշիռն աստիճանաբար իջնելու է:

20-րդ դարի երկրորդ կեսին համաշխարհային էներգետիկայում կատարվեց կարևոր հեղաշրջում. սկսվեց ատոմային էներգիայի խաղաղ օգտագործումը: Աշխարհի շատ երկրներում այժմ դրոծում են բազմաթիվ ԱէԿ-ներ, ատոմային էներգիայով աշխատող առևտրական նավեր, սառցահատիկներ, սուզանավեր: ԱէԿ-ների տված էլեկտրաէներգիայի տեսակարար կշիռն արագորեն աճում է: Եթե 1980 թ. այն 8% էր, ապա 2000 թ. կկազմի 26%:

էն ներգիայի ամբողջ հզոր աղբյուր է կառավարվող ջերմամիջուկային ռեակցիաներից ստացվող էներգիան: Ֆիզիկոսների երազանքն՝ դեյտերիումի և տրիտիումի (ջրածնի իզոտոպներ) սինթեզը: Ակադ. Ի. Վ. Կուրչատովն այն միտքն էր արտահայտում, որ ջերմամիջուկային էներգիան ապագայի էներգետիկայի հիմքն է: Դեյտերիումը, որպես վառելիք, նույնիսկ էներգետիկայի ամենաբուռն զարգացման դեպքում կբավարարի հարյուր միլիոնավոր տարիներ: Զերմամիջուկային ռեակտորների ստեղծումով, ըստ Ի. Վ. Կուրչատովի, վառելիքի նկատմամբ ունեցած հոգսը գործնականորեն ընդմիջտ կվերանա: Պարզվել է, որ միջուկների սինթեզը հարյուր անգամ շատ էներգիա է արտադրում, քան ուրանի տրոհման ժամանակ: Գիտնականների կարծիքով 21-րդ դարի առաջին քառորդում մարդկութունը կտիրանա էներգիայի այդ տեսակին, կվերանա վառելիքային էներգիայի անհրաժեշտութունը:

էն ներգիայի աղբյուր է Երկրի ներքին ջերմութունը, որը դեռևս օգտագործվում է սահմանափակ չափով, այն էլ միայն հրաբխային շրջաններում: Ս. Մ. Գրիգորևը առաջարկել է օգտագործել դրենաժային թաղանթի էներգիան, սակայն դեռևս գործնական քայլեր չեն կատարված:

Հումքային բնաղբյուրներ (ռեսուրսներ) Հումք են կոչվում այն բոլոր նյութերը, որոնք օգտագործվում են մարդու կողմից արտադրության մեջ՝ գործածության փրեր, բնակարաններ, սնունդ պատրաստելու համար: Հումքի զգալի մասը ստացվում է օգտակար հանածոներից, որոնք մեծ մասամբ վերականգնվող շեն, հումքի մի մասն էլ օրգանական ծագում ունի. դրանք են՝ բույսերը, կենդանիները կամ նրանցից ըստացված նյութերը, որ գործարանային մշակումից հետո դառնում են սնունդ, հագուստ և այլն:

Հումքային ռեսուրսները արդյունաբերության հիմքն են, ուստի նրանց տիրանալու համար կապիտալիստական աշխարհում մեծ պայքար է գնում, որը և ծնում է սրատերազմներ:

Հումքային ռեսուրսները բաժանվում են մի քանի խմբերի հանքային (միներալային) օգտակար հանածոներ, կենսաբանական ռեսուրսներ, ջրային և օդային ռեսուրսներ:

Արդյունաբերության մեջ օգտագործվում են հիմնականում

միներալային օգտակար հանածոների ամենատարբեր տեսակներ: Սրանք ֆիզիկական հատկանիշներով լինում են պինդ (երկաթահանք, քարածուխ, գունավոր մետաղների հանքաքար, աղեր և այլն), հեղուկ (նավթ, հանքային ջրեր), գազային (այրվող գազ): Ըստ կազմի և օգտագործման բնույթի լինում են՝

1. վառելիքային հանածոներ (քարածուխ, գորշ ածուխ, տորֆ, նավթ, գազ և այլն), 2. մետաղային (սև և գունավոր, հազվագյուտ, ազնիվ, ռադիոակտիվ մետաղների հանքաքարեր), 3. ոչ մետաղային հանածոներ՝ շինանյութեր (շինաքար, ցեմենտի, կրի հումք, ավազ, կավ), 4. ոչ մետաղային արդյունաբերական հանքահումք (աւրբստ, գրաֆիտ, կորունդ, մազնեզիտ, քվարցային ավազ), 5. քիմիական արդյունաբերության հումք (աղեր, ծծումբ, սելիտրա, միրաբիլիտ), 6. հումք պարարտանյութեր ստանալու համար (կալիական աղեր, ապատիտներ, ֆոսֆորիտներ), 7. թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր (ալմաստ, տոպազ, զմրուկաւտ, ռուբին, ամետիստ, մարմար և այլն):

Հանքային հանածո հարստությունները կազմված են միներալային ագրեգատներից, որոնք ստեղծվել են նույն ճանապարհով, ինչ ճանապարհով առաջացել են ապարները (հրաբխային, նստվածքային, փոխակերպական (մետամորֆային): Սրանք ձևավորվել են երկրակեղևի զարգացման ամբողջ ժամանակաշրջանում:

Գիտության ու տեխնիկայի զարգացման արդի փուլում օգտակար հանածոների հանքավայր են կոչվում որևէ հանածոյի այն կուտակումները, որոնք ձեռնարկ են շահագործման համար: Օրինակ՝ բազալտը իր մեջ պարունակում է ալյումին, երկաթ, տիտան, մանգան և շատ այլ մետաղներ, բայց առ այսօր բազալտը այդ մետաղների հանքաքար չի համարվում, որովհետև ավելի հարուստ հանքաքարեր կան: Ուրեմն, հանքաքար հասկացությունը պայմանական է: Այն հանքաքարը, որ այսօր չի օգտագործվում, վաղը տեխնոլոգիայի կատարելագործման շնորհիվ կարող է օգտագործվել: Այսպիսով կարելի է պնդել, որ հանքային հարստությունների պաշարների սահմանները լայնանալու են: Գիտատեխնիկական մեծ հեղափոխություն կկատարվի, երբ իրականանա կառավարվող

չերմամիջոսկային էներգիայի գյուտը: Այդ դեպքում կորզվող նյութի ամենաշնչին պարունակություն դեպքում անգամ հնարավոր զլինի օգտակար նյութերն անջատել, և ապարների այն տեսակները, որոնք այժմ հանքաքար շեն համարվում, կդառնան հանքաքար:

Այստեղից կարող ենք հանգել մի շատ կարևոր հետևություն՝ աշխարհում հանքային հարստությունների սպառման վտանգը և տազնապը այնպիսին չէ, ինչպես պատկերացնում են բուրժուական մի շարք գիտնականներ: Զերմամիջոսկային էներգիան հնարավորություն կտա ցանկացած նյութով բավարարելու մարդկության պահանջները:

Ստորև բերվում են մի շարք կարևոր հանքային հարստությունների հանածոների պաշարները, որոնք հաշվարկված են այսօրվա տեխնոլոգիայի հնարավորությունների հիման վրա:

Ա զ յ ու ս ա հ 11

Մի շարք միներալային ռեսուրսների ազանգովածությունը ոչ սոցիալիստական երկրներում՝ ըստ Ռ. Ռ. Սիմոնյանի (1980)

Ռեսուրսի տեսակը	Պաշարները ըստ 1970-ական թթ. մլրդ տ	Հանույթը ըստ 1970-ական թթ. մլն տ	Ապահովվածությունը, տարիներով
Երկաթի հանքաքար	86,4	580	150
Ալյումինիում	4,8	66	73
Պղինձ	0,34	5,8	58
Կապար	0,11	2,4	46
Ցինկ	0,135	4,4	31

Հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը ամենալավ գրավականն է, որ մարդկությունը կարողանա հարուստ հանքերն ավելի երկար ժամանակ օգտագործել: Այսպես, այժմ աշխարհի արծաթի հարուստ հանքավայրերը սպառվելուն մոտ են: Այդ մետաղի կորզման տեխնոլոգիայի կատարելագործման դեպքում պաշարների սահմանները անշուշտ կընդարձակվեն, բայց այժմ արծաթի պահանջարկի աճի տեմպերն ավելի մեծ են, քան մետաղի կորզման տեխնոլոգիայի զարգացման տեմպերը: Այդ առումով հարուստ հանքերի ռացիոնալ օգտագործումը շատ կարևոր նշանակություն է ստանում:

Հանքային հանածոների պաշարների ընդարձակման մեջ կարևոր դեր ունի օվկիանոսը: 20-րդ դարում օվկիանոսի հատակին հայտնաբերվել են շատ օգտակար հանածոներ: Կասկածից վեր է, որ էներգետիկ ռեսուրսների ավելի լայն օգտագործման և կառավարվող ջերմամիջուկային էներգիայի առկայության պայմաններում հնարավոր կդառնա օգտագործել նաև օվկիանոսի հատակի հարստությունները: ?

Օվկիանոսներում քիմիական շատ տարրեր գտնվում են ջրի մեջ լուծված վիճակում՝ ոսկի, արծաթ, պլատին, գոնավոր մետաղներ, Մենդելեևի աղյուսակի ավելի քան 60 տարր, սակայն ժամանակակից տեխնոլոգիան հնարավորություն չի տալիս դրանք էժան ձևով կորզել: Փորձ է կատարվել օվկիանոսի ջրից ոսկի ստանալ, սակայն ստացած ոսկին 250 անգամ ավելի թանկ է նստել, քան ոսկու իրական արժեքն է:

Կենսոլորտային ռեսուրսներին են պատկանում հողային ֆոնդը, բուսական ու կենդանական ծագման ռեսուրսները:

Աշխարհում մշակվող հողատարածությունները կազմում են 19 մլն կմ<sup>2</sup> (1900 մլն հեկտար), որից մաքուր ցանքատարածություններ՝ 3,2 մլն կմ<sup>2</sup> (Միլանովա, Ռյաբչիկով, 1979): Հողերի ռացիոնալ օգտագործումը վճռական նշանակություն ունեցող հարց է: Այստեղ կարևոր է պայքարը էրոզիայի դեմ, հողերի բարելավումը, համեմատաբար շոր կլիմայական պայմաններ ունեցող երկրներում, որտեղ լանջերը բուսածածկով պաշտպանված չեն, մթնոլորտային տեղումները թափվում են տեղատարափ անձրևների ձևով, և հողի էրոզիան չարիք է դարձել: էրոզիան մեծ չափերի է հասել ԱՄՆ-ում, Հարավային Ամերիկայի երկրներում, Չինաստանում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլուր: Աշխարհի մշակովի հողատարածությունների մոտ կեսը էրոզացվում է, իսկ մեկ քառորդը ենթակա է ուժգին էրոզիայի: էրոզիայի հետևանքով յուրաքանչյուր տարի դեպի օվկիանոս է գնում հարյուր միլիոնավոր տոննա հանքային սննդանյութ: էրոզիայի դեմ պայքարը միևնույն ժամանակ պայքար է բերքատվության բարձրացման համար:

Կան վայրեր, որտեղ հողերը մինչև այժմ չեն օգտագործվում (Բրազիլական բարձրավանդակի մեծ մասը, ավստրալական սավաննաների զգալի մասը և այլն): Չեն օգտագործ-

վում հաև անապատային շատ տարածութիւններ: Դրանց յուրացումը կապված է քաղցրահամ ջրի պրոբլեմի հետ: Պրոբլեմի լուծումից հետո կարելի է Երկրագնդի վրա յուրացնել ևս 20 մլն կմ<sup>2</sup>:

Պետք է ենթադրել, որ ջերմամիջուկային էժան էներգիայի առկայութեան պայմաններում հնարավոր կլինի քաղցրահամ ջուր տեղափոխել Աֆրիկայի, Ասիայի, Ավստրալիայի անապատային շրջանները և XXI—XXII դարերում անապատները կդառնան կուլտուրական լանդշաֆտներ: Դրանով կլուծվի ոչ միայն սննդի պրոբլեմը, այլև մթնոլորտի թթվածնի պրոբլեմը: Բուսական ու կենդանական ռեսուրսները մարդու համար կենսական նշանակութիւն ունեն: Դրանք օգտագործվում են նախ՝ որպէս սնունդ, ապա՝ հագուստ, տնային գործածութեան իրեր ստեղծելու համար, շինարարութեան, քիմիական արդյունաբերութեան և շատ այլ ճյուղերի համար որպէս հումք:

Բուսական ու կենդանական ռեսուրսների պահանջարկը արագորեն մեծանում է: Այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ է բարձրացնել բուսական ու կենդանական աշխարհի արդյունավետութիւնը: Առաջավոր տնտեսութիւնները, օգտագործելով գիտութեան նվաճումները, այս ուղղութեամբ հասել են զգալի հաջողութիւնների:

Կլիմայական ռեսուրսները օգտագործվում են մարդու կողմից գյուղատնտեսական կուլտուրաներ մշակելու համար, ինչպէս նաև՝ արդյունաբերութեան մեջ, հանգստի ոլորտում (ռեկրեացիա):

Յուրաքանչյուր բույսի համար անհրաժեշտ են որոշակի օպտիմալ պայմաններ՝ անսառնամանիք ժամանակաշրջան, ջերմաստիճանների գումար, խոնավութեան քանակ, ուլտրամանուշակագույն ճառագայթներ և այլն: Միջուրիւնյան կենսաբանութիւնը աշխատում է սելեկցիայի միջոցով այնպիսի բուսական սորտեր ստեղծել, որոնք կլիմայական ավելի լայն շրջանակներում կարողանան աճել, հետևաբար կուլտուրական բույսերի արեալներն ընդարձակվում են: Մեր երկրում մի շարք բույսեր հյուսիս են շարժվել մի քանի հարյուր, նույնիսկ հազար կմ:

Կլիմայական ռեսուրսների դերը մեծ է նաև անասնաբու-

ծության մեջ: Յուրաքանչյուր բնական գոտի ունի իրեն հատուկ կենդանիները: Այս ասպարեզում ևս որոշակի աշխատանք է կատարված, ստեղծվում են այնպիսի ցեղեր, որոնք ավելի դիմացկուն են, առավել արդյունավետ:

Կլիմայական ռեսուրսները օգտագործվում են բնակավայրերի կառուցման, առողջապահական և ռեկրեացիոն (հանգրստի կազմակերպման) նպատակներով: Առողջարաններն ու տուրիստական օբյեկտները հիմնադրվում են այնտեղ, որտեղ կլիմայական պայմաններն առավել նպատակահարմար են, որտեղ գոյութուն ունի կլիմայի հարմարափետություն:

Զբոսային ռեսուրսները Երկրագնդի վրա շատ սահմանափակ են, շնայած մեր մոլորակը շատ ջրառատ է: Մարդը կարող է օգտագործել միայն վերականգնվող ջրի պաշարները՝ գետերի հոսքը: Լճերի ջուրը լիովին օգտագործվել չի կարող, այլապես այն կսպառվի. ծովերի ու օվկիանոսների ջուրը աղի է, պիտանի չէ ոչ խմելու, ոչ էլ ոռոգման համար:

Մարդկության տնօրինության տակ շատ քիչ քաղցրահամ ջուր կա: Աշխարհի գետերի և մատչելի ստորերկրյա ջրերի տարեկան հոսքը կազմում է ընդամենը 38—42 հազ. կմ<sup>3</sup>: ՄԱԿ-ի տվյալներով մարդուն մատչելի ջրի տարեկան քանակը կազմում է 20 հազ. կմ<sup>3</sup>, որից 5—6 հազ. կմ<sup>3</sup> արդեն օգտագործվում է: Թվում է, թե եղած պաշարները լիովին կբավարարեն մարդուն, սակայն դրանք բաշխված են շատ անհավասարաչափ: Ամենից ջրառատ մայրցամաքը Հարավային Ամերիկան է, իսկ ամենասակավաջուրը՝ Ավստրալիան: Անջուր է Աֆրիկայի հյուսիսային կեսը (Սահարա), Ասիայի մերձարևադարձային գոտին և այլն:

Քաղցրահամ ջրի պաշարները կբավարարեն մարդուն, եթե հավասարաչափ բաշխվեն: Այստեղից էլ առաջանում է ջրի վերաբաշխման պրոբլեմը: Շատ երկրներում կառուցվում են ջրանցքներ, փոխվում է գետերի հոսանքի ուղղությունը, ըստեղծվում են ջրամբարներ, որոնք ամբարում են ջրառատ ժամանակաշրջանի ջրերը՝ սակավաջուր ամիսներին օգտագործելու համար:

Քաղցրահամ ջրի պրոբլեմը համակել է շատ երկրների. բազմաթիվ քաղաքներում ջրամատակարարումը խիստ սահմանափակված է: Զրի պահանջարկը ավելի արագ է աճում,

քան բնակչության աճն է: Այժմ արդեն խնդիր է դրվում մեկ մայրցամաքէջ ջրերը տեղափոխել մեկ այլ մայրցամաք: Հասունանում է Հարավային Ամերիկայի ջրերը Աֆրիկա տեղափոխելու պրոբլեմը, որի լուծումը հնարավոր է էժան էներգիայի առկայության պայմաններում:

Փորձեր են կատարվում անտարկտիկական այսբերզները (սառցասարերը) հյուսիսային կիսագունդ տեղափոխել: Աշխատանքներ են կատարվում ծովի ջրի աղազերծման ուղղությամբ, սակայն այս միջոցը մասսայական կգառնա ջերմամիջոցային սինթեզի գյուտից հետո միայն, երբ մարդը կունենա էժան էներգիա:

Քաղցրահամ ջրի պրոբլեմի լուծման ուղիներից մեկը խոնավության տեղական շրջապտույտի արագացումն է, որի մասին արդեն նշվել է: Փորձեր են կատարվում արհեստականորեն խթանելու մթնոլորտային տեղումների առաջացումը, ավելացնելու նրանց քանակը:

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՎ ՄԱԼԹՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ գլխում մենք տեսանք, որ բնակչությունը հարաճուն կերպով ավելանում է: Առաջներում, երբ Երկրագնդի վրա բնակչության թիվը փոքր էր, նրա կրկնապատկման համար անհրաժեշտ էր մի քանի հարյուր տարի: Այժմ, վերջին տասնամյակներում դրա համար պահանջվում է ընդամենը 30—40 տարի: Յուրաքանչյուր բուսեում Երկրագնդի վրա ծնվում է 225 մարդ, մեռնում՝ 93: 2000 թվականին մեր մոլորակի վրա բնակչության թիվը կհասնի 7 միլիարդ մարդու:

Բնակչության աճը մեծ է հատկապես զարգացող երկրներում: Վերջին 25 տարում Աֆրիկայում, Հարավային Ասիայում, լատինական Ամերիկայում բնակչության տարեկան աճը կազմել է 2,7%, իսկ Արևմտյան Եվրոպայում և Սովետական Միությունում՝ ընդամենը 1%:

Եթե բնակչության աճի ժամանակակից տեմպերը պահպանվեն, ապա 3000 թվին մարդկանց թիվը կհասնի 500 մլրդ մարդու, և բնական է, որ Երկրագունդը չի կարողանա կերակրել այդքան բնակիչ, նույնիսկ դրա կետը:

Շատ գիտնականներ գտնում են, որ բնակչության աճը

տարերայնորեն կկարգավորվի, մյուս մասը առաջարկում է գիտակցաբար կարգավորել այն: Յ. էնգելսը հայտնել է այն միտքը, որ երբ կոմունիստական հասարակարգը ստիպված լինի, ապա այն կարող է կարգավորել մարդկանց արտադրութունը այնպես, ինչպես՝ իրերի արտադրութունը: Այս հարցը շատ բարդ սոցիալական պրոբլեմ է և դուրս է գալիս մեր դասընթացի սահմաններից:

Բուրժուական տնտեսագետները, մասնավորապես Տ. Ռ. Մալթուսը, գտնում են, որ սննդի միջոցները Երկրի վրա աճում են թվաքանական պրոգրեսիայով, իսկ բնակչության թիվը՝ երկրաչափական պրոգրեսիայով: Սրանից ելնելով Մալթուսը գտնում է, որ աղքատութունն ու սովը օրինաչափ երևույթներ են: Մարդկանց բարեկեցութունը, ըստ Մալթուսի, կարելի է բարձրացնել բնակչության թվի կրճատմամբ: Ըստ նրա, պատերազմները, համաճարակները անհրաժեշտ են մարդկությանը, ուստի պետք է օգնել քնությանը, մահացութունը մեծացնելու համար:

Ըստ Մալթուսի՝ աղքատության պատճառը բոլորովին կախված չէ երկրի հասարակարգի բնույթից. աղքատութունը բնականոն երևույթ է: Ըստ շատ մալթուսականների, ուժեղ դեղանյութերի գյուտը, որ իջեցնում է մահացութունը, օժանդակում է ժողովրդական (դեմոգրաֆիական) պայթյունին: Մալթուսը և նրա հետևորդները գերբնակչութունը դիտում են ոչ թե որպես սոցիալ-տնտեսական երևույթ, այլ որպես բնությունից տրված երևույթ: Մալթուսի «տեսութունը» որդեգրեցին ռեակցիոն բուրժուական քաղաքագետները:

Մարդը յուրաքանչյուր օր պետք է ստանա 2750—2800 կալ պարունակող սնունդ: Այժմ Երկրագնդի վրա բնակչության կեսը թերասնվում է, այդ կեսի կեսն էլ մատնված է սովի: Դրա պատճառը մի շարք երկրներում դեռևս ցածր արտադրողականութունն է: Երկրագնդի վրա հավելաբնակչութուն չկա, եղած սննդի միջոցները կարող են բավարարել բնակչության պահանջմունքները, եթե հողային ֆոնդը օգտագործվի ռացիոնալ կերպով: Արտադրողականության բարձրացման միջոցով հնարավոր է բնակչությանը լիովին բավարարել սննդի միջոցներով: Այսպես, Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարում ցորենի բերքատվութունը կազմում էր 7—8

ցենտներ մեկ հեկտարին, այժմ՝ 25—30 ցենտներ: Զրովի հողերում քերք, տվությունը հասնում է 60—100 գ/հա: Եթե գյուղատնտեսության մեջ ձեռք բերած առաջավոր մեթոդները տարածվեն բոլոր երկրներում, ապա կարելի է լիուլի բավարարել 3 անգամ ավելի բնակչության պահանջմունքները:

Եթե Երկրագնդի հողային ֆոնդը ռացիոնալ օգտագործվի, ապա մեր մոլորակը կարող է կերակրել 40—55 մլրդ բնակիչ: Առայժմ օվկիանոսի սննդային ռեսուրսները շատ փոքր չափով են օգտագործվում, եթե ռացիոնալ կերպով օգտագործվեն նաև սրանք, ապա հնարավոր է Երկրի վրա բնակեցնել ավելի շատ բնակիչ:

### ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՐԸՄԸ

19-րդ դարում բնության պահպանության պրոբլեմը համարյա չէր հուզում լայն հասարակայնությանը. միայն գիտնականներն էին հետևում բնական երևույթների ընթացքին և կանխատեսում մեծ փոփոխություններ: 20-րդ դարում այդ պրոբլեմը դարձավ բոլոր երկրների ժողովուրդների հոգսը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բնության պահպանության հարցերով զբաղվում է Միավորված ազգերի կազմակերպությունը:

1948 թ. ստեղծվեց գիտական ու գիտա-կոնստրուկտիվ (կառուցողական) միջազգային օրգան՝ Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը (ԲՊՄՄ): 1956 թվից այդ միությունը երեք տարին մեկ հրավիրում է ԲՊՄՄ Գլխավոր ասամբլեայի նստաշրջան և գիտատեխնիկական խորհրդակցություն. սա գիտական տեղեկությունների փոխանակման խոշոր քայլ է:

Բնության պահպանության հարցերին շատ մեծ ուշադրություն են դարձնում ՅՈՒՆԵՍԿՈ-ն և ՄԱԿ-ի այլ օրգաններ: 1968 թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ն Փարիզում կազմակերպեց փորձագետների միջկառավարական կոնֆերանս՝ կենսոլորտի ռեսուրսների պահպանության ու ռացիոնալ օգտագործման գիտական հիմքերի քննարկման համար, որին մասնակցում էր նաև ՍՍՀՄ-ը:

Բնության պահպանության պրոբլեմով պետք է զբաղվեն բոլոր երկրները: Միայն միջազգային ջանքերով ու համագոր-

ծակցութեամբ է հնարավոր բնութեան պահպանութեան գործը դնել պատշաճ հիմքերի վրա: Այստեղ առաջատարի դեր պետք է կատարեն ԱՄՆ-ը, ՍՍՀՄ-ը, ԳՖՆ-ն, Ճապոնիան և այլ զարգացած երկրներ, որոնք ավելի շատ հումքային ռեսուրսներ են օգտագործում:

Տարբեր երկրների միջև այդպիսի համագործակցություններ արդեն կան: Սովետական Միութեան ու ԱՄՆ-ի միջև մի շարք համաձայնագրեր են կնքվել, որոնք վերաբերում են բնութեան պահպանությանը:

1971 թ. ՏՓԽ-ի երկրների միջև համաձայնագիր է կնքված «Բնութեան պահպանության միջոցառումների» մշակման ուղղությամբ, որի մեջ մտնում են բնութեան պահպանության, առողջապահության (հիգիենիկ) տեսանկյունը, էկոլոգիական համակարգերի (կենսաերկրացենոզներ) և լանդշաֆտների պահպանությունը, մթնոլորտի պաշտպանությունը վնասակար նյութերից, ջրային ռեսուրսների պահպանությունը, կենցաղային թափոնների լուծարքը և նրանց օգտագործումը (ուտիլացումը), բնութեան պահպանության սոցիալ-տնտեսական ու կազմակերպչական-իրավական տեսանկյունները:

Բնութեան պահպանության հարցերը պահանջում են կոմպլեքս լուծում. առանձին-առանձին կամ մեկուսացած միջոցառումները արդյունավետ լինել չեն կարող: Այս տեսակետից սոցիալիստական սիստեմի առավելությունները ակնհայտ են: Մասնավոր սեփականության պայմաններում, նույնիսկ շատ մեծ ցանկության դեպքում էլ հնարավոր չէ կոմպլեքս միջոցառումների կիրառումը: Սոցիալիստական սիստեմի պայմաններում, երբ բնական ռեսուրսների օգտագործման բոլոր չրծակները պետության ձեռքում են, բնութեան վերափոխման, նրա պահպանության հարցերի լուծումը անհամեմատ հեշտանում է: Այսպես, 1950-ական թվականներին ՍՍՀՄ Եվրոպական մասի տափաստանային ու շոր տափաստանային շերտաններում ստեղծվեցին դաշտապաշտպան անտառաշերտեր: Այդպիսի մեծ մասշտաբի աշխատանքներ մասնավոր սեփականության պայմաններում հնարավոր չէր կատարել:

Այժմ նախատեսվում է Միբրիի գետերի ջրի մի մասի (տարեկան 20—30 մլրդ մ<sup>3</sup>) ուղղությունը փոխել դեպի Միջին Ասիա՝ ոռոգել միլիոնավոր հեկտար անջրդի տարածություններ:

ներ, լուծել Արալյան ծովի մակարդակի պահպանման հարցը և շատ այլ համալիրային հարցեր:

Բնության հարստացման ցայտուն օրինակներից է Մերձ-երևանյան շրջանում (Գետառի ավազան) համալիրային միջոցառումների կիրառումը: Առաջներում Գետառի սելավը հաճախակի էր փլվում Երևանի վրա՝ պատճառելով նյութական վնաս, մարդկային զոհեր: 1940—50-ական թվականներին Գետառ գետակի ավազանում բուսաբարելավման (ֆիտոմելիորացիա) ու ջրատեխնիկական միջոցառումների շնորհիվ տարածքը դադարեց սելավաբեր լինելուց, կանաչապատվեց, այժմ այստեղ այգիներ ու մարգագետիններ են:

Բնության պահպանութան գործում զգալի դեր ունի աշխարհագրությունը: Եթե այլ գիտություններ բնությունը դիտում են առանձին բաղադրիչների ձևով, այսինքն՝ զբաղվում են լանդշաֆտային բաղադրիչների ուսումնասիրությամբ, ապա աշխարհագրությունը դրանք դիտում է համալիրի մեջ, ուստի բնության պահպանության հարցերը աշխարհագրությունը քննարկում է համակողմանիորեն:

Մարդու ներգործությունը բնության վրա օրեցօր դառնում է ավելի զորեղ: Աշխարհագրության խնդիրն է այդ ներգործության գնահատումը: Խնդրի իրականացումը հնարավոր է միայն մոնիթորինգի (հսկողութայն) համամոլորակային համակարգի ստեղծմամբ:

Մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի հսկողություն է, որի նպատակն է բացահայտել էկոլոգիական համակարգերում մարդածին գործոնի ազդեցության հետևանքով բնության դինամիկ հավասարակշռության խախտման երևույթները: Այդպիսի մշտական դիտարկումները հնարավորություն կտան պարզելու միջավայրի ու բնության մարդածին ձևափոխությունը, շրջակա միջավայրի աղտոտիչների կլանման ու շեղոքացման արագությունը, բնությանը հասցրած վնասի չափը: Ստացված տեղեկությունները հնարավորություն կտան մշակելու նյութերի ու էներգիայի շրջապտույտի սխեմաներ: Մոնիթորինգի կայանների ցանցի տեղաբաշխման և գործունեության ծրագրերը մշակվում են համատեղ՝ օտարերկրյա և սոցիալիստական երկրների մասնագետների միջոցով: Նախատեսվում է ստեղծել շորս տասնյակ համամոլորակային

մոնիթորինգի կայան, որոնք տեղաբաշխված պետք է լինեն տարբեր զոնաներում, տարբեր զարգացում ունեցող երկրներում:

Ե. Վ. Միլանովան, Ա. Մ. Ռյաբչիկովը (1979) նշում են մոնիթորինգի կայանների ուսումնասիրությունների հետևյալ շրջանակները.

1. Նյութերի շրջապտույտի և միջավայրի քիմիական հավասարակշռության խախտման հետևանքով շրջապատի փոփոխությունների ուսումնասիրություն.

2. Զրային հաշվեկշռի խախտումները: Այս պրոբլեմն ունի երկու տեսանկյուն՝ քանակական և որակական: Զրույրտում ֆիզիկաքիմիական հատկանիշների ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել աղտոտիչների (պոլլուտանտների) կուտակումային շրջաններում (գետերի գետաբերաններ, ցամաքային ծանծաղուտ, լճեր):

3. Մարդածին էկոլոգիական համակարգերում էներգետիկ հաշվեկշռի փոփոխությունները:

4. Մարդածին լանդշաֆտներում տեղի ունեցող պրոցեսների դինամիկայի ուսումնասիրությունը:

Ստանալով բնական միջավայրի մասին անհրաժեշտ տեղեկություններ, մշակելով դրանց տվյալները համամոլորակային (գլոբալ) ինֆորմացիոն կենտրոնում, հնարավոր կլինի գնահատել մոլորակի աշխարհագրական թաղանթի վիճակը և ձեռնարկել անցանկալի երևույթները կանխելու միջոցներ:

\* \* \*

Բնության պահպանության և ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ասպարեզում աշխարհագրության առջև դրվում են մի քանի խոշոր պրոբլեմներ՝

1. Արդյո՞ք բնությունը ի վիճակի է ապագայում պահպանել իր քիմիական հավասարակշռությունը, որ ստեղծվել է մոլորակի զարգացման ընթացքում:

2. Խելացի ու նպատակասլաց օգտագործել Երկրագնդի մակերևույթը: Այժմ ցամաքի տարածքի 56% -ն է օգտագործվում. պիտանի հողերի ռեզերվները մեծ չեն, ուստի դրանք պետք է նպատակասլաց օգտագործել:

3. Տնտեսագիտական պրոբլեմներ. անհրաժեշտ է մշակել մեթոդներին այնպիսի համակարգ, որի շնորհիվ պարզվի միջավայրի աղտոտման աստիճանը և պատճառած վնասի արժեքը: Այս ուղղությունները աշխարհի մասշտաբով դեռևս շատ քիչ գործ է արվում:

4. Աշխարհագրական կանխագուշակման մշակումը, որն այժմ ավելի շատ որակական տվյալներ ունի. անհրաժեշտ է զարգացնել նաև քանակական կողմը:

Ընդհանուր երկրագիտության համալիրային բնույթը մեծ առավելություն է տալիս այս գիտությունը բնության երևույթների ճանաչողության հարցում, ուստի նրա հանգամանալից ուսումնասիրությունը մեծապես կնպաստի աշխարհագրատեսիկ պատրաստելու գործին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Алекин О. А.** Основы гидрохимии. Л., Гидрометиздат, 1953.
- Алексеев В. В.** Человек и биосфера. М., 1973.
- Алисов Б. П., Дроздов О. А., Рубинштейн Е. С.** Курс климатологии. Л., Гидрометиздат, 1952.
- Амбарцумян В. А.** Философские вопросы науки о Вселенной. Ереван, 1973.
- Ананичев К. В.** Проблемы окружающей среды, энергии и природных ресурсов. Международный аспект. М., 1974.
- Анненская Г. Н., Видина А. А., Жучкова В. К.** Морфологическая структура географического ландшафта. М., 1962.
- Антропов П. Я.** Топливо-энергетический потенциал земли. М., 1976.
- Анучин В. А.** Теоретические основы географии. М., 1972.
- Арбатов А. Я., Надеждин А. В.** Топливо-энергетические ресурсы: состояние и перспективы. Энергетика, топливо. М., 1977.
- Арманд Д. Л.** Наука о ландшафте. М., 1975, с. 286.
- Атлас теплового баланса земного шара.** Под ред. Будыко М. И., Л., изд. АН СССР, 1963.
- Байхауэр Х., Шмакке Э.** Мир в 2000 году. М., 1973.
- Берг Л. С.** Физико-географические (ландшафтные) зоны СССР. Л., изд. ЛГУ, 1936.
- Берг Л. С.** Основы климатологии. Л., Учпедгиз, 1938.
- Берг Л. С.** Географические зоны Советского Союза, т. 1—2, М., 1952, 510 с.
- Берг Л. С.** Природа СССР. М., 1955, 494 с.
- Берлянд М. Е.** Защита атмосферы от загрязнения. — Человек и среда. Л., Геогр. общ., 1974.
- Благосклонов К. Н., Шапошников А. А., Тихомиров В. Н.** Охрана природы. М., 1967.
- Богданов А. С.** Биологические ресурсы Мирового океана и перспективы их использования. Природа, 1976, № 11.
- Будыко М. И.** Климат и жизнь. Л., Гидрометиздат, 1971.
- Вегенер А.** Возникновение материков и океанов. М., Госиздат, 1925.
- Вернадский В. И.** Химическое строение биосферы Земли и ее окружения. М., «Наука», 1965.

- Вернадский В. И. Биосфера. М., «Мысль», 1967.
- Вернадский В. И. Биосфера. Л., 1926.
- Виноградов А. П. Происхождение оболочек Земли. «Изв. АН СССР», сер. геол. 1962, № 11.
- Водный баланс СССР и его преобразование. М., «Наука», 1969.
- Восканян А. М. О роли географической среды в развитии общества. Ереван, 1965.
- Герасимов И. П. Советская конструктивная география. М., 1976.
- Герасимов И. П., Мещеряков Ю. А. Рельеф земли. М., «Наука», 1967.
- Гладков Н. А. Охрана природы. М., 1969.
- Григорьев А. А. Опыт характеристики основных типов физико-географической среды. «Проблемы физической географии» вып. V и VI, изд. АН СССР, 1938.
- Григорьев А. А. Развитие теоретических проблем физической географии (1917—1934). М., 1965, 246 с.
- Григорьев А. А. Типы географической среды. М., 1968.
- Григорьев С. М. Роль воды в образовании земной коры. «Недра», М., 1971.
- Деменницкая Р. М. Кора и мантия Земли. М., 1967, с. 280.
- Докучаев В. В. К изучению о зонах природы. Избр. соч., М., Сельхозгиз, 1949.
- Ермаков Ю. Г. Физико-географические аспекты загрязнения атмосферы. Вестник МГУ, сек. геогр., 1973, № 6.
- Жарков В. Н. Физика Земли и планет. М., «Наука», 1971.
- Забелин И. М. Теория физической географии. М., 1959.
- Забелин И. М. Физическая география и наука будущего. М., 1970.
- Заповедники и национальные парки мира. Под ред. К. Л. Шапошниковой. М., 1969.
- Исаченко А. Г. Основы ландшафтоведения и физико-географического районирования. М., 1965.
- Истомин Ю. В. Океанология. Л., Гидрометиздат, 1969.
- Израэль Ю. А. Мониторинг состояния и регулирования качества природной среды. — Вопросы географии, 1978, вып. 108.
- Калесник С. В. Основы общего землеведения. М., Учпедгиз, 1955.
- Каттерфельд Г. Н. Лик Земли. М., Географгиз, 1962.
- Кесарев В. В. Движущие силы развития Земли и планет. М., «Недра», 1967.
- Ковда В. А. Биосфера, почвы и их использование. М., 1974.
- Крубер А. А. Общее землеведение. М., Л., Учпедгиз, 1938.
- Кутырин И. М., Беличенко Ю. П. Охрана водных ресурсов — проблемы современности. Л., 1974.
- Лаптев И. П. Теоретические основы охраны природы. Томск, 1975.

- Лукашев К. И. Технический прогресс и проблема ресурсов. Минск, 1968.
- Львович М. И. Мировые водные ресурсы и их будущее. М., 1974, с. 448.
- Макеев П. С. Природные зоны и ландшафты. М., 1956.
- Марков К. К. Палеогеография. М., Изд. МГУ, 1960.
- Марков К. К., Добродеев О. П., Симонов Ю. Г., Суетова И. А. Введение в физическую географию. М., изд. МГУ, 1978.
- Миланова Е. В., Рябчиков А. М. Географические аспекты охраны природы. М., 1974.
- Мильков Ф. Н. Человек и ландшафты. М., 1979.
- Неклюкова Н. П. Общее землеведение. М., «Просвещение», 1967.
- Общество и окружающая среда. Сб. М., 1976.
- Перельман А. И. Геохимия ландшафта.
- Погосян Х. П. Общая циркуляция атмосферы. Л., 1972.
- Погосян Х. П., Туркетч З. Л. Атмосфера Земли. М., 1970, 320 с.
- Решетов Ю. Г. Природа Земли и происхождение человека. М., 1966.
- Симоныя Р. Р. Сырьевой кризис современного капитализма. М., 1980.
- Степанов В. Н. Планетарные процессы и изменение природы Земли. М., 1970.
- Уорд Б., Дюбо Р. Земля только одна. М., «Прогресс», 1975.
- Ханн В. Е. Общая геотектоника. М., «Недра», 1964.
- Ходж П. Революция в астрономии. Пер. с англ., М., 1972.
- Шафроновский И. И. Симметрия в природе. М., 1968.
- Шубаев Л. П. Общее землеведение. М., 1977, 346 с.
- Шукин И. С. Общая геоморфология. М., Изд. МГУ, 1964.

**ԲՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ**

<b>ՊՈՒՆ ԱՌԱՋԻՆ. Հիմնական ավյալներ Երկրի մասին</b>	
Երկիր մոլորակը որպես տիեզերական մարմին	
Արեգակնային համակարգը, Երկրի ծագումը	
Երկրի ձևը, մեծությունը	1.
Երկրի խտությունը, ծանրության ուժի արագացումը	1.
Երկրի մագնիսականությունը	15
Երկրի աշխարհագրական տարածությունը	18
Երկրագնդի քիմիական կազմը	18
Երկրի ոլորտային կառուցվածքը	20
Երկրի նեբիլե կառուցվածքը և ցամաքի ռելիեֆը	
Երկրաշարժային (սեյսմիկական) ուսումնասիրություններ	21
Երկրակեղև	24
Պլատֆորմներ և գեոսինկլինալներ	28
Մանթիայի ու քարոլորտի դերը Երկրի մակերևույթի ձևավորման գործում	33
Մայրցամաքներ և օվկիանոսներ	41
Երկրի մակերևույթի ռելիեֆը, մի քանի հորինվածքային տարրերի առաջացումը	49
<b>Երկրի ջրալուրտ</b>	
Ընդհանուր տեղեկություններ	59
Համաշխարհային օվկիանոս	65
Մթնոլորտային ծագման ջրեր	76
Ցամաքային ջրեր	78
<b>Մթնալուրտ</b>	114
Մթնոլորտի կազմն ու կառուցվածքը	115
Մթնոլորտի դերը աշխարհագրական թաղանթում	118
Մթնոլորտի շերտային պայմանները	120
Օպտիկական, ձայնային, էլեկտրական երևույթներ	123
Խոնավության վարքը, մթնոլորտային տեղումներ	130
<b>Կենսալուրտ</b>	
Ընդհանուր տեղեկություններ	143
<b>Հողը</b>	146
Բուսական ծածկույթ	150
Կենդանական աշխարհը	156
Աշխարհագրական քաղաք	161
<b>ՊՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ. Աշխարհագրական քաղաքի դիմամիկան</b>	
Նյութերի շրջապտույտը աշխարհագրական թաղանթում	167
Հողմահարում և տեղատարում	170
Ջերմության շրջապտույտը աշխարհագրական թաղանթում	17
Մթնոլորտային շրջապտույտներ	15
Ջրոլորտային շրջապտույտներ	


Կենսաբանական շրջապտույտներ	207
Շրջապտույտների փոխհարաբերությունը	213
<b>ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ. Աշխարհագրական բաղաճրի դիքմիկ երևույթներ</b>	217
Երկրի օրական պտույտը	218
Ժամային գոտիները	220
Կորիոլիսի ուժը.	221
Թրական կենսաբանական ութմը	223
Երկրի տարեկան ութմերը	223
Արեգակնային բուրբապտույտներ (ցիկլեր)	227
Աշխարհագրական թաղանթի զարգացումը	229
Աշխարհագրական թաղանթի բաղադրիչների զարգացումը	229
<b>ԳՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ. Աշխարհագրական բաղաճրի հորինվածքը</b>	243
Երկրի մեգառեյիեֆի առանձնահատկությունները	245
Երկրի աշխարհագրական գոտիականությունը և զոնայականությունը	251
Աշխարհագրական թաղանթի համաշափությունը, մոտահամաշափու- թյունը, հակահամաշափությունը, անհամաշափությունը	254
Երկրի մակերևույթի հորինվածքային հիմնական գծերը	257
Աշխարհագրական թաղանթի զոնայական հորինվածքը	263
Չոնայականության փոփոխությունը անզոնայական գործոններով	272
Աշխարհագրական թաղանթի լանդշաֆտային հորինվածքը	274
<b>ԳՆՈՒՆ ԼԻՆՖԵՐՈՐԴ. Մարզը և աշխարհագրական բաղաճրը</b>	
Մարզու ծագումը	278
Թնության և հասարակության փոխհարաբերությունը	280
Թնության պահպանության պրոբլեմը և բնական ուսուցանողների խնա- յողական-ուսցիոնալ օգտագործումը	297
Բնակչության աճը և մալթուսականության բննադատությունը	308
Բնության պահպանության պրոբլեմը	310
<b>Պրակաճություն</b>	315

Գ.Տ. 969

ԳԱՐԻԻԼՅԱՆ ՀՐԱԶՅԱ ԿԱՐԱԳԵՏԻ

ՅԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԻ

Հրատարակության է ներկայացրել  
համալսարանի ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը



Հրատարակչության խմբագիր՝ Լ. Գ. Մանուկյան  
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմատյան  
Տեխնիկական խմբագիր՝ Յ. Գ. Տոնոյան  
Վերատուգող սրբագրիչներ՝ Ս. Յ. Ղալթախչյան,  
Գ. Գ. Խաչատրյան

ԻՐ 494

ՎՅ 13207: Պատվեր 1063: Տպաքանակ 2000: Հանձնված է շարվածքի 1. 1983 թ.: Ստորագրված է տպագրության 22. 12. 1983 թ.: Թուղթ չափեր՝ 84x108<sup>1/32</sup>: Տառատեսակը՝ Պոլորական: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 13,8 մամուլ: Տպագրական 10,0 մամուլ: պայմ. 16,8 մամուլից Գինը՝ 50 կոպ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մուսկյան փ. Պ  
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արսլյան փ. Պ 52:  
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна №